






200

---

Printed in Turkey













ՄԱՆԿԱՏԵԾՈՒԹԻՒՆ



ՄԵՄԵՆ Ա.

2006

ገብርኤል ጳጳስ ገብርኤል ገብርኤል

=

ገብርኤል ገብርኤል

4-61 56/ 158 1473-24

ՄԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՈՐ Է

ԲՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՑԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳ:

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍԵՐՈՎԻՏ ԳԻՒՂԻ ԶԵՆԵԱՆ



ՀՐԱՄԱՆԱԻ Տ. ՄԱՏԹԵՈՍԻ

ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ՊԱՏՐԻԱՐԻԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ԻԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

-1844-

5411 75-7525

2004

371

du

UNIVERSITY OF TORONTO

1844

THE UNIVERSITY OF TORONTO LIBRARY

1844

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO



UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

1844

3525-25 1100

5005



ԾՆՈՒՅՈՒՄՆ

ՀԱՅԻՄՆԱՅ ԿՐԹԱՅ

Առաջիկայ գիրքս՝ որ կատարելու թիւն առնելու համար հմուտ ձեռքի կարօտ է, իր մեծամեծ թերութիւններով՝ մեծ պիտանութիւն ունի ազգին հիմակուան վիճակին նայելով :

Ասանկ տղայոց համար գրել վաճ հրահանգի մը՝ շատ տարիներէ ՚ի վեր ազգին քաջալուութեան նախանձաւորները և մենք ալ մինչեւ հիմայ կարող անձերէ սպասելով՝ և գիտնալով որ ասօր կատարելազոյնը դուրս ելլալու դեռ ժամանակի կարօտ եմք, առ այժմ

քանի մը բարեկամաց յորդո  
րանօքը յօժարեցանք եղածին  
չափ մէկ հատ մը յօրինել, մինչ  
չէւ որ Աստուած մեզի կատա  
րելագոյնը շնորհէ :

Մեզի ծանօթ լեզուներուն  
մէջ ասոր ընտիրները շատ հե  
ղինակներէ մինչէւ մեր օրը  
տպած խիստ շատ և կերպ կերպ  
գտնելով յանոնց մէկը թարգ  
մանելու ձեռք զարնէինք նէ,  
կարծեմ աշխատութիւնը մեզի  
թեթեւ ըլլալէն զատ, մինչէւ  
հիմայ շատոնց ալ դուրս ելած  
կրլար :

Բայց ասոնց մէջէն մէկ հատ  
մը չնգրտայ որ մեր ազգային  
միճակին ու միանգամայն իմ  
դրութեանս յարմարութիւն  
ունենար. ուստի ասոնց մէկն

ալ թարգմանել չուզելով, մեզ  
 մէ գրել յօժարեցանք, բայց  
 միշտ մեզի առաջնորդ բռնելով  
 հին ու նոր օրինաւոր հեղի  
 նակները, ինչպէս Պլատոն, Աք,  
 Ռուսօ, Տէսէսառ, Հալլէ,  
 Հիւֆլան, Տօնէ և այլն, որոնց  
 շատ տեղ ալ անուննին յիշած  
 եմք :

Կրօնսամբ որ մեր այս բազ  
 մաթերի հեղինակութիւնը հա  
 սարակութեանը հաճելի կըլ  
 լայ :

Հասարակութեանը կրտմ,  
 վասն զի գիտուններն ու հը  
 մուտները ամէն բան գիտնա  
 լով, ասանկ բանի մը կարօտու  
 թիւն չունին, ուստի մեր  
 գրածն ու աշխատութիւնը  
 անոնց համար չէ, ասկէ կրօն

ասամ որ գիտնալով մեր նախ  
տակը անոնք ալ չեն արհա  
մարհեր մեր ազգասիրական  
մէկ տկար աշխատութիւնը :

Գիտեմ որ այս գործոյս մէջ  
անանկ բաներ կան որ պարտա  
ւել ուզող մարդիկ իրենց պար  
տաւանացը նիւթ կրնան բռն  
նել, բայց անոնք ամէնն ալ  
մարդկային անխորշելի սրխալ  
մունքներէն զատ՝ դիտմամբ ե  
ղած բաներ են :

Պարտաւելու դիտաւորու  
թեամբ կարդացող մարդը պի  
տի գրանէ ասոր մէջ շատ տեղ  
կրկնաբանութիւն, բայց անանկ  
նիւթերու մէջ՝ որ հասարա  
կութեան շատը անոնց գաղա  
փար չունին, ուստի այն կրկ  
նութիւնները՝ վարժապետի մը

Համար տալուն պէս կրկնու-  
թիւններ են, որ աշակերտին  
միտքը այն գաղափարին սորվե-  
ցընելու համար մի և նոյն բա-  
նը քանի մը անգամ կրկրկնէ: Ա-  
սասնկ կրկնու-թիւններ կրտեա-  
նէ աւելի ուսումնական բա-  
ռերուն սահմաններուն վրայ,  
որ ընտել բառեր չըլլալուն  
համար առաջկուց անգամ մը  
սահմանը տրվելէն ետքն ալ  
անձանօթ կրմընան:

Ասանկ պարսաւանաց ալ  
յանձնառու եղած եմ՝ գիրքս  
քիչ մը եվելկէկ օգտակար ըլ-  
լալու համար:

Handwritten text, likely a list or account, written in a cursive script. The text is oriented vertically on the page. The content is mostly illegible due to fading and blurring, but appears to be organized into several lines or entries, possibly starting with 'Handwritten' or similar words.

## ՆԵՐՇՈՒԹԻՒՆ

Արթուածիւնը ինչ է : Այս բառիս մէկ ճիշդ տահման մը տալը մեզի դժար բան մըն է : Միայն քանի մը ծանօթուածիւններ իրարմէ հանելով՝ ասոր տահման տալու կըրնամք մօտենալ : Ասոր փորձը ընեմք :

Նախ՝ և առաջ գիտեմք որ՝ մէկ մարդ մը գիտուածիւն սորվելով՝ կիրթ չիտեսպիիր . գիտուածիւնը միայն մտքին յատուկ է . միտքը մարդուն մէկ մասը մէկ գործիքն է : Աւրեմն մարդուն մէկ գործիքը զարգանալովը , ինք կիրթ չիտեսպիիր : Վարդ կիրթ ըսվելու համար պէտք է որ , իր մարդկային կատարելութիւնը ձեռք բերած ըլլայ : Աստի կրթութիւնը գիտուածիւն սորվեցընել չէնէ հասլա ինչ է : Արթուածեան ինչ ըլլալը գիտնալու համար պէտք է որ նախ մարդոյս ինչ ըլլալուն վրայ խորհրդածեմք . ու երբոր մարդոյս ինչ ըլլալը գիտնամք նէ , կրթութեան ինչ ըլլալիքն ալ ատկէ կըրնամք հետեւեցընել :

Ինչպէս կրթութեան , անանկ ալ մարդոյս ինչ ըլլալը ուղղակի չեմք կրնար գըտնալ . պէտք է որ մարդը ուրիշի մը հետ բողոքատեմք , ու անկէ իրեն ինչ եղածը հետեւեցընեմք :



Անհուն տեղծուածոց , և մեր չորս  
 դին կեցած անհամար տեսակ գոյակներուն  
 մէջ՝ մարդոյս հետը բազդատուիլու համար  
 միայն անասուն կենդանիները կան , որ ա-  
 ռաջին նայուածքով՝ մարդոյս և ասոնց մէ-  
 ջը նմանութիւն մը կըտեսնուի . բայց յիշա-  
 ւի աս նմանութիւնը կայ մի :

Անասունները գործողութեան կերպ մը  
 և գոյութեան եղանակ մը ունին որ իրենց  
 յատուկ է . մարդոյս ունեցածին հետ ա-  
 մենեւէին նմանութիւն չունի : Անասուննե-  
 րը հարկի իշխանութեան տակ են . բայց  
 մարդըս կամք ունի իրեն գործքերուն տի-  
 բող , որ ամէն մարդկային գործոց սկիզբը  
 ըլլալով , ներքին գործողութիւն ալ կըսուի .  
 այս կամքը անասնոց կամքին բնաւ չինքնա-  
 նիր , մարդուս կամքը կառավարող՝ կարող-  
 ութիւն մը կայ որուն Ռան կըսեմք , Ռա-  
 նը՝ կարգը և Ո՛րճարիւր կըհասկընայ . անա-  
 սունին քով ասանկ կարողութեան մը նը-  
 շոյլ անգամ չեմք տեսնար . ըսել է որ մար-  
 դոյս ու անասունին մէջ տեղը նմանութիւն  
 չիկայ : Աւտոի՝ անասունին ինչ ըլլալը հասկը-  
 նալով ալ՝ չեմք կրնար մարդոյս ինչ ըլլալը  
 հետեւցընել , բայց ասոնց երկուքին մէջ  
 բազդատուութիւն մը , մէկ համեմատութիւն  
 մը կրնամք հաստատել . երկուքին ալ գոր-  
 ծունէութեան միջոցները ու հնարքները  
 կրնամք քննել , և իրենց ազատ կամ հարկա-



ւոր գործքերուն նպատակը փնտրուել : Աւրեմն աս կերպով ալ կրնամք գտնալ թէ ա՛նասունը ի՞նչ է . և մարդ ի՞նչ կրնայ ըլլալ :

Անանց պատճառի գործ չըլլալը ամէնուն գիտցած բանն է . և ինչ ատեն մէկ յօժարութիւն մը կրտեսնելի , հարկաւոյ բապէս կը հասկըցի որ այս յօժարութիւնըս մէկ նպատակ մը ունի . բան մը ըլլալու է որ անոր յօժարիլ ըլլայ : Այլ երբոր մարդոյս և անասուններուն միջոցներուն վախճան մը և յօժարութիւններուն նպատակ մը ըլլալը հաստատուի նէ , աս կերպով երկուքին ալ վախճանը ինչ եղածը կրնամք ճանչնալ : Այլ ասիկայ ըլլալէն ետքը՝ մարդոյս կրթութեան վերաբերեալ հետեւութիւնն ալ դիւրաւ կը գրտնամք . բանդի կրթութիւնը օրինաւոր ըլլալու համար , պէտք է որ մեզ մեր նպատակին հասցընելու միջնորդ մը ըլլայ : Սիանգամայն մեր ձեռքը եղած միջոցները կամ կարողութիւննիս քննելով , մեր կրթութեան միջոցներն ալ կրնամք կարգի դնել :

Սարդըս անասունէն ելելօք տարբերողը՝ մարդոյս բանականութիւնն է : Անասունին ամէն ընկելքները՝ բնութիւնը առաջիւստ հողացեր է . ամէն պէտքերը ուրոշված են . փախաքներուն սահմանը կրտրելած է . կարճ ըսեմ . ամէն ըրածը հարկի տակ ինկած է : Արեն ասպրելու կանոն՝ իրեն

բնական ազգումը ունի, որ գրեթէ ծնած ա-  
տենէն իր կատարելութեանը հասած է, ա-  
նասունին բնական սխտոյիցը համեմատ, և  
անկէց ետքը եվելնալիք չունի, և ասիկայ  
զարմանալի բան մըն ալ է նէ՝ անասնոց բը-  
նութիւնը մարդէս վար բլլալուն մէկ նշանն  
ու հետեւութիւնն է: Օ՛նած ատենը աս  
բնական ազգումը իր հետը կը ընի, և այն  
ատենը ինչպէս որ էր նէ՝ մեռած ատենն ալ  
այնպէս է. ո՛չ եվելնալ ունի և ո՛չ պակսիլ:  
Մէկ խօսքով ըսեմ, ասոնք ՚ի բնէ՝ Վստուա-  
ծային օրէնսդրութեան դերի եղածի մը  
պէս կը ընին: Աստի թէ որ անասունին  
կարողութիւններն ու միջոցները չափի աս-  
նրված է նէ, հարկաւորապէս իրենց նախա-  
կըն ալ սահմանված ու չափված է. այսին-  
քըն այս աշխարհքիս վրայ է, ու անկարե-  
լի է որ ուրիշ կերպ բլլար:

Ի՛սկ մարդս ասոր պէս չէ. իրեն մէջ  
մէկ կարողութիւն մը ունի որ կը հասկընայ,  
և կընայ բովանդակել չէ թէ միայն զգա-  
յութիւններուն միջոցովը հասկըցած բա-  
նեբուն իրարու հետ համեմատութիւնը,  
այլ և համբանքէ և հաշիւէ դուրս եղածն  
ալ, որ ըսել է՝ անհունը:

Մարդս իր բանականութեամբ՝ արդա-  
րութեան սկզբունքը կիմանայ, խղճմբտան-  
քը իրեն արդար ու անիրաւ բան կենալը  
կիմացընէ, արդարին ջատագով և անիրա-

ւին դատախազ կրլայ :

Մարդըս ծնած ատենը բան մը ըսել չէ .  
քանի մեծնայ նէ ցանկութիւնն ու փափա  
քը կաւելնան : Ասնք սահման մը չունին ,  
և մարդոյս մտքին պէս ազատ են :

Մարդըս ծնած օրէն կըսկրսի դէպ ՚ի  
կատարելութիւնը քալել , իրեն գործունէ  
ութիւնը՝ անասուններուն պէս չորս դիէն  
սահմանով գոցված և չափի առնելով չէ ,  
անպտուղ չէ . այլ անսահման է : Մարդըս  
իր մտքովը կամքովը և գործքովը դէպ ՚ի  
անհունը կերթայ : Ա՛րքապէս թէ որ  
մարմնոյն գործարանացը կողմէն անասնոց  
նման է նէ , հոգւոյն կողմէն այնքան հեռու  
է որ , հեռաւորութիւնը չափ չունի :

Մենէքա կըզուրցէ որ “ Մարդուս ներսը  
աստուած մը ՚ի հարկէ կըբնակի , բայց չի  
գիտեմ որ աստուածը ” :

Մարդոյս կարողութիւնները իրենց կեդ  
րոն անհունը և կատարելութիւնը բռնած  
ըլլան նէ , հարկաւորապէս նպատակնին ան  
հուն չեղած չիկրնար ըլլար : Ինչ որ էապէս  
ճշմարիտ և արդար , բարի և գեղեցիկ է  
նէ , այն է կատարելութիւնը . ըսել է որ  
Ատուած է : Արեմն մարդոյս նպատակը  
Ատուած է : Այս հետեւութիւնա ճիշդ  
և մաթէմաթիքական է : Չէ՞ մի որ անա  
սունին ոտքը տեսնելով՝ քալելու , թեպուր  
ները և թեւերը տեսնելով՝ թռչելու , և

ձկան ականջները ու թեւերը տեսնելով՝  
 լողալու կարողութիւն ունենալնին կը հաս-  
 կընամք : Մարդոյս վրայ ալ անանկ կարողու-  
 թիւններ կը տեսնեմք որ , զինքը գէտ  
 ՚ի անհունը կը տանին : Ի՞նչպէս կը բնանա-  
 ըսել թէ անհունը մարդուն կեդրոնը և  
 նպատակը չէ : Ասիկայ՝ բնութիւնը սրխա-  
 լեր է ըսել է . քանզի թէ որ մարդոյս  
 փափաքած բաները ձեռք գալու բաներ  
 չեն նէ , բնութիւնը ինչո՞ւ համար մարդոյս  
 սրտին մէջ անոնց փափաք կը բերէ : Թէ որ  
 մարդը անհունի չի պիտի կրնայ հասնիլ նէ  
 անհուն բանի մը կենալը ինչէ՞ն պիտի  
 գիտնայ : Աորէն կը հարցընեմ . ասիկայ բը-  
 նութեան մէկ սխալն է մի . բնութիւնը  
 առ բանիս վրայ խաբւում է մի : Ի՞նչ բը-  
 նութիւնն ալ խաբւելու բան է մի : Մէկ  
 վախճանական պատճառ մը կայ , և այս  
 պատճառըս մէկ հատիկ է , և չի կրնար սը-  
 խալիլ : Մէկ կարգ մը կայ , որ ամէն տեղ  
 ինքզինքը կը ցըցընէ . անհնար է որ՝ միայն  
 մարդուս համար այս կարգը տակնուվրայ  
 եղած ըլլայ :

Ասով ստուգւած կը ըլլայ որ , մտաւոր  
 մարդըս մէկ նպատակ մը ունի , և այս նը-  
 պատակըս Աստուած է : Ի՞նչ մտաւոր  
 մարդ ըսելը ազատ մարդ ըսել է : Մարդոյն  
 գործարանաւոր մասը՝ որ մտաւոր մարդոյն  
 մարմին եղած է , միայն մարդոյս փափա-

քանաց իշխանութեանը տակը ինկած գործիք մըն է : Ստաւոր մարդն է որ կիշխե կը հըրամայէ , և մարդ բառով այս տեղ հասկըցածնիս ճշմարտապէս ասիկայ է : Ազատ ըսելն ալ՝ կատարեալ ըլլալու յարմարութիւն ունեցող ըսել է : Աստի մարդը ազատ ըլլալովը՝ կատարեալ ըլլալու յարմարութիւն ունի , և ազատ ըլլալն ալ անոր համար է որ , դէպ ՚ի կատարելութիւնը պիտի քալէ երթայ : Սարդը՝ միշտ իր ամէն կարողութիւններովը ու իր ամէն միջոցներովը , ամէն տեղ՝ և իրեն պինտ պարզ գործքերուն մէջը անդամ՝ կատարեալը պիտի փնտրուէ , և իրօք փնտրուածն ալ այն է :

Այս յառաջագէմ ընթացքը՝ ելելօք քաղաքականութեան և ընկերական վիճակին դրութեանը մէջ կերելի , ինչպէս որ վերջին դարերուս մէջ եղածները կրտեսներմք և կրկարդամք . և այս յառաջադիմութիւնը՝ թէպէտ լոկ մարդկային բաներու մէջ է , բայց մարդուս բանականութիւնն ալ ասով մաքրուեցաւ , և մարդոյս խելքը դէպ ՚ի Աստուած բարձրանալ սկսաւ : Ասոր ալ կրթութեան ընդ դէմ եղողները հատալ չեն ուզեր . բայց մեր խօսքը անոնց հետը չէ :

Սեւ է որ , ասանկով մեր բաղդատութեան երկու ծայրը գտանք : Հիմայ մեզի

կըմբնայ երբորդը փնտրուել, այսինքն թէ՛ մարդոյս կրթութիւնը ինչպէս ըլլալու է : Բնութիւնը մեզի կրցըցընէ կրթութեան ինչ ըլլալը, ու ինչ ճամբով ըլլալիքը : Առաջիւստ քսած եմք որ, կրթութիւնը օրինաւոր ըլլալու համար՝ հարկ է որ մեզ մեր նպատակին հասցընելու միջոց մը ըլլայ : Բսինք որ մարդոյս նպատակը կատարելութիւնն է, բայց կատարելութեան հասնելու համար, պէտք է որ մարդը մարդ մնայ այսինքն ազատ ըլլայ, որովհետեւ ինչպէս որ յառաջ ալ ըսվեցաւ, մարդ ազատ չլըար նէ, կատարելութիւնը իր նպատակը չէր կրնար ըլլար :

Ասկէ կըհետեւի որ՝ մարդ իր նպատակին հասնելու համար գրեթէ միջնորդութեան մը կարօտ չէ, որովհետեւ ինքնին ազատ է, ուրեմն իրեն յանձնըված է իր նպատակին հասնիլը : Բայց մարդը ազատ չիճընիր, միայն ազատութեան սելմը իր հետը կրբերէ, ըսել է որ իր բնական ազատութիւնը քանի որ մեծնայ, քանի որ դարդանայ, ան ատենը ձեռք կրբերէ : Բնութիւնը թէպէտ իրեն ձեռքն է ձգեր իր նպատակին հասնելը, բայց առաջ պէտք է որ իր նպատակին հասնելու իրեն կարողութիւն տայ, այսինքն պէտք է որ նախ զինքը ազատ ընէ :

Արթութիւնն ալ բնութեան հետեւե



լով, մարդը իր նպատակին հասցընելու հա-  
մար ուրիշ ընելիք մը չունի, բայց միայն  
մարդը ազատ ընելու ետեւէ ըլլալ : Բայց  
մարդը ազատ ընել ինչ ըսել է : Մարդը ա-  
զատ ընելու համար, զինքը ուրիշ ձեւի  
մը խօթելու չես, ինք՝ ինչպէս որ ըսինք, իր  
ազատութեան սերմը իր հետը կրբերէ, քու-  
ընելիքը միմիայն այն սերմը մեծցընել ու  
չխմեւցընել պիտի ըլլայ :

Մարդը կրկին էակ մը կրտեսարիլ, որով-  
հետեւ հոգիէ և մարմինէ բազկացած է :  
Հոգւովը մտաւոր մարդ կրովիլ, և մարմ-  
նովը գործարանաւոր : Այլէ բնութիւնը  
ինչ ձեւեր կրգործածէ՝ թէ՛ գործարանա-  
ւոր և թէ՛ մտաւոր մարդը ազատ ընելու  
համար : Աշխուքին ալ ամէն մէկ գործիքը  
ամէն մէկ կարողութիւնը մէկիկ մէկիկ կը-  
բանայ կրգարգացընէ, կրկատարելագործէ :  
Նախ մարմինը կրգորացընէ, ետքը գործիք-  
ները, ետքն ալ միտքը : Ասանկով՝ մարդուն  
բնաւ մէկ մասունքը թերի չիձրգէր, և  
այս կերպիւս մարդը իր մարդկային կատա-  
րելութեանը կըհասցընէ :

Արթութիւնն ալ օրինաւոր ըլլալու հա-  
մար, պէտք է մարդուն ամէն մէկ մասան-  
ցը բացօլելուն ու զարգացմանը ջանք ընէ .  
նախ մարմնայն առողջութեանը ու զօրու-  
թեանը հոգ տանի : Աշխարհ՝ սիրտը ու  
միտքը զարգացընելով, մարդուն խղճմտան

քը ու դատումը ուղղէ ու զօրացնէ: Կարճ ըսեմ. կրթութիւն ըսելը՝ մարդոյս բոլորը զօրացնելով մարդը ազատ ընելն է: Միտքը զօրացուր և բաց գիտութիւնով, սիրտը զօրացուր սիրով և մարմինը առողջութիւնով: Մը մարդուն միտքը և սիրտը և մարմինը կեանք ունի, այն մարդը կատարեալ մարդ է, այսինքն ճշմարտապէս ազատ է:

Աս հետեւութիւններէս կերեւի որ, մարդոյս կրթութիւնը շատ կանուխ կսկրսի. որովհետեւ մեր սահմանին նայելով, այն վայրկեանը որ մարդ էութիւն կրտանայ կրթութիւնն ալ հետը պիտի սկրսի:

Աստուածային բարերարութեան ճըւմարտապէս զարմանալի մէկ գործը սա է որ, ուր տեղ որ մարդն իրեն պիտոյքը հոգալու ինքը բաւականութիւն չունի նէ, Աստուած անոր համար մէկ ճար մը սահմաներ է: Օ՛նանելէն առաջ մայրը անխիայ ողջ և անվնաս պահելու պարտական է. չէ նէ իր առողջութիւնը ու կեանքն ալ վտանգի մէջ կրճըգէ:

Օ՛նած ատենէն անոր հոգ տանիլը՝ մօրը վրայ աւելի յայտնի և աւելի զօրաւոր հարկ մը կրլայ. քանզի սիրելու հարկին հետ կապուած է, տղան կրտնուցանէ, հոգն ու խնամքը և կտրիճութիւնը կաւելնայ, սիրտը աւելի ուժ կառնէ, անոր պաշտպանութիւն կրնէ, և առաջկուց որքան



վախկոտ եղած ըլլայ ալ նէ՛ այն միջոցին առիւծ կրկրտրի ։

Եւ այս նախախնամութիւնը և պաշտպանութիւնը որ միանգամայն ուժի և խելքի կրվեբարեբի, թէ մօրը և թէ հօրը կողմանէ ամենեւին չխարակօիր, մինչեւ որ տղան մեծնայ և անոնց կարօտութիւն չունենայ ։ Մի միայն այն ատենը ասոնք կրվերջանան, երբ որ տղան մարդ կրլլայ ու իրեն մեծութիւնը ու ազատութիւնը ձեռք կրբերէ ։

Եսոր վրայ մտնտամք նէ, կրտեսնամք որ չէ թէ միայն բնութիւնը մեղի կրցրցընէ կրթութեան ինչ ըլլալէբբ, հասպա՛ կրրթողները ով ըլլալէքն ալ մեղի կրգխտցընէ ։ Տղան ճնածին պէս բնութիւնը զանիկայ իր ճնտղացը կրլանձնէ ։ Ասիկայ տղին դաստիարակը ով ըլլալը չիգխտցընէր կոր մի ։ Աշխարհքիս փափփտութիւնները, և ինչուկ հիմա երեւան ելած քաղաքական օրէնքները, բնաւ չիկրրցան բնութեանը աս կամքին դէմ գալ ։ Մայրը տղան կրծընի, ու իրմէ չիզատեր. անիկայ կրթելը ինք իր վրան կառնէ ։ Մարդ ինչ վիճակի, ինչ կլխմայի մէջ ինչ տեղ կրլլայ ըլլայ, աս պարտքէն ետ չի կենար գոնէ տղայութեան առջի ժամանակները ։

Ես բոլոր զուրցածներէս կրհետեւցընեմք որ, նախ կրթելը մարդուս բոլորը զօրացընելով՝ զինքը ազատ ընել է ։ Արկ

բորդ՝ մարդը ազատ ընելու . զինքը կրթելու համար ուրիշ ընելիք մը չունիմք , բայց միայն բնութեան ընթացքին հետեւիլ : Արբորդ՝ բնութիւնը ճնողքները տղին դատարակ ընտրեր է . ըսել է որ տղին դատարակութիւնը ու կրթութիւնը օրինաւոր ըլլալու համար , պէտք է որ ճնողաց ձեռքը մնայ :

Մենք հիմայ տղին կրթութեանը կանոններուն վրայ չիսօտած , նախ տղին դատարակացը այսինքն ճնողացը վրայ պէտք է որ խօսիմք :

Ամուսնութեան նպատակը՝ զաւակ ունենալ ու զաւակ հասցընել է : Ատտի թէ էրիկ մարդ թէ կնիկ մարդ , ջամուսնացած պէտք է որ նային թէ , զաւակ հասցընելու կարողութիւն ունին թէ չէ : Ատտի նախ պէտք է որ հիւանդոտ չըլլան : Հիւանդոտ ճնողաց զաւակը չէ թէ միայն հիւանդոտ կըլլայ , հապա ճնողքը հիւանդ ըլլալուն , իրենց նայելու իրենց դեղ ընելու ետեւէ պիտի ըլլան , իրենց զաւակներուն ընելու խնամոցը շատը ետ պիտի մնան . զաւակին իրենց բեռ մը պիտի ըլլայ : Ասանկ հիւանդոտ ճնողքները ոչ համբերել , և ոչ թողուլ գիտեն : Իրենց հիւանդութիւնը քանի որ զիրենք նեղէ նէ , իրենք ալ իրենց սողոցը սրդողելով , զանոնք պիտի տանջեն , կամ սղաքը իրենք իրենց պիտի ձգեն որ

ինչ ուղեն նէ ան ընեն , ըսել է որ այս կերպիւրս տղոց կրթութիւնը յառաջ չի պիտի երթայ :

Արկրորդ՝ թէ որ ամուսինները պէտք եղածին չափ ասպրուստ չունենան նէ , ան ատենն ալ տղաքնին իրենց բեռ մը պիտի ըլլայ : Ի հարկէ իրենք խեղճ ըլլալովնին , իրենց տղոցը խեղճութեանն ալ պատճառ պիտի ըլլան : Արենց ասպրուստը ճարելու ետեւէ ըլլալուն , իրենց տղոցը չիպիտի կրնան նայիլ : Անոնց համար ծախք ընել պէտք ըլլայ նէ , չիպիտի կրնան ընել , ըսել է որ տղոց կրթութիւնը անանկ երեւի վրայ ձգած պիտի մնայ : Ասկէ չիկարծելի որ ծնողքը ունեւոր ըլլան նէ , տղոց կրթութիւնը միշտ յառաջ կերթայ : Թէ որ իրենք տղին չինային , ու տղին կրթութիւնը օտարին ձեռքը ձգեն նէ , ի հարկէ ան աւանն ալ տղաքը բնութեանը ուղածին պէս յառաջ չիպիտի երթան : Անութիւնը՝ ինչպէս որ ըսի , անոնք ընտրէր է տղան ամբողջ դաստիարակելու համար , ու գրեթէ իրենց տղին ազդելու համար պէտք եղածէն աւելի կարողութիւն տուեր է : Աւտի աններելի է որ այս գործը օտարին ձեռքը թողուն :

Տղին ծնած ատենը իրեն համար ծնողացը ընելիքը՝ միայն մարմնոյն վերաբերեալ խնամքներն են : Բայց քանի որ տը

զան մեծնայ, ու իր սիրտը ու միտքը բանեցընելու ըլլայ նէ, ճնողաց սարսաւորութիւնը ու ընելիքնին ալ կաւելնայ :

Մայրը տղին բարուցը առաջնորդ է, հայրն ալ մտքին : Արկուքը մէկ տեղ սարսաւորութիւն ունին պզտիկ տղին կամքը ու գործունէութիւնը կարգի դնելու : Տղան իր գործունէութեան առջի փորձը իր մօրը քովը կրնէ, ու թէ որ կրկարծես որ մարդոյն ըլլալիքը ու իր ետքի ձեւը իր գործունէութեանը առջի փորձէն կախած չէ, կրխաբովիս :

Տղին առջի դաստիարակը հայրը չէ, մայրն է : Բնութիւնը կնկան ձեռօք մեր կրթութեանը սկզբնաւորութիւն կրնէ, ու բովհետեւ կինը իր դիւրագգածութեամբը աւելի տղին մօտ է, քան թէ հայրը, որ աւմէն բան դատմանը կառաջարկէ : Հայր մը մօր մը պէս ամէն բան իր սրտին չիհարցընէր : Հայրը մօր պէս չիդիտէ ինքրդինքր իր տղին նուիրել : Հայրը անկարելի է որ տղին լեզուէն խօսել ու մօր մը պէս իրեն ազդել գիտնայ :

Մայրը տղին հարկաւոր ընկերը ըլլալով, անոր կազդէ ինչ որ սրտին մէջը ունի ու ինչ որ կըզգայ : Տղան ալ կըդիտէ ու իրեն սրննդատու ու պաշտպան ընկերօջը նմանելու կըհետեւի : Ինչ որ մօրը քովը տեսնայ, ինչ որ անկէ լսէ իր գեռաբուսիկ

սրտին մէջ անեղծելի գրերով կրգրէ . մօրը իր տղին վրայ ունեցած անբակտելի սէրը տղին կընէրգործէ ու գրեթէ պղտիկ տղին սրտին մէջ սէր կըպտղաբերէ : Վերջապէս տղին բարոյական մասը իր մօրը քով կըսկըսի երեւան ելլալ . ըսել է որ մայրը կըհաստատէ բարոյականին առջի հիմը : Սարգու մը , տան մը , աղգի մը , մարդկային ընկերութեան բարոյական մասին առջի օրինակը կինն է . առջի գաղափարը անկէկուգայ : Մէկ խօսքով ըսեմ՝ կինն է մեր բարուցը առաջնորդողը :

Որչափ մեծ առաքինութիւններ մեզի կըպատմեն նէ հիները , կըտեսնամք որ կանանց քովը ատոր սերմը կայ : Հռովմայեցւոց ատենը քաջասրտութիւնը առաքինութիւն կըսեպիւէր . ու աղգին համար՝ և Հռովմայի ազատութեանը համար մեռնիլը պարտք մըն էր : Նայէ ինչպէս էին անատենական կնիկները : Արիտլանտին մայրը աւելի ուղեց իր տղին մեռնիլը , քան թէ Հռովմին վար խնարը : Նրուտոս իր ապրտամբելու միտքը՝ իր կնկանը ( որ էր Ատտոնին աղջիկը ) , չէր յայտնած : Վմացաւ կինը որ իր էրիկը իրմէն բան մը կըպահէ , գնաց ինքրզինքը վերաւորեց , մէկ մեծ խոց մը բացաւ ու անոր ցաւելուն համբերելով քանի մը օր սպասեց , ետքը գնաց երկանը ըսաւ որ , քուկին գաղտնիքըդ ինձի կրնաս

զուրցել : Նայէ՛ խոցըս տես . որ քեզի չափ  
ցաւի ու տանջանաց դիմանալ գիտեմ :  
Հռովմայեցիք հայրենասէր ու քաջասիրտ  
էին . տեսանք որ իրենց կնիկներն ալ էրիկ  
մարդոցմէ վար չէին , ու անկարելի է որ  
ուրիշ կերպ ըլլար :

Հռովմայեցիք ընչասիրութիւնը մտու-  
թիւն մը կրտսպէին հասարակապետու-  
թեան ատենը : Օերակոյտը Պողոմէոսին  
դեսպաններ խաւրեց , Պողոմէոսն ալ Հը-  
ռովմ մեծարելու համար իր դեսպաններուն  
ոսկիէ թագեր շնորհեց : Ասոնք մարդավա-  
րութեան համար ընդունեցին , բայց  
դուրս ելած ատեննին , ուր որ Պողոմէո-  
սին արձանը տեսնանէ , ան թագերը ար-  
ձաններուն գլուխը գրին : Բայց նայէ ան  
ատենական Փաբիասի և Փաբրիկիտսի տու-  
ները ինչպէս էին . սրչափ ան ատենական  
կնիկները կանացի զարդարանքներէ հեռու  
էին . աշխատելէն ու տանը կարիքը մըամը  
տալէն ուրիշ բան չիգիտէին . իրենց փառ-  
քը իրենց ընտանիքն էր :

Ատրք Յունաստանի տիրեց Հռովմ . Յոյ-  
ները խառնըվեցան Հռովմայեցւոց . նախ  
Հռովմայեցի կնիկները գլխէ ելան ու զար-  
դի և զեղխութեան ինկան . Հռովմ ալ կոր-  
ծանեցաւ : Արդ՛ Հռովմայեցւոց սրառ-  
մութիւնը , կրտսնաս որ Հեղիոզարալներ  
աշխարհք չեկած Սեասղինաներ գանըվե-  
ցան :



Տեսանք որ կնիկներուն ու էրիկմարդոց առաքինութիւնն ու մոլութիւնը մէկ տեղ կը գըտնուիին կոր. նայինք աս առաքինութեանց կամ մոլութեանց պատճառը մեր ըսածին պէս կի՛նն է մի: Յօ՛ւ պէտ կի՛նը ու էրիկմարդը մէկը զմէկու վըայ ներգործութիւն ունին, բայց բարուց մասին կանայք սուսուել ներգործութիւն ունին արանց ու մանաւանդ տղոց վըայ, որովհետեւ ամէն առաքինութեանց սկիզբը ու աղբիւրը սէրն է. կանայք ալ ՚ի բնէ ձիւրք ունին սիրելը. սիրելը հարկը առուել կանանց քով կայ քան թէ էրիկմարդոց քով: Արիկմարդն ու կի՛նը կընկերանան. կնկան փնտրուածը և իր աւելի մեծ փառքը՝ էրիկմարդուն սիրտը տանը կապել և իր տունը իրեն սիրցընել է. իր տղաքը սիրելով, զինքը անոնց սիրել տալ է: Աւրեմն թէ որ սիրոյ աղբիւրը կի՛նն է՛նէ, ՚ի հարկէ առաքինութեան գործունեայ պատճառը կի՛նն է:

Մարդ իր ազգը և հասարակութիւնը սիրելէն առաջ, պէտք է որ իր ընտանիքը սիրել գիտնայ: Աի՛նն է այդ սիրոյ սխառճառը, ուրեմն կի՛նն է առաքինութեան առջի դասատուն:

Հըլենայինները՝ մանաւանդ Աթենացիք աղէկ գիտցան բարուց ու առաքինութեան մասին կանանց ներգործութիւնը: Վրե՛թէ գիտցան որ կնիկները ՚ի բնէ ընտ

րած են մարդոս բարոյականի մէջ կրթելու համար : Որովհետեւ Հելլենացիք , մանաւանդ Աթենացիք , կնիկները ընտրեցին հաւատք սորվեցընելու համար . հաւատքը ընտոր որ ամէնքն ալ գիտենն , բարոյակա նին մէկ մասն է :

Հելլենացւոց կրնիկները՝ Արէսի , Հերմէսի , Հեփէստի Քրմուհիները շեղան . բայց Ապոլոնի , Գիտի , Պոսիթոնի , Տիանայի , Հերայի , Գէմէտրի , Աթոնէի , Աստղիկայ , Անահիտի ու Աթէնասի անոնք ծառայեցին : Գողոնեան տաճարը Քրմուհիներով այնչափ լեցուն էր որ , Աղիտ եղած Ողտմպեան Արամաղդեան տաճարէն վար չխընացին :

Քրմուհի ըսելով՝ տաճարները քաշված մենակեացները չիհասկըցվի . գէթ յունաց

1 Եփեսոսի Քրմուհիները երեք տարի կըտրվէին . երեք տարի սորվածնին կըգործածէին , ու երեք տարի ալ կըգտտարտրակէին : ( Պուտոմիա . Գէրք Ը . Ստրաբոն ալ Պուտոմիոսին զուրջածը կըստուգէ ) : Մէկը Ելեւսեան գաղանկաջը վերահասու ըլլալ ուզէր նէ , Ելեւսեան Քրմուհիները ամիկայ կտանէին ու կըպատրաստէին տաճարը մտցընելու , իբն գիտմալիք բաները կըտրվեցընէին : Եւցն ալ փորակը ընելու ժամանակը գար նէ , Ելեւսեան Քրմուհիներուն մեծը որուն իւր ոգիմիտաս կըսեն , միշտ իր հետը կըգըրանդվէր ու հոն Քրմուպեաին հետ միշտ գտնուելով , առն բանի ծանօթ ըլլալով կըբերէ որ իւր ոգիմիտասն ինք այն Ելեւսեան գաղանկաջը կըտրվեցընէր , ու գրվի՛ն Քրմուպետը միայն հանդէտը կընէր :



մէջ ատանկ չէր . Վոդոն , Վեղրիս , Արգոս  
 երկու երեք հաս Վրմուհի միայն կային որ  
 տաճարը կրկենային . մնացածները կուգային  
 պաշտօնին կրկատարէին ու կրդառնային  
 իրենց տանը կառավարութեանը : Վրենց  
 գործը չէ թէ միայն պաշտօն մատուցանել  
 էր , հասրա բարոյականի ու կրօնի վարդա-  
 պետութիւն ալ ընել , խօսքով ալ գործքով  
 ալ . սրովհետեւ տաճարէն դուրս իրենք  
 ալ ուրիշ կնիկներուն պէս տուն և ընտա-  
 նիք ունէին . հոն ՚ի հարկէ կրօնի և պաշ-  
 տօնի վարդապետութիւն ընելով , հաւատոյ  
 կապուիլ ու ո՛ր Չաստուածոց կրճառային  
 նէ՛ անոնց նմանիլ կըտորվեցրնէին իրենց  
 տղոցը . ահա աս պատճառաւ Աթենացի  
 կնիկները Աթինասի նմանելով ամէնն ալ  
 տան փիկին եղան , որոնց համբաւը բոլոր  
 Յունաստան տիրեց :

Աթենացիք Ալեւսեան տօնախմբու-  
 թիւն մը ունէին մեծ , բոլոր Յունաստան  
 աս տօնախմբութեանը կուգար . շէքէնի  
 մէջ գտնուված բոլոր Վրմուհիները հոն կը  
 ժողվելէին , ու տօնախմբութեան ետքի օ-  
 րը մեծ հանդէսով օրինաց գիրքերը սրբա-  
 զան գիւղը կըտանէին : Այս գիրքերը տանե-  
 լու համար Վրմուհիները չէին ընտրեր .  
 հասրա Աթենացւոց ցեղերուն մէջէն օրի-  
 նաւոր կարգըված ու տղու տէր կնիկներէն  
 կըզատէին : Ասոնք քանի մը օր առանձին

կենալով կրմաբլրովէին, ետքը հանդէսով նուիրական կողովին ( սէփէթին ) մէջը օրէնքը սրբազան գիւղը կրտանէին :

Աթենացիք կուղէին ասով օրինապա հութիւնը մայրերուն յանձնել նէ՛ չ՛ մի սրտաբար պղտիկուց օրէնքը ճանչնալ ու սիրել և անոնց հնազանդիլ սորովին պիտի . ո՞վ պիտի սորովեցնէ մօրմէն աղէկ : Աթենացիք աղէկ գիտէին որ մօրը զուրցածը նայածը բրածը , աւելի ազգուութիւն ունի աղին վրայ , քան թէ դրսէն մէկու մը : Արովհէտեւ դրսէն բարեկամ մը աղուն իր մօրը չափ չիկրնար սիրելի բլլալ , ուստի խօսքն ալ անոր խօսքին չափ չիկրնար աղղել :

Աւրոպացիք միջին դարերուն մէջ գազանաբարոյ էին . մինչեւ իրենց խոստովանահայրնին կրճեծէին թէ որ բրած մեղքերնուն արձակում չիտար նէ . ու մինչեւ հիմա ասանկ գազանաբարոյ կրմրնային , թէ որ կանանց օրինակը իրենց չազդէր նէ : Ամէն աղնուական իր բերդը քաշված , և ամէն մարդ իր տունը առանձնացած կենալով իրեն ընտանեացը քով իր բարքը մեղմեց : Պատիւ բառը՝ որ իր ճիշդ նշանակութիւնը ետքի դարերուն մէջ ստացաւ , կանանց գօրծն է : Անայբ իրենց ընարած Ասպետներուն՝ ( որ Վասիլիէն կրավին , ) թուր կապած ստեննին պարտք կրդրնէին տէր չունեցող մարդը պաշտպանել , անի-

րաւէն փասխչիլ ու մահէն չխախնալ :

Ինչ առարկինու թիւն որ կըլլայ ազգի մը  
 և ժողովրդեան մը մէջ, պէտք է որ նախ  
 և յառաջ տներու մէջ կանանց քով անոր  
 սկզբունքը գտնուի : Կանանց մեր վրայ ու-  
 նեցած աս հզօր ներգործութիւնը մոռցը-  
 ված բան մը նէ մեր մէջը, ու գրեթէ մեր  
 կանանց քով ալ աս ներգործութիւնը ընե-  
 լու կարողութիւն չեմք տեսնար : Մայց ա-  
 տոր պատճառը սով է, էրիկմարդիկ : Այնչափ  
 կնիկները աչքովնուս առջին բանի մը տեղ  
 չեն սեպւած, որ գրեթէ մայր ըլլալէնին  
 ալ մոռցրւած է, իրենց տղոցը դաստիարա-  
 կը ըլլալին մտքերնուս ելած է : Մայց գիտ-  
 նալու է որ կարգըված էրիկմարդը իր տու-  
 նը տնտեսելու կողմէն կէս մարդ է, և ա-  
 նոր միւս կէսը կնիկն է, երկուքն ալ իրենց  
 մասին կատարելութիւն ունին ու մարդկա-  
 յին կատարելութիւնը երկուքովը կըլլայ,  
 ահա ասիկայ մոռցեր եմք, բայց երանի՛  
 թէ մամտայինք :

Աղջիկ տղայ մը ծնի նէ, մտքերնիս պի-  
 տի բերեմք որ ասիկայ օր մը մայր պիտի  
 ըլլայ, պէտք է որ՝ այն բաները որ մինչեւ  
 հիմայ անանց սորվեցրնելու հոգ չէր տար-  
 վեր, սորվին ու գիտնան, բարոյականի և  
 կրօնի պարտքերը սորվին որ ետքը ուրիշին  
 սորվեցրնեն : Ա երջապէս ինքրդինքնին ճանչ-  
 նան, իրենց բնական տաղանդը, ընկերու-

Թեան վրայ իրենց ունենալու ներգործու-  
թիւնը գիտնան ու սորվին: Արենց արված է  
նախախնամու թենէն սէր ներգործելը: Թէ  
որ իրենք սիրել գիտնան նէ, ետքը իրենց  
տղոցն ալ կրնան սէր ազդել. երբ որ իրենց  
տղոցը վրայ սէր ունենալ գիտնան նէ, ի-  
րենց տղաքն ալ պզտիկուց ճնողասէր կըլլան:  
Օնողասէր մը դիւրաւ կըսորվի ընկերասի-  
րութիւնը, հայրենասիրութիւնը, ազգասի-  
րութիւնը, և վերջապէս Աստուածսիրու-  
թիւնը. սիրելը իր պարտքերը ճանչնալն է,  
բարոյականն ալ ուրիշ բան չէ:

Մտնք որ մարդուս առջի գաղափարնե-  
րը իր մանկութեանը խնամք տանողներէն  
կուգայ, ու իր գործունէութեան առջի  
փորձը անոնց քով կրնէ: Ամենապէս հատ-  
կըցուցինք որ աս փորձը մարդուն վերջին  
զարգացմանը վրայ մեծ ներգործութիւն  
ունի: Ասիկց կիմացովի թէ որչափ ճնողացը  
պարտք է իրենց ամէն ըրածնուն մէջ դիւ-  
շանալ:

Տղան մանկութեան առջի ստենները  
միայն գաղափարներ կըժողվէ, ու երբ որ  
ետքը դատել սկըտի նէ, իր առջի գատումը  
աս է: Օնողքներս իմ բարեբարներս են,  
իմ աղէկութիւնս կուղեն. և ս ամէն բան  
անոնցմէ կըսորվիմ. ուրեմն անոնք ինչ որ  
ըսեն նէ իրաւ է, ու ինչ որ ընեն նէ աղէկ  
է: Ահա սոյի մը գործունէութեան սկիզբը:

Մտել է որ աս դործունեութեան մէջ առաւել նմանութիւն կայ, քան թէ դատում, կամ թէ իր դատումը ճնողացը վրայ ունեցած հաւատարմութեան ու վարկումին հետ կասկած է: Տղան իր ճնողքէն օրինակ կառնէ անոնք ինչ ընեն նէ, ինքն ալ ան ընելու կընայի, աս նմանական դորութիւնը ինչպէս որ ըսի, տղին իր ճնողացը հաւատարուն վրայ հիմնած է, ու մէկ Մտուածային բարեբարութիւն մըն է տղին, որովհետեւ ասով ճնողքը դիւրաւ կազդեն տրդին բարոյական սթարտուց սկզբունքը:

Մտուած ու ընկերդ սիրէ ըսեն նէ տրդան կըհաւատայ, ու սիրով կըսիրէ: Հիմա ճնողաց սրչափ պէտք է որ աս վարկումը պահել տան իրենց առաքինութեամբը ու բարութքը: Աս կընեմ կոր, բայց իմ ըրածը աղէկ չէ, դուն անանկ մընեք՝ ըսելը տղոց, անոնք քեզմէ զատել է: Նմանապէս թէ որ տղան տեսնայ որ իր ճնողքը ոչ Մտուած կըսիրեն և ոչ մէկզմէկ, չէ թէ միայն Մտուած ու զիրենք սիրելէն կերկրայի՝ հասցա իրենց հաւատալն ալ կըվերցընէ: Ալ իր ճնողքին խօսքը սրտգամի պէս չիբռներ, ու ասով ճնողացը տղին վրայ ունենալուներդործութիւնը ոչինչ կըլրայ:

Պէտք է որ ճնողքը անանկ վարսին որ, տղան իրենց վրայ վարկում ունենայ մինչեւ ետքը, մինչեւ ան ատենը, որ ալ պէտք է:

զածին չափ գաղափարներ ունի, ու ինքնիրեն դատելու կարողութիւն ստացեր է: Մինչեւ ան ատենը, որ մէկ կատարելագոյն էակ մը, Աստուած մը եղածը հասկընայ, որովհետեւ ալ ան ատենը քուկին զուրցածրդ պատգամի տեղ բռնելով քեզի չիպիտի հետեւի, հապա գերագոյն էակը իրեն առաջնորդ բռնելով անոր նմանելու պիտի ջանք ընէ:

Մայրը և հայրը պէտք է որ կրօնասէր ու Աստուածասէր ըլլան, առանց ասոր տըղայ մը անկարելի է որ սղոթիկուց Աստուած սիրել սորվի: Բնաւ կեղծաւոր կամ սնապաշտ չըլլան: Մնապաշտին խղճմտանքը իր վարուցը ու գործքերուն վրայ միշտ սաստիկ ներդործելով վախի մէջ է ու գրեթէ խելամը թիւր կարծեաց գերի կըլլայ: Ասոր հաւկառակը անաստուածը մարդոցմէ կըլլու պատժէն ապահովի նէ ուրիշ վախ մը չունենար: Անանկը անխիղճ կըլլայ, այսինքն խղճմտանքը կըկուրնայ:

Կարծեմ հասկըցուցինք թէ՛ սրչափ ծնողաց պարտք է որ առաջ իրենք առաքինի ըլլան, իրենք աղէկ բարք ունենան որ առաքինի բարեբարոյ զաւակ հասցընեն:

Հայրը շատ զգուշանալու է որ իր տըղին առջին իր կինը չարամարհէ, նմանապէս մայրը հօրը անիրաւութեանը վրայ աղին առջին լեզուին չիտայ: Ամուսիններ



բուն մէկըզմէկու ունեցած վարկումէն կախ  
ված է նախ և առաջ տղին իրենց ունենա  
լու վարկումը : Այլևորդ իրենց միջի սիրոյ  
պաշտ-թիւնը տղին սէր չիկրնար ստղարէ  
րել :

Տղայ մը քանի որ մեծնայ , տղջիկ է նէ ի  
րեն օրինակ իր մայրը կըզատէ , մանչ է նէ  
իր հայրը . ալ կակրսին երկուքն ալ անոնց  
պէս ըլլալու : Պէտք է որ ծնողքը իրենց զա  
ւակը իրենցմէ չիզրկեն , միշտ քովերնուն  
չիզատեն . պէտք է որ հայրը ամէն իրիկուն  
տուն գայ , նայէ ինչպէս տղայ մը իր հօրը  
քովը գոհ է . աչքը իր վրան է . ինչ ընէ  
ինչ խօսի նէ , մտիկ ընէ պիտի . որովհետեւ  
ալ յառաջանալու զարգանալու ջանքեր  
կրնէ կոր :

Պէտք է որ պզտիկուց տղին բնաւորու  
թիւնը հայրը սորվի . ինչ մտլութիւն տես  
նայ նէ զպելլու ջանայ , ու ինչ առաքինու  
թեան սերմ կայ նէ քաջալերելու : Աորէն  
կրկրկնեմ . պզտիկ տղոց համար օրինակաւ  
առաքինութիւնը ցրցրնելը աւելի ազդու  
է , քան թէ խօսքով ու սատուելով : Այրեմն  
առաքինութեան օրինակներ պատմելու են .  
վրանարհակ արաբացինե ըր իրիկունները կը  
ժողվըվին իրենց ընտանիքովը : Արանին ծե  
րը պզտիկ բան մը կըպատմէ , ան պատմու  
թեան մէջը առաքինութիւն կայ նէ կըզո  
վէ , մտլութիւն կայ նէ կըպարտաւէ : Ահա

ասանկով տղին միտքը կրգարգանայ ու իր բարոյական մասը կրգօրանայ : Անր կողմի պղտիկ տղաքներն ալ սրատմիչներ ունին , բայց տան պառաւանները , որոնք ոգիներու ու Փէրիներու գաղափարներ տալով , միայն վախնալ սորվեցընել գիտեն :

Տղին կիբքերը բարեկարգելու համար , երբեմն սրատմել հարկ կըլլայ : Պատիժ տալը բնականէն դուրս բան չէ , ան ատենը միայն բնութեան դէմ կըլլայ , երբոր տղին խելքը չիհասնիր : Տղին հետ շատ արդաւրադատ ըլլալու ես : Տղան արդարութիւնը մեծ մարդու պէս գիտէ , չէ թէ միայն երբոր դատելու սկըսի նէ , հասպա պղտիկուց դեռ մտաւոր մարդը երեւան չելած ալ , իրաւ՝ պղտիկ տղաք արդարն ու անիրաւը կրգգան բան թէ կըհասկընան , բայց չէ մի որ միշտ անիրաւ բանին դէմ կըբարկանայ ու կապտտամբի , քիչ մը մեծնայ նէ նայէ ինչպէս՝ երբոր իր եղբայրը բռնաւոր տղի մը ձեռք իյնայ նէ կերթայ կազատէ , անոր համար ծեծ ալ կուտէ , իր վրան հոգ չեղած մարդու մըն ալ գէշ բան մը ընեն նէ , անոր կողմը կանցնի , բռնութեան ու անիրաւութեան դէմ կըլլայ , ու անոր համար վրէժխնդիր կըլլայ : Ասիկայ արդարութիւնը խոստովանել չէ մի : Աւրեմն ճնողայ մեծ պարտք է արդարադատ ըլլալ , վասն զի թէ որ սրատիժը անիրաւ ըլլայ նէ , քեզի դէմ



կելլայ, գլուխ կրվերցընէ, ու ձեռքէն բան մը չիզայ նէ, յիս կըստահէ, բռնութիւն տեսնալով, բռնութիւն կըսորվի: Այս կերպով մեծցած տղան յիսակալ բռնաւոր ու անիրաւ կըլլայ:

Նմանապէս տղի մը՝ աս բանը մընէր ըսես նէ, թէ որ իմանալու կարողութիւն չունեցած ատենը պատճառ չիպիտի ցըցընես նէ, պէտք է որ տղան իմանալու կարողութիւն ունեցածին պէս հասկընայ քուկին արգիլմանը պատճառը: Տղան քուկին կամքիդ հնազանդի նէ, պէտք է որ քուկին ըսածիդ աղէկ եղածը գիտնայ ու քեզի հաւատայ: Թէ որ տղին չիհասկըցընես ան աղէկութեան պատճառը, ու բռնութիւն ընելով միայն քուկին կամքը պատճառ ցըցընես կամ թէ երբեմն առանց իրաւունքի տղան բանի մը բռնադատես, վերջապէս թէ որ տղին կուրօրէն հնազանդիլ սորվեցընես նէ, իրեն բռնաւորութիւն ըրած կըլլաս: Տղան ալ քեզի պէս մարդ է, իր բնական ձիրքը ազատ ըլլալ է, թէ որ դուն պղտիկուց իր ազատութիւնը գրաւես նէ, իր վիճակը գերիյի վիճակ ըրած կըլլաս: Ահա ասոր համար կըսեմ որ տղաք իրենց ճնողացը կամքին գերի ըլլալ չիսորվին, հապա՛ միայն ճնողքնին իրենց զաւակացը կամքը առաջնորդեն: Այնպիսի ու բնական հնազանդութիւնը արդարապէս ճնողաց

զուկրններուն քով կրգրտերլի :

Վերջապէս տղաքը պատժելու կերպը անասուններուն պատիժներուն շինմանի : Պատժելը միջոց մը պիտի ըլլայ տղին աղէկու թեանը , չէ թէ քուկին վրէժառութեանը : Յաւ տարով , խտուրթեամբ պատժելը ոչ մարդու դործ է , և ոչ մարդու համար է : Վարմինը պատժելուդ , ուրկէ հիւանդութիւն կրնայ յառաջանալ , տղին սիրտը պատժէ : Տղան իր ընկերներէն կը դատես , չես թող տար որ խաղայ , ուղածը չես իտար , կամ թէ կամրջընես , ահա աս կերպերով միայն պատժելու է :

Պատժելը խոհեմութեամբ ըլլալու է . երբեմն պատժելու տեղը վարձատրելու է , ու ասոր հակառակը , վարձատրելու տեղը պատժելու է : Պէտք է որ ճնողքները աւտնք սորվին գիտնան երբ ու ինչ ընելիքնին :

Տղան քիչ մըն ալ մեծնայ նէ , մտաւոր մարդը երեւան կելլայ պէտք կըլլայ ան աւտենը որ միտքն ալ կըթես , իրեն արտաքին տեղեկութիւններ տաս , ետքը ինչ վիճակի մէջ պիտի գտնուի նէ ան վիճակին ձեւաջրնես : Նախախնամութիւնը ճնողաց յանձներ է տղուն ամէն կերպ կըթութիւնը , բայց թէ որ ճնողքը տղին միտքը կըթելու կարողութիւն չունին նէ՝ պէտք է որ դատտխարակի մը յանձնեն իրենց տղաքը : Տղադօտարի մը յանձնելու ատենըդ , պարտք է քե-

զի որ շատ դուռ թեամբ ընտրես : Այլ  
 նրչափ աղէտալի կըլլայ տղոց համար , թէ որ  
 իրենց ճնողացը խնամքը ու սէրը օտարին ան-  
 հողութեանը ու վատութեանը հետ փոխեն  
 նէ , դատարակ մը կամ վարժապետ մը  
 միայն գիտութիւն գիտնալով չըլլար : Այտք  
 է որ բարք ու հաւատք ալ ունենայ , ինքը  
 բարեբարոյ ու արդարադատ ըլլայ , բնաւ  
 անիրաւ չըլլայ , զաւկի տէր ըլլայ որ ճնողա-  
 կան գութ ունենայ ու զաւակ նայել գիտ-  
 նայ , խստաբարոյ ու անհամբեր չըլլայ ,  
 ծանր կենայ , ներել գիտնայ , քաղցրաբարոյ  
 ըլլայ որ տղին զուրցածին հարցուցածին  
 պատասխան տայ , տղան դատարակողը  
 պէտք է որ անոր բարեկամ ըլլայ , չէ թէ  
 անիկայ վախցընելու համար սահմանված  
 մարդ մը :

Օնողքը տղաքնին վարժապետիմը յանձ-  
 նելովնին ալ աչքովնին չիզոցեն , պէտք է որ  
 քննեն նային , տղին ամէն բրտածին վերահա-  
 սու ըլլան , որովհետեւ տղաքը մինչև մարդ  
 ըլլան նէ իրենց պարտք է որ ամէն պէտքեր-  
 նին հոգան :

Տղաք այս կերպերով բարեկիրթ ըլլան  
 նէ , չիկարծըվի որ միայն տղոց աղէկութիւն  
 կըլլայ ատկէ , հասրա կրթողներն ալ տղոցը  
 աղէկութեամբը կըվարձատրին : Այս՝ ծը-  
 նողքը իրենց տղաքը կրթելովնին , իրենց ծե-  
 բութեան ատենը մխիթարութիւն մը պատ-

բաստած կրղան : Տղարնին իրենց բնական ու  
 առաջին բարեկամներն են : Թէ որ առ բա-  
 րեկամները խնամքով ու կրթութեամբ ի-  
 րենց կապեննէ , ՚ի հարկէ անտղարք ետքը  
 երախտիք կրճանչնան : Հաղարին մէյնը չը-  
 լար իր ճնողացը ապերախտութիւնն ընող  
 որդի : Եւայց հայր մը մայր մը թէ որ իր տղին  
 ունեցած սարտքերը չիկատարեննէ , ՚ինչ-  
 պէս անկէ երախտագիտութիւնն կրնան ու-  
 զել . ՚ինչ տուին որ ինչ ուղեն : Եւ հա ասկէ է  
 որ տղար մեծնաննէ ապտտամբ կրճեւա-  
 նան , ճնողքնին չեն սեպեր , ու իրենց ճընող-  
 զացը ինչ որ ընեն բարերարութիւն մը ը-  
 րածի պէս կերելի իրենց : Եւսիկայ սրչափ  
 աղետալի բան է ճնողաց համար , որոնք ՚ի  
 բնէ մեր բարերարներն են ու իրենց ըրա-  
 ծովը պէտք է որ մինչև վերջը մեզի բարե-  
 րար մնան ու մենք ալ անանկ ճանչնանք :

Մարդոց անկրթութիւնը միայն իրենց  
 ու իրենց ճնողացը ու ընտանեացը չիդպչիր ,  
 հասրա ասկէց աւելի ազդին կրդպչի : Եւզին  
 շահ է որ տղոց կրթութիւնը ինքը հողայ  
 ու ճնողաց կամքին չիձրդէ , որովհետեւ աղ-  
 գի մը աստիճանը ու զօրութիւնը իր ազդալ-  
 նոցը կրթութենէն կախված է : Արչափ  
 ազդի մը մէջ տգէտ գանբլի , այնչափ ալ  
 ազգը սխալանաց կրհանդիսալի , ու որչափ  
 ազդի մը մէջ բարեկիրթ գանբլի , ու որ-  
 չափ առարքինութեան ու ազգասիրութեան

սերմ ըլլայ, այնչափ ալ ազգը յառաջ կերթայ ու զօրաւոր կըլլայ: Ազգի մը զօրութիւնը իր բարոյական ու մտաւորական կողմէն է. ասոր ապացոյցը ամէն ազգի պատմութեանը մէջ կըզանաս:

Աթենայիք քիչ-որ հասարակապետութիւն մը ըլլալով, իրենց իմաստութեամբը բոլոր Յունաստանի պետութեանց մէջ յարգոյ եղան, ամէն կողմէն ասոնց խելք հարցնելու և ասոնցմէ իմաստութիւն սորվելու և կրթութիւն առնելու յատուկ մարդիկ կուգային:

Ազգ մը իրեն համար երկու բանէ դգու շանալու սրարտական է: Այլ մը աւրբլեւէն ոչնչանալէն, մէկ մըն ալ չաճելով չի բարգաւաճելէն: Աճել ըսելով ազգայնոցը միայն շատնայր չիհասկըցիլի, հասրա իր մտաւոր ու բարոյական կրթութեան աւելնալն ու զօրանալն ալ իմացիլի:

Ազգ մը չաւրբլեւու ու միանգամայն զօրանալու համար, նախ և առաջ պէտք է որ իր միութիւնը պահէ: Իր միութիւնը իր ազգայնոց միաբանութեանէն կախալած է: Աւրեմն իր ազգայինքը միաբան ըլլալու համար պէտք է որ միօրինակ ըլլան, ու միօրինակ ձեւ ունենան: Ասիկայ ինչպէս կրնայ ըլլալ թէ որ ազգայնոց կրթութիւնը ու ձեւը ինքը չիկարգադրէ նէ: Ասարտացիք ճշտողաց չէին հաւատար իրենց տղոցը կրթու-



Թիւնը : Առիկայ աղգը իր վրան առւր էր ,  
 ու իր աւելի մեծ գործը աս էր . ու գրե-  
 թէ իր աղգայինքը թէ աղջիկ ըլլային թէ  
 մանչ , իրեն անդամ չէր ընդուներ , մինչեւ  
 որ կրթութեամբ արժանաւորութիւն չիցը-  
 ցնէին իրեն անդամ ըլլալու : Հոս կրթու-  
 թիւնը հմտութիւն չի հասկրցովի : Ապարտա-  
 ցիք հմտութիւն տալու այնչափ չաչխատե-  
 ցան . իրենց ուղածը միայն բարք տալ էր ,  
 ու աս կերպով այնչափ զօրացան :

Տղոց կրթութիւնը ճնողաց կամքին ձգես-  
 նէ , ճնողքը կամ կամք չեն ունենար , կամ  
 կարողութիւն . և այս երկու սրահատութեա-  
 նքս ալ վերջը մէկ է , որ տղաքը անկիրթ կը-  
 մանն : Արկրորդ՝ աղգը իր աղգայինքը ինք  
 կրթելու չըլլայնէ , կարելի է որ դրսէն ձեւ  
 առնեն . ասով ալ աղգին մէջ երկպառակու-  
 թիւն կը մըտնայ , որով աղգին միութիւնը  
 կը կորստովի ու ինքն ալ կոչնչանայ :

Աւրեմն աղգի մը մեծ սրտոք է որ իր  
 աղգայինքը կրթելու միջոցները ինքը հոգայ :  
 Պէտք է որ ճնողաց սրտոք դնէ իրենց տը-  
 ղաքը կրթելու ու ասոր համար պէտք եղած  
 ձեռնտուութիւնը ընէ . երկրորդ գպրա-  
 տուններ ունենայ , ու անոնց կառավարու-  
 թիւնը իր ձեռքը ըլլայ : Արսէն գպրատուն  
 գանձովի նէ , պէտք է որ ինք հասն իր կողմէն  
 մարդ ունենայ տեսնալու ու կառավարելու :  
 Ապրատանց մէջը միայն գիտութիւն սոր-

վերու չեն, հասպա նաև աղղասիրութիւն  
ու Աստուածսիրութիւն, վերջապէս պէտք  
է որ տղաք դպրատանց մէջ աղղային ձեւ  
ստանան :

Յուլիանոս չարամտութեամբ երբոր  
Քրիստոնեայները ջնջել ուղեց նէ, դպրա-  
տան մէջ կարգալ սորվելուն տեսակ տեսակ  
արգելքներ դրաւ : Մէրուժան քրիստոնէ-  
ութեան վերաբերեալ գիրքերը այրեց, որ  
տղայքը բան չխորվին : Այլ ամէն ատեն մէկ  
աղգի մը մէջ թէ՛ կրօնական և թէ՛ բարոյա-  
կան ծուռ դաղափարներ խօթել ուզող  
մարդը՝ գիտնալով որ մեծերուն վրայ աշ-  
խատիր սարսապ է, տղոցը կրթութեան  
մէջ փոփոխութիւն մտցնել կրնայի : Գե-  
շերուն աւրելու համար բռնած ճամբան  
մենք կրնամք աղէկի բանեցնել : Այլ ասոնց  
վրայ մտածելով ալ դիւրաւ կը հասկըցվի որ՝  
աղգի մը թէ՛ աղէկութեան և թէ՛ գէշու-  
թեան հիմը՝ տղոց աղէկ կամ գէշ կրթու-  
թիւնը պիտի ըլլայ :

Մինչև հիմայ գիտցուցինք տղոց կրթու-  
թեանը վրայօք, ընկերական փիճակին ու-  
նեցած սարսաքերը ու կրթողներուն ինչ  
կերպ ըլլալիքը. հիմայ կրթութեան կանոն-  
ները պէտք է որ տանք, որն որ միտք ու-  
նիմք ասկէ ետքը խօսելու : Տղին էութիւն  
ստացած վայրկեանէն առնելով, քանի որ տը-  
ղան մեծնայ ու կարիքները աւելցնէ, մենք

ալ այն կարիքներուն վրայոք ընելիքներուն կանոնները տանք պիտի : Այս կերպիւս պէտք էր որ տղան մինչև կատարեալ մարդ սեպիլելու ժամանակը պէտք եղածը զուր ցէինք : Վայց քսնի մը պատճառաւ՝ որն որ հոս բացատրելը երկար կըլլայ, չուզեցինք մինչև այն ժամանակի ընելիքները փնտռել : Ահա միտքը տղին մինչև 12—14 տարեկան հասակը հասնիլ, այսինքն տղան տղայութեանէն ազատելու ժամանակը դալ ու տղան հոն ձգել է : Աւուրիչ ատեն մըն ալ ժամանակ ունենամք նէ, անկէ ետքը պէտք եղածն ալ կրխօսիմք :


Տղան էութիւն ստացած օրէն մինչև երեք տարի երեք տարի ու կէս բնութիւնը գործարանաւոր մարդը ձեւի խօթելու կը նայի : Աւան ատենէն ետքը մտաւոր մարդը կազմելու կընայի : Աստի մէնք ալ բնութեանը այս գործքին կարգին հետեւելով մեր գիտքը երկու մասի կըբաժնեմք : Առջի մասին մէջ տղան էութիւն ստացած վայր կեանէն մինչև մտաւոր մարդը երեւան ելած ժամանակի այսինքն մինչև երեք տարի ու կէսի ընելիքը, ու երկրորդ մասին մէջ ալ մտաւոր մարդը երեւան ելած օրէն մինչև 12—14 տարի այսինքն տղայութեանէն ելած օրը պէտք եղածը պիտի զուրցեմք, հոն հոգւոյն վրան ալ ՚ի հարկէ պիտի խօսիմք :





## ՄԱՍՆ ԱՌԱՅՒՆ

ՏՂՈՒ ՄԸ ՄՕՐՆ ԱՐԳԱՆԴԸ ՅՂԱՆԱԼԵՆ  
ՄԻՆ ՉԵՒ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ  
ԽՆԱՄՔՆԵՐԸ :



### ԳՒՂՈՒԽ Ա.

Յղութեան վրայ :

Տղայ մը ծնանելէն առաջ՝ անոր պահ  
պանութեան խնամոցը համար Աստուծոյ  
ընտրած միջոցն ու գործիքը մայրն է :  
Ինչպէս որ նոր ծնած տղայ մը՝ առանց իր  
մօրը խնամոցը չիկրնար սազրիլ ու մեծնալ  
նէ , անանկ ալ արդանդն եղած տղան ևս  
առաւել իր մօրը զգուշութենէն կախուած  
է . գրէթէ երկու կեանք մեկտեղած են .  
բայց այդ երկուքին ալ սպահալուծիւնը  
միայն մեկին ձեռքն է : Օրորցածիս ճըւ-  
մարիտ ըլլալը ամմենքն ալ գիտեն , բայց  
ան որ չեն գիտեր ու գրէթէ չեն ուզեր  
գիտնալ նէ , սա է որ , կին մը իր բերելու  
ու բերած տղին համար միևնոյն սէրը  
միևնոյն խնամքը չունի : Այսարհք գալէն  
առաջ տղուն պակտիլը մեռնիլը՝ ոչինչ  
բան մըն է իր քովը . բայց այսարհք գա-

Էն ետքը մեռնի նէ, անոր վրայ կը ցաւի .  
 Ատոր պատճառը բնութեան մէջ չիկայ .  
 միայն մոլար կարծիքէ մը յառաջ կուգայ ,  
 որովհետեւ կանայք կրկարծեն որ, տղան  
 յղութեան առջի ատենները հոգի չունի ,  
 ու ծնելու մօտ ատենները կըհոգեւորի .  
 Աս կարծիքը մէկ կողմէն շատ ծաղրական  
 է , մէկ կողմէն ալ բարոյական մեծ պակ-  
 սութեան պատճառ է . որովհետեւ տղուն  
 ծնանելէն առաջ կեանքը՝ Աստուածային  
 նախախնամութեան կողմէն մօրը յանձնը-  
 ված է . ու գրէթէ անանկ կապ մըն ալ  
 դրուած է երկուքին մէջ , որ ինչ բան սր  
 մօրը դպչի նէ տղուն ալ կըդպչի , ու ինչ  
 բան սր տղուն կըդպչի ՚ի հարկէ մօրն ալ  
 պիտի դպչի . Ատոր համար աններելի է , թէ  
 որ յղի կնիկները իրենց սովորութիւն ըրած  
 զգուշութիւններէն ՚ի զատ , այն միջոցին  
 տղուն աղէկութեանը համար պէտք եղած  
 զգուշութիւններն ալ չգիտնան ու չընեն .

Կանանց վրայ հասարակ ժամանակները  
 բնութենէն ինչ ներգործութիւն որ կայ  
 նէ , յղութեան ժամանակնին ուրիշ ներ-  
 գործութիւններ ալ կաւելնան . Ախս՝ ե-  
 ղանակը՝ որ մեր վրայ մեծ ներգործութիւն  
 մը չունի , յղի կնկան շատ կը ներգործէ .  
 յղութիւն մը՝ ամառվան կամ ձմեռվան  
 մէջ պատահի նէ միևնոյն կերպիւ չիլըմնար .  
 Ամանապէս տարի կայ որ յղութիւննե-

բը անվտանգ կը լըմնան , և տարի ալ կայ , որ առանց վնասի ինչուք վերջը չիկրնար երթալ : Հիպոկրատէս երկար կըզուրցէ ասոր վրայ : Պատժօլէն ալ կըպատմէ որ , 1679 ին Վօբնհակ շատ ցուրտ ու խոնաւ եղաւ , ուստի ան տարուան յղի կնիկները՝ կամ տղաքնին անցուցին , կամ մեռած բերին :

Մասնկ ալ յղի կնկան բնակած տեղը իրեն վրայ ու մասնաւորապէս իրեն տղին վրայ մեծ ներգործութիւն ունի : Այլօայի տխմարները ( սէմէները ) քիչցան . պատճառը սա է որ , ան տեղի կնիկները յրդանան նէ , իրենց խոնաւ տեղէն կեըեն , լեռները կերթան կը բնակին մաքուր օդ առնելու համար :

Մանապէս ուտելու խմելու , հագվելու ու ասոնց պէս բաներուն ներգործութիւնները շատ են : Մս պատճառաւ հարկ կըլայ որ պէտք եղած զգուշութիւնները տեղնիտեղը զուրցենք :

### ՅՕԴ ՈՒ ԱԾ Ա .

Յղի կնկան մը զգուշութեան կանոնները :

Տալու կանոններնիս չիզուրցած պէտք էր որ նախ՝ կին մը ինչպէս իր յղութիւնը

պիտի գիտնայ, ինչ կերպիւ ինչ նշաններով  
 պիտի ճանչնայ, ան զուրցէինք. պէտք էր  
 նախ՝ որ հասկըցընէինք, թէ ի՛նչպէս յղու-  
 թեան նշան կրնան ըլլալ արիւնին սասու-  
 կանալը, գլուխը ցաւիլը, սիրտը խառնալի-  
 լը կամ վախելը, ստեանց ցաւիլը, քիթէն  
 կամ բերնէն արիւն գալը, և սովորական  
 արեան կտրիլը և այլն: Այց ատոնց վրայ  
 չիպիտի խօսինք, վասն զի աս նշանները  
 միշտ յղութիւն չեն դուշակեր, որովհետեւ  
 հասարակ ատեն ալ կրնան պատահիլ, ու  
 երբորդ ու չորբորդ ամիսներէն առաջ բը-  
 ժիշկ մըն ալ չիկրնար հաստատութեամբ  
 յղութիւնը հասկընալ: Աստի գրէթէ ա-  
 ռաջկուց տղայ ունեցողները իրենց վիճա-  
 կը բժիշկէն աղէկ կըճանչնան, ու էն առջի  
 անգամ բերօղներն ալ ևս, բժշկին չափ կրը-  
 նան գիտնալ, այսինքն կասկածիլ:

Ահա ատոնց համար յղութիւնը ճանչնա-  
 լուն հնարքը չըտելով, և առաջկուց գիտցա-  
 ծի պէս սեպելով, զգուշութիւնները կը  
 խօսինք:

Նախ՝ յղիյի մը պէտք է որ խոնաւ տեղ  
 չիբնակի, ու խոնաւ օդ չառնէ, սրաղէն  
 ու տաքէն զգուշանայ, վասն զի պաղէն չէ  
 թէ միայն դիւրաւ կըհիւանդանայ, հասպա-  
 շատ անգամ հաղ ալ կըլլայ, որ սատականայ  
 նէ վիժելու սրտոճառ կըլլայ: Ասանկ ալ  
 շատ տաքը վնասակար է: Ասկէ մարելիք

կրնայ սրտահիլ, որով տղան ալ կրնայ մեռնիլ. ուրեմն շատ տաք տեղերէն հեռու կենալու է. ինչպէս է բազմութեան մէջ նստիլ ուր ոչ միայն տաք կըլլայ, այլև օդն ալ աւրած է :

Նմանապէս առած օդին մէջ ազդու (զարպը) հոտեր չի գտնուիլ, որ ասիկայ ջիղերուն դպչելով կրնայ վնաս գործել :

Նրկորդ՝ ձմեռը Պանէլ հազներու է որ չիմբի, և ցուրտ ու խոնաւ օրերը սենեակէն (օտայէն) դուրս ելլալու չէ : Եւ այդ թէ որ տնէն դուրս տեղ մը ելլալ հարկաւորի նէ, պէտք է որ զգուշութեամբ հագնուած ըլլայ : Ասոր հակառակը՝ ամառը շատ լաթ չիպիտի հագնի, շատ տաք անկողին սրտ կելու չէ որ արիւնը չուժովնայ, կամ շատ քրտրներով չխտկարանայ (չիղափնայ) :

Նեղ լաթ հագներու չէ, և ոտքէն մինչեւ գլուխը ամուր կապ չիպիտի ըլլայ, որովհետև կապերը որ տեղն որ ըլլայ, արիւնին շրջանը (ճէվէլանը) կրնայ արգիլել :

Սիւմելու չեն փոքերնին ու կուրծքերնին, վասն զի կուրծքը սիւմելը նախ ըստինքները պէտքին չափ մեծնալու չիթողուր, և ստղունքն ալ կըրծուէ, որով կաթ տալը անկարելի կըլլայ : Նրկորդ՝ կուրծքը սիւմելած ըլլալուն սրտաճառաւը շնչառու

Թիւնը դժուար ըլլալուն, կամ բերնէն արիւն կուգայ, կամ ուրիշ մէկ կուրծքի հիւանդութիւն մը կըստատճառի: Փորերը նին սխմելն ալ ուրիշ վնաս ունի, որովհետեւ արգանդին կանոնաւոր ձեւով մեծնալը կը խափանէ, արգանդը կըճըռի, ու տղան դժուար կըճընի:

Վանի մը տղայ բերած կնիկներուն փորի մօրթը թուլ է. փորը բռնելու համար պէտք է որ լայն դօտի մը կապեն:

Արրորդ պէտք է որ ստամոքսնին ( միտէնին ) կերակուրով չիլեցընեն, մանաւանդ վերջին ամիսները. վասն զի ստամոքսը արգանդին վրայ ծանրանալուն, կրնայ վնաս դործել, ու տղայ անցընելու պատճառ ըլլար:

Ուտելիքի կողմանէ առջի ատենները քիչ ու դիւրամարս բաներ ուտելու են, որ այս բանը բնութիւնն ալ կազդէ. վասն զի նոր յրացած ատեննին, կնիկները մտէն կը զզուին, ուրեմն պէտքը չէ որ բռնի միս ուտեն, և կերած ատեննին ալ քիչ քիչ ուտելու են:

Արբեմն կըլլայ որ չիկըշտանալու ակտը ժակ մը ( իշտահ մը ) կուգայ վրանին, բայց շատ ուտեն նէ, անհանդիստ կըլլան. ուստի պէտք է որ չափաւոր ուտեն ժուժկալութեամբ:

Չենք ըսեր որ ինչուք վերջը ժուժկալութիւն ( բէհրիզ ) բանեցընեն, Առաջին



ամիսները անցընելէն ետքը, իրենց սովորական կերակուրնին կրնան ուտել, միայն չափազանցութեամբ չըլլայ. գինի օղի ու համեմ ( պահարեղէն ) չի գործածեն :

Չորրորդ՝ քալելն ու պըտըսելը երբեմն շատ հարկաւոր ու օգտակար ըլլալով, և անոր ներհակ նստուկ կենալն ալ երբեմն վնասակար ըլլալով, ուզած ատեննին պէտք է որ պտըտին, չէ թէ միայն ոտքով ու նաւակով ( խայէխով ), հասա կառքով ալ ( առապայով ), բայց կառքին համար, հարկ է որ կառք նստելու սորված ըլլան : Ասոր հակառակը՝ ցաթկելը, սաստիկ վազելը կրնայ վնաս գործել, մանաւանդ երբ որ շատ պտըտել իր բնութեանը յարմար չի գար նէ : Այն անանկ կանայք որ քիչ մը հոգնելէն շատ վնաս կը տեսնան, բայց կան ալ որ բան մը չեն ըլլար : Փարիզ թէատրոյի մէջ պարող ( հօռա թէփմիշ ընօղ ) կնիկները յղութեան ատեննին ալ կըխաղան ու բան մըն ալ չեն ըլլար :

Հինգերորդ՝ բաղնիք մտնալը կանանց որ մէկուն կը յարմարի, որ մէկուն կը վընասէ : Արիւ կերպ բաղնիք մտնալ կայ. մէկը Աւրոպացւոց կերպով ջուրը մտնալ ( ֆրէշ մտնալ, ) մէկնալ արեւելեան կողմերը գտնելով բաղնիքները :

Անոնք որ առջինէկ տղայ պիտի բերեն ու միանգամայն մորթերնին պինդ ( սըխը )

է, անտոնք ջուրը մտնալէն շատ օգուտ կը տեսնեն, և աս կերպով տղայ բերելը կը գիւրանայ: Ա՛ երջի ատենները ուզեն նէ կըրնան մինչեւ կէս մէջքը միայն ջուրը մըտնալ, ան ալ նոյն օգուտը կրնայ ընել:

Այց թուլամորթ կնիկները, թէ ջուրը մտնան թէ բաղնիք մտնան, պատճառ կըրնան տալ տղայ անցընելու. մանաւանդ մեր բաղնիքները շատ անգամ վնաս կը գործեն քան թէ օգուտ. ասոր համար կըսեմ որ բաղնիք երթան նէ, միայն մաքրութեան համար երթան ու շատ չինքստին տաք տեղերը:

Յղի կնիկները ծովը մտնալէն կը վախնան. վախնալու բան մը չիկայ, միայն պէտք է որ հանդարտ տեղ (իլիմանլըխ տեղ) մտնան ու ցուրտ օրերէն վախչին:

Ա՛ եցերբորդ՝ յղութեան ատեն իրենց բնութիւննին կը փոխեն բարկասիրտ ու անհամբեր կըլլան: Ան ալ որ բոլորովին կըլսեն թե՛նան, ոմանք ածուխ (.քեօմիւր) կուտեն, ոմանք պատը կը քերեն կուտեն, ոմանք ասեղ կըլլեն, ու ասոնց նման ուրիշ շատ բաներ ալ կրնեն: Ա՛ն ատենը քովի եղօղներուն կինայ անտոնք պահպանել ու չիթողուլ որ ուտեն կամ կըլլեն ուղածնին: Ա՛րբեմն ալ ատենը չեղած բան մը կուզեն, ինչպէս, ձմեռվան մէջ կեռաս (.քիրազ) և այլն: Յղի կին մը չիկայ որուն աս բանը



պատահած չըլլայ, որով աստ սրտին ուզած  
 բանը գտնալու համար հոգերու տանջանք  
 ներու մէջ կրմտնան թէ իրենք, և թէ  
 սիրվբտանքը: Բայց սա գիտնալու է որ,  
 սրտին ուզած բանը չուտելը միաս մըն ալ  
 չիկրնար բերել, և բնաւ տղայ անցընելու  
 պատճառ չիկրնար ըլլար: Բայց այնչափ  
 հոգ կընեն, այնչափ կըխախնան, այնչափ  
 կըտանջուին, որ տղաքնին կանցընեն: Աւ  
 տի տղին մեռնելուն պատճառը չէ թէ  
 սրտին ուզածը չուտելն է, հապա այնչափ  
 սիրտը դող հանելն է: Աւրեմն երբ որ ա  
 տանկ բան մը պատահի նէ, այսինքն թէ  
 որ ատենը չեղած բան մը սիրտը ուզէ նէ,  
 պէտք է որ նախ ինք անհոգ ըլլայ, չխախ  
 նայ չուտելէն, երկրորդ, քովի եղողները  
 իրեն սիրտ տան, վախնալու բան չըլլալը  
 հաւտացընեն:

Ասկէ 'ի դատ կարծիք մըն ալ կայ արե  
 ւելքի կողմերը, որ յղի կնիկներէն շատը  
 խենթի կարգ կանցընէ տարուան մէջ օր մը,  
 այսինքն Խտրեյէզին օրը: Ան գիշերը որ  
 Խտրեյէզ կըլուսնայ, գիշերվբնէ հագուած  
 կըբառկին, որ ետքի օրը չիհագուին, աւ  
 տրվանց ելլան նէ ոչ բանի մը կըդպչին, և  
 ոչ մէկուն ալ կըթողուն որ ձեռքը վրանին  
 գնէ: Այն օրը աչք չեն գոցեր որ տղան  
 կայր չըլլայ: Անանկն ալ կայ, որ հաց ալ չու  
 տեր, ինչուկ իրիկուն կըպըտըտի տանը մէջ

բանի մը չի գալելով, որ իր բերելու տղան նշան մը չունենայ :

Այրբեմն վրանին սև պղպեղ ցանել կուտան ու կը յուսան որ, ատով պիտակոտ ( փիւսկիւրմէ պէնկով ) պիտի ծնանի տղան :

Տղոց նշանով ծնանիլը ամմէնքնիս ալ գիտենք . բայց թէ որ խտրելէն ըլլար նէ, պէտք էր որ յղութեանը վրայ խտրելէն չանցած տղաք նշանով չի ծնանէին, ուրուն հակառակը՝ ինչպէս որ ամմէն մարդ գիտէ, անթիւ տղաք նշանով ծնած կան որ խտրելէն չէ անցեր վրանուն : Աւրեմն յղի կնիկները կը յորդորենք նախ ասանկ խենթ կարծիք մը չունենալու, երկրորդ վախնալով այն օրը անհանգիստ չըլլալու : Տղոց նշանով ծնանելուն պատճառը մարդ չիտէ, որուն վրայօք ամմէն տեղ մէյմէկ արտառոց կարծիք կայ, ամմէնն ալ անհաստատ :

Հիմայ՝ կանանց յղութեան ատենի պատահած դիպուածներուն վրայօք խօսինք :

Մտաջին՝ յղութեան առջի ատենները կանանց բերնէն շատ ջուր կը վաղէ, առղանին կը ցաւի : Շատ անգամ ասոնք ինքնիրենք քանի մը օրէն ետքը կանցնին . բայց թէ որ չանցնի նէ, քիչ մը անասօն եփեն ու անով բերաննին ցօղվեն կամ կտոր մը Ալեօդէի լէւէրի կամ Օմի բերաննին առնեն :

Արկրորդ՝ յղի կանայք փոխել մը ունին,

որ յղութեան առջի ժամանակները , երբեմն ինչուք չորս ամիս , երբեմն ինչուք վերջն ալ կըրբըէ : Ոմանք միայն առտուն կը փոխեն , ուրիշ ատեն կերածնին կըմարսեն . աղէկ կըլլայ ան ատենը կտոր մը Չայ կամ ( ) խմեն խմեն առտըվըները խահվէի տեղ : Ոմանք ցորեկը կըփրփոխեն կերակուրէն ետքը . աս կրնայ ըլլալ որ կերակուրին ատենը փոխելով , փոխելը անցնի : Թէ որ չիկտորինէ Սելթերս<sup>1</sup> ջուր խմեն կերակուրին ատենը :

Բայց երբեմն փոխելը սաստիկ կըյաւրատուէ , ստամոքսը կը ցաւի ( սանճըրանմիշ կըլլայ , ) որով տղայ ալ կրնայ անցնիլ . ան ատենը պէտք կըլլայ վկայեալ բժշկի մը ցցունել :

Երրորդ՝ շատ անգամ յղի կնիկները բնութեան կարիքը չեն կրնար վճարել , ( խապղ կըլլան . ) ատոր համար երբեմն երբեմն գրեխ ( իհտիխան ) ընելէն ուրիշ բան չենք կրնար խրատել :

Չորրորդ՝ յղութեան առջի ու վերջի ատենները կանանց արիւնը կըսաստկանայ , գլուխնին կը ցաւի , կըծանրանայ , վրանին կերի կամ քուն չեն ունենար , կամ ասոր

1 Aqua Selters. Գերմանիա Նաոո նահանգին մեջ հանքային ջուր մըն է , ուրկէ ամեն տեղ կերթայ կը ծախի :

Հահառակը շախազանց կրքնանան , սրաեր-  
նուն տրոփումն ( չարփընթը ) կուգայ , և  
այլն : Ան ստենը թեւէն արիւն առնելու  
է : Արբեմն արիւն առնելը չօգտէր , մա-  
նաւանդ յղութեան վերջի օրերը : Ան ա-  
տենը քանի մը անգամ ջուրը մտնան նէ ,  
չատ հանգստութիւն կլմանան :

Հինգերորդ՝ ոտքիւնին ու ոլոգնին  
( սրածախնին ) կուռենայ : Ատիկայ յղու-  
թեան մէկ սրտիկ դիպուածն է , որ շատե-  
րուն կըպատահի : Թէ որ ուռեցքը քիչ է  
նէ , տղայ բերելէն ետքը ինքնիրեն կանց-  
նի . բայց թէ որ շատ է նէ , պէտք կըլլայ  
բժշկի ցցունել :

Կանանց ուրիշ հիւանդութիւններուն  
վրայ զուրցելը երկարաբանութիւն է ,  
որովհետեւ առանց բժշկի ընելու դեղեր-  
նին անկատար կըլլայ :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Ի Բ

Յղի կնկան մը կաթին նախագուշակութիւնները :

Արմնայ հիմայ ան գիտնալ որ , յղի մը ծը-  
նելէն առաջ ինչպէս հասկընայ որ ետքը իր  
կաթը յորդ ( կիւմրահ ) սլտի ըլլայ թէ չէ :

Արտեն թէ երբոր կինը ուժով է ու իր  
ստիկքները աղէկ մը մեծնան ու իր մար-

մինն ալ թխանայ ( էսմէրէնմիշ ըլլայ ) նէ , աղէկ ու շատ կաթ պիտի ունենայ : Բայց այս նշանները շատ անգամ հաւատարիմ չեն , ուրեմն նայինք ուրիշ հաւատարիմ գուշակութիւն կրնանք մի գտնալ :

Կին մը յըսցածին պէս՝ կամքիչ մը ետքը , ստինքները կըսկսին ուռննալ , ու քանի մը ատենէ ետքը սիմես նէ անկէ աւիշկ մը կեըլայ որ եւրոպացւոց լեզուով Վօլսթեմօ՞՞ կըսվի : Հիմայ՝ յղութեան վեցերորդ եօթներորդ կամ ութերորդ ամսըլան մէջը ստինքները սիմելով դժուարաւ կաթիլ մը Վօլսթեմօ՞՞ կրնաս հանել նէ , ըսել է որ այն կինը շատ կաթ չիպիտի ունենայ : Աւասոր հակառակը թէ որ դիւրութեամբ քանի մը կաթիլ հանես նէ , աղայ բերելէն ետքը կաթը շատ պիտի ըլլայ :

Նմանապէս աս Վօլսթեմօ՞՞ն նայելով կրնանք հասկընալ թէ կաթը ուժով պիտի ըլլայ թէ ջրոտ . որովհետեւ թէ որ Վօլսթեմօ՞՞ն մէջը գծի պէս դեղին ու թանձր հիւթ մը կայ նէ , ըսել է որ կաթը ուժով է . բայց թէ որ ասանկ հիւթ չիկայ մէջը ու ջրի պէս է նէ , ըսել է որ կաթը ջրոտ պիտի ըլլայ :

Ասնք աղէկ միտք առնելու համար ըսածներըս կրկնեմ . չորս բան կրնայ սրատաւ հիլ կաթին վրայօք : Առաջին՝ Վօլսթեմօ՞՞ը բիչ է ու մէջը այն թանձր գիծերէն չի

կայ, ըսել է որ կաթը քիչ ու ջրի պէս պիտի ըլլայ: Երկրորդ՝ Քօլոմբօսը քիչ է, բայց մէջը այն թանձր հիւթէն կայ, ուրեմն կաթը քիչ, բայց ուժով պիտի ըլլայ: Երրորդ՝ Քօլոմբօսը շատ է բայց մէջը թանձր հիւթ չիկայ, ըսել է որ կաթը շատ, բայց ջրի պէս պիտի ըլլայ: Չորրորդ՝ Քօլոմբօսը շատ է ու մէջը այն թանձր հիւթէն կայ, ան ատենը կաթը ուժով ու շատ պիտի ըլլայ:

## Գ Լ ՈՒ Ի Բ.

Տղայ մը ծնածին պէս քնշ ընելու է:

Տղայ մը ինը ամիս իր մօրը արդանդը մընալը նախախնամութեան մէկ զգուշութիւնն է. որովհետեւ նոր գոյացած ատենը՝ աշխարհի վրայ եղած բաները ուղղակի իր մարմնոյն վրայ ազդեն նէ, անոնց ներգործութեանը չիկրնար դիմանալ, շուտով կալքըլի: Ահա ատոր համար նախախնամութիւնը ան կերպն է անօրիններ, որ իր տկար կեանքը մօրը արդանդին մէջն անցընէ. հոն մեծնայ, հոն դօրանայ, ու անկէ ետքը աշխարհք գայնէ կարենայ դիմանալ:



Արբոր ատ զօրութիւնը ստանայ նէ՝ ալ մօրը միջնորդութեամբը սնունդ շառնէր, կրբաժնրլի մօրմէն և վերջապէս կրծընի :

Տղան ծնածին պէս նախ մեծ շունչ մը կառնէ, որով օդը իր թոքերուն (աբձիւլիւսին) մէջ կերթայ : Ալ որովհետև օդին ներգործութեանը սորված չէ, ցաւ կրզգայ ու կը պօռայ : Վայց տղան ծնածին պէս պօռալուն պատճառը միայն աս չէ : օդը տղին մարմնոյն վրայ ալ կրնէրգործէ, մարմինն ալ կրցաւի : Ամանապէս տղան մինչեւ այն աւտենը տաք տեղ մեծնալով, տաքի սորված է, դուրս ելածին պէս ցուրտ կրզգայ, ահա ասոնց համար ծնածին պէս կրպօռայ :

Հիմայ զուրցենք թէ տղայ մը ծնածին պէս ինչ պէտք է ընել :

Առջի ընելիքը պորտը կտրելն է, բայց պորտը չկտրած, նայելու է թէ տղան ինչ վիճակի մէջ է : Քանի մը կերպ կրնայ ըլլալ տղան : Ախ ինքը պզտիկ է, պորտին լարը կամ ընկերը պատուեր, և շատ արիւն կորսնցուցեր է, երեսը դժգոյն (սօլղուն) մարածի պէս, միտերը թուլ, հազիւ բարակ ձայն մը կրնայ կոր հանել, կամ բոլորովին շունչը կտրած է, երակը նայիս նէ չինտտեր : Ալ երջապէս շատ արիւն կորսնցընելով մարդ մը ինչ վիճակ կրմտնայ նէ՝ տղան ան վիճակն է, ահա ան ատենը պորտը կտրելու չէ : Թէ որ ինքնիրմէ բոլորու

վին չէ պատուեր նէ , ձգելու է անանկ , որ  
 տղան իր մօրը հետ ունեցած հաղորդակցու-  
 թիւնը չիկորսնցրնէ , որովհետեւ ասանկով իր  
 մօրմէն քիչ մը արիւն քաշելով , իր կորսըն-  
 ցուցած արեանը տեղը կրնայ լեցրնել , քիչ  
 մը սպասելու է անկէց ետքը կտրելու է :  
 Վայց թէ որ պօրտը բոլորովին պատուեր ,  
 զատուեր է նէ , նորէն արիւն չիկորսնցը-  
 նելու համար , պօրտը կտրելէն առաջ  
 պէտք եղած տեղէն կապելու է : Այլ ասանկ  
 կապելէն ետքը , տղան կառնես , չոր չոր  
 լաթի մը կամ պատտառի ( թիւլպէնտի ) կը  
 տոր մը գինիյի կամ քացախի մէջ թաթխելով  
 տղին կռնակը , սիրտը , կուրծքը և ոտքիւնե-  
 լուն տակը կը շրփես , անկէ ետքը տաք ու  
 չոր բրդոտ կտաւներու ( խալուներու )  
 մէջ կրտաթտես տղան : Ասանկով շունչ առ-  
 նել չակախնէ , կտոր մը լաթ քացախի մէջ  
 կամ Վ շման բոկիյի մէջ կրթաթխես , տղին  
 քթին կրմտեցրնես . փետուրով մը ( թիւյ  
 խալէմով ) քիթը կրտախտցնես , նոյն փե-  
 տուրով քթին ու բերնին մէջ եղած լե-  
 ղերը կրմարես , վերջապէս մէկ բարակ ե-  
 ղէգ մը կրտաթթես բերնին մէջ , տղին կա-  
 մաց կամաց շունչ կուտաս կառնես , ձեռ-  
 քովդ ալ կուրծքին վրայ մէյմը կոխելով  
 մէյմին ալ թող տալով : Ահա ասանկով շատ  
 անգամ մեռած է կարծելով ձգուած տղաք  
 կենդանութեան դարձեր են : Վմանք պօր-



տին լարը կտոր մը կրակով կերեն: Անգամ  
 մը Պօէս բժիշկը տղին երակին մէջ ուրիշի  
 մը արիւնը ( Իրիկ ) բրեր ու տղան ողջնցու-  
 ցեր է: Տէղօրսօն կրակ թէ անգամ մը տը-  
 դի մը համար ինչ բրին նէ խելքը գլուխը  
 չէ եկեր, բերանը քիչ մը օղի ( բախի ) ա-  
 ուեր, տղին երեսին ու կուրծքին վրայ փը-  
 չեր է ու ասով տղան արթնցեր է:

Արկարդ՝ ասոր ներհակը տղան դժգոյն  
 չէ, հասցա կասկապուտ է, երեսը ուռե-  
 ցածի պէս ու կապուտ, աչքովները կապ-  
 կարմիր, բոլոր անդամները ու մարմինը փա-  
 տի պէս, վերջապէս խեղդըլած մարդ մը  
 ինչպէս է նէ՝ այնպէս է ծնած տղան: Հատ  
 անգամ տղին աս կերպը մտնալուն պատճա-  
 ւը տա է որ, սորտին լարը ծնած ասենը  
 տղին շիւիքը կրիաթտըլի, կամ տղան դուրս  
 ելլալու ժամանակը սորտին լարը կըսրիս-  
 մըլի, և ասանկով արեան շրջանը կըկտրի,  
 աս ալ խեղդըլելուն մէկ կերպն է: Հիմայ  
 թէ որ տղան ասանկ դայ նէ, շուտ մը սոր-  
 տը կտրելու է, ու թող տալու է որ քանի  
 մը դգալ արիւն վազէ: Արբեմն արիւն չի  
 վազեր, ան ասենը տղան ջուրը կըխօթես,  
 ու սորտը ջրին մէջ կըկտրես, քիչ արիւն  
 դայ նէ՝ նորէն քիչ մըն ալ վերէն կըկտրես,  
 տասնկ քանի մը անգամ կտրես նէ, պէտք  
 եղածին չափ արիւն կըրնաս վազել տալ:  
 Ասանկով տղան չարթննայ նէ, ինչ որ Ը-

5414  
 75-725  
 9257-57

սինք մարած տղին համար, ասոր ալ ան  
ըսածներըս կրնես :

Երբորդ՝ տղան ոչ մարած է՞ և ոչ կասկա  
սուտ, այսինքն ինչպէս պէտք է նէ անանկ  
է. ան ատենը ուրիշ ընելիք չիկայ, բայց մի  
այն պորտը կապել. պորտը չիկտրած նայե  
լու ես որ, պորտին մէջէն տղին աղիքները  
դուրս ինկած չըլան : Թէ որ անանկ բան  
մը կայ նէ՝ կամացուկ մը ներս կրխրկես,  
անկէ ետքը պորտին մատ մը կամ երկու  
մատ մնալով պորտին լարը մկրատով մը (մա  
խասով) կրկտրես, ետքն ալ հաստրկիկ  
դերձանով մը կրկապես. բայց նախ՝ երեք  
չորս անգամ փաթտելէն ետքը կապելու է.  
Երկրորդ՝ կապը կրկին ըլլալու է որ չեքակի :

Պորտին լարը կապած ժամանակդ նայե  
լու է որ պորտին շատ մօտ չըլլայ կապը,  
որովհետեւ շատ մօտ ըլլայ նէ, ետքը մոր  
թըն ալ մէկ տեղ կրկապես, մորթը խոց  
(եարայ) կըլլայ, երկար ատեն թարախ կը  
կապէ ու դժար կը ընտնայ :

Սմանց պորտը ուռեցած կըլլայ. թէ որ  
անանկ կապես նէ, անկէ հիւթ մը կուգայ,  
աս հիւթը կը հոտի, ու տղին մարմնոյն վը  
րան վազէ նէ խոց կընէ, ատոր համար պէտք  
է որ պորտը չիկապած աղէկ մը սրխմես :

Նսանկ կապելէն ետքը կտոր մը լաթի  
վրայ քիչ մը Տճմագա կը բըսես, պորտը մէջը  
կառնես ու անանկ՝ աղին սրովայնին դէպ

ի ձախ հողմը կրպառկըցընես : Տղին ձախ հողմը սրառկըցընելու է ըսի, որովհետեւ աջ հողմը լեարդը (քարայ ճիւղը) կայ, տղոց բով լեարդը շատ մեծ է, անոր վրայ բեռըլայ նէ՝ կրնայ բորբոքում մը սպառնաուել : Փորին վարի հողմին վրայ դնել ալ չըլար, որովհետեւ սորտին մեզ դպչի նէ, բորբոքում կրպատնաուէ :

Բայտ մեծի մասին սորտին լարը 14-15 ժամ անցնելէն ետքը կրտափակնայ, կրկապուտնայ ու թոռմածի պէս կըլլայ. 40 ժամէն ետքը բոլորովին թոռմած կըզըտնաս, ու երբեմն չորցածի պէս, չորնալը 4-5 օր մը կըբըշէ, վեցերորդ օրը կիյնայ կասպած տեղէն, ու իյնալէն 3 օր ետքը տեղն ալ կըզոցովի : Բայց սա գիտնալու է որ սորտին լարը սրբան եղոտ ըլլայ, այնքան ուշ կըչորնայ, ու մէկ սերմի մը վրայէն կեղեւը ընտոր կըչորնայ կիյնայ նէ, միշտ անանկ չիւնար սորտին լարը, երբեմն թարախ կրկապէ ու անանկ կըսիրթի :

Սորտին լարը իյնալէն ետքը, կտոր մը լաթի վրայ Բօժապառ կըքսես վրան կըդընես, մինչեւ որ բոլորովին տեղը գոցովի :

Սորտը կասպելը շատ հարկաւոր բան մը չէ, որովհետեւ թէ որ տղան աղէկ շունչ առնէ նէ՝ սորտէն արիւն չիզար : Բայց կասպելը աւելի խոհեմութիւն է քան թէ անկասպ ձգելը, որովհետեւ տղին շունչ առնելը՝

քիչ մը դժար ըլլայ նէ՝ արիւն կրնայ գալ :

Վայրենի մարդիկ չեն կապեր . ( )Թանթօթները իրենց առղայովը կրկտրեն սորտին ըստը , անկէ ետքը կըլըզեն : Չորքոտանիներն ալ կրկտրեն ու ձագերնուն ընկերովը մէկ տեղ կուտեն . ինչպէս որ կովին ալ ասանկ ընելը շատ անգամ կըտեսնենք :

Արկորդ՝ սորտը կապելէն ետքը , տղին մարմինը քիչ մը ձիւթով կամ կարագով կամ օձառով ( սապոնով ) կըշտին ու գաղջ ( բլրձախ ) ջուրը կըխօթեն կըլուտան . ասիկայ տղղին վրայի բոլոր աղտը կառնէ : Տղան չփետնէ , մոռնալու չէս որ տղին մարմինը փափուկ է . աղէկ կըլլայ որ սպունգով մը ( սիւնկերով ) կամ բարակ լաթով մը չփետ :

Արկորդ՝ ջրէն հանածիդ պէս , տաք ու չոր կտաներու մէջ կըփաթտեն , ու տղին չորս դին կընայիս որ մէկ պակտութիւն մը չունենայ . ինչպէս երբեմն լեզուին տակը կապ կուեննայ , մինչեւ որ ան կապը չիկտրես , ծիծ չիկրնար ուտել : Արբեմն որանքին ծակը գոց է , կամ դրոտէն ծակ կայ , բայց ներսէն գոցված է : Ասանկ ալ մէզին ճամբան գոց կըրնայ ըլլալ :

Թէ որ դրոտէն գոց է նէ՝ կերեւայ , բայց ըսի որ երբեմն ներսէն գոց է , ան ասենը տղան միզելու կամ միւս կարիքը չիկրնար կատարել , կըսկսի փսխել , ստղ ստղ քրտինք թափել , ու թէ որ ճար չի

հասցընես նէ՝ կրմեռնի ալ . ուրեմն երկու  
երեք օր տղան չիմիղէ կամ միւս կարիքը  
չընէ նէ՝ շուտով վերաբոյժ ( ճէռահ ) մը  
կանչելու է :

Չորրորդ՝ տղան նայելէն ետքը հազվե-  
ցընելու է , բայց մեր մէջը անիկայ հազվե-  
ցընելը մեծ գործ է . նախ շատիկ մը , վրայէն  
կարճ և անթև հագուստ մը , անոր վրայէն  
տղին մէջքը բռնելու համար վեց մատ լայ-  
նութեամբ գօտի մը , գլխուն խոյր ( թաքեա )  
մը , գլխարկ ( քէլէբօշ ) մը , վրայէն գլխա-  
պանակ ( չէվրէ ) մը , գլխարկն ալ երկու  
ժապաւէն ( քօռտէլա ) կունենայ , անիկայ  
ալ կրբերեն խեղճ տղին կզակին տակէն ա-  
մուր մը կրկապեն : Տղան ասանկ կապելէն  
կապկըպելէն ետքը , մէկը ոտքվըները կը-  
բըռնէ , մէկալը ձեռքվըները ու գլուխը , կը-  
բըռնեն տղան սաւանի ( չարչաֆի ) մը մէջ  
կառնեն , անոր մէջ կրփաթտեն . վրայէն ալ  
լայն գօտիով ամուր մը նորէն կրկապեն , ա-  
նանկ որ տղուն միայն բերանը աչքը գուր-  
սը ազատ կրմընան , ուրիշ բոլոր տեղերը մա-  
մուրի ( մէնկէնէյի ) մէջ է : Ասանկ ծրարի  
( չպօխճայի ) մէջ բանտարգեալ տղան հին  
եգիպտացւոց Վօֆնէրոն պէս բան մը կըլ-  
լայ : Ահա մեր կողմերը ասանկ կընեն ու  
ամէնուն կարծիքն ալ աս է որ , ասանկ չը-  
նեն նէ աղէկ չըլլար . թէ որ ոտքվըները  
ձեռքվըները չիկապեն նէ , կըծըռին , թէ

որ դու-խը գլխապատու ( Եկմէնիցով ) չի ճրգմէն նէ , կունտճակատ կրքայ , և այլն : Բայց նայինք ատանկ ընելը աղէկ է մի ու պէտք է մի :

Տաք քաղաքները գանրվող վայրենի մարդիկը ինչպէս Պուէզիլիացի և Վիրգինիացի սևերը , Ղեարօնները , Հինտիստանցւոց մէկ մասը , իրենց տղոցը բան մըն ալ չեն հազվեցրնէր , բամբակէ շինած անկողիններ ունին , տղաքնին անանկ մերկ վրան կրպառկեցրնէն ու կրկախեն :

Հին Բերուվիացիք իրենց տղաքը հազվեցրնէլու համար միայն տապրակ մը կրգործածէին , տղան մէջը կրխօթէին մինչև չիլիքը , անանկ կրթողուին , մէկ աեղն ալ բընաւ չիկապելով : Ատքը անկէ հանէին նէ , հողին մէջ ծակ մը կը շինէին , մէջը լաթով կը դարդարէին ու տղաքնին ան ծակին մէջ կիջեցրնէին մինչև կէս մէջքը , անանկ կը ճրգէին :

Բայց վայրենեաց խօսքը չընէք . քաղաքակիրթ ազգերն ալ մեզի պէս իրենց ծնած տղաքը չեն բանտարգէր ճրարներու ( պօխ ճաններու ) մէջ , ու գօտիններով չորս դինին չեն սրխմեր :

Տղայ մը իր մօրը արգանդին մէջ տաքի տարած է , մէկէն ՚ի մէկ սպողին չիկրնար սրվիլ , ու բեմն թէ որ ան տաք քաղաքները վայրենիները առանց լաթի ու հազուատի



իրենց տղաքը կրնան մեծցընել նէ՝ ատ մեզի համար չէ, որովհետեւ մեր երկիրները այնչափ տաք չէ. տաքութիւնը շատ պէտք է նոր ծնած տղի մը. նայէ ինչպէս հաւր իր նոր ելած ձագերը՝ իր թիւին տակը կը տաքցընէ. ինչպէս չորքոտանի անասնոց ձագերը իրենց մօրը ծիծիկ կրփակչին ու մօրը երկու ոտքին մէջ տեղը կմտնեն ու կրտաքնան : Հաւկիթէն նոր ելած ձուկերը ու մողեսները արև կրփնտրուեն, որ տաքնան : Քանկուրիներուն՝ ձագերը թէ որ իրենց մօրը քսակին մէջ չիկենան նէ՝ կրմեռնին : Թռչունները ու չորքոտանիները իրենց բոյներնին շինեն նէ, տաք տեղ կրփնտրուեն, ու տաք տեղ փնտրուելնին իրենց համար չէ, իրենց բերելու ձագերուն համար է : Ասանկ ալ ամէն մարդ գիտէ որ տղաք ամառը ձմեռէն աւելի կրմեծնան : Աստի չեմբսեր որ տղաքը մերկ կենան որ մրտին, բայց տաք բռնելու համար պէտք է մի այնչափ լաթ հագմեցընել, ու մանաւանդ սխմել :

Սխմելուն վնասները բազմաթիւ են :

1 Տեսակ մը կենդանի է, որ Ամերիկայ կրայ : Փորուն տակը սօսկակի պէս տեղ ունի, իր ձագերը ծնածին պէս հոն կըմտնեն : Իր ստիւքները ան սօսկակին մէջ ըլլալով, ձագերը ծիծիկ կրփակչին հոն կրկենան, ինչու որ մեծնան ու գրտի պաղին գիմանալու զօրութիւն ստանան, անկէ ետքը գուրս կելան :



Նախ՝ ճակատը սրխամելը՝ բղեղին մեծնալուն արգելք կըլայ : Նըզմելը , ձեէն հանելը՝ վայրենեաց գործ է : ( )Թանթօթները ուսանց նման ազգերը՝ քիթերնին կըտափկըցընեն , Քարայխաներն ալ իրենց տղոցը ճակատը կըճղմեն տափկըցընելու համար :

Մեր մէջն ալ կայ աս . պղտփուց պինդ պինդ տղին գլուխը դիտաարատով ( եէմէնիյով ) կապելով , ճակտին վրայ գլխապատին ըրած տեղը կերեայ : Միթիլիէ Փարիզի Մալէթուիէն ըսլած հիւանդանոցը եօթը հատ խենթ տեսեր է , որոնց ճակատը սասանկ տեղ ըրած էր : Թուլուղի Տըլէյն ալ շատ խենթերու քով ատ տեսեր է : Շխմաչէնք կրնար մի զուրցել որ անոնց խենթութեան պատճառը ատ սխմելը եղաւ : Նաև գէշ բան է գլխարկը ժապաւէնով կղակին տակը կապել ու սխմել , անանկ որ երբեմն տղան ոչ կրնայ բան մը կըլլել , ոչ շունչ առնել : Աղբիւրները ձեռքիւրները կապելուն փնասն ալ ասկէ վար չիմընար :

Չիկապելէն բնաւ փնաս չէ եղեր . վասն զի ինչպէս որ վերը զուրցեցի , անանկ տեղեր կան որ տղաքնին չեն կապկըպեր , բայց ան տեղի մարդիկը անձև չեն , և ընդհակառակն աւելի բարեձև են , որովհետեւ կապելով տղին բարակ ոսկորները կրնան կտորիլ , ծռիլ կամ քաշելով տեղէն ելլել , կուրծքը ու փորը սխմելով տղին շունչ

առնելը կրղըժարցընես կամ թէ լեարդը կը պատուի : Ասանկ սխմըված տղին արիւնը վեր կըզարնէ , բիթը կըվազէ , բերանը գըլուխը խոց կըլլայ , կամ տղաքը ան սխմըված տեղէն ազատելու համար ճիգն ( զօռ ) կընեն , անկէ փոշտանկ կըլլան , այսինքն խասրինին վար կինայ : Մեր տեղի տղաքները ոտք ելան նէ , ամէնը չըսեմ , բայց շատը ծուռ կըքալէ . ասոր պատճառը ծունկը ծունկին սխմելով կապելն է շատ անգամ :

Այսչափ անասուններ ձագ կըբերեն , մէկն ալ իրեն ձագը չուաններով չիկապեր որ ձեէն ելայ . մեք ալ ձե տալու չելլալինք նէ մէջերնիս այսչափ այլանդակներ և անձե մարդիկ չեր ըլլար : Այրենիները անգամ մեզմէ բարեձե են :

Մեք հիմա նայինք նոր ծնած տղան ինչ կերպով հագվեցընելու է :

Գլուխը գլխանոց մը կրղընես , ձմեռ է նէ Դասնէլայէ , ամառ է նէ բարակ կտաւէ . երկու կողմէն երկու երիզ կարած , որոնք կըբերես կզակին տակէն կը կապես , բայց չխորխմելով : Ղակտին վրայ պատտառ կամ ուրիշ բան չես կապեր . վասնզի տղին գլուխը ասկէ եւել բան դնես նէ , արիւնը գըլուխը կանչած կըլլաս : Ասանկ ալ շապիկ մը ու բաձկոն ( եէլէկ ) մը կըհագցընես , վրայէն սղտիկ գօտիմը , որ աս գօտիով ալ սորտը բռնած կըլլաս , ուրիշ բան մըն ալ հագցը-

ներս պէտքը չէ : Տղուն հագցունելիք բա-  
 ներուդ վրայ ո՛չ գնտասեղ ( թօփլու ) կը  
 գործածեն<sup>5</sup> , և ո՛չ ասեղ , սրովհետեւ ասե-  
 ղը և գնտասեղը միար մտնայ նե , տղան չի  
 կրնար խնայրնել , միայն պիտի լայ . բայց  
 ինչու համար ըսը ուրիշ պիտի գիտնաս :  
 Տղոց միար ասեղ մտնալէն շատ անգամ  
 վրանին Սբաղծ եկեր է :

Ասանկ հագվեցրնելէն ետքը նայինք ուր  
 պառկեցրնելու է տղան , նախ չորս դին վան-  
 դակաչէն ( խաֆէսի ) կամարը բարձր օրան  
 մը պէտք է , մէջի անկողինը ( տէօչէկը )  
 անասնի բանէ ըլլալու է որ թացու թիւն չի  
 բըռնէ . ինչպէս վարսակ ( եուլաֆ ) կամ  
 եղջուրի տաշուք , ( պույնուղի թալաշ . )  
 բնաւ բուրդ , բամպակ կամ թռչունի փե-  
 տուր չըլլար . վասն զի ատոնք շատ տաք կը-  
 սրահեն , ու տղին մետըռած ատենը անկէ  
 ելած գէշ հոտերը վրանին կըմընայ , մանա-  
 լանդ թռչունի փետուրէ անկողինը չէ թէ  
 միայն թաց կը պահէ , հասրա՝ տղան ալ կը  
 տկարացրնէ . Նեվալիլ կըբերէ , հիւան-  
 դու թեան պատճառ կըլլայ :

Անկողինին բարձր վարսակէ կամ թե-  
 փով ( բէփէկով ) լեցուած ըլլալու է . վար-  
 սակը տղին վրայի թացու թիւնը կըբաշէ , ու  
 ինքն ալ չիօղահեր : Այց շուտ կըհիննայ ,  
 անոր համար երբեմն երբեմն անկողինը  
 ու բարձր սրարպելու նորէն լեցրնելու է :

Հիւսիսային Ամերիկայ անկողինը փա-  
տին փատածէն կը շինեն , սա ալ տղին թա-  
ցութիւնը կը բաշէ կառնէ : Անկողինին  
վրայէն բթան կտաւը բանի մը ծաւթ  
(խաթ) ծալլէ ու դիւր , ու ասոր վրայէն  
բարակ կտաւ մը բռնելու է , սա լաթերը  
շուտ շուտ փոխելու է , մանաւանդ տղան  
մնտրուէ նէ : Տղին անկողինին համար թէ  
տաւան ( չարչաֆ ) ըլլայ , թէ ուրիշ ինչ  
կըլլայ ըլլայ , բնաւ նոր չի պիտի ըլլայ , պէտք  
է որ քիչ մը գործածված ըլլայ : Սեր կողմը  
անկողինին մէջ տեղը ծակ մը կը շինեն ու  
միզի խողովակ ( սիւպէք ) մը կը կախեն , որ  
մէզը անկէ անցնի ու անկողինը չի թրջէ ,  
ասոր տակը ուրիշ մեծ աման մը կը դնեն ,  
որ տղան իրեն մեծ կարիքն ալ հոն ընէ :  
Աս շատ աղէկ բան է , բայց պէտք է որ  
կտոր մը մեզը եմով ( պալմամի ) փակցնեն  
խողովակին եզերքը , կամ լաթի կըտորով  
մը պաշտպանեն որ պզտիկ տղին միտը չի  
ցաւի :

Ահա անկողինը ասանկ կարգի դնելէն  
ետքը , հոն պառկեցնելու է տղան : Պառ-  
կըցուցած ատենը պէտք չէ թեւերը ոտ-  
վրեները գօտիններով սխմել կապել , միայն  
մէկ լաթով մը թուլ կը կապես տղան օրա-  
նին , որ չի նայ : Վրայէն թեթեւ վերմակ  
( եօրդան ) մը կը ձրգես , վերմակը ծանրը  
ըլլայ նէ , տղան կը բրտընի կըտրկարանայ .

դրած վերմակըդ թէ որ տղան պաղէն կը պահէ կօզտէ . անկէ աւելին ծանրութիւն է , մանաւանդ տղան արիւնտ ըլլայ նէ . քանզի իրեն արիւնը շատ սաստկացրնելով վնաս կըրնայ գործել : ( )բանին վրայէն բարակ ծածկոց մը կըձրգես , կընայիս որ պաղը տաքը չանցնի . ճանճերը նեղութիւն չիտան ու օդ բանի :

Նինգերորդ՝ տղին բերնին լեզերը մաքրելու համար կտոր մը շաքարոտ ջուր կուտաս . ու թէ որ այսչափով կատարեալ չի մաքրելիւր կոր նէ պղտիկ մատրդ կօկորդը ( սօղաղը ) կըխօթես կըցածիդ չափ . ասանկով տղան փոխելու կերպով դուրս կը հանէ ան աղտեղութիւնները . անկէ ետեւ մէկ կողմին վրայ կըպառկեցրնես որ բան մնացած կայ նէ՝ բերնէն փաղէ ու կօկորդին մէջ չէրթայ : Նիւս տղին ինչ կըրցրնել պէտք է , ան պիտի զուրցենք հետեւեալ գլխին մէջ :

# Գ Լ ՈՒ Ի Գ

ՆՈՐ ԾՆԱԾ ՏՂԻՆ ՍՆՈՒՆԴԻՆ ՎՐԱՅ՝

## ՅՕԴ ՈՒ ԱԾ Ա

Նոր ծնած տղին ի՞նչ կերպընելու է :

Տղին ինչ կերպընելու ըլլալը չէինք հարցընել թէ որ ամէն մայր իր ծնած տղին կաթ տար նէ . բայց որովհետեւ երբեմն ուրիշ կաթնատուի կը յանձնէ իր զաւակը ու երբեմն ալ անատունի կաթով կըմեծցընէ . և երբեմն ալ միայն կերակուրով կը սընուցանէ , ահա ասոր համար պէտք կըլլայ որ խօսինք : Նոր ծնած տղի մը համար էն յարմար ուտելիք , ի՞նչ մեր խոհարաններուն եփած կերակուրն է , և ի՞նչ անասնոց լոկ կաթը և ի՞նչ դրսէն կաթնատուի մը կաթը . վերջապէս իրեն էն յարմար ուտելիքը իր մօրը կաթն է :

Վն առաջ հասկըցունենք թէ ինչո՞ւ մեր կերած կերակուրը նոր ծնած տղին չիկրնար յարմարիք : Նախ նոր ծնած տղան՝ առ զաչունի . ուրեմն մեր կերածներուն մէջը անբաները որ ծամելով կուտենք , տղան չիկրընար ուտել : Արկրորդ՝ մեր ուրիշ չիծամելով կերածնիս ալ չիկրնար յարմարիլ . վա-



սրն զի ուտելէն ետքը մարտել կայ . պէտք է որ տղին ստամոքսը մեզի չափ մարտելու զօրութիւն ունենայ . տղին ստամոքսը տկար է . ուրեմն չիկրնար յարմարիլ . ու թէ որ աս զուրյաճիս չինայելով տասնէ , աս անխոհեմութենէն կամ տղան կերածը կրփրութիւն , կամ առանց մարտելու գուրս կրքընէ . ան ատենը աղիքը և ստամոքսը կրքորբորին , տղան ալ կրկորնչի : Աոր ճնած տղան կաթէն ուրիշ ինչ որ ուտէնէ՝ անհանգիտ կրլայ . վասն զի թէ որ կերածը շատ սնուցիչ էնէ , իր ստամոքսը չիկրնար տանիլ , ու կամ արիւնը կրտաստկանայ կամ կրհիււանդանայ . բայց ասոր հակառակը թէ որ կերածը թեթեւ ու քիչ սնուցիչ էնէ , տղան սնունդ գտնալու համար պէտք է որ շատ ուտէ . անկէ ալ իր ստամոքսը կրհոգնի , կրտրկարանայ ու կրհիււանդանայ : Ա երջապէս տղին համար էն յարմար կերակուրը բնութեանը պատրաստած կերակուրն է . այսինքն կաթն է , որ թեթեւ ու միանգամայն սնուցիչ է : Բայց ամէն կերպ կաթ մի և նոյն կերպիւ չիկրնար յարմարիլ . անասնոց կաթը քաշել տալը ծծել տալով կաթ տալու չինրմանիր . կաթը ծիծէն կթեսնէ , նախ իր բնական տարութիւնը կրկորսրնցրնէ . երկրորդ՝ կաթը որչափ նայիս , մէկ մը կրթփի նէ , կաւրի . իր սնուցիչ զօրութիւնը ու միանգամայն իր թեթեւութիւն



նը կրկորսնցընէ : Արրորդ՝ ճճելու ատենը աղան շատ մը թուք կըհանէ , անանկ որ կաթը թուքին խառնըվելով ստամոքսը կերթայ . թուքը կերակրի մը հետ խառնըվինէ , ան կերակուրը շուտ կըմարսի . վերջապէս անասունի մը կաթը առնես անանկ տասնէ , մեր եփած կերակուրներուն պէս բան մը տուած կըլլաս , ու աղան անկէ չիանանիր , կամ կըհինւանդանայ : Անասունին կաթը ճճել տալը կթած կաթ տալէն աղէկ կըլլայ . բայց անանկնալ կնկան կաթին չիհասնիր , որովհետեւ կնկան կաթն ու անասնոց կաթը մէկգմէկէ զանազանութիւն ունին . կնկան կաթը անասնոց կաթէն թէթեւ է . ու միանգամայն առաւել սնուցիչ է :

Աս չեմ ուզեր ըսել որ անասնոց կաթով աղայ մը չիմեծնար , որովհետեւ կնկան կաթ չիգտնըվինէ , ուրիշ բան տալը անխոհեմութիւն է . կնկան կաթէն ետքը աղին էն յարմար կերակուր անասնոց կաթն է , ընտոր որ ետքը պիտի զուրցենք :

Բայց նորէն կըսեմ , աղին համար էն յարմար ուտելիք կնկան կաթն է . չէ թէ միայն կերած կաթին համար , հապա՛ կնկան ընելու խնամքին համար : Աթնատուն տըղան կըգրկէ , կըտաքցընէ , իր զօրութիւնը անոր կըներգործէ . վերջապէս թէ որ սա ըսածներուն մէկն ալ չիտակ չըլլայ ալ

նէ՛, որովհետեւ նախախնամութիւնը տը-  
ղին համար կերակուր, կնկան կաթը պատ-  
րաստեր է . ՚ի հարկէ ամէնէն յարմար ան  
պիտի ըլլայ :

Վայց օտար կնիկի մը կաթը կամ իր  
մօրը կաթը ուտելը միւս նոյն չէ . նախ  
օտար կաթնատուն գրեթէ անկարելի է  
որ տղան նոր բերած ըլլայ . ուրեմն  
կաթը հին կըլլայ : Տղին ստամոքսը նոր  
ծնած ատենը տկար է , քանի երթայ  
կուժովնայ . կաթն ալ նոր եկած ատենը  
թեթեւ է , երթալով կըղօրանայ . ուրեմն  
տղին ստամոքսը հին կաթը դժարութեամբ  
կըտանի : Ասկէ զատ , տղան առջի ծնած օ-  
րերը ներսի աղտեղութիւնները մաքրելե-  
լու համար պէտք է որ լուծիչ դեղ մը առ-  
նէ : Աոր տղայ բերած կնկան կաթին մէջ  
մասնաւոր հիւթ մը կայ Վօլօւմօժ ըսլածը,  
որ տղին որովայնը կըմաքրէ : Արիկայ՝ բնու-  
թիւնը դիտմամբ է ըրեր , որ տղին փոքր  
գտնելիւմը շուտ ելլայ : Ամանապէս օտար  
կաթնատուն որչափ աղէկ ըլլայ, անկարելի  
է որ տղի մը համար ճշմարիտ մայր ըլլայ .  
մօրը ընելու խնամքները ընէ , մօրը պէս  
սիրէ : Ահա ասոր համար տղի մը էն յար-  
մար ուտելիք իր մօրը կաթն է , ու էն յար-  
մար կաթնատուն ալ իր մայրն է :

Նախախնամութիւնը անանկ կարգի  
գըրեր է որ , մայրը իր տղին կաթ սոյ նէ ,

չէ թէ միայն տղին աղէկ է, հապա մօրն ալ :  
 Օնեղէն ետքը շատ անգամ մայրը կը հիւանդ  
 գանայ, նախ՝ տենդ կուգայ, երկրորդ՝ ար-  
 գանդը, ստինքը կը բորբոքին : Թէ որ կանուխ  
 ըստի կաթ տալ նէ, ան հիւանդութիւններ  
 ընն ազատ կը ընայ, տենդ չի գար, ստինք  
 ներք կաթով լե՛նալով չիցաւիր, չի բորբոքիր  
 թարախ չի կապեր : Վայրը կաթ տայ նէ,  
 բնութեան մէկ պարտքը կատարած պիտի  
 ըլլայ. թէ որ աս պարտքը չի կատարէ նէ,  
 ՚ի հարկէ պիտի պատժուի կերպ կերպ հիւ-  
 ւանդութիւններով, կերպ կերպ տըխարու-  
 թիւններով : Վինչեւ գազան կենդանիները  
 անգամ աս պարտքէն ետ չեն կենար, ար-  
 ջը ձմեռը՝ ձիւնին մէջ պառկած, թէպէտ  
 իրեն ուտելիք ալ չի գըտնայ, կը թողու որ  
 իր ձագերը իր կաթը ծրծեն, մինչեւ որ  
 ինք կը յորնայ սակր ու մորթ կը մնայ ու կը  
 մեռնի :

### ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ե՛րբ կաթ տալ սկսելու է :

Տղան ծնելէն տասներկու ժամ ետքը  
 ծիծը բերնին գնելու է. ասկէ եւել ըսպա-  
 սել սկստքը չէ : Ասանկ կանուխ կաթ տալը  
 քանի մը աղէկութիւն ունի, նախ՝ ան առ-

ջի եկած կաթը լուծիչ է , տղան անով կը մաքրի . երկրորդ՝ մօրը վրայ տենդ պիտի գայ նէ՝ բողբոջին չիգար , կամ սաստիկ չի գար . վերջապէս ստինքը աղէկ մը չիլեցուցած տղան ծծէ նէ , պտղունքը աղէկ երեւան կելայ , ու թէ որ լենայու սպասես , ան ատենը ծծել տաս նէ , ծծելը դժար կըլլայ . պտղունքը կըցաւին . կամ խոց ( եաղը ) կըլլան :

Եայց երբեմն առջի ժամերը շատ կաթ չիգտնրալիք , անատենը տղին դգալ մը շաքարոտ ջուր կըտրալի . ու կըսպասես որ կաթը գայ , ու եկածին պէս կուտաս :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Գ .

Ի նչպէս ծծել տարու է :

Առջի անգամը չիկրնար տղան ստինքը գտնալ , պէտք է որ մայրը բռնէ բերանը դնէ . չէ թէ միայն տղան աղէկ ծծելու համար . հասպա՝ պտղունքը չիծրուելու և ձեւէն ու իր կտրութենէն չելլալու համար :

Ըտտ մեծի մասին տղան ծիծին փակածին պէս , իր շթունքները խողովակի ( քիւնկի ) պէս ընելով , ծիծին պտղունքը բողբոջին բերնին մէջ կառնէ , լեզուին ծայրը խողովակահաձեւ գարձընելով , մէկ դիէն ալ

ձեռքբերներովը մօրը ստեանցը վրայ կօխել լով կըսկսի կաթը քաշել . քաշելու ատենը տղին երեսները կուռեանան, բերնին մէջը պարսպ կըլլայ ու կաթն ալ կըսկսի վազել : Ասկէ զատ կաթին վազելուն ուրիշ պատճառներ կան . նախ՝ տղին տարբութիւնը . երկրորդ՝ տղին բերնին մէջը ստեանց պըտղունքը կըխտօխտան . ասոնք ալ կաթը կըքաշեն . ու երբեմն անանկ սաստիկ կըվազէ որ ցնցուղի ( ֆիսկկլէյի ) պէս կըցատի : Թէ որ կաթը տղին բերանը շարունակ դարնէ , տղան կըլլելու ատեն չունենալով կըխտողը . ասոր համար կաթը քիչ մը եկածին պէս . տղան իր լեզուն խողովակի ձեւէն կըհանէ , ու ներս կըքաշէ . ասանկ կաթը դէպ ՚ի կոկորդը կըքալէ : Ան ատենը տղան իր լեզուն քիմքին ( տամաղին ) կըկըպցընէ , որ կաթը բերնին կողմը չեթայ ու դէպ ՚ի կոկորդը քալէ . կաթը կոկորդին մէջ գացածին պէս կըկըլլէ , ու նորէն իր լեզուն առջի ձեւը կըխօթէ , նորէն կաթ կըքաշէ նորէն կըլլելու համար :

Մայրը պէտք եղած զգուշութիւնները ընելու է որ տղան կաթը կարենայ քաշել : Տղան առջի ամբոխան մէջ գլուխը չիկրնար վեր վերցընել որ ինքնիրէն բերանը ծիծին մօտեցընէ : Աւտօի մայրը նստած ըլլալու է . ու որ կողմէն կաթ տայ պիտի նէ , ան կողմի ծունկը վեր վերցընէ , տղան իր բազկին վը

րայ առնէ , տղին գլուխը իր ուսին վրայ ,  
ու մարմինը իր կուրծքին վրայ կրթնցրնէ  
լով . բայց զգուշանայ պիտի որ տղին բիթը  
չխաղամըվի , որովհետեւ սխալվի նէ , տղան  
ծիծը քաշելու ատենը շունչ չիկրնար առ-  
նել : Եւայց թէ որ տղան օրանին մէջ պառ-  
կած է նէ , մայրը տղին վրայ կրխսնարհի ու  
իւր ծիծը բերնին կըմօտիկցրնէ :

Ահա մայրը ատանկ ընէ նէ , տղան բե-  
րանը կրբանայ ու ծիծը կրբռնէ . թէ որ չը-  
նէ նէ , տղին երեսը կաթ ցրցըքնելու է մի-  
անդամայն ծիծը բերնին մօտեցրնելով : Այր-  
բեմն տղան իր ձեռքովնեւրովը ստեանցը վը-  
րայ չիկոխեր , ու ան ատենը շատ կաթ չեր-  
թար տղին բերանը . ասոր համար մայրը ինք  
պիտի ընէ անոր տեղը :

Առջի օրերը երբեմն մէկէն շատ կաթ  
կուգայ ստեանց մէջը . տղին ուժը չիվերցը-  
ներ որ այնչափ կաթը կրլլէ . մէկ մասը կու  
կորդը ( պօղաղը ) կիյնայ , շունչ չիկրնար  
առնել . խեղդըվելու պէս կրլլայ . մայրը  
նայելու է որ տղան կամաց կամաց քաշէ :

Այրբեմն ասոր հակառակը տղան բնաւ  
կաթ չիկրնար քաշել , պէտք է որ ասոր նայ-  
վի . թէ որ տղան կաթ քաշէ ու կրլլէ նէ  
երեսները կուռենան կիջնան , կուռենան  
երբոր կրլլէ նէ , ու կիջնան երբոր քաշէ  
նէ : Թէ որ չուռենան նէ , բսել է որ տը-  
ղան բան մըն ալ չիկրլլեր կոր . այսինքն կաթ



չիկրնար կոր քաշել : Աւրիշ բանէ մըն ալ  
 տղին կրլելու կարողութիւն ունեցած ըլ-  
 լալը կրնանք գիտնալ . կրլելու ատենը՝ ա-  
 ռաջին , վարի կրգակը ( չէնեէն ) վերի կղակին  
 կրմերձենայ : Արկրորդ՝ խոչափողը ( խրթ-  
 լախը ) վեր կելլայ վար կիջնայ : Արկրորդ՝  
 կաթը կոկորդէն անցած ատենը ձան մը կել-  
 լայ . ( բայց աս ձանը քիչ մը մեծկակ տղոց  
 քով կրլայ ) : Չորրորդ՝ տղուն աղէկ քաշե-  
 լու ատենը ծիծն ալ կրկակուղնայ . լեցուն  
 եղած ատենը , որչափ կարծր և սլինդ էր նէ ,  
 անտանկ չիմնար : Ախնա սէտք է որ փնտը-  
 ռենք , թէ ինչու տղան կաթ չիկրնար կոր  
 քաշել : Ասոր պատճառները երբեմն տղոց  
 կողմանէ կրլայ , երբեմն մօրերնուն : Տղոց  
 կողմանէ նախ՝ կրլայ որ , տղան շատ վատուժ  
 ըլլալով կաթ քաշելու ուժ չունի . բայց դը-  
 գալով շաքարատ ջուր տաս նէ ակտրժակով  
 կրխրմէ , կամ մատդ բերանը դնես նէ կրծը-  
 ծէ : Արբոր տղան ասանկ տկարութեան պատ-  
 ճառաւ կաթ չիքաշէ , մայրը ինքը իր կաթը  
 գաւաթի մը մէջ կրսրխամէ , ու անկէ դգա-  
 լով քիչիկ քիչիկ կուտայ ու իր տղան ասանկ  
 կրսրնուցանէ , մինչեւ որ ուժը վրան գայ :  
 Այոց քիչ մը աղին վրայ ուժ եկածին սէս ,  
 ծծել տալու է . որովհետեւ ծծելը խմելու  
 չինրմանիր . ինչպէս որ ըսի ծծելու ատենը  
 տղին բերանը թուք կուգայ , ու աս ալ  
 դիւրամարտելի կրնէ կաթը :



Արբեմն տղին կաթ չկրաշերուն սատ-  
ճառը շատ քնանալու ետեւէ ըլլալն է . բայց  
ան ատենը տղին երեսը նայիս նէ , կըտես  
նաս որ ոչ կուռենայ ոչ կիջնայ . այսինքն  
ծիծին փակած կըքրնանայ . ՚ի հարկէ քիչ մը  
անցնի նէ քունէն կըկտրի , կանօթենայ ,  
ու կըծըծէ :

Բայց երբեմն ծիծը բնու չիփնտրուեր ,  
միշտ կըքնանայ . ասանկ շատ քնանալնուն  
սրատճառը կաթէն բաւական սնունդ չի-  
դտնալնուն է . ու անանկ տղայքները բնու-  
թեամբ տկար կըլլան ու մէկ դիէն կըտրկա-  
րանան , ուրեմն երբոր տղոց ատանկ շատ  
քնանալը տեսնելիսնէ , կաթին նայելու է որ  
ջրոտ չըլլայ :

Արբեմն տղին լեզուին տակը կապ կըլ-  
լայ , որուն սրատճառաւ իր լեզուն առաջ  
չիկրնար տանիլ բերել որ ծիծը ծծէ . անա-  
տենը փորը անօթի կըլլայ . դդալով կաթ  
տասնէ , ախորժեւով մը կըխլամէ . թէ որ կաթ  
չխտաս անանկ ձգես նէ , փորը անօթի ըլլա-  
լուն , մայրը ուր երթայ նէ աչքը հոն է .  
թէ որ իր քովը չիգայ նէ կըսկսի լալ . մատդ  
բերանը դնես նէ կըբռնէ բերանովը ու մի-  
անգամայն բերնէն թուք կըլազէ : Անա-  
տենը պէտք է որ շուտով մը լեզուին տակի  
կապը կտրել տաս փրարուժի մը . ու մին-  
չեւ որ ըռնտնայ նէ դդալով մօրը կաթը  
տաս : Արբեմն ալ տղին բիթը Աեւալիլ կըլ-

լայ, կրգոցվի ու ծծելու ատենը շունչ չի կրնար առնել, կաթը մէկ մը կրքաշէ, շունչ առնելու համար ծիծը կրձրգէ ու կուլայ. նորէն ծիծին կրբակչի, ու քիչ մը կանցնի նորէն ծիծը կրձրգէ լալով, ու միանգամայն քիթին մէջէն խուրտոցի մը ձայն կրլըսվի: Թէ որ ասանկ ըլլայ նէ, սպասելու է որ քիթին Աէվադիւլը անցնի, ու մինչեւ ան ատենը մօրը կաթը դդալով տալու է: Մէյմալ կրլայ որ, տղին կոկորդը կրցաւի, չիկրնար կրլեր որ ծծէ: Կոկորդին ցաւիլը հասկընալը դժար բան մը չէ, որովհետեւ կրլելու ատենը տղան ծիծը կրձրգէ, ու կաթին մէկ մասը դուրս թափելով մնացած կաթնալ դժուարութեամբ կրկրլէ: Աստի անխտհեմութիւն է տղան քանի որ ասանկ է նէ ծիծ տալ, որովհետեւ ծծելով կոկորդին ցաւը կրշատնայ: Պէտք է վերը զուրցածիս պէս, դդալով մօրը կաթը տաս, ու մօրը ծիծը ուրիշի մը ծծել կուտաս որ մօրն ալ վնաս մը չըլլայ: Ասանկ ալ տղին շրթանցը վրայ խոց ( եարայ ) կրլայ, կրցաւի կաթքաշելու ատենը, անոր ալ ըսածիս պէս դդալով կաթ կուտաս, ու կրսպասես որ խոցերը աղէկնան:

Մօրը կողմանէ ալ ուրիշ սխառճառ կայ որ տղան չիկրնար ծծել: Կանայք իրենց յղութեան ատենը նեղ հագուստ հագնել

լովնին իրենց ստինքը կըճղմբովն <sup>1</sup>, երբ որ  
 ճնին նէ՝ իրենց ստեանց պտղունքը յայտնի  
 չեն ըլլար, որ տղին բերանը մբանայ և տը  
 դան ծծէ : Աւտի երբեմն տղան ուժով ըլ  
 լալով, ուժով մը ծիծին կըփակչի ու կըքա  
 շէ : Իրաւ մայրը քիչ մը ցաւ կըքաշէ, բայց  
 իր պտղունքները ձեւի կըմտնան ու տղան  
 դիւրութեամբ կաթը կըքաշէ : Բայց թէ  
 որ տղան տկար է նէ չիկրնար ծծել, ան ա  
 տենը պէտք է որ տարիքը առած տղայ մը  
 իր տղին տեղը ծծէ, երբեմն պղտիկ շունե  
 բու ծծել կուտան, կամ թէ պտղունքին  
 վրայ օդաձիգ ապակի ( շիշ ) քաշելով,  
 պտղունքը երեւան կեղան, ու տղան ալ  
 կըսկսի կաթը ծծել : Թէ որ ասանկով չըլ  
 լայնէ, պտղունքի ձեւ ու մէջը ծակ սունկ  
 ( մանթար ) մը կըյարմարցընես ծիծին վրան,  
 անով ծիծ կուտաս, կամ թէ յատկապէս  
 տօսախէ ( շխմիրէ ) շինուած պտղունք կայ,  
 անիկայ կըդընես ծիծին ծայրը ու անով կամթ  
 կուտաս :

1 Քանի մը բժիշկ կուզեն որ տղան չիծընած, մայրը  
 թէ որ տեսնայ իր ստեանց պտղունքներուն անձեւութիւ  
 նը նէ, ան օրէն սկսի ուրիշ մը ծծել տալ որ տղան ծը  
 նի նէ պտղունքը ձեւի եկած ըլլան : Բայց մենք կուզենք  
 որ տղին ճնելուն սպասեն, որովհետեւ յղութեան ժամա  
 նակը ծիծը ծծելը տղայ անցընելու պատճառ մըն է :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Դ .

Մայր մը ինչ կազմուածքի ու ինչ վիճակի մէջ ըլլայ  
նէ կաթ կրնայ տալ :

Ինչաւ կաթ չխալիտի տան ան մայրերը որ  
անանկ հիւանդութիւն մը ունին որ կաթ  
տալով կը պրըզկի կամ տղին բով ան հիւան-  
դութեան սերմը կը մտնայ, ինչպէս դադողիա-  
կան ակտը (Ֆրէնկին), խողի հիւանդու-  
թիւնը (սրածան), թոքախտութիւնը (վէ-  
րէմը), լուսնոտութիւնը (ամբան), թոք-  
ընկալիչ, և այլն : Ամանապէս մայրը թո-  
քախտոտ (վէրէմ) ալ չըլլայ նէ, թէ որ  
կուրծքի հիւանդութիւն մը ունենայ նէ,  
կաթ չխալիտի տայ, որովհետեւ կաթ տալը  
վը իր կուրծքի հիւանդութիւնը շատ ան-  
գամ կը սաստկանայ, ու ան ատենը տղան  
կաթէն կտրել պէտք կը ըլլայ, կամ ինք հի-  
ւանդ կը պառկի :

Ի բնէ շատ տկար մայր մը՝ հիւանդ չըլ-  
լայ ալ նէ, կերածը դժուարութեամբ կը  
մարսէ, ու ստի անանկն ալ կաթ չխալիտի տայ :  
Վասն զի նախ՝ թէ որ ստամոքսը աղէկ չի  
մարսէ նէ, կաթն ալ աղէկ չըլլար, երկրորդ՝  
բնութեամբ տկար եղող կնիկները, փուճ  
բաներէ շուտով դող կը ըլլան, աս անհան-  
գըստութիւնները կաթին կրննէր գործեն, ու  
տղին ալ կը վնասեն :

Վերջապէս պէտք է որ շախաւոր ու  
աղէկ կաթ ունենայ, կաթին որպիսութիւն  
նը ու շատութիւնը ճանչնալուն կերպը  
ծժմարներուն վրայ խօսելու ատեննիս պի  
տի զուրցենք. ուրեմն ասոր վրայ հաս տե  
ղը խօսելնիս աւելորդ է :

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Մայր մը կաթ տալու ատենները ի՞նչ զգուշութիւն  
ներ բնելու է :

Նախ՝ պէտք է որ մայրը տղան ծնանելուն  
առջի օրերը փնատակար կերակուրներէն բզ  
զու շանայ ( փէհրիզ կենայ ) . առջի քանի մը  
օրը անցնի նէ՛ իր զգուշութիւնը նախ գիւ  
րամարս ուտելիքներով աւրէ, ու կամայ  
կամայ իր առջի սովորութեանը գայ :

Նրկրորդ՝ պաղէն ինքը զինքը սրահէ . վա  
սըն զի սրաղէն ինք չիհիւանդանայ ալ նէ՛  
կաթը կրնայ քիչնալ :

Նրրորդ՝ թէ որ ծիծերուն վրայ վէրք  
բլայ կամ ցաւի նէ՛ շուտով մը բռնանալու  
նայի, որովհետեւ աս ալ կաթը կքրիցրնէ :

Չորրորդ՝ տանը մէջ բանտարդեալ չի  
նրատի, պտրտի օգ առնէ : Նսիկայնախ՝ կաթը  
կաղէկցրնէ, երկրորդ՝ ինք առողջ կրլայ :

Շինգերրորդ՝ պէտք է որ հանգըս



տանան , ու գիշերները քնանան , վասն զի երբեմն կրնայիս որ մօրը կաթը առջի ատենները աղէկ ու շատ է , ինքն ալ կաթ տալու յօժարութիւն ունի ու ողջ առողջ է , ատենէ մը ետքը կաթը կը բիշնայ կամ կը գէշնայ կը ջրոտի , ինքն ալ կրնի հարանայ ( կը դայի ֆնայ ) , քալելու անգամ ճար չունենար , անանկ որ կաթ տալէն դադրել կը հարկաւորի : Ասոր պատճառը սա է որ , տղան չափազանց զգուշանալու և անօթի չի ձրգելու համար , մայրը գիշերները քունը կը ծախէ , ու մէկ զօրեղ կաթ նստու մը ընտոր ամէն իժիր կաթ կուտայ նէ՝ ինքն ալ անանկ կաթ տալու կրնայի , կը տրկարանայ , ու վերջապէս կաթ ալ չի կրնար տալ : Պէտք է որ մայրը իրեն ալ նայի , ինքը զինքը մոռնայր , քունը ծախելը , տղին ալ աղէկ չըլլար՝ իրեն ալ : Չափով կաթ չի տայ նէ , արդին ալ օգուտ մը չըլլար , ինքն ալ կը տրկարանայ և կաթը կը կըտորի : Աւրեմն պէտք է որ մայրը նախ գոնէ քանի մը ժամ քնանայ , երկրորդ՝ չափով ու ժուժով կաթ տայ , ինչպէս որ ասկէ ետքն ալ պիտի զուրցենք :

Վեցերորդ՝ կիւրքերնին չի շարժեն , ուրկէ շատ գէշութիւններ կրնայ պատահիլ : Վէ՛րէ՛ բժիշկը կը պատմէ որ , կին մը սաստիկ բարկանալէն ետքը իր կաթը շան ձագի մը տուեր է , չունը խկոյն Աբաղճ եղեր , մեռեր է : Նմանապէս Պէ՛ռ թէ՛ օղ կը պատմէ որ

բանի մը շատ նեղացեր, անկէ ետքը իր տղին կաթ տուեր է կին մը, խեղճ տղին չորս դին չէ բռներ ան կաթը ուտելէն ետքը: Շատ ատեն չիկայ, հոս երեւելի մարդու կին մը իր տղին կաթ տուած ատենը՝ գէշ լուր մը կառնէ կոր, նոյն ժամայն տղան մեռաւ: Պօհէռաւ կրսէ՝ գինով կնկան կաթը ուտող տղաքը շաւիղէ կրբըռնեն: Բառմանդիէն անգամ մը կին մը տեսեր է Սբաղձ բռնած ատենը, իր կաթը ցրցուցեր են, յար և նման հաւկրթի ձերմկուց դարձեր է եղեր:

Ահա ասոնք կը պատմեմ որ՝ մայր մը հասկընայ, գիտնայ որչափ իրեն բրածը իր կաթին վրայ, ու կաթը՝ իր տղին վրայ ներգործութիւն ունի: Պէտք է որ՝ կին մը կաթ տուած ատենը սիրտը հանդարտ բռնէ, չի բարկանայ, չինեղանայ, գէշ լուր մը առնէ նէ՛ չիտոսկայ, կամ ինքը զինքը չիկրնայ զտակէնէ, թող ան ատենը կաթ չիտայ, ըստ պատէ որ ան չար փայրկեանը անցնի:

Մայր մը պէտք է որ տղին համար համբերել սորվի, երբեմն պէտք է որ ինքը զինքը զրկէ: Այս մեր բրածը անհող մայրերուն համար է, չէ՛նէ անանկներ կան որ ՚ի բնէ խրատեալ են զաւկրնին սիրելու, անոնց համար չէ մեր խօսքը: Ասեւ ասոնց կրխը բատենք որ սարսապ տեղը ինքը զինքնին չի զրկեն, որովհետեւ իրենց հիւանդանալը



տկարանայր տղին հիւանդանալուն պատ-  
ճառ կրնայ ըլլալ :

Աթենքերորդ՝ քանի մը ատենէ ետքը կա-  
րելի է որ կինը իր ամսականը տեսնայ , ան-  
կէց ետքն ալ կաթ տոյ մի : Ախի՛ աս գիտ-  
նալու է որ , երբեմն կին մը երկու տղուն  
մէկ տեղ ծիծ կուտայ , ոչ տղայքը կը հիւան-  
դանան , ոչ ինք : Հիմա ան տղին մէկը ծի-  
ծէն կըտրէ նէ , իր ամսականը կուգայ , ու  
կաթն ալ ասով չիկտրիր , ու մէկալ տղան  
կըմեծնայ , առանց հիւանդանալու առանց  
տկարանալու : Ամանտպէս կաթ ուտող տը-  
ղան քանի մը ամբովան ըլլայ նէ , այսինքն  
կաթէն ուրիշ բան կուտէ նէ՝ մօրը ամսա-  
կանը գալովը կաթը քիչնայ ալ նէ , տղին  
վնաս չիտար , ուրեմն մայրը պէտք չէ որ իր  
տղան կաթէն կտրէ ասոր համար : Վայց  
երբեմն կաթ տուող կինը բնութեամբ տը-  
կար է , մէկէն ամսականը կուգայ , ստինք-  
ներն ալ կըթուլնան կինջնան , ան կրնկան  
կաթը տղին չիկրնար յարմարիլ , պէտք է որ  
ինք ալ կաթ չիտայ անկէց ետքը :

Աթենքերորդ՝ կաթ տուող կնիկը յղա-  
նայ նէ՝ աղէկ կըլլայ որ իր յըութիւնը իմա-  
ցածին պէս ալ կաթ չիտայ , որովհետե  
ան կաթը ուտող տղաքը քանի մը ատենէ  
ետքը փորերնին կըցաւի և փորհար կըլլան ,  
կըտրկարանան , կըխրսխեն , վերջապէս սաս-  
տիկ կը հիւանդանան : Վայց շատ անգամ

կաթ տուող կինը իր յղի եղածը քանի մը ամիս ետքը կիմանայ , աղէկ կըլլար որ յղի եղած օրը գիտնար , ան օրէն կաթը կտրեր : Թէ որ կաթ տուած ատենը ամսականը գայ , ու անկէ ետքը կտրի նէ , կրնայ յղի եղածը կասկածիլ . բայց ամիէն կաթնատուն՝ ամսականը չխտեսնար : Ասանկ ալ յղութեան նշանները աներկբայ չեն , երբեմն քանի մը ամիսէ առաջ նշան ալ չիկայ : Բայց իրեն էն մեծ նայելու բանը սա է որ , տղան հիւանդ է , թէ չէ . թէ որ հիւանդ է նէ , պիտի նայի յղութիւնն է մի սրտածառը :

---

ԳՒՈՒԻՒ Գ.

Ծ Ծ Մ Ա Ր Ո Ր Է Ս Ի Ի Տ Ա Ն Ա

---

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Ա

Մայր մը ծծմար բռնած ատենը ինտոր պիտի վարիլ :

Թէ որ սրտածառաւ մը մայրը իր տղին կաթ չիկրնայ տալ նէ , պէտք է ծծմար ( սիւտանայ ) մը բռնել . բայց ծծմարը որ չափ աղէկ կըլլայ ըլլայ , մօր պէս տղի մը կրնայ մի նայիլ . կարելի է մի օտար կին մը մօրը դիւրազգածութիւնը ունենայ տղին ա

մէն կարիքը հոգայու , ամէն խնամքը ընելու : Աւրեմն ծծմար մը բռնըսի նէ՝ մայրը պիտի գիտնայ որ ծծմորը գործը միայն կաթ տալ է , տղին նայողը , տեսնողը , աչքին արցունքը սրբողը ինքը պիտի ըլլայ : Ասն առ նանկ մայրեր որ տղաքնին դուրս կուտան , ծծմարը քու աչքիդ առջեւը քեզի պէս չի նայիր , ասանկ աչքէ հեռու տեղը ինչ կրնէ :

Արբեմն տղան գեղը կրխրկեն , հոն ծծմոր մը կրջանձնեն , բայց շատ անգամ գեղի օդը տղին օգուտ չըրած , գէշ նայիլելովը կըհիւանդանայ կամ կըմեռնի :

Օւրցածս կրկին բտեմ . մայր մը իր տղը ղին ծծմար բռնէ նէ , տղան իր քովէն չի պիտի զատէ , աչքը միշտ իր տղին վրան պիտի ըլլայ , չէ նէ բնութեան ու որդեւիրութեան դէմ մեղանչած կրլլայ :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ազեկ ծծմար մը ինչ կազմութիւն ունենալու է , ու իր կաթը ինչպէս կըճանչըրվի :

Կրտանդնուպօլիս նոր դարձեր էի , մէկը ծծմար մը բռնել կուզէր . անդին ասդին զուրցեր տասը հատ ծծմար բերել տուեր է , իր բժիշկին ցըցընելու համար . բժիշկը

մէջէն մէկը զատեր էր . ես ալ տեսայ ծրծմարը , շատ գերազանց կաթ ուներ , ու ինքըն ալ ուժով . բայց ծծմարը ետ խրկեց , որչափ որ իր բժիշկը ու ես պահէ ըսինք ալ նէ : Պատճառը հարցուցի նէ , պատասխանեց թէ գէշ կրկնգայ կոր , անոր համար : Այս հոս աս իգական կատարելութիւնները ոչ պիտի փրնտուեմ ու ոչ ալ փնտուելը կրնամ խրատել : Օ՛ծմար մը աղէկ է ըսվելու համար պէտք է որ նախ աղէկ կաթ ունենայ , երկրորդ՝ հիւանդ չըլլայ առողջ ըլլայ , ու խելքը գլուխը ըլլայ , խենթ չըլլայ . ասիէ աւելի փնտուելը աւելորդ է :

Այսինք հիմա ծծմարին աղէկ ըլլալը ի՛նչ պէս կրնանք ճանչնալ : Ամէնքն ալ գիտեն որ ծծմարին վրայօր դրսէն եկած լուրերը շատ անգամ անկատար են կամ հաւատարմութիւն չըլլար : Աւրեմն նայինք երեսէն կրճանջցրվի մի : Հիները կուղէին որ ոչ շատ գէր ըլլայ կաթնատուն և ոչ շատ նիհար ( զապուն ) : Արեսները կարմիր , կուրծքը ըայն , ինքը հատաբազուկ ( բազըլը ) ըլլայ , փափկամարմին չըլլայ , այսինքն խիտ մորթ ունենայ . առզանները ողջ ըլլայ , շունչը չիհոտի , ստինքները մեծ ու լեցուն ըլլան ու բնաւ կահուղ ու կախ չըլլան , բայց չափազանց ալ սլինդ ( սրխը ) ու կարծր ( սէրթ ) ալ չըլլան . ( որովհետեւ տղին քիթը ծիծ կերած ատենը ստեանց վրայ դալովը կըծըռի

Թէ որ ստիները չափազանց կարծր ըլլան) :  
 Ստեանց պտղունքը շատ փոքրիկ կամ ներս  
 քաշած չըլլայ, և շատ ալ հաստը չըլլայ, չէ  
 նէ տղին բերանը չիկրնար մտնալ : Սաղերը  
 կարմիր կամ դեղին չըլլայ, հապա՛ սեւ ըլ-  
 լայ ու վերջապէս ինքն ալ աղւոր ըլլայ, ա-  
 հա հիները ծծմարը ասանկ կուզէին : Ատժ-  
 նատուին քով առողջութեան նշանները  
 փնտրուելը պարտք է. բայց հիներուն ման-  
 րամասն խել մը փնտրուած բաները աւելորդ  
 են : Ինչպէս, նախ՝ կաթնատուն շատ ու-  
 ժով չըլլայ ալ նէ կըլլայ, կաթին աղէկու-  
 թիւնը ու իր սննդարար որակութիւնը ու-  
 ժին հետ կապակցութիւն մը չունի :

Ի նոտր որ դիւրութեամբ ու ողջ տղայ  
 բերող կնիկներ կան որ տկար (զայիֆ) են,  
 անանկ ալ աղէկ կաթ ունեցող կաթ տուող  
 կնիկներ կան, որ ուժով չեն : Ամանապէս  
 կաթնատուին երեսին կարմրութեանը հաւ-  
 տարով զինքը ողջ կարծելը կանոնաւոր չէ,  
 որովհետեւ անանկ հիւանդութիւններ կան  
 որ տղին մահուանը պատճառ կրնան ըլլալ,  
 բայց երեսին վրայ չեն երեւնար, ինչպէս  
 գաղղիական ախտը (ֆրէնկիս), լուսնոտու-  
 թիւնը (տառան) եւ այլն : Ասանկ ալ կաթ-  
 նատուին կարմիր կամ դեղին մաղ ունենա-  
 լը պակասութիւն մը չէ, իրաւ շատ ան-  
 դամ դեղին կամ կարմիր մաղով կանայք  
 Աւճայի բնութիւն ունին ու կաթերնին



աղէկ չըլլար . բայց սեւ մազով կնիկներն ալ  
ասանկ բնութիւն չէ՞ն կրնար մի ունենար ,  
անոնց ամէնուն կաթն ալ աղէկ է մի . չէ՞ :  
Ուրեմն ծծմար մը բռնելու ատենը իր ե-  
րեսին դէմքին ու գոյնին նայելու տեղը ,  
կաթին աղէկութիւնը ու կնկան առողջու-  
թիւնը կրնայիս , ուրիշ սպարագայները ըլլան  
ալ կըրլայ չըլլան ալ :

Ուրեմն նայինք նախ կաթին աղէկ ըլլա-  
լը ուրիշ կրնանք հասկընալ :

Հիներուն ատենէն մինչեւ հիմա փոր-  
ձելու այս եղանակը կայ որ , կաթիլ մը կաթ  
կառնեն եղունգին ( թունախնուն ) վրայ  
կամ արծրթէ դդալի մը մէջ , կամ հայելի  
մը վրայ , թէ որ կաթը չիկենայ վազէ նէ ,  
աղէկ չէ կրսեն . կայնի ու դժար վազէ նէ ,  
աղէկ է կրսեն : Արթին ասանկ նայելը ան-  
կատար է : Թէ որ կաթը հանգիստ տեղ մը  
թողուս նէ , քիչ մը ատենէ ետքը կըզտի  
( տուրուրիչ կըրլայ ) , ու կրնայիս որ վրան  
սեր ( խայմախ ) կըկապէ : Ամանապէս թէ  
որ կաթը ապակի ամանի ( շիշէի ) մը մէջ  
դնես երեքըրնես ( չալխամիշ ընես ) նէ , վը-  
րան կարագ կեղայ : Ահա կաթ մը որչափ  
սեր ու կարագ ունենայ , այնչափ ուժով և  
աղէկ կաթ է : Բայտ մեծի մասին կնկան  
կաթը երկան ու նեղ ապակիի մէջ դնես ,  
անանկ նայիս նէ , հարիւր մաս կաթին հինգ  
մաս սեր կըզտընաս թէ որ աղէկ կաթ է նէ :



Փարիզ ( ) ուլէան դուքսին տղին համար Տօ  
նէ բժիշկը յատկապէս ասանկ նեղ ապակի  
ամաններ շինել տուաւ , հարիւր ատոիճա  
նի բաժնելով , ու շատ փորձեր ըրաւ մեր  
առջին ասոր վրայ , տեսանք որ ան կաթը որ  
հարիւրէն հինգ սեր չունի նէ ուժով աղէկ  
կաթ չէ , ու կաթը քանի որ տկար ըլլայ  
նէ , այնչափ սերն ալ կը քիչնայ : Արթը ու  
ժով ըլլալուն շատ նայելու է , որովհետեւ  
թէ որ ջրոտ ու տկար ըլլայ նէ , կաթ ուտող  
տղան չիկրնար աղէկ սնանիլ ու նիհար կը  
մնայ որ ուամկորէն Արած քնայ կըսեն : Արմ  
թէ անանկ ջուրի պէս կաթը ծծելով , չի  
կշտանար ու կըսկըսի շատ ծծել , որ կաթին  
չատութեանը մէջ քիչ մը սնունդ գտնայ ,  
ասով տղին ստամոքսը շատ կաշխատի , ինքը  
կըհիւանդանայ , փորքը շուքի կըստատահի :  
Ահա աս պատճառաւ աւելի աղէկ է որ կա  
թը քիչ ըլլայ , և շատ ուժով , քանթէ շատ  
և ջուրի պէս ըլլայ : Ասոր ներհակը թէ որ կա  
թը շատ ուժով է նէ՝ տղին ստամոքսը ու աղիքը  
ան զօրաւոր կաթը մարսելու կարողութիւն  
չունենալով , պիտի բորբոքին , արիւնը պի  
տի սաստկանայ , վրան գլուխը դուրս պի  
տի տայ : Այց ճամփան կայ ատ ուժով կա  
թը բարեխառնելու , որովհետեւ կաթը  
քիչ քիչ տաս նէ ան քիչին մէջ տղան իր սը  
նունդը կըգըտնայ ու ստամոքսն ալ ան քի  
չով չիբորբոքի : Արկրորդ՝ կաթը յաճախ

չիտասնէ , ծիծին մէջ շատ ատեն կենալովը  
 իր ուժին մէկ մասը կրկորսնցրնէ . փորձիւ  
 ամէնքն ալ մինչեւ գեղացիները անգամ գիւ  
 տեն որ քաշելու կաթոգ իրեք բաժնես , ու  
 առջի բերան քաշածո աման մը դնես ,  
 երկրորդ անգամինը ուրիշ աման մը , երրորդ  
 դրն ալ մէկ երրորդ աման մը առնես նէ ,  
 կրտեսնաս որ առջի քաշած կաթոգ էն ու  
 ժովը ըլլալու տեղը էն ջրտան է , ու էն ետ  
 քի քաշած կաթոգ էն ուժովն է , ըսել է որ  
 կաթը քանի որ ծիծին մէջ մնայ նէ , այնչափ  
 ուժէն կրկրորդի : Արեմն ծծմօրը կաթը շատ  
 ուժով է նէ , շուտ շուտ կաթ չիտալով կա  
 թը ատեն մը ծծին մէջ մընալովը իր ու  
 ժին մէկ մասը կրկորսնցրնէ , ու տղան ալ  
 աչխատանք և նեղութիւն չիքաշեր : Բայց  
 կաթին ուժով ըլլալը հասկընալով չեսկընար  
 ըսել որ կաթը աղէկ է , որովհետեւ կաթին  
 մէջ արտաքին բաներ ալ կրնան դանքովիլ ,  
 ինչպէս երբեմն թարախ : Թարախ եղածը  
 հասկընալու համար պէտք է խոշորացուցով  
 կամ քիմիական կերպիւ նայիլ : Բայց ար  
 հեստէն չըլլողները՝ կաթնատուին ստինքը  
 ու ստեանց մօտ տեղերը նայելու են որ ու  
 ուեցք կամ վէրք ( եարա ) կայ մի : Թէ որ  
 անանկ բան չիկայ նէ , կարելի է որ կաթին  
 մէջ թարախ չըլլայ , կարելի է կրսեմ , վասն  
 զի ասանկ դրսէն նայելով չիգիտցըվիր :  
 Արեմն թարախը ստեանց պինտ տակը

խորունկ կողմը կրլայ . ուստի թէ որ աւանկ կասկած մը ունիս նէ արհեստէ բլտղ մէկուն կրցրցընես : Թարախէն զատ , երբեմն կաթին մէջ ան հիւթէն կրգտնրվի , որ Վօլշուբօժ անուանեցինք : Աւանկ կաթին մէջ դեղին գծեր կրլայ :

Թարախտո կաթը ուտող տղան կրթու նսւորի , Վօլշուբօժով խառնած կաթը ուտելով չիթունսւորի , բայց միշտ փորը կրբըէ . որովհետեւ Վօլշուբօժին յատկութիւնը ատ է : Աս հիւթը նոր կաթի մը առջի օրերը կրգտնրվի ըսինք տղին աղէք ներուն ( սպողոսասիններուն ) մէջի Աէօնիժ ըսլած աղտեղութիւնները մաքրելու համար . բայց քանի մը օրէն ետքը կրհատնի : Թէ որ շաբաթներով ամիսներով կաթին հետ գտնրվելով տղին փորը քըէլ տայ նէ , տղան առաջ չիգար , կրնիհարանայ , կրմաչի : Արեմն կաթին ուժով բլալը քննելէն ետքը նայելու է որ զուտ բլայ , հիւանդոտ չըլայ : Աթին որախտութեանը վրայ զուրցեցինք . հիմա նայինք որ շատութիւնն ու քիչութիւնը ինչպէս կրնանք գիտնալ : Արայէն նայելով քիչ մը գիտնալը գըժար է : Թէ որ ստինքը լեցուն տեսնաս նէ , կրնաս ըսել որ կաթնատուն չափաւոր կաթունի , բայց երբեմն ստինքը լեցուն չըլար ու ինքը շատ կաթ ունի . ինչպէս , անանկ կնիկներ կան՝ որ կաթերնին ստեանց մէջ չի

դար լենար , այլ միայն քանի որ կաթ տան  
 նէ ան ատենը մէկ դիէն կուգայ , ու եր-  
 բեմն ասոնք ստինքնին լեցուն կաթնատու-  
 ներէն շատ կաթ կունենան : Աւրեմն կաթ-  
 նատուի մը չափաւոր կաթ ունենալը գիտ-  
 նալու համար պէտք է որ քու աչքիդ առ-  
 ջեւը տղին կաթ սայ , ասանկով կրնայիս որ  
 կաթ չխաբված ստինքը ինչպէս էին , ու տը-  
 դան ուտելէն ետքը ինչպէս են , վերջապէս  
 տղան կաթը ուտելէն ետքը կշտացաւ ձայ-  
 նը կտրեց մի : Ասանկ քանի մը անգամ  
 առջիդ կաթ տրուի նէ կըհասկընաս կա-  
 թին չափաւոր եղածը , ուրիշ կերպիւ-  
 չես կրնար հասկընալ : Ան մը կայ որ շատ  
 անգամ կաթին քիչ ըլլալուն նշանն է .  
 այսինքն՝ կաթնատուին պտղունքին վը-  
 րայ խոց ( ետղըր ) կըլլայ . տղան չափա-  
 ւոր կաթ չիգըտնալով բռնի կըբաշէ , անկէ  
 պտղունքը խոց կըլլան : Աւրեմն պտղունքը  
 խոցոտ եղած կաթնատու մը տեսնաս նէ ա-  
 ղէկ նայէ որ կաթը քիչ չըլլայ :

Շինա նայինք ամէն աղէկ կաթ տղին  
 կըյարմարի մի : Աոր ճնած տղի մը համար  
 էն յարմար կաթը նոր կաթն է . բայց որ-  
 չափ դժար է նոր կաթ գըտնալ : Աթնա-  
 տու մը ուրիշ տեղ կաթ տալու երթայ նէ ,  
 կամ քանի մը ամիս իր տղին կաթ տուեր ,  
 կամ իր տղան մեծցուցեր կաթէն կտրեր ա-  
 նանկ եկեր է :

Արբեմն ալ իրենց տղաքը կրմեծցընեն ,  
 ուրիշի տղի մը կաթ կուտան . այն երկրորդ  
 տղան ալ կաթէն կըկըտորի , անկէ ետքը եր-  
 րորդ տղի մը կերթան : Ասանկ հին կաթ  
 մը նոր ծնած տղի մը չիկրնար յարմարիլ .  
 որովհետեւ կաթը նոր ատենը դիւրամար-  
 սելի ու քիչ սնուցիչ է . մինչեւ վեց ամիս  
 երթալով կըշատնայ ու կուժովնայ . բայց  
 վեց ամիսէն ետքը ըստ մեծի մասին կըսկըսի  
 քիչնալ ու տկարանալ : Աւրեմն տարուան  
 մը կաթը ինչպէս նոր ծնած տղի մը կըյար-  
 մարի , մէկ ու կէս տարուան կաթը վեց  
 ամսրվան տղին ընտոր կուգայ : Բայց նո-  
 բէն կըսեմ որ , նոր ծնած տղին նոր կաթ  
 գտնալ անկարելի կամ շատ դժար է : Աւ-  
 րեմն նայելու է գոնէ կաթին հնութիւնը  
 քանի մը ամսրվան միայն ըլլայ , տարիներով  
 հինցած չըլլայ : Տեղ մը կաթնատու կին մը  
 բերին , որ չորս տարի առաջ տղայ բերեր ,  
 իր տղան կաթէն կտրելէն ետքը ուրիշի մը  
 տղու կաթ տալու գացեր է , անկէ ետքը իր  
 կաթն ալ կտրեր , իր տունը դարձեր է . հոն  
 իր տղան խաղալու համար ծիծը ծծեր , ու  
 քանի մը ամիսէն ետքը բռնի կաթ բերեր  
 է . ան ատենը մայրն ալ մտքը ըրեր է որ  
 նորէն կաթ տալու տղայ մը գտնէ : Ահա ա-  
 սանկ կաթ բնաւ չըլլար :

Կաթին հնութիւնը ինչպէս կրնանք գիտ-  
 նալ . մէկ ճամնիայ մը միայն կայ , այսինքն



կաթնատուխն տղան տեսնալով . կամ թէ տղան մեռած է նէ , երբ ճնած ու երբ մեռած ըլլալը տուգելով :

Նայելու է որ ծծմօրը կաթը առջինէկ տղի կաթ չըլլայ , որովհետեւ նախ՝ առջինէկ տղայ բերող կինը սղայ նայիլ չգիտէ . երկրորդ՝ ինչուք վերջը բաւական կաթ ունենալիքը ոչ ինք գիտէ և ոչ մէկը կրնայ գիտնալ , վասն զի երբեմն առջի բերանը կրնայիս որ կաթը աղէկ ու շատ է , ու քանի մը ամիսէ ետքը կամ կաթը կըջրոտի կամ բոլորովին կըկտորի . բայց թէ որ ծծմօրը քանի մը անգամ տղայ բերած ըլլայ նէ՝ ՚ի հարկէ նախ տղոց նայել գիտէ , երկրորդ՝ առջի զուակ ներուն ատենը ինչուք վերջը աղէկ ու շատ կաթ ունեցածը կրնաս հարցնել ու խնայալ . ուրեմն կրնաս ալ գուշակել որ այս անգամին ալ բաւական կաթ պիտի ունենայ :

Այսին նայելէն ետքը կաթ տուողին նայիս պիտի որ նախ՝ հիւանդ չըլլայ , ու աւտոր համար ոչ իրեն և ոչ իր կողմանէ եկած մարդուն խօսքին հաւտալու է , հասլա բը ժիշկին վկայութեանը նայելու է : Աւրտալայ երբ կաթ տուող մը բռնելու ըլլան նէ , նախ բժշկին կըցրցնեն , շեմ գիտեր ուրիշ ինչ կերպիւ կարելի է հասկընալ ծծմօրը ինչ վիճակի մէջ ըլլալը :

Օ՛ծմօրը առողջ եղածը չիգիտցած իրեն կաթը տղիկ կերցընես նէ , կարելի է որ ետ



քը որջաս . որչափ հիւանդութիւններ կան՝  
որ երեսէն չիճանցրվիր , ու տղին պըշկելով  
իր մահուանը անդամ պատճառ կըրլան՝ :

Արկորդ՝ թէ որ ուրիշ տեղ կաթ տուեր  
է նէ , հարցընելու է բաւական կաթ ունե-  
ցեր է մի . տղին ընտանեացը հետ ինչպէս  
վարվեր է . ու տղին ինչպէս նայեր է :

Արրորդ՝ կաթ տուող կնկանը տըղան  
կամ մեռած , կամ ողջ է նէ , ուրիշ կնկան  
մը յանձնված ըլլալու է . որովհետեւ երկու  
տղի կաթ տալը , երկուքն ալ անօթի պա-  
հել է :

Չորրորդ՝ պէտք է որ շատ տարիքը ա-  
ռած կամ շատ պզտիկ չըլլայ . ծծմօրը յար-  
մար հասակը տասներութը տարիէն երեսուն  
և հինգ տարին է :

Հինգերորդ՝ պէտք է որ տղին նայե-  
լու կարողութիւն ունենայ . քիչ մը խելքը  
գլուխը ըլլայ , խենթ չըլլայ , որովհետեւ  
տղին մայրութիւն պիտի ընէ . բարկասիրտ  
չըլլայ . քաղցրաբարոյ ըլլայ . նմանապէս տըր-  
տում բնութեան տէր չըլլայ , ու ոչինչ բա-  
ներու պատճառներով շատ լացող չըլլայ .

1 Երբեմն ծծմօրը հիւանդութիւնը չէ թէ միայն տղին  
կըպըշկի , հասա ուրիշ կերպիւ ալ տղան վտանգի մէջ  
կընայ ձգել : Ծծմօր մը լուսնտ էր . օր մը տղան գիրկը  
պատուհանէ մը կընայեր , խելոյն օխտը բռնեց , ինք կըռ-  
նըկին վրայ ինկաւ , տղան ալ պատուհանէն , ու ինկածին  
պէս հողին տըվաւ :

որովհետև ասանկ կնիկները նախ տղան չէն կրնար խաղցրնել, երկրորդ ծծմօրը արտամութիւնը տղին կրներգործէ. նայելու է որ տղայը խնդալ չխտրված, տրամիլ չխտրվին. վասն զի ասանկ մեծնան նէ, ետքը սեւամաղձոտ (մերաքը) ու սրմբած կըլլան ինչպէս են շատ անգամ մեր տղաքները:

### Յ Օ Դ ՈՒ Ա Տ Գ.

Ծծմօրը վրայօք բնելու զգուշութիւնները:

Նոր ծնած տղի մը կաթ տրվի նէ, պէտք է որ ծծմօրը իր կաթը նոր կաթի նմանցընէ, առջի բերանը խտտեղէն ու մաքրողական բաներ ուտելով՝ քանի մը օրէ ետքը կամայ կամայ իր սովորութիւնը բրած կերակուրները ուտէ: Աղէկ բան չէ կաթ տուողին ուտելիքը փոխելը, սա կամ նա կերակուրը կերցընել կամ չկերցընելը, կաթը շատցընելու կամ աղէկցընելու դիտաւորութեամբ: Նաև կերակուր մը չիկայ որ կաթը շատցընէ կամ քիչցընէ. գեղացի կնիկներ կան որ ցորեն ուտելով մինչև վերջը կաթ կուտան. ասոր հակառակը քաղաքացի կնիկները ինչուք վերջը մսեղէն ու խտտեղէն ուտելով կաթ կուտան ու կրնան տալ: Քաղաք մը՝ միայն ձկնեղէն կուտէ

կաթնատուն , ուրիշ քաղաք մը գինի կըրտը մէ կամ չիտըմեր , անանկ որ ամէն տեղի կաթնատուին սորված ուտելիքը այլևայլ է , ու ամէն տեղ ալ աղէկ կաթ տուող կայ . ըսել է որ ամէն կերակուրէ աղէկ կաթ կրնայ ըլլար . ուրեմն կաթնատուին սորված կերակուրը փոխելու չէ : Ասան զի ասանկ փոխելով , կաթին որակութիւնն ալ կրնայ փոխալիլ , թէ և քուկին տանըդ մէջ կաթնատուիդ սորված կերակուրները չեփին ալ նէ , կարելի է նէ չիբըռնադատես իր ուղած կերակուրներէն ետ մնալու ու զորկը վելու : Նաև կերակուրի խեղդելով կաթնատուն չիգիրցընես , որովհետև մէկէն գիրնայ նէ , կաթն ալ կըփոխալի կամ կը կըտրի :

Աերջապէս ուտելիքի խմելիքի կողմանէ կաթնատուէդ փնտրուելիքդ ու զգուշանալիքդ միայն սա ըլլալու է որ չափազանց ուտելով անհանգիստ չըլլայ , գինի շատ խմելով չիգինովնայ , նմանապէս համեմային ( պահարեղէն ) ու դժուարամարս կերակուրներէն հեռու կենայ , որովհետև ինչ որ իրեն դպչի նէ , ՚ի հարկէ տղին ալ պիտի դպչի :

Կաթ տուողը ամմէն օր պիտի դուրս ելայ ստըտի , որովհետև ինչպէս որ առաջ ըսինք , տունը առնել նստիլը կաթը կըգէջընէ , մանաւանդ ստըտելու սովո-

բու թիւն ունինէ :

Վիշերները գոնէ քանի մը ժամ հան գըստանայ :

Պէտք է որ մեծ ու պզտիկ կարիքնին ամմէն օր ընեն , որովհետեւ խաղը ըլլաննէ , արիւննին կըսատականայ , ասոր հակառակը փոքրըւք ըլլաննէ , կաթերնին կըջրտտի :

Կաթ տուողը բնաւ կիւրքը չիշարժէ , չի բարկանայ , տղան սիրել գիտնայ : Ատանկ ալ տղին մայրը գիտնալու է որ ծծմարը թէ պէտ վարձով բռնրված մէկ մըն է , բայց տրդին մայրու թիւն ընէ պիտի : Աւտտի պէտք է որ անոր հետը մարդավարութեամբ վարվի : Վոհ ընելը միայն ստակով չըլլար , երբեմն երկու անուշխօսք աւելի գոհ կընեն զմարդը քան թէ աշխարհքին գանձերը : Կաթնատուն շատ անգամ քանի մը օրէ , քանի մը շաբաթէ ետքը կառնէ կըքալէ , սպտոճառը սա է որ տանը մէջի եղողները տղան զգուշանալու համար , ոչ կըթողուն որ խեղճ կինը սենեակէն գուրս ելայ և ոչ անգամ ուզածին պէս շարժի , ամմէն բրաճին բան կըսեն , անանկ որ կառնէ կըքալէ : Պէտք է որ կաթնատուն իր տանը մէջ , իր ընտանեացը քով ինչպէս կըկենարնէ , քու տանդ ալ անանկ կենայ , չէնէ կըսրիս մըվի ու տունըդ իրեն անտանելի կըլլայ , կաթնատուին գործը միայն տղին աղէկ նաշիլ ու աղէկ կաթ տալ է , ուրիշ ընելիք :

ներուն խառնրովի չխիայեր :

Ինաւ ճճմարը յի չիպիտի ըլլայ , ու թէ որ պատահի նէ , խիոյն փոխելու է :

Նխնա կըհարցըվի որ քանի մը ամիսէ ետքը ճճմորը դաշտանը գայ նէ , փոխելու է մի : Արթնատուն փոխելը տղին կրնայ վընասել , որովհետեւ երբեմն տղան իր կաթնատունին հետ այնչափ սորված է որ իր ճրճմորէն զատելու համար սաստիկ դժարութիւններ կըքաշվի , տղան կըտրտամի , կուլայ , ուրիշին ծիծը չառներ , իր առջի կաթնատուն կըփնտրուէ . ու երբեմն ալ իր ճճմորը կաթին սորված ըլլալով ուրիշ մը կաթը դժարութեամբ կըտանի : Ահա այս պատճառաւ նայելու է որ բուժ բաներով կաթնատուն չխիոխես :

Արեմն դաշտանը եկած ըլլալուն համար ճամփայ տալէդ առաջ նայէ որ ասով կաթը քիչցաւ մի , ջրոտեցաւ մի , դաշտանին ատենը տղան խոստուկ կընէ՞ կոր մի , վերջապէս բունէ կտրըվելով կըհիւանդաւ նայ կոր մի . թէ որ ասոնց մէկը կըլլայ կոր նէ , ճճմարը փոխելու է , բայց տղան տակաւին աղէկ կերթայ կոր նէ , թէ և ամսականին ատենը քիչ մը անհանդիտտ ալ ըլլայ , բայց հիւանդ չըլլայ նէ , թող ան օրերը ճճմարը՝ կերակուրէ զգուշութիւն ընէ ( փէհրիդ բռնէ ) , խոհեմարար վարվի , ասնկով մինչև վերջը կաթ կրնայ տալ :



## Գ Լ ՈՒ Խ Ե

Կաթ տուող կին չի գտնելի նէ տղան ինչպէս մեծ-  
ցընելու է :

Շատ անգամ կը պատահի որ , մայրը կաթ չունենալով , կամ տալը անյարմար գալով , կաթ տուող ալ չի գտնելի լիբը կը բըռնէ , ան ատենը տղուն ինչ կերցընելու են , խօսելը մեղի հարկ կը ըլլայ :

Սառնիստ կը պատմէ որ , Գաղղիոյ Ա ջառի մօտ գեղացիները՝ այծերը կը կրթեն տղոց կաթ տալու , անանկ որ , ինքնիրեննուն տըղին վրայ կուգան կը կայնին , ու ծռելով իրենց ստինքը տղին բերանը կը մօտեցնեն ու անանկ կաթ կուտան եղեր : Այնչափ խնամատար են կըսէ , իրենց կաթառու տղին համար որ , տղան լալ սկըսածին պէս , այծը իր կեցած տեղը չի կենալով , կը ցաթ կուտէ , գէպ ՚ի տղին օրորը կը վազէ ու կաթ տալու կը պատրաստուի :

Ասանկ խելացի այծեր թէ որ Գաղղիա կը գտնելի նէ , մեր կողմը չէ տեսնուի . ուրեմն կաթնատու կին չի գտնելի նէ չեմ կրնար այծը կաթնատու ընելու խրատել , որովհետեւ այծը ո՛վ պիտի կրթէ . երկրորդ կրթած ալ ըլլայ , կարելի է որ օր մը ելլայ կաթ տալ չուղէ :



Անկան կաթ չի գտնուիլի նէ , տղան մեծ-  
ցընելու սովորեալ կերպը անասունի կաթ  
կամ կերակուր տալ է : Շատ քաղաք կայ  
որ , ուրիշ կերպ չեն մեծցընէր իրենց տղա-  
քը : Յրտային երկիրները՝ կնիկները քանի  
մը օր միայն կաթ կրնան տալ , անկէ ետքը  
կաթերնին կրկրորի , ու կը պարտաւորին ան-  
ասունի կաթ կամ եփած կերակուր տալ :

Աւրոպայ ալ կաթնատու կին շատ չի գըտ-  
նուիլուն , շատ տեղ անասունի կաթով կը  
մեծցընեն տղաքը : Փարիզ անտերունջ տը-  
ղոց հիւանդանոցը ատեն մը աս կերպիւ  
տղաքը կը սընուցանէին : Վայց որչափ դժար  
է ասանկով տղայ մը յառաջ բերել : Աթած  
կաթը կամ եփած կերակուրը ինչպէս կըն-  
կան կաթին տեղը կրնայ բռնել . ասոր փոր-  
ձը Փարիզի այն հիւանդանոցը բրաւ , տը-  
ղաքը հարիւրներով կը մեռնէին , ու վերջը  
նայեցան որ ուրիշ կերպ գլուխ չի պիտի ել-  
լան , բայց միայն ծծմար գտնալով :

Արեւի որ աս կերպով տղայ մեծցնելը  
աւելի ցրտային երկիրներուն կը պարմարի  
քան թէ մեզի , որովհետեւ ան տեղուանքը  
ստամոքսը տկար ու փափուկ չէ , ինչպէս  
տաք երկիրներու մարդոց ստամոքսը :

Մեզի մընայ նէ կնկան կաթ տալէն ու-  
րիշ բան չենք կրնար խրատել : Վայց թէ  
որ բնաւ չի գտնուիլի նէ ՚ի հարկէ այս կեր-  
պիւ սնուցանելու է տղան :

Հիմայ նայինք ինչ զգուշութիւններ ընելու է որ այս կերպով մեծնալու տղան շատ չի վրնասի :

Նախ, իր մօրը կաթին տեղը բռնելու կերակուրը միմիայն անասունի կաթը ըլլայ պիտի : Մեր կողմերը գործածած կաթերը նիս միայն այժի ոչխարի ու կովի կաթն է, երբեմն ալ դեղի համար իշուն կաթը <sup>1</sup> :

Աս կաթերուն մէջ կնկան կաթին մօտ, այժինն է, բայց ինչպէս որ վերը ըսի, կաթ մը կթուլելէն ետքը, ստեանց մէջի ունեցած յատկութիւններուն շատը կրկորսնցրնէ, ու գրեթէ մեր եփած կերակուրներուն կարգը կը մըտնայ : Աստի թէ այժի կաթ ըլլայ, թէ ոչխարի, թէ կովու, տղին համար գրեթէ նոյնն է, թէ պէտ սննդարար զօրութեան մասին մէկը մէկէ քիչ մը զանազանութիւն ունին, ինչպէս այժինը աւելի թեթեւ է քան զոչխարին և կովուն, ու ոչխարին կաթը քան զկովու կաթը և այլն : Բայց փորձը իմացուցած է որ ատ զանազանութիւնը կրնայ վերնալ, ինչպէս՝ թէ պէտ կովին կաթը այժին կաթին պէս թեթեւ չէ, բայց

<sup>1</sup> Ուրիշ տեղեր ուրիշ անասուններու կաթեր ալ կը գործածուին : Ինչպէս Ափրիկէ գոմէջի ու ուղտի կաթը . Թաթարիստան ձիուն կաթը . Ամերիկայի հիւսիսային և հարաւային երկիրներու մէջ ըմպ և վիկունիա ըստած կենդանիներուն կաթը . Լաբանիա ալ ունի կենդանիին կաթը :

Թէ որ կովէն առջի կ'թված կաթը միայն առնես նէ , կրտեսնաս որ այժին կաթին թեթեւութեանը կրտեսնայ : Մենք կովին կաթը ամէնէն վեր կրբռնենք քանի մը պատճառաւ . մէյ մը որ , ուզածիդ չափ , ու ամէնատեն կրգըտնրվի : Արկրորդ՝ մի և նոյն անասունին կաթովը մինչեւ վերջը կրնաս տղայ մը մեծցընել :

Հիմա նայինք երբ սկըսելու է աս կաթէն տալ , ու ինչպէս տալու է :

Տղին ծնած օրերը կաթ չխորրվի , տղան քանի որ արթննայ նէ , դգալ դգալ շաքարով ջուր տրվի , ինչուք որ Մեծնիօժ ըսված աղտեղութիւնները դուրս ելան :

Օնելէն երեք օր ետքը քանի մը դգալ կաթ կրխառնես շաքարոտ ջուրին մէջ , ու ասանկ երթալով ջուրը կրբիչցընես , կաթը կըշատցընես անանկ որ , տասնըհինգ օրէն ետքը կաթը զուտ տալու է :

Կաթը՝ կարելի է նէ դգալով չխորրվի : Վասն զի այլ է խմելը և այլ է ծծելը : Օրծելու ատենը տղին բերանը թուք կուգայ ըսինք , որ կաթին հետ խառնրվելով ըստաւ մոքսը չիհոգնեցըներ : Աստի աղէկ կըլայ որ ստեանց տեղը բռնելու կերպ մը գործածվի : Վմանք այժի ստինքը կրկտրեն , կաթը անոր մէջը կըլեցընեն ու անանկ տղին բերանը կուտան : Բայց ստինքը շուտ մը կըհոտի , ու կաթն ալ մէջը շատ կենալով կը

Թթուի : Աստի ստինքը անգամ անգամ  
փոխելու է ու քանի անգամ մէջը կաթ դը-  
նելու ըլլաս , առաջ լուարու ես :

Փարիզ ատոր տեղը ապակի աման մը  
( շիշէ ) հնարած են ստեանց ձեւով , մէջը  
50 — 60 տիրէմէ աւելի կաթ չառներ . բե-  
րանը քանի մը փատէ շինած դործիքներ կան ,  
որոնք կաթին բոլորը մէկէն վաղելը կար-  
գիլեն , ծալրն ալ սունկէ ( մանթարէ ) ծիծ  
մը կայ :

Բայց ասոնցմէ դիւրին կերպը կայ .  
սրուակի ( շիշէի ) մը բերան բարակ չու-  
խայ կամ սպունգի ( սիւնկէրի ) կըտոր մը  
կըդընես ծիծի ձեւով , վրայէն բարակ կտաւ  
մը կըծածկես , ամէնը մէկ տեղ սրուակին  
բերնին կապելով տղին բերանը կուտաս որ  
ծծէ : Բայց պէտք է որ ամէն անգամին  
սպունգը ու սրուակը լուանաս , ու քանի  
մը անգամէն ետքը լաթն ու սպունգը փո-  
խես :

Պէտք է որ տղան ժուժով ուտէ , թէ  
որ ամէն իժիր կաթը կոկորդէն ՚ի վար լե-  
ցընես նէ , անտարակոյս եղիր որ տղան պի-  
տի հիւանդանայ :

Տուած կաթդ նայելու ես որ ամէն  
անգամ նոր ու առջի կթած կաթը ըլլայ :

Ինաւ տաքցընելու չէ :

Կաթը միշտ մի և նոյն կովինը ըլլարու է :  
Նայելու է որ անասունը նոր բերած

ըլլայ, տարիքը առած կամ հիւանդ չըլլայ, հասակը բարձր, ճիտը լայն ու ստինքները մեծ ըլլան :

Անասունին կերածին շատ խնամք տանելու է . երբեմն թունաւոր խոտեր կուտէ, իրեն չիդպչիր, բայց կաթը խմողին կը գպչի : Աս տարի Պուրսա կոլին մէկը մնի ջուր է խմեր ժանկոտ ամանի մէջէ, աչոր կաթը խմողներուն ամէնն ալ թունաւորեցան, բայց անասունին բան մըն ալ չեղաւ :

Կաթնատու անասունը փոր քշել տուող խոտեր ուտէնէ, տղան փորքըռուք կըլլայ . սոխ ուտէնէ, կաթը լեղի կըլլայ, գէշ կը հոտի, ու ան կաթը խմող տղան կըհիւանդանայ :

Ահա ասոնց համար նայելու է որ կաթ տուող անասունը՝ միայն շողգամ, կաղամբ ( ըհհանայ ) ու թարմ խոտ ուտէ :

Միշտ իր ակտոնին մէջ կենալու չէ . երբեմն արածելու համար զուարճալի ու բարեբեր մարմանդները ( չայրըրխները ) տանելու է :

Բայց այսչափով ալ չիլըմըննար . պէտք է որ տղան ալ գեղ տեղ մը գտնըլի, աղէկ օդ առնէ որ կերածը մարտելու գժարութիւն չիբաշէ . թէ որ գեղ չիկրնար երթալնէ, գէթ մէկը ամէն օր առնէ պտըտցընէ :

Առանց անասունի կաթի, միայն եփած



կերակուրով մեծցընելը բողբոլին բնու-  
թեան դէմ է . որուն վրայօք բան մըն ալ  
չիզուրցելը աւելի աղէկ կըլայ :

## ԳՒՈՒԽ Օ .

ՏՂԱՅ ՄԸ ԻՐ ՄՕՐԸ ԿԱԹԸ ՕՐԸ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ  
ՊԻՏԻ ԾԾԷ . ՀԵՏԸ ՈՒՐԻՇ ԲԱՆ ՈՒՏԷ՝ ՄԻ՝ ԿԱԹԷՆ  
Ե՛ՐԲ ԿՏՐԵԼՈՒ Է ՈՒ ԿԱԹԷՆ ԿՏՐԸՎԵԼԷՆ ԵՏՔԸ  
Ի՛ՆՉ ՊԻՏԻ ՈՒՏԷ :

## ՅՕԴՈՒԱԾ Ա .

Տղն օրը քանի՛ անգամ ու լրբ կաթ տալու է :

Տղան ի՛նչ հասակ կունենայ ունենայ ,  
միշտ իրեն համար աղէկ է որ ժուճով ու-  
տէ . առաջ յաճախ (սըխ) ու քանի որ մեծ-  
նայ նէ միջոցը երկնցընելով :

Տղաք առանկ կարգաւ ուտեն նէ , ա-  
ւելի աղէկ կըսընանին յառաջ կուգան . ու  
րովհետեւ առանց ժուճի ուտեն նէ , ՚ի  
հարկէ երբեմն անօթի պիտի մնան , կամ  
տակաւին կերածնին չմարսած նորէն կե-  
րակուր պիտի ուտեն , որն որ ստամոքսը  
կըհողնեցընէ : Այսպէս ուտելը մեր վրայ  
բնական բան մըն է . ինչո՞ւ տղոց վրայ ու-



բիշ կերպ ըլլայ , ասիկայ սովորութենէն կախալած բան մըն է . մէյմը տղան կարգաւ ուտել սորվի նէ , ալ ուտելու ժամին կանօթենայ , ու բիշ ատեն ուտելու ետեւէ չըլլար :

Հիմա նայինք քսանըջորս ժամու մէջ քա նի անգամ կաթ պիտի ուտէ տղան :

Եւջի ատենները յաճախ ծիծ կուտէ , բայց պէտք է որ բիշ մը ատեն անցնի որ կերածը մարտէ , հասցա անօթենայ : Ետ մեծի մասին նոր ծնած ատենները երկու ժամը մէյմը ծիծ տաս նէ կօզտէ . բայց կըլլայ որ տղան կամ տկար կամ շատսկեր է , ան ատենը ժամը մէյ մը կամ կէս ժամը մէյ մը կաթ տալ կըհարկաւորի : Ենաւ տղան անօթի ձգելու չէ , պզտիկ տղին անօթի կենայլը իր մահուանը անգամ սլատոճաւ կըրնայ ըլլալ , ասոր հակառակը կաթով խեղդել ալ պէտքը չէ , միայն ծծելու ատենը ձգելու է որ ուղածին չափ ուտէ : Եայց մէյ մը կշտանայ նէ , բիշ մը անցածին պէս նորէն կաթ տալու չէ , սպասելու է որ աւտենը գոյ : Ե վերայ այսր ամենայնի , ասիկայ անսրխալ կանոն մը չիկրնար ըլլալ , որովհետեւ տղան երբեմն կաթ ուտելէն ետքը չորս հինգ ժամ առանց արթննալու կըբընանայ , ան ատենն ալ կաթ տալու ժամանակը եկաւ ըսելով արթընցընել պէտք չէ , սպասելու է որ անօթենալով ինքնիրեն արթըննայ , Հոս մեր զուրցածը կարգաւ

տրվելուն վրայօք է . չէ՛նէ ժամացոյցը նա  
յել , ու անանկ կաթ տալ չէ՛նք խրատեր :

Քանի որ տղան մեծնայնէ , կաթ ու  
տեղուն միջոցներն ալ երկրննան սխտի , ա  
նանկ որ 6. և 7. ամսրվան ըլլայնէ իրեք ժա  
մը անգամ մը միայն տալու է ու քանի կա  
թը կտրելու ատենը մօտիկնայնէ , այնչափ  
ալ միջոցները երկրննալու են . ու կարելի  
էնէ պզտիկուց կարգի դնելու է որ աւելի  
ցորեկը կաթ ուտէ տղան քան թէ գիշե  
րը : Ասանկով քիչ մը ետքերը իրիկվընէ չոր  
սին հինգին մէկ անգամ կաթ կուտէ , մէյ  
մալ առտուն տասնին տասնըմէկին . անանկ  
որ երկուքին մէջ տեղը վեց ժամ մնայ . ու  
ան ատենվան մէջ տղան միայն քնանայ ,  
ուրիշ քանի ետեւէ չըլլայ : Այ կերպը մրտ  
նայնէ տղան , պզտիկուց գիշերը հանգըս  
տանալ ու ցորեկը ուտել ու պարտիլ կը  
սորվի :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Բ .

Կաթին հետ տղուն ուրիշ բան կերցնելու է մի , և  
ինչ կերցնելու է :

Մինչեւ վեց ամսրվան ըլլայնէ , տղան իր  
մօրը կաթէն ուրիշ բան ուտելու չէ : Ա կց  
ամսրվընէ առաջ ինչպէս որ վերն ալ ըսի ,

տողին տկար ստամոքսը ուրիշ ուտելիքի չէ տանիր, բայց երբեմն մօրը կաթը յորդ չըլ լալուն, պէտք կըլլայ որ կաթին պակասութիւնը ուրիշ կերակուրով լեցվի: Ան աւտենը տողին համար դրսէն ուտելիք միայն կովին կաթը ըլլայ պիտի, որ կարելի է նէ միշտ առջի բերնի կթվածը ու միանգամայն զուտը ըլլայ: Բայց միշտ առջի բերնի կրթված կաթ ձեռք անցընելը դժար ըլլալուն, մանաւանդ քաղքի մէջ, այն ժամանակը կաթին հետ քիչ մը խաշած մոլորչի (էպէմկեօմէճի) ջուր կրխստոնես անանկ կուտաս: Ասկէ ուրիշ ինչ կըլլայ ըլլայ, տողին համար դժուարամարս է, ատկէ արիւնը կրնայ բորբոքիլ, վրան գլուխը վեր տալ, ու շատ անգամ կերածը սուանց մարսելու քշել: Ամէն մարդ գիտէ պզտիկ տղոց փորքըռուքը որչափ վրտանգաւոր հիւանդութիւն եղածը:

Բայց մէյ մը առդա հանելու հասնինէ, ալ տղան միայն կաթով ձգելու չէ. բնութիւնն ալ առդա տալովը կիմացընէ որ կաթէն ուրիշ բան տալու է: Բայց առջի առդաները ծամելու առդաներ չեն, ծամելու առդաները ուշ կելլեն, ուստի կաթէն ուրիշ տրվելու բանը առաջ ծամելու բան չիպիտի ըլլայ, հապա կաթի նման կերակուրներ, ինչպէս Առօրին կամ փրիւնձի ալիւրով թեթեւ ապուր կամ Սահալ

Լէրի . Ետքը հետը քիչ մըն ալ կաթ խառ  
 նելու է , ու տղան Տ ամսըվան ըլլայ նէ ա  
 ղէկ եփուն հացը ջուրի մէջ խաշելէդ ետ  
 քը , ջուրը կրթափես ու հացին վրան կովի  
 կաթ կըլեցընես , առանց կաթը տաք ցընե  
 լու որ ասկէ մէկ կերպ ապուր մը կըլլայ , ան  
 կուտաս ուտելու : Ասոնց մէջէն աւելի սը  
 նընդարար կերակուրը կաթով խառնած  
 հացն է , ու աւելի դիւրամարսը Առու  
 թի ապուրն է : Տղին կազմութեանը ու վի  
 ճակին նայելով մէկէն ու մէկալէն շատ  
 կամ քիչ տալու է . բայց որը կուտաս տուր ,  
 սա դիտցիր որ շատ ու յաճախ տալու չես ,  
 օրը երեք անգամ տաս նէ բաւական է :  
 Տղան ալ կերածէն չիզգուելու ու ակորթա  
 կով ուտելու համար միշտ մի և նոյն բանը  
 տալու չէ , առտըվանց Առու-թի կուտաս ,  
 ցորեկը հաց , ու իրիկիան՝ փրինձի Առու  
 Լէրի : Տղան ինը ամսըվան ըլլայ նէ , կաթին  
 տեղը կակըսիս մսի ջուր տալ , նախ քիչ , ու  
 երթալով կըշատցընես : Շատ բժիշկներ կան  
 որ սա զուրցածիս դէմ են : Ամանք , տղան  
 մինչեւ երեք տարեկան չեղած , կաթէն ու  
 ըիշ բան տալ չեն ուզեր : Արեք տարիէն ետ  
 քըն ալ խտտեղէն կերակուրներով կուզեն  
 մեծցընել , ու հազիւ թէ՛ եօթը տարեկան  
 ըլլայ նէ կրթողուն որ մսի ջուրով կերակուր  
 ու միս ուտեն : Բայց մէյ մը բնութեանը  
 հարցունենք նայինք ան ի՞նչ կըսէ : Տղայ

մը ինչուք երեք տարի մօրը կաթով չիկրը-  
նար ապրիլ . տղան մէկ դիէն կրմեծնայ ,  
ու կսկրսի քիչով չիկշտանալ : Թէ որ բնու-  
թիւնը կուզէ որ ինչուք երեք տարի տղան  
կաթով միայն մեծնայ նէ , պէտք է որ տը-  
ղան քանի մեծնար նէ , կաթն ալ շատնար  
ու ուժովնար : Վայց ատանկ չըլար կոր :  
Կաթը ինչուք վեց ամիս կրշատնայ ու կու-  
ժովնայ , և վեց ամիսէն ետքը , այսինքն առ-  
ղաները ելլալ սկըսածին պէս , կսկրսի ջրո-  
տիլ ու քիչնալ : Արեմն բնութիւնը մեզի  
բացարձակ կրզուրցէ կոր որ , տղան միայն  
կաթով չիպիտի կրնայ մեծնալ , ու առղա  
տալովն ալ կիսնացունէ կոր տղին ինչ կերպ  
բան ուտելիքը : Աւտի կրնանք զուրցել  
շատ օրինաւոր հեղինակներու համաձայն  
որ , տղան ինչուք երեք տարի միմիայն կա-  
թով մեծցընել ուզելը՝ երեւակայութենէ  
ծնած դրութիւն մըն է : Վանք հիմա ինչուք  
եօթը տարի միայն խոտեղէն կերակուրով  
մեծցընել ուզելով մեղէն կերակուրն ար-  
գիլելուն : Թէ որ բնութիւնը պզտիկ տղին  
միս ուտել չիներէ պիտի նէ՝ ինչու սրածայր  
առղաներ կուտայ կոր , որոնք միս չուտող  
կենդանիներուն քով չիկայ : Վսիկ զատ նա-  
յինք փորձը ինչ կրզբուրցէ :

Տղայ մը միշտ խոտեղէն ուտէ նէ առաջ  
չիգար , տկար կըմընայ , ստամոքսը կըտըկա-  
բանայ , միշտ կըթըթուի , երբեմն երբեմն



փորքընուք կրլայ , վերջնապէս կըհիւանդա-  
նայ : թէ որ սա զուրցածիս շիհաւտացող կայ  
նէ , թող իր դաւկին վրայ ասոր փորձը ընէ :

Սեր ամէն մասերնիս գործածութեամբ  
կրղօրանայ , և ստամոքսն ալ առ կանոնէն  
դուրս չըլլալով , թէ որ պղտիկուց մսեղէն  
կերակուրներու շիտորվի նէ՝ ետքը ինչպէս  
անոնք մարսելու կարողութիւն ունենայ  
պիտի : Արդեօք միս ուտելը մեր բնութեա-  
նը դէմ է : թէ որ բնութեանը դէմ է նէ ,  
թող բոլորովին արգիլեն միս ուտելը : Բայց  
թէ որ բնութեանը դէմ չէ նէ , պէտք է ու  
պարտք է որ պղտիկուց միս ուտելու սոր-  
վինք , բայց կամաց կամաց , ու չէ թէ մէ-  
կէն ՚ի մէկ , մէկ բանէն մէկալ բանը ցաթ-  
կելով : Աւտի նախ մտի ջուր միայն պիտի  
տրվի հացով , ետքը մտի ջուրի ապուր , քիչ  
մըն ալ ետքը մտի ջուրի մէջ եփած թեթե-  
խտեղէն կերակուրներ , անանկ որ կաթէն  
կտրելու առենը դայ նէ , չոր միս ուտե-  
լու պատրաստութիւն տեսնելով ըլլայ :

Ասոր վրայ այսչափ երկար շիտորի զուր-  
ցրվեր , թէ որ այս կարծիքը մեր մէջն ալ  
չակրսէր տարածվելու :

1 Տայ երկիրները միս ուտել շատ շիտանիր , ուստի  
հոն տեղուանքը մսեղէն կերակուրները քիչ մը ուշ տրվե-  
նէ , վնաս մը չունի : Բայց մեր երկրին համար պէտք է  
որ տղան պղտիկուց մսեղէնի սորվեցընենք , անանկ որ միս-  
չե սասնըութը ամբողջն ըլլայնէ չոր միս կարենայ ուտել :



Ասանկ ալ չեն ուզեր ոմանք որ կաթ  
ուտող տղոց գինի տրվի : Անք չենք ըսեր  
որ ամէն տղոց գինի տանք , բայց հարկ է  
որ տկար բնութիւն ունեցող տղոց տաս  
տասուերկու ամսրվան ըլլալէն ետև՝ օրը  
քանի մը դգալ գինի ջուրի խառնած , մէջը  
հաց թաթխրվի ու տղուն տրվի :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Գ .

Տղայ մը էրբ , ու ինչպէս կաթէն կտրելու է :

Կաթէն կտրելու ատենին վրայօք թէ  
հին ու նոր աղգաց սովորութեանը նայինք ,  
թէ աս բանիս վրայ գրող հեղինակները  
կարդանք , զանազան կարծիք կրգրտնանք :

Իսահակ կաթէն կտրելու ատենը երկու  
տարեկան էր : Ակարբայեցւոց եօթներորդ  
եղըայրը մինչեւ երեք տարի կաթ կերաւ :  
Արաբիս երկու տարիէն առաջ տղաքը կա  
թէն չեն կրտրեր : Ուրիշ տեղեր կան որ ,  
մինչեւ երեք կամ չորս տարի կաթ կուտան :  
Ասոր հակառակը՝ տեղ ալ կայ որ , տարիէ  
մը ետքը կամ աւելի առաջ կաթէն կրկրտ  
րեն տղաքը :

Հիմայ՝ թէ որ հեղինակներուն զուր  
ցածին նայինք նէ , միւսնոյն զանազանու  
թիւնը կրգրտնանք :

Սմանք կուզեն որ բոլոր առաջները չե-  
լած այսինքն երեք տարու չեղած , կաթէն  
չիկըտըրլի տղան : Անն որ , երկու տարի  
միայն կաթ տալ կուզեն : Անն ալ որ , տա-  
րիէ մը , ութը ամիսէ ետքը կաթէն կըտ-  
րել կըխըրատեն . բայց մենք նայինք որ  
կ'ըր կտրելը աղէկ կըլլայ :

Տղայ մը երբոր շատ կանուխ կաթէն  
կտրես նէ , իր ստամոքսը դեռ տկար ըլլա-  
լուն , ուրիշ բան ուտելով չիկըրնար յառաջ  
գալ կըհիւանդանայ կամ կըմեռնի ալ :

Ասոր հակառակը թէ որ տարիներով  
կաթ տաս նէ , ան ատենը կամ կաթէն ու-  
րիշ բան ուտելու է որ կշտանայ , կամ թէ  
որ մինակ կաթը ուտէ նէ , պէտք է որ շատ  
ու յաճախ ուտէ : Տղայ մը թէ որ կաթէն  
ուրիշ բան կուտէ նէ , քանի որ մեծնայ ,  
կընայիս որ աւելի դրսէն կերած բաներուն  
կախորթի քան թէ կաթին , և գրեթէ ատե-  
նէ մը ետքը կաթ ուտելը իրեն համար խա-  
ղալիկ մը կըլլայ : Բայց թէ որ տարիներով  
մինակ իր մօրը կաթը ուտէ նէ , կըշտանա-  
լու ու մեծնալու համար , այնչափ կուտէ  
որ , մայրը կաթ տալու կարողութիւն չու-  
նենար , ու որչափ կաթին մէջ անունդ ալ  
գտնայ տղան , ուրիշ բան չուտելով տկար  
կըմընայ , իր ստամոքսը ուրիշ բաներ դժար  
կըմարտէ , ու ինքն ալ կաթէն կտրիլ չուզէր :  
Ուտի թէ տղուն ու թէ մօրը աղէկու-

Թեանը համար , պէտք է որ ո՛չ շատ կանուխ և ո՛չ ալ շատ ուշ կաթէն կտրես :

Աստեղը կուզեմ երկու բան յիշեցընել : Տղայ մը շատ երկար ատեն ծիծ ուտէ նէ , քիչ կաթ ուտողներէն ուժով լուսով չիկրընար ըլլալ , ու ասոր ներհակ տկար ու թուլամորթ կըլլայ : Արկրորդ՝ ըստ մեծի մասին կանայք ծիծ տուած ատեննին շէն յղանար , ուստի թէ որ ամէն զաւկըններուն ասանկ տարիներով կաթ տան նէ , ազգին ծնունդը կը քիչնայ :

Աստի տղան տասներու թը ամսըվան ըլլայ նէ կաթէն կընաս կըտրել առանց մնասի , թէ որ հիւանդութիւն կամ տկարութիւն մը չունի նէ :

Արթէն կտրելու ատենը թէ՛ ձմեռ ըլլայ թէ՛ ամառ միւսնոյն է , միայն սա պէտք է որ տղան կաթէն ուրիշ բան ուտելու սորված ըլլայ : Աստի ինչպէս որ երկրորդ յօդուածին մէջ ըսինք , տղին պզտիկուց կամաց կամաց կաթէն ուրիշ բան տալու է , ու գրեթէ այն ատենէն կաթէն կտրելու պատրաստութիւն տեսնալու է , տղան քանի որ մեծնայ մէկ դիէն կաթը քիչցընելով ու դըրսէն ուտելու կերակուրները շատցընելով՝ անանկ որ , կաթէն կտրելու ատենը գայ նէ , տղան օրը երկու անգամ միայն կաթ ուտելու սորված ըլլայ , ասանկով առանց դժարութեան կաթէն կըրնաս կտրել , ու

տղան ալ աս փոփոխութիւնը չիմանար :

Մայր մը ինք կաթ տայ նէ ասոնք կրնէ , բայց թէ որ օտար կին մը կաթնատու է նէ , շատ անգամ չուզեր ընել , որովհետեւ կաթնատուները գիտեն որ քանի որ կաթը քիչ տրվի , այնչափ ալ կը քիչնայ , ու ասոր ներհակը քանի որ շատ տրվի , այնչափ ալ շատ կուգայ : Աստի վարձով բռնելած կաթնատուն չուզեր որ կաթ ուտող տղան կաթէն կտրելէլու ատենը իր կաթն ալ անոր հետ կըտրի : Ասն զի չիկրտրելովը , անկէ ելլայ նէ ուրիշ տեղ կրնայ երթալ : Ահա ասոր համար , մայրը նայելու է որ տղին կաթէն ուրիշ բան տրվի : Չէ նէ ետքը շատ դժարութիւններ կը քաշվի , տղան կաթէն ուրիշ բանի տրված չըլլալով կուլայ , կըսուայ . ծիծէն ուրիշ ինչ տաս նէ չուզեր , ու ոչ ինք կըբընանայ , և ոչ քովն եղողը կըբընացրնէ , ու ասանկով կտրելի է ալ որ հիւանդանայ :

Աստի տղան ինչ կերպով մեծցած կըլլայ թող ըլլայ՝ մէյ մը կաթէն կտրելու ժամանակը գայ նէ , կաթնատուն իրմէն կըդատես մէկէն կըկտրես կաթէն , ոչ պօռալուն կրնայիս , ոչ չիբընանալուն : Արովհետեւ թէ որ պօռալուն ականջ դնելով նորէն ծիծը բերնին տաս նէ , ալ գլուխ չես կրնար ելար :

Արբեմն տղան քանի որ իր մայրը կամ կաթ տուող կինը տեսնայ նէ , խեղճ կրնէ ,

Տիժին կրպրլլի , ան ատենը խորամանկու-  
թիւն մը կրբանեցրնես որ շատ անգամ կը-  
յաջողի . այսինքն՝ Տիժին վրայ լեղի բան մը  
կրբրսես , որուն համը՝ տղան առածին պէս ,  
ետ կրբաշլի : Չիբաշլի ու լայ ալ նէ , ա-  
կանջ դնելու չէ . ան ինքնիրեն ձայնը կրկտրէ :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Տ Դ .

Կաթէն կտրելն ետքը տղն ինչ կերցնելու է :

Թէ որ տղաք պզտիկուց մեր զուրցածին  
պէս մեծցերեն նէ , ՚ի հարկէ ստամոքսնին  
միսը մարսելու ուժ ստացեր է : Ուստի կա-  
թէն կտրլլելէն ետքը միա տալու է , ու կա-  
մաց կամաց մեր կերած կերակուրներուն  
սորվեցրնելու է : Միայն նայելու է որ Սալ-  
շալը կերակուրներ , թի-թի-ն եղած կամ  
աղած ձուկ , Պասալը՝ , Սոճո-թի ու ուրիշ  
ասանկ դժուարամարս բաներ չիտրլլի : Եր-  
նութիւնն ալ կազդէ ասիկայ , որովհետեւ  
ասանկ կերակուրները տղաք չեն փնտրուէր ,  
չեն սիրեր : Եսանկ ալ խմորեղէն ու շաքա-  
րով եփած կերակուրներ չիտրլլի . բնաւ օ-  
ղի ու ասոր նման ոգիներ չիխրմեն : Կերա-  
կուրնին միշտ պարզ ու սնուցիչ ըլլայ , յա-  
ճախ ու կշտացածնուն չափ ուտեն : Պզտիկ  
տղոց ուտելիքին չափը բնութիւնը կազդէ :

Այբբոր ախորժինն է , ան ատենն ուտեն պիտի , բայց ժուժով . ուստի ոչ ամէն իժիր ուտելու բան տալու է , ու կերակուրով խեղդելու է տղան , և ոչ վախնալով անօթի սաՀելու է : Պղտիկ տղաք պէտք է որ մեծնան , ուրեմն պէտք է որ ուտեն , սնանին : Անոնք մեղի պէս անօթութեան չեն կրնար դիմանալ , ու պղտիկուց դիմանալ չեն կրնար սորվիլ : Ասոր վրայ քիչ մը երկար կրգուրցեմ , որովհետեւ շատերը կան որ տղաքը քիչով մեծցընել կուզեն : Կուզեն որ , պղտիկուց շատակեր չըլան , ու ինքրզինքնին զրկել սորվին : Ատիկայ անկարելի ու միանգամայն վնասակար է պղտիկ տղոց համար : Ամէն բան պէտք է որ ատենին ըլլայ , ժուժկալութիւնը ու զրկւիլը թող ետքը սորվին : Չգէ հիմա որ մեծնան զօրանան : Մեծցած ատեննին անօթութեան դիմանալու համար , պէտք է որ պղտիկուց զօրացած ըլլան : Բայց անոնք հիմակընէ նեղի խօթեսնէ , տկար ու փափուկ կրմընան , ու ան ժամանակը չէ թէ միայն անօթութեան դիմանալու զօրութիւն չեն ունենար , հապա բռլոր կեանքերնուն մէջ տկար ու հիւանդօտ կրըլան : Այբբեմն ալ տտանկ զրկմամբ մեծցընեմ ըսած տեղդ , կըհալին կրմաչին ու կըմեռնին :

Հիմա ան զուրցենք որ , օրը քանի անգամ կերակուր տալու է , ու ինչ կերցը-



նելու է :

Ասիա՝ առարկանց ելածնուն պէս քիչ մը հացով կաթ, կամ ասոր նման դիւրամարս կերակուր մը տալու է, ինչպէս են փրինձի կամ Շէհրիէյի ապուր : Յորեկին մըսի ջուրէ ապուր մը, ու ջուրի մէջ եփած ձուկ, կամ հաւի թել մը կամ կտոր մը միս : Երիկվան հացէն առաջ անոնք մէյմըն ալ կանօթենան, ան ատենը կտոր մը հաց կուտաս անանկ կուտեն, ու ասանկով լոկ հաց ուտել ալ կըսորվին : Երիկվան կերակուրին, նորէն մըսի ջուրէ ապուր, կտոր մը միս կամ ջուրի մէջ խաշած հաւկիթ, հետը քիչ մըն ալ խտտեղէն կերակուր կուտաս, ինչպէս են՝ Պաֆա, Փաստուլա, Խասպի, և այլն : Չի հասկըցվի որ աս կերակուրներէն մեզի չափ պիտի ուտեն պղտիկ տղաք : Երէնց տանելուն չափ միայն ու միշտ ժուժով տալու է, ու կերակուրին ատենը չեկած այսինքն երկու կերակուրին միջոցը ուրիշ բան տալու չէ :

Կերակուրները աղէկ եփած ըլլալու են, ու ոչ շատ աղի, և ոչ ալ անլի պիտի ըլլան : Ինաւ հոտած ու աւրած կերակուրներ չխորրվի :

Ինչ որ ուտեն նայելու է որ աղէկ մը չիծամած չիկրլլեն, որովհետեւ ծամելը մարսելուն սկզբնաւորութիւնն է :

Պղտիկ տղաք թէ որ բնութեամբ տկար

են նէ գինի կրնան խմել . ինչպէս որ առաջ  
ալ բախած է , բայց քիչ . չէ նէ ջրէն ուրիշ  
բան չխախտի խմեն : ( ) շարակ ( չէրպէթ ) ,  
| Իճնալու և ատանկ ըմպելիքներ չխախտի  
գործածեն :

Պղտիկ տղաք պտուղը շատ կըսիրեն .  
ատկէ զըկըլելու չեն : Բայց նայելու է որ  
քիչ ուտեն ու հասունները զատեն . գեռ  
կանանչ պտուղ բնաւ չուտեն :

Բնաւ թթու ու համեմային կերակուր  
ներ՝ նաև սրանիր կամ մածուն չխախտի  
ուտեն :

Ահա այս կերպիւ պիտի մեծնան տղաք  
ու երբոր երէք տարեկան ըլլան նէ , այն  
ատենէն սկսելու է մեր բոլոր կերած ու  
տելիքին ստրկեցընելու :

Արէք տարիէն առաջ տղաք իրենց ծնո  
ղացը հետ հաց չխախտի ուտեն . բնաւ ա  
նոնց սպասելու չեն . իրենց կերակուրին  
ժամանակը եկածին պէս ինչ որ պիտի ու  
տեն նէ մինակ պիտի ուտեն ու ելլան :

ԳԼՈՒԽ Լ .

Տըսն առ զայ հանելու ատենի զիպուսածները 1 :

Տղան նոր ծնած ատենը ոսկրէ առ զայի տեղ մտէ առ զաներ ունի . սա առ զաները շատ ջանցնիր կրկորնչին . ու 4—7 կամ 10 ամսըլան ըլլայ նէ , վարի կղակին առ ջեւի առ զաներուն մէջ տեղի երկու առ զաները

1 Դեռ չիծընած ատի մը կզակը ճղքեա նայիս նէ , կըտեսնաս որ , առ զաներուն բոյնին մէջ տեղը մաշկ մը կայ , ու սա մաշկին մէջ հինգ հատ խորը կան . առ ջեւի երկու խորը՝ քովնտի ու աստակ են , որ առ ջեւի առ զու ներուն տեղն են : Երրորդ խորը առ ջեւի ներեն քիչ մը նեղ ու վարեն ՚ի վեր ու զեպ ՚ի ետին ծռած է , անանկ որ ան առ ջեւի խորչերուն ու իրեն հետեւեալ չորրորդ խորչին մէջ սխմբածի պէս է : Այս երրորդ խորը սրտա ծայր առ զային տեղն է : Չորրորդ խորը անանցմէ լայն ու կրոր է , սա խորչէն ալ առ ջի ջաղջի առ զան կեւայ : Հինգերորդ խորը չորրորդին նման ու ետեւօք է . սա ալ երկրորդ ջաղջի առ զան հանէ պիտի :

Անն մեկ խորչին մէջ առ զային սերմը կայ . սա սերմ մը մեկ մաշկ մըն է բոյնին մաշկին կզած , ու մէջը խաղը զի կուտի մեծութեամբ ու անոր ձեւովը մեկ ծուծ մը կայ : Աս ծուծը ջիղեր ու անօթներ ունի : Ծուծին ու մաշկին մէջ տեղը հիւթ մը կայ , որ նախ զեղինի վայ կտրմովէկ է , ետքը բարբաղին զեղին կըգառնայ : Աս հիւթը չէ թէ միայն մաշկէն կըլազէ , հասրա ծուծէն ալ . բայց ծուծին սուսած հիւթը առ զային ոսկորը կըլլայ ու մաշկին տըլածը առ զային կեղեւի պէս նիւթը ( սրբը ) կըլլայ : Մաշկը սա հիւթը գուրս տալէն ետքը կըչորնայ ,

կելլան <sup>1</sup> , քիչ մը ետքը վերի կղակին երկու  
առջևւի առջի առ ղաները կելլան : Աւթն  
ամիսէն ինչուք տասնըվեց ամիսը վարի կը-  
ղակի մնացած երկու առջևւի առ ղաները  
կելլան , քիչ մըն ալ ետքը վերինները : Տաս-  
նըհինգ ամիսէ մինչեւ քսանըորս ամիս ,  
առջի ջաղջի առ ղաները կելլան , տասնըու-

առ ղային արմատը ետքը կըբուանի . ահա ասոր համար  
կեղեւ ( սրբ ) չունի . միայն առ ղային գլուխը կեղեւ ունի :

Տղան ծնելէն ետքը աս ծուծը կսկըտի մեծնալ , մեկ  
կողմէն արմատը կըբուանի ու գեպ 'ի վար կերթայ , մեկալ  
կողմէն ալ առ ղային գլուխը գեպ 'ի վեր կերթայ , միան-  
գամայն կղակին ոսկորն ալ մեծնալովք մինչեւ առ ղաներուն  
արմատին կըհասնի անանկ որ , ատենէ մը ետքը առ ղային  
արմատը իր բոյնին տակը հատած է , ու հան կըկրտթընի  
( տայանմիշ կըլլայ ) . ալ ան ատենէն ետքը առ ղային ար-  
մատը գեպ 'ի վար չիկըբնար մեծնալ , կսկըտի առ ղային գը-  
լուխը գեպ 'ի վեր հըբւ . ասիկայ կուգայ լինտերուն կը-  
հասնի , լինտերը կըբորբորին , կըպատախն , առ ղան ալ  
գուրս կըլլայ լինտերուն մտրթը վեր վերջընեւով . աս մտր-  
թը կուգայ առ ղային պարանոցը կըպատէ ( խտրլտմիշ կընէ )  
կըտրիսէ :

1 Երկրորդ առջևւի առ ղաները առջի առջևւի առ-  
ղաներուն հետ չեն ելլար , որովհետեւ երկրորդ առջի առ-  
ղաները քիչ մը վարօք են . թէպէտ դրանք երկուքին եր-  
կարտթիւնն ալ մեկ կերեւայ . բայց թէ որ կղակը ճեղ-  
քեա արմատին տեղը նայիս նէ , կըտեսնաս որ սանգուգթի  
պէս է . առջևւի առջի առ ղաներուն արմատը քիչ մը  
վեր . երկրորդ առջևւի առ ղաները քիչ մը վար են : Ուս-  
տի քիչ մը ետքը կելլան որ առջի առջևւի առ ղաներուն  
գան հասնին :

Թը ամիսէն մինչև երեսուն ամիս սրածայր առ զաները կելլան : Բայց երբեմն սրածայր առ զաները ջաղջի առ զաներուն հետ , երբեմն ալ անոնցմէ առաջ կելլեն :

Վերջապէս տղան քսանըութն ամիսէն ինչուք քառսուն ամիսը երկրորդ ջաղջի առ զաները կըհանէ . ասանկով ինալու առ զաներուն ամէնն ալ հանած կըլլայ . և այս առ զաներուս կըսվի՝ կաթի առ զայ :

Առ զայ բուսնելու ատենը տղին բերանը կակրսի կեռալ , խտխտալ : Ասոր համար մտտը կամ ուրիշ բան մը գտնայ նէ քովը՝ բերանը կըտանի , երբեմն ալ իր դայեակին մտտը կըխածնէ : Ասանկով քիչ մը իր զգալ ցած ցաւը կըչափաւորէ : Արբեմն առանց

1 Առ զաները միշտ ասանկ չելլար . երբեմն շատ կանուխ կելլան . երբեմն ալ ծնած ատենը առ զայով կըծրնի . ինչպէս Միրապոն ու չորեքտասաներորդ Լուսովիկոսը : Սուլթան Սելիմի համար ալ կըսեն որ առ զայով ծներէ . բայց ասանկ կանուխ բուսնի նէ , շուտ ալ կիցնան : Առ զայով ծնանիլը մէկ աղէկ բան մը չէ տղին , որովհետեւ երբեմն ծծելու արգելք կըլլայ . ան ատենը առանց երկրայելու տղին առ զաները քաշելու հանելու է :

Ասոր հակառակը երբեմն առանց առ զայի կըմընան : Պօռէլի վաթսուն տարեկան կին մըն է տեսեր , որուն բնառ առ զս չէ բուսեր :

Կամ թէ առ զաները կզակին սօփրեալ տեղը չիբուսնիր , ուրիշ մէկ տեղը կըբուսնի . ինչպէս որ Ալպինտըռու Սապաթիէն տեսեր են քանի մը անգամ : Կամ երբեմն առ զաները մէկըմէկու կպած են անշարժ :

նեղութեան և առանց տենդի առդաները կերան , բայց ըստ մեծի մասին առանկ չըլար :

Տղան առդայ հանելու վրայ ըլլայ նէ , կսկրտի տրամիլ , բերանը ջրոտիլ , երիլ , կեռալ , լինտերը կուռենան , գիշերը չիքընա նար , գլուխը վեր չիկընար վերցընել , կուրայ , կըպօռայ , մանաւանդ խմելու տարբան մը տատ նէ : Ասկրտի փսխել , ծիծէն կտրիլ , փորը քըշել , գլուխը կըցաւի , կըհազայ , կամ աչքիւնները կըբորբոքին կամ շիլ ( շտշի ) կըլլան : ( Ասիկայ կըպատահի սըրածայր առդաներուն ելած ատենը : )

Արբեմն ջղերու թօթվովիլ ( սըազմօ ) կամ թեթեւ շէշիլ կուգայ վրան , կզակ ները կսկրտին մեկզմեկու զարնել , երեսին ջիլերը խաղալ , ձեռքիւնները տոքիւնները դողալ , կամ աչքը բայ , երեսը գժգոյն , շնչառութիւնը և երակին նետելը կըկայնին , մարմնոյն տաքութիւնը կըքիչնայ ինքն ալ կըմեռնի : Միայն առանկ սարսափելի կերպերով չիմեռնիր , երբեմն փորքըուքի հանգիպեր կամ հազ եղեր է նէ չիկըտրիր , տըղան կըհալի , ու անանկ կըմեռնի :

Տղին առդաները ելած ատենը լինտերը միայն պիտի ցաւէին . ինչու համար տղին ուրիշ մասունքներն ալ կըբորբոքին . ինչու աչքը , գլուխը , ստամոքսը , աղիքը , լեարդը ու թոքերը կըհիւանդանան : Մենք շենք



կրնար բսել որ , այս ծանր հիւանդութիւն  
ներուն պատճառը , տղին առ զան դժար  
դուրս ելլաին է :

Ենութիւնը տղին առ զաները դուրս  
հանելու ատենը՝ տղին միանգամայն կարող  
զութիւն ալ պիտի տայ այն առ զաները  
գործածելու , առ զաները չեղած տղան մի  
այն կաթ կուտէ , առ զաները ելլալէն ետքը  
ուրիշ բաներ ալ պիտի ուտէ : Արեմն  
պէտք է որ իր գործիքները , ստաներսր , ա  
ղիքը ու մարմնայն ուրիշ մասանքները ան  
կերածը մարտելու , անոնց ներդործութեա  
նը գիմանալու գորութիւն ստանայ : Ասիկայ  
մէկ փոփոխութիւն մըն է ( Ուէլճիւսիօն ) , ո  
րով տղին բոլոր գործիքները ուրիշ ձեւի  
կրմբունան , ընտոր որ տասներկու կամ տաս  
նըչորս տարին հասնի նէ տղան կրփոխալի ,  
ստանկ ալ առ զայ հանած ատենը կրփոխալի :  
Ահա աս փոփոխութիւնն է այն սարսափելի  
հիւանդութեանց պատճառը , չէ թէ լին  
տերուն ցաւիլն ու ուռնալը :

Հիմա նայինք ինչ զգուշութիւններ  
կան ընելու :

Թէ որ առ զան դիւրին կերայ կոր նէ ,  
չատ ընելիք չիկայ , միայն իր կաթնատուն վը  
նասակար կերակուրներէ կրժուժկալէ ( բէր  
հիզ կրբրունէ ) մինչեւ որ առ զաները ելլան :

Ալ թէ որ տղան բերանը բան տանե  
լու չափ է նէ , մոլտլի ( էպէմկեօմէճիփ )

խաշած արմատը ձեռքը կուտաս , կրտանի բերանը կրխածնէ , կրկրծէ , ու ասով լին տերուն ցաւը քիչ մը կրթեթեւնայ , առ զաներն ալ շուտ դուրս կելլան :

Բայց թէ որ տղան եվելօք հիւանդ է նէ , առաջ պէտք է որ կաթնատուն ամէն կերակուրէ ժուժկալէ . միայն մտի ջուրի ապուր խըմէ , բնաւ գինի օղի չխիըմէ , ու դժուարամարս կերակուրներէն բոլորովին հեռու կենայ : Աթթէն ուրիշ բան չիտայ տղին , ու կարելի է նէ կաթն ալ յաճախ չիտայ :

Այն միջոցին ընելիք դեղերը չեմ զուր ցեր , որովհետեւ առանց բժիշկի ինչ որ ըլլայ անկատար է :

## Գ Լ ՈՒ Խ Բ :

Օրանի տղուն հագուտար :

Արկրորդ գլուխին մէջ զուրցեցինք նոր ծնած տղան փաթտոցներու մէջ պլլելէն առաջ եկած վնասները : Հոն հասկրցուցինք որ , տղայ մը ծնածին պէս օրանը ( պէշիկը ) պառկեցրնելու է , ու պառկելու ատենը միայն շապիկ մը , անթեւ կարճ հագուտտ մը , ու գլուխն ալ թեթեւ գլխանոց մը միայն դնելու է :

Հիմա նայինք տղան իր օրանէն հանես  
 նէ ինչ հագցընելու ես : Տղոց լաթ հագ-  
 ցընելուն միտքը անոնց չիմրտին ըլլալուն ,  
 զարդարուն հագուստներուն ձեւը չիպիտի  
 զուրցեմ , միայն ինչ հագուստ պէտք է տը-  
 դին չիմրսելուն համար նէ , այն միայն պիտի  
 հասկըցունեմ : Տղին տակը քանի մը ծալք  
 չոր կտաւ կըդընես որ տղան մեծ կամ պըղ-  
 տիկ կարիքը հոն ընէ ու ուրիշ լաթերը չի-  
 մընտըռէ <sup>1</sup> : թեթեւ գօտիով մը աս դրած  
 կտաւըդ տղին մէջքին վրայ կըբռնեցընես  
 և իր բոլոր լաթերուն վրայէն մէկ մեծ ու  
 տղին հասակէն շատ երկան շրջահանդերձ  
 ( ֆիստան ) մը կանցընես , ասով տղան ցըր-  
 տէն աղէկ կըպահպանի : Տղին պզտիկու-  
 թեան ատենը ո՛չ վարտիք , ո՛չ գուլպայ , և  
 ո՛չ ալ ուրիշ ոտքի աման հագցընելու է :

Տղան քիչ մը մեծնայ նէ , անկողինը  
 պառկելու համար իր սովորութիւն ըրած  
 անթեւ ու կարճ հագուստն ալ ( եէլէքն  
 ալ ) կըհանես , ու պորտը կտրըվելէն ետ-  
 քը մէջքի գօտին ալ կըվերցընես , միայն  
 շապիկով մը կըպառկեցընես :

<sup>1</sup> Տաճկները տղան իր հագած լաթերը չիթըռչէ ըսե-  
 լով , այնչափ լաթի կտորներ կըբերեն տղին երկու ոտքին  
 մէջ տեղը կըկապեն որ խեղճ տղին ոտքները զատված  
 կըմընան . ու տղան ասանկ ստրվելով ետքը ոտքի ել-  
 լայ նէ ծուռ կըբալէ ու անձեւ կըլլայ :

Վանի որ մազերը բուսնին , կամաց կս  
մաց գլխանոցը կրթեթեւցընես , քիչ մը  
ետքը միայն ցուրտ օրերը գլխանոց կըդը  
նես , ուրիշ ատեն գլուխը բաց կըպըտըտ  
ցընես : Այսիկայ քանի մը աղէկութիւն ունի ,  
մէյ մը որ , տղան շատ չիբրտընիր , մէյմալ  
գլուխը պաղին գիմանալ կըսորվի , ու երբ  
որ մեծնայ նէ , գլուխը բանալովը շուտ մը  
հարբուխ ( նէվազիլ ) չըլար :

Տղան երբ որ ոտք ելլայ նէ , միայն լայն  
շտպիկ մը , կարճ ու անթեւ հագուստ մը  
և վարտիք մը , ու վրայէն Աճճ Իճճ Իճճ  
նման հանդերձ մը կըհագցընես , ու վար  
տիքը չիյնալու համար թուլ ու թեթեւ  
գօտի մը կըկապես ամէնուն վրայէն : Պըղ  
տիկ տղին թէ՛ աղջիկ ըլլայ թէ՛ մանչ միօրի  
նակ հագվեցընելը ամէն քաղաքի սովորու  
թիւն է : Տաք ատեն է նէ , թող բոպիկ  
պտըտի , բայց եղանակը ձմեռ է նէ , միայն  
քթանէ կամ բամպակէ գուլպայ մը ( չօրապ  
մը ) ու վրայէն կակուղ ոտքի աման մը կը  
հագցընես , ուրիշ բան պէտքը չէ : Ատքի  
ամանը բնաւ ոտքը չիպիտի սըխմէ : Ախմե  
լով ոտքը չիպըզտիկնար , միայն ձեւէն կեւ  
լայ : Ամանապէս ոտքի ամանը կըուսկով  
( Ֆրէնկ ճիզմէսի պէս էօքչէի ) չիպիտի ըլ  
լայ , որովհետեւ տղան մատվընեբուն վրայ  
քալելու կըհարկադրի ու կիյնայ , և ասկէ  
ալ գէշ թէ՛ կըուսկին ( էօքչէին ) և թէ՛ մատ

վնեւուն վրայ կոշտեր ( նասրնեւ ) կելլայ , որ շատ ցաւ տալով , քալելուն ալ մեծ արգելք կըլլայ :

Տղան քանի որ մեծնայ նէ Մճէճ կէճ լէկէն թեւերը քիչիկ քիչիկ կըկարծըցնեն , նմանապէս կուրծքը կամաց կամաց կըբա նաս , անանկ որ ասենէ մը ետքը թեւերը ու կուրծքը բոլորովին բացը մնան : Ասիկայ սա աղէկութիւնը ունի որ , աղին կուրծքը ու թեւերը կամաց կամաց ցրտին դիմանալ կըտորովին ու աղան ալ շուտով մը սրաղ չառ ներ : Այլ մարդ մը որչափ շատ լաթ ալ հագնի , կրնայ մըսիլ . լաւ կըլլայ որ սղտի կուց չիմըսիլ ու սրաղին դիմանալ տորի :

Տղան հագվեցնելու ատենըդ լաթերը թաց չիպիտի ըլլան , ասոր հակառակը կը բակին բըռնելով տաքընելն ալ աղին վնաս կրնայ գործել :

Տղին հագած լաթերը պէտք է որ գործածած , այսինքն քիչ մը հինցած ու կոխած ( իւթիւլէնմիշ եղած ) ըլլայ :

Տղին բնաւ բուրդէ կամ Փանէլայէ լաթեր հագցընելու չէ : Բուրդը նախ շատ քրտնեցնելով տկարութիւն կըբերէ , երկըրորդ՝ աղան տաքի մէջ մեծնալովը , ցուրտին չիդիմանար , ու մէկ կողմը բացվածին պէս կըսղաղի ու կըհիւանդանայ :

Նոր ծնած տղուն քուն քնանալը :

Նորածին տղայ մը ուրիշ բան չընէր , բայց միայն ծիծ ուտել ու քնանալ : Այն ատենները միայն աճելու և մեծնալու ետեւէ է բնութիւնը : Աճիլը սնունդ ստանելով ու հանգստութեամբ կրլայ , ուստի տղան կուտէ ու կը բնանայ : Բայց պզտիկ տղոց քունը երկարատեւ չէ , քիչ մը քնանալէն ետքը կարթննան : Պատճառը նախ սա է որ , տղին ստամոքսը շատ կաթ չի կրլը նար մարսել , ուստի քիչ ուտելով կրկշտանայ ու քունի կրմտնայ , բայց շատ չանցնիր անօթե՛նալովը կարթննայ :

Ասկէ չիկարծրլի որ տղաք քանի որ արթըննան նէ միայն ծիծ ուտելու համար է . վասն զի՝ երբեմն ալ կրլայ որ , կը բրտընին կամ տեղերնին կրնեն , կամ մէկդինին կը ցաւի , և անհանգիստ ըլլալով կարթննան : Աւրեմն քանի որ տղան արթննայ նէ , միայն ծիծ տալու չէ . պէտք է նայիս ալ որ , ուրիշ բանի համար արթնցած չըլլայ :

Տղան քանի որ մեծնայ նէ , քունն ալ կը քիչնայ , որովհետեւ քանի որ ամէն մէկ դործարանները երեւան ելլան ու զօրանալու ըլլան նէ , պէտք է որ ստեն ունենայ



զանոնք փորձելու և 'ի գործ դնելու : Վա նի որ ականջը լսելու ու աչքը տեսնելու ու ձեռքովըները շոշափելու կարողութիւն ստանան նէ , իր քունը կրքիցընէ ու իր ժամանակին մէկ մասը իր գործարանները գործածելու կըհատցընէ :

Ուրեմն պէտք է որ կամաց կամաց քնանալը քիցընեն . բայց այն կերպիւ որ իրենց ալ մնաս մը չխաւտահի : Այս ատենները ցորեկն ալ կըքնանան . բայց կամաց կամաց ցորեկիան քուներնին քիցընելով , միայն գիշերը քնանալ սորվեցընելու է . անանկ որ , կաթէն կտրուելու ատենը ցորեկիան քունէն ալ կտրուիւմ ըլլան : Տղաք միայն գիշերները քնանան նէ , նախ քուներնին աւելի խորունկ ու զօրացուցիչ կըլլայ : Այլըստիկ կաթէն կտրուելու ժամանակը տղաք առ հասարակ ոտք ելած կրնան ըլլալ . ուստի ցորեկը քնանալով անցընելու տեղը , պէտք է որ դուրս ելան , պտըտին , արեւ տեսնան ու օդ առնեն :

Վուներնուն չափին վրայօք զուրցելը դիւրին չէ . որովհետեւ ամէնուն քունը մէկ կերպ չիկրնար ըլլալ : Տղաք կան որ քիչ կըքնանան , կան որ շատ , և երկուքնին ալ աղէկ յառաջ կուգան : Աս միայն գիտնալու է որ , տղաք միշտ մեծ մարդէ մը աւելի պիտի քնանան : Աորածին տղայ մը գրեթէ միշտ քնանալու է : Վիչ մը ետքը՝

օրը քանի մը ժամ արթուն կենայ : Այն  
ու կէս , կամ երկու տարեկան ըլլայ նէ ,  
իրաւ ցորեկը չիպիտի քնանայ , բայց բոլոր  
գիշերը պէտք է որ հանգստանայ : Աստի  
տղին գէշութիւնն ըրած կըլլաս , թէ որ  
առնես իրիկունները քեզի հետ նըստեցը  
նես , կամ հետդ ուրիշ տուն ասնիս : Պէտք  
է որ մէկ ու կէս երկու տարեկան տղան ա  
րեւը մարը մտածին պէս , քուն մտնայ .  
և երկու տարու ու կէս ու երեք տա  
րու ըլլայ նէ , արեւը մարը մտնալէն ժամ  
մը , ժամ ու կէս ետքը , ինչ և իցէ ատենը  
եկածին պէս տղան պառկելու է ու առտը  
վանց ալ քեզմէ ուշ ելլալու է :

Վնանց տունը սովորութիւն կայ որ կըզ  
գուշանան որ տղին քնացած տեղը բնաւ  
մարդ չիմըտնայ , կամ մտնայ նէ ոտքին մա  
տերուն վրան քայէ , դուռը չիգոցվի բաց  
վի , տղին քով չիսօրաթովի , ձայն չելլայ , և  
այլն : Աս սովորութեանը պտուղը սա կըլ  
լայ որ տղան պղտիկ ձայնէ մը արթըննալ  
կըստովի ու քունն ալ խորունկ ու զօրացու  
ցիչ չըլլար : Պէտք է որ տղան ձայնի մէջ ,  
խօրաթողներու քով կարենայ քնանալ : Այս  
կերպիւ քնանալ ստովի նէ , ուր ըլլայ ու  
ինչ ըլլայ ալ նէ կրնայ քնանալ , ու իր հան  
գըստութենէն ետ կեցած չըլլար :

Տղան պէտք է որ միշտ իր օրօրոցը կամ  
անկողինը քնանայ , բնաւ ասդին անդին

քնանալու չէ : Այրբեմն պղտիկ տղաքը իրենց մօրը կամ դայեակին ( տատային ) ծունկին վրայ քնանալ կուզեն . չիթողուս նէ կուլայ , կըսօռայ : Շատ անգամ աս սովորութեան նը պատճառը սա է որ , տղուն երբեմն հիւանդանալու և լայու ատենը՝ մայրն ալ ձայնը կտրելու համար օրորոցէն դուրս կը հանէ կըսպրտըցընէ , ու տղան թեւերուն վրայ կըքընանայ : Աստի երբոր ետքն ալ ըռընտնայ նէ , ալ մօրը թեւերէն վար ինջնալ ու ուրիշ տեղ քնանալ չուզէր : Բայց ասանկ քնանալը անհանգիստ ըլլալուն ՚ի հարկէ տղին կամ մէկ կողմը կամ մէկալ կողմը նեղութեան մէջ կըլլայ , պէտք է որ այս վնասակար սովորութիւնը մոռցունել տրվի : Աստի տղան կըհանալեցընէս իր օրորոցը կըդընէս . առջի անգամը կընեղանայ կըսօռայ կըկանչէ , բայց մտիկ չընէս նէ՝ էն վերջը կըքընանայ . հետեւեալ իրիկունները քանի մը օր ասանկ ընէս նէ , օրորոցը քընանալու կըսորվի :

Տղան քիչ մը մեծնայ նէ , արթննալու ատենները օրորոցէն հանելու է . շատ մայրեր չեն ուզեր հանել : Բայց ան ատենը գէթ գլխին տակը մեծկակ բարձ մը դնեն գլուխը վեր առնեն ու աչքը լուսին դարձընեն , որ ինչուք նորէն քնանան նէ ըզբօնուան :

Տղաքը քնացընելու համար , օրոր կը

զուրցեն , խաղեր կերգեն , աս սովորու-  
թիւնը հիներէն մնացած է մեզի , ու բնու-  
թեան մօտ բան է , ուստի ասոր դէմ ըսե-  
լէք մը չունիմք : Միայն կրկնորատեմք որ ,  
խաղին հետ մէկտեղ օրորոցը շատ տասու-  
կութեամբ չօրեն , վասն զի անով տղին գը-  
լուխը կըդառնայ , վրան ապշութիւն (սէր-  
սէմութիւն ) կուգայ , ու գրեթէ ինքքողին  
քը կըկորսընցընէ , քան թէ կըքընանայ , ու-  
րեմն օրելը կամացուկ ըլլալու է : Թի որ  
ըսածիս պէս կամաց ըլլայ նէ , ասիկայ օրո-  
րոցէն չելող տղոց համար պզտիկ շարժում  
մը կըլլայ որն որ իրենց օգուտ ունի քան  
թէ վընաս :

Սմանք քիչ մը մեծցած տղան չեքընանար  
կոր ըսելով , սոսկալի ձայներ կըհանեն տը-  
ղան վախցընելու համար “ Խարախօնձօլը  
կուգայ կոր , շուտ քնացիր ” ըսելով , տղին  
կըսաստեն : Ասիկայ ճշմարտապէս իր տղան  
սիրող մօր մը գործը չէ , որովհետեւ տղան  
վախցընելով , նախ երբոր մեծնայ նէ բընու-  
թիւնը վախկոտ կըմընայ , երկրորդ վախէն  
կընայ հիւանդանալ :

Արբեմն տղաքը քնացընելու համար Թի-  
րէս կամ Աֆիօն կուտան : Աս ալ բնութեան  
դէմ մեզք է , որովհետեւ մայրը իր հան-  
գըստութեանը համար տղան ու տղին աղէ-  
կութիւնը կըմոռնայ կոր : Արչափ տղաք  
Աբաղձօ եղերեն աս թունաւոր դեղէն , և

որչափ տղաք ալ ուղեղի բորբորմամբը մե-  
ռեր են :

Տղան մէկու կէս կամ երկու տարեկան  
ըլլայ նէ , ալ օրորոց ( պէշիկ ) պառկեցընե-  
լու չէ : Պէտք է որ իրեն համար յատուկ  
անկողին մը շինվի . կաթէն չիկրտրած կամ  
կաթէն կտրելէն ետքն ալ՝ բնաւ իր մօրը  
հետ կամ կաթնատուին հետ չիպիտի պառ-  
կի : Այսն զի տղան ուրիշին քով պառկի  
նէ , նախ տկար կըմբնայ , մէկմալ իր քովը  
պառկողը քունին մէջ կրնայ տղին նեղու-  
թիւն տալ կամ վրան պառկիլ հողին հանել :

Տղին անկողինը պէտք է որ , շատ փա-  
փուկ չըլլայ , ու վրայի վերմակները ( եօռ-  
ղանները ) թեթեւ ըլլան : Ամառ ձմեռ ,  
մէկ վերմակ մը կողտէ , անկէ աւելին վը-  
նատակար է :

Տղան արթնցընելու համար թոթվելու  
չէ : Ամանապէս բնաւ պօռալու ալ չէ :  
Խեղճ տղան ասանկ գէշ ձայնով մը ար-  
թըննայ նէ , նայէ ինչպէս վեր կըրցաթկէ ,  
ու ինչպէս քանի մը վայրկեան ապուշ կը  
կենայ : Թէ որ արթնցընելու տղադ պղտիկ  
է նէ , ձեռքը կըբռնես կըշքիես , շուտով  
մը կարթննայ : Թէ որ տղան քիչ մը մեծ-  
կակ է նէ , կամայ մը անուճը կըկանչես  
կամ ուրիշ սիրոյ նշան մը կընես , կար-  
թըննայ :



## Մաքրութիւն :

Մաքրութիւնը՝ առողջութեան մէկ հարկաւոր կանոնն է . մանաւանդ պզտիկ տղոց համար , որոնց ամէն բան շուտ մը ներգործելով , քիչ բանէ կրնան հիւանդանալ : Տըզաք քրտընած կամ աղտերու , գէշ հոտերու ու թաց լաթերու մէջ կենան նէ , նախ իրենց փափուկ մորթը կերպ կերպ հիւանդութեանց կիցնայ . երկրորդ՝ քրտինքը դժար դուրս ելլալուն , տղին ներքին գործարանները պիտի հիւանդանան , և այլն : Տղոց անմաքուր կենայնուն յառաջ եկած վնասները մէկիկ մէկիկ համբեմք նէ , ետին չիգար :

Ուստի ճնողաց պարտք է , չէ թէ միայն իրենց տղաքը մաքուր պահելու , հապա պզտիկուց մաքուր կենալալ սորվեցնելու :

Նորածին տղան յաճախ կըմընտրուէ կամ կըբըրտընի : Սպասելու չէ որ տղան լայ և հապա լաթերը փոխես : Տղին ընելու մեծ խնամքդ զինքը թաց ու հոտած լաթերու մէջ չիձըգել է : Ուստի երբեմն երբեմն պիտի նայիս , ու ինք քեզի խնացունելուն չըս պատելով , սյսինքն պաղ թացութիւնը կամ գէշ հոտերը տղին չիներգործած , լաթերը շուտ մը պիտի փոխես :



Հագցրնելու լաթերբող , պէտք է որ մնախիր ջրով լուացած ըլլան , առանց այս ըզգուշութեան լաթերուն վրայ քիչ շատ գէշ հոտ կըմընայ :

Տղին մարմինը մնարուինէ , չոր կամ թաց լաթի կտորով մը տղին մարմինը քերելու չէ . որովհետեւ իր փափուկ մորթը ասկէ կրնայ բորբոքիլ : Աղէկը , քիչ մը դաղ ( ըլլաճախ ) ջուր առնելու և կտոր մը սպունք ( սիւնկեր ) մէջը թաթխելու և անով կամաց կամաց սրբելու է , և անկէ ետքն ալ սրբած տեղը չոր լաթով մը չորցրնելու է :

Արբեմն երբեմն տղան ջուրը խօթելու լուանալու ես : Հոս մեր երկիրը սղախի տղաքը ջուրը խօթելէն շատ կըլախնան : Ենձի կուգայ որ թէ որ մնասախար բան մը կայ նէ ջուրը չիխօթելու չիլուանալն է : Արովհետեւ տղոց բրտինքը վրանին չորնայ ու անանկ ազտոտ կենան նէ , բրտինքին դուրս տուած հիւթերը մորթին վրայ փակ չելով , մորթի հիւանդութիւն մը կրնան վասարկիլ , կամ ճակտոտիքները գոցվելուն բրտինքը դիւրութեամբ դուրս չելլար , մորթին արեան շրջանը դժար կըլլայ : Աւ ուրովհետեւ տղոց ներքին գործարանները ունակութիւն ունին բորբոքման , կարելի է որ արիւնը ներսը մնալուն , տղան վտանգաւոր հիւանդութեան մը հանդիպի :

Արթեալ ազգերը ինչպէս Վաղղխացիներ

րը , Անգղիացիները ու Վերմանացիք միշտ իրենց տղաքը ջուրը կրխօթեն : Աւրոպայս սովորութիւնը նոր բան մը չէ , հինուց մնացեր է : Հին Հելլէտիացիները , Վերմանացիները , Իւլանտացիք , Աեղաք , Աքովտիացիք , իրենց տղաքը գետը կրխօթէին : Ա իրգիլիսս կըպատմէ որ Հռոմէ շիշինուած Խտալիոյ բնակիչները իրենց տղաքը հանքային պաղ ջուրերը կրխօթէին : Ախպէսիացիք , Իզանտացիք և Վոուլաքները ինչո՞ւք հիմա սա սովորութիւնը ունին : Աւրաններուն համար կըպատմեն որ , տղայ մը ծնածին պէս , կառնեն ձուռի մէջ կըպառկեցրնեն , մինչեւ որ շնչառութիւնը կորիւննկէ կըհանեն տաք ջուրի մէջ կրխօթեն կըհանեն , ու տղին ծնած օրէն մինչեւ տարի մը օրը երեք անգամ ու տարիէ մը ինչո՞ւք մեծնայ նէ շաբաթը միայն երեք անգամ ասանկ կընեն :

Աիլիօմբէն կըպատմէ որ Վմերիկայ բընակող հնգիկ կնիկները տղաքնին ծնածնուն պէս կառնեն պաղ ջուրը կրխօթեն :

Հիմայ՝ տեսանք որ , վայրենիներն ու ուրիշ հին ազգերը տղաքնին աւելի պաղ ջրով քան թէ տաք ջրով լուանալ կուզեն : Արայինք մեր փափուկ տղաքն ալ պաղ ջրով լուանալու եմք մի : Հիւֆլան և ուրիշ շատ օրինաւ որ հեղինակներ կուզեն որ տղաք սրաղ ջուրով լուացվին : Ասոր ներհակը ուրիշ օ

բինաւ որ հեղինակներ ալ կան որ տղոց հա-  
մար պաղ ջուրը բոլորովին կարգիլեն , Պաղ  
ջուրը չուղողները կըսեն որ , չափահաս ու  
ողջ մարդը անգամ՝ պաղ ջուրը մանայ ու  
քանի մը վայրկեանէն աւելի մէջը կենայ  
նէ , իր շնչառութիւնը կսկըտի դժարնալ ,  
սիրտը գոցվիլ , ու քիչ մըն ալ աւելի կենայ  
նէ , կամ կշտացաւ (սատիւճան) կըլլայ , կամ  
ուրիշ վտանգաւոր հիւանդութեան մը կը  
հանդիպի . որովհետեւ պաղ ջուրին մէջ  
կեցած ատեննիս , մորթին արեան շրջանը  
կրխափանի ու բոլոր արիւնը ներքին գոր-  
ծիքներուն մէջ կըլաղէ , ուր արիւնը աստ-  
կանալով չարաչար հիւանդութիւններ կըր-  
նայ պատճառել . ուր մնաց պզտիկ տղաք-  
ները , որոնց ներքին մասունքները աւելի  
ունակութիւն ունին բորբոքելու : Ասոր  
հակառակը՝ պաղ ջուրը ուղողներն ալ կը-  
սեն որ , տղայ մը պէտք է որ պզտիկուց ա-  
մէն բանի ներդործութեան դիմանալ տը-  
վի , որ դիւրաւ չիհիւանդանայ . մանա-  
ւանդ ցրտին , որն որ բորբոքմանց շատ ան-  
գամ սրտաճառ է : Ասկէ զատ տղան պաղ  
ջուրէն ելլալէն ետքը անանկ մէկ տաքու-  
թիւն մը կըզգայ մորթին վրայ , որ չէ թէ  
միայն մորթին արեան շրջանը կըզխւայցընէ ,  
այլև ներքին գործիքներուն բորբոքումն ալ  
կրխափանէ : Աս երկու ծայր կարծիքներուն  
դէմ փորձը սա կըզուրցէ որ , պաղ ջուրը

լուացիլեւոյլ ուժով տղաքները աւելի յա  
ռաջ կուգան . ու ասոր ներհակը տկար տը  
ղաքները չիդ խմանալով կըմեռնին : Այդե  
նեաց գործ է ուժով տղաքները առաջ քա  
շել ու տկարները մեռցընելու կերպը գոր  
ծածել . մեր ընկերական վիճակը չիներեր  
ասիկայ : Աստի մենք Սաքէնչիցին հետե  
ւելով կուզենք որ , տղաքը անխտիր պաղ  
ջուրը չիխօթեն : Յիշած հեղինակըս կուզե  
որ , տղան թէ ուժով ըլլայ թէ տկար , պաղ  
ջուրը խօթելու համար սպասի որ , տղին  
ծնած տարուան ամառը դայ , ու ան ատե  
նը սկըտի : Ան ատենն ալ թէ որ տղան  
պաղ ջուրէն երածին պէս կամ սրբըլելէն  
ետքը աշխոյժ ( տիրի ) է ու շուտով տաքնայ  
նէ , հասկըցիր որ պաղ ջուրը տղին օգուտ  
պիտի ընէ : Ասոր հակառակը թէ որ տղան  
ջուրէն ելլալէն կամ հագւլելէն ետքը դռ  
ղայ կամ փատցածի պէս ըլլայ նէ , ալ ան  
տղան պաղ ջուրը խօթելու չէ :

Տղին պաղ ջուրին դիմանալու կարողու  
թիւն ունեցածը չիտորձած , ծնելէն քանի  
մը շաբաթ ետքը տղին բոլոր մարմինը օ  
ճառով կամ թեփով տաքուկ ջրով կըլուա  
նաս , ու տղան չոր և բրդոտ կտաւներու  
(խաւլուի) մէջ փաթտելով օրորոցը կըպառ  
կեցընես : Քանի մը շաբաթէ ետքը ջուրը  
կամաց կամաց կըպաղեցընես . անանկ որ ,  
ամառվան մէջ ջուրը արեւին դնելով որ

չափ կրնայ տաքնալ նէ, ջրին տաքու թիւնը  
այն աստիճանը ըլլայ: Այսց միանգամայն  
պէտք է որ ձեռքիւնէրը տաքիւնէրը ու ե-  
րեսը կամաց կամաց անկէ՛ աւելի պաղ ջրի  
տորկեցընես: Ատրդուն պաղ առնելու տե-  
ղերը ասոնք են. պէտք է որ նախ այն կող-  
մերը պաղին դիմանալ տորկին: Ա՛յսանկ եր-  
թալով կամաց կամաց ջուրը աւելի կրպա-  
ղեցընես, թէ որ տղան զուրցած աստի-  
ճանէս աւելի պաղին կրնայ դիմանալ նէ,  
որն որ չեմ կարծեր մեր երկրի տղոցը վը-  
րայօք:

Գանք հիմայ տաք ջուրին օգուան ու  
փնասը հասկըցընելու: Ենչպէս որ շատ պաղ  
ջրով տղաքը լուանալը փնաս կրգործէ նէ,  
անանկ ալ շատ տաք ջրով լուանալը ևս ա-  
ռաւել փնասակար է: Տաք ջուրը կրթու-  
ցընէ, կրտրկարացընէ: Աստի մեր կողմի  
բաղնիքները տղոց համար չէ:

Աոր ծնած տաքները ըսած կերպերովն  
ջուրը խօթելով, հինգ վայրկեանէն աւելի  
ջրին մէջ ձգելու չէ: Ատքը մեծնայ նէ,  
մինչեւ տասնըհինգ վայրկեան կրնաս թո-  
ղուլ:

Թէ որ տղան ուժով է նէ, ամէն օր ջու-  
րը կրնաս խօթել, բայց թէ որ տկար բը-  
նութիւն ունի նէ, շաբաթը անգամ մը  
միայն կրխօթես:

Ըստ մեծի մասին առաւօտուն անօթի

փորանց ջուրը մտնան պիտի : Մայց թէ որ  
օդը գէշ է կամ մէզ (փուս) կայ, կամ խո-  
նաւ է նէ, այն օրը ջուրը խօթելը իրիկ  
ուան ձգելու է : Օրի՛ժ չիկերած ջուրը կը-  
մտնայ, ջրէն կելլայ կրպտակի, ասանկով  
ջրէն ելած ատենը դուրս չելար որ պաղ  
առնէ :

Վանի որ արին գլխի մազերը բուսնին  
նէ, մաքուր պահելու համար ամէն օր գը-  
լուխը տաքուկ ջրով լուանալու ու շուտով  
մը չոր լաթերով չորցընելէն ետքը սանա-  
րելու է :

Վանի ալ առղաները ելլան, նայելու է  
որ չիփրտտին : Տղոց առղաները շատ դիւ-  
րութեամբ կրփրտտին, կամ տեղէն կելլան  
ու կիյնան, ու ասանկով ետեւէ ելլալու  
առղայ ալ կայ նէ, ան ալ ծուռումուռ  
կելլայ : Աստի առղաներուն մաքրութեանը  
հոգ տանելու համար ամէն օր վրձինով  
(Ֆոչայով) աղտը վար կուտաս : Մնաւ օ-  
ճառ (սասղուն) չես դպցըներ առղային,  
որովհետեւ օճառը առղան կրփրտտեցընէ,  
նմանապէս առղայի համար ասղին անղին  
ծախլած վնասակար փոշի դեղերը չես գոր-  
ծածեր, բայց յետագայ փոշիները առանց  
վնասի կրնաս գործի դնել : Սկիւղիտ արտա-  
ւածուի փոշի, (քէօմիւր թօղու) հաւա-  
տարաչափ իրարու հետ խառնած :

Վկանջը քանի մը օրը մէյ մը քչփորիկով



(Տիւրք) կրմաբբէս :

Աճքը ճարտարի ու կունտ կունտ աղտ  
կապէ նէ , վարդի ջրով ( կիւլ սույլով ) կա-  
մայ կամայ կրտրբէս վար կուտաս :

Տղան քանի որ մեծնայ նէ , կրնայիս որ  
ինքն ալ մաքուր կենալ սորվի . կարիքը դայ  
նէ խնայրնէ տեղը չասպականէ , ու մանա-  
ւանդ գիշերները անկողինը չիմնտրուէ : Աջք  
կրսէ որ , սղտիկուց տղոց սորվեցընելու է  
որ առտըլները միայն ընեն մեծ կարիքնին :  
Աուզէ որ ամէն առտու տղան առնեն հար-  
կաւորութեան տանին ու կէս ժամի չտի կե-  
նայ , ընելիք ունենայ չունենայ : Ասանկով  
սովորութիւն կրատանայ տղան առտըլները  
միայն դուրս ելլալու , և այս կերպիւս վար-  
վելով , ետքը մեծնայ նէ , անանկ՝ օրերով  
սնդութիւն ունենալ ու շարաթներով  
դուրս չիկրնալ ելլալու դժուարութիւններ  
չիբաշեր :

Վիչ մըն ալ մեծնան նէ , սէտք է որ տը-  
ղաք քիթերնին դաշկինակով ( մահրամայով )  
սրբել սորվին , ու վրանին գլուխնին մաքուր  
սրահեն : Թէ որ վրանին աղտեղութիւն մը  
տեսնաս նէ , յաճախ խրատելով ու երբեմն  
սատտելով մաքրութիւնը իրեն սրտաք մը  
դնելու և ունակութիւն ընել տալու ես :

# ԳԼՈՒԽ ԺԸ.

## Շարժմունք :

Տղին մարմինը՝ մօրը արդանդին մէջ գալարած ըլլալուն պատճառաւ, ծնածին պէս չիկրնար շիտկրօլիլ երկննալ . ահա ասոր համար առջի օրերը տղին շարժմունքը գալարելու պէս է :

Նորածին տղին գլուխը իր մարմնին նայելով մեծ ու ծանր է . ուստի թող տուածիդ պէս կուրծքին վրայ կրճըռի : Անըկին ու շիլիքին ոսկրներն ալ ուժով չըլլալուն, գլուխը շիլիքին վրայ շտակ չիկենար : Ասանկ ալ տղին բոլոր ուրիշ մասունքները դեռ տկար ըլլալուն, շարժմունքնին ալ կիսկատար են : Վայց կամեց կամաց տղին միսերն ու ջիղերը կրգորանան, շարժելն ալ կրկատարելագործի :

Առջի ատենները տղին շարժմունքները ոչ կանոնաւոր են և ոչ կամաւոր : Ամէն մարդ գիտէ որ առջի ատենները տղան իր ձեռքիւնները բոլը գանրված բաներուն երկրնցընէ նէ, գիտուածով է, չէ թէ գիտմամբ . այսինքն գիտելով ու կամելով չէ : Պատճառը սա է որ, դեռ ուղեղը տկար ըլլալուն, շարժմանցը չիկրնար հրամայել . բայց երթալով ուղեղը կրգորանայ, կսկրօի տղին ամէն շարժմունքը կանոնաւորել, ու

անդամներուն հրամայել : Այն ատենէն տղան իր ձեռքիքները քովի բաներուն երկընցընէ նէ , կամ առնելու կամ իրմէ հեռացունելու համար է , որ դիտմամբ կըլլայ :

Գլուխն ալ որ առաջ ուր ծռէիր կամ հրէիր նէ հոն կերթար , ան ալ կակրտի շիւղիքին վրայ ասդին անդին դառնալ , ու աչքքին ականջին ծառայել : Այն ամսըվան տղան իր բարձին վրայ գլուխը մէկ դիէն մէկալ դին կրնայ դարձընել , ու երկու ամսըվան ըլլայ նէ , գլուխը վեր կրնայ վերցընել , թէպէտ դժարութեամբ :

Կամայ կամայ շիւղիքին , մէջքին ու կրունրկին ոսկորները կուժովնան , ու տղան չորս հինգ ամսըվան ըլլայ նէ կրնայ քիչ մը նըստիլ , երթալով նստոյ տեղին ոսկորներն ալ կուժովնան ան ատենը տղան մէջքն ալ կրունայ շարժել , ու մէկ դիէ մէկալ դի ծռիլ : Տղան ութը կամ ինը ամսըվան ըլլայ նէ , ոտք ելլալուն առջի փորձը կրնէ , քովը գլու նըված բանին պըլըվելով ոտքի վրայ կըկայնի . բայց դեռ քալելու անդամներուն ոտկորները ահար ըլլալուն , ու միանգամայն տղին գլուխը մարմնոյն նայելով տակաւին ծանր ըլլալուն , երկար ատեն ոտքի վրայ չիկրնար կենալ , գրեթէ ոտքի վրայ ելածին պէս կիյնայ . բայց մէկ դիէն գլուխը կըթեթեւնայ այսինքն մարմինը կըմեծնայ , քալելու անդամները կըղօրանան , տղան

ալ նորէն ոտքի վրայ կրկայնի , բայց կրտես  
նայ որ դեռ ուժ չունի քայլելու . ուստի տե  
ղէն շարժիլ ուղէ ան ատենը նէ , ձեռք վը  
նեքը ոտքի տեղ բանեցընելով ինքըզինքը  
կրքաչէ , ու գրե՛թէ չորս ոտքով կրքալէ :

Ոտք ելլալու առջի ատենները՝ նայէ տը  
ղան ի՛նչպէս քայլելու կրվախնայ ձեռք վը  
նեքովը քովը գանձված բաներուն կրվակ  
չի , քիչ մը հոն հանգստութիւն կառնէ ,  
անկէ ետքը փորձելու համար ինքըզինքը  
կրթողու : Եւայց քիչ մը անդին գացածին  
սլէս , մէկէն կընտտի , գրե՛թէ քայլելու կա  
րողութիւն չունեցածը կրողայ , ու իննալէն  
վախնալուն , առջի ատենները քայլելու տե  
ղը՝ կրվագէ . բայց ատեն մը ասանկ փորձե  
լէն ետքը էն վերջը հաստատ քայլելը կըտը  
վի : Սովորաբար շատ տղաք տարու մը չէ  
ղած ոտք ելլած են . բայց կան ալ որ աւե  
լի ուշ կեղան :

Բնութիւնը տղան ոտք հանելու համար  
ինչ սկէտք է նէ ինք կընէ , քուկին ընելէքդ  
միայն սախտըվելէն կամ իննալէն տղան ըզ  
գուշանալ սխտի ըլլայ . չէ նէ շուտ մը ոտք  
ելլալը ուղեւով ոչ գեղ ընելու ես , և ոչ  
տղին բռնութիւն ( զօռ ) :

Տղան ոտք ելլալու վրայ ըլլայ նէ , գոր  
գի ( խալիի ) մը վրան կըգընես , ու կը  
թողուս որ տղան ինքնիրենը ելլայ նտտի ,  
քալէ : Մի՛ վախնար , թէ որ տղան քալե

լու կարողութիւն ունի նէ , քեզի չիհարցը  
ներ , ու թէ որ կարողութիւն չունի նէ ,  
ինքրզինքին բռնութիւն ընելով բնութիւ  
նը չիհոգնեցրներ : Աւստի դուն միայն աը  
ղին քովը կրկենաս զգուշանալու համար ,  
ու հեռւիանց նայող ( սէյիրճի ) կըլլաս : Ան  
ինք կըտասպալի ( տէվրիլմիշ կըլլայ ) , բանի  
մը կըսիակչի , ոտքի վրայ կեըայ , քայլ մը  
( ատըմ մը ) կառնէ կընըասի , նորէն կեըայ ,  
ու ասանկով ասանց դեղի՝ ոտք կեըայ :  
Արբեմն երբեմն ձեռքվըներէն կըբըռնես  
քիչ մը կըբալեցընես , բայց տեսնաս որ կը  
հոգնի նէ , կըկայնիս , չես բռնադատեր ալ  
առաջ երթալու :

Քալել սորվեցընելու համար տղան մե  
քենայի մէջը բանտարգելը աւելի վնասա  
կար բան է , տղան մեքենային մէջ կախալա  
ծի պէս կըմընայ , կուրծքը մեքենային կըբ  
թընելով կըսըխմըլի , կըցաւի , երկար ա  
տեն ոտքի վրայ կենալով կըհոգնի , կըբըռ  
տընի ինքրզինքը կըթողու ու ասանկով կը  
սախտի : Ամէլին հեղինակը կըսէ որ , դա  
յեակը տղին քալել չիտորվեցընելուն հա  
մար , տղայ մը չիկայ որ մեծնայ նէ չիքալէ :  
Տղան կամ քալելու կարողութիւն ունի  
կամ չունի : Թէ որ ունինէ , մեքենայ պէտք  
չէ . բայց թէ որ կարողութիւն չունի նէ  
մեքենան կարողութիւն չիտար , ուստի մե  
քենային ընելիքը վնասէն ուրիշ բան չէ :

Տղայ մը թէ որ ատենին ոտք չելլայ նէ ,  
'ի հարկէ պակասութիւն մը պիտի ունենայ .  
քալել տալու բռնադատելուդ , նախ ան  
պակասութիւնը վերցընելու նայէ : Հոս  
ոտք չելլալնուն մէկ քանի պատճառները  
ու անոնց դէմ ընելիքները աչքէ անցընեմք :

Նախ աղոց ոտք չելլալնուն մէկ պատ-  
ճառը՝ ոսկորի տկարութիւնն է<sup>1</sup> : Նսանկ հի-  
ւանդ տղան քալեցընես նէ , բոլոր ոսկոր-  
ները կը ծըռնին , ուստի ատոր դէմ քու-  
րնելիքդ՝ օդափոխութիւն ընել , զուարճալի  
ու օդն աղէկ , ու խոնաւ ( նէ մլխս ) չեղած  
տեղ մը տանելով , ծովի ջուրը խօթել ,  
սնուցիչ բաներ կերցընել , ու ամէն օր ա-  
րեւը պտըտցընել պիտի ըլլայ . ուրիշ պէտք  
եղած դեղերուն համար բժշկին կըրցընես ,  
ու ինչուք տղան քալելու կարողութիւն  
չտանայ նէ չես դպչիր :

Ուրիշ պատճառ մըն ալ մի միայն տկա-  
րութիւնն է : Արնայիս որ տղան հիւանդ չէ  
բայց տկար է , ուժ չունի որ քալէ . ան ա-  
տենը բռնի ( զօռով ) քալեցընես նէ , բոլը-  
րովին ուժէն կըկրտրի , ու տարիներով չի  
քալեր : Ուստի հոս ընելիքըդ տղին ուժ  
տալ ըլլայ պիտի . օդափոխութեամբ , ծովի  
ջուր խօթելով , պտըտցընելով ու սնուցիչ  
կերակուրներ կերցընելով :

1 Rachitisme.



Արիշ պատճառներ ալ կան, ինչպէս սախտութիւն կամ այլ և այլ հիւանդութիւն, որոնց վրայ ընելիքը յատուկ վիրաբուժի կամ բժշկի մը հարցունելու է պատահած ատենը :

Տղաք ճնած օրերնուն, պէտք է որ ուժերնուն ու կարողութեանցը համեմատ շարժում ընեն ու օդ առնեն : Արչափ որ մենք տան մէջ բանտարգիւմք ու օդ չառնեմք նէ կըտրկարանամք, այնչափ ալ առաւել սլլղտիկ տղաք, որոնք մեծնալու վրայ ըլլալնուն, մեզմէ աւելի ուժի կարօտ են :

Տղի մը առջի ու հարկաւոր ընելիքնիս, ոչ միտքը զարգացընել և ոչ բարբը շտկել է. հասցա՛ մարմինը զօրացընել, ու դրսի բաներուն ներգործութեանցը դիմանալ սորվեցընել պիտի ըլլայ : Ասանկով նախ ուժով լուսով կըլլայ, երկրորդ՝ երբոր մեծնայ նէ, սրտէն տաքէն շուտ մը չիհիւընտնար : Աստի պէտք է որ, ճնողքը նային, որ իրենց տղաքը ճնած օրերնուն, օդէն ու արեւէն չիզրկուին, և տաք ու օդը աւրած սենեակի մէջ բանտարգվելով՝ տկար ու հիւանդ դոտ չիմեծնան :

Այլ տղայ մը դուրսը պտրտելէն ետքը տուն դառնայ նէ ինչպէս ուրախ ու կազդուրած (տիրի) կըլլայ : Տղայ մը ստանկամէն օր դուրս ելլայ արեւ տեսնայ մա-

քուր օդ առնէ նէ , դժգոյն ( պէյնզսիզ ) ուսկար չըլլար , ախորժակը բաց , ողջ առողջ ու ուժով կըլլայ , դիւրութեամբ ոտք կելլայ , ու ուրիշ տղոց պէս քիչ բանէ չի՛հիււանդանար :

Հոս ամիսներով չէ թէ միայն տղան անէն դուրս չեն հաներ , հապա իր սրտկած սենեակին պատուհանն ալ անգամ չեն բանար . ասանկ ատեն մը տղաքը բամբ պակի մէջ կըմեծցնեն , ու երբոր ետքը դուրս հանեն նէ , լաթերով երեսը քիթը բերանը կըզօցեն որ պաղ չառնէ : Աս կերպով տղաքը մեծցնողներուն քիչ մը դրժար է հասկըցնելը որ իրենց տղոցը շատ անգամ ոսկորները ծուռ մուռ ըլլալին ու ոտքի չըլլալին օգէն ու արեւէն անոնք զրկելնուն է :

Մենք հիմայ նայինք ինչ զգուշութիւններով շարժում ընելը ու դրսի օդը առնելը տղոց ստրկեցնենք պիտի :

Տղին առջի ծնած օրերը ամառվան մէջ է նէ , մայրը տղան կառնէ , օհարսրկին առանը պատուհանը կըտանի , հոն արեւին կըզընէ , կամ մերկացնելով կամայ կամայ արեւին մէջ մարմինը կըչրփէ . բայց թէ որ տղան ձմեռվան մէջ ծներ է նէ , իրեք չորս շաբաթ մը սպասելու է , ետքը պաղ օդ առնել ստրկեցնելու է :

Վասնի մը օր ասանկ ընելէն ետքը , տը-

դան օհարտակին տնէն դուրս հանելու պըտըտըցընելու է : Առջի օրերը քանի մը վայր կեան միայն , բայց երթալով պէտք է որ օրը քանի մը ժամ տղաք դուրսը պտըտին : Աւ երբ որ ոտք ելան նէ , կարելի է նէ առտըվընէ ինչուկ իրիկուն դուրսը կենան , ու ցորեկը հաց ուտելու համար միայն տուն դան :

Աս բաճս յայտնի է որ գեղ տեղ ըլլայ նէ կրնայ ըլլար : Արտիհետեւ հոն զուարճալի ու բաց տեղ մը գորգ (խալի) մը կրբըռէ մայրը կամ դայեակը , կառնէ տըղան կրնատի . տղան ոտք ելած չէ նէ , կառնէ երբեմն երբեմն կըպըտըտըցընէ , կըխաղըցընէ . ոտք ելեր է նէ , կըթողու որ քալէ , վաղէ , ելլայ նատի : Բայց քաղքի մէջ գտնըվող տղոց համար պտըտելու տեղ գրեթէ չիկայ : Փողոցները պտըտելը մէկ տունէն մէկալ տունը երթալը , պտըտիլ ու օգ առնել չիսեպիլի :

Պտըտելու տեղը բաց ու զուարճալի տեղ ըլլայ պիտի : Ամ թէ պտըտելու տեղ ալ ըլլայ նէ , մայրը կամ ատեն չունենար տնէն դուրս ելալու , կամ մարդ չունենար իրեն տեղը տղին հետ խրկելու , կամ թէ օր մը ատեն ունենայ նէ , ութը օր ալ աւտեն չունենար : Տղան պէտք է որ ամէն օր պտըտելու երթայ : Աւտի քաղքի մէջ գրեթէ մեր զուրցածը անկարելի բան մըն

է . բայց մենք հոս տղին աղէկ ըլլալուն կանոնները պիտի տանք . թէ որ քեզի հա մար սնկարելի բան է նէ , ըսելիք չիկայ . միայն նայելու ես որ ըստ կարելւոյն մեր զուրցածին մօտենաս : Ինչպէս՝ թէպէտ քաղբի մէջ պտըտելու տեղեր շատ չիկայ . բայց բնաւ չիկայ չէ : Ատղին անդին շատ պսրտէղներ (պօստաններ) կան : Տանրդ մօ տիկ ըլլայ նէ , ատեն ունեցած ժամանակդ կառնես հոն կըտանիս կամ կըխրկես . վեր ջապէս մեր զուրցածին մէկ մասը միայն ը նես , կամ ըսածներու հակառակը չընես նէ , միշտ տղին աղէկութիւն ըրած կըլլաս :

Տղոց պտըտելու ատեննին ընելու զգու շու թիւնները հետեւեալներն են . նախ տը ղան մինչեւ երկու ամսրվան չըլլայ նէ , գիրկրդ նստեցընելով պտըտցընելու չես . որովհետեւ ինչպէս որ վերը ըտի , երկու ամիսէ առաջ տղան գլուխը չիկրնար բըռ նել : Աւտտի երկու ամսրվընէ առաջ տղան պտըտցընելու ատենրդ պէտք է որ գրկիդ վրայ պառկած ըլլայ :

Արկրորդ՝ տղան շատ պզտիկ ըլլայ նէ , սաստիկ ցուրտ ըրած օրերը շատ դուրսը չի պիտի կենայ : Տղաք տասնըութը ամիսէն ա ռաջ պաղելնին չեն կրնար իմացընել . դուն ձայն չիհանելնին տեսնալովըդ երկար ա տեն դուրսը կենաս նէ , կարելի է որ պաղ առնեն ու հիւանդանան : Բայց երբ որ ոտք

ելլան, ու իրենք իրենց կարենան քալել նէ,  
թէ և օդը ցուրտ ըլլայ, իրենց մեաս մը չը-  
ներ, միայն նայելու է որ զգուշութեամբ  
հագոված ըլլան :

Այրրորդ՝ անձրեւոտ ու խոնաւ (նէմ՝)  
օրերը բնաւ դուրս հանելու չէ : Ասկէ չի  
հետեւցընես որ ձմեռը տղան բնաւ դուրս  
չիպիտի ելլայ : Չմեռվան մէջ ամէն օր  
անձրեւ չիգար, կամ թէ անձրեւ ալ գայ  
նէ, առտըվընէ ինչուք իրիկուն չիբըշեր,  
ժամանակ գտածիդ պէս թէ ձմեռ ըլլայ  
թէ ուրիշ եղանակ, պէտք է որ շարունակ  
ամէն օր տղան դուրս հանես պտրտցընես :

Չորրորդ՝ երբ որ տղան ոտք ելլայ նէ,  
ալ գիրկդ չիպիտի պտրտի, պէտք է որ ոտք-  
վըները գործածէ պտրտելու համար, բայց  
հոգնածին պէս ալ թող տալու չէ որ քալէ.  
և թէ և ինք գիրկդ ելլալ ալ չուզէ նէ,  
գրկելու է :

---

## Գ Լ ՈՒ Խ Ժ Բ.

### Խօսել :

Մարդ իր մտքը հասկըցընելու համար  
գլխաւորապէս խօսել ունի, խօսելը՝ բառե-  
րով կըլլայ, բառերը մտքերնիս հասկըցը-  
նելու համար պէտք է որ մէյմէկ գաղա-  
փար նշանակեն, Աւրեմն երկու հոգի խօ-

սելով մէկզմէկու միտքը հասկըցընելու համար, պէտք է որ երկուքին ալ բառ մը մի և նոյն գաղափար հասկըցընէ, այսինքն պէտք է որ երկուքն ալ սորված ըլլան բառի մը ինչ նշանակութիւն ունենալը: Արեւմտն խօսելը սորվելով կըրայ այսինքն առտենի կարօտ է:

Հիմայ՝ նորածին տղայ մը թէև իր ուղեղը ուժ ունենար մտածելու ու իր լեզուն խօսելու, չիպիտի կրնար շուտով մը մեր լեզուէն խօսելով իր միտքը մեզի հասկըցընել. հարկ կըրար որ աստէն մը սորվէր, հասրա մեզի հետ խօսէր: Բայց նայինք տղան մինչև մեր լեզուն սորվիլը իր միտքը մեզի ի՛նչպէս պիտի հասկըցընէ, և ի՛նչպէս հաղորդակցութիւն պիտի ընէ իր ծնողացը հետ:

Երաւ, լեզուն մեր միտքին հաղորդակցութեանը գլխաւոր գործիքն է նէ, բայց մէկ հատիկ ճամբան չէ, որովհետև ուրիշ մէկ բնական լեզու մը կայ, որ ամէն հասակի ու ամէն տեղի համար մի և նոյն է, ու բնաւ չիտրխալիր, այսինքն է՝ մեր նայվածքը, խնդալը, լալը, երեսնուս պէս պէս փոխալիլը, ձայներնուս եղանակը, ու շարժմունքնիս, որ միտքերնիս կիմացընեն, և տղան ալ լեզու չելած՝ իր մտքինը յայտնելու համար աս միջոցները կըգործածէ:

Աս բնական լեզուն ամենքնիս ալ ՚ի բընէ գիտեմք: Աստի լեզու չելած տղին ու



դածը հասկընալու համար սարվելու բան  
 մը չունիմք . միայն պէտք է որ ուշագրու-  
 թիւն (տիխաթ) ընեմք տղին : Կայց տղան  
 նոր ծնած ատենը ոչ խնդալ ունի ոչ ար-  
 ցունք թափել ոչ երեսը կրփոխալի , և ոչ  
 շարժմունքը դիտմամբ է : Աւամաց կամաց  
 երեւան կելլան խնդալը , արցունք թափե-  
 լը , ու կանոնաւոր շարժմունքները : Աւ-  
 մաց կամաց արցունքը ցաւ կիմացընէ , ու  
 խնդալը հաճոյք . անանկ որ , նոր ծնած ա-  
 տենը տղան իր զգացածը իմացընելու հա-  
 մար՝ մի միայն սօռալ ու տքալ ունի : Չայ-  
 նին եղանակէն , բարձրութենէն , ցածու-  
 թենէն շիտակ կամ դողդողալով ելլալէն ,  
 երկարատեւ կամ կարճ ըլլալէն , տղին ինչ  
 ուղածը հասկընալու համար կանոններ չեմք  
 խտար . որովհետեւ դիւրազգած ու իր աք-  
 ղան սիրող մայր մը առանց դաստիարակի  
 տղին ուղածը գրեթէ կրղզայ : Ասկէ զատ  
 գրսէն մէկն ալ բիշ մը ուշագրութիւն ընէ  
 նէ՝ կրնայ հասկընալ որ , տղան անօթու-  
 թեանը համար կրսօռայ , թէ մէկ տեղը  
 ցաւելուն կամ թէ սրտկած տեղը անհան-  
 դիտ ըլլալուն , հիւանդ ըլլալուն , կամ  
 թէ սիրտը նեղանալուն համար մի : Տղին  
 ուրիշ շարժմունքները , երեսալը ու իր միտ-  
 քը հասկըցընելու համար գործածած բոլոր  
 ձեւերը մէկտեղելով , շատ անգամ տղին  
 ինչ ուղածը դիւրաւ կրնամք հասկընալ :

Ինչպէս անօթի ըլլալուն համար պօռայ նէ՝  
 միանգամայն շրթունքներն ալ ծծելու է-  
 ղանակաւ կըշարժէ . լեզուն դուրս կըհա-  
 նէ , ու բերնէն ալ թուք կըլազէ : Ասոր  
 հակառակը՝ թէ որ մէկ տեղը ցաւի կամ  
 իր պատկած տեղը անհանդիստ ըլլայ նէ ,  
 կընայիս որ ճիգն ( զօռ . ) կընէ կեցած տե-  
 ղէն ազատելու : Ասանկ ալ հիւանդ ըլ-  
 լայ նէ , ձայնը իր ունեցած ուժը կըկորսըն-  
 ցընէ . կամ կըսրբանայ , կամ դողդըղալով  
 կեւլէ , և միանգամայն հիւանդութեանը  
 ուրիշ նշաններն ալ կըտեսնաս . որոնց ամէ-  
 նը մեկտեղելով տղին ուզածը կընաս վրայ  
 բերել : Ասոնց վրայօք ճշմարտապէս մայր  
 ըլլողներուն բան մըն ալ չունիմք բտելու .  
 որովհետեւ ինչպէս որ ըսի , տղին ուզածը  
 զգալու իրենց անարխալ կանոն իրենց սիր-  
 տըն է : Սեր խօսքը միայն անհոգ մայրե-  
 րուն է , որոնք գիտնալու են որ անգրթու-  
 թիւն է իրենց տղին պօռալուն պատճառը  
 չիփընտուէլ ու շուտով մը ճարը չիհասցը-  
 նելը . որովհետեւ տղան իր ուզածը չիկրը-  
 նալով հասկըցընել , իր ուժէն վեր ճիգն  
 պիտի ընէ , անկէ արիւնը պիտի սաստկա-  
 նայ , վրան գլուխը դուրս տայ կամ փոշ-  
 տանկ պիտի ըլլայ . այսինքն խասրխները պի-  
 տի սախտի :

Քիչ մը ետքը տղան իր միտքինը լալովը  
 խնդալովը ու շարժմամբը կըհասկըցընէ .

աս միջոցներով քու միաբիւնրդ կամ զուրցածրդ հասկընալու ալ կըջանայ, միանգամայն կսկըսի ականջն ալ գործածել, մտիկ կընէ զուրցածիդ, ուչ կըդընէ խօսքիդ եղանակին, ու ատենէ մը ետքը ինքն ալ կսկըսի լեզուն գործածել, արտաբերելու : Ոմանք կըսեն որ տղաք առաջ ձայնաւորները կարտասանեն : Վայց . ա . է . ի . հնչելը արտասանել չէ, պօռալ է : Անջի արտասանածնին՝ միավանկ բառերն են, և միավանկ բառերուն մէջէն ալ անանք, որ բաղաձայնով կսկըսին. որովհետեւ աւելի դիւրին է պ . ք . ճ . ըսելը, քան թէ ապ . աք . աք :

Տղաք իր ճնողացը լեզուն չխտրված, ի բրենք իրենց լեզու մը կըյօրինեն, որ գրեթէ ամէն քաղքի տղոց համար ալ մի և նոյն է քիչ փոփոխու թեամբ : Ատ իրենց յատուկ լեզուն քանի մը բաղաձայնէ բաղկացած են. ինչպէս, պ . ք . ի . ք . ճ . և այլն. գըրեթէ թէ իրենց ճնողացը լեզուն չխտրված ասով լեզունին կըփորձեն :

Վանի մը զանազան քաղաքի տղաք ջուր ուղելու համար Պօս կըսեն : Աս բառը մեր մէջը գործածված բառին բնաւ նրմանու թիւն մը չունի. ոչ մեր Չ՛-ը բառին, ոչ Տաճկաց Ս՛-ին, և ոչ անգամ Յունաց Նէ-օյին : Ասանկ ալ Հայք, Սայք, բառերը որ տղաք նախ կըսորվին արտասանելու, մէկ երկու հարիւր լեզուի մէջ նայեր եմ.

մէկըզմէկու կընքմանին <sup>1</sup> :

Տղան ինչպէս որ ըսինք, առաջ միաւլանկ բառեր կը շինէ, կամաց կամաց անոնք մեզի պէս արտասանելու կը ջանայ: Այրբ որ միաւլանկ բառերը արտասանէ նէ, ալ կսկըսի վանկերը շատցընել: Բայց ատեն մը միայն բառ մը կըրնայ արտասանել, քիչ մը ետքը կսկըսի սղախիկ խօսքեր շինել, որուն տղաք քանի մը կանոններ ունին, որ սովորաբար խօսված լեզուին քերականութեան ընդհանուր կանոններն են, բայց կամաց կամաց ան կանոններուն խտտորմունքներն ալ կը սորվին ու կը հասնին մեզի պէս խօսելու, ու սովորաբար առնելով, տղաք տասնըօրս տասնըհինգ ամսըլան ըլլան նէ, լեզու կելլան:

Ան ատեննէն սկըսելու է իր խօսելը կար-

<sup>1</sup> Ասոնցմէ քանի մը օրինակ տամ. Հայր, Մայր, Հաշերէն: Ետեա, Մամա, Բերուի լեզուաւ: Պապա, Պիպի. Կիւյանի լեզուաւ: Աթթաթա, Անեա. Կրենլանտիայի լեզուաւ: Ամո, Ինա. Դակալի լեզուաւ: Պապա, Էմմա. Ատրատեանց լեզ: Պաօ, Իւհմա. Քաֆրաց լեզ: Ազա, Եա, Պոնէօի լեզ: Աթէ, Մամէ. Անապուտի լեզ: Բաթիր, Միթիր. հին Յունարէն: Բաթէր, Մաթէր. Լատինարէն: Փաթէր, Միւօթէր. կամ Վաթէր, Միւթէր. Կեմցէի լեզ: Ազ, Էմ, Հրէարէն: Ազօ, Էմօ. Ատրերէն: Ազու, Իւմ. Արարերէն: Մամա, Տէտա. Վաացերէն (Կիւսաճի. ճէ): Բիթա, Մաթա. Հնդկաց Սանսքրիտ լեզուաւ: Աթա, Անա. Տաճկերէն: Փէտէր, Մատէր, Պարսկերէն. և այլն:

գի դնել : Տղին հետ խօսելու ատենըդ պէտք է որ առաջ մէկ մէկ բառ զուրցես , ու աս բառը անանկ բանի մը անունը ըլլայ , որ կարենաս տղուն ցրցրնել : Օ զուրցածըդ քանի մը անգամ կրկնէ , ու ակուայիդ մէջէն ծամծրմելով մի՛ զուրցեր , յստակ զուրցէ : Տղան ետքը ան բառը մինչեւ աղէկ չարտասանէ նէ չխախտի հասկընաս : Տղին քովը գտնելովներուն իրեն կէսկրտուր խօսելը զուարճալի բան մը գալով , չէ թէ միայն կրներեն որ տղայն սխալ արտասանէ , հասցա իրենք ալ տղին պէս կարտասանեն , որով տղան ետքը մեծցած ատենն ալ բոլորովին ծուռ լեզու կրմընայ , կամ անանկ կերպիւ մը խօսել սովորութիւն կրնէ , որ ամէն մարդ չիկրնար հասկընալ . տղայոց ու մանք բերաննին կրխաղցրենն նէ , մայրը կամ դայեակը զուրցածը կրդգայ քան թէ կրլուէ , և մէկէն ուղածը կրնէ : Ասանկ տղաքները աղէկ արտասանել չեն սորվիր : Տղի մը զուրցածը չիհասկընալու է , մինչեւ որ աղէկ ու յստակ չարտասանէ :

Արլայ ալ որ , արտասանելու ատենը չբթունքնին կրծրուն կրծրումրուկեն , կամ ձեռվրնին ոտվրնին գլուխնին կրծրուն : Պէտք է որ աս անպատշաճ շարժումները զպէս :

Արբեմն տղաք խօսած ատեննին բառերուն վերջի վանկերուն վրայ կրկայնին , կամ

վանկերը մէկըզմէկէ կրղատեն . պէտք է որ պզտիկուց սաստես ասնց համար :

Մէկ մալ տղան բարձր զուրցելուն համար սաստելու չէս . վասն զի խօսելը լըսվելու համար է : Տղան թէ որ պզտիկուց պրղտիկ ձայնով խօսիլ սորվի նէ , վախկոտ կըլլայ , ու բաղմութեան մէջ խօսելու ատենը ձայնը լսող չըլլար : Բայց թէ որ բարձրը ձայնով խօսիլ սորվի նէ , ետքը մեծցած ատենը ինքը կրնայ կամաց կամաց իր ձայնը ցածցընել :

Բնաւ տղան բռնադատելու չէս որ խօսի : Բնչ սորվիլ ուղէ նէ ան կրղուրցես , անիկայ կամաց կամաց պէտք եղածը կըսորվի . ու ատենին ալ աղէկ կըխօսի :

Թէ որ ուշ լեզու պիտի ելլայ նէ , բուբռնադատելովը ( զօռ ընելովը ) կանուխ լեզու չելլար : Բհարկէ ուղեղին կամ խօսելու գործիքներուն կողմանէ պահասութիւն մը ունենայ պիտի , որ ուշ լեզու ելլայ : Խօսել տալու նայելուդ , այն պահսութիւնը վերցընելու նայէ : Բայց շատ անգամ ալ ուշ լեզու ելլալնուն պատճառը աս է որ , տղոց յոյն դայեակ կուտան , տղան կըստիպի իր հօրը մօրը լեզուն ու իր դայեակին լեզուն մէկ տեղ սորվիլ : Ամանք տունը տաճկերէն ու գաղղիարէն ալ կըխօսին , կըլլայ երեք չորս լեզու : Տղան ինչպէս չորս լեզուն մէկ տեղ սորվի . ուստի այն զանազան լեզ-



ուաց բառերովը միտքը կրխանդարի , միտքը հոգնելովը տղան կըհիւանդանայ , կամ այնքան լեզուաց մէկն ալ չխտրվիր :

Տղայ մը միայն մէկ լեզու մը տրվելով մեծնայ՝ նէ , ըստ մեծի մասին մէկ ու կէս տարւան մէջ ամէն բան կարտասանէ և կըխօսի : Բայց կան սր աւելի կանուխ լեզու կելլան : Աս տղաքները առ հասարակ տկար կըլլան , միտքերնին շուտ բացվելովը շատ կըհոգնին , մարմինն ալ չիզօրսանար , ու տըկար կըմընայ : Վրեթէ միտքը մարմնոյն սընունդը կըդողնայ , ու ասանկ տղոք թէպէտ քանի մը տարի ետքը խորհելու ու զուրցելու բաները կըխորհին ու կըզըրուցեն , բայց առաջ չեն խօար : Փարիզ երկուք ու կէս տարւան տղայ մը շատ աղէկ ու մեծ մեծ կըխօսէր : Սոքին զօրութիւնը հասկըցնելու համար պատմեմ որ , օր մը ձեռքը երեսին դրեր կըմըտածէր , հոն ըլլողներուն մէկը հարցուց թէ՛ ի՞նչ կընես , պատասխանեց թէ՛ կըխորհիմ : Սորհիլը ի՞նչ է ըսին նէ , ինքնիրեն խօսել է ըսաւ : Տըղին պատասխանէն մտքին զօրութիւնը դիւրաւ կըհասկըցվի : Բայց տղան շատ տկար էր , ու իրեք տարին չիհասած ուզեղի բորբոքումէ մեռաւ : Պզտիկ տղաք ասանկ շուտ լեզու ելլան , ու ասանկ խելացի ըլլան նէ , կամ շատ չեն ապրիր , կամ միտքերնին կանուխ աշխատելովնին ետքը ա

պուշ կրղան :

Տղոցմէ ոմանք թոթովախօս կրղան : Այլ բոր աս սրակսու թիւնը տեսնաս նէ , նայել լու է որ առջեւը առնես :

Մենք խօսելու համար առաջ շունչ մը կառնեմք , ու շունչը դուրս տալու ատեննիս կարտասանեմք : Թոթովախօսները բառ մը արտասանելու համար , մեղի պէս առաջ շունչ չեն առներ , ու այս պատճառաւ կէս ճամբան կրմբնան : Աւտոի թէ որ տեսնաս տղին թոթովախօսութիւնը նէ , առջիդ կառնես , առաջ մեծ շունչ մը առնել կուտաս . շնչառութիւնը լրմնցածին պէս , այսինքն՝ ետեւէն շունչը դուրս տալ սկըսածին պէս , իրեն միավանկ բառ մը արտասանել կուտաս : Առանկ քանի մը օր , ու օրը քանի մը անգամ ընելէն ետքը , միշտ նոյն կերպիւ երկավանկ բառ մը արտասանել տուր . ետքը աւելի երկար բառ մը . առանկ քանի մը շաբաթ արտասանել տաս նէ , կարելի է որ իր թոթովախօսութենէն ազատի : Այս այս կերպովըս թէ որ ճարջըլայ նէ , կրսարասես որ մեծնայ . կարելի է որ մեծնալովը անցնի . չանցնի նէ վիրաբուժի մը կրցրցընես : Ամանց թոթովախօսութիւնը միայն մէկ գիրի կամ երկու գիրի վրայ է , ան գիրերը բնաւ չեն կրնար արտասանել . ինչպէս Հայ բսելու տեղը Այ կըսեն , Հայընէ՛ճ բսելու տեղը Այընէ՛ճ կը

սեն և այլն : Այս պակասութիւնը ատենով  
կանցնի , մանաւանդ թէ որ տղին հետ խօ  
սելու ատենըդ ան գիրերը որ չիկրնար ար  
տասանել , դուն ուժով արտասանես , ու  
իրեն ալ արտասանել տալու ջանաս նէ :

Վերջապէս կան անանկ տղաք , որ քանի  
մը բառէն ուրիշ բան չեն կրնար սորվիլ ,  
ու իրենց խօսելը վայրենեաց կերպն է .  
ատիկայ ՚ի ճնէ տխմար տղոց քով կը գտնը  
վի : Այլ որովհետեւ ասոնք ու խուլերն ու  
համր (տիլիզ) եղողները պակասուոր ման  
կանց կարգն են , ասոնց վրայօք պակասա  
ւոր մանկանց գլուխին մէջ խօսինք պիտի :

## Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

Զգայարանաց վրայ :

Սարգուն դատման և խելքին գործա  
րանը մարմնոյն էն աղնուական մասը՝ այս  
ինքն ուղեղն է . զգայարանքները դրսի բա  
ներուն հետ այս գործարանը կը հաղորդեն :  
Եւ այց զգայարանաց զգալը ու ուղեղին ի  
մանալը՝ երկուքը մէկ կէտի մէկ վայրկենի  
մէջ կը լայ , անանկ որ , գիտես թէ ուղեղին  
ու զգայարանաց եղածը մի և նոյն բան է .  
որով երկուքին պատահածին համար ալ մի  
այն մէկ բառ մը ունիմք որ Օգուլ կըսեմք :  
Ասկէ կը հետեւի որ զգայարանքը ու ուղեղը

մի և նոյն գործարան են , կամ ճիշտ խօսելով , զգայարանքը մտքի գործարանին մասունքներն են : Օգալը մտքին ամէն գործողութեանցը սկիզբն է . առանց ասոր միտքը իր գոյութեանն ու քանի մը ներքին գաղափարներէն զատ բան չիկրնար գիտնալ : Օգայարանաց օգնութեամբն է միայն , որ միտքը՝ դրսի բաներուն գոյութեանը՝ ձեւին՝ որակութիւններուն , ու իրարու հետ ունեցած համեմատութիւններուն գաղափարները կրնայ ստանալ :

Եւ այց ասկէ չիհասկըցիլի որ զգայարանաց գերազանցութեանը կասուած է մըտքին գերազանցութիւնն ալ . որովհետեւ երբեմն զգայարանքները կատարեալ են ու միտքը անկատար : Արբեմն ալ ասոր հակառակը միտքը ու չիմ ու կատարեալ և զգայարանքները անկատար ու խակ են : Ասոր ասպացոյցը անասնոց վրայ անգամ կը տեսնամք : Շանը հոտոտելեաց գերազանցութիւնը՝ արծիւին սրատեսութիւնը՝ իրենց գերազանց միտք մը չեն տուեր . որովհետեւ միտքը իրմով գերազանց կրճընի , դրսի դիպուածները իր բնական ձիւքը ոչ կրնան փոխել , ոչ սրկսեցընել , և ոչ աւելցընել : Ի վերայ այսր ամենայնի՝ զգայարանքները կատարեալ ըլլաննէ , դրսէն գալու գաղափարները ճիշդ ու կատարեալ կըլլան , ուրկէ ալ գատելը գիւրին ու կատա

րեալ կըլլայ , գէթ արտաքին իրերուն վրայօք :

Մարդուս միտքը գերազանց է , ուստի անկարելի է որ իրեն ծառայող զգայարանքներն ալ գերազանց չըլլան : Թէպէտ անասնոց մէջ մեզմէ գերազանց զգայարանք ունեցող կըգըտնամք , բայց բնաւ մէկուն քովն ալ չիկայ բոլոր զգայարանաց մէկ տեղ կատարելութիւնը : Աս բովանդակութիւնը միայն մարդուս յատուկ է : Շանը հոտոտելիքը միայն սուր է , շոշափելիքը ոչինչ ու ուրիշ զգայարանքները անկատար են . նմանապէս արծիւը և ուրիշ անասունները :

Ուստի թէ որ զգայարանաց գերազանցութիւնը մըտքին կրնան օգնել նէ , պարտք կըլլայ մեզի որ աս գերազանցութիւնն ու աս կատարելութիւնը չիկորսընցընեմք , ու ջանամք առաւել կատարելագործելու : Մարդուս մտաւորական մասին կըթուօթեանք հոգ տանելու համար իրեն ծառայող մասանցն ալ կըթուօթեանք պիտի հոգամք :

Մարդս հինգ զգայարանք ունի որք են տեսանելիք Աչք , լսելիք Ականջ , շոշափելիք Չեռք , հոտոտելիք Վիթ , և ճաշակելիք Լեզուն : Ասոնց ամէնուն վրայ զատ զատ յօդուածներով խօսելու եմք :

Տղին նոր ծնած ատենը թէպէտ աչքերը դոյ չեն, բայց ոչ կրխաղան և ոչ կրտես նան : Արևթէ քիչ մը ետքը տեսնալու ըս կրտին նէ, ետքի աստիճանը գտնելիս ա նասնոց պէս միայն խաւարը լուսէն զատել գիտէ : Կամաց կամաց կուգայ ճանչնալու, Վոյնիբը, Հեռուն ու Սօքը, Շոքն ու Աս ճայը : վերջապէս կամաց կամաց նայելու կարողութիւնը կրտտանայ : Այսելը միայն տեսնալ չէ, նայելուն մէջ խմանալ մըն ալ կայ : խմանալու համար պէտք է որ տը զին ուղեղը կատարելագործած ըլլայ, աս ալ ատենի կարօտ է :

Մինչև քառսուն օր՝ տղան ոչ կրտնէ դայ ոչ կուլայ : Խնդալու համար պէտք է որ բանի մը աղէկ եղանք տղին մխտքը գայ, ու անկէ հաճոյք գգայ : Ասանկ ալ արցունք թափելու համար, պէտք է որ իրեն տեսած կամ իրեն եղած բանին գէշ ու անհաճոյ ըլլալուն մխտքը տեղ ընէ : Աւրեմն թէ որ տղան ինչուք քառսուն օր չիտնեղար կամ արցունք չիթափել նէ, սրտածառը միայն աչքին տեսութեանը անկատար ըլլալը չէ, հասցա նաև ուղեղին ներգործութիւնը կիսկատար ըլլալուն է : Տղան քառսուն



օրվան ըրայ նէ, ուրիշ զգայարանք մին ալ  
կուգայ աչքին ծառայելու, տեսանելիքը  
կառավարելու. ըսել կուզեմ որ, իր տե-  
սածը ստուգելու համար ձեռքվրնները կը-  
գործածէ: Այսն զի՛ առջի ատենը հե-  
ռաւորութեան գաղտնիար չունի, շոշափու-  
մը միայն սո գաղտնիարը կուտայ, որ ըսել  
է, ձեռքը կըսորվեցնէ՛ աչքին հեռաւո-  
րութիւնն ու մօտութիւնը: Ա՛ ճնէ կոյրի  
մը աչքը բացին, առաջ կըկարծեր որ ա-  
մէն բան իր վրայ պիտի իյնան, բանի մը  
ձեռք երկընցընէր՝նէ կամ շատ անդին կեր-  
թար կամ շատ ասդին կըմընար. կամաց  
կամաց շոշափմամբը՝ աչքը կառավարելով  
հեռաւորութիւնը աչքով ձանձնալ սորվե-  
ցաւ: Ասանկ ալ պզտիկ տղան, նախ ամէն  
բան իրեն համար մի և նոյն հեռաւորու-  
թիւն ունին. կամ թէ բնաւ հեռաւորու-  
թիւն չունին: Չեռքը կերկընցընէ հե-  
ռուն եղած բանը բռնելու համար, ու  
երբոր տեսնայ թէ չիհասնիր կոր, կըզար-  
մանայ ու կըբարկանայ թէ ինչո՞ւ ան բա-  
ները ձեռքին չեն իղար կոր: Այց երբոր  
երթաս առնես իրեն տաս նէ, շարժում  
ըրածդ տեսնալով կըհասկընայ որ ամէն  
բանի իր ձեռքը չիկրնար հասնիլ. ու անկէ  
կըհեռեւցընէ որ, ի՛նչ որ իրեն ձեռքը կը-  
հասնի՝ իրեն մօտ է, ու ի՛նչ որ չիհասնիր  
նէ, իրմէ հեռու է:

Մասնկ ալ շարժման գաղափարը կրուտանայ բանի մը իրմէ հեռանալը ու մօտիկնալը տեսնալով : Աւրեմն աղէկ կրլայ թէ որ տղան հեռութանց բան մը բռնել ուղէ նէ , այն բանը իրեն տալու տեղը զինքը բռնես հոն տանիս : Մասնկով հեռաւորութեան ու միանգամայն շարժման գաղափարը տուած կրլաս իրեն . ու երբոր բանի մը հեռաւորութիւնը աս կերպով ստուգէ նէ , ալ ինչ հեռաւորութիւն տեսնայ , անոր հետ կրբաղգատէ , ու սանկով կուգայ կըհասնի հեռաւորութիւնը մեզի պէս ճանչնալու :

Վմանապէս մէկէն ՚ի մէկ գոյները չի կրնար ճանչնալ , առաջ ամէն բան խառն ՚ի խառն կըտեսնայ , միայն ճերմակը սէւէն զատել զիտէ , ու առջի ճանչցած գոյնը միշտ էն ճերմակին մօտ այսինքն էն փայլուն գոյնն է : Ահա ասոր համար միշտ լուսին ու լուսաւոր գոյնի կրնայի . և մէկ մը առջի գոյնը ճանչնայ նէ , ալ անկէ ետեւ տեսած գոյները ան գոյնին հետ կըբաղդատէ , ու կամաց կամաց կրնայ ճանչնալ գոյները ու երանգները ( բէնկները ) :

Տեսանելիքը ուրիշ զգայարանայ օգնութեամբը կամաց կամաց ուրիշ բաներու ալ նայիլ կըսորլի , բայց միշտ իրեն բան մը բաղդատութեան կէտ բռնելով : Ա երջապէս տղին սոք ելած ժամանակը գրեթէ

աս զգայարանքը բոլորովին ձեռի մտած է :

Պիւֆօն կրտս որ , տղաքը նախ ամէն բան ջուխտ կրտեսնան , ու ետքը շօշափման այտինքն ձեռքին օղնութեամբը մէկ հատ տեսնալ կըստովին : Ասոր վրայօք սա՛ կրնամ ըսել որ , թէպէտ առաջ տղաք խառն ՚ի խուռն կրտեսնան , բայց չիկարծովիր որ ջուխտ տեսնան . որովհետեւ աչքին առանցքը մեծնալով չիխախտիր տեղէն :

Վանի մը բնաղննին կրտէն որ տղաք նախ ամէն բան գլխի վար կրտեսնան : Վայց ասոր ալ ատանկ է չեմ կրնար ըսել . վասն զի ՚ի ծնէ կոյր տղի մը աչքը բացին , գլխի վար չիտեսաւ <sup>1</sup> :

Աս զգայարանքը գործածութեամբ կը սորբի : Ասոր գործածութիւնը նայել է : Ահա ասոր համար վայրենի մարդիկ որ հեռուն գիտելու կըհարկադրովին շատ սրտաւես են : Վլուխ բարեյուսոյի ( ) թանթօթները հորիզոնը գտնելիւմ նաւերը առանց գիտակի կրնան տեսնալ :

Ինչպէս որ չափաւոր գործածութիւնը

<sup>1</sup> Բնաղնններուն աս կարծիքը փորձէ մը յառաջ եկած է . որովհետեւ թէ որ մեռած անասունին աչքը հանես ու Քամեռա օտրուա ըսիւմ ստուերասունին ծակին գնես նէ , ետեւէն կրտեսնաս որ աչքին մէջը ամէն բան գլխի վար են . ուրիշ հետեւցուցեր են որ մարդ նախ ամէն բան գլխի վար պիտի տեսնայ ու ետքը միտքով պիտի շտկեցնէ :

աչքը կըտրեացընէ անանկ ալ շատ հոգնեցը  
 ները մանաւանդ լուսաւոր բաներու նայելը  
 աչքը կըտրեկարացընէ : Այն արհեստաւոր  
 ները որ լուսաւոր բաներու հետ կրխտողան,  
 աչքնին տկար կըլլայ, և կրկուրնան ալ :  
 Ասանկ ալ այն քաղաքները որ ձիւնով պա-  
 տած է, կամ աւազոտ դաշտ ունին ուր ա-  
 բելին ճառագայթը զարնելով սաստիկ կը-  
 լուսաւորէ, հոն տեղի մարդիկը տկար կը-  
 տեսնան կամ շատ աչքի հիւանդութիւն  
 կուենենան : Ասոր հակառակն ալ՝ քիչ լու-  
 սով պզտիկ բաներու նայելը աչքը կըհոգ-  
 նեցընէ ու կըտրեկարացընէ :

Վոյներուն մէջը միշտ լուսաւոր երանդ-  
 ներուն նայլի նէ, աչքը կըտրեկարանայ, մա-  
 նաւանդ կարմիրին : Աբելմն տղոց նստած  
 սենեակը կամ քովի մարդոց հագած լաթե-  
 րը կարմիր բլրալու շէ, գեղինը, կանանչը  
 ու կապուտակ գոյները առաւել կըյար-  
 մարին : Ասոր պէս ալ՝ մէկըզմէկէ շատ հե-  
 ու երկու գոյն մէկտեղին նէ, անոնց ալ  
 նայելը աչքը կըհոգնեցընէ : Շատ անգամ  
 փայլակը կուրութիւն բերեր է մարդու .  
 պատճառը սա է որ, մութին մէջ մէկէն  
 սաստիկ լոյս, ու ետեւէն նորէն սաստիկ  
 մութը գալովը երկու մէկըզմէկէ հեռու  
 գոյնէն աչքնները ցնցըլեր ու կուրացեր են :

Շատ անգամ լալեր է որ, շատ մար-  
 դիկ ատեն մը խաւար բանտի մէջ կենայէն

ետքը դուրս ելածնուն պէս կուրացեր են :

Ահա ստոր նման ճերմակի վրայ սեւ կամ կարմիր լաթերուն նայիլը աչքը կըտը կարացընեն : Ասանկ ալ գիշերը ճրագին նայելը նախ կըտըկարացընէ աչքը , ու միանգամայն եղին հօտը պզտիկ տղոց կը գըպչի : Արեւի է նէ գէթ ճրագը տղէն հեռու կենայ շատ մօտը չիգըանըլի :

Տղին աչքը սրելու ու գործածելու համար տղան պտըտցընելու է զուարճալի տեղեր , դաշտերու ու լեռներու մէջ կամ ջրերու ու ծովի մօտ : Ան կերպիւ չէ թէ միայն մտքը գաղափար կըժողվէ , այլ և աչքն ալ կըգօրանայ ու կըսրբի : Միայն այն օրերը որ սաստիկ հով կայ կամ միգապատ է օդը , այն օրերը պտըտցընելը աչքին վընաս ունի քան թէ օգուտ :

Բսի որ տղան սաստիկ լուսաւոր բաներու նայել տալու չէ : Ասոր հակառակը միշտ խաւար բաներուն ալ նայիլ սորվեցընես նէ , աչքը անանկ մէկ դիւրագգածութիւն մը կըտտանայ որ պզտիկ լուսի մը չի կըրնար դիմանալ : Աստի մեր զուրցածը բարեխառն կերպիւ խմացվի :

Բնաւ պզտիկ տղոց կարգալ տալ չըլար , չէ թէ միայն կանուխ կարգալ սկըսելը ուղեղը կաշխատցընէ , այլ և աչքերն ալ կըտըկարացընէ , հաւկուր կըլլան : Այելու է որ պզտիկուց տղան իր նայելու բանը աչ

բին մօտ չհտանի, բայց թէ որ ընէ նէ առաւել հեռուն գնելու է նայելու բանը: Արսորդութեան երթալու կերպով հեռու տեղեր կըտանիս, ուր բաց տեղ ըլլալով հեռուն նայիլ կըհարկաւորի. երբ որ ետքը տարիքը առնէ կարդալու սկըսի նէ, գլուխը կըկապես իր նստած տեղին, ու կարդալու գիրքը բիչ մը հեռուանց կըդընես որ հեռուանց նայիլ սորվի: Ասանկով կարելի է որ աս թերատեսութենէն ազատի: Բայց երբեմն աս կարճատեսութեան պատճառը աչքին կազմութիւնն է: Անտեսնը ուրիշ ճար չիկայ, բայց միայն Քօմֆա Պֆֆա ըսված ակնոցը գործածելու է, որ հեռույնը մօտ կըցըցընէ: Ասոր հակառակ կան որ մօտ բաները չեն տեսնար հեռու գտնելով բաները միայն կրնան տեսնալ: Երաւ աս թերութիւնը տարիքը առած մարդոց քով կըզբանելի քան թէ պզտիկ տղոց. բայց թէ որ պզտիկ տղոց քով տեսնելի նէ, պէտք է որ ջանք ընես մօտէն նայել տալու. ուստի իրեն ձեռքը տալու բանը կըմօտեցընես, իրեն ցըցընելու բանը հեռուն չես բռներ: Բայց ասոնցմով չըլլայ նէ, հարկ կըլլայ անոնց ալ Լօնկա Պֆֆա ըսված ակնոցը գործածել, որ մօտինը հեռու կըցըցընէ և ձերերը գործ կածեն:

Երբեմն տղաք շիլ (շաշի) կըլլան. որուն շատ անգամ պատճառը աս է որ, առջի ա-



տենները տղան լոյս կրփրնատրուէ ու լոյսին կողմը աչքը կը դարձնէ : թի սր լոյսը իր ոտքին կողմէն շիտակ իր աչքին չի գայ նէ , աչքվրները դարձնելու կամ գլխի կողմէն նայելու կը ջանայ , ասանկով շատ անգամ աչքը շի կը լայ : Աւրեմն նայելու է որ միշտ լոյսը շիտակ երեսին գայ : Եւ այց աս ալ զուրցենք որ , շիու թեան պատճառը միայն այս չէ , երբեմն ալ Աբաղճոյէ կամ ուրիշ հիւանդութենէ շի կը լայն ու անանկ կը մընան : Եւ պատճառաւ կը լայ թող լայ , տղայ մը շի կը եղեր է նէ , պէտք է որ ծը նողքնին ճարը տեսնան պզտիկուց <sup>1</sup> : Աստի նախ ասնկ ակնոց մը կը դործածես . այսինքն ասպակիներուն տեղը մետաղ մը լայ , և մէջ տեղերնին մէյմէկ պզտիկ ծակ ու նենան : Եւ աս ակնոցը թէ որ տղին աչքին դնես նէ , տղին ուրիշ ճար չի մընար բայց միայն այն ծակէն նայիլ : Ասանկով աչքին ծոռութիւնը շտկելու հարկ կը լայ իրեն . բայց շատ անգամ ասիկայ չօգտեր , պէտք կը լայ որ վիրաբուժի մը ձեռք աչքին ծոռութիւնը շտկել տաս թէ որ շտկելիլը կարելի է նէ : Եւ այց աս ալ գիտնալու եմք որ , բնաւ վիրաբուժի ձեռք դպցնել տալու չէ աչքին , թէ որ տղան Աբաղճոյէ յարմարութիւն

<sup>1</sup> Երկրը չէ թէ միայն ջուխտ կը տեսնան , այլ տը կարութիւն ալ ունին նայելու :

ունի նէ . որովհետեւ վերաբուժին բրածը ոչինչը կերթայ , քիչ մը ետքը թերութիւնը նորէն կուգայ : Ամանապէս մինչեւ տարիք նին քիչ մը չառնեն , տղոց աչքին վրայ դա՛նակ խաղցընելը դժուար կըլլայ , որովհետեւ աչքընին սատոիկ կըխաղան :

Արմընայ հիմայ 'ի ծնէ կոյր տղոց վրայ զուրցել :

Այս խեղճ տղոց մէկ մասին աչքը բաց վիլը կարելի է . որովհետեւ ատնց կուրութեան պատճառը աչքին վրայ լուսն ( փէրտէ ) ըլլալն է . ասիկոյ պատուես նէ կրնան տեսնալ : Այոց պատուելու ատենին վրայ խօսելով , ոմանք կուզեն որ տղին միտքը չիբացված պատուվի , որ միտքը աչքին միջնորդութեամբը ստանալու գաղափարներէն ու կրթութենէն չիզրկուի : Ամանք ալ կուզեն որ սպասվի , մինչեւ չորս հինգ տարեկան ըլլայ տղան : Արովհետեւ անկէ առաջ աչքին վրայ գործիք գործածելը դժար է ինչպէս որ վերը ըսինք : Արկուհողմն ալ իրաւունք ունին , բայց ես կըսեմ որ , պատահած ատենը վարպետ վիւրաբուժի մը ցուցվի , որ ժամանակին այն ընտրէ սպասելը կամ չըսպասելը :

Ատնցմէ զատ՝ անբուժելի կոյրեր ալ կան , որոնց համար արհեստը բան մըն ալ ընելիք չունի , ու ճնողացնուն ալ ընելիքը աս միայն պիտի ըլլայ որ , տղին ուրիշ զգու-

յարանքները ան կերպիւ կրթեն, որ աս  
զգայարանքին պակասութիւնը լեցնէ, ինչ-  
պէս որ երկրորդ մասին մէջ պակասաւոր  
մանկանց վրայ խօսելու ատեննիս պիտի  
զուրցեմք :

### ՅՕԴ ՈՒ Ա Ճ Ի .

#### Հոտտելք :

Աս զգայարանքը առաւել անասնոց քով  
կատարեալ է, քան թէ մարդուն : Անաս-  
նոց քով հոտտելքը երկրորդական աչք  
մըն է : Հոներ հոտվրտալով, աչքին չխե-  
տածը կրողայ : Արտեն որ կապիկը կինը հո-  
տէն կրճանչնայ թէ և կնկան կերպարանք  
չըլայ : Ախտախնամութիւնը աս զգայարան-  
քով անասնոց կանոն մը տուած է, որով  
ուտելու բաներնուն մէջը փաստակարն ու-  
օգտակարը կրճանչնան : Չգէ անասուն մը  
դաշտի մը մէջ, տես ինչպէս թունաւոր խո-  
տերը իրեն յարմարելու խտտերէն զատել  
գիտէ : Գնութիւնը մարդուն այս զգայա-  
րանքը այնչափ չէ կատարելագործէր, ու-  
րովհետեւ մեզի այնչափ պիտուական չէ,  
ու անոր տեղը բռնելու մեր բանականու-  
թիւնը կայ, ըսել է որ մեր հոտտելեաց  
անհաճոյ եղած բաներուն ամէնն ալ մեզի  
փաստակար չէ : Աւստի այս զգայարանքը որ-

րելու ալ հոգնելու չեմք . որովհետեւ ինչ  
պէս որ ըսի , մեզի մեծ օգուտ մը չունի :

Թէպէտ մեր ընկերական վիճակին մէջ  
այս զգայարանքը շատ հարկաւոր չէ , բայց  
կերեւի որ վայրենիները շատ օգուտ կըբա-  
ղեն անկէ : Արարատմեն որ Աթիլեան կող-  
ղիներուն մէջ սեւերը մէկը հարածեն նէ ,  
ետեւէն ինկած մարդերնուն ճերմակ կամ  
սեւ ըլլալը հոտէն կըհասկընան : Տիկալի կը-  
պատմէ որ տղայ մը անտառը մեծցեր էր ,  
ու հոտէն կըհասկընար իր բոլը եկողը թըշ-  
նամի է թէ բարեկամ : Աերեւի որ կայրե-  
րուն հոտտելիքն ալ գերազանց է , այն-  
չափ որ , կերածնին գէշ ու աղէկ ըլլալը  
ստուգելու համար միայն կըհոտվրտան :  
Ինու թիւնը անոնց ներեր է որ իրենց աչ-  
քին պակասու թիւնը այս զգայարանքով ալ  
լեցընեն :

1684 ին կազէթայի մէջ գրված է որ ,  
Բոսկ քաղքէն ուսումնական մը հոտվրտա-  
լով կըճանչնայ եղեր կնոջ մը կին կամ աղ-  
ջիկ , ժուժկալ կամ բղջախոհ ըլլալը : Աեր  
ընկերական վիճակին մէջ այս զգայարանքը  
անկարելի է որ այդչափ սուրնայ , որովհե-  
տեւ սուրնալը գործածու թեամբ ու չիհոգ-  
նեցընելով կըլլայ : Աենք նախ աս զգայա-  
րանքին տեղը բռնելու աչք , ականջ ու բա-  
նականու թիւն ունիմք , ուրեմն չեմք գոր-  
ծածեր : Աէկ կողմէ ալ միշտ բարկ հոտե-

բու մէջ կրմեճնամք , որոնք հոտոտելիքը  
չատ հոգնեցընելով , անոր սուրնալը անկա-  
րելի կընեն :

Անանկ հոտեր կան որ , գլխի ցաւ կամ  
քուն կըբերեն . ինչպէս Պանօրի , Աֆիոնի ,  
Խաչիաչի , Սիւրբէրի ու կայնիի հոտերը :  
Քիւմիսի բրցընողները գինովի պէս կըլան :  
Սուշիի հոտը շատ անգամ բիթէն արիւն  
կըբերէ , կամ սաստիկ գլխիցաւ կուտայ :  
Վարդի , յատիկի ( եատէմիի ) մանուշակի  
( մէնէքէի ) հոտը սենեակի մը մէջ բռնէ  
նէ , հոն պառկող պզտիկ տղաք գլխիցաւ ,  
մարելիք ու Սբաղձո կընան ըլլալ : Անցեալ  
ձմեռ օր մը իս շտապաւ յանկարծ հիւրնդ-  
ցողի մը տարին . տեսայ որ մեռելի պէս  
մարած էր . պատճառը տա էր որ նոր ներ-  
կած ու գոց սենեակի մը մէջ պառկեր էր :  
Փարիզ պատկերհանին մէկը իր նոր քաշած  
պատկերնե բուն քով պառկեր էր , վաղուան  
օրը մեռած գտան : Վաղբին քննիչ բըժիշկ-  
ները մեռելը բացին , իրեն ատանկ յանկարծ  
մահուանը ուրիշ պատճառ մը չիգրտան  
բայց եթէ իւզաղանգ ներկին ( եաղլը պոյա-  
յին ) հոտը :

Ուստի նայելու է որ պզտիկ տղաք ա-  
սանկ սաստիկ հոտեր բնաւ չառնեն : Ասանկ  
ալ հոտած ու փոտած բաներուն հոտը ազ-  
գու ու մնաստակար է , որոնցմէ պզտիկ տը-  
ղաքը զգուշանալու է :



## Ճաշակելք :

Այս զգայարանքն ալ հոտոտելիքին պէս, աւելի անասնոց քով կատարեալ է քան թէ մեր քովը : Սարդ՝ իր կերած բաներուն վնասակար կամ օգտակար եղածը անասնոց պէս իր քիմքին չիհարցըներ, բանականութիւնն է ուտելեաց ու ըմպելեաց կանոնը : Փորձն է՝ կերած ու խմած բաներուն աղէկ կամ գէշ եղածը գիտցընողը ու ճաշակելեաց գործը միայն մեզի կերածնիս ճանչցընել է, չէ թէ աղէկն ու գէշը գիտցընել : Թէ որ ատանկ չըլլար նէ, պէտք էր որ ինչ բանի որ մեր քիմքը ախորժին, այն բանը մեզի օգտակար ըլլար, ու ինչ բանի որ չախորժին, մեզի վնասակար ըլլար, որն որ ատանկ չէ :

Նկերական վիճակի մէջ չըլլայինք նէ, կարելի էր որ մենք մեզի մնալովնիս այս զգայարանքին կարօտ ըլլայինք, այն ալ սրբվելով մեզի ուտելեաց ու ըմպելեաց կանոն ըլլար, բայց ինչպէս որ ըսի, մենք հիմայ մեր կերածնուս վնասակար կամ օգտակար եղածը, բանականութեան կըհարցընեմք, ու մեր քիմքը չեմք գործածեր, ու չիգործածուելով այս զգայարանքն ալ մեր քովը այնչափ չխորովիր : Թէ որ մեր



քովը սրանալը միայն ինչ կերածնիս դիւ-  
րութեամբ կրճանջընէ, երբեմն անանկ  
մարդ տեսնուիլեր է որ, բանի մը կերպ  
գինի մէկզմէկու խառնելով բերաննին ա-  
ռեր են, ու մէջը գանրված գինիներուն  
ամէնուն ալ անունը տրվեր են :

Ճաշակելիքը մեզի շատ հեշտութիւն  
կրնայ տալ, բայց թէ որ միշտ հեշտովի  
համերը փրնտըռեմք նէ, էն վերջը այս  
զգայարանքը կըտրկարացընեմք, ու բանի  
մըն ալ չեմք ախորժիր, ամէն բանէ զզուիլ  
կուգայ : Բնութիւնը մեզի այս զգայա-  
րանքը տուեր է նէ, միայն ախորժակով  
ուտել տալու համար է : Թէ որ մենք  
բնութեան ուղածէն անդին երթամք նէ,  
ի հարկէ պարզ կերակուրներէն զզուելով  
համեմով ու հանդերձանքով եփած կերա-  
կուրները պիտի փնտըռեմք, որն որ մեր  
կեանքը կըկարճըցընէ : Ատտի այս զգայա-  
րանքը իր սահմանին մէջ բռնելու համար  
պէտք է որ քմաց հեշտութիւնը շատ չի  
փրնտըռեմք, ու պարզ կերակուրներու  
սարվիմք :

Սեր պզտիկութեան ատենը քիմքը  
պարզ կերակուրներէ միայն կախորժի :  
Բնութեանը պատրաստած կերակուրն ալ  
այսինքն կաթը պարզ է : Ատքը տղան  
քիչ մը մեծնայ նէ քուկին համեմով ու  
հանդերձանքով եփած կերակուրները չի

փրնտըռէր : Աւտի դուն ալ պէտքը չէ  
այն կերակուրներէն ուտելու բռնադա-  
տես . ձգէ որ տղին ճաշակելիքը պարզ  
կենայ , պարզ կերակուրներու ախորժի .  
համեմային կերակուրներուն համը առնե-  
լով պարզ կերակուրներէն ետ չիկենայ ,  
ու քուկին թունաւոր կերակուրները ու-  
տելով չիհիւանդանայ , կամ անանկ մեծ-  
նալով ետքը որկրամուլ չըլայ :

### ՅՕԴՈՒԱԾ Դ .

#### Շօշափելիք :

Թէ որ մարդս ուրիշ կենդանիներէն  
զատող զգայարանք մը կայ նէ , անիկայ  
շօշափելիքն է : Հոտոտելիքն ու ճաշակե-  
լիքը անասնոց քով աւելի գերազանց ըլլա-  
լը հասկրցուցինք : Աոյներ կրսեմք հոս տե-  
սանելեաց ու լսելեաց վրայ ալ , թէ անկա-  
րելի է որ մարդս արծիւին պէս սրատես ըլ-  
լայ , ու ազուեսին պէս սուր լսէ : Վայց  
կենդանեաց մէջ չիկայ անասուն մը որ մար-  
դուն շօշափելեացը զգայական զօրութիւնն  
ու կարողութիւնը ունենայ : Վորտերը ու  
Սօլիւսիւտը ուրիշ կենդանիներէն աւելի  
կրզգան բայց մարդուն չեն կրնար հաւա-  
տարիլ : Ասասուն մը չիկայ որուն շօշափու-  
մը այնչափ ընդհանուր ըլլայ որչափ մարդու :

նը, որուն ամէն կողմը կրգգայ : Ասկէ իզատ մարդըս երկու անդամ ունի, որոնք զգարու համար չեն սպասեր որ արտաքին իրերը գան իրենց վրայ ներգործեն, հասպա իրենք կերթան այն իրերը կրփրնառեն ու անոնց վրայ փաթարվելով մեծութիւնն ու անթափանցութիւննին ձեւն ու հեռաւորութիւննին կրհասկրնան : Անասնոց մէջէն փիղերը միայն կան, որոնց վրայ պատիճը (խօրթումը) մեր շօշափելեաց մէկ նմանութիւնը կրսեարվի. բայց պատիճին մորթը ոչ մեր ձեռքովընեբուն փափկութիւնը ունի, ոչ մեր բոյթ մատին ալ զօրութիւնը որ ուզածին սկէս կրնայ միւս ամէն մէկ մատերուն հետ միաւորվելով բռնելիք բանին բոլորը պատել : Ասպիկ կը որ չորս ձեռք ունի, մեղմէ գերազանց շօշափելիք պէտք էր որ ունենար. բայց այն պէս չէ. որովհետեւ չունի ոչ մեր մորթին փափկութիւնը, և ոչ մեր բոյթ մատին կարողութիւնը : Անասնոց կարգին մէջ կրտեսնամբ որ, բանի որ ուղեղը կրգերազանցի, այնչափ ալ շօշափելեաց գործիքը կրկատարերադործին : Թէ որ մարդուս գերազանցութեանը մէկ ապացոյց մը պահտեր նէ, ահա ասիկայ ապացոյց : Բայց մեր խօսքը ասոր վրայ չէ, այսբանս հարեւանցի մը յիշեցինք. գանք հիմայ տղին :

Տղին նոր ծնած ատենը մորթը այնչափ փափուկ է որ, ինչ որ զգայ իրեն ցաւ կրու

լայ : Առջի օրերը օգին ներգործութեամբը իր մարմինը կրկարմրի , ու քանի մը օրէն ետքը իր մորթը կրփոխէ : Ասկէ առաջ գըրե՛թէ ցաւ զգալէն ուրիշ տեսակ զգալ չունի : Աւրեմն առջի օրերը սպասելու չէ որ ինք իմացընէ իրեն պաղկին ու տաքնալը , տեղը ապականելը , և այլն : Այրեմն երբեմն նայելու ես որ , տեղը ապականած պաղ առած կամ քրտինքի մէջ խեղդը ված չըլլայ :

Կամաց կամաց տղան կսկըսի պաղն ու տաքը իմանալ . հաճոյականն ու անհաճելին ընտրել , և այլն : Տղին ուզելը չուզելը պինդ առաջ մեղի ձեռքփըները կիմացընեն , ընդունելով կամ մերժելով : Աս բնական լեզուին առջի ատենները շատ միտ դնելու եմք տղին ուզածը իմանալու համար : Կամաց կամաց՝ տղան կըտանայ շօշափելոյն միջնորդութեամբը հեռաւորութեան ու շարժման առաջին գաղափարները . ու մարմիններուն գիմահարութիւնները , անոնց անթափանցիկութիւնը , ձեւն ու տարածութիւնը կըտուգէ : Այս զգայարանքը կուղղէ ու գրե՛թէ կրկրթէ տեսանելիքը :

Թէ որ այս զգայարանքը այնչափ ծառայութիւններ կրնայ ըներ նէ , ՚ի հարկէ պէտք է որ պզտիկուց անիկայ սրբեմք : Ասիկայ նախ՝ գործածութեամբ կըլլայ , երկրորդ՝ ատեն ատեն ձեռքփըները ջրով

լուալով ու աղտոտ չխորհելով, վերջապէս մարմինը սնդացրնելու և կոշտացրնելու բաներ չիրուներով: Վժիշկներուն շոշափելիքը շատ սուր է, պատճառը սա է որ ձեռքով երակին նայելու, ու մարմնոյն պղտիկ փոփոխութիւնները, տաքնալը, պաղկը ու բրտընիլը խմանալու, ձեռքիլինին շատ կը վարժեն: Ասոր հակառակը կարծր նիւթերու հետ խաղցող արհեստաւորները՝ ինչպէս են դարբինները, նաւափարները, հիւսնէրը և այլն, շոշափելիքնին աւրած է:

Արջափ որ վարժելով այս զգայարանքը կրկատարելագործի ու մարդըս անով ճիշդ գաղափարներ կրնայ տոանալ, այնչափ ալ աս զգայարանքը չափազանց փափուկ պահելով, մարդ կրտնասի: Այն անանկ կնիկներ, որոնց դպչելը միայն իրենց ցաւ կը պատճառէ: Ասիկայ ուղեղի բորբորում ու ուրիշ ջիղերու վտանգաւոր հիւանդութիւններ կրնայ պատճառել:

Արեմն տղոց այս զգայարանքը մէյնը շատ փափուկ պահելէն, մէյնալ անխնայ գործածելէն զգուշանալու եմք:

Տղայ մը՝ նոր ծնած ատենը ինչպէս որ խաւարը լուսէն միայն խտրել գիտէ, ա նանկ ալ ձայնը լուսթեւնէն միայն զատել լու կարողութիւն ունի : Արմաց կանաց կսկրսի աղէկ ձայնը գէշէն խտրել, եղա նակներուն ներգործութիւնը զգալ ու ա նոնց մէջ կրից նշանակութիւնը ճանչնալ : Այս զգայարանքը մէկայնեւրուն բնաւ չի նըմանիր . իր սաշտօնը աննոցմէ մեծ է : Ասիկայ չէ թէ միայն ուղեղին կը հաղորդէ իրեն միջնորդութեամբը ուղղակի երթա լու գաղափարները, այլ և ուրիշ մարդոց իրենց զգայարանքներով բոլոր զգացած ու գիտցածն ալ : Աչքը ինչ որ տեսնայ, այն կը հաղորդէ ուղեղին . բայց ականջը չէ թէ միայն իր լսածը ուղեղին կիմացընէ, այլ ինչ որ ուրիշները տեսեր են, լսեր են կամ ջշափեր են, ինչ որ խորհեր են կամ գա տեր են : Մարդոց հաղորդակցութեան գլխաւոր միջոցը խօսելն է . բայց խօսելը գաճնադրութիւն մըն է . այսինքն սորվել լով կըլլայ . ու թէ որ խօսիլ տաւողը ուղե ղըն է նէ, մէկալ կողմէն ալ պէտք է որ արտասանել տարու բառերուն հնչումն ու անոնց նշանակութիւնը ուղեղը առաջ սոր



վի, ամէն մէկ բառին վերաբերեալ գաղա-  
 վարները ու կարգի դնէ, ու անկէ ետքը հը-  
 բամմէ լեզուին ան բառերը տեղին արտա-  
 սանելու: Մտել է որ ուղեղը առաջ ական-  
 ջինն ձեռօք խօսիլ կրտորվի, ու ետքը լեզու-  
 յով կրխօսի: Աւրեմն խօսելու համար ա-  
 կանջի կարօտ եմք: Այլ ահա ասոր համար  
 ՚ի ծնէ խուլերը համը կրլան: Շատթըն-  
 քաղաքք ՚ի ծնէ խուլ և համը մը ատենէ  
 մը ետքը սկսաւ մէկէն խօսիլ: Տղան պատ-  
 մեր է որ քանի մը ամիս առաջ զանգակնէ-  
 րուն ձայնը լսեր, ու շատ զարմացեր է  
 աս նոր ու անձանօթ զգացած բանին վրայ:  
 Միչ մը ետքը ականջէն ջուրի պէս բան մը  
 վազեր է, ու սկըսեր է երկու ականջէն ալ  
 աղէկ մը լսել: Արեք չորս ամիս առանց  
 բան մը զուրցելու, ուրիշներուն զուրցածին  
 միտ կրգընէ, ու լսած բաները կամաց կա-  
 մաց ինքնիրեն կրսերտէ, անոնց նշանակու-  
 թիւնը սորվելու կրջանայ, վերջապէս խօսե-  
 լու փորձը առաջ ինքնիրեն կրնէ, ու ետ-  
 քը ուրիշներուն հետ խօսելու սկզբնաւո-  
 րութիւն կրնէ: Արաւ առջի ատենները իր  
 խօսելը անկատար է եղեր, բայց երթալով  
 կատարելագործեր է: Ահա նոյն օրինակ  
 պղտիկ տղան ալ լսածը իր մտքին մէջ կը-  
 համբարէ, անոնց նշանակութիւնը կրտորվի  
 ետքը արտասանելու ու խօսելու սկզբնա-  
 ւորութիւն կրնէ:

Ասելն ու խօսելը մէկըզմէկու կապուած են . անանկ որ լեզուներուն սկզբնաւորութեան ատենի բառերը բնութեան զանազան ձայներուն կրնըմանին : Ահա ասոր համար ցրտային երկիրներուն լեզուները խորթ ու կոշտ են . որովհետեւ հոն ձմեռը դառն ու հովտա է , ու բնութեան հանած ձայները ազդու են ու ականջն ալ խորթ կրըսէ : Շատոնցմէ փորձըլած բան է որ միննայն ձայնը խորթ կուգայ ականջուս ցուրտ օրերը , ու քաղցրիկ կըհընչէ բարեխառն ժամանակը : Թէ որ լսելը խորթ է ցրտային տեղերը նէ , ՚ի հարկէ խօսելն ալ խորթ պիտի ըլլայ : Ասոր հակառակը բարեխառն երկիրները բնութեան ձայները քաղցր ու զուարճացուցիչ են . ինչպէս աղբիւրներուն՝ դետերուն՝ ու զեփուռին ձայնը . հոն լսել ու խօսելն ալ քաղցր ու հեշտայի են :

Ցուրտ երկիրներու լեզուները բարեխառն երկիրներուն լեզուներուն հետ ու բարեխառն երկիրներու լեզուները ցրտային երկիրներուն լեզուին հետ խառնըլած ըլլալովնին , մեր ըսածին մաթեմատիքական ապացոյցը բնաւ լեզուի մը վրայ կատարեալ կերպիւ չեմք կրնար տեսնալ : Վայց թէ որ լեզուաց սկզբնաւորութեան ատենի բառերը միայն առնեմք նէ , կրըլանամք որ հիւսիսային լեզուաց բնիկ բառերը բա

զաճայնալ լեցուն են . ու ասոր հակառակ  
 կը բարեխառն երկրի բնիկ բառերը աւել-  
 լի ձայնաւոր ունին քան թէ բաղաձայն .  
 որն որ՝ մէկը խորթ կընէ , մէկալը քաղցր :  
 Երաւ ուղեղն է խօսել տուողը չէ թէ  
 ախանջը . ուղեղն է լեզուի մը կատարելու  
 թեան պատճառը չէ թէ դրսի գիպուած-  
 ները . բայց մենք սպացուցանել միայն  
 կուզեմք , որ լսելը ուղեղին վրայ մեծ ներ-  
 գործութիւն ունի : Հին պատմութեան  
 մէջ կրտսնամք որ Տիմոթէոս երաժիշտը  
 ուղած ատենը երաժշտութեամբ Աղեք-  
 սանդրը կրկապղէցնէր ու ուղած ատենն ալ  
 կըհեղացրնէր : Աոր պատմութեան մէջ ալ  
 սա կրկարդամք որ , Տանխմարբայի Թագաւ-  
 ւոր Առիք բարի անուանեալը որ մը վար-  
 պետ երաժշտի մը երգերը լսելով , բոլոր  
 քովի մարդիկները ու ինք նախ մեծ տրտու-  
 մութեան մէջ ինկան , ետքը մեծ ուրախու-  
 թեան ու ետքն ալ մեծ կատաղութեան :  
 Թագաւորը երաժշտին վարպետութիւնը  
 լսեր էր ու գիտէր , ասոր համար իր սեն-  
 եակին մէջը դանըված զէնքերը դուրս հա-  
 նել տուեր էր . բայց երաժիշտը այնչափ  
 կատաղութիւն ներդործէր է իրեն , որ իս-  
 կոյն դուռ մը կտարեր վրցուցեր ու անով  
 չորս մարդ սպաններ է :

Քարայիպները Արէթրիսի մէկ երգը լս-  
 սելով սատիկ շարժեր են : Պատմութեան

մէջ ասոնց պէս օրինակներ անթիւ են : Ազխեւսի համար կրտստունն որ , վիրաւորուած ատենը իր վէրքին ցաւը նուագարանով ( չարը յով ) կանցներ :

Նմանապէս շատ ջիղերու հիւանդութիւններուն մէջ նուագարանը մեծ ծառայութիւն կրնէ :

Սպարտացիք երաժշտութիւնը հասարակաց բարբը չափազանց չիմեղմելու և չիթուլցրնելու համար , միայն սիրտ տալու երգերը ներեցին , ուրիշ հեշտական երգերը արգիլեցին , ու երբ որ քնարին երկու թել աւելցրնել ու զեցին նէ չիթողուցին :

Նչապէս որ ձեւով խօսելը մեղի կրգմայլէ ու կրհամայլէ , անանկ ալ երաժշտութիւնը որ ուրիշ կերպ խօսիլ մըն է , մեղի կայլայլէ , կրփոխէ , մեր կիրքերը կը շարժէ , զանոնք կը մեղմէ կամ կը կատուցնէ :

Թէ որ ականջին դացած ձայները մեր վրայ այսքան ներգործութիւն ունին նէ , ՚ի հարկէ պզտիկ տղին առաւել եւս պիտի ներգործէ : Արեմն տղի մը աղնիւ բնութիւն տալու համար , պէտք է որ քաղցրիկ եղանակաւ իրեն խօսիս , երբեմն քաղցրիկ խաղեր կանչես : ( ) րօր զուրցելը որ մեղի նախնեաց մնացեր է , ամէն ազգի մէջ կայ : ( ) րօրը միտակերպ եղանակ ունենալովը , կը քրնացրնէ , ու թէ որ ՚ի միասին տղին կիրքերը մեղմելու եղանակներ ալ գործածես

նէ , տղին մեծ ծառայութիւն ըրած կրլլաս :

Ասոր հակառակը՝ տղին երեսնիվեր բընաւ չխօսուաս ու ահագին ձայներ չիհանես , որովհետեւ ինչպէս որ ըսի , սասնկ սաստիկ ու բռնաւոր եղանակը իրեն բըրտութիւն ու բռնութիւն կրնեբգործէ :

Այս զգայարանքս ալ մէկալ զգայարանաց պէս գործածելով կըսըբովի ու հողնելով կըտըկարանայ : Ինչպէս որ սաստիկ լոյսը՝ աչքը կըկուբցընէ , անանկ ալ սաստիկ ձայնը ականջը կըխըբցընէ : Այս պատճառաւ թնթանօթ նետողները ( թօփօթները ) շատ անգամ խուլ կըլլան : Տղին շատ կամաց կամ շատ բարձր խօսելը կըհողնեցընէ իր ականջը , ու բեմն սղէկ կըլլայ բարեխառն կերպիւ խօսիլ :

Այս զգայարանքը թէ որ վարժի նէ , շատ կըսըբովի : Ի՛ ծնէ կոյրերը հեռըվանց մէկուն գալը ոտքին ձայնէն կիմանան : Արտորդները շատ սուբ կըլլեսեն : Ասանկ ալ շատ տեղ վայրենիները ականջնին գետինը գնելով կըհասկընան մարդ կամ անասուն գալը : Արաժիշտներն ալ ձայնին եղանակները զարմանալի կերպիւ ընտրել գիտեն , ասոնց ամէնուն պատճառը գործածութիւնըն է :

Այս զգայարանքը անմիասս պահելու համար պէտք է որ մոքուբ պահվի , աղտերը քանի մը օրը մէյմը մաքրելով , ու կա

կրօնընկերու համար՝ երբեմն կաթիլ մը Պա-  
փէճ էտի՛ կաթեցրնելով :

Ասելեաց սրահաւթիւնները քանի մը  
տեսակ են : Արիս կան որ , ծուռ կրքրսեն , ա-  
սանկին երաժշտութիւն սորվեցրնելու է .  
վասն զի ասով կաշխատի ձայնին եղանակնե-  
րը խորելու ու իր ականջը կրչրտիէ : Մայց  
ոմանք կան որ ծանր կրքրսեն : Թէ որ տղան  
ծանր լսէ նէ , ալ իր ականջը գործածելու  
չաշխատիր . կրնայի որ իրեն զուրքըլած բա-  
նը նշանացի ( իշարէթէն ) շարժմանց ձեւէն ,  
աչքին նայելէն , երեսին այլայլելէն հասկը-  
նայ , ասանկով իր ականջը բոլորովին կը-  
խուշնայ , խօսել ալ չխորովիր , ու իր միտքինը  
հասկրցրնելու համար իր բնական լեզուն  
կսկսի գործածել , ձեռքիլնելրովը , ոտքիլնե-  
րովը , աչքովը իր միտքինը գխացրնել : Թէ որ  
տղին քով աս տեսնաս նէ , նայելու է որ սրդ-  
տիկուց իր ականջը գործածելու բռնադա-  
տես : Վեզի հասկրցրնելիք բանը մի հաս-  
կրնար , մինչեւ որ խօսելով չիմացրնէ : Աւ-  
իրեն հետ խօրաթես նէ բնաւ մի շարժ-  
մունք ըներ , մի աչքրդ ու երեսրդ փոխեր :  
Տղան աս կերպիւ իր ականջը գործածելովը  
կարելի է որ բոլորովին ականջը բացվի կամ  
լսողութիւնը եւելնայ : Մայց երբեմն ինչ  
ընես ընես , ականջը ինչպէս ծանր է նէ ա-  
նանկ կրմրնայ , որուն բժշկութեան ճարը  
չըլլալով , միայն ականջի փող ( բուլաք սօ-



առաջի) գործածելու կրթայ : Կան ալ որ  
 բարբոսիին խուլ կրճընին . ասանկները սոր-  
 վընեբնուն փորերնուն ու առդաներնուն  
 միջնորդութեամբը քիչ մը ձայնը կրբանն ,  
 բայց այս ըսելը այնչափ անկատար է որ ,  
 անով խօսիլ չխտրովիլի : Ան ատենը պէտք  
 է որ այն խուլ և համբ տղոց ուրիշ լեզու  
 մը հնարես , որուն վրայօք գիրքիս երկրորդ  
 մասին սրահասաւոր մանկանց գլխին մէջ  
 պիտի զուրցեմք :

Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

Մտքին կարգութիւնները :

Թէ որ աշխարհքիս մէջ գտնուիւած անա-  
 սունները աչքէ անցընեմք , ու իրենց կազ-  
 մութեան և ձեւին վրայօք մէկըզմէկու  
 հետ բաղդատեմք նէ , կրտեսնամք որ աս  
 տիճաննին ու մէկըզմէկէ ունեցած զանազա-  
 նութիւննին մտաւոր Անդուշ մը<sup>1</sup> ( մեր  
 տիվէն մը ) կրձեւանան , որուն ծայրը մար-  
 գըն է կեցած , և էն տակը այն անասուն  
 ները , որոնք մի միայն զգալ ու շարժիլ ու-  
 նին : Ու թէ որ ամէն մէկ աստիճանին վը-  
 րայ գտնուիող անասուններուն մէկիկ մէկիկ  
 նայիմք նէ , կրտեսնամք որ էն վարի աս

1 Ehelle animale.

ատիճանը գտնելով զանասունինն ձեւը էն պարզըն է . երկրորդինը աւելի բաղադրեալ ու աւելի կատարելագործած . ու ասանկ երբ թալով ինչուկ մարդուն հասնիմք նէ , կրտեսնամք որ քանի որ վեր ելլամք , այնչափ ալ կատարելութիւնները կաւելնան :

Հիմա աս բաղադրեալ անասուններուն մէջէն մէկը առնեմք , ու ստեղծուած վայրկեանէն ինչուկ իր ձեւը ստանալու վայրկեանը նայիմք նէ , կրտեսնամք որ իր բաղադրեալ ձեւը մէկէն չըստանար . հասցա՛նախ էն վարի աստիճանը գտնելով զանասունինն ձեւովը սկզբնաւորութիւն կրնէ . երթալով երկրորդին երրորդին կատարելութեանը կրհասնի , ու ասանկ քալելով ինչուկ իր աստիճանը կուգայ կրկայնի . ու անկէ ալ վեր չելար : Գրե՛թէ բնութիւնը մէկը մեծցրնելու համար , մէկէնխմէկ մեծ չըստեղծեր , առաջ շատ պզտիկ կրնէ , կամաց կամաց մեծութիւն կուտայ , ու էն վերջը վախճանական մեծութեանը կրհասցրնէ :

Սարդն ալ աս կարգէն , աս կանոնէն գուրս չէ . անասնոց Սնդոս-ղէին ծայրը մէկէն չիհասնիր . իր կատարելութիւնը , իր վախճանական ձեւը մէկէն չըստանար . նախ՛ անասնոց Սնդոս-ղէին էն տակի աստիճանը կրկոխէ . մէկիկ մէկիկ աստիճանները կելլէ , ու իր տեղը կուգայ կրհասնի : Գը-

րէթէ մարդ իր մարդկային կերպը չբոսա-  
ցած , որդ , զեռուն , թռչուն ու անասուն  
կրկայ , ու աս պղտիկութիւններէն անցնե-  
լէն ետքը իր մեծութեանը կրհասնի :

Աս ճշմարտութիւնը սպացուցանելու  
համար , մարդուն ծնունդը , սկզբնաւորու-  
թեան կերպը , իր առջի ձեւը քննեմք ու  
նայիմք թէ իր մօրը արգանդին մէջ ի՞նչ  
պէս է : Տեսնեմք թէ՛ իր վախճանական  
ձեւը չբոսացած ի՞նչ ձեւերու կրմբանայ :  
Մարդը յիւթեան առջի օրերը մաշկ մի է ,  
մաշկը ամէն կենդանեաց սկզբնաւորութիւ-  
նն է , աս մաշկը երթալով իր ձեւը կրկո-  
խէ , ու խողովակի մը ձեւ կրմբանայ : Առ-  
ղովակին ներսի երեսը մարսողական գոր-  
ծարանը կրկայ , ու գրսի երեսը ջիւերուն :

Անասնական Սնորհքն վարի աստի-  
ճանը անասուն մը կայ , որ Հիւրայ կրալի .  
աս ալ խողովակի ձեւ է , իր ներսի կողմը  
իւր ստամոքսն է , ու գրսի կողմը իր զգա-  
լու գործիքը : Քիչ մը ետքը կրտեսնամք  
որ , մարդ Հիւրայ անասունին ձեւէն կեղ-  
լայ , և աւելի կատարեալ անասունի մը ձեւ  
կրմբանայ : Ար ամէն մասունքները մէկիկ  
մէկիկ առնեմք նայիմք նէ , կրտեսնամք որ  
մէկ ձեւէ մէկալ ձեւը մտնալով կատարե-  
լութեան կամաց կամաց կրհասնին ու այս  
կերպիւ իրենց վախճանական ձեւերնին  
կրտանան : Անչպէս , մարդ նախ թոքի տեղ

ձուկերուն ականջին պէս բան մը ունի , երթալով առ բաները թորի ձեւ կրմբտնան . սասնկ ալ առաջ անդամ չունի , երթալով Պալէստինայի պէս սրտիունք մը կունենայ ան դամի մը տեղ . կամաց կամաց առ սրտիունքը կերկրննայ , մասունքներու կրբաճնրիլի , և այս մասունքներս ալ բաճնրիլելով ուրիշ մասունք կունենան , բաղբէն ու ձեռքը որդն ու սորքը և մատիւները ձեւանալու համար . և վերջապէս մարմինը իր վախճանաւոր ձեւը տոանալու համար այս զանազան ձեւերէն կանցնի ու իր աստիճանին կրհասնի . բայց մէյժը հասնի նէ , ալ փոխ վերլիք չունի . մարդ ալ անկէ ետքը ուրիշ ձեւի մանալիք չունի . ալ շերամի որդի ( խիւք պէօճէկիի ) պէս ոչ շապիկ փոխելիք ունի և ոչ թեւաւորելով պիտի կարող ըլլայ թիթեուն ( բէփէնէկ ) ըլլալ ու թռչիլ :

Մարդուս մարմինը ինքնիրեն նիւթ մի է . իրեն կենդանութիւն տուող երկու կարողութիւն կան , որուն մէկուն գործարանաւոր մարդ կրալի , և մէկալին մտաւոր : Գործարանաւոր մարդը անասուններէն զանազանութիւն մը չունի . ու ճշմարտապէս մարդը մտաւոր մարդն է :

Ինչպէս որ նիւթը մարդոյս մարմնոյն կարտարեալ ձեւին հասնելու համար աստիճան աստիճան կրկատարելագործի , անանկ ալ մտաւոր մարդը իր վախճանական ձեւը ըս

տանալու համար, նոյն ընթացքով կըքալէ, ինու թիւնը մտաւոր մարդուն ձեւ չիտուած, նախ գործարանաւոր մարդը ձեւի կըխօթէ, ու գործարանաւոր մարդուն իր վախճանական ձեւը տալու համար ալ միշտ փորրէն կսկսի և կամաց կամաց իր կատարելութեանը կըհասցընէ:

Մարդ ճեւած ասեանը տեսնալ չունի. բիչ մը ետքը կսկսի խաւարը լուսէն զատել, վարի աստիճանը գտնելոյ անասունները տեսնալ չունին. անկէ բիչ մը վեր ուրիշ անասուն մը կընայիս որ աչքին մէկ սքարզ ձեւը ունի, բայց միշտ տեսնալ չունի. այս երկըորդ անասունէն վեր երրորդ անասունին նայիս նէ, կըտեսնաս որ խաւարը լուսէն զատել գիտէ մինակ: Մարդն ալ առաջ խաւարը լուսէն միայն զատել գիտէ, կամաց կամաց մարդու պէս նայելու կըհասնի. վերջապէս գործարանաւոր մարդուն ամէն գործիքները ասանկ աստիճան ուտիճան բարձրանալէն ետքը կուգան իրենց վախճանական ձեւը կատանան:

Տղան երէք տարեկան ըլլայ նէ գործարանաւոր մարդը կատարելագործած ու իր վախճանական ձեւը ստացած է, աչքը ալ մէն բան տեսնալ, ոտքը ամէն կերպ քալել, լեզուն ամէն բառը արտասանել, ձեռքիքները ամէն բանը շօշափել, յիշողութիւնը ու երեւակայութիւնը միտք բրու-

նել ու երեւակայել գիտեն :

Իրեք տարւոնէ ու իրեք տարի ու կէսէն ետքը կրօնի մտաւոր մարդը երեւան ելլել, և հինգ վեց՝ երբեմն եօթը տարեկան ըլլայ նէ, իր վախճանական ձեւը ան ալ կրտսանայ. որովհետեւ այն ժամանակը մը տաւոր մարդը իր ծայր գիտնալիքը այսինքն Անսահմանը գիտէ : Ստաւոր մարդ ըսելով կիմանալք որ իրերը կարգի կրգընէ և կը բացայայտէ, և միանգամայն այն իրերը գատել գիտէ : Անանց ասոր կամքը կանոն չիկրնար ունենալ, այսինքն ազատ չիկրնար ըլլալ :

Իսի որ երեք տարին լմնայ նէ, գործարանաւոր մարդը իր կատարեալ ձեւը ըստացեր է : Աս ըսելովըս մի հասկընար որ երեք տարեկան տղան երեսուն տարեկան մարդու չափ քալել, տեսնալ, ու ըսել գիտէ : Այց չէ՞ որ մեզի պէս կարող է իր սմէն գործիքները գործածելու : Տղայ մը ամէն կերպիւ շարժիլ գիտէ, մեզի պէս քալել, վազել, ելլալ, իջնալ ու ցաթիկել սորված է, ուստի կրսեմք որ իր քալելը ձեւի մտած է, բայց աս ըսել չէ որ պզտի տղուն քալելը մեծ մարդու մը քալելուն կատարելութիւնը ու ուժը ունի, ու ցաթիկելը մեծ մարդուն ցաթիկելուն պէս ճիշդ ու կանոնաւոր է : Ասանկ ալ տեսանելիքը, ամէն գոյները, ամէն երանգները խորել



գիտէ . ըսել է իր ձեւը ստացեր է : Ա՛յլ եր-  
ջապէս գործարանաւոր մարդուն ամէն մէկ  
մասունքները ստանկ առնեմք զննեմք նէ ,  
կըզըտնամք որ երեք տարի ու երեք տարի  
ու կէսին՝ իրենց վախճանական ձեւերնին  
ստացեր են , ալ անկէ ետքը ուրիշ ընելիք  
մը չունին , բայց միայն գործածութեամբ  
զօրանալ :

Ա՛հա ստանկ ալ մտաւոր մարդը հինգ  
վեց տարեկան ըլլայ նէ , իր վախճանական  
ձեւը ունի . որովհետեւ այն ժամանակը  
իւր իմացողական կարողութիւնը էն ծայր ի-  
մանալիքը այսինքն Ա՛նսահմանը իմացեր է ,  
դատելը ու կամքը ազատ են : Բայց աս  
ըսել չէ որ տղան մեծ մարդու չափ իմա-  
նալ ունի ու դատել գիտէ , միայն սա կու-  
զեմ հասկըցրնել որ տղին դատման կանոնը  
այսինքն խղճմտանքը երեւան ելած է . կամ-  
քը մարդու կամք է . որովհետեւ ազատ է ,  
ու իմացողական կարողութիւնը մարդուն  
էն ծայր իմանալիքը իմանալու կարողու-  
թիւն ունի : Ա՛յլ երջապէս մտաւոր մարդը  
իւր վախճանական ձեւը ստացեր է , ա՛լ ան-  
կէ ետքը միայն զօրանայ և զարգանայ պիտի :

Օ՛ւրբցածէս ՚ի հարկէ սա կըհետեւի որ ,  
տղան երեք տարեկան չեղած դատել չիգի-  
տէ , կամք չունի , ու հասկընալ չունի : Ի՛ վե-  
րայ այսր ամենայնի՛ ամէն մարդ գիտէ որ  
երբոր ուզէ կըխնդայ , կուլայ , կըբալէ ,

կրնասի , ուտելիք կուզէ , տուած բանիդ մէկը  
 կը կըսիրէ մէկայլ շխիտեր , մէկը կըմերժէ ,  
 միւսը կրնգունի . ուստի կերածին աղէկ  
 կամ գէշ եղածը գիտէ , ըսել է որ կըդատէ ,  
 մէկ բանը կուզէ , միւսը կըմերժէ . ուրեմն  
 կամք ալ ունի : Այսին մեր փնտրուած կամքը  
 դատումը ու խմանալը մարդու կամք , դա  
 տել ու խմանալն է : Տղին կամիլը , խմանա  
 լը , դատելը միայն զգացողական զօրու  
 թեամբն է : Մէկ բան մը մերժէ չիտմէ  
 նէ , հարցու սրտածառը , քեզի իսկոյն կը  
 զուրցէ որ քիմքը չեն ակտորժիր այն խըմե  
 լու բանին : Բայց ըսեմք որ այն խմելու  
 բանը դեղ է . հասկրցուր տղին որ այն  
 դեղը չիտմէ նէ , կըհիւանդանայ կամ  
 կըմեռնի , նայէ , կըհասկընայ ու կըխըմէ :  
 Տղին քունը եկաւ , քնանալ կուզէ , բան  
 մը տեսնայ նէ նայիլ կուզէ , բառ մը լըսէ  
 նէ ինքն ալ կարտասանէ , բայց ասիկայ  
 քնանալու , նայելու ու արտասանելու մի  
 այն կամք է . այս կամքը , այս դատումը ,  
 այս խմանալը անասնոց ամէնն ալ ունին .  
 որովհետեւ երբ ուզեն կըքընանան . երբ  
 բան մը կըտեսնան կընային . բայց անաս  
 նոց բնաւ մէկը մարդուս պէս կամք , դա  
 տում ու խմանալ չէ ունեցեր : Տղին ուզե  
 լը՝ գիտնալով և տրամաբանելով չէ , երեք  
 տարիէն առաջ տղոց դատումը , կամքը ու  
 խմացողական զօրութիւնը գիտես՝ ինչի կը

նմանի : Տղան նոր ծնած ատենը շարժել  
ունի . բայց ամէն մարդ գիտէ որ տղոց  
շարժիլը կանոն մը չունի . ձեռքը մէկ կող-  
մը երկրնցընէ նէ , գիտմամբ չէ . երկրնցը-  
նելու համար շերկրնցընէր . ձեռքը դէպ ՚ի  
մէկ կողմը կերկրննայ , վասն զի ջիղերը ձեռ-  
քը հոն տանիլ կուզեն . ահա ասանկ ալ  
երէք տարիքնէ առաջ տղին կամիլը դատե-  
լը ու հասկընալը Նանէն խորհրդածած չեն .  
ու անկարելի էր որ ասանկ բարձրագոյն  
կարողութիւն մը շուտով մը սկըսէր :

Նութիւնը ցաթիկել չիդիտէ . ինչ որ  
ընէ , կամաց կամաց կընէ : Նայէ ինչ խը-  
նամբներ ինչ ջանքեր կընէ կամաց քալե-  
լու համար . մի միայն իր վախճանին հաս-  
նելու կընայի . այն վախճանին ասրահով  
երթալու համար ամէն բան կարգի կըդը-  
նէ . ուրիշ բան մըն ալ հող չէ . ու այս  
կերպիւ ամէն բրածը յառաջ կերթայ ,  
բան մըն ալ ետ չիմընար :

Նշխարհք գալու ատեննիս , ոչ ուժ ու-  
նիմք մեր պիտոյքները հողալու , և ոչ ալ  
խելք անոնք կառավարելու . բոլորովին ու-  
րիշներուն խնամքէն ու սրաշտպանութե-  
նէն կախուած եմք : Նրդեօք ասիկայ բը-  
նութեանը մէկ սրահասութենէն է մի :  
Ստմանս քիչ մը , կըտեսնաս որ ասիկայ Նստ-  
ուածային նախախնամութեան մէկ բարե-  
բարութիւնն է : Վասն զի ըսեմք որ տղան

աշխարհք եկած ատենը ուժ ունենար ինք  
 բը իր պիտոյքները հոգալու, առանց մըտ  
 քի ի նշպէս ան պիտոյքները պիտի կառա  
 վարէր: Մտեմք որ բնութիւնը մտքին ալ  
 զօրութիւն տուած ըլլար. մտմտան նայէ  
 ի նշ կրքառաջանար ատկէ: Մյա աշխարհքիս  
 մէջ ամէն բան նոր է նորածին մարդուն, ու  
 բեմքն ամէն բան իրեն վրայ պիտի ներգոր  
 ծէ. այս ներգործութիւններուն ու անոնց  
 ընդդիմութիւններուն դիմանալու համար,  
 պէտք էր որ կամ բնական ազդում մը ու  
 նենար, կամ իր վրան փորձելով սորվէր, ու  
 ասանկով ինչ ընելէքք գիտնար: Մայց բը  
 նական ազդում ունենար նէ, ՚ի հարկէ ան  
 սրխալ ըլլալուն համար այս միջոցս առաջ  
 կուց հաստատուած ու սահմանուած ըլլա  
 լով, պէտք էր որ հարկի իշխանութեան  
 տակ ըլլար. այսինքն ազատ չըլլար. բսել  
 է որ մարդը մարդ չըլլար. ուրեմն ասիկայ  
 անկարելի էր: Հիմայ նայիմք՝ մարդ իր վը  
 րայ փորձ ընելով սորվելուն ու գիտնալուն:  
 Մտոնք որչափ դժուարութիւններ, որչափ  
 փտանգներ պիտի բերէին այս աշխարհքս  
 նոր տեսնողին, անկարելի էր որ ասանկ վը  
 տանգներու մէջ մեծնալով, ապրէր, յառաջ  
 երթար. ՚ի հարկէ պիտի կորսրվէր: Մայց  
 բնութեանը վախճանը ստ չէ. բնութիւ  
 նը ամէն բան հոգացեր է, կուզէ որ դրսի  
 ներգործութիւնները իրեն չիվընասեն, ու

միանգամայն ալ ազատ մարդ ըլլայ : Ահա ա-  
սոր համար նախ նորածին մարդը առանց  
փտանդի մեծցրնելու համար , բնութիւնը  
իրեն ոչ ուժ հուսայ ոչ խելք . որով 'ի հար-  
կէ ճնողացը խնամքին կարօտ կըլլայ : Օր-  
նողքները որ բնութեան համալսարանը  
մեծցեր են , 'ի հարկէ իրերուն ներգործու-  
թիւնները խնայեր , գխոցեր , ճանչցեր են .  
ուստի անոնք կրնան տղէն հեռացրնել  
ինչ որ փտանգաւոր է . ու իրեն պէտք ե-  
ղածը կըհոգան : Սի կարծեր որ բնութիւ-  
նը ճնողաց այս ընելու խնամքը մի միայն ի-  
րենց կամքին ձգեր է . որովհետեւ ասանկ  
ըլլար նէ , 'ի հարկէ տղին վիճակը կարելի  
էր որ գէշանար . բայց բնութիւնը տղին ու-  
ճնողացը մէջ տեղը անանկ կապ մըն է դը-  
րեր որ , 'ի հարկէ մէկըմէկու խնամեն պի-  
տի . ճնողքը՝ տղոցը պզտիկութեանը ատե-  
նը , ու տղաքը՝ ճնողաց ճերութեան ժա-  
մանակը : Այս կապը նախ սէրն է , երկ-  
րորդ բարոյական մէկ ուրիշ պատճառ մը  
կայ : Մարդ միտք մը ունի Աստուծանը ի-  
մացող , ու սիրտ մը ունի իղձերով լեցուն .  
ասոնց ալ ծառայ , մի միայն տկար մարմին  
մը ունի : Թէ որ այս մարմինին մնար նէ ,  
մտքին շատ փնտրուածը չխախտի գտնելիք ,  
ու սրտին շատ ուղածը չխախտի կատարելք .  
մարդը մինակ մնար նէ անկար պիտի մնար :  
Աստի մարդիկ ուղածնին ընելու համար

մէկըզմէկու կարօտ են , ու իրենց բնական  
վիճակը ընկերութիւնն է : Հիմա տղին  
խնամելը ընկերութեան առջի պարտքն է .  
ինչ որ քեզի կուզես որ ընեն , դուն ալ ան  
ըրէ . ասիկայ տղոց ալ ընկերական վիճակի  
դաս մըն է . երբոր զօրանան նէ , իրենց  
ճնողացը օգնելու ու խնամելու : Ահա այս  
կերպով բընութիւնը նորածին մարդուն  
կեանքը վտանգներէ ազատեր է ու ասպա  
հովութեան մէջ է ձգեր :

Վնութիւնը ինչո՞ւ մարդուն ճնած ա  
տենը իրեն ուժ կամ խելք տայ : Աչքը ին  
չո՞ւ մէկէն երանգները ճանչնայ . թող նախ  
լոյսը խաւարէն խտրել սորվի : Տղան ինչո՞ւ  
ճնածին պէս քայլէ իրմէ հեռու եղած բա  
ներուն ինչ ըլլալը ստուգելու համար .  
թող նախ իր քովի եղած բաները ճանչնայ :  
Վմանապէս ինչո՞ւ մարմնոյն ուժ տայ , եր  
բոր մտքին պէտք չէ նէ : Վնութիւնը կըս  
պասէ որ կամաց կամաց տղան դրսէն եկած  
դասերը սորվի , ու քանի որ զարգանայ նէ  
ալ առաւել զարգացընելու համար պէտք  
եղած ուժը կուտայ , ան ալ չիտրնայեր .  
բայց պէտք չեղած տտենն ալ ՚ի զուր չըս  
պատեր իր սրտգեւը :

Վնուկ հիմա հասկըցուցինք որ բնու  
թիւնը մարդուս մտաւոր մասը չիկատաւ  
բելադործած , նախ իր դործիքները կըկա  
տարելադործէ , նախ տեսնալ , լսել , ջո



շափել, խօսել, միտք բռնել ու երեւակա  
 յել կրտսրվեցնէ, ետքը կսկըսի Վանը ձե  
 լի խօթել: Տեսանք նաեւ որ բնութիւնը  
 բնաւ չվազեր, կամաց կամաց կըքալէ,  
 գրեթէ կրխինայ քալելու, ու մտմտամբ  
 նէ կիմանամք որ, այս կերպիւ միայն քա  
 լելը ասպահով ու անորխալ է: Հիմայ նա  
 յինք մենք ինչ ընելու եմք: Մենք ուրիշ  
 ընելէք չունիմք, բայց միայն բնութեանը  
 ծառայել, ինչ որ բնութիւնը կըհրամայե  
 նէ ընել, ինչ որ կարգիլէ նէ չընել, ուրիշ  
 հնաք մը ճար մը փնտրուելէք չունիմք: Ս  
 ւտտի մեր առաջին սրարտքը բնութեան՝  
 ոտքովը քալելն է, անկէ առաջ վազելը վը  
 նասէն ուրիշ բան չիկրնար ստղարերել: Օ  
 ղուրցածքս գիւրաւ հասկըցրնելու համար  
 օրինակ մը տամ: Վոջի գլուխներուն մեջ  
 տեսանք որ, տղան նոր ծնած ատենը մեր  
 կերած կերակուրներէն ուտէ նէ, յառաջ  
 չիգար կըմեռնի, ուստի նախ կաթ ուտէ  
 ըսինք ու կամաց կամաց ուրիշ կերակուրի  
 սորվի որ չիվնասի: Տեսանք որ նախ գիւ  
 րամարս բաներ ուտէ ու կամաց կամաց  
 մեր կերակուրներուն սորվի նէ յառաջ կու  
 գայ, կըզօրանայ, չէ նէ կըհիւանդանայ  
 կամ կըմեռնի: Վերջապէս տեսանք որ  
 տղաք ուտելու կարողութիւն ստանան և  
 չուտեն նէ, ան ատենն ալ կըվընասին, տկար  
 կըմընան: Հոն մեզի առաջնորդ ու ուսու

ցիչ բնութիւնը բռնեցինք, երբ ու ինչ կերակուր տալերնիս գիտնալու համար բընութեանը հարցուցինք, ու նայեցանք որ առանց այս կանոնի՝ բրածնիս աղէկ չըլլար: Ամանապէս հոս ալ բնութեանը հարցընեմք նէ, ճշմարտոր ու աղէկը կրնամք գիտնալ, ու բնութեանը ետեւէ երթամք նէ, միայն բրածնիս յառաջ կերթայ, ուրիշ ինչ կերպով վարվինք նէ պիտի սխալինք: Աստի թէ որ բնութենէն առաջ վազելով ասեւնէն յառաջ միտքը զարգացընելու ետեւէ ըլլամք նէ, ՚ի հարկէ բնութիւնը պիտի հոգնեցընեմք, կամ մեր Զանքը անպտուղ պիտի ըլլայ կամ մեծցընելու ծառերնիս պիտի չորնայ, այսինքն միտքը զարգանալու տեղը, հոգնելով ու ուժը կորսնցընելով պիտի յիմարանայ: Ասոր ներհակը թէ որ բնութենէն ետ մնամք նէ, այսինքն թէ որ մրտքին երեւան ելած մասերը զարգացընելու Զանք չընեմք նէ, ՚ի հարկէ մտաւոր մարդը կամ տկար պիտի ձգեմք, կամ անօթութեանէն պիտի մեռցընեմք, թողութիւն ըրէք այս զուրցուածքիս:

Հիմայ բնութեան ընթացքը մեզի կանոն բռնելով ճամբայ ելլամք: Թէ որ բընութիւնը նախ աղին զգայարանքները կը կրթէ, աչքին տեսնալ, ականջին լսել, ձեռք վրներուն ոտվրներուն շարժիլ ու շօշափել, լեզուին խօսիլ կրտորվեցընէ նէ, բուկին

ալ առջի ընեւիբդ աս պիտի ըլլայ : Օգայա-  
բանքներուն կրթութեանը վրայ առջի գըլ-  
խին մէջ խօսեցայ , ուստի նորէն խօսիլը  
կրկնութիւն եղած կըլլայ :

Քանի որ գգայարանքները գործածու-  
թեան սկիսի նէ տղին միտքը անգործ չլմը-  
նար : Տղին յիշողութիւնը ու երեւակայու-  
թիւնը երեւան կեւլեն , աչքը տեսած բա-  
ններուն գոյնը ու երանգը , ականջը ձայնե-  
րուն եղանակը , տեսած բաներուն անունը ,  
ջօշափելիքը իրերուն հեռաւորութիւնը մե-  
ծութիւնը ու ձեւը մըտքին կըհաղորդեն ,  
յիշողութիւնը ու երեւակայութիւնը աս  
գաղափարներով կըլենան , որ ետքը միտքը  
սկիսի նէ գործելու իրեն պատրաստ նիւթ  
գտնայ , ըսել է որ տղին յիշողութեանը  
ու երեւակայութեանը մէջ գտնելով  
գաղափարները ետքը գատողութեանը  
համար բաղդատութեան գործիք պիտի  
ըլլան : Ուստի պէտք է որ մտաւոր մարդը  
չիմունալով , այսինքն տղին ասպագան մտա-  
ծելով , յիշողութիւնը ու երեւակայու-  
թիւնը լեցընելու համար անանկ գաղա-  
փարներ տաս , որ իրեն կարենան ծառայել :  
Միտքը խմանալու ու բաղդատելու սկիսինէ ,  
ի հարկէ պարզէն պիտի սկիսի , ուստի բու-  
կին տալու առջի գաղափարներդ ալ սլարդ  
պիտի ըլլան : Ուստի պէտք է որ ինչ բանի  
գաղափար որ տղան առնէ նէ , իր գգայա-

բանքներովը կարենայ ստուգել : Մանի մը անունը լսէ՛ նէ , պէտք է որ այն բանը աչքովը տեսնայ . կարելի է նէ շօշափմամբ ալ անոր ձեւը մեծութիւնը ու հեռաւորութիւնը ստուգէ :

Տղան նախ մայրը ու հայրը կը տեսնայ , իրենց նայվածքէն ու ձայնէն զանոնք կը ճանչնայ , պինդ առաջ հօրը մօրը գաղափարները կը ստանայ . ուստի նախ թող հայր մայր ըսել սորվի : Միչ մը ետքը տղին աչքը ուրիշ բան կը տեսնայ , նոր գիւտ մը ըրածի պէս՝ տեսածը կը ցրցընէ . կուզէ ինչ եղածը գիտնալ , ուստի պէտք է որ քովը գտնելովները տեսած բանին անունը տան , իրեն բերեն ցրցընեն , որ բռնէ , կամ ինքքան բանին քովը տանին որ իր գիտողութիւնը ընէ : Միչ մը ետքը ոտք ելլայ նէ , ամէն բան կը խառնէ , կը կտորէ , կը պատռէ , իրերուն որակութիւնները խմանալու համար . որչափ կարելի է նէ այս կամքին դէմ գալու չէ : Արերը տակնուվրայ ընելը , ճանչնալու և ստուգելու համար է . ըսել է որ իրեն պէտք է : Միչ մըն ալ ետքը իրեն նման տղաքներ կը տեսնայ , անոնց հետ կը կերանայ , ու ինչան բարեկամութեան իրեն խաղալիկը անոնց կուտայ անոնք կը սիրէ , ու անոնց հետ կը խաղայ : Ալ հոս գործարանաւոր մարդը ձեւի մտած կը սեպի , որովհետեւ ընկերանալը կը ցրցը-

նէ որ՝ մտաւոր մարդը սկըսեր է երեւան  
երկէ :

Վերը զուրցեցի որ տղան ինչ գաղափար  
առնէ նէ, միշտ զգայարանաց ներկայացեալ  
բաներուն գաղափարները ըլլան պիտի .  
դուն ալ միայն զգայարանաց գիտնալու  
հասկընալու գաղափարները տուր : Առաջ  
տղան իրերուն պատճառները խմանալու ու  
անոնց վրայ արամարանելու կարողութիւն  
չունի . ասե՛նէ մը ետքը ան ինքնիրեն կը  
կրտի անոնց պատճառները փնտրուել . ուս-  
տի քուկին հասկըցընելիքներըդ ան ասե՛ն  
վան ձգէ մէրթար հիմակվընէ չհասկընա-  
լու բաներովը իր միտքը խանգարեր . բարո-  
յականի ու հաւատոյ պարտքերը տղոց սոր-  
վեցընելը ճնողաց մէկ պարտք մըն է . բայց  
անոնց պատճառները սորվելէն առաջ ա-  
նոնց արտաքին նշանները կան որոնք զգայա-  
րանաց ձեռօք միայն կըլլան . ուստի նախ  
ան նշանները թո՛ղ սորվի . աղօթք ընելուն  
պատճառը, դժոխք երթալը, արքայու թիւն  
երթալը չիսորված, թող նախ միայն աղօթք  
ընել, ու խաչ հանել սորվի . երբ որ մեծնայ  
քեզի ասոնց պատճառը հարցընելու կարո-  
ղութիւն ունենայ նէ, ան ասե՛նը Աստու-  
ծոյ էութիւնն ալ կընայ հասկընալ, ան  
ատենվան ձգէ քուկին հասկըցընելու պատ-  
ճառներըդ :

Վերջապէս տղին հետ խօսած ասե՛նըդ,

դուրցածդ բնաւ խմայողական ու դատողական կարողութիւններուն չխախտի առաջարկես . բնաւ իրմէն խմանալ ու դատել չխախտի սպասես . լսել է որ տղին կամքին ալ չխախտի ձգես ան բաները որ խմանալով ու դատելով կրնամք ճանչնալ :

Մտի նաեւ որ , տղին մինչեւ երեք տարի ունեցած կամքը , անօթե՛նայ նէ ուտելու , քունը դայ նէ՝ քնանալու , աչքը բան մը տեսնայ նէ՝ նայելու շոշափելու , բաւ մը լսէ նէ՝ արտասանելու կամք է : Թէ որ աս կամքերուն դպչելու իրաւունք չունիս նէ , ասիէ անդին բան մին ալ ուզէ նէ , ան ալ չխախտի ընես : Տղին քունը եկաւ , քրնանայ պիտի . բայց չխախտի ուզէ մօրը թեւին վրան կամ անկողինը քնանալ : Հոս՝ դատել պէտք է . մօրը թեւին վրայ քրնանայր ազէկ չէ թէ՛ մօրը թէ՛ տղին : Ասիկայ տղան չիկրնար դատել . ուտտի հոս տղին չիյնար ուզելը կամ չուզելը :

Տղին ինչ որ պէտք է , ան ընելը բրնա կան է . ինչ որ պէտք չէ նէ , ան ընելը տրդին խել մը մալութիւններու սերմ տուած պիտի ըլլաս : Տղայ մը ասանկ մեծցրնես նէ , ետքը ինքնահաւան ու բռնաւոր կրլայ : Ամիկին հեղինակը կըդրէ որ , մայր մը այնչափ իր տղին կամքը ընելու ետեւէ է եղեր որ , ինչ որ ուզէ չէ չիկայ եղեր . տղին ծառայող դայեակները խրատուած էին՝ ինչ



որ ուզէ նէ տալու : Օր մը տղան կուլայ  
կըպօռայ . մայրը կըրբսէ , դուրս կելլայ կը  
հարցընէ թէ ի՞նչ է : Տղին թոթովախօս  
բառերէն սա կըհասկընայ որ , բան մը կու  
զէ կոր , ու դայեակը շտար կոր . ալ չըս  
պատէր որ ինչ ուզածը խննայ , կերթայ  
երկանը կըզուրցէ որ , նայէ սա չար դայեա  
կը ինչպէս տղան կըլացընէ ուզածը շտար .  
վընտելու է չեմ ուզեր կըսէ : Տղին հայ  
րը դուրս կելլայ նայելու , ինչո՞ւ տղին ու  
զածը չես խտար կոր բտելով կըսըրդտղի :  
Ղայեակն ալ կըպատասխանէ թէ ես չեմ  
կընտար տար . դուն եկուր տուր : Տղին ու  
զածը լուսինն է եզեր : Ղայեակը տղան  
զբօսեցընելու ( էյլէնախիրմիշ ընելու ) համար  
լուսինը ցրցուցեր է , տղան նայեր և հար  
ցուցեր է թէ սա ինչ է , դայեակն ալ  
լուսին կըսեն ատոր բտեր է նէ , տղան բտ  
կըսեր է լուսինն ուզելու :

Տղան տկար է , ու ինք իր տկար եղա  
ծը կըզգայ , մեղի պարտք է իր տկարու  
թեանը օգնել , խնամք ընել , իրեն պէտք  
եղածը տալ : Ղայց չկողտի մեղի հրամայէ .  
իրաւունք մը չունի հրամայելու . մեր բաւ  
ծը բարեբարութիւն մըն է , որ բնութիւնը  
մեղի պարտք է դրեր : Աստի իրեն ուզածը  
ընելու համար , նախ՝ նայէ իրեն պէտք է  
մի : Թէ որ պէտք է նէ մի խնայեր , բայց  
ընելու ատենըզ այն կերպիւ ըրէ որ , տղան

հասկընայ որ քուկին ըրածդ իրեն ուղերուն  
 համար չէ, հապա իրեն պէտք ըլլալուն  
 համար է: Տղան բան մը տեսնայ նէ նայիլ  
 կուզէ ըսինք, պէտք է որ նայի տեսնայ,  
 տեսածին գաղափարները իր յիշողութեան  
 մէջը բովանդակէ: Մի գրկեր անխկայ տես  
 նալէն, բայց բէր ըսէ նէ, մի տանիր, առ  
 զինքը հոն տար, բան մը շօշափել ուղէնէ,  
 մի խնայեր, թող տուր, պէտք է որ նայի,  
 պէտք է որ շօշափէ, պէտք է վերջապէս  
 որ իր զգայարանները փորձէ ու զարգա  
 ցնէ, պէտք է որ յիշողութիւնը ու երե  
 ւակայութիւնը լեցնէ, բայց ուղած բանը  
 թէ որ անկարելի է նէ, մերթար իրեն եր  
 կար բարակ բան հասկըցնէր, միայն այս  
 երկու խօսքը գործածէ ԱԼԼԼայ կամ ՉԼԼԼը,  
 ուրիշ բան մըսեր: Բայց մէյ մը չըլլար  
 ըսես նէ, ալ ետքը կըլլայ մըսեր: Պզտիկ  
 տղաք աչվնին բացածնուն պէս, իրենց  
 խնամակալու՝ ճնողքնին կրճանչան, անոնք  
 կրփնարուեն, ու անոնց հաւատարմութիւն  
 (էմնիէթ) ունին: Արդգան որ անոնց ձեռ  
 քն են, ու անոնք իրենց աղէկութեանը  
 կրջանան, կրդգան որ անոնք իրենցմէ աւելի  
 գիտեն ու կրհասկընան, վերջապէս կատա  
 րեալ կրկարճեն իրենց ճնողքը: Աստի  
 թէ որ մէյ մը կըլլայ ըսեն, մէյ մըն ալ  
 չըլլար ըսեն նէ, ի հարկէ առջի կամ ետքի  
 զուրցածնին ու կտոքերնին օրինաւոր պատ

ճառ մը չունէր : Բ' սել է որ ալ անկէ ետ-  
քը քեզի հաւտարմութիւն չիպիտի ընէ  
ուրիշ անգամ մըն ալ չէ ըսես նէ : Արտ-  
հետեւ իրենց հետ չես կրնար տրամախո-  
սել որ չէ ըսելուդ սրտաճառը հասկընան ,  
միշտ կրկարձեն որ չէ ըսած բանըդ չէ թէ  
անկարելի է , հապա դուն չես ուզեր կոր :  
Բուկին չիկամելըդ իրենց բռնութիւն կե-  
րելի , որուն վրայ ալ կուլան ու կըտրու-  
մին , ու թէ որ լալուն նայելով խօսքը ը-  
նես նէ , ալ գլուխ չես կրնար ելլալ . աը-  
ղան ինչ որ ուզէ նէ , քեզի ընել կուտայ ,  
դուն իրեն բարերար ըլլալու տեղըդ ծա-  
ռան կըլլաս , ու ետքը աղան մեծնայ նէ ,  
ինքնահաւան ու բռնաւոր կըլլայ : Չիկար-  
ծըլի որ մեր սղտիկուց մեծնալու կերպը  
մեր վրայ ետքը ներգործութիւն չունի ,  
ամէն մտլութեանց սերմը ան ատենէն  
մեր սիրտը կըմընայ :

Պէտք է որ սղտիկ աղան իրեն խնամող  
ճնողքները սիրել ու անոնց հնազանդիլ  
գիտնայ : Բուն իրեն ըրածիդ մէջը սիրելը  
հասկըցընես նէ , ինքն ալ քեզ կըսիրէ ու  
ասոր համար դժուարութիւն մը չիբաշեր ,  
որովհետեւ ասիկայ բնական բան մըն է :  
Իրեն ըրածդ կըսեմ կոր , չէ թէ զուրցածդ .  
որովհետեւ զուրցածդ բան մը չեն հաս-  
կընար , զուրցածդ դատելու կարողութիւն  
չունին : Թէ որ աղան իր ճնողացը կամքին

հնազանդիլ չխտրվի նէ, ինչպէս պիտի կա-  
ռավարես : Այլայ պատուհանէն վար կը-  
կախվի, Շարունանին կամ Հասարակին քովը  
կերթայ, վար կըծրուի, կընայիս որ պիտի  
լինայ, եկնը կըսես, չիդար, և ինչուդ դուն  
հասնիս նէ, կտրելի է որ մէջը իննայ խեղ-  
դըվի, երթաս հասնիս ասգին ալ բերես նէ,  
կուրայ կըստայ : Պատճառը աս է որ քեզի  
հնազանդիլ չես սորվեցուցեր, թէ որ ընե-  
լիքըդ իրեն կամբին չիծրդելիր նէ, պատճառ  
մըն ալ չէր ունենար ոչ բարու և ոչ վտանգա-  
ւոր բաներու մէջ գտնելու, թէ որ ազնի  
ի բնէ քու վրայ ունեցած վարկուծը չա-  
րէիր, քեզի ունեցած հաւատարմութիւնը  
չիտորնցընելիր նէ, քեզ միշտ կատարեալ  
կրկարծէր, ու խօսքըդ պատգամի պէս կը-  
բաներ, ու դուն ալ այս կերպիւրս դիւ-  
րութեամբ կընայիր անիկայ կառավարել :  
Վնութիւնն ալ կուզէ որ, դուն ան կառա-  
վարես, չէ՛ թէ ան քեզի : Վնաւ մըսեր, թէ  
որ ձայնըդ կըտրես նէ՝ քեզի սա կուտամ  
կամ սա կընեմ, ասիկայ հնազանդիլ չէ,  
դաշինք ընել է, մեծը պզտիկին հետ դա-  
շինք չնէր :

Բայց ասոր հակառակը, բնաւ մի բար-  
կանար, իրմէն տկարին բարկանալը խելքէ  
դուրս բան է : Բարկանալը բնական բան  
է, բայց երբ ու որս, երբոր մէկը գէշու-  
թիւն մը ընէ ու գէշութիւն ընելու ալ

կամք ու կարողութիւն ունի նէ : Այլ իւր ընտանիքն իրմէ տկարներուն չիբարկանար, թէ  
 եւ յանդգնին ալ նէ : Տղին ինչ իրաւունք  
 ունիս բարկանալու, ընտանիքի քեզի սրգոյցը  
 ներու սրտածառ կրնայ տալ, արդեօք քեզի  
 գէշութիւն մը ընելու կարողութիւն ունի .  
 կամ թէ գէշութիւն ալ ըրած ըլլայ նէ՝ դա  
 տողութիւն ունի՞ որ գէշութիւն ըրածը  
 գիտնայ, ըրածը գէշութիւն եղածը չի գի  
 տէ, ինչպէս քուկին բարկանալու հասկը  
 նայ : Թէ որ քեզ սրգոյցուցնէ, անոր բար  
 կանալու քեզի բարկացիր, որովհետեւ ա  
 նոր անկարգութեանցը պատճառը դուն  
 ես : Թէ որ անխիայ կառավարել գիտնայիր  
 նէ, քեզի սրգոյցընելու պատճառ մը չէր  
 խտար :

Աւելի բնութեան դէմ է, ու բարբարո  
 սութիւն է ասանկ սղտիկ տղան պատժելը,  
 ձեռքը : Պատժելուն նպատակը ուղղել է,  
 ուղղութեան դառնալու համար՝ սէտք է  
 որ մէկը ըրածին գէշ եղածը գիտնայ, կամ  
 իմանալու կարողութիւն ունենայ : Աւտի  
 անկէ առաջ պատժելու ձեռքը ուրիշ  
 բան չանցնիր, բայց միայն տղան վախը  
 նել : Ինչու համար պատժեցիր նէ, ան բա  
 նը ընելէն ետ չի կենար, բայց միայն քուկին  
 առջեւը ընելէն կրտախնայ, չէ նէ ուրիշ  
 տեղ ընելիքը կրնէ, ասով տղան չէս ուղղեր,  
 չէս շտկեր, գէշութեան մը ետ չէս կեցը

ներ , հասրա աստլ ուրիշ գէշու թիւններ ալ  
կըստրվեցընես : Արտհեաեւ պիտի նայի որ ,  
ինչու համար պատժեցիր նէ անիրայ ուրիշ  
տեղ ընէ . բու առջեւըդ չընէ , ասոր համար  
պէտք է որ հնարքներ բանեցընէ , ու թէ  
որ դուն ալ ըրածը լես նէ , պիտի ժխտէ  
( ինքեար ընէ ) , ըսել է որ սուտ պիտի զուր  
ցէ . ըսել է որ ասանկ պատժելովդ խո  
բանանկու թիւն ստախոտու թիւն պիտի սոր  
վեցընես : Պատժելու առննրդ պէտք է որ  
միտքրդ ըլլայ միշտ , թէ տղան ինչուկ ինչ  
բանի համար պիտի պատժուի նէ , ան բա  
նին գէշ եղածը գիտնալու հասկընալու  
կարողու թիւն չունենայ , այսինքն դատել  
չիգիտնայ նէ , պատիժը անկարգ ու անար  
տեհ բան մըն է . ուստի պղտիկ տղաքը  
պատժելը բոլորովն կըհեքքեմք :

Պատժելուն մէկ ուրիշ կերպը կայ որ ,  
գրեթէ պատժելն գէշ է , որովհետեւ պատ  
ժելով կարելի է որ երբեմն վախնալ չիտը  
վին , բայց աս ըսելու կերպովըս միշտ վախ  
նան պիտի : Տղան լայ կամ չուզած մէկ բա  
նրդ ուզելու ըլլայնէ , ձայնը կըտրելու համար  
երեսն ՚ի վեր պօռալ կամ պատերուն զար  
նել , ուրուականներու ու Փէրիներու անուն  
ներով վախցընել , Ո՛րիներ , ու Խառախօնձօլօղ  
ներ հրաւիրել , և այլն . տղայ մը ասանկ  
վախցընելու ատենրդ չիկարծես որ Փէրիներ  
ընէ Խառախօնձօլօղներէն կըվախնայ : Վ.ուկին



անսպաշտութեամբ հաւտացած էակներու դինչ եզածը խեղճ տղան չի գիտեր, բայց քուկին սարսափելի կերպերէ գիրեն ալ սարսափիլ կուգայ, նայէ ըսես նէ կրնայի, կը դողայ, կը վախնայ, որ ան սարսափելի բանը ինչպէս պիտի գայ: Տղայ մը ասանկ վախցուցեր էին Խոսեֆի Երեմի, հարցուցի թէ ո՞վ է Խոսեֆի Երեմի, Պէտրոսն է ըսաւ: Տղան երեք օր առաջ Զամառն էին ըրեր, ստորիցին կարելէն ցաւ զգացեր էր, Խոսեֆի Երեմի ան պիտի ըլլայ կարծելով, վախցեր էր: Վիտենս՝ աս վախնալուն արդիւնքը ինչ կը ըլլայ: Ասիս կարելի է որ հիւսանդանայ, կամ մեռնի: Մտ բանի մը տեղ չի գրնեմք: Արովհետեւ ասկէ գէշը կայ, և այս է որ՝ ասանկ վախնալով մեծնայ նէ, աս վախնալու գաղափարներուն գերին եղած կը ըլլայ, և ասանկ վախկոտ, անկար ու խենթ ըլլալուն պատճառն ալ դուն պիտի ըլլաս: Չէ թէ միայն վախցրնելու չես, հապա տղին բանէ մը վախնալը տեսնաս նէ, նայիս պիտի որ ատ բանէն չի վախնալ սոր վեցրնես: Չի վախնալ սոր վեցրնելու համար պէտք չէ որ վախցրնելու բաները փրնտըռես տղին ներկայացրնես, սպասէ որ ան բաները իրենց ստորի գան:

Տղան իր տկարութիւնը զգալով, ինչ նոր բան տեսնայ նէ կը վախնայ, ու վախնալու կամ չի վախնալու համար քուկին ե-

րեսըդ կրնայի . դունն ես իրենն դաստիա-  
րակը . թէ որ միշտ նորանոր բաներ տես-  
նալու սովորու թիւնն ստանայ նէ , նոր բան  
մը տեսնալէն չիվախնար . բայց պէտք է որ  
դունն ալ վախնալ չիցըցընես : Արբ որ ճճի  
( պէօճէք ) մը կամ ուրիշ ասոր պէս բան մը  
տեսնես նէ տղին վրայ , վերցուցէք սալի-  
կայ ըսելով դողդըլալով մի՛ պօռար : Աւ-  
է որ քիչ մը ճճին տղան խածնէ , քան թէ  
վախնալէն հիւանդանայ . կամ վախնալ  
սորվի :

Թէև դուն վախցընելու կերպ ալ չի  
ձեւանաս , երբեմն տղան կրվախնայ : Ան  
ատենը խոհեմու թիւնը կուզէ որ , ան բա-  
նը հեռացընես՝ խնդալով . բայց իր աչքին  
առջեւէն չիվերցընես . դուն քովը երթաս  
հետը խաղաս , առանց վախ ցըցունելու :  
Ասանկով տղան առաջ առանց վախնալու  
նայիլ կըսորվի . ետքն ալ ինքը մօտ դալով  
կրնայ հետը խաղար : Ա երջապէս ան ատե-  
նի ընելիքը՝ Հոմերոսին պատմածին պէս  
Հեկտորին ըրածը ըլլալու է : Հեկտորը մը  
նաս բարով ըսելու համար Անդրոմաքին  
քովը եկաւ նէ , պզտիկ Աթթինաքսը իր հօ-  
րը գլխանոցին վրայի փետուրէ ցըցունքը  
( սօրղուճը ) տեսնալով վախցաւ , հայրը չի  
կըրցաւ ճանչնալ , ու գնաց կաթնատուին  
գիրկը փախաւ : Հեկտոր ինչ ըրաւ , բը-  
նեց գլխանոցը վար դրաւ գնաց տղին քո-

վը սիրեց, ասանկով տղին վախը վերցաւ :  
 Ամիլին հեղինակը կրտէ որ պէտք էր տղան  
 առնէին գլխանոցին քովը տանէին հետը  
 խաղցընէին ու գլուխը դնէին, և այլն :  
 Ահա աս կերպով ինչ բանէ որ տղան կըսու-  
 կայ նէ, ան բանին կըրնայ ընտելանար (ա-  
 լըշմիշ բլար) :

Նմանապէս ամպ գոռայ կամ յանկարծ  
 ասնդուգբէն բան մը լցնալովը ճաթըռտոց  
 մը ելլէ նէ, տղան ան ատենն ալ կըվախ-  
 նայ : Անր քաղաքը ամէն որ թնդանօղի  
 ձայն առնելով, պէտք էր որ այս ամպ գո-  
 ռալուն սորված բլայինք : Այց մեր մէջը  
 անգամ ամպի գոռալէն և կայծակէն վախ-  
 ցող կայ, ես շատերը գիտեմ, որ երբոր  
 փայլակէ նէ, չիկրնար վայրկեան մը կենար  
 նայիր, պէտք է որ երթայ մութ ու պա-  
 տուհանները գոց սենեակի մը մէջ նստի,  
 ևս առաւել երկինք գոռայ ու կայծակ  
 զարնէ նէ, ասանկ վախնալը մի կարծեր որ  
 կայծակին մարդ ըսպանները գիտնալէն է,  
 չէ, հոպա մի միայն պզտիկուց վախնալուն  
 է : Պզտիկ տղան աս երեւոյթներէն չիվախ-  
 նալ սորվեցընելու համար, պէտք է որ ա-  
 ռաջ կըտոր մը բորակ (կիւլերչիլէ) բռնկ-  
 ցընես առջին, որուն վառիլը տեսնալով,  
 տղան կըխնդայ : Վիչ մը ետքը բորակը  
 կըշատցընես, կամ պզտիկ Ֆիլէնկ մը կըբը-  
 ռնկցընես : Այց թէ որ տեսնաս որ կը-

վախնայ կոր , ալ ձգէ . քանի մը որ անցնի  
 նորէն կրտսիս , վերջապէս անոր կրտորվի :  
 Անկէ ետքը հրազէնք ( թիւֆէնկ ) և էն ետ-  
 քը թնդանօղ նետուած տեղը կրտանիս , ու  
 ասոնց ձայնէն ու բոցէն չիվախնալ կրտոր  
 վեցրնես : Աւ երբոր անկէ ետքը փայլակէ  
 կամ դոռայ կամ կայծակ զարնէ նէ , տղան  
 կամ բոլորովին չիվախնար , կամ վախնալու  
 համար քու երեսըդ կրնայի : Թէ որ դուն  
 ասիկայ քանի մը տեղ չիդընես նէ , ալ բնաւ  
 չիվախնար : Պզտիկուց դուն կայծակէն ,  
 երկինք դոռալուն ձայնէն չիվախնալ սոր  
 վեցուր , երբոր մեծնայ նէ կայծակէն փախ  
 չելուն սրտածառները այն ատենը խմացուր :  
 Արբեմն մութ տեղ նստելէն կրվախնան :  
 Մութը շատ մարդ կրվախցրնէ , որովհէ-  
 տեւ մթին մէջ մեր սրահապաններուն մե-  
 ծը , այսինքն տեսանելիքը անգործ կրմընայ :  
 Ահա ասոր համար վախկոտները աւելի դի-  
 շերը կրվախնան քան թէ ցորեկը : Ասոր  
 դեղ , տղան կառնես գիշերները առանց  
 լուսի տանը մէջ կամ դուրսը կրպրտրտցը-  
 նես : Բայց սորվեցրնելու համար , պէտք  
 է որ խնդարով երթաս , հետը խօրաթես ,  
 ու մութի մէջ ըլլալդ մուցրնելով , կամաց  
 կամաց մինակ մութ տեղ նստելու կամ  
 մութ տեղ երթալու գալու սորվեցրնես :  
 Ախ սենեակին մէկ կողմը կըձրգես , քանի  
 մը ոտք հեռուն գործի մը սրտապելով հոն

ձգած կրլաս, ետքը կամաց կամաց սենեա-  
կին դրանք քով կերթաս. բայց հետը կը-  
խօրաթես, որ հոն եղածըդ գիտնայ: Քա-  
նի մը անգամ ասանկ ընելէն ետքը սենեա-  
կին դռնէն ալ դուրս կելլաս. բայց միշտ  
հեռըլանց խօսելով: Ա երջապէս գործ մը  
կրպատճառես կերթաս կուգաս, կամ տղան  
կրխրկես, ասանկով չխլախնալու կըսորվի:  
Շատ մարդիկ կան որ գիշերները մինակ  
չեն կրնար ստուկիլ. պէտք է որ մէկը հե-  
տերնին ըլլայ. գիշերը արտաքնոց ելլալ  
պէտք ըլլայ նէ, պէտք է որ իրենց հետ  
մարդ երթայ, կամ հեռըլանց հազան ու  
խօսին:

Տղաք ուրիշ շատ բաներէ կրնան վախ-  
նալ, ասոնց ուշադիր ըլլալով, ճամբայ փրն-  
տըսելու է տղին չխլախնալ սորվեցընելու.  
բայց չխլախնալ սորվեցընելու համար ինչ  
որ ընես, պէտք է որ տղան չհասկընայ որ  
իրեն համար է. ու բնաւ արտորալու չէ.  
սպասէ կամաց կամաց իրեն անխախտ թիւն  
դաս տուր. քանի որ մեծնայ, այն ատենը  
ուրիշ ճամփով ալ չխլախնալ կրնաս սորվե-  
ցընել: Ահա այս կերպովըս գործարանաւոր  
մարդը կրթելովըդ, մտաւոր մարդուն կըր-  
թութեանը սրատրատութիւն տեսած կըլ-  
լաս, որուն վրայ պիտի խօսխմք երկրորդ մա-  
սին մէջ:

## ՅԵՒԵՒ ՈՒՆՕ՝

Պատուաստ ( աշ ) ընեւ :

Օտղիկը անանկ սարսափելի հիւանդութիւն մըն է շատ անգամ, որ ժանտախտի չափ մնաս կրողործէ : Կններբորդ դարէն առաջ այս հիւանդութիւնըս յիշող հեղինակութիւն մը չիկայ : Այսպէ թէ այն ատենը այս տարափոխիկ ( պուլաչըխ ) փստը երեւան ելաւ , կամ թէ մինչեւ այն ատենը բժիշկները չիճանցցան : Կնչ և իցէ , իններբորդ դարուն մէջ Ռազէզ անուն հռչակաւոր սրարսիկ բժիշկը ծաղիկին տեղ տեղ սաստկանալը տեսնալով , ասոր վրայ երկար բարակ գրեց , և ամենուն գիտցուց ուճանցուց այս հիւանդութեան սարագայները ու փտանգները :

Կերեւի որ Կովկասու ու Արարիոյ ազգերը տեսնալով որ ամէն մարդ իր կեանքին մէջ դէթ անգամ մը , երբեմն երկու երեք անգամ այս հիւանդութեանըս հանդիպելով կամ կրմեռնի , կամ չիմեռնի ալ նէ կերպարանքէ կելլայ կոր , դեղ մը փրնտըռեր են որ այս սարսափելի փստը հեղացընէ : Բայց կամաց կամաց սրատերագմները , ազմուկները խռովութիւնները Արեւելեան աշխարհքէն գիտութիւնն ու գրականութիւնը վերուցին , ու չեմք գիտեր



ուլ փրնտուեց ու ուլ գտաւ ասոր հնարքը :  
 Միայն սա գիտեմք որ , ետքի դարերուս մէջ  
 Արեւելքի Ասիոյ կողմերը ասդին անդին քա-  
 նի մը գեղ ընող կնիկներ տեսնըվեցան , ո-  
 բնք ծաղիկին կեղեւովը ծաղիկ չիհանողնե-  
 բուն պատուաստ կրնէին , որով պատուաս-  
 տեալները արհեստիւ ծաղիկ կըհանէին .  
 ու այս կերպիւ հանած ծաղիկնին շատ  
 անգամ թեթեւ ըլլալուն , կամ կերպարանք  
 նին փոխալելով գեղեցկութիւննին չէր եր-  
 թար , կամ գէթ չէին մեռներ : Սա ալ գիտ-  
 ցընելու եմք որ , այն ատենուան պատ-  
 ուաստ ընել տուողները գրեթէ աւելի  
 գեղեցկութիւննին չիտրտընցընել ուղողնե-  
 բըն էին , քան թէ մահէ վախցողները . ուս-  
 տի գեղեցիկ տղաքը պատուաստ ընել կու-  
 տային , ու տգեղները երեսի վրայ կըծըդէ-  
 յին : Ինչ մտօք կըլլայ ըլլայ , պատուաստ ը-  
 նել կար Արեւելք , մանաւանդ Աստան-  
 դընուպօլիս , երբոր Աէտի Աօթթէյ Աօն-  
 թակիւ անգղիացի աղնուուհի տիկինը Աս-  
 տանդնուպօլիս եկաւ նէ , տեսնալով որ  
 պատուաստի միջնորդութեամբ ծաղիկ հա-  
 նողները թեթեւ կըհանեն կոր , շուտով

1 Ծաղիկի հիւանդութիւն շատ եղած ատենը , թէ  
 որ պատուաստի ստորեալ հիւթը ձեռք չիկընաս անցը-  
 նել նէ , բուն ծաղիկին կեղեւը առնելով , քիչ մը ջրով  
 կըթըրջես ու պատուաստ կընես , պատուաստեալը ծա-  
 ղիկ կըհանէ բաց ստիւրաբար թեթեւ :

մը այս հնարքը Անգղիոյ իմացուց 1721 ին :  
 Անգղիացիք այս հնարքին աղէկութիւնը  
 տեսնալով, ամէն դի տարածեցին , մինչև  
 Ամերիկայ իրենց ձեռքովնին եղած տեղերը :  
 Քանի մը ատենէ ետքը՝ սաստիկ բայց խըն  
 դալու վէճերէ ու կռիւներէն ետեւ , Վաղ  
 ղիս ալ այս հնարքը գործածելու կամք  
 բրաւ :

Ան տտենը սկրսան ամէն տեղ ծաղիկին  
 կեղեւովը կամ թարախովը պատուաստ ը  
 նել , մանաւանդ Անգղիա , ուր ձրիապէս  
 ամէնն ալ տարուէ տարի պատուաստ ընե  
 լու ձեռք զարկին : Այն ժամանակները  
 Ալտտէսթրի մէջ Պէռքէյի բժիշկ Նէննէրը  
 տեսաւ որ , տարուէ տարի պատուաստ ըլ  
 լող մարդոց մէջէն՝ քանի մը կաթ կթող գե  
 ղացինեւուն վրայ պատուաստը չիրըններ  
 կոր , ու ինչ ընեն ալ նէ ծաղիկ չեն հաներ  
 կոր : Ասոր պատճառը փնտրուեց գտաւ որ ,  
 պատուաստի յարմարութիւն չունեցողները  
 այն մարդիկն են , որ կովին պտկուներին վը  
 րայ կովի ծաղիկ ՝ ըսված հիւանդութիւնը  
 գտնելված ատենը , իրենք ալ մատլըներնուն  
 վրայ խոց կամ կարած կամ սրկրրդած տեղ  
 ունեցեր են , ու կովէն կաթ կթելու ա  
 տեննին այն մատլըները ծիծին վրայ գըտ  
 նըված ծաղիկին հիւթին դպեր է , ուրկէ

իրենց մատըններուն վրայ գտնելած խոցերուն կամ կտրած տեղին քովընտիրը կովին ծիծին վրայ գտնելած ծաղիկին նման ծաղիկ դուրս է տուեր, ու քանի մը օրէն ետքը ծաղիկը չորցեր, մատերնին ալ ըռընացեր է: Այն ատենէն այն մարդիկը պատուաստի ու ծաղիկէն տարափոխելու յարմարութիւննին կորսնցուցեր են: Այննէր ասոր վրայ մտնտալէն ետքը, կովին պտկունքին վրայ ելած ծաղիկին թարախը առեր, սնով պատուաստ է ըրեր: Արտեանայ որ պատուաստը կովին վրայի ծաղիկին պէս պղտիկ խոցեր (չխաւններ) դուրս կուտայ կոր, ու այս կերպիւ պատուաստեալը մէկմալ ծաղիկ չիճաներ կոր: Այննէրին ետեւէն Վիլտոն, Վիմօն, Վուտլիլ և ուրիշներն ալ փորձեր ընելէն ետքը, 1798 ին հրատարակեցին որ, ծաղիկի գէմ նախապահ գեղը՝ կովի ծաղկով պատուաստելն է: Այն օրէն ամէն տեղ փորձեր ընելէն ետքը, այս կերպը սկրսան գործածել ու առջի կերպը մէկ դի թողուցին, քանի մը պատճառաւ:

Նախ՝ բուն ծաղիկը պատուաստես նէլած ծաղիկը միշտ թեթեւ չըլար, ու երբեմն մահ անգամ կրնայ պատճառել: Այլընդոք՝ կովի ծաղիկը պատուաստելը բընաւ վտանգ մըն ալ չունի: Թէ որ երկուքն ալ ծաղիկէն կրնան ապահովել նէ,

ի հարկէ քիչ վտանգ ունեցողը գործածել  
լու է :

Պատուատ ընելու համար կանոններ :

Նախ՝ ամէն հասակի մարդոց վրայ պատուատը կրբընէ . բայց տղայութեան ատենը պատուատելը աւելի աղէկ է . վասն զի մէյմը որ տղոց վրայ պատուատը դիւրաւ կրբընէ . երկրորդ՝ պատուատը ետքի ձգես նէ , կարելի է որ պատուատ չեղած ծաղիկ հանէ : Ամանք տղան ճնելէն քանի մը ժամ ետքը պատուատ քրին . բայց նախ՝ ասանկ կանուխ պատուատ ընես նէ , շատ անգամ չիբըններ . երկրորդ՝ ինչուկ երեք ամսըվան ըլլայ նէ տղան , վրտանդ մը չիկայ՝ . ուստի սովորաբար տղան երկուք ու կէս երեք ամսըվան ըլլայ նէ , ան ատենը կրպատուատեն :

Անոր պատուատին ծաղիկը շուտ կրբուսնի , ասոր հակառակը ձմեռը սաստիկ ցուրտերուն ժամանակը ուշ կելլայ :

1 Փարիզի Մաթէօին ճէնեփոպի Կոբէնի վնձակագրութեանը նայելով , երեք ամսըվան չեղած պզտիկ տղայները ծաղիկ չեն հաներ սովորաբար : Բայց սա ալ զուրջեմք որ , ասոր հակառակը երբեմն տղան ճնած ատենը ծաղիկը վրան կըծընի , ինչպէս որ Բլանք , Պուսթէ և Ռէյէ կրպատուեն :

Օրեր կամ տարիքը առած մարդը պատուաստելու համար, պէտք է որ մորթին սնդուծիւնը կակրղցընեն, որ մը առաջ թեւին վրայ Աճ մը դնելով, կամ թեւը լուալով : Ասոր հակառակը թուլամորթ տղայ մը պատուաստելու ըլլաս նէ պէտք է որ առաջ չոր կտաւով մը սլինդ սլինդ պատուաստ ընելու տեղըդ շփես :

Պատուաստին հիւթը երբ ու ինչպէս առնելու է :

Նախ՝ պէտք է որ ծայլիկին խոցերուն հիւթը սղտորելէն առաջ առնես, որ աշէկ բռնող ըլլայ :

Արկորդ՝ առնելու համար գործիքով մը խոցին վրան կամ երեսը կրծակես, բընաւ տակին չես դպչիր, ասանկով դիւրաւ մը հիւթը կրվաղէ, ու ինչ բանի վրայ սլէտի առնես նէ կառնես :

Պատուաստին հիւթը ինչպէս պահելու է :

Նախ մէկ սովորեալ կերպը՝ Նէշքէրի վըրայ պահելն է. Նէշքէրին ծայրը հիւթին կը քըսես, ու վրան քիչ մը չորնալէն ետքը Նէշքէրին տակը կըտոր մը լաթ կըպըլես, որ գոցվելու ատենը Նէշքէրին պահպանակին ( չէրչիլէին ) քովելով պատուաստը չկորնն

չի : Գործածելու ատենսկ կաթիլ մը սրաղ ջրով Նեշտէրին ծայրը կըթրջես , ու անանկ կըպատուաստես : Բայց աս կերպիւքս մէկ կամ երկու օր հազիւ կրնաս սրահել , անկէ ետքը կաւրի :

Նշրկորդ կերպը ապակիի ( ճամի ) վրայ առնելն է : Քառակուսի ապակիի մը կտոր կառնես , ծաղիկին խոցը կըծակես ու ապակին վրան քսելովդ , հիւթը վրան կառնես , նոյն մեծութեամբ ու նոյն ձեւով անանկ ապակի մըն ալ կառնես , ան ալ քսածիս պէս խոցին վրան կըքրես . ետքը կըբերես ապակիներուն թրջած երեսները մէկզմէկու կըփակցընես , անանկ որ , պատուաստին հիւթը երկուքին մէջ տեղը մնայ . անկէ ետքը չորս բոլորտիքը մեղրեմամբ կըպահպանես որ օդ չիբանի . ատանկ երկար ատեն առանց աւրովելու պատուաստը կըքնայ սրահիլ . ու երբոր գործածել պէտք ըլլայ նէ մեղրեմամբ կըքակես , ապակիները կըզատես մէկզմէկէ , վրան քիչ մը ջուր կըկաթեցընես , ինչուք որ իւղի թանձրութիւն ստանայ պատուաստին չորցած հիւթը , ալ անկէ ետքը կրնաս գործածել : Պակթօնօ երկան ու նեղ բարակ սրուակներ ( շիշէներ ) հնարած է : Պատուաստին հիւթը անոնց մէջը առնելէն ետքը , սրը ուակներուն երկու ծայրը հալեցընելով կըգոցէ : Այս կերպիւքս բնաւ ներսի դին



օդ չիբանիր . ու հիւթն ալ չիչորնար :  
Ոմանք ալ անագէ (խալայէ) բարակ  
թուղթերու մէջ կառնեն խոցին կեղեւնե-  
րը , հոն կըպահեն ու պատուաստելու ա-  
տեննին ջրով կըկակուղընեն ու կըգոր-  
ծածեն :

Պատուաստելու կերպը :

Թէպէտ պատուաստը ուր բլրայ կրբու-  
նէ , բայց սովորաբար թելի վրայ կընեն :  
Պատուաստ ընելու կերպերը շատ են , մենք  
սովորականները զուրցեմք :

Պատուաստին հիւթը թէ՛ ծաղկին խո-  
ցը ծակելուդ պէս իսկոյն առնես պատուա-  
տես , թէ վերը ըսած կերպովըս պահելով  
գործածես , պատուաստելու կերպը միշտ ա-  
տոնք են :

Նախ՝ ձախ ձեռքովրդ պատուաստելու  
թելը կրբուանես , ու մորթը կըծրգտես (կեր-  
միշ կընես) . միւս ձեռքովրդ ալ կտրելու  
գործիք մը կառնես , ինչպէս՝ Նէշֆէր , և այլն .  
պատուաստի հիւթին մէջ բերանը կըխօ-  
թես , ու թելին վրան՝ երկու գծաչափ մոր-  
թը կըկրտրես կէս գծաչափ խորունկու-  
թեամբ . ասանկով պատուաստը կըլըմննայ .  
ուրիշ ընելիք մը չունիս :

Նրկորդ կերպը որ հինուց մնացեր է ,  
մորթը կտրելու տեղը կըծակես : Վործա-

ծած գործիքդ սրածայր բան մը ըլլալու է .  
ասեղ Նէշուէր . և այլն : Ասոնց ամէնուն ալ  
արդիւնքը մի և նոյն է . միայն պէտք է որ  
սուր ըլլան : Վերը զուրջածիս պէս՝ ձախ  
ձեռքովդ թեւը կրբրունես . միւս ձեռք  
վրդ ալ գործիքդ կառնես ծայրը պատու-  
աստի հիւթին մէջ կրխօթես , ու վերէն ՚ի  
վար խոտորնակ (չէվինէ) ինչուկ կէս գրծա-  
չափ մօրթին մէջ կրխօթես : Ասանկ ընելէն  
ետքը՝ ընտոր խոտորնակ խօթեցիր նէ ա-  
նանկ ալ դուրս կրհանես գործիքդ . քանի  
մը բոպէ գործիքդ հոն թողուս նէ , գէշ  
չըլար , ասով հիւթը՝ արեան շրջանին դիւ-  
րաւ կրխառնրվի :

Ամէն մէկ թեւին վրայ մէյմէկ տեղ ը-  
նես նէ կօգտէ . բայց սովորաբար ճնողաց  
հանգըստութեանը համար ամէն մէկ թե-  
ւին վրայ երեք չորս հատ կընեն մէկըմէ-  
կէ հեռու :

Ասիկայ ըլլալէն ետքը պատուաստեալը  
կրհագվեցընես , սպասել պէտքը չէ . որով-  
հետեւ հիւթը շուտ մը ներս կրքաշվի :

Արբեմն առջի անգամին չիբրուներ , ան  
ատենը նորէն ընելու է . կարելի է որ եր-  
րորդ անգամ մըն ալ ընել պէտք ըլլայ :  
Ինչ և իցէ՝ ՚ի հարկէ էն վերջը կրբրունէ :

Պատուատ ըրած օրէդ ինչուք 3-4 օր  
քու ըրած խոցէդ ուրիշ բան չես կրնար  
տեսնել . խոցդ ալ ստիտաբար սղտիկ ըլլա-  
լուն , շուտ մը կըդոցվի , ու դրեթէ բան  
մըն ալ չես տեսնար : Բայց 48-60 ժամէն  
ետքը կըտեսնաս որ պատուատ ըրած տե-  
ղոդ քիչ մը պնդութիւն կայ , որ մատովդ  
ալ կրնաս զգալ : Բովանց նայիս նէ կըտես-  
նաս որ այն տեղը քիչ մը վեր է ելեր , ու  
դեղինի վրայ կարմրութիւն մը ստացեր է :

Արրորդ օրը կըգտնաս որ խոցին կեդ-  
րոնը մօրթին փակած է , ու չորս բոլորտիքը  
կարմիր ու վեր ելեր է :

Չորրորդ օրը , բոլորտիքը աւելի կար-  
միր ու աւելի վերացած կըգտնաս . անանկ  
որ , հեռուանց նայելովդ ալ բոլորտիքին  
վեր ելլալը կըտեսնաս : Այն օրը խոցին  
կեդրոնը բոլորտիքին մօրթին կաթած ու կո-  
խած խորունկ է . ու բոլորտիքը ինչուք մէկ  
ու կէս դճաչափ կասկարմիր ու բորբոքած է :

Աթերբորդ օրը խոցը տափկըցած կը-  
գտնաս , ու կարմրութիւնը՝ խոցին կեդրո-  
նը ու քիչ մը հեռու բոլորտիքը միայն կայ :  
Արկուքին մէջ տեղը ուրիշ բոլորակ մը կայ  
որ , ճերմկութիւն ստացեր է . ըսել է որ  
խոցը լինալ սկսեր է :

Աթերբորդ օրը խոցը կըմեծնայ , կու-

ուենայ ու կրկնապուտնայ, բոլորտիքը եղած կարմրութիւնը կրբագփի ( բեմպէլէնմիշ կըլլայ ) ու կըտարածի :

Իննեբրորդ և տասնեբրորդ օրը խոցը մէկ դիէն կըմեծնայ ու կըլենայ :

Մետասանեբրորդ օրը կըհասնի, այն օրը ծակես նէ մէջէն հիւթ մը կըվազէ :

Երկուտասանեբրորդ օրը կսկըսի չորնալ, ու կեդրոնը կեղեւի նշոյլ մը կըցըցընէ : Ինչ չուկ ան օրը խոցին մէջի հիւթը սղտոր չէր, այն օրը կսկըսի պղտորիլ, բոլորտիքի բորբոքումը ու ուռեցքը կիջնայ, ու քովի մորթին շապիկը կսկըսի կեղեւիլ ( սոյուլ միշ ըլլալ ) :

Երեքտասանեբրորդ օրը, խոցը բոլորդ վին սղտոր կըլլայ, ու դեղինի վրայ գոյն մը կուեննայ, ծակես նէ մէջէն թարախ կը վազէ : Այն օրը խոցին չէ թէ միայն կեդրոնը, այլ բոլորն ալ կեղեւի կերտարանք ստացեր է :

Չորեքտասանեբրորդ օրը բոլոր խոցը պինդ է, կամնայ կամնայ կսկըսի սղտորվնալ չորնալ ու թիւանալ ( սեւնալ ), ու քանի որ խոցին բորբոքումը երթայ, մորթին ուռեցքըն ալ կիւնջնայ : Ասանկով կեղեւը բացը կելլայ ինչուկ քսանըչորսեբրորդ կամ քրսանըեթնեբրորդ օրը, ալ ան ստեներ կեղեւըն ալ կիւնայ : Երբեմն ուրիշ կեղեւ մը կուգայ դեղինի վրայ, աս ալ կիւնայ ու

տեղը արած ( պէրէ ) մը կը գտնաս : Այս ա-  
րածը խորունկ , սմբած ու մէջը շառաւիղի  
պէս գիծերով լեցուն է , ինչպէս բուն ծա-  
ղիկները : <sup>1</sup>

Պատուաստին գիպուածները :

Սուրբարար տենդ չի գար : Հատ ան-  
գամ միմիայն պատուաստին տեղը կը կենդայ ,  
կերի , երբեմն ալ բան մըն ալ չըլար : Ա-  
սոր հակառակը երբեմն սաստիկ տենդ կու-  
գայ , կամ խոցին բորբոքումը թեւին վըայ  
կըտարածի , ուրիշ տեղ ալ թարախ կը կապէ :

Այն ատենի ընելքը :

Պատուաստին համար ընելք մը չիկայ .  
տղան բռնել տունը բանտարգել , ծոմ կե-  
ցընել պէտք չէ : Իայց թէ որ տենդ գայ  
կամ ուրիշ բան մը պատահի նէ , քանի մը  
որ կերակուրէ ժուժկալուժիւն ( փէհրիզ )  
ընել կուտաս , ու ուրիշ ընելքները բժիշ-  
կին կը հարցընես :

<sup>1</sup> Երբեմն խոցը երկրորդ օրը , երբեմն ալ ասոր հա-  
կառակը 20-24 օրէն ետքը կսկսի ծայր տալ : Անգամ մը  
երկու պատուաստ ըրած տեղիդ խոցերը մօտ ըլլալուն  
կըմկտեղեն , մեկգմկու կը կըլային ու կըլոր ձեւ չեն ու-  
նենար . անգամ մըն ալ ծաղիկի խոցին հետ սուտ ծաղի-  
կի խոց ալ կըլէ : Երբեմն խոցը պատուաստ ըրած տեղը  
չեւեր , ուրիշ տեղ կըլայ ( Ռէշէ ) :

Մուտ ծաղիկը ճշմարտան Բնչպէս որսչլու է :

Գիտնալու է որ սուտը կամ պատուաստ  
ըրած օրըդ կամ երկրորդ օրը կակրսի , ու  
մէկ երկու օրուան մէջ ալ կըլքմըննայ , ու  
կեղեւը խնայէն ետքը տեղը սմբած ու ծա-  
ղիկինին պէս արած չես գտնար : Հիմա էն  
վերջի հարցունելքը սա է :

Պատուաստը ծաղիկին նախարար գեղն է մի :

Աշխարհքիս ամէն կողմը պատուաստ եղող-  
ները հազարներով ծաղիկ հանելուճն , շատե-  
րը հաւատարմութիւննին ասկէ վերուցին :

Կան ալ որ ծաղիկ ելլալուն պատճառը  
պատուաստողին գէշ պատուաստ ընելը  
բռնելով մեղադրեցին :

Պատուաստողներուն մէկ քանին ալ ի-  
րենց պատուաստ ըրած մարդոցը ծաղիկ  
հանելին լսելով , իմ պատուաստ ըրած մար-  
դըս ծաղիկ չհաներ , անիկայ ծաղիկ չիպի-  
տի ըլլայ ըսին : Ամէն մարդ կըհասկընայ աս  
խառնիխուռն կարծիքներէն առաջ գարու-  
վնասները :

Աստի ասոնց վրայ մտմտալով պատուաս-  
տի վրայ այսչափ երկար գրելը պարտք մը  
սեպեցի : Չէնէ գիտեմ որ , ասկէ առաջ  
գրածըս ու ասկէ ետքի զուրցելիքըս աւե-  
լի բժշկականութեան գրքի մէջ կըվայլեն ,  
քան թէ հոս : Աստի կարճապէս լմընցը-



նեմ ըսելով: Ասիս՝ այն պատուաստողը որ իր պատուաստ ըրած մարդուն ծաղիկ հաները անկարելի բան մը կրկարծէ, գիտնայ որ պատուաստեալները ծաղիկ կրհանեն. չէ թէ մէկ անգամ, հասցա երկու երեք անգամ ալ: Աստի թող ասկէ ետքը չըսէ որ իմ պատուաստ ըրած մարդըս ծաղիկ չի հաներ, ուրեմն քուկին հանածըդ ծաղիկ չէ: Արկրորդ՝ պատուաստը գէշ եղեր է քսելով օրինաւոր մարդիկը մեղադրողներն ալ գիտնան որ, Արոսպա կառավարութեան կողմանէ ընտրոված մարդոցը ըրած պատուաստն ալ երբեմն չիլըրնար կոր ծաղիկէն ազատել:

Վերջապէս անոնք որ աս եղածները տեսնալով պատուատոյն չիհաւտալիք մը կրցունեն, անոնք ալ գիտնան որ, Վրուսիոյ ու Վերմանիոյ մէջ այս խնդիրը շատ աւտեն վեր վար ընելէն ետքը, պատուաստը ծաղիկին նախապահ դեղը չէ ըսող չեղաւ: Քանի մը տարի առաջ ալ Փարիզի բժշկակա նութեան արքունի ձեմարանը գործակալներ ընտրեց որ երթան փորձեն նային արդեօք պատուաստը ծաղիկին դէմ օգուտ մը ունի թէ չէ. ու թէ որ օգուտ ունի նէ՛ ինչ կերպ բանեցնելու է: Ծն տարիէն մինչեւ հիմա աս վէճը կըբռլեր, այս տարի կտրեցին: Ահա հիմա Փարիզի Ղեմարանին կտրած խօսքը:

Նախ՝ պատուաստը ծաղիկին նախապահ  
դեղն է, բայց երբեմն պատուաստեալը  
ծաղիկ կըհանէ :

Արհրորդ՝ պատուաստեալը ծաղիկ հա-  
նէ նէ, շատ անգամ թեթեւ կըհանէ :

Արհրորդ՝ պատուաստը ատենէ մը ետքը  
կը ուժը կըկորսընցընէ, անանկ որ, խոհե-  
մութիւնը կուզէ որ 8-10 տարին անգամ  
մը նորէն պատուաստ ըլլայ :

Վ Ե Ր Զ

Ա-ըն Ս-ին :

# Յ Ա Ն Կ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժա

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Տղա մը մօրն արգանդը յղանալէն մինչև երեք տարեկան հասակին հարկաւոր խնամքները .	1
ԳԼ. Ա. Եղու.թեան վրայ .	1
ՅՕԴ. Ա. Եղի կնկան մը զգուշութեան կանոնները .	3
ՅՕԴ. Բ. Եղի կնկան մը կաթին նախագուշակութիւնները .	12
ԳԼ. Բ. Տղայ մը ծնածին պէս ինչ ընելու է .	14
ԳԼ. Գ. Նոր ծնած տղին սնունդին վրայ .	29
ՅՕԴ. Ա. Նոր ծնած տղին ինչ կերպընելու է .	29
ՅՕԴ. Բ. Ե՛րբ կաթ տալ սկսելու է .	35
ՅՕԴ. Գ. Ի՛նչպէս ծծել տալու է .	34
ՅՕԴ. Դ. Մայր մը ինչ կազմուածքի ու ինչ վիճակի մէջ ըլլայ նէ կաթ կրնայ տալ .	41
ՅՕԴ. Ե. Մայր մը կաթ տալու ատենները ինչ զգուշութիւններ ընելու է .	42
ԳԼ. Դ. Ծծմար որ է սիւտանայ .	46
ՅՕԴ. Ա. Մայր մը ծծմար բռնած ատենը ինտր պիտի վարպէ .	46
ՅՕԴ. Բ. Աղէկ ծծմար մը ինչ կազմութիւննալու է, ու իր կաթը ինչպէս կը ճանչըրպէ .	47
ՅՕԴ. Գ. Ծծմօրը վրայօք ընելու զգուշութիւնները .	58
ԳԼ. Ե. Կաթ տուող կին չի գրտնըրպէ նէ տղան ինչպէս մեծըրնելու է .	62
ԳԼ. Զ. Տղայ մը իր մօրը կաթը օրը քանի անգամ պիտի ծծէ. հետը ուրիշ բան ուտէ մի, կաթէն երբ կտրելու է ու կաթէն կտրըվելէն Լտքը ինչ պիտի ուտէ .	68
ՅՕԴ. Ա. Տղին օրը քանի անգամ ու ե՛րբ կաթ տալու է .	68

ՅՕԳ. Բ.	Կաթժին հետ աղուն ու բիշ բան կերպընէ. լու է մի, և ինչ կերպընէրու է.	70
ՅՕԳ. Գ.	Տղայ մը երբ, ու ինչպէս կաթժէն կըս. րերու է.	75
ՅՕԳ. Դ.	Կաթժէն կարելէն ետքը պիտի ինչ կեր- ցընէրու է.	79
ԳԼ. Է.	Տղուն առայ հանելուն աստեղի գիտլած. ները.	85
ԳԼ. Ը.	Օրանի աղուն հազուսար.	88
ԳԼ. Թ.	Նոր ծնած աղուն քուն քնանալը.	92
ԳԼ. Ժ.	Մարբուծիւն.	98
ԳԼ. ԺԱ.	Հարժմանք.	106
ԳԼ. ԺԲ.	Խօսել.	115
ԳԼ. ԺԳ.	Չգտցարանայ վրայ.	125
ՅՕԳ. Ե.	Տեսանէլք.	128
ՅՕԳ. Բ.	Հոտոտելք.	137
ՅՕԳ. Գ.	Ճաշակելք.	140
ՅՕԳ. Դ.	Հոշտիելք.	142
ՅՕԳ. Ե.	Լսելք.	146
ԳԼ. ԺԴ.	Մարբն կարդուծիւնները.	155

## ՅԱՒԵԼ ՈՒՆՕ

Պատուատ ընէլ.	182
Պատուատ ընէրու համար կանոններ.	186
Պատուատին հիւծը երբ ու ինչպէս ասնէրու է.	187
Պատուատին հիւծը ինչպէս սրահէրու է.	187
Պատուատէրու կերպը.	189
Պատուատի ծաղիկին բանելուն նշանները.	191
Պատուատին գիտլածները.	195
Լին աստեղի ընէլքը.	195
Սուս ծաղիկը ճամարիտէն ինչպէս որոշէրու է.	194
Պատուատը ծաղիկին նախապահ զեղն է մի.	194







ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԿՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՄԱՆԿԱՍՏՆՈՒԹՅՈՒՆ



## ՄԱՍԻՆ Բ.

ST. JOHN'S COLLEGE, NEW YORK

1870



## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՂՈՒ ՄԸ ԵՐԵՔ ԿԱՄ ԵՐԵՔ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻԷՆ  
 ՄԻՆՉԵՒ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԱՄ ՏԱՍՆԵՒԻ ՉՈՐՄ ՏԱՐԵԿԱՆ  
 ՀԱՍԱԿԻՆ ԸՆԵԼՈՒ ԽՆԱՄՔՆԵՐԸ :

### ԳԼՈՒԽ Ը.

Բնակութիւն :

Տղոց նստելու տանը կամ բնակութեան ձեւոյն վրայ խօսելով, թէ որ կլի մային, տեղւոյն դիրքին, օդին, լուսոյն, և արեւուն մեր վրայ ունեցած ներգործութիւններուն վրայօք լուռ կենամք նէ, զուրցելիքնիս կիսկատար ձգած կրլլամք :

Սարմինը՝ հողւոյն հետ անանկ կապակցութիւն մը ունի որ, մէկին վրայ բան մը ներգործէ նէ, ՚ի հարկէ միւսին վրայ ալ պիտի ներգործէ : Ալիմային, օդին, և արեւուն՝ մարդուս մարմնոյն վրայ ունեցած ներգործութիւնը՝ մարդ չիկայ հեղինակ չիկայ որ չընդունի, բայց այս ներգործութիւններուն մարդուս ներսի դին թափանցելը, մեր կրիցը, ու մտքին որակութեանցը և մտաւոր մարդոյն փիճակին ու հան-

գամանքներուն՝ պատճառ ըլլալը հռչակաւոր հեղինակներ կան որ չընդունեցին : Ասոր հակառակ ուրիշ անուանի հեղինակներ ալ գտնուիցան որ , ներքին մարդը մոռնալով , և նիւթական մասը կեդրոն բռնելով՝ դրսի պարագայներէն մարմնոյն կրած փոփոխութիւնները բոլորովին մարդկային գործոց ու վիճակին պատճառ բռնեցին :

Ասոնք առաջ դնելովնիս՝ աս կռիւները կտրել չէ մեր միտքը . մենք նայիմք միայն որ աս մեր ըսած ներգործութիւնները ինչ կերպ պիտի հասկընամք :

Ամէն մարդ գիտէ , որ երկու հոգի մի և նոյն վիճակի մէջ ալ մեծնան նէ , իրենց կազմութեանը նայելով՝ մէկը մէկայլէն խելացի կըլլայ . միւսը առջինէն սրտոտ ու կտրիճ . մէկը մէկայլէն աւելի ագահ . մէկը բանաստեղծ , միւսը պարզ . վերջապէս մէկը զմէկէ տարբերութիւն կունենան : Ասոնց պատճառը՝ ինչպէս որ ամմէնն ալ կըհասկընան , երկուքին ալ մարմնոյն գործարաններուն և ուղեղին կազմութիւնն է : ( Արովհետեւ ասոնք իմացական մարդոյն այս աշխարհքիս մէջ գտնուած նիւթական բաներուն հետ հաղորդելու գործիքներն են ) :

Զիմա ըսեմք թէ ուրիշ երկու հոգի առնեմք մի և նոյն կազմութեան , մի և նոյն ուժի , մի և նոյն ուղեղի , մի և նոյն գործարաններու տէր . ( աս բանս թէպէտ

անկարելի է . բայց մեր խնդիրը լուծելու համար կարելի սեպեմք ) :

Հիմա սա երկու հոգիին մէկը իր գլուխը նըված պարագայներուն նայելով ըստ արժանւոյն զարգանայ . միւսն ալ՝ այլ ուրիշ պարագայներու մէջ գտնուելով՝ անկիրթ մը նայ . ատենէ մը ետքը՝ սա երկու հոգին մէկը զմէկու բազդատեսնէ , կը գտնաս որ մէկը զմէկու ունեցած նմանութիւնէն քիչ բան պահեր են . մէկը՝ մէկ որպիսութիւն մը ըստացեր է . միւսն ալ ուրիշ որպիսութիւն մը : Աս զուցածներէս նախ սա կը հետեւը նեմք որ , մարդուս մտաւոր կերպը , կամ մտքին մէկ որոշեալ ձեւ մը և եղանակ մը ստանալը՝ իր մարմնոյն կազմութենէն ու իրեն պատահած դիպուածներէն կախված է : Սի՛ կարծեր որ սա զուրցածներս կլիմային մեր վրայ ունեցած ներգործութեանը հետ կապակցութիւն չունի :

Մէկը՝ Սիպերիա մեծնայ , կամ բարեխառն երկրի մէջ մեծնայ , կամ այրեցած գօտիներուն տակը մեծնայ նէ , մի և նոյն ձեւը չըստանար <sup>1</sup> : Ստածէ՛ մէկ անգամ մը ,

<sup>1</sup> Չեւ բաւը՝ մտաւոր մարդոյն վրայ խօսած ատեննիս , յատուկ մտքով շառնրթի երկրաշափական ձեւի պէս , որով երկու մարմին իրարմէ արտաքին երեւոյթքով կը տարբերին : Այլ համեմատական մտքով կառնեմք . անանկ յատուկութիւններ նշանակելով որով երկու մարդ մտքի կողմանէ իրարմէ կը տարբերին : Գրքիս մէջ խօսվածը աղէկ

որ Միսկերիայի մէջ որ հազիւ թէ տարին երեք չորս ամիս տաք կրնէ, ուրիշ ատեն ցուրտը այնչափ սաստիկ է որ, տունէն դուրս ելլալու անդամ չեն համարձակիր բնակիչները. անանկ իրենց տանը մէջ բանտարկուած, պատուհանները գոց, առանց արեւու և առանց լուսի խեղճութեան մէջ կենան ու բարեխառն երկրի մէջ դաշտերը պարտէզները՝ պտըտելը, օրչափ իրարմէ տարբեր եղած կրլայ. և ինչպէս կրլայ որ ատանկ տարբեր պարագայներու մէջ գտնուիող մարդիկ՝ մի և նոյն ձեւը ունենան:

Իրով, մարդս իր վրայ բնապէս ազդեցութիւն ունեցող արտաքին պարագայներուն մէջ կրնայ իր խելքովը մէկ փոփոխութիւն մը մտայնել, անոնց գէշութիւններէն շատ անգամ ինքրզինքը կրնայ ազատել. ինչպէս անտառները այրելովը՝ ցուրտ ու խոնաւ կլիմայն չոր կրլայ. և մարդ իւր կեցած տեղին մօտ ծառեր տնկելովը՝ չոր կլիմային սաստիկ տաքութիւնը կրքիցընէ:

Մսկէ զատ մարդուս կաղնութիւնը անանկ է որ, սովորութեամբ ան բանը որ

հասկընալու համար այս ծանօթութիւնս մտքէ հանելու չէ. չէ՛նէ՛ մարդոյս միտքն ալ հոգին ալ նիւթական բաներու պէս ձեւի տակ իննալու բան կրկարժրի. որ սրխալ է:



առջի անգամին իրեն մահաբեր է նէ յետոյ  
 անոր կամաց կամաց դիմանալու կարողու-  
 թիւն կրտսանայ : Ենչպէս սաստիկ տաքին  
 կամ սրազին դիմանալու ուժ կառնէ սովու-  
 թութեամբ , նոյնպէս՝ առաջկուց իրեն ան-  
 կարելի եղած խելքը բաներ ալ ընելու կրը-  
 նայ սովորութեամբ ունակութիւն մը ըս-  
 տանալ . բայց ասիկայ սահման մը ունի :  
 Թէպէտ Սիպէրիայի բնակիչն , ու բարեխա-  
 ուրն երկրի բնակիչը՝ Սիպէրիայի մէջ միև  
 նոյն ցրտէն չեն մեռնիր . բայց ցրտին ներ-  
 դործութիւնը բնիկ սիպէրիացիի վրայ ալ  
 կրտեսնես : Աւ սիպէրիացիին բնաւորու-  
 թեանը , և իւր մարմնոյն ու ներքին մասին  
 ձեւոյն վրայ անանկ մէկ կապակցութիւն մը  
 կրտեսնես իր կլիմային հետ որ , անկարելի  
 է որ կլիմային ներգործութեանը չի հաւա-  
 տաս :

Աշտարհիս վրայի բոլոր ազգերն ալ առ-  
 նես , իրենց ընկերական վիճակին փոփոխու-  
 թիւնները մէկ դի գնելով զննես նէ , կր-  
 տեսնես որ իրենց կլիմայէն յատուկ ձեւ մը  
 ունին . որն որ մինչեւ վերջը սրահեր են :  
 Մէկ մը մենք մեզ առնեմք նայիմք :

Հայաստան շատ փոփոխութիւններ կը  
 բեց . Հայերուն շատը՝ իրենց տիրող ազգե-  
 բուն հետ խառնըվելով՝ անոնց օրէնքը ու  
 հաւատքը ընդ ունեցին : Ե վերայ այսր ամե-  
 նայի , նայէ՛ Ասիոյ Հայերը՝ հոն տեղ բը-

նակող այլազգաներէն , և յոյներէն ինչ տարբերութիւն ունին : Անտեղ գանըվող Հայերը՝ կրտսննեսս որ հետերնին եղող ուրիշ ազգերուն կրնըմանին . բայց ասկէց չիկարծըվի որ Հայերը իրենց տիրող ազգերուն բնութիւնը ընդունելով իրենց ձեւը կորուսեր են : Արովհետեւ եթէ ասանկ ըլլար , պէտք էր որ աս օրվան Հայերը Տիգրանայ՝ Աղարշակայ՝ հինգերորդ դարու Հայերուն շինըմանէին : Այց եթէ բաղդատեսս նէ , կրտսննեսս որ , կառավարութեան և իրենց բարոյական վիճակին տարբերութիւնը վերցընելովըզ՝ ուրիշ ամէն մասամբ մի և նոյն առաջին հին Հայերն են : Հիմայ ինչպէս կարելի է կլիմային ներգործութեանը չիհաւատալ :

Վամշիաք բնակող մարդ մը՝ հասարակածի տակ գըտնըվող մարդուն ձեւը ինչպէս կրնայ ունենալ : Մէկը առանց գոյնի ձերմըկած թոռմած է , հասակը բարձր է ու ուժով . բայց շարժիլը ծանր ու ինքը դանդաղ . զգացողական զօրութիւնը՝ գրեթէ ոչինչ . երեւակայութիւնը՝ աղքատ . ու միտքը՝ իր պաշտօններուն մէջ դանդաղ . գրեթէ՝ արտաքին մարդուն պէս՝ ներքին մարդըն ալ փառցած է : Տէս միւսը՝ իւր քովը իմանալը , երեւակայելը , շարժիլը , ու զգալը կայծակին արագութիւնը ունի . թէպէտ իւր ջգերը ցրտային երկրի մարդուն ուժը

չունին , բայց ասոր տեղը մէկ դիւրաշար-  
 ժութիւն մը ճարպիկութիւն մը ունի , որ  
 գրեթէ ուժի տեղ կը բռնէ : Արաբացին՝  
 բանի մը երկար ատեն ու շագիւր ըլլալով՝ ա-  
 նոր ամէն սրաբագայները գիտնալու ետեւէ  
 ըլլալ չիգիտէ . բայց բանի մը ինչ եղածը  
 գիտնալու ու անոր վրայ խորհրդածելու  
 համար դժուարութիւն չունի : Արեթէ ի-  
 բրենքով զգալը՝ ու հասկընալը՝ մի և նոյն  
 դիւրութիւն ունին :

Բայց հիմա բարեխառն երկրի բնակիչ-  
 ներէն մէկը գիտեսնէ , կըտեսնես որ քանի  
 հասարակածին մօտ տեղ ըլլայ , իւր բնաւո-  
 թութիւնը ու իւր մարմինը արաբացիին կը  
 նմանի : Աւ քանի որ ցուրտ երկիրներու  
 մօտենայ , քամիաքցիներուն բնաւորու-  
 թիւնը կըստանայ : Ատնք երկու ծայր կլի-  
 մաներու մէջ գտնուելով , երկուքէն ալ ա-  
 ռած են , իրենց մարմինը ցրտային երկրի  
 մարդոց ուժը , ու միանգամայն արաբացի-  
 ին դիւրաշարժութիւնը ունի : Օգալը ու  
 շարժիլը՝ ո՛չ իղանտացիին պէս դանդաղ է ,  
 և ո՛չ արաբացիին պէս սաստիկ արագ ըլլա-  
 լով՝ անտուէ է , ասանկ ալ երեւակայու-  
 թիւնը՝ ու խորհուրդը՝ բարեխառնած են :  
 Տաք , բարեխառն և ցուրտ երկրի մարդիկ  
 իրենց կլիմայէն ձեւ առնելնուն՝ մէկ սպա-  
 ցոյցն ալ աս է որ , իրենց կլիմայն փոխե-  
 լովնին , ինչպէս տաք երկրի մարդը ցուրտ

երկիր երթալով՝ իւր ձեւն ալ կրփոխէ . մա-  
նաւանդ տարիքը պղտիկ ըլլայ նէ :

Ինչպէս մարդիկ խելացի կամ անխելք ,  
ուժով կամ տկար կրճընանին . ու կրթու-  
թիւնը անոնց վիճակը կրփոխէ . ասանկ ալ  
կլիմայն՝ մարմնոյն կազմութեանը վրայ ներ-  
գործութիւն ունենալով՝ հարկաւորապէս  
ներքին մարդու ձեւին այլ և այլ կերպ ըլ-  
լալուն մէկ մեծ պատճառ կրնայ սեպվիլ :  
Աս ըսելովս՝ կրհասկըցվի որ ցրտային երկրի  
մարդը՝ տաք կամ բարեխառն երկրի մար-  
դու չափ և մարդու պէս չիկրնար զարդա-  
նալ : Յուրտ երկիրները՝ տաք երկիրներու  
պէս բանաստեղծներ , օրէնադիրներ և գի-  
տուններ կրնան ունենալ , և ունեցեր են ,  
բայց անկարելի եղածը սա է որ , ցուրտ  
երկրի բանաստեղծութիւնը կամ օրէնքներ-  
ը՝ տաք երկրի բանաստեղծութեան և օ-  
րէնքներուն բնաւ չէին կրնար նմանիլ :  
Մարդու որչափ ալ կամք ընէ , իւր ընկերա-  
կան վիճակին ձեւը՝ ամմէն կլիմայի տակ  
մի և նոյնը չիախտի կրնայ ըլլալ :

Վերջապէս մարդ խել մը ունակութիւն  
ներ իւր հետը կը բերէ . որոնք զարգանա-  
լով՝ բարեկիրթ կրլլայ , բայց այս բարեկրթ-  
ութեան ձեւը կլիմայէն կախված է : Յե-  
տին աստիճան տաք , կամ յետին աստիճան  
պաղ երկիրներու մէջ մարդուն զարգանալը  
բռնի է : Ան մարդ պէտք է որ արտաքին

պարագայներուն հետ, կլիմային անյարմու-  
րութեանը դէմ ձեռկարկի որ կարենայ աս-  
րիւ ու զարգանայ:

Նայց բարեխառն երկիրները ատանկ  
չէ: Շոն մարդոց զարգացմանը համար ինչ  
պէտք է նէ, ամէննալ բովանդակած են:  
Շոն բնութեան տեսարանը ձիւներով պա-  
տած՝ ու գրեթէ վարագուրով (փերտէով)  
ծածկրված չեն, կամ սաստիկ տաքէն ամ-  
մէն բան երվելով յուսահատութիւն բե-  
րելու մերկութիւն կամ վայրի անասառ-  
ներ չխտեսնրվիր: Ա երջապէս բարեխառն  
երկիրներու մէջ բնութիւնը իր ամմէն տե-  
սարանները ժողվեր, ու այն տեղերը զը-  
ւարձայի ծառերով ու տունկերով զարգա-  
րեր է: Նաստուններով ու բազմատեասկ  
թռչուններով լեցուցեր է: Շոն մարդուս  
ասրելուն՝ ու մեծնալուն համար բոլոր  
պէտք եղած բաները դիւրաւ կրգտնրվին:  
Մէկ խօսք ըսեմ. հոն մարմինը սնանելու, և  
իւր պիտոյքը հոգալու համար՝ բնութեան  
մէկ առատ շտեմարանը իւր ձեռքին տակը  
պատրաստ կը գտնայ: Միտքն ալ բացվելու  
ու զարգանալու համար աչքին առջին մէկ  
թատրոն մը ունի զուարձայի տեսարաննե-  
րով լեցուն, ու տեղ տեղ ալ հասարակա-  
ծին կամ բեւեռներուն դիպուածները աս-  
դին անգին՝ կամ լեռներուն գլուխը՝ կամ  
դաշտերուն մէջ կերելին: Շոն մարդուն



երեւակայու թիւնը հարստանալու ու լինալու համար շատ գաղափարներ կան : Ստրին կարողու թիւնները բանալու ու զմայլելու համար դիպուածները պատրաստ են : Ու մարդ ալ քալելու ու յառաջ երթալու համար մէկ կողմէ մին ալ խոչընդոտն չունի : Արշափ երեւելի մարդիկ որ եկեր են թէ բանաստեղծ , թէ օրէնսդիր , թէ փիլիսոփայ , և թէ իմաստուն բարեխառն երկիրներու մէջ են եկեր <sup>1</sup> :

Ս երջապէս մարդուն բնակութեան պինտ յարմար տեղը՝ բարեխառն երկիրն է :

Գանք հիմա տեղւոյն դիրքին : Նախ՝ տեղւոյն դիրքը՝ ցած ու խոնաւ ըլլայ նէ , 'ի հարկէ ան տեղին մօտ լեռներ և անտառներ կան , կամ մէջ տեղէն գետեր կանցնին . կամ լճերով պատած է : Ի հարկէ

1 Ասով անանկ մի հասկընար որ ցուրտ կամ խիստ տաք երկիրներ ասանկ մարդիկ բնաւ եկած չունին : Իզլանտա ցուրտ երկիրներուն մէկն է . բանաստեղծ և օրէնրդիր ելած է հան : Նմանապէս Շվեյտ , Տանիմաքա , երեւելի իմաստուններ ելած են : Ասոնք ընդհանուր կանոնի բացառութիւններ են . ինչպէս շնդկատանի տաք երկիրները ելած իմաստուններն ալ , որ օդոյն տարութիւնը անոնց մերկ պըտրտելուն ներելով՝ հին պատմութիւններուն մէջ *Ֆրիդաթա*՝ անունով հռչակաւ որ եղած են : Ասոնց՝ բարեխառն երկիրներու իմաստուններուն մօտեւալը , մէկ շափ մըն է . որով կիմացվի թէ կրթութիւնը մինչև որ աստիճան կրնայ փոխել կամ եղանակաւ որեւէ կիմաններուն բնական ազդեցութիւնը :



ասանկ տեղերը գոց ըլլալուն, օղը աղէկ  
 չիբանիր, ու անշարժի պէս կըմընայ: Տեղ-  
 ւոյն խոնաւութիւնն ալ գէշ տունկեր ու  
 գէշ խոտեղէններ կըբուսցընէ, ասոնք կըսոր-  
 նան, ու խոնաւ տեղ մնալով՝ կըփրտաին.  
 քանի որ արեւը զարնէ նէ, ասոնց գէշ  
 հոտը գոլորչիք կըլլայ, ու օդին հետ կը-  
 խառնըվի. որով ՚ի հարկէ փուտ տենդ  
 ( չիւրիւկ հիւմմայ ) և ուրիշ փտանգաւոր  
 հիւանդութիւններ կըյառաջանան. ու այս  
 կերպիւս հոն տեղի մարդուն առողջութիւ-  
 նը միշտ փտանդի մէջ կըլլայ: Թէ որ ասանկ  
 տեղ մը հողը ջուրը ծծելու կարող չըլլայ,  
 ՚ի հարկէ խոնաւութիւնը հողին երեսը մը  
 նալով՝ աւելի գէշութիւն կըյառաջանայ  
 ատկէ: Վարդ ալ ասանկ տեղ բնակի նէ,  
 ՚ի հարկէ խոնաւութեան գէշութիւննե-  
 բուն մէջ պիտի մեծնայ. խոնաւութիւնը  
 կըթուլացընէ մեր ջիղերը. քրտընելը կար-  
 գիլէ, և մեր մարմինը ջուրի մէջ կեցածի  
 պէս ըլլալով՝ մորթը խոնաւութիւն կըծըծէ.  
 մարմիննիս ալ թոյլ ու տկար կըլլայ: Վարդս  
 այն տեղին բերած ջրոտ տունկերը ուտե-  
 լովը՝ ինքն ալ ճերմկած թոռմած ու տրժ-  
 գոյն ( սօլղուն ) կըլլայ. իր ջիղերը զօրու-  
 թիւն չեն ունենար. ինքն ալ տկար ու ան-  
 կար կըլլայ: Թէ որ ան ըսած խոնաւ տե-  
 ղը միանգամայն տաք ըլլայ նէ, տաքին պատ-  
 ճառաւը՝ փտտած բաներուն հոտերը օդին

մէջ աւելի կըտարածին : Ատկէ ալ փուտ տենդ և ուրիշ փտանգաւոր հիւանդութիւններ և ս առ աւել դիւրութեամբ կըյառաջանան . ասոր հակառակը թէ որ այն տեղը պաղ ըլլայ նէ , անկէ խողք ( սրճաճա ) ուռ , ջրգողութիւն ( սրբքա ) հազ , ջերմ , ( սրթմա ) աղէկիծ ( սքօռ փութ ) և այլն կը պատճառին :

Չիկարծըլի որ այս ներգործութիւնները միայն մարմնոյն վրայ կըրլան , մտքին կարողութիւններն ալ անկէ կըսխտալին , մանաւանդ այն ըսլած տեղը խոնաւ ու ցուրտ ըլլայ նէ , ահա այս պատճառաւս է որ Աս փօայի մէջ շատ տխմար կամ ապուշ կըգտնըլի :

Հոն մարմինը չիզարգանար . միտքն ալ ասանկ ներգործութիւններուն մէջ իբրեւ տղայութեան մէջ կըմընայ : Այն տեղի մարդոց քօլ գրեթէ ոչ շարժելու և ոչ գործելու կարողութիւն կայ . անանկ կիսկատար մարդու պէս կըմընան : Խոնաւ տեղ մը շատ տաք կամ շատ պաղ չընէ նէ , ու միանգամայն թէ որ փտտելու քաները գետինը մնալով՝ մարդոյս փնասակար հոտեր չիբուրեն նէ , խոնաւութիւնը թորածէտ ( վէրէմի ) ու ուրիշ կուրծքի հիւանդութիւն ունեցող մարդոց աւելի օգուտ կընէ , քան թէ փնաս :

Մնակութեան տեղը բարձր ու չոր ըլլայ նէ , ինչպէս բլուրները ( պայիրները ) լեռները և ծովէն բարձր տեղերը . ուր ան-

տառ ու լիճ չիկան :

Աստեղվանքը ՚ի հարկէ կամ շատ ցուրտ , կամ շատ տաք կընէ : Ամէնքն ալ գիտեն որ մէկը քանի որ բարձր լեռան մը գլուխը ելլայ , այնքան ցուրտ կը գըտնայ . անանկ բարձր լեռներ կան որ անոնց դագաթը ելլելու աւտենըդ ամառվան մէջ անգամ ըլլայ գրեթէ չորս եղանակէն ալ կանցնիս : Արուհետեւ պինտ վարը ամառվան սաստիկ տաքը , քիչ մը վերօք տաքը մեղմած ինչպէս գարնան և աշնան մէջ . վերջապէս լեռան դագաթը ձիւնով պատած ըլլալուն՝ հոն սաստիկ ցուրտ կը գտնաս : Վայց ամմէն լեռ ըսածիս պէս ցուրտ չներ . չոր անապատի կամ աւաղուտ դաշտաւայրի մը վրայ ըլլայ նէ , մանաւանդ այն լեռը ապառաժ ու անձառ տեղ մը ըլլայ նէ , մէկ կողմէն տաք հովերը , ու արեւին տաքութիւն մէկալ կողմէն ալ իրեն չորութիւնը սաստիկ տաք կը պատճառէ , ասանկ տեղ մը բարեբեր չըլլար . սովորաբար չոր կը ըլլայ . մարդն ալ հոն ապրուստ ձարելու համար աշխատի կը հարկի . ըսել է որ ուժով կը ըլլայ : Այս պատճառաւ իրաւ մարմիննին գէր չըլլար , բայց իրենք աշխոյժ ու ճարպիկ կը ըլլան : Իրենց ուտելիք գտնալու համար որսորդութեան կը պարապին . իրարու ձեռքէ՝ ապրուստնին կողոպտելու կամ ձեռվրնին եղած ապրուստը պահպանելու համար պատերազմի հետ կիցնան կելլան :

Եւ ասանկ մեծնալովնին սրտոտ և քաջ կրլան . մինչեւ հիմա որչափ յաղթող ազգեր եկան նէ , լեռներէն եկած են :

Ասանկ բարձր ու չոր տեղերուն բնակիչները դժուարութիւններ ունին կրթութիւն լու . որովհետեւ հոն նախ՝ երթեւեկութիւնը դժար է . երկրորդ՝ ապրիլը դիւրին չըլլալուն ամէն բանէն յառաջ ապրուստ ճարելու ջանքերով մարդ իւր ատենը պիտի անցընէ . ուրիշ բաներու ատեն չիպիտի ունենայ<sup>1</sup> : Այց հոն տեղի չոր բարկ ու ցուրտ օդը հիւանդութեան թշնամի ըլլալովը այն տեղի մարդուն առողջութիւնը կատարեալ է : Հոն տեղ բնակողները քիչ հիւանդ կրլան . իրենց հիւանդութիւններուն շատն ալ վտանգաւոր չէ . միայն կուրծքի հիւանդութիւնները հոն քիչ մը յաճախ կրլան : Այն տեղվանքը մէկը հիւանդանայ նէ , օգին լաւութեանը պատճառաւը՝ շուտով ալ կրուրնտնայ : Հոն մարմինը ուժով կրլայ . մտքին կարողութիւններն ալ կրբացվին , ու ապուշ տըխմար մէջերնին շատ չիգտնըվիր :

1 Ըսածս Չփոցերիի նահանգներուն վրայ կրտեսնըվի . ցած տեղերուն և բարձրերուն բնակչաց կրթութեանը մէջ տեսնըված տարբերութիւնը ասկէց զատ պատճառ չունի : Ճինեզա և Սբէնձէլ կրթութեան կողմանէ շատ հեռու են իրարմէ : Բարձրութիւննին ալ նոյն տարբերութիւնը ունի :

Գանք հիմա դաշտավայրներուն վրայ . որոնք երբեմն չոր՝ և երբեմն ալ խոնաւ կրլան : Ասանկ տեղիանք գրեթէ ցած ու խոնաւ և չոր ու բարձր տեղերուն մէջ տեղը կրտեպլին . ասանկ տեղիանք՝ կամ ապառաժ ու աւազուտ անապատներ են , կամ բարեբեր ու զուարճալի դաշտեր են : Բայց ամմէնքն ալ կը հասկանան որ մարդ անապատը կամ զուարճալի դաշտի մը մէջ մի և նոյնը չըլլար : Ինչպէս որ մարդկային կրթութեանը յարմար տեղին՝ բարեխառն կլիմաներն են , ասանկ ալ զուարճալի ու բարեբեր դաշտավայրներն են մարդկային բարեկրթութեան կեդրոնը :

Որովհետեւ հոն գետերով ու ճանապարհներով լեցուն ըլլալուն , մարդոց հազարդակցութիւնը ըստ կարելոյն դիւրին է : Ինաւ երթալու գալու ճանապարհորդելու դժուարութիւն չեն քաշեր մարդիկ : Ասանկ տեղիանքը լեռներուն գլուխը գտնուլած տեղերուն պէս չոր ու անբարեբեր չեն : Ուստի մարդ իւր ապրուստը գտնալու համար անհնարին դժուարութիւններով՝ ապառաժներու հետ կռուելով իւր ատենը ու գործունէութիւնը չի մոխեր . ըսել է որ մարդկային կրթութեան ամմէն մասին հոգ տանելու ատեն կռնենայ . խոնաւ ու ցած տեղերու պէս ալ հոն շատ հիւանդութիւններ չըլլար . ու մար-

դոյս գէշնալուն ու չիբացվելուն պատճառ  
չիկրնար ըլլար : Ասանկ տեղիվանքը բնակող  
մարդիկ ոչ ցած ու խոնաւ տեղը բնակող  
մարդոց պէս սրմբած ու անկար են , և ոչ  
լեռնային մարդոց պէս կատաղի . իրենց բը  
նութիւնն ալ բարեկրթութեան կըլարմա  
րի : Արենք առողջ ու ժով և աշխատող են .  
խաղաղասէր են . ուսմունքը ասանկ տեղ  
վանք կըրնան ծաղկիլ դիւրաւ : Բայց Ա  
րարիոյ անապատը թէպէտ դաշտավայրի է ,  
բայց բարեկրթութիւնը դժար կըծաղկի :  
Արովհետեւ հոն ալ լեռան գլուխը բընա  
կող մարդուն պէս տարուտող ճարելու դըժ  
ուարութիւններ կըքաշվի : Աւտի թէ որ ան  
անապատը բնակող արաբացին ու երջանիկ Ա  
րարիոյ բնակիչը մէկզմէկու շէն նմանիր նէ ,  
պատճառը՝ իրենց հողին կազմութիւնն է :

Մարդ թէ որ կամք ընէ նէ՝ իւր  
բնակած տեղին մէջ եղած վնասակար  
բաներուն մէկ քանին կըրնայ վերցընել ու  
վնասակար տեղերը առողջ ընել . ինչպէս  
լճերը լեցընել , կամ գետի մը կամ ձորի մը  
խառնելով՝ վազելու ջուր ընել : Խոնաւ ու  
թիւնը վերցընելու համար , անտառները  
կընայ այրել կամ չորութիւնը քիչցընելու  
համար անտառներ տնկել . ինչպէս Մէհմետ  
Ալի փաշայն ըրաւ նէ <sup>1</sup> , կամ հողը հերկե

<sup>1</sup> Մէհմետ Ալի փաշան Եգիպտոսի երկիրը շատ ծառեր



լով անբարերեր ու գէշ տեղերը բարերեր  
ու առողջ տեղի դարձնել, ինչպէս գեր-  
մանացիները բրին՝ շերդինեան ըստած ան-  
տառները :

Բայց ասոնց ամմէնուն մէջն ալ միշտ  
գլուխ չիկրնար ելլալ. ան ատենը մարդուս  
համար ուրիշ ընելիք չիմընար. բայց միայն  
անկէ ելլալ. ինչպէս կրնեն Վալէյի բնա-  
կիչները : Բայց շատ տեղ ալ ճարը կրգբու-  
նըլի. ինչպէս Շողանտա ու Պէլճիքա կըր-  
ցան խոնաւութեան գէշութիւններուն մէկ  
մասին առջեւը առնել. ջուրերուն եղերքը  
թումը շինելով. և այլն : Վորէնայի մարդի-  
կը լճերու մօտ բնակելով՝ յիսուն տարիէն  
աւելի չէին ապրեր. վերուցին լճերը, որ  
այս տեղս ալ ուրիշ առողջ տեղերուն կար-  
գը մտաւ :

Մինչեւ հիմա Բտալիա տեղեր կան, որ  
ասանկ լճերով լեցուն է. և հոն մարդիկ  
հիւանդոտ են. շատ չեն ապրիր. և շատ  
ալ յառաջ չեն ՚ի գար : Այն տեղվանքը  
շտիկել ու առողջացընել կարելի է՝ բայց  
կամք ընող չիկայ :

Մեր երկրին վրայ չիողւրցեմք, որովհե-  
տեւ հոս բարեկրթութիւնը նոր սկսաւ.  
կըլուսամք որ կառավարութիւնը կամաց

արնիկ տարով, հոն որ առաջ բնաւ անձրեւ չէր ՚ի գար,  
հիմա սկսաւ անձրեւել :

կամաց ջանք կրնէ այն գէշութիւնները եղած տեղերէն վերցընելու . բայց մեր խօսքը ասոր վրայ չէ . գամբ մեր զուրցելիքին : Բ՛սինք որ մարդ ուզէ նէ , տեղւոյն դիրքին պատճառաւը յառաջ եկած գէշութիւններուն մէկ մասը կրնայ վերցընել . բայց ասիկայ միշտ կարելի չէ : Անանկ տեղեր կան , որ լեռան տակ ու չորս դիէն լեռներով պատած ըլլալուն , ՚ի հարկէ լեռներէն քանի ջուր վաղէ ան տեղը պիտի մնան . ուստի ան տեղվանքը ՚ի հարկէ խոնաւ ըլլան պիտի : Արբեմն կարելի է որ վաղած ջուրերուն ճամբայ բանաս : Բայց ասոր համար պէտք է որ մօտ տեղը կամ գետ մը ըլլայ կամ ծով կամ ձոր մը . թէ որ ասոնց մէկը չըլլայ նէ , լեռները պատուել ու անանկ այն տեղը առողջընելու հիմակվան ատենը կամբ չըլլալուն համար , անկարելի կըսեսպիլի :

Այն ատենը մարդուն ընելիքը կամ այն տեղ չիբնակիլ է , կամ բնակի ալ նէ այն տեղւոյն ողջ տեղը զատել պիտի ըլլայ : Անչպէս լըճի մը արեւելքի կամ արեւմուտքի կողմը բնակել մի և նոյն չէ : Արբեմն աւելի աղէկ է լըճին էն մօտ տեղը , բայց ըսենք թէ արեւելք բնակիլը , քան թէ քանի մը ժամ հեռու բայց արեւմուտքը բնակիլը : Պատճառը աս է որ ամմէն տեղ մէկ մէկ կերպ հովեր կան որ միշտ կըփրչեն . աս

հովերուն ընթացքը նայելով՝ թէ որ հովերը լըճին մէջէն ելած գէշ հոտերը առնեն քեզի պիտի բերեն նէ, թէ և լըճէն հեռու ալ ըլլաս, թէ որ լըճին ու քու բընակութեանդ մէջ տեղը հովերը կտրող լեռ մը կամ ուրիշ արգելք մը չիկայ նէ, ՚ի հարկէ ան գէշ հոտերուն ներգործութեանցը տակը պիտի ըլլաս : Ասոր հակառակը՝ հովերը լըճերէն անցնելէն ետքը՝ քեզի չիպիտի գան նէ, ՚ի հարկէ թէ և լըճին քովն ալ ըլլաս անոր թիւնաւոր հոտերը քեզի չիպիտի կարենան դպչիլ, ասանկ ալ խոնաւ տեղ մը բնակելու ատենդ, միանգամայն արեւուն զարնելուն ու հովերուն փչելուն նայիս նէ, կրնաս ինքքզինքդ շատ մեծ վնասներէն սաշէլ, ինչպէս որ սովորաբար այն հովերը որ չոր անապատներուն վրայէն կանցնին ու քու բնակութեանդ վրայ կուգան, չոր են ու խոնաւութիւնը կը վերցընեն, ասոր հակառակը թէ որ հովը գետերուն ու ծովերու վրայէն փրչէ նէ, ՚ի հարկէ ջրոյն գոլորչիքները մէկ տեղ առնելով ասանկ պիտի գայ, ըսել է որ խոնաւութիւնը պիտի շատցընէ :

Վնասապէս հարաւէն փչած հովը տաք տեղերէն անցնելով տաք պիտի ըլլայ : Թէ որ աս հովը միանգամայն խոնաւ ըլլայ նէ, ՚ի հարկէ քու բնակութեանդ վրայ փչելով քեզի շատ վնաս պիտի գործէ, որովհետեւ ասիկայ փուտ տենդերու ( չիւրիւկ հիւմնա

ներու) և ուրիշ վտանգաւոր հիւանդուեց  
 պատճառ կրնայ ըլլայ: Մանաւանդ որ հովը  
 ցուրտ տեղերուն վրայէն փչէ նէ, ու միան  
 դամայն խոնաւ ըլլայ նէ աւելի հիւանդու  
 թեան պատճառ պիտի ըլլայ. քու կին բնա  
 կած տեղւոյդ խոնաւութեան ընելու գէ  
 շութիւնները պիտի շատնան, ատկէ յօդա  
 ցաւ (ռէմաթիզմ), աղեկիծ (ըսթուպիւթ)  
 խողք (սրուածայ) և ուրիշ գէշ հիւան  
 դութներ պիտի պատճառին: Վմէն մարդ  
 գիտէ որ խոնաւ օրվան մէջ ցուրտը աւելի  
 կը դգամք, անանկ օրերը ցուրտը մարմինին  
 աւելի կը թափանցէ ու մեր ներսիդին կանց  
 նի: Վսանկ ալ արեւէն զարնելուն նայելու  
 է, մէկը արեւէն զուրկ մնայ նէ, թէ և  
 իւր բնակութիւնը խոնաւ տեղ չըլլայ ալ  
 նէ ջիղերը կը թուլնան ու ինքը ուժէ կիյնայ.  
 բայց ասոր հակառակը թէ որ լուսոյ ու ա  
 րեւու մէջ մեծնայ նէ իւր ջիղերը կը հաստա  
 տին կուժովնան. մարմինը աս կերպովս տա  
 քին պաղին դիմանալ կը սորվի, ու ինքնալ  
 ուժով կը ըլլայ. ուստի և ս առաւել խոնա  
 ւութեան մէջ արեւէն զուրկ տեղ մը բնա  
 կիս նէ, օդը տաք ըլլայ նէ, աւելի քրքոր  
 նելով պիտի թուլնաս. օդը պաղ ըլլայ նէ,  
 խոնաւութիւնը ու պաղը ներսիդիդ անցնե  
 լով պիտի հիւանդանաս: Վ երջապէս օդին,  
 արեւին, ու հովերուն նայելով կարելի է որ  
 խոնաւ տեղին վնասները քիչցնես: Վ վե

բայ այսր ամենայնի թէ որ կարելի է նէ , տողոց բնակելու տեղը բնաւ խոնաւութիւն չունենայ չոր դաշտի մը մէջ կամ լեռան տոքը բլրայ . կարելի է նէ , անանկ տեղ մը բլրայ որ հոն օդը շատ չխիտխիտ : Արովհետեւ օդւոյն փոփոխութիւնը մարդուն աւելի կը դաչի քան թէ սաստիկ տաքը կամ սաստիկ ցուրտը :

Անէկալին սաստիկ տաքին կամ Առէն լանտային սաստիկ պաղին մարդ սովորութիւն ստանալով՝ առանց վնասելոյ կրնայ դիմանալ : Առանց վնասելոյ դիմանալու համար պէտք է որ սովորութիւնը կամաց կամաց դայ : Հիմայ մարդոց հաղորդակցութեանը համար միջոցներ շատ կան ինչպէս շոգէնաւ ( վաբօս ) , շոգէկառք ( վախօսի արասպայ ) և այլն . կարելի է որ ասկէ ետքը աս միջոցները աւելի դիւրանան , ու կրի մաները աս կերպիւս մէկզմէկու աւելի մօտիկնան , անանկ որ ատենէ մը ետքը քանի մը օրուան մէջ Առէնլանտ մեծցող մը հասարակած գտնելի , և հասարակածը գլոտնր վտյները կռէնլանտ : Այլ կարծեր որ ասանկ արագ փոփոխութիւն մը մարդոյս չիներդ որ ծէր . անհնար է որ սաստիկ պաղէն՝ շուտով մը սաստիկ տաքին մարդըս մէկէն սորվի ու չխլընասի :

Վերմանիա և Վիպերիա մի և նոյն թըռչուններ մի և նոյն ցուրտէն չլմեռնիր . Վեր

մանիա տասն և չորս կամ տասն և հինգ աստիճան ( ուէօմիւռ ) ցուրտ ընէ նէ չիկրնալով թռչիլ, վար կիյնայ . Սիպէրիա պէտք է որ վաթսուէն և եօթն կամ վաթսուէն և ութ աստիճան ցուրտ ընէ . որ մի և նոյն թրուշուներ չիկրնալով թռչիլ՝ վար կիյնայ : Թէ որ հասարակածի բնակիչ մը ելլայ մէկէն Վամչագիա երթայնէ , հոն տեղի սաստիկ ցուրտը իրեն վրայ սաստիկ ներգործելով կրփատնայ ու կրմեռնի : Բայց նայէ Վամչագիայի բնակիչը ան սաստիկ ցուրտէն բան մըն ալ չըլլար , ու տարիներով կապրի : Բսել է որ սովորութիւնն է որ պաղին կամ տաքին դիմանալ կուտայ , տաքին դիմանալը այնչափ դժար չէ . որովհետեւ աշխարհիա բոլոր տեղավանքը պարտինք նէ , կրտեսնեմք որ , տաքը գրեթէ ամէն տեղ մի և նոյն աստիճան կըհասնի . քիչ տարբերութեամբ : Ինչպէս Սէնէկալ տաքը երեսուն և երեսունը մէկ աստիճանէն վեր չելլէր . Փարիզ մինչև քսանըկէց քսան և ութը կըլլայ . Սիպէրիա քսան և չորս և քսան և հինգ , որ երեսուն ու մէկէն քսան և չորս աստիճան ըսել է , և տարբերութիւնը կըլլայ եօթն աստիճան :

Բայց պաղը՝ ասանկ չէ . հասարակածին տաքը՝ զէռօ աստիճան ցուրտ գրեթէ չընէր . Վամչաքիա եօթանասուն աստիճան ցուրտ կընէ : Բսել է որ հոս տարբերու-



Թիւնը եօթանասուն աստիճան է <sup>1</sup> :

Հիմա ամմէն տեղ սովորութեամբ այս կամ այն աստիճան պաղին սորվեր են . բայց երբ որ իրենց սովորեալ աստիճանէն անդին սրաղի կամ տաքի հանդըպին նէ , ՚ի հարկէ կըվընասին . ասանկ ալ օդին չորութեանը սորվողը խոնաւ օդի հանդըպի նէ կըհիւանդանայ . նմանապէս շիտրվող մը բարկ օդի մը մէջ կըհիւանդանայ : Ասոր համար օրինակ մը տամ . լեռներուն ծայրերը բնակող մարդիկներ կան . որ օդին բարակութեանը սորվելով բան մըն ալ չեն ըլլար . հիմա բռնէ ցած տեղ մը կամ դաշտի մը մէջ մեծ ցած մէկը լեռը հանէ . քանի որ վեր ելլայ օդը բարկընալով՝ իւր Թոքերը սորվածին չափ օդ չեն կրնար գտնալ : Աւտի շնչաւուր Թիւնը կըսաստկանայ , երակը կըսկսի շուտ զարնել . քիչ մըն ալ վեր ելլայ նէ , կըսկըսի սիրտը խառնըլիլ . ինքն իրեն բեռն կըըլայ . քայլ մը առնելու համար շատ դժուարութիւններ կըսկսի քաշել . ձեռվընէ

<sup>1</sup> Մէկ տեղ մը տաք կամ պաղ ընելը՝ միայն կլինային չինայի . որչափ որ ծովին երեսէն բարձրանա՝ այնչափ ցուրտ կընէ . լեռնային , անտառներով լեցուն երկիրները պաղ կընէ . քարոտ աւազոտ երկիրները սաստիկ տաք կընէ . որովհետեւ քարն ու աւազը շուտ կըտաքնան ու շուտ ալ կը պաղին . նմանապէս երկրին գիրքը հիւսիս կամ հարաւ նա յերկր տաք կամ պաղ կընէ . Մալոյս պաղ կընէ . լեռան մէկալ երեսը Բիւմօնթէն կայ , հոն տաք կընէ :

րը վեր չի կրնար վերցընել . երկու քայլ ( աւորմ ) առնէ նէ , սաստիկ կը հոգնի . անկէց աւելի վեր ելլայ նէ , քթէն բերնէն և մարմնոյն ծակափքներէն արիւն կը սկսի գալ :

Մսէնք որ այն դաշտավայրը բնակող մարդուն հետ լեռնային մը ճանապարհորդէ , մի կարծեր որ մի և նոյն դժուարութիւնները կը քաշէ . մէկը դեռ վաղելու կարողութիւն ունի . մէկային քով քայլ մը ( աւորմ ) անգամ առնելու ուժ չէ մնացեր . ահա ասոր պատճառն ալ սովորութիւնն է . ըսել է որ օդին , պաղին , տաքին , ներգործութեանը սովորութեամբ կրնամք դիմանալ . բայց յանկարծ մէկէն մէկայէն անցնիմք նէ , ՚ի հարկէ անոնց ներգործութիւնները պիտի մնասեն :

Նախ՝ զրուցեմք այս փոփոխութիւններէն ինչ կրպատճառի . օդին փոփոխութեանց պինտ մնասակարը տաք բրած ատենը յանկարծ սրաղ , և մանաւանդ խոնաւ սրաղ ընելն է . թէ և ցրտութիւնը սաստիկ չըլլայ : Մտիկայ նախ քրտինքը կը խամփանէ հարբուխ ( նէ վաղիլ ) յօդացաւ ( նիքրիլ ) տենդ ( հիւմմայ ) կը բերէ . տղաքը ու ծերերը աւելի այն փոփոխութիւնը կը զգան :

Պաղէն ետքը տաք գալը այնչափ մնաս չի գործեր . միայն թէ որ սաստիկ տաք չըլլայ նէ . ( որովհետեւ ան ատենը իջուածքի ( նուզուլի ) պատճառ կը լլայ ) . բայց օդը

չոր ատենը մէկէն խոնաւնայ նէ, կարծես  
 թէ մեր վրայ բեռ մը կիջնայ, օդը ծանր  
 է կրտեմք, վասն զի ինչպէս որ յառաջ ալ  
 ըսի խոնաւութիւնը կը թուլցնէ, թէ որ աս  
 խոնաւութիւնը չափազանց բլրայ նէ, ջրդող  
 ( սրտխառ ) և ուրիշ անանկ ախտեր կը քորատ  
 ճառին : Ասոր հակառակը օդը խոնաւու-  
 թենէ չորութեան դառնայ նէ՝ մեզի ա-  
 ռողութիւն բերած կը ըլլայ՝ մանաւանդ  
 տաք չըլլայ նէ : Տեսանք որ պինտ փնասա-  
 կար փոփոխութիւնը տաքէն խոնաւ պաղի  
 դառնայն է, ու պինտ օգտակարը խոնաւ  
 օդը չոր ու պաղ օդի դառնայն է : Աստի  
 նայելու եմք որ բնակութեանը տեղը ա-  
 նանկ տեղ մը բլրայ, որ հոն փոփոխութիւն  
 ները սաստիկ չըլլան ու ստորեալ օդը չոր  
 ու զով բլրայ ինչպէս Արստանդնուպօլսոյ  
 նեղուցին օդը, իրաւ ատոր որչափ ուշա-  
 դրութիւն ընես անկարելի է որ եղանակ  
 ներուն փոխալելով, օդն ալ չփոխալի, բայց  
 որովհետեւ տեղ կան որ օրը տասն անգամ  
 օդը կը փոխալի, առաւօտուն պաղ ու մի-  
 գապատ է օդը, ցերեկին սաստիկ տաք,  
 իրիկվան դէմ չոր, գիշերվան դէմ խոնաւ  
 կընէ : Աստի բնակելու անանկ տեղ մը զա-  
 տելու է ուր կարելի եղածին չափ, այս  
 փոփոխութիւնները քիչ ըլլան : Այց ասկէ  
 մեծ ընելիքը սա է որ, պղտիկուց օդին փո-  
 փոխութեանցը պաղին տաքին տղայք դի-

մանալ սորվին , առանց ասոր անկարելի է որ զօրաւոր առողջութիւն ունենան : Պրոգնոստիկուց տաքի մէջ սրաղի մէջ ելլալով մտնալովնին սովորութիւն կրստանան քիչ բանէ մը չիվընասելու :

Ալիմայն ու տեղւոյն դիրքը զուրցելէն ետքը , պէտք է որ բնակութեան ձեւին վրայ զուրցեմք :

Նախ՝ պէտք է որ բնակութեան դիրքը տեղւոյն բարձր կողմը ըլլայ ու երեսը չոր ու զովացուցիչ հովերուն կողմը ըլլայ , այն տեղին շատ մօտ մեծ ծառեր չիգրտնըվի , որովհետեւ մեծ ծառերը էլէքտրական զօրութեամբ լենալով կայծակը կըհրաւիրեն <sup>1</sup> . բայց քիչ մը հեռուէն պէտք է որ ծառեր գտնուին , որովհետեւ ասոնք օդը կըմաքրեն :

1 Բայ տեղ մը մրրկալի ժամանակ կայծակէն փախչելու համար , ամենք մեծ ծառերու կամ մեծ շէնքի տակ փախչելովնին կայծակէն զարնովեր մեռեր են : Ասանկ սխալ կարծիքներէ շատ մարդիկներ կրվնասին . ինչպէս շատ տեղ ամալ գոռայ նէ , տանը պատուհանները ու դուռները կըբանան որ կայծակը անցնի երթայ . աս աղէտալի սխալէն շատերը վիրաւորեր են կամ մեռեր են . որովհետեւ կայծակը լցնայ նէ , ըստ մեծի մասին հովն ընթացքին ուղղութեամբը կիցնայ . ասմէն մարդ կըհասկընայ որ պատուհաններն ու դուռները բանալովը , հովը մէկ կողմէն մանայ մէկալ կողմէն ելլայ պիտի . և այս կերպիւս ալ կայծակը ներս հրաւիրված կըլլայ :

Բնակութեան ձեւը պէտք է որ անանկ մը ըլլայ որ ամառը օդ բանի ու արեւ տեսնայ . բայց մինչեւ իրիկուն ալ արեւէն չերի . ձմեռն ալ պաղ ընէ նէ , կարենան ներսը կեցողները ցրտէն զգուշանալ : Սեր տները անանկ մը շինված են , որ մեզ ոչ տաքէն և ոչ պաղէն կրպահպանեն . թէ պէտ աղէկ օդ կրբանի : Տանը շատ մօտիկ տեղը պարտէզ տնկելով ամմէն օր ջրելը , նախ՝ խոնաւութիւն կրբերէ , երկրորդ՝ ծաղիկներէն ելած հոտերը բուրելով կրնայ տանը մէջ նստողներուն դպչիլ :

Տղոց ցերեկը նստած սենեակը պէտք է որ մեծ ըլլայ որ հով բանի ու շատ տաք չընէ <sup>1</sup> . բնաւ գետինին վրայ չխալիտի ըլլայ միշտ բարձր տեղերը պիտի դանրվի . պառկելու սենեակնին մեծ՝ ու աւելի վերի դըստիկոնը (խաթը) ըլլալու է : Իրենց պառկած սենեակին սրատուհանին առջին բնաւ ծաղիկ կամ ուրիշ տնկեղէն չխալիտի ըլլայ :

<sup>1</sup> Կարատան մէջ տղոց նստելու տեղը

1 Պզտիկ տեղի մէջ շատ մարդիկ կենալէն յառաջ եկած մնատին մէկ աղէտալի օրինակը կրկարդատք Անդրկասպեացի Հնդկաստանը եղած պատերազմներուն պատմութիւնը մէջ : Քսան ոտք քառակուսի սենեակի մը մէջ՝ որն որ մինակ մէկ պզտիկ պատուհան մը ունէր հարիւր քառասունըկեց հոգի են դրեր իրիկվնէ մէջը . գիշերվան ժամը ութին յիսուն հոգի միայն ուղջ մնացեր են . առտրվան դէմ քրտաներէք հոգի մնացեր են , անոնք ալ հոգեվարքի պէս :



պէտք է որ վերի դատիկոնը ըլլայ լայնարձակ ու օդ բանի, առատազր (թաւանը) բարձրը ու կանանչով կամ կապուտով ներկած ըլլայ, ու երեք կողմէն պատուհաններ ունենայ. տղոց համար գրելու ու կարդալու սեղաններ ըլլայ առջեւնին, որովհետեւ տղաք ծունկի վրայ գրեն նէ, կուրծքերնին միշտ ծրուի պիտի. նախ՝ ասիկայ մարմնոյն ձեւը կրնայ խանգարել, երկրորդ՝ տղոց կուրծքը շատ դիւրութեամբ կըհիւանդանայ. ուստի կարելի է որ ատանկ հիւանդութիւն մը ատկէ յառաջանայ:

Արտաքնոցները պէտք է որ տղոց նստած տեղէն հեռու ըլլայ. ու կարելի է նէ՝ շէնքին անանկ մէկ ծայրը ըլլայ դուրս ելած որ դպրատանը վրայէն անցնելու հովը հոն դարնէ. այս կերպով անոր հօտը տղոց նրստած տեղին չիդարներ:

Ամառը պէտք է որ գետինը ապստակ ըլլայ բայց ձմեռը պէտք է որ կարպետ (խալի) կամ խըսիր բըռվի: Տղոց դպրատանը մէջ պէտք է որ սեղանատուն մը ըլլայ յատուկ. ասիկայ վարի դատիկոն ըրլլայ նէ աղէկ կըրլայ:

Թէ որ տղաքը դպրատանը մէջ պիտի պառկին նէ՝ վերի դատիկոնը ըլլայ նէ աղէկ կըրլայ. և կամ ամմէն տղայ իրեն յատուկ սենեակ ունենայ. կամ քանի մը տղայ մէկ տեղ պառկին նէ, նայելու է որ պառկած տեղերնին ընդարձակ ըլլայ:



Վստիւտանը մօտ աղբիւր կամ խոնաւու թեան պատճառ տրվող բան մը չըլլայ :

Վստիւտանը մօտ աղտոտ ու գէշ մարդոց բնակութիւն չի գտնուի : Այս կերպիւս տղաք անոնց հետ չեն հաղորդակցիր ու անոնք չեն տեսնար :

Վստիւտանը մէջ բաղմութիւն ըլլայնէ ՚ի հարկէ օգը աւեր պիտի ըլլայ , ուստի պէտք է որ ձմեռը օրը քանի մը անգամ պատուհանները բանան , ու քանի մը վայրկեան ատանկ բաց ձգեն : Ամառը պատուհանները բնաւ չի գոցեն . թէ որ միշտ գէշ հոտեր ըլլայնէ , ան ատենը մաքրելու համար բաներ ծխելու է :

## ԳԼՈՒԽ Բ .

Ուտելեաց և ըմպելեաց վնայ :

Սեր ստամոքսը ու աղիքները միս կամ խոտ ուտող անասուններուն ստամոքսին ու աղիքներուն բաղդատելով , միանգամայն մեր առ զաններուն յարմարութեանը նայելով , կը տեսնամք որ չէ թէ միայն խոտեղէն ու տնկեղէն պիտի ուտեմք , հասրա մսեղէն ալ ՚ի վերայ այսր ամենայնի Պլուտարքոս<sup>1</sup> ու Ռուսօ միս ուտելու գէմ գրեցին , ոմանք

ալ ապացուցանելու ելան թէ միս ուտելը մեզի հարկաւոր բան մը չէ . ասոր համար օրինակ բերին նոր Ապանիոյ և Տալէքառլի այի բնակիչները , որոնք միայն տնկեղէն ուտելով կապրին . բայց ոչ փիլիսոփայներուն խորհրդածութիւնները և ոչ վայրենեաց միս չուտելը մեզի միս ուտելէն ևտ կրնան կեցընել , և ապացուցանել անգամ կարողութիւն չունին՝ որ միս ուտելը բնութեան դէմ է : Նախ՝ մտեղէն չուտելով ապրող մարդ կամ ազգ գտնելէն չիհետեւիր որ միս ուտելը մեզի բնութենէ արգիլած է . վասն զի անանկ մարդիկ ալ գտնելեր են որ առանց բան ուտելու , մի միայն ջուր խմելով , տարիներով ապրեր են . բայց ասկէ կրհետեւի թէ ջուրէն զատ բանովապրիլը մեզի բնութենէն արգիլած է :

Միս ուտելը մեզի արգիլած է ըսելու համար պէտք է որ նախ ապացուցանեն որ միս չուտելով մարդիկ չէ թէ միայն շատ կապրին , հասարակութիւն ալ կրլան . բայց ասոր հակառակը առանց միս ուտելու ապրողները շատ ուժով չեն ըլլար . տկարութիւն չունին , ասկէ զատ վախկոտ ու տղայական բնութեան տէր կրլան :

Փիլիսոփայները միս ուտելու դէմ գրեթէ ունենալին , թէ որ բոլորովին միս ուտելու դէմ գրեթէ ունեն , չափազանցութեան դէմ գրեթէ նէ . որովհետեւ

տեւ շատ միս ուտողները չափազանց աշխտյժուժիւն մը ստանալով, ինքքղինքնին կրմաշեն, ու այս պատճառաւս ալ կեանքերնին ալ կարճ կըլլայ, իրենք ալ կատաղի ու գազան կըլլան :

Ասկէ անմիջապէս կըհետեւցընեմք որ մինակ խոտեղէն կամ մինակ մսեղէն ուտելը մեզի չիգար, ուստի ասիկայ է բնութեան դէմ եղածը և ոչ թէ մսեղէն կամ խոտեղէն ուտելը :

Բնութիւնը դիտմամբ մեզի ամէն կերպ կերակուր ուտելու ներեր է, որովհետեւ մարդս իր խելքովը ուտելեաց ու խմելեաց յատկութիւնները կըբըննէ ու կըգըտնայ, միանգամայն իր մարմնոյն ու բնակած տեղւոյն եղանակին կընայի, և իր ուտելիքները այս կերպիւս կարգի կընայ դնել, ու ինքքղինքը բարեխառնութեան մէջ անլընաս պահել :

Ինչպէս տաք կլիմայի տակ եղած ատենը, մսեղէնը իրեն շատ չիյարմարիր, ու իրեն աւելի յարմար ուտելիքը տնկեղէն ու պըտղեղէն կերակուրներն են, ցուրտ կլիմայի տակ եղած ատենը ասոր հակառակը իրեն յարմար ուտելիքը մսեղէն կերակուրներն են, վերջապէս բարեխառն երկրի տակը մսեղէն ու խոտեղէն կերակուրները մէկ տեղ գործածել հարկ կըլլայ : Տաք կամ ցուրտ եղանակին մէջ ալ մի և նոյն զանա-

զանութիւն կայ : Արտեսնաս որ մարդիկ ալ այն տեղերուն յարմար ուտելիք ընտրելու են իրենց :

Վնութիւնը ամէն տեղի մարդոց ինչ ուտելիքը գրեթէ ցուցուցեր է . տես ցուրտ երկրի բերքերը ու բաղդատէ տաք երկրի բերքերուն հետ :

Սօսիս կղզին բարեկամ մը ունիմ, ինձի կրգրէ թէ հոս գալէս ՚ի վեր առանց համեմային բան ուտելու՝ կերածս չեմ կրնար կոր մարսել, առջի անգամին կարծեցի թէ ես հիւանդ եմ. բայց ետքը տեսայ որ հոս տեղի բնակիչներուն ամէնն ալ համեմ կրգործածեն ու ցուրտ երկիրներ տեսնողները ըսին թէ, հոն մարսելը ուրիշ է, հոս ալ ուրիշ կերպ : Տես որ մարսողական գործարանը տաք կլիմայի տակ գործելու համար պէտք կրլայ կոր որ հոն տեղի բուսած բաները գործածէ . ասանկ ալ ցուրտ կլիմայի տակ, նայէ հոն խաղող չիկայ բայց գինիի տեղ պիտաւ և ասոր նման ուրիշ բնակելիքներ կրգործածվին որոնք ստամոքսին վրայ ներգործելով միտք մարսելու գիւրութիւն կրբերեն : Վնութիւնը կլիմայի մը մէջ ինչ որ բուսցուցեր է նէ՛ այն կլիման բնակող մարդուն պինտ յարմար բաները անոնք են, մի՛ կարծեր որ սովորութեամբ է որ մարդ իր կլիմային բերքերը կուտէ, թէ որ սովորութիւնը ասոր պատճառը ըլլար նէ, պէտք էր որ մէկ տե-

ղի մարդ մը ուրիշ տեղ երթար նէ, իր սովորութիւնն ալ հետը տանէր, և իր սորված կերակուրներովը ապրէր. բայց նայէ որ կարելի է մի. ի՞նչպէս արաբացին Անտուա գալու ատենը խէժով ( զամիսով ) ու արմաւով ( խուրմայով ) ապրի. պէտք է որ հոն միս ուտէ. ու չուտէ նէ կըհիւանդանայ. ճանապարհորդուի ընողներուն շատը ասոր փորձը իրենց վրայ ըրած են : Ա երջապէս պէտք է որ մարդ իր կերածը խմածը կլիմային ու եղանակին յարմարցնէ. բայց ասոնց ամէնէն հարկաւոր ընելիքը իր մարմնոյն կազմութեանը նայիլ ու ուտելեաց մասին ընդհանուր և մասնաւոր զգուշութիւն ընելն է, ու պէտք է որ մարդ ասիկայ ինքը փնտրուէ ու նայի : Ալիմայի մը տակ ի՞նչ բան ու ի՞նչ կերպ ուտելիքնիս, նախ այն տեղի սովորութիւնը կըզուրցէ, երկրորդ երկրին բերքերը : Ասանկ ալ եղանակի մը մէջ ի՞նչ կերպով ապրելիքնիս ինչ ուտել ու խմելիքնիս, նախ մեր ախորժակը կըզուրցէ, երկրորդ սովորութիւնը :

Բայց ամէն մէկ մարմինին հարկաւորը, պէտք է որ ինքը կամ իր տեղը ուրիշ մը տեսնայ քննէ, ու ուտելիքը կարգի դնէ :

Ախա մարդուն մարմինը ինչ կերպ կըլայ ըլլայ, պէտք է որ ո՛չ չափազանց քիչ ուտէ և ո՛չ չափազանց շատ : Այլ մարդ մը սոջ է նէ՛ պէտք է որ ախորժակին չափ ու-

տէ ու խմէ . շատ քիչ կամ չափէ դուրս շատ  
 ուտելը , այսինքն երկու կողմէն ալ չափա-  
 զանցութիւնը , ՚ի հարկէ հիւանդութեանց  
 ու շուտ մեռնելու պատճառ կըլլայ : Աեր  
 ուտելիքին մեր օխորժակը չափ ըլլալու հա-  
 մար պէտք է որ աս օխորժակը շինծու չը-  
 լլայ . բայց ճշմարիտ օխորժակը շինծու օ-  
 խորժակէն որոշելը որչափ դժուար է . կե-  
 րակուրները ու զածիդ պէս համով եփած  
 ըլլայ նէ դրեթէ օխորժակդ կրկին կըլլայ ,  
 մէկ դիէն կուտես ու կըշտանալիք չունիս .  
 թէ որ ետեւէ ետեւ կերած բաներդ ա-  
 սանկ սիրած կերակուրներդ ըլլան նէ , քու  
 քիմքդ ( տամազըդ ) միշտ հեշտութի զգալը  
 վը ալ քեզի Չափ չիկրնար ըլլալ , ալ քեզի չի-  
 կրնար զուրցել թէ կշտացար , այս չափը բա-  
 լական է , ալ մուտեր : Արկրամուր այն ա-  
 տենը կշտանալը կիմանայ երբոր ալ կոկոր-  
 դէն վար չերթար կերածը . նայէ ան ատենն  
 ալ ինչպէս աչքը մէկ կողմէն մէկալ կողմը  
 կըլարձունէ , հնարք մը կըփնտրուէ որ կերա-  
 ծը շուտ մը մարսէ , սեղանին վրայ գտնուլած  
 ուրիշ կերակուրներն ալ ուտելու համար :  
 Մխորժակը ան ատենը մարդուս ուտելիքին  
 Չափ կրնայ ըլլալ՝ երբ որ քիմքը պարզ կերա-  
 կուրներու սորվին : Քօռնառօ վէնետիկցին  
 հարիւր տարիէն աւելի ապրեցաւ պարզ  
 բաներ ուտելով . Սանթթօռիւս , Աալինոս ,  
 Աիրգիլիոս , Աիկերոն , Աէվթօն , Աասանդի



սուրբ Արսէն, սուրբ Անտօն և այլն որ ծե-  
րութեան հասան որկրամուլ չէին: Աուզես որ  
տղադ շատ ապրի ու ողջ ըլլայ, մի թող տար որ  
որկրամուլ ըլլայ. կուզես որ որկրամուլ չըլլայ՝  
սարգ կերակուրներով ապրիլ սորվեցուր:

Շանդերձանքը (տալցան) ու համեմքը  
տղոց կերակուրներէն հեռացնելու է.  
քանզի չէ թէ միայն շատ կերցունելու միջոց  
ըլլալուն համար մարդուն կեանքին կարճե-  
լուն, ու իրեն մարմին դառնալուն սատ-  
ճառ կըլլայ, հապա սարգ կերակուրներէն  
զգուել կուտայ. քիմքը՝ ալ բնաւ սարգ կե-  
րակուրներ չիփնտըուեր, աս զգայարանքը  
ալ հանդերձանքով ծածկըված կերակուրնե-  
րուն գէշ կամ աղէկ եփածը կամ շինածը  
չիկրրնար հասկընալ. ուրեմն պէտք է որ  
համեմը ու հանդերձանքը միմիայն կրլի-  
մային ու եղանակին նայելով գործածես:  
Տղան սարգ կերակուրներ ուտելով ապ-  
րիլ սորվինէ, ապրելու դժուարութիւններ  
չի քաշեր. ինչ գտնայ նէ ան կուտէ. կըշ-  
տացածը դիւրաւ կըհասկընայ, որկրամուլ  
չըլլար, ու աս կերպիւս ալ շուտ մը չիմեռ-  
նիր<sup>1</sup>: Անչի կերածնին՝ անանկ ալ ըմպելիք

1 Տղաք չափահաս մարդոցմէ յաճախ ուտելու են,  
բայց միշտ մեկգլեկէ քիչ, ու միշտ կերածնին ժամով ըլ-  
լալու է. բայց առջի կերածը չիմարսած նորէն կերակուր  
չիտայու համար պէտք է որ միջոցներուն երկարութիւ-

նին պարզ ըլլալու է . գինի , օղի և ուրիշ ըմպելիքներ սովորաբար տղոց չիյարմարիր , երբ յարմարելիքը ետքը պիտի զուրցեմք . ոգեղէն ըմպելիքները չէ թէ միայն տղին արիւնը կրբորբոքեն , ու վտանգաւոր հիււանդութիւններ կրսպատճառեն , հասպատղան քանի մեծնայնէ՝ իր ըմպելեացը մէջ հեշտութիւն փետրուելով , շատ անգամ գինով կըլլայ . գինովութիւնը մէկ խնէթութիւն մը նէ , որուն տեսարանները հոս չիպատմեմ , բայց անկէց առաջ եկած գէշութիւններուն անթիւ եղածը ամմէնքն ալ գիտեն՝ ու ամմէն օր ալ աչքովնին կըտեսնան . գինովի մը իր գինովութիւնը ինչ գէշ բան ըլլալը իրեն

նը զատել գիտնաս . սովորաբար պղտիկ տղոք քիչ կուտեն ու շատ մըն ալ կերածնին կըմարտեն , ու քանի որ մեծնան , կըկըսին շատ ուտել , ու սա կերպիւս կերածնին մարտելու համար իրենց աւելի ժամանակ պետքը կըլլայ . ուստի դուն ալ մէկ կերակուրէ մինչև մէկալ կերակուրի ժամանակը անթեկնալուն միջոցին նայելով իրենց կերակուրին միջոցները կարգի կըդընես . սովորաբար եօթը տարեկան ըլլայ նէ օրը երեք անգամ չորս անգամ հաց ուտեն նէ բաւական է : Բայց ամմէնուն կարծեացը հակառակ կուզեմք որ իրիկան կերակուրը են պարզ ու են թեթեւը ըլլայ , ու ցորեկանը ըլլայ սնուցիչ կերակուրն . որովհետև ցորեկը ուտելն ետքը պտըտելով գիւրաւ կը մարտեն , բայց իրիկունը կերածնուն պէս քընանալու ետեւէ ըլլալուն , տղոք գէշ երացներ կըտեսնան կամ վեր կըցաթկեն թէ որ ստամոքսնին լեցուն ըլլայ նէ , և այս կերպիւս կերածնին ալ գժուար կըմարտի :

հասկըցընելու համար, միայն իր ըրածը պատմելու է. ասոկէ անդին իրեն նախատինք չի կրնար ըլլալ. ահա այս պատճառներով կուզեմք որ տղան պարզ կերակուրներով ու պարզ ըմպելիքներով սորվի:

Սեր ստամոքսը ինչ բանի որ սորվի նէ ան կը մարսէ. ուստի տղան պէտք է որ ամ մէն բանէ ուտելու սովորութիւն ստանայ, պէտք է որ իր կերակուրները փոխալին, մի և նոյն բանը ուտելը չէ թէ միայն այն բանէն զզուիլ կրբերէ, հապա ստամոքսը ուրիշ բան ուտելու սովորութիւն չունէ նալուն, տղան իր ամմէն օրվան կերած բանը չի գտնայ նէ, անօթի կըմընայ, ուստի կուզեմք որ իր կերակուրը երբեմն կովի, շիտարի, ձուկի, խաչած կամ խորոված միս ըլլայ, երբեմն տա կամ նա խոտեղէն կերակուրը. երբեմն չոր հաց, երբեմն լոկ պըտուղ, այս կերպիւս տղին կերակուրը ամմէն օր փոխալելովը, նախ կերածէն զզուիլ չի գար իրեն, երկրորդ ամմէն բանէն ուտելու իրեն ստամոքսը կըսորվի:

Պէտք է որ տղոց կերած բաները, ինչպէս ալ չափահասներուն, աւրած կամ հիււանդ կերակուրներ չըլլայ. ուստի շատ զգուշութեամբ նայելու է որ կերած միտերնին հիււանդ անասունի կամ հոտած ձուկի չըլլայ. կերած հացերնին փոտած ցորենէ չինած չըլլայ և այլն, ասոր վրայ

երկար չեմ գուրցեր, որովհետեւ ասկէ յառաջ գալու մնասները ամէն մարդ կը հասկընայ:

Այս ընդհանուր զգուշութիւններէն զատ տղին մարմնոյն կաղմութեւնը նայելով ամէն տղին յատուկ զգուշութիւններ կան, որոնց չինայելը պակասութիւն մըն է:

Տղան զօրաւոր կամ տկար, արիւնտու կամ թուլամորթ ըլլայ նէ միւսնոյն կերպիւ չխախտի սնանի:

Օգրաւոր տղին կերածը պէտք է որ ուժով ըլլայ, պէտք է որ ստամոքսը աշխատի, որ կարենայ մարմնոյն պիտոյքը հողալու. ուժով մարդուն ստամոքսը թեթեւ բաներուն ներգործութիւնները հազիւ թէ կիմանայ, ուստի գրեթէ անգործ կըմընայ իր ուժին նայելով, ու այս պատճառաւ ալ մարմնոյն մէկալ մասունքները ստամոքսին նայելով կըթուլնան. թէև պէտք եղածին չափ սնունդ ալ գտնան նէ, ամէն մարդ կը հասկընայ որ մէկը ինչուք իրիկուն բեռտանի կամ քար կրէ, և ասոր նման ուրիշ աշխատանքի մէջ ըլլայ նէ, ՚ի հարկէ կերածըն ալ պէտք է որ ուժով բան ըլլայ իրեն ուժ տալու համար. ուժով մարդն ալ որովհետեւ ՚ի բնէ շատ ուժ կըխարժէ, ուստի պէտք է որ կերածն ալ ուժով ըլլայ իր մարմնոյն ուժը պահելու համար. արդայք տկար ալ չըլլան, չափահաս մարդիկնէ:

բուն մէջ, ուժովներուն հետ չեն կրնար  
բաղդատուիլ. ուստի աս ըսելովս չիհասկցիլի  
որ ուժով չստիահաս մարդը ինչ պիտի ուտէ  
նէ, ուժով տղան ալ ան պիտի ուտէ. մի  
այն սա կուղեմ հասկըցընել, որ ուժով տը-  
ղայ մը ուժով մնալու համար, պէտք է որ  
ուժով բաներ ուտէ, ասոր հակառակը տը-  
կար տղան ուժով բաներ ուտէ նէ, կամ  
ան բաներուն ստամոքսը չիտանիր, կամ  
տանելու ալ ըլլայ նէ, որովհետեւ մարմի-  
նը ուժով չէ, ստամոքսին առած ուժը չի  
կրնար պահել. ուստի կարելի է որ հիւան-  
դանայ :

Առջինը շատ պիտի ուտէ, բայց օրը  
քանի մը անգամ միայն. ետքինը քիչ պիտի  
ուտէ, բայց յաճախ. մէկուն կերածը ուժ  
տալու բաներ ըլլալու են, մէկալինը սը-  
նունդ տալու :

Ամէն մարդ կըհասկընայ որ տղան ու-  
ժով կամ տկար ըլլայ նէ իր կեանքը միևնոյն  
վիճակի մէջ չիգտնուիլի. մէկը եղանակին տա-  
քին պաղին, ու հիւանդութեանց դիմանա-  
լու աւելի կարողութիւն ունի. ու թէ որ  
ինքրզինքը չիհոգնեցընէ նէ աւելի երկար ա-  
տեն կասարի քան թէ տկարը, որն որ քիչ բա-  
նէ մը կըհոգնի, աշխատանքի չիգար, ու  
քիչ բանէ մըն ալ կըհիւանդանայ. ու աս  
կերպիւս կամ աղէտալի կեանք կանցընէ կամ  
չուտ կըմեռնի. ամէն մարդ ասիկայ կըհաս-

կրնայ ու ՚ի հարկէ կուգէ ալ գիտնալ թէ կա-  
 բելի չէ մի որ տկար տղան ուժով ըլլայ .  
 Նախ տկար ըսելով հիւանդ չեմք հասկընար ,  
 ուստի ինչ որ պիտի զուրցեմ նէ՝ հիւանդ  
 տղին բնաւ չիլերաբերիր . տկար տղան հի-  
 ւանդութիւն մը չունի , բայց իր մարմնոյն  
 կազմութիւնը տկար է , իր ոսկորները  
 հաստը չեն , իր ջիղերը թուլ են , ինքը թու-  
 լամորթ ու դանդաղ է . ասանկ տղին թէ որ  
 կազմուածքը բոլորովին փոխելը անկարելի  
 է նէ , մէկալ կողմէն ալ իր տկարութիւնը  
 քիչցընելը կարելի է . թէ որ ոսկորները չեմք  
 կրնար մեծցընել , թէ որ զինքը հաստամար-  
 մին ու հաստաբազուկ չեմք կրնար ընել նէ ,  
 մէկալ կողմէն ալ իր ունեցածին ուժ տա-  
 լով , զինքը իր տկարութենէն կրնամք խալը  
 սել . ոս ալ երկու բանով կըլլայ . մէյժը մար-  
 մինը ու մարմնոյն մասունքները գործածե-  
 լով , մէյմալ ուժով բաներ ուտելու իրեն  
 յարմարութիւն տալով . ամմէն բան գործա-  
 ծութեամբ կըզօրանայ . շատ քալող մար-  
 դուն նայէ ոտքիւնները ինչպէս ուժով են .  
 ձեռքիւնները բանեցընող և ձեռքովը  
 բեռ վերցընող մարդուն նայէ ինչպէս բա-  
 զուկները հզօր են . ահա՛ ասանկ ալ ըստամօք  
 սը ըսեմք թէ թեթե բան մարսելու միայն  
 կարողութիւննի , կամաց կամաց թեթե բան  
 տալու տեղդ ուժով բաներ տուր ստամօք  
 սըն ալ ասանկով կուժովնայ կըսկսի ուժով



բաներ մարտել ու մարմնոյն ալ ուժ տալ . բայց պէտք է որ ստամոքսին տուած ուժը խարձելու տեղ ունենայ մարմինը . տունը իր սենեակին մէջ նստող մարդուն , ու մինչեւ իրիկուն պըտըտող կամ աշխատող մարդուն միննոյն ուժ պէտքը չէ . ուստի մէկ կողմէն չի խարձէ , մէկալ կողմէն ալ ուժ տալու բան ուտէ նէ , 'ի հարկէ կըլննասի . ահա այս պատճառաւ տղան ուժովցընելու համար պէտք է որ չէ թէ միայն ստամոքսին ուժ տաս՝ հասար 'ի միասին մարմինն ալ գործաւ ծելով ստամոքսին ուժը բանեցընելու միադնես . բայց նայէ՛ , մի արտորար , ետքը ունեցածդ ալ ձեռքէդ կերթայ . մէկէն ուժ տալու ելլասնէ ետքը տղան բոլորովին կըտը կարացընես . շոս մեծ խոհեմութիւն պէտք է ոչ այնչափ մարմինը գործածելուն , հասար իրեն ուտելիքին վրայօք , որովհետեւ մարմինը աշխատցընելու ելլաս նէ , տղան երբ որ հողնի նէ՝ աչքովդ կըտեսնաս իր հոգնաւ ծութիւնը . բայց տուած կերակուրիդ աստիճանը , ու տղին միճակին յարմարութիւնը ընտրելու համար պէտք է որ աչքդ չորս բանաս . երբ յառաջ երթալու է , ու որչափ երթալու է . երբ կայնելու և երբ դառնալու է . պէտք է որ ասոնց ուշադրութիւննես , ապիկայ դիտնալը դժար չէ , բայց միայն ուշադրութիւն պէտք է . այն տկար տղան , որ առաջ հաւկիթ կամ ասոր պէս դիւրամարս բաներ

միայն կրնայ մարտել նէ , մէկէն իրեն շատ  
ու դժուարամարս բաներ տալու շէս ելլար ,  
այն տկար տղան մէկէն չորս ժամ քայլելու  
կամ ծառերուն վրայ ելլալու իջնալու շէս  
ստիպէր , հասցա նախ հաւկիթէն քիչ մը ա-  
ւելի զօրացուցիչ ուտելիք կուտաս , հեան  
ալ իրեն ամէն օրվրնէ աւելի շարժում ընել  
կուտաս , կամնց կամնց աստիճան աստիճան  
կուգաս ուժով տղին ըրած շարժումը ( դա-  
տիլը ) իրեն ընել տալու , ու միանգամայն  
ուժով տղին կերածը իրեն կերցընելու :

Այրբ որ կըտեսնես որ տղան կըհոգնի կոր ,  
տուած աշխատանքդ զինքը չիզօրացընէր  
կոր , կամ կերած բանը չխմաբսեր կոր , հոն  
կրկայնիս . ետ կը դառնաս , աշխատանքը՝  
ուտելիքը քիչ մը կըթեթեւցընես , ու մին-  
չեւ որ չիտեսնաս որ ան աշխատանքին ու  
ուտելիքին կըտանի կոր տղան , բնաւ աշխա-  
տանքին ու ուտելիքին աստիճանն ալ չէս  
եւելցընէր :

Վատելու շարժման վրայօք տալու ծանօ-  
թութիւններնիս ուրիշ դիտի մէջ խօսիմք  
պիտի . հոս միայն ուտելեաց ու ըմպելեաց  
վրայ պէտք եղած ծանօթութիւնները կու-  
տամք , զուրցելով որ քանի տեսակ կերա-  
կուր ու խմելիք կան , որը ուժով է և որը  
թեթեւ . որը դիւրամարս , և որը դժուար  
մարս է , ասոնց վրայ պէտք է որ տեղն ՚ի  
տեղը խօսիմք :

Մտեղէն կերակուրներու վրայ :

Միսը խոտեղէն կերակուրէ աւելի սնուցիչ ու զօրացուցիչ ըլլալը ամմէնուն գիտցած բանն է , բայց չափազանց միս ուտելը ինչպէս որ առաջ ալ ըսինք արիւնը կը սաստկացընէ , մարդը կատաղի ու գազան կընէ , մանաւանդ աղէկ եփած չըլլայ նէ :

Ամմէն տեղի միսը ու միսին ամմէն կողմը մի և նոյն կերպիւ չեմք մօրսեր , նախ՝ տաք կլիմայի տակ եղած անասունը չոր ըլլալուն , իր միսն ալ չոր կըլլայ . ուստի հոն տեղի միսերը դժուարամարս կըլլան . ասոր հակառակը շատ ցուրտ ու խոնաւ կլիմայի անասուններն ալ թուրամօրթ ըլլալնուն իրենց միսը աղէկ չըլլար թուլ կըլլայ . ուստի դիւրամարս ու սնուցիչ ալ չըլլար . միմիայն բարեխառն կլիմայի տակի անասուններուն միսը աղէկ սնուցիչ ու դիւրամարս կըլլայ :

Սովորաբար խոտ ուտող կամ միս ուտող անասուններուն միսը միակերպ չըլլար . միս ուտող անասնոց միսը չոր կամ պինտ ըլլալնուն , մեղի այնչափ չիարմարիր : Առանկ ալ թարմ խոտ կամ չոր բաներ ուտող անասունին միսը միակերպ չըլլար . առջինը աւելի դիւրամարս կըլլայ քան թէ ետքինը :

Վայրենի անասուններուն ու ընտանի անասուններուն միան ալ մէկզմէկէ զանազանութիւն ունի . շատ պտրտող կամ հանգիստ նստող անասունը միակերպ չեն սրնանիր . մէկը չոր ու զօրաւոր կրլայ , մէկալը եղտո ու տկար . միսերնին ալ նմանապէս չոր կամ կակուղ կրլայ . մէկին միսը աւելի ուժ կուտայ քան թէ միւսինը . բայց ետքինը աւելի դժուարամարս կրլայ քան թէ առջինը :

Նասունը քանի որ պզտիկ ըլլայ իր միսըն ալ կակուղ ու դիւրամարս է . քանի որ մեծնայ այնչափ ալ իր միսը դժուարամարս , բայց աւելի զօրացուցիչ կրլայ . ասանկ ալ արուն ու էգը . ասոնց պզտիկութեան ատենը իրենց միսը միւս նոյն է . բայց երբոր մեծնան նէ արուինը աւելի չոր կրլայ երբեմն կաշիի կրդառնայ ու ուտելը անկարելի կրլայ :

Վրուտած ( հատրմ եղած ) անասունները գրեթէ տղայութեան մէջ մնալովնին միսերնին այնչափ չոր ու կաշիի պէս չորլար , հապա իրենց ուժը գործածելու անկարութիւն ունենալնուն մարմիննին եղ կրկապէ . ահա ասոր համար ասոնց միսը ամմէնէն աւելի համով ու դիւրամարս է :

Վեր ու նիհար անասունին միսը մէկզմէկէ զանազանութիւն ունի . մէկուն միսը չոր ու միւսինը կակուղ կրլայ , բայց շատ

եղոտ ըլլայ նէ ան ալ դժուարամարս կըլլայ :

Նոր մորթըլած անասունի միսն ու հոտած միսը մի և նոյն չըլլար . անասուն կայ որ միսը ինչուկ որ քիչ մը չխառակի նէ դըժուարամարս կըլլայ , ինչպէս հնդկահաւին , սագին ( խաղ ) , խողին , և այլն . բայց թէ որ հոտերու աստիճանը գայ նէ , ան ատենը կեղ մը հիւանդութեց պատճառ կըլլայ :

Նսանկ ալ չորցած կամ աղած միսը դըժուարամարս կըլլան :

Նաստունին դիւրամարս մասունքներն են իր միսը , թոքերը , լեարդը , լեզուն , աղիքնին , և այլն . դժուարամարս կողմերը կաշին , ծուծը ( իլիկը ) , միսերուն պօշը և այլն :

Սոխրաբար առնելով ձուկերուն միսը աւելի կակուղ ըլլալուն աւելի դիւրամարս են քան թէ չորքոտանիներուն միսը . ասոնց մէ ետքը թռչունները կուգան . բայց ինչպէս որ վերը ըսինք չորքոտանիներուն ու թռչուններուն ընտանիները , ինչպէս ոչխարը , կովը , այծը , հաւը , հնդկահաւը , բազը , և այլն աւելի դիւրամարս միս կունենան քան թէ որսի միսը և այլն : Արսի մսին մէջ ալ չորքոտանիներուն որսը աւելի դիւրամարս կըլլան քան թէ թռչունինը . ասանկ ալ ծովային անասնոց միսերուն մէջ կաշի պէս միս ունեցողները դըժուարամարս կըլլան . մանաւանդ Սիփեան , Սպիփեան , Չուլանդը , Պեօձէիլը և այլն :

Ասոնցմէ եղած ուտելիքներն , որ են նախ ձուկերէն՝ խաւիւրն ու Պալլէի էոմոմը-լասին . ասոնք ծանր են . բայց այս երկիրներու ս բնակիչները շատ կրտսրեն : Արկրորդ շորքոտանիներէն ու թռչուններէն ու զեռուններէն՝ կաթն , ու սրանիրը , մածունը , սերը ( խայմասը ) , կարագը ( թէրէ եաղին ) ու հաւկիթն են : Ատթը սնուցիչ է բայց ուժ տուող կերակուր մը չէ . ասանկ ալ կարագը . ուստի ասոնք տկար մարդոց աւելի կը յարմարի . բայց կարագը շատ ուտեսնէ ըստամոքսը չիմարսեր . որովհետեւ ասիկայ կաթի չափ դիւրամարս չէ . յաճախ ալ գործածես նէ ստամոքսը կրթուլանայ :

Արը աւելի սնուցիչ է , բայց այնչափ դիւրամարս չէ :

Պանիրը , մանաւանդ եղտոր՝ շատ սնուցիչ է , բայց շատ ալ դժուարամարս է . ուստի ուժով ստամոքսի կրյարմարի : Պանիրը հիննայ նէ թթուութիւն մը կրտտանայ . մէջը որդեր կը ծընանին . ան ատենը բնաւ չի յարմարիր տղոց . որոնց շատ անդամ ճըճի ( սողուճան ) ունենալնուն պատճառ պանիրը յաճախ գործածելն է :

Մածունը զովացուցիչ է քան թէ սրնուցիչ :

Չեփած հաւկիթը դժուարամարս է , քիչ մը եփվելով դերխաշ ( բաֆատան ) ըլլայ նէ՝ սնուցիչ ու միանգամայն դիւրա-



մարս կրլլայ : Շատ եփովինէ՛ չէ թէ միայն դը  
ժար կրմարսի , հասրա գէշ հոտեր ալ կը հաննէ :

Հաւկիթը թարմ ( թաղէ ) չըլլայ նէ  
այնչափ դիւրամարս չըլլար , աւրած ըլլայ նէ  
չուտիլի :

Հաւկիթը աւելի տկար ստամոքսի կը  
յարմարի :

### ՅՕԴՈՒԱԾ Բ .

Խոտեղէն ու սրտեղէններուն վրայ :

Ըսոնց մէջը ցորենը , գարին , մըսրացո  
րենը , բրինձը կորեկը ( տառըն ) կան , ու  
րոնք մեզի պիտուական կերակուրներուն  
առջի կարգը կրնամք դնել :

Գարին շատ սնուցիչ է , թէ որ երկու  
մաս ցորենի հետ մէկ մաս գարի խառնես  
աղւոր սնուցիչ հաց կրլլայ ատկէ . բայց  
անկէ աւելի գարի խառնըվինէ դժուարա  
մարս կրլլայ . ու ուժով ստամոքսներու մի  
այն կըյարմարի . աթենացի ըմփչամարտնե  
րը ( բէհլիվանները ) գարի կուտէին ուժով  
նալու համար . գարին շատ ատեն պահովինէ  
մանաւանդ կեղեւը վերցած ըլլայ նէ , շուտ  
մը կըբորբոսի ( քիւֆլէնմիշ կրլլայ ) . ուտոի  
աղէկ կրլլայ ալուր չըրած կամ չեփած քանի

մը անգամ լուանաս :

Սորացորենն ալ սնուցիչ է , բայց հաց շինվի նէ՝ որովհետեւ չուռենար ( խաւառմիշ չըլար ) , անոր համար թեթեւ չըլար . բայց համը աղէկ ըլլալուն՝ ցորենի հետ խառնելի նէ՝ ակործելի հաց մը կըրնայ ըլլալ :

Բրինձն ալ սնուցիչ է , ու շատ անգամ կըդորձածվի . ցորենի խառնելիքով համով հաց ալ կըրնայ շինվիլ . բրինձէ շատ դիւրամարս կերակուրներ կըլլայ թէ որ աղէկ եփվի նէ . ու տկար տղոց ալ շատ կըյարմարի . Արսեն որ բրինձ շատ ուտողները կըհիւանդանան . չեմ գիտեր ասիկայ որչափ իրաւ է . միայն մէկը գիտեմ , քանի բրինձ ուտէ նէ մորքուր ( խաւրտէշէն ) կըլլայ :

Երկրորդ կարգ՝ բակլայ , լուբիա ( ֆասուլիայ ) , սոսյն ( մերձիմէկ ) , սիսեռն ( նուհուտ ) , Պէճնի՝ ձէ , ասոնք թարմ ( թաղէ ) եզանձ ատեննին աւելի դիւրամարս բայց քիչ սնուցիչ են . չորցած ատեննին աւելի սնուցիչ բայց դժուարամարս են : Աւտի չին յարմարիք տկար ստամոքաներուն , որովհետեւ ուրիշ կերպիւ ալ անհամդիտ կընեն :

Նոնցմէ ստորաբար հաց չիշինվիր բայց իմ տղայու թեանս ատենը Աստանդնուպօլիս սով եղաւ նէ՝ լաւ գիտեմ որ քաղքին մէջ բակլա և լուբիա ու սիսեռն չի մնաց հաց շինեցին մեզի կերպուցին , ասոնց մէ-

ջէն մի միայն մէկ կերպ բազմաց կայ, որ կրնայ (խմորիչ, ուստի այն կարելի է գործածել:

Արորդ կարգ՝ կաղին (Ֆրնարիս), ընկոյզ (Ճէվիզ), նուշ (պատեմ), Վըսըլի, ու ստոր նրման ուտելիքները քիչ սնուցիչ են, ու միանգամայն դժուարամարս են. մանուշանդ հինցած ըլլան կամ ներսի մաշկածեւ կեղեւովը ուտես նէ:

Քասա, ուրկէ Չիտլի կըլլայ, որ ախորժելի և սնուցիչ է:

Շագանակ (քէստանէ), խաշածը ու խորովածը աւելի դիւրամարս ու սնուցիչ է. Իտալիա ատկէ հացի պէս խմոր մը կըրշինեն կուտեն. բայց աղէկ չըլլար, ու շատ դժուարամարս է:

Սուլայ, Սուխ, Սոսոնի, գեանախնձոր (եէրէլմուսի) շատ թեթեւ բայց սնուցիչ են. գեանախնձորը ուտելու համար պէտք է առաջ խաշի ու ջուրը թափալի, առանց ասոր գէշ է. քանզի կեղեւին մէջը թւյն մը կայ որ տաք ջուրին մէջը կըհալի: Վեանախնձորէ շնուած հացը գէշ չըլլար, բայց ցորենի հացի պէս ալ սնուցիչ չէ. ուստի ցորենի արուրը ու ստոր արուրը մէկըմէկու խառնըվին նէ աղէկ կըլլայ:

Պոսըլի: Սոխորարար ասոնք սնուցիչ չեն. մէջը բնուն որը կըթրթուին. և ասոնք գովացուցիչ են. ինչպէս Իլիմը, բալը (Ֆիշ

նէն), թթու Փորձո՞ւ՞սալը, թթու խնձորը,  
սալորը, հաղարջը ( ֆրէնկ լուզիւմին ) և այլ  
լին . ասանցմէ աղւոր օշարակներ ( շէրպէթ  
ներ ) կըլայ . տըք աս պտուղներէն կրնան  
ուտել, մանուանդ ամառը . բայց նայիլու  
է որ նախ հատուն բլան, երկրորդ շատ ջի  
գործածվին, որովհետև ասիէ գէշ հիւանդ  
դութիւններ կըլնան սրտածառիլ, ըստ  
որում ասանց կեղևները, երբեմն կուտելը,  
երբեմն ալ իրենց գիտը ( գիւտպէն ) տաւ  
մաքսին վրայ ծանրնալուն ջն մարտիր, ուր  
կէ ալ փորքըչուք ( իչ աղըրը ), աղիաց բող  
բորումն և այլն, կրնան սրտածառիլ : ( աս  
անգամ ջերմի ( սրթմայի ) սրտածառ՝ շատ  
պտուղ ուտելն է :

Քաղցր պտուղները ինչպէս անուշ իլիճօ  
նը, Փորձո՞ւ՞սալը, կեռասը, ծիրանը ( խայի  
սին ), ձմերուկը ( խարբուղ ), սեխը ( խա  
վանը ), վարունկը ( խրեարը ), խաղողը, ա  
նուշ սալորը, ու տանձը, անուշ խնձորը,  
արմառը ( խուրման ), թուզը, թութը, և  
այլն . ասանք տուելի շոքարտս բլանուն, ա  
ւելի սնուցիչ են . ասանց որը միգրպեր են,  
ինչպէս ձմերուկը . որը զախցուցիչ է ինչ  
պէս անուշ իլիճօնը ու Փորձո՞ւ՞սալը . ուտի  
տաք եղանակին շատ կըլարմարին . որը զօրա  
ցուցիչ է ինչպէս խաղողը . որը լուծիչ է  
ինչպէս սեխը, թուզը և այլն . ասանք հասուն  
բլան նէքիչքիչ ուտելը գէն չունի, բայց

չատ ուտելը ստամոքսը կըհոգնեցընէ . առկէ զատ աստնք ստամոքսին մէջ կաշխին , ինչպէս որ խաղողը մեր աչքին առջին ամմէն օր կըլլայ նէ , ուրկէ արիւնը սատականալով հիււանդութիւններ կընան պատճառիւ :

Ուրիշ պտուղներ ալ կան որ սըխմող կըլլան ինչպէս սերկեւիլը ( այլան ) , զղեարը ( մուշմուլան ) , ձիթաստուղը ( զէյթինը ) և այլն . աստնք առաջքիններուն վրայ ըսածնուս պէս աղէկ չիհասած , տղոց տալու չէ . երկրորդ խիտ քիչ տալու է , որովհետեւ գրեթէ տղոց բնաւորութեանը աս պըտուղները չլարմարիր :

Վանք ուրիշ խտտեղէններուն , որ եփելով կուտեմք , աստնցմէ կայ որ սնուցիչ ու զովացուցիչ է , ինչպէս բանձարը , կայ որ լուծիչ է , ինչպէս դդումը ( խասպիսը ) , ասկէ յաճախ ուտելը փորքշուք ( խսալ ) կամ փըսխել կըբերէ . կայ որ դժուարամարս ու անսուտը է , ինչպէս Վախլիճանը . կայ որ քիչ սնուցիչ է , բայց անվնաս են ինչպէս մուշը ( էպէկէօմէճին ) , շովինը ( ըսպաննախը ) , թրթիջուկը ( խուզու խուլաղին ) , որոնք զովացուցիչ բաներ են :

Կաղամբը ( լահանան ) ու կաղամբխտը ( քառնապխտը ) քամի կըսրտածառեն :

Մճը սալաբան , շինդիպան և այլն , ստամոքսը կըզօրացունեն :

( Նողգամը ( շալլամը ) բողկը ( թուրիլը )

միզաբեր են, անանկ ալ կարոսը (.բէրէփէզը), ասոնք ախորժակ ալ կրբանան:

Օճներեկը (խուշ խոնմազը) միզաբեր է:

Կանդառը (էնկինառը) սնուցիչ է, բայց մարդ յաճախ ուտէ նէ՛ կըսեն թէ քունը կը փախչի:

Ստեպղինը (հալուճը) միզաբեր է. ու բաւական սնուցիչ կերակուր մը կըլայ:

Սունկը (մանթարը), նախ կան որ թու նաւոր են կըմեռցընեն. կան որ միայն փորուցաւ (սանձի) կուտան, աղէկն ալ միշտ դժուարամարս է. վերջապէս ասիկայ տղոց բնաւ չխարմարիր:

### ՅՕԴՈՒԱԾ Գ.

Կերակուրները եփելուն վայ:

Սովորաբար կերակուրները եփելէն ետքը կուտեմք. մենք վայրենեաց պէս հում միտ կամ ուրիշ բան չեմք կընար ուտել:

Սխառ ու խտտեղէնները եփվելովն աւելի դիւրամարս կըլան. խորոված կերակուրները աւելի սնուցիչ են քան թէ ջրի մէջ եփածները: Ինչ կերպ եփվին ալ նէ նայելու է որ կապարէ կամ պղնձէ աման չիգործածես. պղինձը՝ թէ և անագոտ (խալայը) ըլայ, քիչ մը խոնաւ կենայնէ կըկտնանչի. մտերս գէնք մէտաղէ (մատէնի



Թիւթեայէ) ուղեցին ամաններ շինել, բայց  
 առ մետաղին մէջ շատ անգամ մկրնդեղ ( սը  
 չանօթու ) գրանրվելուն, մէջի եփած կե-  
 րակուրները կրնայ թու՛նուորել, ուստի կա-  
 րելի է նէ կամ հողէ ամանի մէջ եփվին կամ  
 երկաթ տախտակէ (տաճէ) աղւոր ամաններ  
 շինեցին մօտե՛րս՝ անոնք գործածվին, որոնք  
 ոչ չուտկըհիննան եւ ոչ ալ կերակուրները կըր-  
 նան թու՛նուորել: Բայց ասոնցմէ ալէ կը ա-  
 ռանց ապակելու ( սըսըղ ) հողէ ամաններ  
 են, ապակիին ( սըսին ) մէջը ստորաբար կա-  
 պար կամ ուրիշ մետաղ կայ, որոնք տաքէն  
 հալելով կերակուրին կրնան խառնրվիլ, ճեր-  
 մակ ապակին այնչափ ինաս չունի, բայց մեղի  
 մնայ նէ աղէկ եփուն հողէ ամանները ամ-  
 մէնէն վեր կըբընեմք:

Կերակուրները եփելու ատեննիս երբե-  
 մըն մէջը թարփն, խարնփիլ, Օ ինճէփիլ,  
 Պիղէ, Զինփիպան ճէվիլի կըգործա-  
 ծեմք, ասոնք գրդիչ են, ուստի շէն ալ  
 յարմարիք արխնուտ ու ուժով մարդոց,  
 եւս առաւել տկար կուրծքի տէր բրդոներուն,  
 բայց տաք երկիրները գործածելը հարկ մըն  
 է: Ի վերայ այսր ամենայնի շախաղանց գոր-  
 ծածու թիւնը ինաս կըգործէ:

Ասկէ զատ շաքարը կայ, որ քիչ ուտեմք  
 նէ կերածնուս կամ խմածնուս մէջը խառ-  
 նրվելով մեր կերածը կամ խմածը դիւրա-  
 մարս կընէ, բայց ասիկայ աւելի ծերերուն

կըյարմարի . տղաք քիչ մը շաքար ու տեն՛նէնէ  
 փնաս չունի , բայց շատ ուտեն՛նէ ստա  
 մաքսնին կըտըկարացընէ :

Աղը որ ամէն կերածնուս մէջ կըմըտ  
 նայ , մեղի շատ հարկաւոր է , առանց աղի  
 անհամ կերակուրները դժուար կըմարսեմք .  
 բայց ասոր հակառակը թէ որ շատ աղի  
 ըլլայ նէ , որովհետեւ աղը դրդիչ է՝ մեղի  
 տաքութիւն կուտայ , ու ուրիշ հիւանդու  
 թիւններ կըպատճառէ :

Վացախը զովացուցիչ է , բայց շատ  
 գործածելը կըտըկարացընէ ու կընիհարացը  
 նէ ( կըզայիֆցընէ ) . ուստի աւելի արիւնտտ  
 ու մաղձտտ մարդոց կըյարմարի . բնաւ տը  
 կար ու երած տղոց չիյարմարիր :

Իլիճնը աւելի զովացուցիչ է , բայց քու  
 ցախին սէս տկարներուն չիյարմարիր :

Սոխը ու սխտորը մսի կամ ձուկի հետ  
 ուտելը երբեմն օգուտ կըդործէ , բայց  
 շատ ուտելը արիւնը կըսաստկացընէ :

Էղերը՝ մանաւանդ ձեթը ( գէյթին եա  
 ղին ) ու կարագը՝ եփովելովնին դժուարա  
 մարս ու փնաստկար կըլլան . ուստի բնաւ  
 տղոց չեն յարմարիր :

Սեղըը շաքարին յատկութիւնները ու  
 նի , սա զանազանութեամբ , որ լուծիչ է ,  
 ու երբեմն ալ թունաւոր է , մանաւանդ  
 հինցած ըլլայ նէ , աղէկ մեղըը գարնան  
 մեղըն է :

Ընդեղիքներուն վրայ .

Տղոց յարմար ըմպելիք ո՛չ խահլէն ու Չոյն է , որանք ջնդեբուն կրդ ըպէն , ո՛չ գիւնին , ո՛չ օղին , ո՛չ Պիւսն , և ո՛չ ուրիշ սպեղէն ըմպելիքներն են . աղոց էն յարմար ըմպելիքը ջուրն է . թէպէտ թուրամթ ու տիար , սասնկ ալ Սաւաճայի բնու թիւն ու նեցող աղոց քիչ մը գինի տարը օգուտ ունի քան թէ վնաս . բայց սովորաբար աղոց չ'յարմարիր . վերջապէս թէ որ կարելի է նէ աղք մի միայն ջուր խմեն բայց սրճափ կարելի է նէ ջրին աղէկութեանը նայիլի , ձիւնի ու սասնի (սուղի) նոր հարսած ջուրերը աղէկ չ'են . սասնկ ջուր գործածալը սովորաբար Սաւաճայ կրրայ . լիճերու և անձրեւի ու Սաւաճի ջուրերը խմողները փութուցաւ կրխատարիին , երբեմն ալ փոքրակի կը հանգրային :

Վիճերուն ու կայնած ջուրերուն մէջ փրտած քաներ գտնելիլուն համար սասնք կը հօտին , ջուրն ալ կրդէ չ'ուայ . ուստի այն ջուրերը խմողները կը հիւանդանան :

Միւրի ջուրերը բոտ մեծի մասին անձրեւի ջուրէն աղէկ կրլան . բայց ասիկայ ջուրին ելած տեղին , կամ թէ ջուրը ուրիկեց կուգայ կոր նէ , ան տեղի հողին կազմու-

Թեանը կընայի . ինչպէս կիրոտ ( քիրէճոտ ) հողերուն կամ քարերուն մէջէն ելած ջուրը 'ի հարկէ կիրոտ ըլլալուն համար գէշ կըլլայ :

Եւայց թէ որ աղբիւրի ջուրին ելած տեղը հանքային կամ կրային ջրայ , ջուրը աղէկ կըլլայ , սովորաբար տաք ջրալուն ալ զովացուցիչ կըլլայ :

Ամէնէն սղէկ խմելու ջուր՝ վազուն ջուրն է , ինչպէս գետերունը . բայց սա ջուրերը ինչպէս հողի վրայէ կանցնին նէ , սն հողերուն յասկու թեանցը յարմար յատկու թիւն կրտսանան . ինչպէս թէ որ կիրոտ տեղերէ անցնին նէ կիրին մէկ մասը ջուրին մէջ խառնըվելով , ճամբան ջուրը 'ի հարկէ կըպէշնայ , առանկ ալ ուրիշ հանքերը , պէտք է որ վազուն ջուրը ծեծվելու համար ջուրին մէջը չիհալող քարերուն վրայէն՝ կամ աւազին վրայէն անցնի . առանկով չէ թէ միայն ջուրը գէշ նիւթեր մէջը չառնէր , հասարակ ունի ալ նէ գրեթէ աւազի կամ խիճի ( չախրի ) վրայէ անցնելով , կրտարգրովի ( սիւղիւլմիշ կըլլայ ) ու առանկով կրտարգրովի . վազուն ջուրերը որչափ արագու թիւն ունենան նէ , այնչափ աղէկ կըլլան . որովհետեւ այս կերպիւս մէջի ինկած գէշ բաները չէն մնար . երկրորդ ծեծվելովը իր տիղմը ( թօթուն ) ճամբան կըձրգէ . վազուն ջուրը որչափ հեռու տեղէ գայ ու վրան

բաց ըլլայ , թէ որ անցած տեղերը գէշ տեղեր չեն նէ այնչափ աղէկ կըլլայ . որովհետեւ աս կերպովս ջուրին մէջ աւելի օգ կըմըտնայ : Այս ամէն յատկութիւնս Աեղոս գետը ( Ախլ միւսրտէքը ) ունի . ուստի աչխարհքիս մէջ՝ էն աղէկ ջուրը այն է :

Միայն ստիւարի կամ գետի ջուրերուն մէջ աղէկ ջուր չիկայ . անձրեւի ջրերն ալ աղէկ կընայ ըլլալ , բայց պէտք է որ նախ փոթորիկի անձրեւինը չըլլայ , ու անձրեւը սկըսելէն քիչ մը ետքը առնըմաճ ըլլայ , ու կարելի է նէ քաղքի մէջ եկած անձրեւի ջուրը չըլլայ . ան ջուրը պէտք է որ հալէ ամաններու մէջ սրահիին , կամ Սառնիճի մէջ դրի սխախնէ , պէտք է որ սրտերը ջուրին մէջը հարելու բաներէ շինված չըլան . կըմինտորը չիհալիր ջուրին մէջ , բայց պէտք է որ ձեւիր ( սըվան ) աղէկ մը չորցած ըլլայ :

Կոստանդնուպօլսայ Պէնթերը հիներուն Սառնիճներէն մէկ կողմէն աղէկ է , որովհետեւ ջուրը բացն է , օգ կառնէ . երկըրորը ջուրը մինչեւ Կոստանդնուպօլիս գալը համար քանի մը ժամ կըձեւի , բայց աղէկ կըլլար որ ջրի ճամբայներուն ամ մէնը քարէ կամ կըմինտորէ ըլլային , ու միւս անգամայն Պէլրիատին Վէօմիւրճիւ գեղին մօտ եղած Պէնթը , այնչափ մարդոց , ու անասուններուն բնակութեանը մօտ չըլլար . ափկայ չէ թէ միայն ամառը այն տեղի մար



դոց հիւանդանալուն պատճառ կրլայ, հապտ մէջը անասուն մեռնելով, ու ուրիշ հոտելու բաներ մէջը նետվելուն կամ թէ ջուրը քիչցած ատենը, ջուրին մէջի ձուկերը մեռնելուն հոտած ջուր խմելու կը հարկաւոր լինի: Այդիկ ՚ի դատ կարելի է նէ տա պղինձէ կամ կապարէ փողրանքներն ալ (քիւնկերն ալ) բնաւ չի գործածվի խմելու ջուրերուն համար, որովհետեւ ասոնք ՚ի հարկէ կը թրթվին, ու ջուրին մէջ հալ' լով ջուրը կաւրեն:

Այդիկ ջուրը պէտք է որ հոտ չունենայ, անուշ համ ունենայ, թէ թեւ ըլլայ, սղորոք (սուլանքիս) չըլլայ, շուտ տաքնայ շուտ սուղի, օճառը (սապօնը) շուտ փրփուրցընէ (քէօրիս թմիւշ ընէ), ու շուտ եռայ: Այդ բիւրի ջուրերուն մէջ աղէկը ճանչնալու համար ջուրին ելած ու վաղած տեղը կրնայիս, սովորաբար աղէկ ջուրը քարի մէջէ կելլայ, ու վաղած տեղը կանանչ բոյսեր չիկայ, ասոր հակառակը գէշ ջուրին վաղած տեղը կրկանանչի, ու բորբոս (եօտուն) կրկայի:

Իսնաւ ու միգասրատ քաղաքներուն ջուրերը աղէկ չեն ըլլոր թէ և ջուրին կազմաւածքը գէշ ալ չըլլայ, վասն զի պէտք է որ ջրին մէջի օդն ալ աղէկ ըլլայ:

Այդիկ ջուր խմողները սղ առ սղ կը լան, առ զանին մարուր կը ըլլայ, չի փտախր:

Արբեմն աղէկ ջուր չի գտնուի նէ՛ գէշ կամ հորի ջուր կը գործածեն մք. բայց նայելու



է որ առաջ ջուրը մաքրելիս, շորի ջուրը աղէկցնելու համար նախ կեռացնեն (խայնաթմիշ կրնես) . ետքն ալ ատեն մը հողէ ամաններու մէջ բաց տեղ մը դնելէն ետքը, քարէ կամ աւաղէ կամ ածուխի փոշիէ (քէօ միւրի թօղէ) կըքամես (սիւղմիւշ կրնես) . գէշ ջուրերը մաքրելու համար երբեմն ածուխու Օճ էաղի կըխառնեն ու անանկ կըցուղեն (ջալխամիշ կրնեն) . անկէ ետքը լաթէ մը կըքամեն (սիւղմիւշ կրնեն) ու թէ որ քամիլէլէն ետքը նոյիս սր Օճ էաղի համը դեռ մէջը կայ նէ, քիչ մըն ալ ածուխի փոշի կըխառնես նորէն կըքամես :

Փարիզ ու Վնդոն, Վենի ու Թիամիզի ջուրերը խմելու համար կըքամեն . հին տեղի գործածած կերպերը զուրցել հաստեղի բան չէ, որովհետեւ մեր կողմի ջուրերը սովորաբար աղէկ ջուրեր են, ու քաժելու կարօտութիւն չունին :

Վղէկ ջուր խմելով շատ մարդ հիւանդութենէ աղստեր է . մեր կողմի մարդիկ ջուր խմելու խրատի կարօտ չեն, ինքիդեն նին ջուր սիրող են . թէ սր ջուրի վնայօք խըրատ մը տալ պէտք ըլլայ նէ, աւելի շատ չիխըմելու վնայօք զուրցելու եմք . հաս, սըր աղէկ ջուր կայ նէ հին ելթալով փոքր ջուրով աիկի պէս լեցնելը խենդութիւն է, թէ որ վնաս չունի նէ՝ օգուտ մըն ալ չունի . թէ որ ջուրը աղէկ է նէ, քեզի

պէտք եղածին շափ խմեա նէ ան աղէկու-  
թիւնը կրնէ , պէտքը չէ որ երթաս փորըդ  
ուռեցունես :

Տղայք հոց կերած ատեննին 'ի միասին  
ջուր ալ խմել թող սորսին . անանք որ ուտելու  
ատեննին ջուր կըխրմեն , աւելի դիւրաւ կը  
մարսեն : Մայց հոցէն երայէն ժամ մը  
կամ երկու ժամ ետքը յաճախ ( սրխ սրխ )  
ջուր խմելը մարսելու արգելք կուտայ :

Վստիտաբար կուզեմ որ տղայք պաղ ջուր  
խմեն , թէ և ձմեռական մէջ ալ ըլլան , բայց  
թէ որ սառի պէս ջուր ըլլայ նէ ան ատենը  
քիչ մը պաղը կըկտորես , բայց բնաւ ջուրը  
գաղջ ( ըլլճախ ) չըլլայ , սրաղ ջուրը ստամբ-  
որ կըզօրացընէ , գաղջ ջուրը ասոր հակա-  
ռակը կըտրկարացընէ : Ա երջապէս կուզեմ  
որ չսփաղանց պաղ ջուր չխխրմեն , բայց  
գաղջ ջուր ալ բնաւ չխխրմեն կամ միայն  
հիւանդ եղած ատեննին խմեն :

Տղայք քրտորնած ատեննին պաղ ջուր  
խմելնին շատ անգամ մեծ վնասներ գործեր  
է իրենց :

Տղայք ասկէ զգուշանալու է , բայց մէ-  
կալ կողմէ ալ քրտորնած ատեննին պաղ ջուր  
խմելու սովորութիւն ստանան նէ , թէ որ  
քիչ խմեն նէ զէն չխտար , մանաւանդ խմե-  
լէն ետքը տղայք հագուստը չհանկելով չի  
նըստին կամ հովին չխաբարտին նէ :

X 20 X  
Գ Լ ՈՒ Խ Գ .

Ազգայ հանեւ 1 .

Տղան վեց կամ եօթը տարի հասածին պէս , կայուն առդաներուն առջի մե՛նծ ջաղջի առդաները կելլան 2 1 :

1 Կայուն առդաներուն վրայ հառ խօսելը գրեթէ արտազուժիւն մըն է , որովհետեւ մարդուս վրայ , մանաւանդ մարտազուժեան գործարանին վրայ սասնց ուղղակի ներգործութիւն մը ունենալը չեմք գիտեր , բայց ըստ սրում կաթի առդաներուն վրայ առաջին մասին մէջ խօսեցանք , կայուն առդաներուն վրայ ալ երկրորդ մասին մէջ գրելը հարկ սեպելինք :

2 Կայուն առդաներուն սերմը կաթի առդաներուն ետին է . կայուն առդային սերմնակաթի առդային սերմը պինդ առաջ միննայն բոյնի մէջ են . ասե՛նէ մը ետքը երկուքին մէջ տեղը մէկ մտչկ մը կուգայ , սասնք մէկըմէկէ կը զուտէ . բայց միշտ ծակ մը կը լինայ մէկ բոյնէն միւս բոյնը :

Քանի որ կայուն առդային գլուխը վեր ելլայ նէ , կաթի առդաները իրենց բոյնին մէջ կը սկսին սխալ լինել . կայուն առդային գլուխը կուգայ կաթի առդային բոյնին մէջ կը մըտնայ . անանկ որ կաթի առդային բոյնը ասե՛նէ մը ետքը կայուն առդային բոյնը կը լայ . կաթի առդաները առ կերպովս հան սըխմըլէլով , իրենց արմատը կը մաշի . կը սկսին տեղերնուն խողալ ու ինտլ :

Բայց երբեմն կայուն առդաները կաթի առդաներուն բոյնին մէջ չեն մտնար . այն ասե՛նը կաթի առդաները կայուն առդաները մեծնալուն կը սըխմըլին կը մաշին ու կ'լինան : Երբեմն կայուն առդան ծուռ ելլալուն կաթի առդան իր բոյնին մէջ չի կրնար սըխմել , ասոր համար ալ չինար . ան

Վեց տարիէն ութը տարի այսինքն տարի մը ետքը վարի կղակին առջեւի առջի առդաները կելլան :

Եօթը տարիէն ինը տարի վերի կղակին առջեւի առջի առդաները կելլան :

Ութը տարիէն մինչեւ տասը տարի քօվի առջեւի առդաները կելլան :

Ինը տարիէն մինչեւ տասնեւմէկ տարի առջի պղտիկ ջաղջի առդաները կելլան :

Տասը տարիէն մինչեւ տասներկու տարի սրածայր առդաները կելլան :

Տասնեւմէկ տարիէն մինչեւ տասներեք տարի երկրորդ պղտիկ ջաղջի առդան կելլայ :

Տասներկու տարիէն մինչեւ տասնեւչորս տարի երկրորդ մեծ ջաղջի առդան կելլայ :

Տասնութը տարիէն մինչեւ երեսուն տարին երրորդ մեծ ջաղջի առդան կելլայ :

Կայուն առդայ հանողը սովորաբար հիււանդ չըլար , քիչ մը լինտերը կուռ ենայ , կըխորմըլի , բերնէն թուք կըլտողէ , երբեմն կղակները շորժելու ժամանակը կը յաւի , կսկորդը (պողազը) կուռ ենայ , կըլենայ , երբեմն առդայի յաւ կըբըռնէ , բայց ասանց ամմէնն ալ առդաները ելածին պէս կանցնին :

ասենը առդայ մը աւելի կըլլայ , բայց ասանկ ձգել չըլար . որն որ ծուռ է կամ շարժուն է նէ , ան կըբաշեռ կըհունես . ասանկով առդաներուն շարքը ձեւէ իննալով ազեղ չըլար :

Ան առ զաներուն ելած ատենը առ զայ հանողը քիչ մը կերակուրէ զգուշութիւն թող ընէ . երբեմն երբեմն բերանը խաշած մարշի ( էպէկէօմէճիի ) ջրով կամ կաթով թող ցօղիէ . ուրիշ ընելիք մը չունի :

Արտն որ երեսուն տարեկան մէկը առ զայ հանելն մեռեր է . թէ որ իբրս էնէ՝ հ ըւր հազարէն մէկ մը շխարատահիր . ես զօրքերուն փայ շատ անգամ քան և հինգ , քան և ու թը տարեկան մարդ առ զայ հանելին տեսայ . բայց ամէնն ալ դիւրութեամբ անցուցին . միայն մէկ անգամ քրտան երկու տարեկան տղայ մը տատիկ մը հիւանդացաւ . բայց նոյն ժամանակը հիւանդանոցը քաղցիկը ( կանկուէնա ) շատ կար , տղին լինտերը քաղցիկը եղան . քանի մը անգամ երվելով անցաւ :

## Գ Լ ՈՒ Խ Գ .

Հ Դ Վ Է .

Անասունները հագուտանին հետերնին կը բերեն . բայց մարդը մերկ կը ծընի , ու ինքըն իր հագուտը կը շինէ : Արդայ մարդուս սրամութիւնը կը տեսնաս որ ամէն տեղ մէյմէկ ձեւ հագուտ կայ , որը զար-



գարուն , որը սարգ , որը նեղ , որը լան ,  
 որը երկան , որը կարճ , մի կարծեր որ այն  
 սարգու-թիւնը կամ զարգարուն ըլայը այն  
 ըայնու-թիւնը կամ նեղ ըլլայը , կարճ կամ եր  
 կար ըլլայը դիտուածով են : Ասորդս՝ մէկուն  
 գէմ՝ ծեծկրփել լու միտք ունենայ նէ կրնայի որ  
 իր վիրտուարփելու տեղերը սրահայանէ . մէկուն  
 ինքըղինքը հաւնեցրնելու միտք ունենայ նէ  
 մարմնայն անշնորհք երեւցած տեղերը իր  
 հագոփսձ բաներովը կրգոցէ . ու գրսէն ու  
 բիշ ձեւ մը ցուցունել կուտայ , իրեն բընա  
 կան գեղեցիկութիւր աւելըցրնելու համար ,  
 գրսէն գեղեցիկ բաներ գտնայ նէ , անոնց  
 մով կրգարգարփի . բալելու համար ուրիշ  
 կերպ լաթ կըհագնի ու պառկելու համար  
 ալ ուրիշ . տաքէն սրահարանփելու համար ալ  
 կերպ լաթ կըհագնի , սրաղէն սրահարանփե  
 լու համար ալ ուրիշ մէկ կերպ մը . պատե  
 ռաղմը իրեն յատուկ լաթ մը ունի . ատանկ  
 ալ հանգտուածիւնը ու խաղաղութիւնը :  
 Վաթին ձեւը միայն մարմնայն պիտոյքին չի  
 նայիր , հոգին ալ իր ուզածը հագուստին  
 վրայ կրցուցունէ . սրգաւորը իր սուղը ցու  
 ցունելու համար սեւ լաթ կըհագնի . թա  
 գաւորը ահեղութիւն ու մեծութիւն ցու  
 ցունելու համար փառաւոր լաթեր կըհագ  
 նի , ու մէջքը թուր կըկապէ . վերջապէս  
 լաթին ձեւը լեզուին պէս մեզի կրգուրցէ որ  
 այն լաթը հագնողը սա պէտքը ունի , սա



կրխորհի կոր , սա գործի մէջ է , սա կարողութիւնը ունի , սա աղքատութիւնը կամ փարթամութիւնը , սա քաջութիւնը կամ սա վախկոտութիւնը ունի : Այլու մարդու թող տուր որ իրենց ուղածը հագնին , մէկը սնապարծ է նէ՝ կելլայ ինչ որ ինքք զինքը զարդարէ պիտի նէ՝ ան կրնարէ . մէկալը ազահ է նէ , ինչ որ չիմաշիր , չիհիննար , ան ալ ան կրնարէ . մայր մը տղան նոր թաղեր է նէ , ձեռքը անգամ չերթար որ վրան զարդ առնէ . նայէ այն ատենը ինչ պարզութիւն կայ լաթին վրայ , որչափ բաներ մոռցրած են : Արտէն որ քահանայից հագուստը մարդ քահանայ չնէր , բայց քահանայն է քահանայի հագուստը չինողը . ըսել է որ մարդուն հագուստը երկու բանի կրնայի , մէյ մը մարմնոյն պիտոյիցը , մէյմալ հողւոյն . ասոնք մտմտալով սա ազգին լաթը , սա տեղի մարդոց հագած լաթը աղէկ է կամ աղէկ չէ ըսելէդ առաջ նայէ այն հագուստին ձեւոյն պատճառը ինչ է : Այլ բենեաց հագուստը պարզ է , բայց կարելի է մի որ կրթեալ մարդու մը հագուստ հագնին , հագուստը ինչ բանի մէջ պիտի ծառայէ նէ , այն բանին յարմար կըլլայ , անկէ աւելին պէտքը չէ : Այլ բենին կրթեալ մարդու կարիքները չունի որ այն կարիքներուն , այն պէտքերուն իր լաթերը յարմարցընէ . խաղաղասէր ազգի

Հագուտոր լայն ու երկայն է . ասոր հակա  
 ուակը՝ սրատերազմող ազգի հագուտոր նեղ  
 ու կարճ է . խաղաղասէրը արտորալու բան  
 մը չունի . փախչելու կամ հալածելու , ձի  
 ով վազելու կամ իր զէնքերը դիւրաւ գոր  
 ծածելու միճակի մէջ չէ , որ սրատերազմողի  
 կարճ ու նեղ հագուտոները հագնի . իր  
 գործը իր առտնին գործքերն են . ասոնք  
 կամաց կամաց ընելու բաներ են . ասոր հա  
 մար արտորալու պէտք եղած հագուտոր  
 ինչո՞ւ հագնի . ասանկ ալ տաք քաղաք բը  
 նակող ազգերուն հագուտոր թեթեւ ու  
 լայն են . ասոր հակառակը ցուրտ քաղաք  
 բնակող ազգի հագուտոր նեղ ու հաստ է .  
 մէկ մը՝ տաք քաղաքի բնիկ հագուտոր նա  
 յէ , մէկ մըն ալ՝ այն տաք քաղաքին մարդոյն  
 պիտոյքը նայէ , կրտեսնաս թէ՛ որ կողմը տա  
 քէն պիտի որահովի նէ այն կողմը չիտաքցընե  
 լու համար ինչ պէտք է նէ այն տեղի մարդը  
 ըրեր է : Ա՛րաբացիք գլխընուն արեւ չանց  
 նի տէյի գլուխնին գոց կրպահեն . գլուխ  
 նին չիտաքնայ տէյի ալ մազերնին կրկրտ  
 րեն . հիմայ սրաղ երկրի մը հագուտոսի նա  
 յէ , հոն կրտեսնաս որ գլուխը չիմըսի տէյի  
 մազ են թող արվեր . ու գլուխնին ալ շատ  
 չեն գոցեր , որովհետեւ մազ ունենալ  
 նուն պէտքը չըլար : Տաք երկիրը փոսլիկ  
 կրպտորտին . սրաղ երկրի մարդը ջուրերու ու  
 խոնաւութեան մէջ ըլլալուն ոտքի աման

ունի . վերջապէս մէկ կլիմայ մը գնա՛ , այն տեղին դիպուածները աչքէ անցուր . այն տեղի մարդոց բնութիւնը սորվէ . կրտեսնաս որ իրենց հագած լաթերնին չէ թէ մի այն իրեն յարմար հագուստն է , հասրա ուրիշ կերպ հագուստ մըն ալ չիկրնար յարմարիլ . ազգի մը հագուստին ձեւը մէյմը իր բնական տեղէն է , մէյմալ իր բարոյական վիճակէն : Վասնկ ալ ազգի մը մէջէն ալ մէկը զատես առնես նէ՛ անոր քով ալ կրտեսնաս որ իր հագուստին ձեւը իր բնական տեղւոյն ու ըրած գործքին յարմարութիւն ունի :

Մէկ երկրագործ մը կուզես նէ բռնէ ուրիշ արհեստի մը խօթէ իր լաթերովը , ու իրեն ալ սրտուիրէ որ իր նոր արհեստը գործածողներուն հագած լաթը չիհագնի . քիչ մը ետքը կրտեսնաս որ երկրագործը իր երկրագործութեան մէջ հագած լաթերը այլայլեր է ու իր նոր արհեստին յարմար ձեւ մը աուեր է : Վասնկ ալ ազգ մը քանի փոխվի նէ իր լաթերն ալ կրփոխէ . աս զուրցածներէս սովնք կըհետեւին որ նախ ամմէն քաղքի հագուստը իր տեղին նայելով աղէկ է . ու որչափ ալ ամէն տեղի կրթութիւնը միօրինակ ըլլայ , միշտ տեղերուն ներգործութիւնը ու մարդոց բնաւորութիւնը այսինքն խաղաղասիրութիւնը կամ սրտերազմող ըլլալը իր հագածին վրայ պիտի տեսնըվի . ըսել է որ ինչ որ ընեն , ամէն ազգ ի

րեն յարմար հագուստ պիտի ունենայ : Աւ-  
րագացիք գրեթէ մէկ կերպ հագուած են ,  
բայց նայէ Վաղղիացիին հագածը Անգղիա-  
ցիին ու Վերմանացիին հագուստներուն կը  
նըմանի մի . չիկրնար նմանիլ :

Արկարդ հետեւութիւննիս տա է որ՝ ըն-  
տոր մէկը քեզի տմարդի խօսք մը ըսելովը  
իր տմարդութիւնը կը հասկընաս , անանկ  
ալ մէկը իր հագած բաներովը ու անոնց ձե-  
ւովը քեզի սնասպարձ կամ ազահ կամ մօրի  
բըստը կը գիտցընէ . ըսել է որ ինչպէս որ  
մարդուն լեզուն պիտի կրթես , անանկ ալ  
հագուստին ձեւ տալու ես , ու ձեւ տալու  
համար երկու բանի միտ պիտի դնես . մէյ  
մը բնական իրերուն մարմնոյն ու կլիմային ,  
տաքին ու պաղին յարմարցընես պիտի . մէյ  
մալ մտաւոր մարդուն ձեւին :

Առաջ բնական իրերուն յարմարութիւն  
ները նայինք . ու մեր հագած լաթերնիս  
աչքէ անցընեմք : Մեր երկրին հագուստը  
հիմակ անանկ վիճակի մը մէջ է որ մեր հա-  
գուստը սա է շեմք կրնար ըսել . հին ձեւե-  
րով զանազան լաթեր կան որ մինչեւ հիմա  
շատ տեղ կը գործածուին կոր . ասոր հակա  
ռակը Աւրագացոց հագուստը մէկ դիէն  
ամէն տեղ տարածելով , հին լաթերը մէկ  
դի կը գրվին կոր , թէ որ այս երկու կերպ  
հագուստներուն որը մեզի աւելի յարմա-  
րելէքը հարցունես նէ քեզի սրտասխանս

ասէ : Ինձի մնար նէ ես հին լաթերը աւելի կուզէի . հին լաթերը մեր բնիկ լաթերն են . մեր կլիմային , մեր բնաւորութեանը հնարած լաթերն են . բայց Աւրուսայի լաթերը մերը չեն :

Անոնք հագնելովնիս կամ պէտք է որ անոնց ձեւը այլայլենք , կամ մեր բնաւորութիւնը մեր լաթերուն յարմարեցընեմք : Անք ինչպէս Վաղղիսացւոց լաթերը կրնամք հագնիլ , մենք ծանր կրքալեմք , անոնք շուտ . մենք բնութիւն ծանր եմք , անոնք թեթեւ . մենք նստիլը կրսիրեմք , անոնք տոքի վրայ ստրտիլ կուզեն . մենք մէկը մեծարելու յարգելու համար ծունկ կրչողեմք կրնաստիմք , անոնք տոքիւնին կերկնցընեն . մենք դացած տեղերնիս դուխնիս չեմք բանար հապա միշտ գոց կրպահեմք : Աստի մեզի ինչ պէտք է որ անոնց չափ մազ ունենամք . մեր քաղաքը անոնց պէս ցուրտ չընէր , ուստի տաք բրած օրերը ինչու նեղ լաթերու մէջ երինք անհանգիստ ըլլամք : Արջապէս այս պատճառներով անոնց լաթը մեզի չի յարմարիր . բայց ամենքս ալ անոնց լաթը հագեր եմք , ու հագնելովնիս ուզեմք չուզեմք պէտք է որ մեր ձեւերն ալ փոխեմք . պէտք է որ լաթերուն ձեւերուն մեզի յարմարեցընեմք , չէնէ ծաղրելի բան մը կրլայ մեր անոնց լաթը հագնիլը . բայց կրնայիմ որ իմ զուրցելիքէս դուրս ելայ ,



գամք հիմայ մեր լաթերուն . չեմ խօսիր հին  
լաթերուն վրայ , որովհետեւ ժամանակը  
կուզէ կոր որ անոնք վերնան . միայն պէտք  
է որ Աւրուպացւոց լաթերուն վրայ խօսիմք .  
ան ալ միայն մեր տղոցը վրայօք :

Նախ մարմինը սրխմելը առողջութեան  
դէմ է . մանաւանդ պզտիկ տղոց համար ու  
րոնք մէկ դիէն մեծնալու վրայ են . երկրորդ  
սխմելը անհանգիստ կրնէ . ուստի կուզենք  
որ տղին հագած լաթերը Աւրուպացւոց չա  
փահաս մարդիկներուն լաթին պէս նեղ լա  
թերը չըլլայ . հապա ըստ կարելոյն լայն ըլ  
լայ , առանց մարմնոյն բարեձեւուեր դպէտ  
լու : Պզտիկ տղոց համար բնաւ Պէլէլէլ  
(ասկը) չի գործածվի դէթ ինչուք վեց կամ  
եօթն տարի . բնաւ Վաւալալ (սոյուն պաղը)  
չի գրնեն մինչեւ նոյն ժամանակը . պզտիկ տը  
ղոց համար գլխանոց պէտքը չէ մինչև եօթն  
տարի : Աօթն տարիէն ետքը կամ գլխանո  
ցը թեթև ըրէ կամ մազերը կրտրէ . ինծի  
մնայ նէ գլխանոցը թեթև կրնեմ , որովհե  
տեւ գլխին վրայ ծանր բան մը միշտ կենա  
լովը գլուխը միշտ քրտինքի մէջ կըլլայ ու  
ետքը բանասնէ , շուտ մը պաղ կառնէ . երկ  
րորդ ուղեղին վրայ գլխանոցը ծանրնալովը  
ուղեղը կամ ձեռն կըհանէ , կամ արիւնը վեր  
կըքաշէ : Բնաւ տղին գլուխը դրած բանըդ  
գլուխը չիսրխմէ . սխմելուն վնասները առջի  
մասին մէջ զուրյեցիներ : Տղան բնաւ ծանր լա



Թերով մի՛ բեռնաւորեր , բնաւ տաք բռնելու լաթեր մի՛ հագցըներ . մէկ մարդ մը որ չափ տաք ու ծանր լաթ ալ հագնի միշտ կըրնայ մտիլ . ասկէ զատ ծանր լաթ հագնելովը , աւելի պաղ առնելու պատճառ մը կըլլայ ու լաթհետեւ այս կերպիւս քիչ մը շարժումընէ նէ պիտի քրքրորնի , ու շուտ մը պաղ պիտի առնէ . ուստի լաւ կըլլայ որ պզտիկուց քիչ լաթով տաքնայ սորվի :

Բնաւ ոտքի ամանը նեղ կամ կրունքով ( էօքձէլի ) չըլլայ . վերջապէս արու տղի մը կուզենք որ միայն լայն Բանթալի մը , գուլպայ մը , ոտքի աման մը , կակուղ ու լայն բանպակէ շապիկ մը , անթեւ հանդերձ մը ու վրայէն Սեթի մը ըլլայ . գլուխն ալ առջի ատենները բաց , ետքի ատեններն ալ միայն լիկ Գէ" մը = Լգ տղի մը բամպակէ վարտիք մը , ու գուլպայ մը , կակուղ ոտքի աման մը բամպակէ շապիկ մը , վրայէն շրջահանդերձ ( Ֆիտան ) մը կարճ , գլուխը բաց , կամ լիկ պզտիկ Գէ" մը . դուրս ելլալու ատենը ցուրտ ըրած օրերը շրջահանդերձին վրայէն Շալ մը կամ ուրիշ լաթ մը , ասոնցմէ զատ բան չուզեր :

Բնաւ աղջիկ տղոց կուրծքը մամուլի մէջ չառնեն . այսինքն Բոսնէ չիհագցունեն . աւելի անպատեհ բան է մանչ տղոց Բոսնէ դնել . Բոսնէն կուրծքին մեծնալուն արգելք մը կըլլայ . Թոքերը մեծնալու տեղ չունենալ

լովինն , շնչառութիւնը կրդրժարնայ որուն  
վախճանը շատ անգամ թորութառութիւնը  
կրլայ :

Հիմայ մեր մէջը կնիկ մարդիկ սովորա  
բար Վօօսէ չեն գործածեր . ու կրցուսամ  
որ չիգործածելու գիտաւորութիւննին կր  
պահեն , իմ վախս անոնցմէ չէ . իմ վախս  
մանչ տղացմէ է , վասն զի թէ որ ատանկ եր  
թայ նէ մանչ տղաքները որ հիմայ կնիկնե  
րէն աւելի զարդի ինկած են , որ մը Վօօսէ  
դնելու պիտի կամք ընեն . այս բանիս ան  
պատեհութիւնը ամմէն մարդ կրհասկընայ  
ու հիմակվընէ Վօօսէ դնող մարդուն վրայ  
կրխընդայ . ես ալ կուզեմ որ անանկին վրան  
խնդան , անանկը ծաղր առնեն , ու պախա  
րակեն . վասն զի էրիկ մարդը պէ տքը չէ որ  
կանացի երեւնայու բան մը ընէ , մանա  
ւանդ անանկ բան մը որ վնասակար ըլլալուն  
համար անոնց ալ յարմար չեմք տեսներ :

Տղին հագած լաթերը եղանակին յար  
մարցընելու է . ամառվան լաթերը տաքէն  
պահպանելու ու միայն զով ( սէրին ) բռնե  
լու հագուստ ըլլալու է . ուստի ըսել է որ  
թեթև ու ճերմակ ըլլալու է : Չմեռվան  
լաթերը պաղէն ու խոնաւութենէն պահ  
պանելու լաթեր ըլլալու են . ըսել է որ թը  
խագոյն ու ծանրրկէկ : Ասոնք ամմէնքս  
ալ գիտեմք ու գործի կրդընեմք . բայց  
ինչ կերպ լաթ հագնելնիս սորվելու եղա

նակը ամառը ու ձմեռը չէ, մէկ եղանակէ  
 մէկալ եղանակը անցնելու ատեննիս է, և  
 այս ատենը՝ դարունն ու աշունն է: Այս  
 եղանակներուս հետ մարդն ալ կրփոփալի  
 պաղի ու տաքի դիմանալու մասին, անանկ որ  
 ձմեռվան մօտ պաղի դիմանալու զօրութիւն  
 կրստանայ ու ամառվան մօտ ալ տաքի, ասի-  
 կայ ապացուցանելու համար քանի մը տարի  
 կայ Միլնէտվարտ մէկ փորձ մը բրաւ թրու-  
 չուններուն վրայ: Անեց ամառվան մէջ  
 պղտիկ թռչունին մէկը ամանի մը մէջ դրաւ  
 ամանը պաղեցուց, անանկ որ ներսէն թրու-  
 չունը սկսաւ պաղին ներգործուիլ իմանալ:  
 Միլնէտվարտ պաղը քիչ մը աւելցուց նէ,  
 թռչունը մեռաւ, ասանկով տեսաւ որ թրու-  
 չունը չիդիմանալով որ աստիճան պաղէն մե-  
 ռաւ նէ, ձմեռվան մէջ կրկին աստիճան պա-  
 ղին այն թռչունը կրդիմանայ ու բան մըն  
 ալ չըլար, մարդըս ալ ասանկ է, ամառվան  
 մէջ քիչ մը ցուրտ ընէ նէ անհնարին կեր-  
 պով մը մեղի կրնեբգործէ, ասանկ ալ ձմեռ-  
 վան մէջ քիչ մը եվելօք տաք ընէ նէ, օգոս-  
 տոսի տաքերը կրնէ կոր կրկարծես, բայց  
 կրնայիս ջերմաչափին, (տաքը պաղը կչաւլու-  
 գործիքին անունն է) որ բրաձ տաքը եվելօք  
 տաք մը չէ, ամառվան մէջ այն տաքին կրը-  
 կինը կրնէ, մեղի այնչափ չիներգործեր, ասոր  
 պատճառը սա է որ՝ աշնան մէջ մտածնուս  
 պէս եղանակը կըսկսի ցուրտնալ, կամաց կա-

մոյց ցուրտին կըստրվումք , ու ձմեռը դայնկ ստրված կըգտնելումք , ու կրնամք դիմանալ , ասանկ ալ դարունը եկածին պէս տաքը կըս կըսի , կամաց կամաց տաքին կըստրվումք , ու ամառվան տաքերը մեզի այնչափ շինեղեր , ասկէ սա կըհետեւի որ դարնան մէջ հագնելու լաթերնիս քանի որ ամառվան մօտե նամք ու ցուրտ ընէնէ , որովհետեւ ցուրտին դիմանալու կարողութիւնիս կամաց կամաց կոր սընցուցեր եմք , մեզի սղէկ պահպանելու լաթ հագնելու եմք ան օրերը որ շմերսիմք , ասանկ ալ աշնան սկիզբները ցուրտ ընէնէ , բանի մը տեղ չիգնելով պէտք եղած լաթը չիհագնիմք նէ որովհետեւ ցուրտին դիմա նալու կարողութիւն դեռ չեմք ստացեր , շուտ մը պիտի մըսիմք : Վսեղ է որ ձմեռ վան լաթերը ուշ պիտի հանեմք ու աշնան ըս կիզբները հագնելու եմք ցուրտ ըրածինպէս :

Փետուրէ ( թիւյէ ) ու մէտաքսէ շինած լաթերը խոնաւ օրերը աւելի կըյարմարին , վասն զի ասոնք չեն թողուր որ դրսի խոնաւութիւնը մեր ելեքտրական զօրութեան բոլորն ալ առնէ ու սա կերպիւ ելեքտրա կան զօրութիւնիս մեր մէջը մնալովն ալ մեր կենսական զօրութիւնը շինուածիր , ասոր հակառակը չոր օրերը բուրդէ , բամբակէ , ու կտաւէ լաթերը աւելի կըյարմարին , վասն զի մեր ելեքտրական զօրութիւնը բոլորովն մեր ներսիդին մնալով մեզի շինեղեր , որով

հետեւ բուրդը, բամբակը ու կտաւը ելեք տրական զօրութիւնը չեն կրնար պահել:

Բայց բուրդը թէ որ մարմնոյն վրայէն անմիջապէս հագնիմք նէ, սա գէշութիւնը ունի որ մեր քրտինքը ծծելով քրտինքին հիւթերը վրան կըչորնայ. ասոնց գէշ հոտը մեր վրան կրներգործէ. ու միանգամայն քրտինքին հիւթերը մեր մորթին վրան փակ չելով մորթի հիւանդութիւն մը կըրնայ պատճառել, ասկէ զատ խոնաւութիւնը բուրդէն գիւրաւ մը ներս կըթափանցէ. ուստի խոնաւութեան մնասակար ներգործութեանցը առիթ տուած կըլլաս մարմնոյդ վրայէն բրդեղէն հագնելովդ:

Թէ որ հագնելու պարտաւորութիւն ունենաս նէ, պէտք է որ շուտ շուտ փոխես, ու լովհետեւ առանց ատոր չէ թէ միայն վերի ըսած մնասները կանչած կըլլաս, հասար քրտինքին հիւթերովը բրդեղէն լաթը տափ տակի պէս բան մը կըլլայ, քրտններու ալ արգելք կըլլայ:

Շատ մնասակար բան է թաց ու քրտաբնած լաթերը իր մարմնոյն վրայ արեւին կամ կրակին կենալով չորցնելը. մանաւանդ այն լաթերը գունաւոր ըլլան ու գոյներնին ալ մարմնոյն վրայ ելայ նէ, լաթերուն աղտոտութիւնն ու գոյները մարմնոյն վրայ փակելով, աղտոտութիւնը քրտինքին դուրս ելլալուն արգելք մը կըլլայ. գոյներն ալ հոն



կենսալուսինն կաւրին . գէշ հոտեր կըհանեն  
ու փնատակար հիւանդութիւններ կրնան  
սրտոճառել :

Բայց մտքտան անգամը , սրչափ դժար  
բան է ամէն օր օգին փոփոխութեցը նա  
յերով լաթերդ փոխել . անձրեւի մը հան  
դիպիսնէ , փոխելու լաթ փնտրուել , և այն .  
ուստի աղէկ կըլայ որ սղտիկուց օգին փո  
փոխութիւններէն շիփնասիլ սորվոմք . ասոր  
համար կուղեմք որ սղտիկ տղաքները բիշ  
լաթով մեծնան հագած լաթերնին սաղ  
բունող , շատ շտապընող լաթեր ըլան .  
ինչպէս բամպակէ կամ կտաւէ լաթերը :

Կամք հիմա բարոյական մասին : Տղաք  
երեք և երեք ու կէս տարիէն ետքը  
պէտք է որ արու է նէ երիկ մարդու , էգ  
է նէ , կնիկ մարդու լաթ հագնին , որով  
հետեւ պէտք է որ ալ ան ատենէն երիկ  
մարդու , կնիկ մարդու ձեւ ստանան . աղ  
ջիկը կընկան պէս . մանչը մարդու պէս հագ  
վիլ սորվի :

Տղան մինչեւ եօթը տարի , պէտք է որ  
պարզ լաթեր հագնի , բնաւ զարդարանք  
չունենայ իր վրան : Բայց եօթը տարիէն  
ետքը տղան իր հօրը ու մօրը նայելով ինչ  
վիճակի մէջ պիտի գըտնելի նէ , պէտք  
է որ կամաց կամաց իր լաթերը այն վի  
ճակին յարմարցնէ : Ասոնց բարոյական  
մէկ սրտոճառ մը կայ , տղան ինչուք վեց



եօթը տարի չհասած, որչափ իր հասակը տղայ տեսնայնէ, թէ փարթամ թէ աղքատինչ կրլայ ըլլայ, իրեն հաւասար կրբընէ (թէ որ իրեն հետ դուն փարթամ ես ան աղքատ է խօսքը չիգործածես նէ), ուստի պէտք է որ բնաւ իր քով՝ անանկ բան մը չիտեսնայ որ իր կարծիք ըրած հաւասարութեանը անյարմարութիւն ունենայ: Աօթը տարիէն ետքը խելքը կսկսի վիճակներուն անհաւասարութիւն տեղ ընել, միանգամայն ան ատենը Աճ ճանչնալովը միայն Աստուծոյ կատարեալ եղածը կրգիտնայ ու մարդոց վիճակներուն անհաւասարութիւնը Աստուծմէ կախիլած բան մը եղածը կրնայ իմանալ, ուստի իր լաթերուն աղւորութիւնը աղքատ տղսց լաթերուն պարզութեանը բաղդատելով գոռողանալու ու հպարտանալու պատճառ մը չունենար<sup>1</sup>, նմանապէս ան ատենէն իր ետքի վիճակին մէջ հագնելու լաթերով մեծնալովը, ան լաթերը իրեն մեծութիւն տուող բան մը չիկարծեր, ու լաթերուն վըրայ չիպարծենար, լաթ սիրող զարդ (տիւզէն) սիրող չըլլար, հասցա զարդարուն կամ պարզ լաթ հագնելը իբրեւ իր վիճակին մէկ պարտաւորութիւնը կրբընէ:

<sup>1</sup> Ըսել է որ՝ ասոնց վրայ դուն բան մը խօսիս բացարեւս նէ՝ գիւրաւ կըհասկընայ: Չիկարծես որ՝ այս բանս առանց քեզնէ լսելու ինքնիրեն հասկընալու կարողութիւն կունենայ մինչեւ այն ժամանակը:

Տղան պէտք է որ ինքն իր լաթերունն աշխուռ անոնք խնայել գիտնայ, պէտք է որ անոնց յարգը ճանչնայ, ու երբ որ պատուէ, երէ, կամ աղոտտէ նէ դուն ալ իրեն կամ վար հանդերձ կրչինես պատճառը զուրցելով, կամ պատուած լաթերովը կրձըգես ինչուք որ ուղղութեան գայ :

Ասոր հակառակը երբ որ տեսնաս որ տղան իր լաթերը իրեն մէկ պիտուական բան մը համարելով, անոնք տաստիկ զգուշութեամբ կը պահէ կամ հագուելու ատենը աղւոր ու բարեձեւ երեւնալու համար մեծ զգուշութիւններ կը գործածէ նէ, դուն լաթի յարգ չունենալդ քու վրադ ցուցունելով, միայն պաղէն տաքէն և այլն պահպանելու մէկ միջոց մը ըլլալը իրօք կը հասկըցնես իրեն, ասանկ զգուշութիւնը ազահութեանէն յառաջ կուգայ կոր նէ իր լաթերը կը հանես, աղքատի մը կուտաս ըսելով որ դուն անոնք չես հագնիր կոր, ինչ պիտի ընես, երբ որ քեզի պէտք ըլլայ նէ նորէն կրչինեմք. բայց թէ որ այս զգուշութիւնը զարդի ետեւէ իյնալը սընապարծութեանէն յառաջ կուգայ նէ, այն ատենը կամ աղքատ տղի մը իր լաթերուն նման լաթեր կրչինես, կամ լաթերը ձեռքէն կառնես, իրեն պարզ լաթեր կը հագցնես :

Վարեկամ մը ինձի պատմեց թէ պզտի

կութեան ժամանակը որ մը հայրը հարցուցեր է թէ ի՞նչ լաթ կուզես քեզի շինեմ :  
 — Քուկին հազած լաթէ՞ղ կուզեմ ըսեր է :  
 — Անիկայ քեզի չիլայլէր , դուն տղայ ես :  
 — Թէ որ անանկ է նէ , ինչ լաթ ամմէն որ կը հագնիմ նէ , ինծի կօզատէ , նորէն լաթ մի շիներ : — Չէ , ես քեզի սա բանը լաթ շինեմ պիտի : — Արովհետեւ ինծի կը հարցունես կոր , ես այն լաթը չեմ ուզեր , եւ որովհետեւ հարցուցիր , շինես նէ ալ չեմ հագնիր ըսաւ , ու խօսքն ալ բռնեց . հայրն ալ տղան պատժելու համար լման իրեք տարի սեւ կտաւէ լաթ հագցուց : Հայրը տղան կրթելու համար , սեւ կտաւէ լաթ հագցրնել պէտքը չէր , որովհետեւ տղան գէշ կամ աղէկ լաթ չէր փնտրուեր կոր . հապա միայն իր խօսքը ընել , ուստի տղին ինքնահաւանուիլ կոտրելու համար պէտք էր որ համոզէր հասկըցրնէր որ վայելը չիլայլէր ինքը չիկրնար ճանչնալ , ուստի իրեն ալ չիյնար բացարձակ կամք ունենալ . հօրը ըրածը բարերարուի մըն էր , ուստի տղին չէր իյնար այն բարերարուիլը ընտրել . թէ որ ասոնցմով չիհամոզվէր նէ պէտք էր տղան առանց լաթի ձգել , ըսելով որ քեզի շինելիք լաթս սա է , որովհետեւ քեզի ան կրվայլէ , կուզես հագիր կուզես մի հագնիր . ան ատենը տղան կը պարտաւորէր իր կամքը կոտրել իրմէ մենծին կամքին հնազանդիլ , բայց սա ճամբան չիբըռնեց , տղին

սեւ լաթեր հագցուց , ան ալ անոնք սիրով  
հագաւ ու քանի որ հագնէր նէ , օախօսքս  
ըրի , ան շինելու լաթը չիհագայ կրսէր :

Աղէկ նայէ , մէկ մոլութիւն մը զսպեմ  
ըսելնիքէն ուրիշ մոլութիւն մը երեւան չի  
հանեա :

Հագուտին բարոյական մասը շատ եր,  
կար կրնայ ըլլալ , բայց հոս վերջ կրնեմք .  
որովհետեւ առաջքի զուրցածներէս կրթող  
ները ընելիքնին կրնան հետեւցընել :



### Գ Լ Ո Ւ Խ Ե .

#### Ք նանալ :

Ք նանալը մեր մարմնոյն առողջութեանը  
շատ հարկաւոր է . նայէ ի՞նչպէս զօրացու-  
ցիչ քունէ մը ետքը ամմէն մասունքնիս  
ուժ կրստանան , ի՞նչպէս դիւրութիւն կըշար-  
ժիմք ու որչափ խորհելու ու աշխատելու  
յարմարութիւն ունիմք . բայց առանցքը  
նանալու կենամք նէ մարմիննիս կըտրկարա-  
նայ . ինչպէս որ ոտքերնիս հոգնելէն ետքը ,  
չինստիմք , հոգնութիւն չառնեմք ու միշտ  
քալեմք նէ , ոտքերնիս կըհիւանդանայ կամ  
քալելու կարողութիւն չունենար , անանկ  
ալ մեր ուղեղը ու ջիղերը առանց քունի ,

առանց հանգստութեան, չափազանց հոգ-  
 նելովնին, կամ գործելու կարողութիւննին  
 կրկորսընցընեն կամ հիւանդութիւն մը կը  
 պատճառեն: Բայց ասոր հակառակը ինչ-  
 պէս որ չիբալելով ոտքվընիս քալելու կարո-  
 ղութիւննին կրկորսընցընեն ու մարմինը կը  
 թուլնայ, ասանկ ալ չափազանց քունը ու-  
 ղեղն ու ջիղերը չիզօրացընէր, հապա կըթու-  
 ցընէ. շատ քնացողը յիշողութիւնը կրկոր-  
 սընցընէ. իր մարմինը կըգիրնայ բայց իր ու-  
 ժը կրկորսընցընէ: Աստի պէտք է որ քու-  
 նը չափաւոր ըլլայ, այսինքն ոչ շատ, ոչ քիչ.  
 երիտասարդներուն համար օրը վեց ժամէն  
 մինչեւ ինն ժամը քնանալը բաւական է.  
 բայց երեք տարեկան տղի մը այդչափը չօգ-  
 տէր. ժամ մը երկու ժամ աւելի քնանան  
 նէ աղէկ կըլլայ:

Պէտք է որ տղին պառկած սենեակը  
 մենձ ու հովոտ (հաւատար) ըլլայ. այսինքն  
 առաստաղը (թավանը) բարձր ու քանի մը  
 պատուհաններով. պատուհաներն ալ միշտ  
 բաց կենալու են. միայն տղին քնանալու  
 ժամանակը գոցելու է:

Վնացած ժամանակը քովը ճրագ չիգրտ-  
 նըվի. կարելի է նէ ձայն ալ չառնէ<sup>1</sup>:

<sup>1</sup> Առջի մասին մէջ քնանալու վրայ խօսած ատեննիս  
 դուրցեցինք թէ տղար ձայնի մէջ քնանալ սորվին հոս ալ  
 կրտսեր թէ կարելի է նէ ձայն չառնեն, ասիկայ հակասու-



Պէտք է որ տղին անկողինը բարձր ըլլայ որ օդ բանի չորս դիէն . թէ որ անկողինը վարագոյր ( փէրտէ ) ունի նէ , բարակ կրտաւէ ըլլայ . ու տղին քնանալու ատենը լուսին կողմի վարագոյրը միայն քաշվի :

Տղին անկողինը փափուկ չըլլայ . բնաւ ծածկոցները ծանր ու հաստը չըլլան . ասիկայ տղին չար սովորութիւն մը տալու պատճառ կըլլայ : Ա՛րջապէս բարձր շատ բարձր չըլլայ :

Պէտք է որ տղան շիտակ պառկի . գալարելով նստուկ չիքրնանայ . կարելի է նէ ներելու չէ որ կռնրկին վրայ պառկի , որովհետեւ այս կերպիւս գէշ երազներ կըտեսնայ ու միանգամայն ստամոքսը աղէկ չիմարսէր : Ա՛ղէկը աջ կողմի վրայ պառկելն է :

Տղան ցորեկը շատ վազելով , քայելով , խաղալով հոգներ է նէ , հաց կերածին պէս կրնայ քունի մըտնալ . բայց ինչուք իրիկուն թէ որ կարգալով իր օրը անցուցեր է նէ

Թիւն մը կերելի , բայց ստանկ չէ . տղի մը պզտիկութեան ատենը աւելի իր մարմնոյն զօրութիւն տալու միջոցներուն միտ գնելու է քան թէ իր մտքին զարգանալուն . ուստի տղոց պզտիկութեան ժամանակը նայելու է որ քուններնին խորունկ ըլլայ ու քիչ բանէ մը չարթնան որ կարենան ուժ առնել . բայց քանի որ մեծնան նէ նայելու է որ ձայնէ արթննալ սորվին , որովհետեւ մարդ իր քնացած ժամանակը գողի կամ ուրիշ թշնամիի մը հանդիպի նէ պէտք է որ շուտ մը արթննալով կարենայ ինքզնիքը խալտել :



պէտք է որ հաց ու տելէն ետքը քիչ մը սպասէ , անկէ ետքը քունի մտնայ նէ կերածը աւելի աղէկ կըմարսէ :

Պէտք է որ տղաք ամմէն իրիկուն միւնոյն ժամին քնանան , օր մը ուշ , օր մը կանուխ քունի չիմտնան , ասկէ կըհետեւի որ տղաքը քեղի հետ առնել նստեցընելը իրենց մենծ մնաս ունի : Այս ասիկայ իրենց երեւակայութիւնն վառելովը քուներնին խորունկ ու զօրացուցիչ չըլար , երկրորդ քուներնին գայ նէ չիքընանալու հոգնին պիտի քեղի հետ կենալու համար , մեծ մարդու քունը գայ չիքընանայ նէ իր կեանքին կարծելուն պատճառ կըլլայ , ուր մնաց տըղայքը :

Ենութիւնը կուզէ որ գիշերները մարմիննիս հանդատանայ ու ցորեկները գործէ , արեւը մարը մըտածին պէս բոլոր անասունները քուն կըմըտնան , բնութիւնն ալ լոյսը խաւարի , ու ձայները լուութեան դարձընելովը , մարդս հանդատութեան կըհըրաւիրէ , ասկէ զատ գիշեր եղածին պէս մեր վրան պրզտիկ տենդ մը կուգայ առողջութեան ատեննիս , աս տենդը ինչուք կէս գիշեր , կամ կէս գիշերէն ժամ մը ետքը կըքըշէ , և մեր հիւթերուն մէջէն մնասակարները կը զատէ որ առտրլան դէմ սովորաբար պրզտիկ կարիք ընելու ատեննիս դուրս կըլլայ , թէ որ մենք այն ժամանակին մէջ քուն չի

մտնամք նէ , ՚ի հարկէ բնութեան այս հարկաւոր գործքը պիտի խանգարեմք , ու հիւանդութիւններու պատճառ պիտի ըլլամք : Ղիշերները նստելու ատեննիս վառած ճըրագին գէշ հոտերը ու անկէ ելած գէշ հիւթերը մեզի պիտի ներգործեն , ասոնք ալ ուրիշ կերպ հիւանդութեանց պատճառ պիտի ըլլան , ինչպէս կուրութիւն և այլն , Ահա այս բոլոր պատճառներով պէտք է որ զիշերները կանուխ քուն մտնան ու ՚ի հարկէ առտըլըներն ալ կանուխ արթըննան :

Աս ըսելէս չիհասկցալի որ բոլորովին ցերեկը քնանալը կըմերժեմք , որովհետեւ ամառ տղաքը ցորեկվան հացէն ետքը քիչ մը կրնան քնանալ , աս ալ ամիէն տղի համար չէ , մարդ կայ որ ինչ ընես ցորեկը չի կրնար քնանալ , հիւանդ ըլլալու է որ ցորեկը կարենայ քնանալ , չէ նէ ասջի իրիկ վընէ միայն ժամ մը քնացած ալ ըլլայ , չիկըր նար քնանալ ցորեկը : Անոնք որ տկար բնութեան տէր են ու չոր են , թող քնանան , բայց թուրամորթ ու գեր ըլլողները պէտքը չէ որ ցորեկը քնանան , որովհետեւ քնանալը կըթուլցընէ ու կըգիրցընէ , չիքրնանալ ու նստիլը կըչորցընէ : Չմեռը ամառէն աւելի կըքնանամք , ուստի տղոց թող տալու է որ ձմեռը ժամ մը աւելի քնանան բայց միշտ զիշերները :

Քնանալուն կերպը ու ժամը սովորու-

Թե՛նէ՛ն կախաւած բան մըն է . ճնողքները Թէ որ կամք ընեն նէ տղոց առողջութեանը յարմար կերպը դիւրաւ բռնել կրնան տալ :

Նմանապէս պէտք է որ ճնողքը նային որ տղաքը մինակ քնանալ սորվին առանց վախնալու . ատոր համար առաջ կրթողուս որ առանց ճրագի քրնանան . կամոց կամոց քեզ մէ առաջ կրտառ կեցընես իր տեղը , առջին անգամը քովը կրնտիս ինչուք որ քրնանայ նէ անանկ մինակ կրձրգես . բայց իր պառկած տեղէն չես հեռանար , արթննայ ու մինակ եղածը տեսնալով լայ նէ , շուտ մը կրհասնիս հոս եմ ըսելով , ինչ կայ որ կուլաս կոր . կրվախնամ կար ըսէ նէ , վախնալու բան մը չեղածը խնդալով կրհասկըցընես . քանի մը անգամէ ետքը իր անկողինը մըտածին պէս կրթողուս որ մինակ քնանայ :

Տղոց մինակ պառկիլը քանի մը ուրիշ աղէկութիւն ունի . նախ երկու երեք հոգի մէկ տեղ ըլլան նէ մէկզմէկու հետ խօրաթելով , չեն Թողուր որ քնանան . երկրորդ կարելի է որ ատ ընկերութե՛նէ՛ն ուրիշ չար սովորութիւններ ծագի . իրաւ ասիկայ երբեմն մենակեցութեան մէջ ալ կրնայ գըանըվիլ , բայց սովորաբար այդ չար սովորութեանը պատճառը գէշ ընկերներն են . ճնողքը ատոր շատ ուշադրութիւն ընելու են :

Պէտք է որ տղաք առտըվըները կանուխ ու ուզած ժամերին արթննալ սորվին , բայց

նայելու է որ աս սովորութիւնը եօթը տարիէն առաջ չխորվի . ասոր համար Ռուսօ կըսէ որ տղին հաճոյացած մէկ բանը իրեն կը խոստանամ առտըվան համար . ինչպէս ըսեմք թէ տղան կառքով (արապայով) տեղ երթալ կըօիրէ նէ , կառքը աչքին առջին իրիկվընէ կըպատրաստեմ կամ կապսպրեմ , իրեն ալ կըսեմ որ վաղը առտու ըսեմք թէ տասնին պըտըտելու պիտի երթամք , դուն ալ պատրաստ եղիր . տղան ինքնիրեն չարթննայ նէ , չեմ արթընցընէր , ու կառքը կըհեծնամ կերթամ . տղան ուշ կարթննայ . կառքը գացած կըգըտնայ . կուլայ , կըսըգողի . բայց ուրիշ անգամ մը ուղած ատենը արթննալ կըսորվի : Աս բարեկամ մը ունիմ իրիկվընէ պառկելու ատենը վաղը առտու քանիին արթննալու խօսք տայ նէ այն ատենը կարթննայ . այս սովորութիւնը մեծցած ատեննիս ալ կըրնամք ստանալ :

## ԳՒՂՈՒԽ Օ.

Մարութիւն .

Քանի մը օրէնսդիր մաքրութիւնը օրէնք դրին , ու իրաւամբք . որովհետեւ ա սիկայ առողջութեան կանոններուն պինդ հարկաւորն է . կրնամ ըսել թէ մաքուր օդ

չառնելէն որչափ գէշու թիւններ կը հետեւի նէ, մարմինը մաքուր չկապահելէն ալ գըրե՛թէ այնչափ գէշու թիւններ կը յառաջանան ասոր վրայօք քիչ մը խօսեցանք առջի մասին մէջ. ուրեմն հոս կարծապէս կանցնիմք ու միայն քանի մը պարագայներուն վրայ խօսելով կը հասկըցունեմք թէ, որ բանը մեր տըղին յարմար է և որ բանը յարմար չէ:

Պինդ առաջ լուացուելու վրայօք նայիմք ինչ գիտնալիքներ կան և երեք ու կէս տարիէն մինչեւ տասներկու կամ տասնըջորս տարեկան հասակի տղոց համար ինչ կերպ լուացվիլ կը յարմարի:

Վուացվելուն կամ թէ բազմիք մտնալուն կերպը քանի մըն է. ինչպէս լուացուիլ ջուրի մէջ, աւազի մէջ<sup>1</sup>, չոր կամ խոնաւ գոլորշիքի ( պուղուշի ) մէջ<sup>2</sup>: Վուացվիլ հանքային ջուրի մէջ, լիճի մէջ, գետի կամ ծովու մէջ, գեղաճ կամ պարզ ջուրի մէջ:

1 Ինչպէս տամուզ տերեւ սեւ ծովին եղերքը:

2 Ինչպէս արեւելեան երկիրներու և Մոսկովիտանի բազմիքները: Հռոմեացիները ասոնց պէս գոլորշիքով բազմիք ունէին հսն մեծ սրահ (տալոյ) մը կար փռան վերայ կեցած. մէջը կընստէին չիլուացված. մեր կողմի բազմիքներուն մէջ գոլորշիք հանելու համար մենք մարմարիօն (մերմեր) քարը կը տաքցընեմք, անոնց վրայ քանի ջուր թափինէ գոլորշիք կը հանէ, գոլորշիքը բերելու համար տեղ տեղ ջուր կը քրքրըքնեն ուրիշ տեղ ալ կաթապով (խազանով) ջուր կը տաքցընեն և այլն:



Վճարակներու ջուրն ալ քանի մը կերպէ ինչ պէս տաք կամ պաղ կամ գաղջ ջուր, վազուն կամ հանդարտ, մաքուր կամ աղտոտ ջուր և այլն : Վճարակներու ժամանակը հանդարտ կենալը կամ շարժում բնելը միևնոյն չէ 1 :

Վճարակներու ներգործութիւնը : Չբով լուսարկներ կամ ջուրի մէջ մտնալը միայն մորթին վրայի աղտերը չիմաքրեր, հասպա ուրիշ ներգործութիւններ ալ ունի, որոնք պէտք է որ աչքէ անցնենք :

Նախ ջուրին մէջը նստելովնա մեր մորթը ջուրը կը ծրծէ, կուռենայ, ու վրայի հաստը կեղեւները կիյնան, մանաւանդ ջուրը գաղջ ըլլայնէ : Աս կերպիւս մորթը փափկութիւն մը կստանայ, ու իր զգացողական զօրութիւնը կաւելնայ :

Ասանկ ալ թէ որ ջուրը շատ տաք կամ շատ պաղ ըլլայնէ, ջուրը ներս կերթայ, շատ պաղ կամ շատ տաք ըլլայնէ ջուրը ներս չիկրնար երթալ, առջի դիպուածին մէջ մորթին ծակոտիքները կը գոցվին, երկրորդ դիպուածին մէջ ալ տաքը շատ քրտինք բերելովը ջուրը աւելի ներսէն

1 Հռովմայեցիները տաք կամ պաղ ջուրով լուսարկելու համար մեծ աւազաններ (հաւուզներ կամ խուռնաներ) ունեին . Piscina Natatilis . սասնց մէջը քանի մը հոգի կրնար սղմիլ ու մէջն ալ կը լողային : Պուրսայ Հիւսիս-Իսթիլ, Էնի Էնիլի Բաթլըճճ, և ուրիշ բաղնիքներու մէջ սասնկ աւազաններ կան :



կելլայ քան թէ դրսէն կրմտնայ . բայց գաղ ջրին մեր ներսի դին թափանցելուն ապա-  
ցոյցը սա է որ ծարաւ մարդ մը գաղջ ջրի  
մէջ նստինէ ծարաւութիւնը կանցնի :

Թէ որ ջուրը վազուն ըլլայ նէ կամ մենք  
շարժում ընենք նէ , մարմիննիս մէջը զարնը  
վերով , ինչպէս ծովի արիքներու ( տարղանե-  
րու ) մէջ կամ վազուն գետի մը յորձանքի  
( ակունթըյին ) գէմ , ջիղերնիս կրդրդին .  
թէ որ ջուրը սաստիկ տաք չըլլայ նէ աս  
շարժումը մեր ջիղերուն ուժ կուտայ :

Պաշտօնը ինչ կընէ : Թէ որ ջուրը պաղ  
ըլլայ նէ մարմիննիս գրեթէ կրքաշի , մոր  
թերնիս կրկրծկրտի , արիւնը ներս կրկանջը-  
վի , աս պատճառաւս ալ քրտընիլը կրկրտրի ,  
կրսկսինք մսիլ , ատենէ մը ետքը մորթերնիս  
կրթոումի ( սօրմիշ կրլլայ ) կամ կրկասպուտնայ  
միանգամայն պզտիկ կարիքնիս կրսկսի աւել-  
նալ :

Թէ որ ջուրը սաստիկ պաղ ըլլայ նէ գը-  
լուխնիս սիրտերնիս անդամնիս ցաւ կղզան  
ու մենք ալ կրսկսինք գողալ , կղակնիս մէկըզ  
մէկու կրզարնէ , մարմիննիս ալ գրեթէ կը-  
փատնայ , մանաւանդ մէջը շարժում չը-  
նեմք , կամ պաղի չիդիմացող ըլլամք նէ ,  
ինչպէս որ առջի մասին մէջն ալ զուր-  
ցեցինք : Որչափ որ ջրին մէջը արիւննիս  
ներս վաղեց նէ , այնչափ ալ ջրէն ելլալէն  
ետքը մորթին վրայ կրվաղէ , ահա ասոր հա-

մար ան ատեն, մարմինն իս կրկարմրի կրտաքնայ, երբեմն ալ կըբրանի: Թէ որ սրաղ ջուրը մանողը տկար ըլլայ նէ, ջրէն ելլալէն ետքը մարմինը փատցածի պէս կըկենայ, շուտ մը շիտաքնար, ըսելէ որ սրաղ ջուրը իրեն կըմնասէ. ասոր հակառակը մանողը ուժով ըլլայ նէ շուտով կըտաքնայ ու իրեն ալ օգուտ կընէ:

Տո՛ւ ջուրը ինչ կընէ: Չուրը տաք ըլլայ նէ այսինքն ջուրին տաքութիւնը մեր մարմնոյն տաքութենէն աւելի ըլլայ նէ, արիւնը կսկսի գէպ ՚ի մարմը վազել, սաստիկ կըբրտընիմք, շնչառութիւնն իս կաւելնայ, գլուխն իս կըծանրընայ, սիրտերն ուս բաբախում (չարբընթը) կուգայ, աչիւնն իս ու գլուխն իս կըդառնայ, երբեմն մարելիք, երբեմն ալ չափազանց տաքութենէ կաթուած (նուզուլ) կըպատճառի:

Ասանկ տաք ջուրի մէջ մէկը շատ նստի նէ, սովորաբար շատ քրտինք կորսընցունէ լովը կըտրկարանայ, բաղնիքէն ելլալէն ետքը վրան ծանրութիւն մը կուգայ, ու կերածն ալ դժուար կըմարսէ:

Չա՛ղջ ջուրը ինչ կընէ: Չաղջ ջուրին մէջ ալ թէ տաք ջուրին և թէ պաղ ջուրին ընելիքը կըզգամք, բայց սա կերպիւ որ գաղջ ջուրը թէ որ տաք ջուրի մօտ ըլլայ նէ, թէ և մէջը քիչ ալ քրտընովի նէ, թեթեւ կերպիւ մը տաք ջուրին ընելիքը մեզի կընէ, ասոր հակառա-

կը թէ որ սլաղի մօտ ըլլայ նէ գաղջ ջուրը ,  
ան ատենն ալ պաղ ջուրին ընելիքը կընէ .  
անանկ որ տաքի մօտենայ նէ կըտրկարա-  
ցընէ , ու սլաղի մօտենայ նէ կըզօրացը-  
նէ , ու թէ որ ոչ քրտընցընելու ու ոչ մը  
սեցընելու աստիճան ըլլայ նէ մի միայն կը-  
զովացընէ հոգնութիւննիս կառնէ :

Գործընդի Տեղ նստիլը Ինչ կընէ : Գործընդի  
մէջ նստիլը որչափ որ տաք ըլլայ նէ , այնչափ  
ալ տաք ջուրին ընելիքները կընէ . Պուռսայի  
Քի-ի-րալէ-բաղնիքին թիւ-լէ-րալիս ըսված  
տեղը չորս վայրկեանէն աւելի չիկրցայ կե-  
նալ , սկսայ սաստիկ քրտընիլ ու վրաս մարե-  
լիք եկաւ . բայց տեսայ որ աւելի նստալ-  
ներ կըլլան կոր , ասանկ գործընդի մէջ մարդ  
աւելի քրտինք կըկորսընցընէ քան թէ նոյն  
աստիճան տաք ջուրի մէջ : Ար բաղնիքնե-  
րուն գործընդի սաստիկ տաք չըլլայ նէ մէջը  
նստելովնիս գաղջ ջրով լուացուած կըսեալ-  
վիմք : Բայց երբեմն անհնարին կերպիւ  
տաքցած կըլլայ , ան ատենն ալ սաստիկ  
կըքրտընիմք ու կըտրկարանամք :

Լո-սոյ-լէ-լո-սոյ-լէ-լէ-ն Երբ  
սոյ-լո-լի-ն Երբ Բանիլ : Հոսվմայեցի-  
ները տաք ջուրով լուացվելէն ետքը սլաղ  
ջուրի մէջ կընետվելին . Ինչուկ հիմայ  
ալ Սոսկովները և Ֆէնլանտացիք ասանկ  
կընեն , ասկէ սա օգուտը կըբաղեն որ ա-  
սանկ ընելով սլաղի և տաքի դիմանալու

ուժ կըստանայ մարդ . տաք ջուրը արեան շրջանը աւելցընելուն ուժ կուտայ առջի անգամին , բայց ետքը տկարութիւն կըբերէ . աս վերջին տկարութիւնը չեկած , պաղ ջուրին մէջը մանրվի նէ , բրբտինքին մեծ մասը չիկորնչիր . ու տաքին տուած ուժն ալ բրբտինքով չէրթար . բայց տաք ջուրէն ելլալէն ետքը պաղ ջուրին մէջ շատ ատեն նստիր վտանգաւոր է :

Ասիկայ բարեխառնելու մէկ կերպը կայ , այն է պաղ ջուրի մէջ լաթ մը թաթխել , ու տաք ջուրէն ելլածիդ պէս մարմինդ անով սրբել պաղ պաղ :

Մարմինը շփելը ու Վէ՛՛է՛ բըսելը չէ թէ միայն ազտերը աղէկ կըմաքրէ , հապա ջիղէրը կըդըրդէ ու մարդուս ուժ կուտայ . բարեկամ մը ունիմ անհնարին կերպիւ ինքը զինքը հոգնեցընելէն ետքը ուրիշ բան մը չընէր բայց միայն բաղնիք երթալ ու զինքը շփել տալ . աս կերպիւս իր հոգնութիւնը կանցնի ու վրան թեթեւութիւն մը գալով նորէն հոգնելու ուժ կըստանայ :

Վողալ ու շարժում ընելը որովհետեւ մարմիննիս կըտաքցընէ , թէ որ պաղ կամ զով ջուրի մէջ ըլլայ նէ ՚ի հարկէ շատ տաքութիւն չիտարճելնուս ու միանգամայն ջուրին պաղութիւնը աս կերպիւս շատ չի մանալնուս մեզի օգուտ կընէ . բայց տաք ջուրի մէջ լողալն ու շարժում ընելը մեզի

քրտորնցընելու պատճառ մը ըլլալովը աւելի տկարութիւն կրբերէ :

Բաղնիքէն ելլալէն ետքը ազգ կայ որ վըրան իւղ կրբրտէ , ասիկայ պաղ առնելէն կըսահէ , մէյմալ չիթողուր որ դրտի խոնաւութիւնը մեր ներտի դին անցնի :

Աս ծանօթութիւնները տալէն ետքը նա յիմք տղոց որ կերպը և ինչ կըյարմարի :

Պաղ ջուրը մըտնալը տկար մարդոց ու պղզտիկ տղոց բնաւ չյարմարիր . ինչպէս որ առջի մասին մէջ ալ զուրցեցինք : Աստիկ պաղ ջուրը երեք տարիէն վեր տղոց ալ չյարմարիր . բայց երեք տարիէ վեր ու ուժով տըղոց աւելի կըյարմարի . քիչ մը պաղուկ ջուրը մըտնալը քան թէ տաք ջուր կամ տաքուկ գաղջ ջուր մըտնալը , մանաւանդ տըղաք լուացվելու ատեննին շարժում ընեն լողան նէ :

Պաղուկ ջուրը ամմէնէն վեր կրբունեմ վասն զի գաղջ ջուրը տաքուկ ըլլայ նէ , թէ պէտ կըզովացընէ , հոգնութիւննիս կառնէ ու մեր ազտերը կըմաքրէ , բայց մարդ գաղջ ջուրէն ելլալէն ետքը դիւրաւ ալ կըմըտի , ու ամմէն ատեն գաղջ ջուրի մէջ լուացվին նէ կըտըկարանայ : Տաք ջուրի մէջ լուացվելը ինչպէս որ հասկըցուցինք թէպէտ առաջ ցուրտին դիմանալու կարողութիւն կուտայ , բայց ետքը կըտըկարացընէ . ուտտի ամմէնէն յարմարը՝ պաղուկ ջուրով լուացվիլն է .



ուստի կուղեմք որ տղոց կամաց կամաց պա-  
ղուկ ջուրով լուացվիլ սորվեցրնեն . բայց  
պաղուկ ջուրը դժար կրմաքրէ , ուստի մաքրը-  
վելու համար ալ գաղջ ու տաք ջուր գոր-  
ծածվի : Մտինք որ տաք ջուրը պաղի ու տա-  
քի գիմանալ կուտայ . բայց տաք ջուրին ա-  
ղէկութիւնը չիկորսընցրնելու համար , պէտք  
է որ տղաք տաք ջրէն ելածնուն պէս պաղ  
ջուրով լուացվին , բայց անանկ մը որ առ-  
կէ չիլընասին . ինչպէս նախ ջուրին մէջ  
մտնալու ժամանակը ջուրը գաղջ ըլլայ կա-  
մաց կամաց ջուրը կրտաքցրնես ետքն ալ  
կամաց կամաց կրպաղեցրնես . ու տղան  
ջուրէն ելածին պէս պէտք է որ սրբըվի ,  
ու՝ վրայէն եղ կըքրսէ , աս կերպիւս տա-  
քի զօրութիւնը կրպահէ չիկորսընցուներ ,  
ու միանգամայն ալ չիլընասիր մէկէն ՚ի մէկ  
տաքէն պաղին անցնելուն համար :

Չի կարծըվի որ սաստիկ տաքէն սաս-  
տիկ պաղը անցնելնին մնաս կրգործէ . ինչ-  
պէս որ առաջ ալ ըսինք Սուսերը իրենց  
բաղնիքէն ելածնուն պէս ձիւներուն մէջ  
կերթան կրտապալին . թէ որ Սուսաց բաղ-  
նիքը սաստիկ տաք չըլլալով , գաղջ ըլլար նէ՝  
չատ մնաս կրկրէին անոնք :

Մտինտո ու պարանոցը կարճ տղոց  
տաք ջրով լուացվիլը չըլար :

Վոլորչեքը կրթախանցէ չէ թէ միայն մոր  
թին , հապա օդին անցքերուն ալ այսինքն



Թորքերուն . ուրեմն կուրծքերնին տկար կամ  
արիւնստ բնութեան տէր՝ մարդոց բնաւ չի  
յարմարիր . գոլորշիքը բերտընելու դեղ մը  
կրնայ ըլլալ . ուստի երբ որ բերտընելու կամ  
ուրիշ հիւանդութեան մը համար պէտք  
ըլլայ նէ , ան ատենը միայն գործածէ . չէ  
նէ ամէն օրվան գործածելու միջոց մը չի  
կրնար ըլլալ , մանաւանդ տղոց համար :

Վերջապէս տղոց մաքրելու համար  
գաղջ ջուր , սպաղի կամ տաքի սորվէնուն  
համար , նախ տաք ու անմիջապէս սպաղ ջու-  
րը մանալը կրկնապէս ու ասալ կամաց կա-  
մաց աստիճան աստիճան :

Տղաք ջուր մտնալու ատեննին պէտք է  
որ բերտընած չըլլան , անօթի փորանց կամ  
շատ քիչ բան կերած ըլլան . ու բաղնիքէն  
երածնուն պէս շուտով մը չոր կտաւներով  
սրբբըլին :

Պաղ ջուրին մէջ շատ ատեն կենալու չէ ,  
ու ջուրէն երածին պէս սրբբըլելու ու բա-  
նի մը վայրկեան պըտըտելու է :

Ասանկ ալ տաք ջուրը շատ կենալու չէ :

Բայց գաղջ ջուրին մէջ երկար ատեն  
կրնան կենալ թէ որ սպաղուկ է նէ :

Կուզէի որ մինչև տասնըչորս տարի տը-  
ղաք թէ արու ըլլան թէ էգ ոչ կանանց հետ  
բաղնիք երթան և ոչ արանց հետ , որով  
հետեւ հոն չխտրվելիքնին կըսորվին , ու մո-  
լութեան օրինակներ կըտեսնան : \ ուայց

վելու համար թող տղաք իրենց տունը ձը-  
լէյի մէջ մտնան . այս կերպիւս ինքրդինքնին  
չիճանցած բազմութեան մէջ չեն մտնար .  
Ապարտացիք ամմէննին մէկ տեղ կըլուաց-  
վէին , բայց Ապարտացւոցմէ հիմայ մենք  
շատ հեռու եմք ամմէն կերպով , ուստի  
այդ մասին ալ անոնց չինքմանիմք նէ աղէկ  
կըլայ :

Տղոց գլուխն ալ մաքուր պահելու հա-  
մար , ամմէն օր կըսանտրես , ու նայելու է  
որ պզտիկուց իրենք սանտրեն ինքրդինքնին .  
բայց մի թողուր որ տղան սանտրըվելու հա-  
մար քանիմը ժամ անցունէ , մի թողուր ալ  
որ չսանտրըված կենայ :

Հացէն ելլալէն ետքը պէտք է որ բե-  
րանն ու ձեռքիլները լուանալ սորվի :

Պէտք է որ եղունգները ( թռնախնները )  
երկընցածին պէս կտրես . ու քանի որ մեծ  
նայ նէ իրեն սորվեցընես որ ինքն ալ կտրէ :

Նայէ որ ելլալու , նստելու , երթալու ,  
գալու , պառկելու ատենը , իր հանդերձը ու  
վրան գլուխը մաքուր պահէ . վրան բիծ  
մը տեսնաս նէ սրրդողէ ու պատժէ . երե-  
սին , քիթին , բերնին , ձեռքին վրայ հող  
կամ մեղան ( միւրէքքէպ ) կամ ուրիշ աղ-  
տոտ բան մը տեսնաս նէ պատժէ :

Սեճ ու պզտիկ կարիքը գայ նէ նայե-  
լու է որ պէտք եղած տեղը երթայ հոնը  
նէ , բայց եկածին պէս թող ընէ , մի հար-

կադրերը խեղճ տղան սպասելով իր տեղը ընելու :

Թէ որ պատճառաւ մը իր տեղը կամ անկողինը ընէ նէ պատժէ՛, ու մի թողուր որ աս գէշ բանը սովորութիւն ընէ :

Նոյնպէս մի թողուր որ Նորի՛լէ կամ ծխապամորճ ( չուպուխ ) գործածէ . նախ ծխախոտ ( թիւթիւն ) կամ Նորի՛լէ քաշելը իր շնչառութեանը մնաս ունի . երկրորդայն Օփիէրի՛ն կոտորակները թուքին հետ մէկ տեղ ստամոքսը երթայ նէ՛ ստամոքսը կը տրկարանայ ու ախորժակնին կը գոցվի : Աւրտ որում ծխապամորճ քաշած ատեննիս շատ թուք կըխարձեմք , ասիկայ ալ կընիհարացընէ . քայց ասոնցմէ գէշը , ատոր գերի ըլլայն է ( թիրեաքիլիք ) :

Քթախոտը ( էնֆիէն ) մէկ մասին ատկէ գէշէ . ատիկայ քիթը կըմեծցնէ , քաշողը մաքուր չիկրնար կենալ ու գէշ կըհոտի ու գրեթէ ծխապամորճ քաշողէն աւելի գէշ կըհոտի : Ասկէց զատ մէկը մէյմը ասոր սորվինէ , ալ չիկրնար ձգել . կամ ձըգէնէ կըվընասի , ուստի կուզեմք որ տղաք պզտիկուց ասանկ գէշ բաներէ հեռու կենան :

## Վարժութիւն :

Արնամբ ըսել որ մեր բոլոր կարողութիւններուն բացվիլը և կատարելագործելը վարժութեամբ միայն կարելի է : Բեռնակիրը իր ուսին ջիղերը վարժելովը ուսը կուժոյնայ , ու ան մարդը որ դժուարութեամբ յիսուն ( ) քա բեռ կրնար շալկել նէ , վարժութեամբ սովորութիւն կրտանայ այն բեռին ծանրութեանը , ու իր առջի քաշած դժուարութեանցը մէկն ալ չկրաչէր : Աստիճարը ձեռվըները վարժելովը , թէ և ծերանայ ու քալելու ան դամ ճար չունենայ , միշտ թին կրնայ քաշել ու գրեթէ չհոգնիր , վասն զի վարժութեամբ իր բազուկներուն ջիղերը սոդաշխատանքին սորվեր են , ալ անկէ դժուարութիւն չկրաչէր : Ստամոքսնիս գործածութեամբ կուժոյնայ , ու դժուարամարս բաներ մարսելու սովորութիւն ըտանալուն՝ այն բաները ատանկ սորված ըտամոքսի մը դժուարամարս չեն դար :

Սովորութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ վարժուելուն մէկ սրտողը , նայէ՛ նոր ծնած տղան օդին ներգործուէ սորված չըլլալուն շունչ առնելու ատենը ցաւ կզգայ , բայց երթալով իր թոքերը կրգործածէ , օդին

Ներգործութեանը կրնտեւանայ ( ալըշմիշ կըլլայ ) ու օգին ներս մանալն ու ելլալը անգամ չիմանար : Վեռը բնակող մարդը օգին բարակութեանը սորվելուն համար անկէ չիվընասիր . երկաթադործը կրակին տաքութեանը ու սաստիկ լուսին առջին ամէն օր կաշխատի ու ատկէ բան մըն ալ չըլլար . թէ որ մէնք ըլլամք վայրկեան մը հոն չէինք կրնար դիմանալ . ասանկ ալ թնդանօթ նետողը թնդանօթին ձայնը գրեթէ չըզգար . հոտերու մէջ մեծցած մարդը , հոտերուն սորված ըլլալուն համար , ոչ ջիղերը կըզգոյն , ու ոչ բան մըն ալ կըլլայ : Տերմ ( սըթմայ ) , ու ուրիշ կերպ հիւանդութեամբ լեցուն տեղեր կան , հոն նոր գացողը գրեթէ միշտ կըվընասիր . բայց այն տեղի բնակիչները շատ անգամ բան չեն ըլլար , ասոր պատճառն ալ սովորութիւնն է :

Սովորութեամբ մեր Սիհրդատ թաղաւորը չիթունաւորվելու վիճակի մէջ էր մտեր :

Վարժըվելով մեր միտքը կըբացովի , մէկ մարդ մը խորհելու սովորութիւն ստացեր էնէ , ալ խորհելու համար գժուարութիւն չիբաշեր , իրեն համար ասիկայ խաղալիկ մը կըլլայ . շատ մարդ սորված ըլլայնէ , տասը երբեմն տասնըհինգ տասնըվեց ժամ շարունակ առանց հոգնելու



կրնայ դրել կամ կարդալ, որ ասանկ աշխատանքի մը չխտրվողը, ժամ մը անգամ չիկրնար դիմանալ :

Մարդ մեռցունողներուն մի կարծեր որ սիրտերնին բան մը կըզգայ, անոնց համար հաց ջարդելը ինչպէս է նէ՝ մարդ ջարդելն ալ անանկ կուգայ : Չի վախցող մարդը ուրիշ բան չէ, բայց միայն չիվախնալու ինքրզինքը սորվեցընող մը :

Աս զուրցածէս չիհետեւի որ մեր կարողութեց պատճառը վարժելին է : Վարժութիւնը մեզի կարողութիւն չիկրնար տալ, կարողութիւնը առաջկուց ըլլալու է որ վարժեմք, ես սա միայն ըսել կուզեմ որ վարժութիւնը մեր կարողութիւնը կըբանայ, չէ նէ չեմ ուզեր ըսել որ մէկ մարդ մը բարակ ու տըկար սովըներ ունի նէ՝ ոտքըները գործածելով ու վարժելով հաստը ու հզօր ոտք ունեցողին չափ ուժ կունենայ, մէկ ուրիշ մը որ քիչ խելք ունի նէ, խելքը վարժելովը խելացի մարդու չափ խելք կունենայ, բայց եթէ գործածութիւն ու վարժութիւնը ան քիչ խելքը կըբանայ, մէկ խօսքով ըսեմ, ան քիչը գործածելու դիւրութիւն կուտայ : Մեր անդամները, մասունքնիս ու կարողութիւննիս վարժել և գործածելը, անոնց ուժ կուտայ, ու աս կերպովս խել մը բաներուն ներգործութեանցը դիմանալու սովորու-



Թիւն կրտսանամք, ինչպէս որ աս խօսքը աս գիրքիս մէջը շատ անգամ ըրեր եմ:

Կամք չիվարժելէ ու գէշ սովորութեանէ յառաջ եկած մնասներուն: Մէկ մարդ մը որ շատ հանդերձ հագնելով շատ տաք կենալու սովորութիւն ըրեր է նէ, քիչ պաղէ մը կըմըսի: Մէկ մը կամաց քալելու սովորութիւն ըրեր է նէ քիչ մը վազելէն կըհոգնի: Մէկ մը որ խորհելու կամ դատելու սովորութիւն չէ ստացեր նէ, խորհելու ու դատելու շատ դժուարութիւն կըքաշէ: Մէկ մը իր յիշողութիւնը չէ վարժեր նէ, իր միտքը բան մը չիկրնար պահել:

Վարժութեան կերպն ալ անգամ մեզի կրներգործէ, մէկ մը խօրաթողներու քով գրելու սովորութիւն ստանայ նէ լուռ տեղ մը չիկրնար գրել: Մէկ մը իր ոտովները շուտ քալելու վարժ է նէ՝ կամաց կամաց քալելէն կըհոգնի: Մենք մեզի պզտիկուց մեր ծնած տեղին սորվեցընելնուս համար մեր ծնած տեղը դառնալ կուղեմք, ու շատ անգամ ասիկայ առողջանալու հարկաւոր միջոց մը կըլլայ մեզի:

Փափուկ մարդոց, ասանկ ալ պզտիկ տղոց սովորութիւններ տալ կամ ձգել տալը դիւրին է. բայց նայելու է որ անանկ սովորութիւններ տաս՝ որ իրենց ետ

քի գրտնըվելու վիճակին ու իրենց անձին յարմար ըլլայ, այսինքն՝ իրենց անկէ օգուտ ելլայ ու իրենց առողջութեանը չիղբայչի : Սե՛ծ մարդ մը իր սովորութեանէն ետ կեցընելը դժար է, ասիկայ աղոց համար թէպէտ դիւրին է, բայց նայելու է որ մէկէն ՚ի մէկ ընելու ետեւէ չըլլաս, ու բովհետեւ այս կերպիւս շատ անգամ վընաս կուգայ :

Նսոնք զուրցելէն ետքը նայիմք թէ մեր ո՞ր մասունքները վարժեմք պիտի, ու աւսոնց ինչ սովորութիւններ տամք պիտի :

Ստամոքսին վրայօք ուտելեաց ու ըմպելեաց գլխին մէջը զուրցեցինք, օդին՝ լուսին՝ ու ասոնց նման ուրիշ ներգործութեանց դիմանալու համար մեր մարմինը վարժելուն վրայ, բնակութեան մէջ ու հագովելուն ու ուրիշ գլուխներուն մէջ խօսեր եմք : Հետեւեալ յօդուածներուն մէջ անդամներուն ու զգայարաններուն վարժութեանը վրայ պիտի զուրցեմք, ուրիշ սովորութիւններ տալու վրայօք ալ ասկէց ետքի գլխին մէջը պիտի խօսիմք :

Հարժուժ :

Քաղերու ու շարժումքն ելու վրայ չի խօսած , պէտք է նախ կայներու ու նրա տերու վրայ զուրցեմք :

Ոտքի վրայ կայնիլը շատ կը հոգնեցընէ . մէկը վեց կամ եօթը ժամ քալէ նէ այնչափ չի հոգնիր , որչափ որ ժամ մը ոտքի վրայ կենայ նէ : Մայց մէկ ոտքի վրայ կայնիլը աւելի կը հոգնեցընէ : Օուճկ չոքելը նմանապէս շատ կը հոգնեցընէ . բայց ծուճկ չոքելով ոտվըներուն վրայ նստիլը այնչափ չի հոգնեցընէր : Հանգստանալու պինդ յարմար վիճակը ու հանգստութեան էն դիւրին կերպը նստիլն է . բայց նայելու է որ նստուկ ատենը ոտվըները կախ չըլլան , որովհետեւ աս կերպիւս ոտքին աւրեան չըջանը աղէկ չըլլար , ոտքը կուռեւնայ և այլն : Նմանապէս նայելու է որ նստած ատենը ոտքվըներուն վրայ ուժով մը չի կրթընալի , որովհետեւ այս կերպիւս ալ կէս մը ոտքի վրայ կեցածի պէս կըլլայ . բտեւ է որ աւելի կը հոգնեցընէ . վերջապէս նայելու է որ նստուկ մարդուն կրու նակը բանի մը կրթընած ըլլայ որ դէպ ՚ի ետին չի նալու համար ճիգընը ընելով ալ չի հոգնի : Ինչ բանի վրայ որ նրստըլի նէ

պէտք է որ փափուկ ու տաք բռնող բան չըլլայ, ինչպէս բուրդ կամ մետաքս և բամպակ, ասանկ բաներու վրայ երկար աւտեն նստիլը յետոյտքին վրայ վէրք (եարաներ) կամ խաղաւարտ (չիպաններ) կը հանէ և այլն:

Ատոր հակառակը շատ կարծր ու ծուռ ոււմուռ բաներու վրայ երկար աւտեն նստուկ կենալը ցաւ կըսպատճառէ. մանաւանդ նստող մարդը նիհար ու փափկամարմին ըլլայ նէ. ուստի նայելու է որ տղաք խլիբէ կամ մաղէ շինած աթոռներու վրայ նստին քան թէ ուրիշ կերպ շինված բաներու վրայ:

Պզտիկ տղաք շատ ոտքի վրայ չիպիտի կայնին, մանաւանդ մեծնալու վրայ եղած աւտեննին, որովհետեւ դեռ ոսկորնին փափուկ ըլլալուն կըծըռին, ստվրնին ծուռ կըլլայ, կամ կուղ (խամպուռ) կըլլան: Ամանապէս պէտք է որ պզտիկ տղաք գիր գրելու կամ կարդալու աւտեննին, նստած տեղերնին անանկ մը ըլլայ որ, ոչ ծունկերնուն վրայ, կամ առջեւօք ծռելնուն համար կուրծքերնին հողնի, և ոչ դէպ ՚ի վեր հասնելու աշխատելոյնին մէկ տեղերնին ծռի. շատ պզտիկուց Հատիք ջալել սորվող տղաք կուզ են եղեր ծռելու հարկադրելով. ասանկ ալ ուրուագրութեան (րէսիմ քաշելու) կամ գիր գրելու

համար իրենցմէ բարձր գրասեղաններու ( եազըխանէներու ) վրայ աշխատելովնին տձեւ են եղեր . ուստի կուզեմք որ տըղաք ծունկի վրայ նստուկ չաշխատին . հապա նստարանի ( իսկէմբի ) վրայ կենան ու նստարանին բարձրութիւնը անանկ ըլլայ որ սրունքներնուն ( պաճախներնուն ) , բարձրութեանը հաւասար գայ . ոչ անկէ բարձր և ոչ անկէ կարճ . ու առջեւնին գրասեղան մը ոչ շատ բարձր և ոչ շատ ցած . այս կերպիւս ոչ կրհոգնին , և ոչ ալ մէկ տեղերնին կրճըռի :

Կամք հիմայ շարժում բնելուն : Ասխաբալել : Քաղելը թէ որ շիտակ տեղի վրայ ըլլայ նէ՝ էն դիւրին շարժումն է , բայց ծուռումուռ տեղի վրայ , կամ գէսի դարմեր ըլլայ նէ կրհոգնեցրնէ . անոնք որ բոլոր ոտքերնուն վրայ կոխելով կը քալեն աւելի կրհոգնին քան թէ ոտքին ծայրին վրայ քալողները :

Յաթկելը աւելի ջիղերը կրբանեցրնէ , ու գրեթէ տղոց միայն կըյարմարի :

Վաղելը որ ցաթկելուն ու քալելուն մէջ տեղը կըսեպի , հիւանդ մարդոց մա նաւանդ կուրծքի հիւանդութիւն ունեցողներուն չիյարմարի :

Խաղալուն ամմէն կերպը տղոց կըյարմարի , որոնց որը շատ կրհոգնեցրնէ որը քիչ , անոնք որ շատ կրհոգնեցրնեն , բը-



նաւ չեն յարմարիր այն աղայը , որոնց սակորները ծուելու վրայ են . աս վերջիններուն էն յարմար շարժումը լողայն է :

Նաւակ նստելը սղտիկ ու զուարճակի շարժում մըն է , որուն մէջ միայն երկար ատեն նստիլը կը հոգնեցընէ :

Կառք ( արապա ) նստիլը թէ որ կախ ված ըլլայ նէ , այնչափ չի թօթօվէր , ուստի շատ ալ չի հոգնեցընէր . բայց չի կախված սայլերը , ինչպէս՝ կովի թալիսաները սաստիկ կը թօթօվեն ու կը հոգնեցընեն :

Չի հեծնալը չի հոգնեցընէր , ու սղտիկ շարժում մըն է՝ թէ որ կամայքալեցընես նէ . Մակն քալեցընես նէ քիչ մը աւելի շարժում կուտայ , բայց Վինի քալեցընելու չափ չի հոգնեցընէր . մարդ կայ որ բնաւ Վինի չի կրնար երթալ :

Սալընձախը ուրիշ կերպ շարժում մըն է , որուն գէշութիւնը մի միայն գլուխը սղտըտցընելն է , թէ որ ոտքդ գետինը սաստիկ չի դարնես նէ շատ չի թօթօվելուն համար օգտակար շարժում մը կը սեպիլի : Աւրիշ ասոնց պէս շատ կերպ շարժումներ կան , ինչպէս ծառի վրայ ելլալ և այլն , որոնց վրայ երկար չենք գրեր , որովհետեւ ասոնց հոգնեցընելը ու չի հոգնեցընելը ամմէն մարդ գիտէ ու կը հասկընայ :

Նստնք պարզօրէն անցնելէն ետքը նայ-



խմբ շարժման ընելու օգուտները , ու անկէ յառաջ եկած վնասները :

Նախ՝ որ մկանունքները շարժին նէ ատենէ մը ետքը կուժովնան , ու քանի մը անգամ մի և նոյն կերպիւ շարժելու սովորութիւն ստանալնուն , աւելի ճիշդ ու աւելի շուտ շարժել կը սորվին . և ասոր ապացոյցը ամմէն որ աչքովդ կը տեսնաս :

Թի քաշելը մէկ մեծ վարպետութիւն մը չէ . ու գրեթէ ամմէն մարդ ասոր կանոնները գիտէ . բայց թի չիքաշող մարդ մը , թի քաշել գիտցող մարդու մը հետ բաղդատէ , մէկուն կընայիս որ բազուկին մկանունքները ու ջիղերը հասարցեր ու ուժովցեր են , միւսը թէ որ բազուկները գործածելու արհեստի մը մէջ չէ նէ , կը տեսնաս որ իր ջիղերը տկար ու մկանունքները թուլ են . մէկը թին ձեռքը առածին պէս գիւրութեամբ մը նաւը ուղած տեղը կը տանի , ու քանի մը ժամ ասանկ շարունակ քաշէ ալ նէ չիհոգնիր . միւսը թէ և մէկալին չափ , երբեմն մէկալէն աւելի թի քաշելուն կերպն ալ գիտնայ , թի քաշելու սովորութիւն չունենալուն , սաստիկ դժարութիւն կը քաշէ թին ուղած տեղը տանելու , ու գիւրաւ մըն ալ կը հոգնի . գրեթէ իր բազկին ջիղերը չեն սորված իր հրամանը կատարելու , չեն սորված աս շարժմանը գիմանալու :

Շարժումը թէ որ չափազանց չըլլայնէ ինչպէս որ ըսի ջիղերը կուժովնան ու ճշդութեամբ գործելու սովորութիւն կըստանան . ասոր հակառակը թէ որ չափազանց ըլլայնէ ջիղերը զօրանալու տեղը կըտրկարանան , որուն հոգնիլ կըսեմք , բայց ջիղերը ասանկ հոգնիննէ , ատենէ մը ետքը բոլորովին անկար կըլլան , ալ ան ատենը ո՛չ ճշդութիւն կրնան ստանալ և ոչ կատարելութիւն շարժման :

Այրբեմն դեռ հոգնութիւնիս չառած՝ մեր ուժէն վեր ճիգն ընեմք նէ , սախառն մը պատճառ կըլլամք . ինչպէս ջիղերը կըփրթին , ու փոշտանկ կըլլամք . և ուրիշ մահաբեր հիւանդութեանց կըհանդիպիմք : Շարժումը միայն ջիղերուն վրայ ներգործութիւն չունի , հապա բոլոր ուրիշ մատենքներնուս վրայ ալ :

Այս շարժում ընող մարդուն ակորժակը աւելի բաց կըլլայ քան թէ անշարժնստողին , նայե բեռնակիրին և ուրիշ աշխատող մարդոց ակորժակը ինչպէս բաց է , ու ինչպէս ալ աղէկ կըմարտեն . ասոր հակառակը նայէ իր սենեակը նստուկ ինչ վան իրիկուն պառկող կամ գրող կամ կարդացողին ակորժակը կամ մարտելը որչափ կիսակատար է :

Աերակուր ուտելէն թէ առաջ ըլլայ թէ ետքը՝ շարժումը ակորժակնիս կըբա-

նայ ու կերածնիս ալ մարսել կուտայ , բայց պէտք է որ շարժումը չափազանց չըլլայ , որովհետեւ չափազանց ըլլայ նէ ախորժակը կրտրկարանայ կամ կերածնիս աղէկ չիկրնալով մարսել փորքշուկ կըլլամք ու կրտրկարանամք . գրեթէ ուժերնիս բուրրովին խարճելովնիս ալ մեզի ուժ չիմնար կերածնիս մարսելու :

Շնչառութիւնը շարժում բրած աւտեննիս կսաստկանայ , վազելու կամ ցաթկելու ատեննիս , ամմէնքնիս ալ կրտես նամք որ շունչերնիս կրկտրի . շունչերնիս կտրիլ ըսելը՝ շնչառութիւնը սաստկանալ ըսել է , բայց կամայ շարժում ընեմք ալ նէ աւելի արագ շունչ կառնեմք քան թէ նստուկ կենալով , անանկ որ շարժման ատենը երակնիս կրսկսի արագ արագ նետել , երեանիս կրկարմըրի . ըսել է որ , շարժումը թէ որ չափազանց չըլլայ նէ , արեան շրջանը կրդիւրանայ , ու մէկ վայրկեանի մէջ աւելի օդ շնչելովնիս աւելի կրզօրանամք :

Բայց շարժումը չափազանց ըլլայ նէ արեան շրջանը ու շնչառութիւնը չափե դուրս սաստկանալովնին մեր թոքերը ու սիրտը արեամք կըլենան , ուրկէ չարաչար հիւանդութիւններ ալ կրնան պատճառիլ :

Շարժում բրած ատեննիս ամմէն մարդ գիտէ որ կըտաքնամք , ու պաղ օդին ներ-

դործութիւնը քիչ մը աւելի կրդիմանամք :

Հարժում ընող մարդը շատ չի գիրնար, բայց գիրութիւնը ուժ չէ, ուստի աւսողութիւնն ալ չէ :

Անր կողմի ունեւոր մարդիկը սովորաբար գէր են, պատճառը սա է որ պէտք կը զածին չափ շարժում չեն ըներ. աս մօտերս քանի մը բժիշկ մէկուն գէրութիւնը անցունելու ելան, բայց Արտիին սրտմաճ գէր կրօնաւորը նիհարացընելու համար ինչ ձեւ դործածիւր է նէ, գրեթէ հոս ալ այդ կերպերու մօտ ձեւեր դործածելու ելան. ու կարծեմ պտուղ ալ քաղելցին ատկէ : Արտն որ նոյն բժիշկները գէր մարդոց թի քաշել ալ տան պիտի :

Հարժում ընող մարդուն քրտրնիլն ալ կրդիւրանայ, մորթը ու մարմնոյն բոլոր ուրիշ մասունքները շարժման միջնորդութեամբը իրենց դործողութիւնը ազէկ կրկատարեն : Ասով մարմինը թէպէտ չի գիրնար բայց կը մեծնայ, կուժովնայ, նայէ մեր ասիոյ Հայերը, որոնք պղտիկուց լեւները բաց տեղիանքը վաղելով, շարժում ընելով, աշխատելով մեծնալովին, այնչափ մեծցեր ու ուժովցեր են. մենք ալ անոնց երկրէն եմք, բայց առանց շարժում ընելու՝ մեր քաղքին աւրած օղերուն մեջ հանգիստ նսանլովնիս՝ պղտիկ ու տկար մնացեր եմք :

Հոս քաղաքիս մէջ ալ բազմատէ ունեւորի մը ու աղքատի մը տղաքը, մէկը գրեթէ ուտելու հաց և հագնելու լաթ չունի, մէկալը լաթերու մէջ ու ուտելիքի մէջ խեղդըլած է, բայց աղքատին աղան աւելի ուժով է՝ քան թէ ունեւորինը. պատճառը սա է որ մէկը ինչուկ իրիկուն բաց տեղիանքը կը քալէ կըխաղայ. միւսը տանը մէջ բանտարկեալ, լուսէ կարօտ կըկենայ ու գրեթէ արեւ տեսնալու ու քիչ մը սովըները քարերուն վրայ դնելու ու քանի մը քայլ առնելու համար, պէտք է որ իրեն ծնողքէն հրաման առնէ. երանի թէ ան հրամանն ալ երբեմն տային :

Նայիմք հիմայ շարժումը իմացականին վրայ ինչ ներգործութիւն ունի : Սովորաբար դիտեմք որ ան մարդիկները որ աշխատելու հետ են, անոնք դիւրագգաց չեն, ու խորհելու ալ դժարութիւն կը քաշեն. գրեթէ տունը նստուկ մարդիկները, առանձին կեցողները, աւելի կը դաւն, ու խորհելու աւելի դիւրութիւն ունին, բայց հոս պէտք է որ չափազանցը չափաւորէն զատեմք. անոնք որ մինչև իրիկուն ձեռքով սոքով աշխատելու կը պարապին, ՚ի հարկէ կը հոգնին. հոգնութիւնը միտքը կը կուրացնէ ու խորհելու խաչը դուս կը լայ, ինտոր որ մինչև իրիկուն գրելու՝ կարգալու՝ խորհելու՝ մտածուողու



եաեւէ ըլլող մարդիկը քիչ մը շարժումը ներլով կը հոգնին, անանկ ալ մինչեւ իրեկուն շարժումը ներլով հոգնող մարդիկը քիչ մը միտքը գործածելէն կը հոգնի: Ասիկայ աղէկ մը հասկըցընելու համար օրինակ մը տամ. մէկը նստուկ տեղը բազուկներովը միայն աշխատի, ու ոտքիքները բնաւ չի գործածէ նէ, ոտքիքները տկար կը մընան ու գրեթէ կը գուլնան (բասւանմիշ կըլլան). բայց ասոր հակառակ բազուկները կը հաստընան ու կուժովնան. ահա ասանկ ալ մէկ մարդ մը թէ որ սովորու թիւն ստանայ մի միայն իր ջիղերը գործածելու, ու միտքը չի գործածելու, կամ միտքը գործածելու ու ջիղերը չի գործածելու, մէկը կուժովնայ, մէկալը կը գուլնայ. չէ նէ բարեխառն մէկ շարժում մը մտքին հոգնութիւնը կառնէ, ու առաւել ևս խորհելու զօրութիւն կուտայ, մեր ոտքը հոգնելէն ետքը պէտք է որ հանգստանայ, որ նորէն քալելու կարողութի ունենայ. ահա ասանկ ալ միտքը:

Տեսանք որ շարժումը չէ թէ միայն մեր առողջութեանը պիտուական է հասպա մեծնալու ու ժովնալու համար ալ. տղաք որ մեծնալու ու ժովնալու կարօտութիւն ունին, նայէ որչափ անոնց հարկաւոր բան է, ու որչափ աղետալի բան կըլլայ տղոց համար որ իրենց ուժ առնելու ատենը



խաւար ու հոտած տեղ մը նստելով ան-  
ցընեն , հոն թուովն ու խանկրած մընան .  
որչափ աղետալի բան կըլլայ որ պզտիկուց  
հիւանդու թեանց ու աշխատանաց դէմ  
դնելու զօրութիւն ստանալու ատեննին  
պարսպ անցընեն :

Ասկէ զատ՝ տղոց շարժումը ընել տա-  
լուն , մէկ ու բիշ բարոյական պատճառ մըն  
ալ կայ , որովհետեւ շարժումը ընելովնին չէ  
թէ միայն ոսկորնին ջիղերնին ու ժ կառնէ ,  
չէ թէ միայն կերածնին աղէկ կըմարտեն  
ու առողջ կըլլան , հապա վազել ցաթկել  
լողալ և այլն կըսորովին :

Արդեօք կրնաս հիմակովնէ գիտնալ  
տղիդ ինչ վիճակի մէջ գտնուելիքը . կարե-  
լի է որ օր մը մէկուն ետեւէն վազելու  
կամ մէկուն ձեռքէն փախչելու չիպարտա-  
ւորի . թէ որ վազել չիգիտնայ նէ , իր թըշ-  
նամիին ձեռքը կիյնայ կամ իր թշնամին չի  
կրնար բռնել . խրամ ( հենտեկ ) մը կայ  
անցնելու , լեռ մը կայ ելլալու , գազա-  
նի մը հանդիպի ու ծառի մը վրայ ելլա-  
լու հարկադրի նէ քուկին կամաց կամաց  
քալել սորվող տղադ ինչ պիտի ընէ ,  
մըտմըտա՛ :

Այս բերի չէ մի օր մը դիպուածով ծռ  
վը կամ գետը իյնայ , թէ որ լողալ չիգիտ-  
նայ նէ ինչ պիտի ընէ : Անու թիւնը տը  
ղոց գրեթէ առջին կըդընէ ետքի դիտու-

նուն գալու գիպուածներուն սկզբնա-  
 ւորութիւնը . դուն բան մը չըսած ,  
 տղան ինքնիրեն կը վազէ , ծառի վրայ կել-  
 լայ , ձեռքը քար մը անցնի նէ կը նետէ ,  
 թող տուր նետէ , թող քար նետել սորվի ,  
 արդեօք կարելի չէ մի որ օր մը քար նե-  
 տելը իրեն պէտք ըլլայ : Մէկզմէկու հետ  
 կը ծեծկը վին , թող տուր որ ծեծկը վին .  
 ինչո՞ւ կարգիլես . բոլոր հին ազգերը , Րս-  
 պարտացիք , Հելլենացիք , Ադրիւրիացիք ,  
 ետքը Հռովմայեցիները՝ իրենց երիտա-  
 սարդներուն համար ըմբշամարտութեան  
 տեղեր ունէին , հոն երկու երիտասարդին  
 ծեծկը վիլը , մէկուն յաղթելը միւսին յաղ-  
 թը վիլը ազգային գործ մըն էր , գիտե՞ս առ-  
 կէ ինչ օգուտ կը քաղվի . նախ քաջ կըլլան  
 այս կերպիւս . երկրորդ յաղթող մը ներող  
 ու վեհանձն կըլլայ . մէկը օր մը կը յաղթէր  
 միւսը մէկ օր մը . մէկը ասօր պսակ մրցանաց  
 ու գովեստ կընդունէր , միւսը զըկը վե-  
 լով կը ջանար ուրիշ օրուան մը յաղթու-  
 թիւնը ձեռք բերելու . ասիկայ մէկ խրա-  
 խոյս մը , մէկ քաջալերութիւն մըն էր ա-  
 ռաքինութեան ու միանգամայն քաջու-  
 թեան , որն որ ազգին քաջալաւութիւնը ու  
 զօրութեանը պատճառ եղաւ շատ ժամա-  
 նակ . ինչուկ որ ուրիշ պատճառներ այս  
 սահմանադրութիւնը շփոթեցին ու խան-  
 գարելով աւրեցին :

Սարմինը վարժելը՝ մեծ օգուտ ունի տղոց . ու առջի գրածնուս վրայ ով որ մշտա մտայ նէ մեղի իրաւունք կուտայ : Աս չեմ ուզեր , սր տղայք չիկարդան չիգրեն ու ատեննին շարժում ընելով անցընեն , ըմբ շամարտ , ջրասուղակ ( տալղըճ ) կամ լաւ խաղաց ( ճամպաղ ) կամ երկրագործ ըլլան , բայց կուզեմ որ օրը քանի մը ժամ աս մարմնայ կրթութիւններուն հետ պարապին :

Տղաք այս կերպիւս պղտիկուց աշխատիլ սորվին նէ , մեծնան ալ նէ աշխատասէր կրլան , ու բարբերնին աղէկ կըլլայ : Քառաքալաներ և Փարբիկիտսներ երկրագործ էին : Արէսոս Աճդահակին արքունիքը եկաւ նէ , ամմէնն ալ իր վրայ զարմացան . Արեսոսին կրթութեանը մէջ աւելի աշխատիլ հոգնիլ և քիչ ուտել սորվիլ կար , քան թէ ուրիշ վերացեալ գիտութիւններ :

Աւրոպայի բոլոր դպրատունները տղոց համար շինած սանդուխքներ և ասոր նման գործիքներ կան , որոնց հետ տղաք խաղալու ժամանակնին ելլալով իյնալով , կըվարժին . կուզէի որ հոս ալ մեր տղաքը ասկէ քաղվելու օգուտէն ետ չիկենան :

Օնտղաց պարտք է որ ատկէ իրենց տղաքը չիգրկեն , թող տան որ խաղան , վազեն և այլն . բայց միշտ տղին բարոյական մասը չիմոռնալով : Արբեմն տղաքը գոռոզ ըլլանուն համար՝ իրենց հասակակից

( պօյտաշ ) աղքատ տղոց հետ խաղալ չեն ուզեր : Այն ալ որ՝ ինչպէս Ռուսօ կը պատմէ , վաղելու արժան չեն համարիր , ան ատենը ծնողաց պարտք կրլայ որ՝ վազել գիտցող տղայոց վարձ տալով կամ դանոնք գովելով , վազել , լողալ , սանդուղէ վեր ելլալ իջնալու ըստիպեն այն գոռող տղան . աս կերպիւս իրենց տղաքը չէ թէ միայն ողջ կրլան , հասկա պղտիկուց շարժման վտանգներուն հետ ընտելանալովնին ետքը պէտք ըլլայ նէ վստահու թեամբ կրընան իրենց անկէ օգուտ քաղել :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Վարժութիւն ձայնի և լեզուի :

Ասիկայ խօսել , բարձր ձայնով կարգալ , ատենաբանել՝ և երգելն է :

Չայնը շիհոգնելով վարժովի նէ կուժովնայ . հաց ուտելէն ետքը բարձր ձայնով կարգալը կերածնիս դիւրաւ կըմարսեցընէ : Աելսօս կուզէ որ դժար մարտողները հացէն ետքը բարձր ձայնով գիրք մը կարդան :

Արգելը ու բարձր ձայնով կարգալը ատենախօսելէն քիչ կըհոգնեցընէ . շատ ատեն ասկէ կոկորդի և թոքերու բորբոքումն ալ պատճառեր է : Բայց թէ որ

ձայնը բարձր չիհանես, ու միջակ կերպիւ  
ատենաբանես նէ այնչափ չիհոգնեցրներ :  
Երգելուն համար ըսի որ ատենաբանելէն  
քիչ կրհոգնեցրնէ . բայց թէ որ բարձրա-  
ձայն կամ շատ ցած երգես նէ , ան ատե-  
նին ալ սաստիկ կաշխատեցրնես ձայնին գոր-  
ծարանը . ուրիշ երբեմն բերնէն արիւն  
անգամ կուգայ :

Սովորաբար պէտք է որ ինչուք հոգ-  
նելու աստիճան չերթաս :

Տղոց համար չենք արգիլեր որ չերգեն  
կամ բարձր ձայնով չիկարդան . բայց կու-  
ղենք որ իրենց ձայնը չիհոգնեցրնեն . թէ  
որ միջակ կերպով իրենց ձայնը վարժեն  
նէ , ձայներնին կուժոյնայ . և կարգացած-  
նին ամիէն մարդ կրհասկընայ , որն որ օ-  
գուտ մը կըսեսովի : Բայց նայելու է որ  
տղաք իրենց ձայներնուն վրայ պարծենա-  
լով չիգոռողանան , ու իրենց ձայներնուն  
ուժ տալու ետեւէ ըլլալով ուրիշ ընե-  
լիքնին բողբոջին չիմոռնան :

Գանք հիմայ խօսելուն ու ատենաբա-  
նելուն : Ըսոնց մէջը երկու բան կան , մէյ  
մը բառերուն յարմարութիւնը ու շէն-  
քը , մէյմալ ձայնին եղանակը ու շարժ-  
մունքները , վերջապէս խօսելու ատեն ձար-  
տասանական ձեւեր կըգործածեմք մէյմը  
պարբերուն շէնքին մէջ , մէյմալ շարժմանց  
մէջ . Սուսօ կուզէ որ բնաւ տղին չիներեն

որ համողելու ձեւեր գործածէ, ինչպէս, կաղաչեմ որ տայք, տուր ըսելու տեղը. առ ներէն ետքը շնորհակալ ըլլալով թիւֆնանք ընել. ուղածը ձեռք բերելու համար ուրիշ միջոց մը գործածել և այլն. տղան կը նայի որ տուր ըսէ նէ չես խտար, բայց կաղաչեմ ըսէ նէ կուտաս. ուրեմն կաղաչեմ բառը կը գործածէ որ տաս. դուն հրամայաւ կան ձեւ գործածելուն համար չի պիտի տաս նէ՝ տղան իր կամքը ընելու համար ուրիշ ձեւ ալ գործածէ նէ, միշտ իր կամքը ընելու քեզի հարկադրելովը քեզի հրամայած պիտի ըլլայ. ուստի անանկ խել մը ձեւերուն խաբւելով տղին կամքին գերին մըլլար կրտէ :

Տղին կամքին գերին մըլլար, իր ձեւերուն մի խաբւիր. բայց մի արգելէր որ այն ձեւերը գործածէ. տղան պէտք է որ իր ուղածը տեղը տանելու համար համողելու ձեւերը գործածել գիտնայ. բայց թէ որ խաբել ուղէ նէ աչքդ չորս բայց, մի խաբւիր. որ մը ՚ի հարկէ վիճակի մը մէջ պիտի գըտնուի. պէտք է որ իր վիճակին յարմար բարեկրթութեան ձեւեր ըստանայ. ան քուկին ձեռքդ է, այն ձեւերուն ուղած ատենըդ հաւտալը ու չի հաւտալը :

Ճարտասանական ձեւերը բնական են. որչափ արգելես ալ նէ, տղան ՚ի հարկէ պիտի գործածէ. կիրքերուն ամմէնն ալ



իրենց ձայնը ու շարժմունքը ունին . ա-  
սիկայ դուն ալ շիտորվեցընես նէ , բնու-  
թիւնը կըսորվեցընէ . ուստի քեզի պարտք  
է որ տղին խօսելը այսինքն գործածած  
բառերը , շարադրութեան ձեւը յարմար  
կամ անյարմար շարժմունքը տեսնաս ու  
բարեկարգես :

Պէտք է որ մեծ զգուշութիւն ընես  
իրեն հետ կամ իրեն առջին խօսելու  
ատենըդ . մի բնաւ հայհոյեր , մի բնաւ  
գէշ խնդար , բնաւ խեղճալու խօսքը խըն-  
դալու կերպով մի զուրցեր . կիրքերուն  
լեզուն գործածելու ատենըդ նայէ որ բա-  
րեկրթութեան ձեւեր ու խօսքեր գոր-  
ծածես . ահա այս կերպիւս տղան քեզմէ  
օրինակ կառնէ իր լեզուն ու իր ձեւը կը  
շիտկէ , քաղաքավար լեզու ու ձև կունենայ :

### Յ Օ Դ Ո Ւ Ա Ճ Գ .

Վարժութիւն զգայարանաց :

Շ շ ա Ի Ի Ի : Կոյրերը աչք չունենալնուն  
չօշափման միջնորդութեամբը բըռնած  
բաներնուն ինչ եղածը կըհասկընան . ին-  
չո՞ւ մենք ալ ասոնց պէս մութ տեղը քա-  
լելու , ու քովի եղած բաներուն ինչ ե-  
ղածը՝ գիշերվան ատեն ճանչնալու կարո-  
ղութիւն չիպիտի ունենամք՝ կըսէ Ո՞ուսօ .

կոյրերուն պէս անկարելի է որ մութին մէջը քալելու կարողութիւն ունենամք, որովհետեւ անկարելի է որ մենք անոնց չափ աս զգայարանքը վարժեմք. մենք աչք ունենալնուս, մութի մէջ ալ մտնամք նէ, կոխած տեղերնիս ճանչնալու համար, ձեռք վրնիս ու ոտքերնիս գործածելու այնչափ չեմք նայիր, հապա միշտ կրնայիմք որ աչքով տեսնամք. ասոր պատճառը սա է որ տեսանելեաց զգայարանքը ուրիշ զգայարանքներէ աւելի մեղի ծառայելուն, գրսի իրերուն հետ հաղորդելու համար նախ աս զգայարանքը կը գործածեմք, թէ կարենայ, թէ չի կարենայ մեր ուզած ծառայութիւնը ընելու. աս սովորութենէն ուրիշ մեր զգայարանքները մտնալ մը կելլայ որոնք չի վարժուելով կոյրերուն ծառայածնուն չափ մեղի չեն կրնար ծառայել, ուստի մութի մէջ ալ անկարելի է որ անոնց պէս ճիշտ քալելու սովորութիւնը ստանամք: Բայց խել մը բաներ կան, ինչպէս Ռուսո ալ կը գուրցէ, որոնք շօշափմամք կրնամք մութի մէջ ճանչնալ. ինչպէս մութ տեղը քալելն իբէն, փողոցի մը ճօթ գաս նէ, քովի փողոցէն երեսիդ հով կը զարնէ, այս կերպիւս քովդ փողոց մը բլբլը կիմանաս և այլն:

Բայց ասկէ աւելի՝ կուզեմ աս զգայարանքը իրեն յատուկ եղած մասին մէջ

վարժրվելով սրանայ, տղան առանց նայելու միայն շօշափմամբ բանի մը ինչ ձեւ ինչ մեծութիւն, ինչ հեռաւորութիւն, ինչ որակութի ունեցածը ճանչնալ սորվի: Ինչպէս փայտէ շինած եռանկիւնի մը կուտամ տղին ձեռքը, կուզեմ որ առանց նայելու ինձի բռէ եռանկիւնի ըլլալը, անոր սրբափկութիւնը կամ մեծութիւնը, փայլուն ըլլալը կամ չըլլալը, ներկած կամ ան ներկ ըլլալը: Այլը կամ չոր փայտ մը կուտամ իրեն, կուզեմ որ անոր չորութիւնը կամ կըրութիւնը առանց նայելու գիտնայ, սորովը առանց նայելու միայն քայլերը համբելով մէկ տեղէն մէկալ տեղի հեռաւորութիւնը գտնայ. ինչպէս իր տունէն հեռու տեղ մը քար մը կըրքնեմ, կուզեմ որ սորովը չափելով մինչեւ հոն որչափ քայլ ըլլալը գտնայ:

Ասոնք սորվեցրնելու համար խել մը խաղեր կրնաս հնարել. որով տղին աս ըզգայարանքը կըկրթվի և ինքնալ կըբօսնու:

Տեսնելի: Մարդ կայ որ մէկ անգամ մը նայելով, բլուրի մը կամ ուրիշ շէնքի մը կամ լեռան մը բարձրութիւնը աղէկ ճշդութեամբ կըզուրցէ, շատ մարդ կայ որ մէկու մը մէկ անգամ մը նայի նէ, աչքին, բերնին, երեսին ինչ ձեւ ունեցածը, ինչ բան հասածը մէկէն կըտեսնայ ու կըզուրցէ, վերջապէս մարդ կայ որ դաշտի

մը որ տեղը ծառ բլլալը, քնչ ձեւ ունե-  
նալը, ուր տեղէն ջուր վաղելը, որ կողմը  
չխրբրած բլլալը, առանց աշխատանքի մէկ  
անգամ մը նայելով կրտեսնայ. բայց մարդ  
ալ կայ որ այն դաշտին մէջ մէկ անգամ  
աչքը չորս դին պտուղընելով, բան մըն ալ  
գրեթէ չիտեսնար, այսինքն միմիայն դաշ-  
տը կրտեսնայ, մէջի մէկ բանն ալ չիտես-  
նար. աս զուրյաճնէրէս ամէնն ալ կըհաս-  
կընան, որ վարժ բլլելով միայն աչքը աս զօ-  
րութիւնը կրնայ ստանալ. պատկերհանին  
առջին պատկեր մը դիր, դուն դեռ մե-  
ծութիւնը չիտեսած, անիկայ մեծութիւ-  
նը՝ բարձրութիւնը՝ մէջի պակասութիւն-  
ները կամ կատարելութիւնները, ներկե-  
րուն մէկզմէկու յարմարութիւնը կամ  
անյարմարութիւնը, փայլուն կամ անփայլ  
(տունուխ) բլլալը կրտեսնայ. ասանկ ճիշդ  
տեսնալուն պատճառը պատկերհանին  
պատկեր տեսնալու սովորութիւն ստանա-  
լուն է. բայց աս սովորութիւնը քնչպէս  
կրտեսնայ պատկերհանը, աչքը աս զօրու-  
թիւնը ստանալու համար քնչ աստիճան  
ներէ կանցնի: Վրա առջիգ պատկեր մը  
գնենն զննելու. ըսեմք թէ գոյները և այլն  
ճանչնալու ու պատկերին աղէկ կամ գէշ  
եղածը դատելու կարողութիւն ունիս,  
բայց մէկէն անոնց պակասութիւնները  
կամ կատարելութիւնները տեսնալու սո-

վորութիւն չունենալուդ պէտք է որ ժա-  
մանակ անցընես, ան ատենը ինչ կրնես :  
Պատկերին մէջի ներկը շինայած շրջանա-  
կին ( ջէրջիւլէին ) կրնայիս, շրջանակին շէն-  
քին՝ մեծութեանը ձեւին կրնայիս, անի-  
կայ տեսնալէդ ետքը, անոնց գաղափարը  
առնելէդ ետքը, կրսկսիս քաշվելուն նայիլ,  
անոր պակասութիւնները կամ կատարե-  
լութիւնները փնտռել, ասոնց ալ գաղա-  
փարները առնելէն ետքը, գոյնին կրնայիս,  
երանգներուն յարմարութեանը միտ կը-  
դնես, և վերջապէս պատկերհանին պէս  
ճանչնալու այս ճամբով կրհասնիս :

Ասոր պէս ալ երկրաչափ մը մէկ նայե-  
լով մը մէկ շէնքի մը լայնութիւնը կամ  
բարձրութիւնը քիչ տարբերութեամբ  
քեզի կրզուրցէ, դուն որ երկրաչափ չես՝  
ի՛նչ կրնես, շէնքին բարձրութիւնը գիտ-  
նալու համար կրսկսիս երկրաչափութեան  
կանոններովը շէնքին բարձրութիւնը չա-  
փել շուքին վրայ կամ գործիքով, կամ թէ  
միտքով բարձրութիւնը վրայ կանգունները  
կրստորացընես ու կրհասնիս քիչ շատ  
բարձրութիւնը գիտնալու . վերջապէս  
ճիշդ կերպիւ տեսնալու սովորութիւն ըս-  
տանալու համար, նախ իրերուն մասունք-  
ները կրգիտես, մասունքները գիտելու  
ու աղէկ մը տեսնալու սովորութիւն ըս-  
տալէն ետքը, բոլորը տեսնալու կարողու-

Թիւն կրնաս ստանալ :

Մէկը բան մը այս կերպիւս դիտելու ու տեսնալու սովորու թիւն ընէ նէ ան դամ մը, ալ անկէ ետքը ամմէն բան նոյն կերպովը դիտելու ետեւէ կրլայ, ու ասանկով ալ՝ ըստ կարելոյն ճիշդ տեսնալ կրսորվի :

Տեսել չեմ ուզեր որ տղան երկրաչափի չափ հեռաւորութիւնները, բարձրութիւնները, լայնութիւնները, մէկ նայելով չափել սորվի. դաստաւորի մը պէս մարդուն երեսին նայելով ինչ խորհուրդ ունեցածը իմանալ սորվի, պատկերհանի մը պէս քաշված բանի մը մանրամասն ու բակու թիւնները մէկ նայելով տեսնալ գիտնայ, իմ ըսածս աս չէ՝ ես միայն կուզեմ, որ տղան մէկ բանի մը նայի նէ իր պարագայները զննելէն ետքը, բոլորը մէկ տեղ դիտելու սովորութիւն ըստանայ. այս կերպիւս ուրիշին տեսածին չի հաւտար, ինքը իր աչքովը կրտեսնայ, քովի եղած բաները տեսնալ կրսորվի, ու տեսածը ազէկ կրտեսնայ : Վր ունենալիք ծանօթութիւնները տղան այս կերպիւս ձեռք անցրնէ նէ, նախ աս ծանօթութիւնները ճիշդ կրլան. երկրորդ՝ անկէ ետքը ստանալու ծանօթութիւններն ալ առջի ծանօթութիւններուն շատ անգամ հետեւութիւնը ըլլալուն, առջին



ներուն ճշգուծիւնը՝ ՚ի հարկէ ետքիննե-  
րուն ալ կանցնի : Աւստի նայելու է որ  
այս զգայարանքը ըսած կերպիւս վարժես :  
Ասոր վրայ շատ երկար պէտք էր որ գրէի ,  
բայց ամէն մարդ ընդհանուր զուրցած-  
ներէս՝ առ զգայարանքին մասին ուրիշ բ-  
նելիքները կրնայ հետեւցընել :

Լեւի : Տեսանելեաց վրայ զուրցածս  
հոս ալ կրկնեմ պիտի քիչ զանազանու-  
թեամբ . այլ է սուր ականջ ունենալ , այլ  
է աղէկ լսել . կան որ սուր ականջով կը  
ծնին ու աղէկ չեն լսեր . աղէկ լսելը ՚ի  
ծնէ չէ , միշտ վարժըմելով է . աղէկ լսելուն  
պատճառը միշտ սովորութիւնն է :

Ինչպէս որ տեսնալու համար նայել  
պէտք է , այսինքն տեսածիդ միտ դնել  
պէտք է , ասանկ ալ լսածդ աղէկ հասկը-  
նալու համար այսինքն աղէկ լսելու հա-  
մար մտիկ ընել պէտք է . ինտոր որ պատ-  
կերհանը գոյները մէկզմէկու հետ բաղ-  
դատելով , անոնք զննել ու տեսնալ կը-  
սորովի , ասանկ ալ նուագարան չալոզը , ե-  
զանակները մէկզմէկէ խտրել , ու անոնց  
մէկզմէկու յարմարութիւնը կամ անյար-  
մարութիւնը զննել ու լսել գիտէ . բայց  
նայէ ինչպէս նուագարան չալոզը այս սո-  
վորութիւնը կըստանայ : Այս ձայնին մէկ  
եզանակը լսել կըսորովի . ետքը երկրորդը ,  
երրորդը և այլն , էն վերջը անոնք մէկ-

տեղերով անոնց մէկզմէկու յարմարու-  
թիւնը կամ անյարմարութիւնը լսելու  
կըհասնի : Նուազարան ջալոզը նուազի մը  
աղէկ կամ գէշ եղածը մէկէն կըզուրցէ .  
բայց աս սովորութիւնը ստանալու համար,  
առաջ այն նուազին մասունքները մէկիկ  
մէկիկ զատելու ու լսելու սովորութիւն  
ստանալու է որ ետքը նուազը աղէկ լըսե-  
լու կարող ըլլայ :

Մարդ կայ որ ձայն մը եղածին պէս,  
ինչ բանի ձայն եղածը կըզուրցէ . քանի  
մը ձայն մէկտեղին նէ, այս ինչ մարդոց  
կամ այն ինչ անասուններուն ձայնը եղա-  
ծը կըհասկընայ . աս բանս միմիայն սովո-  
րութեամբ կըլլայ :

Աս ըսել չեմ ուզեր որ տղան նուազա-  
բանին եղանակները ճանչնալ՝ և անասնոց  
ձայներուն տարբերութիւնները լսել սոր-  
վի, հապա աղէկ լսել սորվի . լրածին միտ  
դներու սովորութիւն ստանայ . այս կեր-  
պիւս ահանջը ձայն մը լսէ նէ, ճիշդ կեր-  
պիւս, ինչ կերպ ու որով կամ ինչ բանի,  
անասնոց, մարդու կամ մետաղի կամ ու-  
րիշ բանի ձայն եղածը խտրել գիտէ,  
այդ ձայնը որ կողմէն կուգայ կոր, հեռու-  
էն թէ մօտէն, կիմանայ . ու աս զգայարան-  
քին սխալանացը չիստաբովի . ասով չէ թէ  
միայն դիպուածի մը մէջ գըտնելի նէ՝ իր  
ահանջէն օգուտ կընայ քաղել իրեն, հա-

պա իր ետքի ուսանելու ու ծանօթանալու բաներուն վրայօք ականջը ճիշդ գործածել գիտնալովը , իր լրսած բաները աղէկ լսելու գիւրուի մը կունենայ : Աստի կուզեմք որ տղան ձայն մը լսէ նէ՛ զուրցէ որ կողմէն եկածը . անոր հեռաւորութիւնը , ինչ բանի ձայն եղածը . նայի որ ձայնի մը եղանակները ճանչնայ : Չեռքը բանի մը կամ մետաղի մը վրայ զարնէ նէ լեցուն կամ պարսպ եղածը ճանչնալու թող ականջը վարժէ :

Հարսէլի\* ճաշկիլի\* : Բոնք առաջին մասին մէջ որ մարդ կայ քանի մը կերպ գինի մէկտեղ խառնած խմէ նէ՛ համէն ինչ ինչ գինի եղածը կը հասկընայ . մենք չենք ուզեր որ տղան աս որկրամոլութեան ու գինովութեան բարկութիւնը ստանայ . բայց հոտ մը առնէ նէ , խեղոյն հասկընայ ինչ բանի հոտ եղածը , ուրկէ՞ գալը , հեռուէն թէ մօտէն . քանի մը հոտ մէկտեղիննէ , ամէն մէկ բանին հոտը մէջէն զուտեւ գիտնայ . բարեկամի մը տուն գեղացի աղջիկ մը կար կրակէն շատ կրփխնար . երբոր տանը մէջ մէկ հոտ մը ելար , խեղոյն կելար որ կողմէ եկածը փնտրուելու . ասիկայ ատենէ մը ետքը անանկ հոտոտելեաց սրութիւն մը ստացաւ որ երբոր հոտ մը ելար նէ , ինչ բանի հոտ եղածը , ու ուրկէ եկածը մէկէն ու ճիշդ

կրգիտնար . շատ անգամ հոն գտնելեր  
եմ ու խանձի հոտ առնելով գնա՛ նայէ  
ուրիկէ է ըսեր եմ . — Այս հոտը քեզմէ ա  
ռաջ առի , դուրս գացի նայեցայ որ խոհա  
բանէն է . — Գնա՛ վար աղէկ նայէ զուրցեր  
եմ , վեր ելեր ըսեր է որ չէ խարվեր . ասի  
կայ բանի մը անգամ սրտահեցաւ ու բնա  
անգամ մը աս աղջրկանը խարվելը չիտե  
սայ : Ամէն մարդ կը հասկընայ թէ հոտու  
տելեաց սրութիւնը ինչ բանի մէջ մար  
դուս կընայ ծառայել . թոյն մը ճանչնա  
լու համար շատ անգամ կը հոտովըտամք .  
Թունաւոր բանէ մը հեռանալու համար  
չօգտէր մի որ հոտէն թունաւոր եղածը  
հասկընամք . կերած բաներնուս հոտած  
կամ չի հոտած ըլլալը հոտէն հասկընալը  
օգուտ չե՞ս սեպեր :

Ասանկ ալ ճաշակելիքը : Թէ որ վար  
ժեմք նէ , ասիկայ մեղի օգուտ կընայ ը  
նել , չէ՛ թէ որ կրամոյներուն կերպը սը  
րացընելով՝ հասար կերածնիս ինչ բան ,  
և գէշ կամ աղէկ եղածը ճանչնալու  
համար . ասոր վրայ առջի մասին մէջն  
ալ զուրցեցի : Շատ բան կայ որ թէպէտ  
չենք ուտէր , բայց ճանչնալու համար  
պէտք է որ համին նայիմք . ըսել է որ լե  
զին անուշէն , թթուն աղիէն զատելու մեր  
ճաշակելիքը սորվեցընելու է . ուստի կու  
ղեմ որ տղաք հոտերը ու համերը ճանչ

նալու սովորութիւն ըստանան իրենց ճաշակելիքը ու հոտոտելիքը աս մասին վարձելով :

Օգտայարանքները՝ աս կերպիւս ճիշդ զգալու սովորութիւն ստանան նէ, տղան՝ ալ ճամբան մտած կըսեալի Վի՞րջ մարդ ըլլալու . մարդս խելքի կատարելութիւն ունենալու, ու դրսի իրերուն վրայ, ներքին իրերուն վրայ անգամ, ճիշդ խորհելու համար, պէտք է որ տեսած՝ շօշափած՝ լսած ու հոտոտած բանը աղէկ զըննել ու աղէկ ճանչնալ գիտնայ :

Աս վարժութիւն մէջ չէ թէ միայն զգայարանքները կըսորին ու ճիշդ զգալ կըսորին, հասա մասնաւորապէս ուղեղը ճիշդ տեղեկութիւններ ստանալու կըսկըսի. ու քննելէն, զննելէն ետքը իրեն եկած գաղափարները ընդունելու սովորութիւն մը կըստանայ, որն որ մարդկացին կատարելութեան մէկ միջոցը կրնայ ըլլալ. ուրեմն աս գործին որչափ հարկաւոր բան եղածը ամէն մարդ ասկէ կրնայ հետեւընել :

Իմացական մարդուն զարգացմանը վըրայ մանրամասնաբար խօսելու սկըսելէն առաջ, հարկ է որ նախ հոգւոյն վրայ խօսիմք. որովհետեւ առանց հոգւոյ մարդս՝ իր գործարաններուն գերազանցութեանը նայելով անասնոց պինտ գերազանցը կարելի էր որ սեպվեր, բայց մարդ սեպվելու համար պէտք էր որ հոգի ունենար. ուստի զինքը աղէկ ճանչնալու ու իր զարգացմանը վրայ խօսելու համար, պէտք է որ առաջ չէ թէ միայն իր մարմնոյն որակութիւնները փնտրուեմք, հապա նաև հոգւոյն յատկութեանցը խելք հասցընելու ջանամք. փնտրուեմք նայիմք թէ ինչ կապակցութիւն կայ աննիւթ հոգւոյն ու նիւթաւոր մարմնոյն մէջ տեղը :

Մարդս՝ արտաքին իրերը զննելու ելլայ նէ, իր խելքին յարմար դրութիւն մը ձեռք առնելով դրսի ամմէն բաները աղէկ գէշ կըմեկնէ, ու զանոնք գիտցածի պէս կըհամարէ. և իր ձեռք բերած այս պղտիկ ծանօթութիւնները տեսնալով, շատ անգամ իր խելքին վրայ ալ կըպարծենայ. հոս իր խելքին տկարութիւնը չի կրնար շուտ մը իմանալ. որովհետեւ իրե-



բուն մէկզմէկու հետ իր կարծեացը նա  
յելով ունենալու համեմատու թեանց ու  
կապակցու թեանց ճիշտ չըլլալը պէտք է որ  
փորձը գայ իմացընէ . ուրեմն մինչեւ որ  
փորձելու կամք կամ սիրտ ունենայ , ինքը  
զինքը խելացի , իր խելքը ամէն բանի  
հասնող կրնայ կարծեր : Բայց մարդս ար-  
տաքին իրերը թողելով , գայ ինքըզինքը  
զննէ նէ , կիմանայ այն ատենը որչափ իր  
խելքը կարճ եղածը . որչափ քիչ բանի  
խելք հասցընելու կարողութիւն ունե-  
ցածը : Հոս իր գատման ճիշդ ըլլալը կամ  
չըլլալը իմացընող մէկ ներքին զգացողու-  
թիւն մը ունի որ դժար կրկուրնայ ու քիչ  
կրխարէ և կրխարվի : Բայց գիտնալու ,  
իմանալու կարողութի չունենալնիս գիտ-  
նալն ալ՝ ուրիշ մէկ գիտնալ մըն է որ՝  
մեզի աւելի կըպահպանէ սխալէն քան թէ  
ծուռ կարծիքներ յօրինելով անոնց հա-  
ւատալը :

Հիմա մենք մեր ներքին գոյութիւնը ,  
( որով մէկ մարդ մը իրեն համար կրնայ  
Լ՝ բառը բանեցընել ) երբ որ զննեմք նէ ,  
կըզգամք որ մեր ներսը անանկ էակ մը  
կայ աննիւթ , կամ ոգեղէն որ մեր գերա-  
զանցութեանը պատճառն է :

Բայց այս էակը ինչ ձեւ ունի , ինչ  
տարածութիւն , ինչ երկայնութիւն , և  
այլն , ասիկայ գիտնալու կարողութիւն

չունենալնիս ալ մեր ներսէն կրողամք :  
 Արովհետեւ գիտեմք որ հոգիին գործը՝  
 առանց որու չիկրնար ըլլալ . և որպէս թէ  
 անոր էութիւնը՝ խորհիլն է : Գիտեմք որ  
 խորհիլը նիւթոյն յատկութիւնը չէ : Ինչ  
 բանի վրայ ձեւ և տարածութիւն և եր-  
 կայնութիւն և այլն ըլլայ նէ՝ անիկայ նիւթ  
 է գիտեմք : Աւստի աննիւթ բանը այս  
 յատկութիւններս ալ չիկրնար ունենալ :  
 Իայց իրեն յատուկ անանկ բան մը ու-  
 նի մի՞ որ ճիշտ նշանակութեամբ կամ  
 այլաբանութեամբ այդ անուներուն մէ-  
 կը առնելու յարմարութիւն ունենայ .  
 ասիկայ չեմք կրնար գիտնալ : Ալ թէ որ  
 հոգւոյն անունը հոգի գրեթէ եմք նէ , ա-  
 մէն մարդ կըհասկընայ որ ասիկայ բառ  
 մըն է , ու մեղի ուրիշ բան չիհասկըցը-  
 ներ բայց միայն թէ հոգին նիւթ չէ .  
 բայց թէ որ նիւթ չէ նէ , ինչ է . ահա՛  
 անիկայ մեղի չիգիտցըներ : Աւրեմն հոգի  
 բառով կըհասկընամք միայն որ մեր գիտ-  
 ցած՝ տեսած՝ լսած՝ ու շօշափած բանե-  
 րուն նման բան չէ , ուրիշ բան է : Իայց  
 ինչ է . ատոր պարտասխան չունիմք : Թէ  
 որ հոգւոյն ինչ ըլլալը չեմք կրնար գիտ-  
 նալ նէ , միւս կողմէ ալ հոգի մը ըլլալը  
 այսինքն հոգի բառը մտացածին բառ մը  
 չըլլալը ճշդիւ կրնամք ստուգել :

Մենէ գուրս եղած բաներուն ծանօ-

Թանալու համար զգայարանքնիս կրգոր-  
 ծածեմք . առանց ասոնց միջնորդութեա-  
 նը , Սէն , չեղած կամ մե՛նէ դուրս եղած  
 բաներուն վրայ անկատար գաղափար մը  
 անգամ չեմք կրնար ունենալ . ըսել է որ  
 արտաքին իրերը գիտնալու ու անոնց հետ  
 հաղորդակցելու համար մեզի արտաքին  
 զգայարանքներ , միջոցներ պէտք են : Ա-  
 սանկ ալ մեր ներքին էակը , այսինքն հո-  
 գին գիտնալու համար , արտաքին զգայա-  
 րանքներուն պէս , քանի մը ներքին զգա-  
 յարանքներ կամ զգացողութիւններ ու-  
 նիմք որ թէպէտ արտաքիններուն նման  
 ճշգրութեամբ չեն լուծվիր կամ չեն քրն-  
 նրվիր , բայց ասոր համար ալ անոնց գո-  
 յութիւնը չեմք կրնար ժխտել որ մէկ  
 անհրաժեշտ կերպով մը , այն մեր հոգի  
 ըսած աննիւթ էակին էութիւնը մեզի  
 կիմացունեն :

Ինտոր որ ձայն մը ըսեմք նէ ձայն մը  
 հանող կայ կըսեմք , անանկ ալ աս ներքին  
 զգացողութիւները տեսնելով , մեր մէջը ան-  
 նիւթ էակ մը ըլլալը ատկէ կըհետեւցը-  
 նեմք : Աս ըսած զգացողութիւնիս նախ խեղը  
 կամ ի՛նչ ըսած լոյսն է որ ճշմարտն ու  
 արդարը մեզի կըբացունէ . երկրորդ Վիթալ-  
 յոսիւնն է , որ մեզի դէպ ՚ի արդարը կա-  
 սաջնորդէ ու անիրաւէն ետ կըդարձընէ .  
 երրորդ՝ Անհոնին Գաղափարն է որ մեզ բո-

լոր նիւթաւոր ու սահմանաւոր բաներէն զատելով մեզի ուրիշ նոր ու անսահման աշխարհք մը կրցրցունէ : Չորրորդ՝ Բոյսիան կաննի ին Գաւաթաւոր որ մեզի պատժոց և վարձուց մէկ օրէնք մը մէկ արդարութիւն մը ըլլալը կրցայտնէ . հինգերորդ՝ Անգիւղիի ին Գաւաթաւոր որ մեզի ու մեր ունեցած միջոցներուն բոլորը մէկէն մէկ գերագոյն կատարելութեան մը կրճկտեցընէ , որուն նմանը տեսած չեմք այս աշխարհիս մէջ . բայց միայն մտքով անկատար կերպով մը կերեւակայեմք . ու ասիկայ պատճառ կրլայ որ մեր իղձերը իրենց բնական սահմանէն կելլեն ու մեր բոլոր յոյսը , բոլոր սէրը գէպ ՚ի անծանօթ բայց մեր իղձերուն պէս անսահման աշխարհքի մը կրգարձընեմք որ՝ հոն այն երեւակայեալ գերագոյն կատարելութիւնը և այն ամենագեղեցիկը այսինքն Աստուածը գտնեմք :

Աս զգացողութիւները աշխարհքիս վերայ , նիւթական իրերուն վրայ կեդրոն մը չունենալուն , չէ թէ միայն կիմանամք որ աս զգացողութեանց պատճառը մարմինը չէ , և թէ ուրիշ էակ մը կայ . հասրա աս կերպիւս ստուգած ալ կրլամք որ այն մեր ներսի դին բնակող էակը աննիւթ է , յաւիտենական է , անմահ է ու իր փրնաւրդածն ալ ամենակատարն է : Մեզի ալ ու-

րիչ բան գիտնալ պէտքը չէ :

Ինչպէս որ ամէն մարդ կը հասկընայ , մարդուն գերազանցութեանը պատճառը իր հոգին է , չէ թէ մտքին գործողութիւնները : Բայց հոգին աննիւթ էակ մը ըլլալովը աւելնալիք կամ պակսելիք չունի , ուստի կրթութիւնը հոգւոյն վրայօք ուղղակի ընելիք մը չունի : Բայց հոգին իր նպատակին հասցընելու համար Արարիչը իրեն խելմը գործողութիւններ տուեր է . ուստի աս գործողութիւնները զարգացընելն ու հոգին իր նպատակին հասցընելու չափ անոնց կարողութիւն տալուն կրթութիւն ըսինք ներածութեան մէջ :

Անհուն ստեղծուածոց մէջ մարդը միայն կայ որ ազատ կամք ունի . և այս պատճառաւս իրեն ձգված է Աստուծոյ հետեւելն՝ ու հետեւել չուզելով իր օրինացը դէմ գալը :

Ուստի մարդս՝ անսխալ և ուղղակի իր նպատակին հասնելու համար պէտք է որ ինքը իրեն կարգ մը կանոն մը յօրինէ , անասունները իրենց կանոնը իրենց հետը կրքերեն , այն է բնական ազդումը . բայց մարդ՝ որովհետեւ ազատ է , և ըստ որում իր իղձերը չափ և իր կարողութիւնները կանոն չունին , պէտք է ուրեմն որ ինքը իրեն անոնց չափ մը կանոն մը դնէ , առանց ասոր ոչ կրնայ

ապրիլ՝ առողջութիւն ունենալ և ոչ ներքին մարդը խաղաղութիւն և յառաջագիմութիւն : Աւր տեղ որ մարդ կայ , 'ի հարկէ օրէնք ալ կայ . վայրենիները անգամ իրենք իրենց օրէնք ունին :

Մարդուս համար երկու կերպ օրէնք կան . մէյ մը մարմնոյն վերաբերեալ օրէնքները , մէյմըն ալ հոգւոյն . մարմնաւոր օրէնքները գիտնալու համար , մարդս՝ ուրիշ ընելիք մը չունի բայց աշխարհքս զննել , հոգեւոր օրէնքներն ալ գիտնալու համար հոգին զննել :

Հոգին մեզի կըգիտցնէ որ մարդուս նպատակը Աստուած է . դարձուր մարդ իր նպատակէն , նայէ ինչ կրղայ , սուտն ու սխալը չորս դին կըստտէ , փիլիսոփայն իրեն մեծութիւնը փնտրուեմ բսելն իբէն կուգայ ինքրզինքը անասուններուն կարգը կըդընէ . և երբեմն անոնցմէ ալ վար կինջնայ . աշխարհակալը թէպէտ յաղթութիւններէ ու մեծութեան փառքերէն փառաւորեալ , բայց ամենայն ինչ ընդունայն է կըգըրէ : Մարդ՝ իր նպատակը մտնայ նէ , 'ի հարկէ անկարգութեան մէջ իյնալով իր կիրքերուն ծառայն կրղայ , իր մարդկութիւնը գրեթէ կըվերնայ , անասուն կըդառնայ , որ տեսնողները անգամ կըզրզուին :

Գանք հիմա իր նպատակը ճանչցողի



մը . առաքինի մը նայէ ինչպէս խաղաղութիւն հոգւոյ ունի , նայէ ինչպէս Սոկրատ մը իր ետին շինացելով կրմեռնի :

Բսել է որ Մտուածը իրեն նպատակ ճանչնալը հոգւոյն առաջին օրէնքն է : Սարգս զՄտուած ճանչնալու համար գիտուն ըլլալ պէտքը չէ . ո՛վ կրլայ ըլլայ , աչքը չորս դին կամ իր վրան պտըտցընելով , ամէն բանի մէջ կարգ մը կանոն մը կը տեսնայ . աս կարգին , աս կանոնին պատճառ մը ըլլալը կրողայ . իրեն պատահած բաներուն զինքը գոհ չընելը տեսնալով , զինքը գոհ ընելու բաւական էակ մը ըլլալուն ալ ՚ի հարկէ կրհաւտայ : Իրեն պատահած բաներուն մէջ առաքինութեան փոխարէն շատ անգամ աղէտք ու թշուառութիւններ կրելով , միւս կողմէ ալ անիրաւութիւնը անպատիժ և փառքի հասած տեսնալով , մէկ վարձատու մը կայ որ իր թշուառութիւնները վարձատրէ ու իր առաքինութիւնները պատկէ տէյի կրհաւտայ . աս բարերար էակը միանգամայն կրսիրէ և կրպաշտէ թէ ներսէն և թէ դրսէն :

Մս ներքին զգացողութիւնը ամէն մարդու քով կայ . և այս հաւասարութիւնն ալ մէկ կապ մը կրլայ մարդոց մէջ . որով մէկ կրզմէկու կրնկերանան :

Սարգս՝ զՄտուած իրեն նպատակ

բռնելովը Մատուծոյ հետ կրկասովի ու իրեն ամենամեծուէր հաղորդակից կրլայ . մարդոց հետ կապվելովն ալ , իր բնական տկարութիւնը կրվերնայ միտքը կրզարգանայ ու կրբացվի . Մատուծոյ կարգերն ու կանոնները իմանալու կարողութիւնը կաւելնայ . իր մարմինը առանց փորձի վրտանգներու մէջ չիյնար . իր միջոցները կաւելցրնէ . իր խորճիթը տուն կրնէ , տունը գիւղ . և գիւղը քաղաք . իր ընտանիքը կրմեծնայ , ընտանիքը ցեղ կրլայ , ասիկայ ժողովուրդ , ժողովուրդը ազգ . աս կերպիւս ալ իր գործունէութիւնը կարողութիւն կրստանայ . իր կարիքները կաւելնան ու միանգամայն կատարվելու գիւրութիւն կրստանան :

Բայց ուր ընկերանալ կայ՝ ՚ի հարկէ ընկերը սիրել ալ պիտի ըլլայ , ուստի ընկերանալէն անմիջապէս յառաջ կուգայ ընկերական սէրը , այսինքն հայրը մայրը իրենց տղաքը սիրելը , տղան իր հայրը մայրը , եղբայրը իր եղբայրը , բարեկամը իր բարեկամը սիրելը . աս սէրը երթալով կրտարածի ժողովրդեան մը , ազգի մը ուրկէ ազգասիրութիւն առաջ կուգայ . վերջապէս աս սէրը կրտարածի բոլոր ազգի մարդկան ուրկէ կըհետեւի մարդասիրութիւնը :

Բայց ընկերանալուն հետ ընկերներուն մէկզմէկու ունեցած պարտքերը կան :

Հայրը մայրը տղին, տղան հօրը մօրը, եղբայրը եղբօրը. այս պարտքերը կըտարածին տան մը, դերդաստանի մը, ժողովրդեան մը, ազգի մը, վերջապէս բոլոր ազգի մարդկան ուրկէ ազգային և մարդկային պարտքերը կըծագին: Աս պարտքերուն կատարվելուն համար ընկերութեան անդամները ՚ի հարկէ դաշինք ըրած կըսեալին մէջընին. ուրկէ կըծագին ազգային և մարդկային օրէնքները և արդարութիւնը:

Բայց մարդուս ներսի գին ըլլող այն էակը որ միշտ անհունը, ամենաճշմարիտը, ամենարդարը և ամենագեղեցիկը կըխընդորուէ, չիկրնար մարդուս շինած այսինքն չափված ու սահմանված օրէնքներով շատանալ. ուստի իրեն մէկն ալ պարտք չիդրած իբէն՝ ինքը արդարութեան և ճշմարտութե համար իր կեանքը կըծախէ. թէև իր շահին ալ դէմ ըլլայ, արդարին և ճշմարիտին կըհընազանդի: Ասիկայ հոգւոյն մէկ ազնուանալն է. մէկ բարձրանալն է որ մարդուս Աստուծոյ կըմօտեցընէ. առանց այս ազնուութեան, անկարելի է որ մարդուս առաքինի ըլլայ. և ընկերութի մը, ազգ մը օրինաւոր յառաջադիմութիւն ստանայ: Այս ազնուութիւնս ժողովրդեան մը, ազգի մը տարածելով, մարդկային օրէնքները կըկատարելագործին. առնոնց մէջէն անիրաւը կամաց կամաց կը-

ջընջըլի ու կրվերջանայ, գերիներուն շող-  
թայն կրկնարի և մարդ ալ իր երջանկու-  
թիւնը ձեռք կրբերէ :

Մարդուս մարմնաւոր երջանկութիւնը  
աշխատանքը վայլելն է . հոգեւոր երջան-  
կութիւնն ալ Աստուծոյ նմանելն է . այս-  
ինքն արդարը , ճշմարիտը և գեղեցիկը ,  
մարդս՝ իր ներսի գիէն զգայն է : Այս  
զգայը հոգւոյ այն խաղաղութիւնն է որ  
բարի գործ մը ընելէն ետքը կիմանամք  
մեր ներսը . այն ատենվան մեր հոգւոյն  
խնդումը մեզի կրգուշակէ յաւիտենական  
խնդում մը յաւիտենական աշխարհքի  
մէջ որուն ոչ կրնամք խելք հասցընել և  
ոչ անդամ իմանալ :

Տեսանք որ հոգեւոր օրէնքները թե-  
պէտ շատ են բայց մէկ հատիկ աղբիւր  
ունին . այն է՝ մարդուս նպատակը Աստ-  
ուած ըլլալը :

Ինչպէս մտաւոր և բարոյական զար-  
գացումը , անանկ ալ մարմնաւոր զարգա-  
ցումը այս օրէնքէն դուրս չէ . թէպէտ  
մարդ՝ իր հոգւովն է որ Աստուծոյ պիտի  
նմանի . բայց մարմինն ալ որովհետեւ իբր  
գործիք հոգւոյն ըլլալ պէտք է . ուրեմն  
մարմնոյն վրայ հոգ չիտանելը՝ հոգւոյն իր  
նպատակին հասնելուն արգելք ըլլալ ը-  
սել է : Թէ որ մարդկային ընկերութիւնը  
մարդուս բնութեանը մէջ կայ նէ , ՚ի հար-

կէ ընկերութեան մէջ մեր ունենալու վիճակին վրայօք ջանքեր ընելը մեր նպատակէն դուրս չէ . թէ որ մարմնոյն զարգանալը մեզի պիտոյ բան մը չէր նէ , ինչո՞ւ բնութիւնը իր զարգացմանը ջանքեր կընէ . թէ որ այս աշխարհքիս բաները մըտածելը մեր նպատակին դէմ է նէ՝ ինչո՞ւ ընկերական վիճակ կայ : Աստիճակը առանց զարգանալու մնայ նէ՝ հոգւոյն գործունէութիւնը ո՞ւր կերթայ . ո՞ւր արդարը անիրաւին ձեռքէն ազատելու կարողութիւնը . ո՞ւր ճշմարիտը երեւան հանելու համար ընելու ջանքերը , և ո՞ւր գեղեցիկը գանալու համար հնարած միջոցները :

Վերջապէս մեզի պարտք է մեր ամէն կերպ զարգացմանը ջանք ընել , բայց միշտ մեր նպատակը աչքերնուս առջեւէն չի վերցընելով :

Նսկէ ետքի զուրցելիքներս աղէկ իմաց վելու համար , այս պզտիկ զարտուղութիւնք ըրինք : Հիմայ գանք մտաւոր մարդուն զարգացմանը . նայիմք թէ ինչպէս բնութիւնը՝ գործարանաւոր մարդը ձեւի խօթելէն ետքը , մտաւոր մասը կըզարգայրնէ . երբ կիմանայ , երբ կըդատէ և երբ մտքին ուրիշ կարողութիւնները երեւան կելլեն ու ասոր համար բնութիւնը ինչ ընթացքով կըբալէ :

Վեռ գործարանաւոր մարդը ձեւի

չիմտած , այսինքն մտաւոր մարդը երեւան չեւած՝ պզտիկ տղին հոգի մը ունենալուն նշանները իր վրայ կրտեսնաս . գիտակցութիւնը երեւան չեւած , արդարը անիրաւը իրաւ չիգիտեր , բայց կրղգայ . առանց իրաւունքի պզտիկ տղայ մը ծեծէ . նայէ ինչպէս կրբարկանայ , կասկարմիր կրկրտրի . նմանապէս ամենագեղեցիկին գաղափարը չըստացած , պզտիկ տղան գեղեցիկն ու տգեղը կրճանչնայ , կատարելագոյն էակը չիճանչցած կատարելութիւն մը կրղգայ , որովհետեւ կատարելութիւնը իր ծնողացը քով կրկարծէ . Մտուած սիրել չիտորված , իրենց ծնողքները մայրը հայրը կրսիրէ . ամէնուն բարերարը ու խնամաւ կալուն Մտուած ըլլալը չիգիտցած , իր ծնողքները , իրեն խնամք ընողները բարերար կրճանչնայ . բայց կամաց կամաց կրկրսի գործարանաւոր մարդը ձեւի մտնալ և մտաւոր մարդը երեւան ելլել . տղին սէրը որ առաջ միայն ծնողացը վրայ էր , կրսկրսի իրեն նման պզտիկ տղաքներուն ալ տարածել : Մնոնց հետ կրնկերանայ ու կրխաղայ . ընկերանալու ու խաղալու համար պէտք է որ տղան ձեռքն անցած բաները կարգի դնել գիտնայ . դուն ասդէն քալէ , ես անդիէն . դուն թագաւոր եղիր , ես ալ զինակիրրդ (սիլիհտարրդ) ըլլամ . դուն վերը կեցիր՝ ես վարը , որով



քեզի իմ գնտակս ( թօփս ) հասցընեմ, և այլն . ահա աս կապակցութիւնները ընենելու ու հասկընալու համար պէտք է որ իմացողական զօրութիւն ունենայ :

Այն ատենէն տղին կիրքերն ալ մէկիկ մէկիկ երեւան կելեն . տղան կընկերանայ ու կըբարեկամանայ իրեն նման տղոցը հետ, և ՚ինչան բարեկամութե իր խաղալիկը իր ընկերին կուտայ . բայց ետքը կըզղջայ ու իր խաղալիկը ետ կուզէ . կամ թէ ընկերին խաղալիկն ալ կուզէ . հոս կըսկըսի նախանձը, ընչասիրութիւնը : Կազալու ատեննին մէջերնին կուկ կընեն, ես թագաւոր պիտի ըլլամ, դուն ծառայ եղիր ըսելով, հոս ալ կըտեսնամք իշխանասիրութեան առաջին սերմը . իր խօսքը չըլլայ նէ, չիխաղար, կառնէ կըբալէ ուրկէ յամառութիւն և անկարգ կամքերու սերմը :

Կաղալու ատենը չէ թէ միայն յիշողութիւնը ու երեւակայութիւնը կըբացվին, այլ դիտելու ու հասկընալու կարողութիւններն ալ . չէ թէ միայն տղան իր իմացողական զօրութեամբը բաները կարգի կըդրնէ ու տեսածները կըմեկնէ իրեն խելքին հասածին չափ, հապա դատումն ալ կըսկսի երեւան ելլել . դատումն ճիշդ չեմ ըսեր իմացողական բաներուն վրայ հապա բարոյական մասին, անանկ որ կը :

զարմանաս : Անիրաւ ու թիւն մը տեսնայ  
 նէ , անիրաւ ըլլալը կը հասկընայ . անիրաւ  
 տեղ մը ծեծէ իր ընկերը , իր վրան պէտք  
 չեղած իբէն , գլուխ կը վերցընէ . իրաւունք  
 չունիս ծեծելու , ինչու ծեծեցիր ըսելով  
 վրադ կու գայ : Արկու տղայ մէկը մէկու  
 հետ ծեծկրօնն նէ , ով իրաւունք ունին  
 անոր կողմը կանցնի . ըսէ է որ արդարու  
 թիւնը կիմանայ , կը հասկընայ ու գրեթէ  
 մեծ մարդու չափ կը հասկընայ :

Իր ճնողքները իրեն սրդողելու ըլլան  
 նէ , մի և նոյն կերպիւ մտիկ չընէր անոնց .  
 թէ որ անիրաւ տեղը սրդողին նէ , հնա  
 ղանդելու տեղը գլուխ կը վերցընէ . բայց  
 ասոր հակառակը իրաւունք ունին նէ ,  
 ինչ որ ալ ըսեն ձայն չի հաներ . տղոց հա  
 մար բնական բան մըն է իրենց ճնողացը  
 հնազանդիլը . որովհետեւ ինչպէս որ ըսի  
 տղաք իրենց ճնողքը կատարեալ կը կար  
 ծեն , ու վրանին համարում ունին . ուս  
 տի դուրցածնին ալ կը կատարեն . բայց գի  
 տես երբ անհնազանդութեան ու ինքնա  
 հաւանութեան առաջին սերմը իրենց սր  
 տին մէջ կը մըտնայ , երբ որ իրենց ճնողքը  
 անիրաւ կամ սուտ բաներ ընեն կամ  
 զուրցեն . ասիկայ տղաքը կապտամբէ և  
 իրենց ճնողացը վրայ ունեցած համարու  
 մը կը վերցուեն : Արջապէս՝ տղաք մեծ  
 մարդու չափ արդարն ու անիրաւը կը

Ճանչնան . բայց մէկը արդարը ճանչնայ նէ՛  
ի հարկէ անիրաւէն ալ փախչելու կըջա-  
նայ . անիրաւէն փախչիլը հաւատոյ մէկ  
սկզբնաւորութիւն է . ըսել է որ հաւատոյ  
սերմը պզտիկուց տղոց սիրտը կըմբտնայ .  
բայց այս հաւատքը դեռ կիսկատար է :

Տղան՝ իր խաղը խաղալէն ետքը, իր ծնո-  
ղացը քով կուգայ գրեթէ հոգնուի առնե-  
լու համար . բայց միանգամայն անոնց քով  
գաղափար կըժողվէ : Ինչ որ նոր է անոր կա-  
խորժի . նայէ ինչ ու շաղբու-թեամբ մտիկ  
կընէ երբօր իրեն բան մը պատմեն որ ին-  
քը չիգիտէ : Աղուէսը ագռաւին հետ  
խօսեր է . անասնոց խօսակցիլը իր գիտ-  
ցած բանը չէ . ատիկայ գիտնալովը նայէ  
որչափ գոհ կըլլայ . Փէրի մը մէկ վայրկեա-  
նի մէջ երեսուն օրվան ճամբայ առեր  
է , ու չար թագաւորի մը ձեռքէն իր  
խեղճ ժողովուրդը այն Փէրի գացեր ա-  
զատեր է . նայէ ինչպէս ատիկայ ըսելով  
կըհրրճուի . կըյուսայ ասով որ իրեն գե-  
շութիւն ընողներուն դէմ թէպէտ ինք  
բան մը ընելու կարող չէ , բայց իրմէ կա-  
րող էակներ գտնելու ասոնք իրեն տե-  
ղը արդարութիւն կընեն : Այս յոյսը գրե-  
թէ տղին բնական տկարութիւնը ուժի  
կըփոխէ . կամ թէ այն իրմէ վեր էակնե-  
րուն կարողութեանը ապաստանելով իր  
տկարութիւնը կըմոռնայ : Այս յոյսը՝ կաս

մը կրլայ այն գերագոյն էակներուն և տը  
ղին մէջ տեղը . ուստի անոնք կրվնտրուէ ,  
կուղէ որ ուր եղածնին գիտնայ և անոնք  
տեսնայ . ու երբոր կրլսէ թէ այն գե-  
րագոյն էակները՝ զգայարանաց գիտցու-  
ցած տեղերը չըլլալով, իրենց օթեւանը՝  
իրենց պէս աննիւթ է . ասով իր իմանա-  
լը ուրիշ ձեւ մը կըստանայ , միտքը կը-  
բարձրանայ , և այն ատենէն ծայրագոյնը  
կըգիտնայ : Բայց երբոր կիմանայ որ այն  
իր գիտցած գերագոյն էակներէն գե-  
րագոյն էակ մը կայ որուն ձեռքն է ար-  
դարութիւնը , որուն քով է կատարելու-  
թիւնը և մեծութիւնը . վերջապէս Աստ-  
ուած մը ըլլալը լսածին պէս, ալ ան ատե-  
նը ամմէն բան իրեն պզտիկ կերեւայ . Ան-  
հոնը իր մտքին մէջ կըճառագայթէ . յոյսը ,  
հաւատքը և աստուածային սէրը անմիջա-  
պէս կըճընին ու տղին սրտին մէջ իրենց  
հիմը կըձրգեն :

Քիչ մըն ալ ետքը կըհարցունէ , այս  
աստղերը ո՞վ հոս հաստատեց . ո՞վ լուսի-  
նին շրջիլ հրամայեց . ո՞վ բոյսերուն մեծ-  
նալ , և ո՞վ անասնոց քալել , Աստուած .  
ահա հաւատալու բաներուն ալ հիմը , որ  
այն ատենէն կըսկըսին տղուն մտքին մէջ  
մտնել :

Տղան հինգ վեց կամ եօթը տարեկան  
ըլլայ նէ , սորվելու ու տեսած բաներուն

պատճառները հասկրնալու ետեւէ կրլլայ. բսել է որ խմացական մարդը այն ժամա նակէն իր գլխաւոր կերպարանքը առնել կրակրտի. ու անկէ ետքը միմիայն պիտի զարդանայ ու զօրանայ :

Մինչեւ հոս տղին ամէն բրածին առաջնորդ՝ ծնողքներն էին. ալ անկէ ետքը իրեն առաջնորդը Աստուած է. մինչեւ այն ատենը տղին բրածը իրմով չէր, ազաւ տօրէն չէր. որովհետեւ դեռ մտաւոր մարդը իր նպատակը ճանչնալու կարողութիւն չունէր. ուստի բրածն ալ ոչ առաքինութիւն կրնար սեպվիլ և ոչ մտլութիւն. բարոյական և հաւատոյ պարտքերը ասկէց ետքը կրակրտի սօրվիլ և ասկէց ետքը կրնայ հասկրնալ : Իրեն ծնողացը հնազանդիլը մինչեւ այն ատենը մէկ հարկաւ լորութիւն մըն էր իրեն. ալ անկէ ետքը Աստուծոյ և ծնողաց հնազանդիլը առաքինութիւն մը կրլլայ : Եւայց իր բնելքին մէջ միշտ իր ծնողքը օրինակ կրբրունէ. իր բարքը անոնց վրայ կրշխտկէ. իր բնելքը անոնց բրածէն կրհետեւցրնէ :

Տղաք՝ խաղալու ատեննին այսինքն երեք տարիէն մինչեւ վեց տարի գործնական խել մը արհեստներու կրհետեւին. բայց ասիկայ իրենց յարմարութեանը նըշան չիկրնար սեպվիլ. որովհետեւ ասիկայ տեսնալով օրինակել մըն է. այսինքն նմա



նողական զօրութեամբ է : Նշմարիտ յարմարութիւնը ետքը կուգայ տղան տասներկու կամ տասներչորս տարեկան ըլլայ նէ , որուն վրայ մենք ալ ետքը պիտի խօսիմք :

Տեսանք որ բնութիւնը մտքին կարողութիւնները երեւան հանելու ատենը 'ի միասին բարոյական մասն ալ , միանգամայն մարմինն ալ կը զօրացունէ և կը զարգացունէ . մենք ալ բնութեան ընթացքին հետեւելով , մարդուն բնաւ մէկ մասն ալ չիմոռնալու ու զարգացունելու ջանալու եմք . ուստի նայիմք ասոր համար ինչպէս պիտի վարվիմք :

Մարմնոյն վրայօք զուրցելիքնիս առջի գլուխներուն մէջ ըսեր եմք , հոս կըմընայ բարոյական և իմացական զարգացմանը վրայ խօսիլ :

Ինչպէս որ վերը ըսի , բնութիւնը տըղին բարոյական մասը զարգացընելու համար նախ երեւակայութեան ձեռօք անոր խելքը անհունին հասցընել կուտայ . ետքը զՆստուած ձանձնալ՝ անկէ ետքը բարոյականի սարտքերը սորվիլ . ուրեմն պէտք է որ ինչուք հինգ վեց տարի տղին երեւակայութիւնը լայնելու ջանաս , բայց ասոր համար չերթաս խառնաբնդոր ու գժուարիմաց գաղափարներ զատես . նա յեւրու ես որ մարդոյս նպատակին յար



մար ու տղին կիսակրտուր իմացողականու-  
թեանը համեմատ գաղափարները ըլլան :  
Պատիկ պատմութիւններու մէջ տղոց ե-  
րեւակայութիւնը լայնելով, ճանչցընես  
իրենց մէկ հատիկ արդարադատ ու գե-  
րագոյն էակ մը ըլլալը . բայց մէկէն մինչեւ  
հոն մի ցաթիկեր . նախ՝ արդարութիւնը  
մարդու քով փնտրուէ . մարդէ օրինակ  
տուր , կամաց կամաց մարդոցմէ վեր է-  
ակներու քով գտիր . ետքը եկուր հասիր  
գերագոյն էակին . ասանկ ալ գեղեցիկին  
գաղափարը փոքրէն սկսելով ամենագեղե-  
ցիկը ետքը ճանչցուր . զՆստուած սիրել  
չխորվեցուցած մարդասիրութիւն սորվե-  
ցուր , և այս՝ փոքրէն մեծի , պարզէն բա-  
ղադրեալի անցնիլը՝ հասկըցընելքդ իմա-  
նալու գիւրութիւն կուտայ տղին :

Տղին իմանալը ձեւի չիմրտած Նստ-  
ուածային պարտքերը , որ են հաւատքին  
սորվեցուցածները , անկարելի է որ հաս-  
կընայ : Աւստի ասոնք ետքի ձգելով՝ ա-  
ռաջ մարդոց մէկզմէկու ունեցած պարտ-  
քերը սորվեցուր . բայց գրքերու ու անի-  
մանալի խօսքերու մէջ չէ , հապա օրինա-  
կաւ , պարզ կերպով : Ինչ որ կուզես որ քե-  
զի ընեն դուն ալ ըրէ . ինչ որ քեզի չես  
ուզեր որ ընեն՝ դուն ալ մընէր . այս եր-  
կու խօսքով մարդկային բոլոր պարտքերը  
տղին կրնաս գիտցընել : Արբոր պէտք ըլ-

լայնէ՛ տղին ըսէ, մի ըներ սսիկայ վասն զի աղէկ չէ. քեզի ընեն նէ դուն կախոր ժիս : Մըէ սս աղէկութիւնը, քեզի ա սիկայ սարտք է, վասն զի թէ որ չընես նէ, կարելի է որ օր մը դուն ալ ուրիշի մը աղէկութեանը կարօտիս. անատենը կուղեն որ անոնք ալ քեզի չօգնեն : Արբ որ ետքը զՄատուած ճանչնայ, ՚ի հարկէ անատենը իրեն առ Մատուած ունեցած սարտքերն ալ պիտի սորվի. բայց ետքի ձգէ Մատուծոյ վրայ հասկըցընելիքդ. ան ատենվան ձգէ հաւատքը մանրամասնաւ բար սորվիլը :

Հաւատքը երկու կերպ սորվիլ կայ. մէկ մը հաւատոյ կանոնները գիտնալ, մէկ մըն ալ այն կանոններուն վրայ տրամաբանել : Տղան հինգ վեց տարեկան հասակը հասնի նէ, դեռ նոր իր միտքը իր ձեւը ըստացեր է. դեռ տրամաբանել չիգիտէ. տրամաբանելու համար սէտք է որ՝ չէ թէ միայն ունեցած ծանօթութիւնները կարող ըլլայ դատելու, հասկա նաև այն ծանօթութիւնները իրարմէ հանելով վերացեալ ծանօթութիւններ շինելու. տղան եօթը տարիէն ետքը կրտկրտի վերացեալ ծանօթութիւններ շինել. ուստի անկարելի է որ անկէ առաջ ինչ բանի վրայ կըլլայ ըլլայ տրամաբանէ. ըսել է որ ան բաները որ տրամաբանելով միայն կարելի է իմա

նալ . անոնք ետքի գիտնալու բաներ են . բայց հաւատքի մէջ ուրիշ գիտնալիքներ կան որոնց համար տրամաբանութի պէտքք չէ : Շատ բանի մեր խելքը չի հասնիր , ինչ հատակի մէջ կրլւամք ըլլամք . ու շատ բաներ ալ կան որ ներսէն կրզգամք ու աւսոնց վրայ տրամաբանել ու զելը իմաստաւ կու թիւն է . ինչպէս Մատուծոյ ինչ եղաճին վրայ տրամանելով ինչ կրնամք գիտնալ , ոչինչ . ուստի ինչո՞ւ մեր գիտնալու կարողութիւն ունենանինս չունենանինս հիմակվընէ տղան գիտնայ : Մատուած բարերար է . ատիկայ ըսելու համար պէտքք չէ որ երկար բարակ վարդապետութիւններ ընեմք , մենք ներսէն ալ կրզգամք որ Մատուած չարարար չիկրնար ըլլալ . ինչո՞ւ երթաս հիմակվընէ երկար բարակ բաներ գիտցընես . ու այն ալ անանկ բան մը ապացուցանելու համար որ տղան ինքնիրէն կրզգայ ու կը հաւատայ : Աւստի ինչուք տասներկու , տասներչորս տարի բնաւ տըրամաբանութի չեմք ու զեր տղոց համար :

Մասնկ ալ տղին գործունէութիւնը կառավարելու համար կու զեմք որ Մճ չի ճանչցած , իրեն ծնողքը իրեն առաջնորդ գիտնայ՝ ու անոնց հաւատայ՝ տղան մինչև որ արդարն ու անիրաւը դատելու կարող չըլլայ իրեն մարմնոյն վերաբերեալ բաներու վրայ միայն՝ պիտի կարենայ կամք ունե-

նալ, ու դրսէն ուրիշ կամք չիպիտի ունե-  
 նայ, բայց գիտակցու թիւր ու դատումը ե-  
 բեւան ելածին պէս ալ, թող տալու ես որ  
 ինք դատէ . քուկին այն ատենական ընե-  
 լիքդ՝ միայն իրեն դատումը շտկել պիտի  
 ըլլայ, չէ թէ դատել չիտալ : Տղան  
 բան մը ուզեց ընել ու ինք դատեց որ այն  
 ընելու բանը աղէկ է . դուն գիտես որ  
 տղին դատումը ծուռ է, մընէր ըսելով  
 սաստելու տեղը, հարցուր թէ ինչու ատ  
 կընես կոր : Թէ որ տղին բարեկամն ու  
 սիրելին ես նէ, քեզի սիրով իր պատճա-  
 ւը կըզուրցէ, իր պատասխանէն իր դա-  
 տումը կըհասկընաս . ուստի թէ որ ծուռ  
 է նէ, շտկէ . իրաւ ասանկ դատեր ես բայց  
 ատ բանին վախճանը սա է և այս ալ՝ քեզի  
 կամ ուրիշի մը սա կերպիւս կըդպչի . թէ  
 որ տղան քու վրադ վարկում ու զուրցաւ  
 ծիդ հաւատարմութիւն ունի նէ, չէ թէ  
 միայն իր ընելիքէն ետ կրկենայ, հասար  
 իր ծուռ դատումը քուկին դատմանդ  
 վրայ շտկելով միտքն ալ կըբացվի . վայ այն  
 ճնողաց որ իրենց տղին հետ, վարկում  
 չունենալու կամ վարկումին կորսնցը-  
 նելու կերպով վարված են . տղոց համար  
 որչափ աղէտալի բան է որ առանց ղէկի  
 ( տումէնի ) առանց կողմնացոյցի ( բու-  
 սուլայի ) ասանկ իրենց գլխուն քալելու  
 հարկադրին : Աս կերպիւս Ի հարկէ սը-

խաղներու ու մօլութիւններու մէջ պիտի իյնան . ինչպէս որ անդին ալ ըսի : Տղին անհնազանդութեանը ու խել մը անկարգ կամքերուն պատճառը՝ իրեն ծնողաց վրայ աս վարկումը չունենալուն է . երբոր ետքը Աստուած ճանչնայ նէ՛ իրեն առաջնորդ , իրեն հաւատարմութիւնը նպատակ ու կատարեալ էակ՝ Աստուածը պիտի գիտնայ . անոր պիտի հետեւի ու հնազանդի . բայց ո՞վ պիտի հնազանդեցընէ . ո՞վ Աստուած պիտի առաջարկէ , ծընողքը . թէ որ տղան ծնողացը հնազանդիլ ու խօսքին հաւատալ չունի նէ , ինչպէս Աստուծոյ հնազանդիլ սորվի , անանկը ոչ առաջ և ոչ ետքը կարգ մը կանոն մը չիկրնար ունենալ . անանկը ինքնահաւան ու մօլութիւններով լեցուն կրլայ :

Մեր ըսած կերպիւ հնազանդեցընելը ինչպէս որ տեսնելէցաւ վախցընել չէ . հարցուր մէկ հօր մը մօր մը , ինչո՞ւ տղան ուղածը կրնէ կոր . քեզի կըպատասխանէ թէ վախ չունի անկէ է : Վախնալը հնազանդիլ չէ . նախ տղան ինչո՞ւ հօրմէն մօրմէն վախնայ , ծնողքները ՚ի բնէ տղին բարեկամներն են , չիդիտեմ ի՛նչպէս կատարեալ բարեկամութիւն կրլայ՝ երբոր այդ բարեկամութեանը կապը վախը ըլլայ նէ . ըսել է որ տղան քեզմէ կըվախնայ նէ , քեզի բարեկամ չընդունիր , ուստի քուկին



զուրցածիդ ալ չիհաւատար . ու թէ որ  
ինքր կամելու համարձակուի չունենալուն  
մինակ քու ուզածդ կրնէ նէ , քու կին գե-  
րիդ է եղեր , եւ ինքիր գլխուն կամելն ու դա-  
տելը մոռցեր է . բայց ասոր մարդ կրթել մի  
կրսեն . անասուն մը կրթելու համար աս-  
կէ ուրիշ ինչ կրնեն : Տղան չէթէ քու կին  
սպտուէրներդ չիկատարելէն կրվախնայ ,  
հապա անոնք չիկատարելը քու կին տես-  
նալէդ կրվախնայ , ուրկէ հնարքներ , կեղ-  
ծաւորութիւն , ստախօսութիւն բողորն ալ  
քեզի խաբելու , ու թէ որ խաբվեցար  
նէ՛ ետեւէդ քու վրայ խնդալու համար :  
Հնազանդիլը առ չէ . վարպետ մը իր ա-  
շակերտին բան մը սորվեցունելու ասենը ,  
աշակերտը ան սորվեցուցածը սորվելու  
համար պէտք է որ վարպետին վրայ վար-  
կում ունենայ որ երբոր վարպետը ըսէ  
որ մըներ կամ ըրէ , իսկոյն հնազանդի  
գիտնալով որ վարպետին ըրէ ըսածը ա-  
ղէկ է ու ընելու է , ու մըներ ըսածը  
գէշ է ու չընելու է :

Ահա տղոցը հնազանդութիւնն ալ այս  
կերպը միայն ըլլայ նէ հնազանդութիւն  
կրսեպի : Այս հնազանդութեանը մէջ  
միմիայն վարկում կայ իրմէ մեծին վրայ  
ուրիշ բան չիկայ . աշակերտը չէթէ վար-  
պետին անձին , հապա անոր գիտցածին  
ու կրցածին կըհնազանդի : Ասանկ ալ տը-



ղաքը պէտք է որ գիտնան որ ճնողքնին իրենց աղէկութիւն կուզեն այսինքն իւրենց բարեկամ են ու իրենցմէ աւելի գիտեն ու կրնան : Վիտելը ու կարելը կատարեալ ըսել է . ուստի թէ որ տղաք պըզտիկուց իրենց ճնողքը՝ իրենցմէ կատարեալ կարծեն ու ասանկ հաւտան նէ , կըհնազանդին , չէ նէ անհնազանդ կըլլան :

Արբեմն տղաքը հնազանդեցնելու համար վախցընելու տեղը՝ չափազանց կըսիրեն ու իրենց սէրը ցուցընելու համար , տղան ինչ ուզէ նէ կրնեն : Տղին կամքը կատարելու ու զինքը գոհ ընելու համար ինքրզինքնին նեղի կըխօթեն , կըչարչարոյն . բայց սա՛ կայ որ՝ տղան բնաւ գոհ չըլլար , որովհետեւ մարդ է . կըսկըսի անկարելի բաներն ալ ուզել , անոնք ալ ձեռք բերէ նէ , ալ աւելի անկարելին կուզէ . անատենը ճնողաց համբերութիւր կերթայ . վայրկեան մը իրենց սիրելին կըմոռնան կըբարկանան , տղան անգամ կըպատժեն , տղան կուլայ ու էն վերջը կամ ձայնը կըկըտրէ կամ կըբընանայ . ձայնը կըտրածին պէս կըզղջան ու առաւել սէր կըցուցընեն տղին , գրեթէ ըրածնուն թողութիւն կըխնդրեն : Տղան ինքրզինքը բանի մը տեղ դնելով , ալ կըսկըսի իր ճնողացը հրամայել , ասոնք ալ գրեթէ իրենց տուած պատիժը տու ժելու համար , ևս առաւել

տղին առջին կրփարին ու տղան ինչ որ ուզէ նէ կրնեն :

Արբեմն ալ ճնողքը տղին բան մը բնել տալու համար, կրսկսին վարձեր խոստանալ. ու երթալով անանկ կրլայ որ առանց վարձի տղին բան մը չեն կրնար բնել տալ. այս կերպիւս հրամայողը տղան կրլայ և ճնողքները իր ծառայները. ինչպէս ծառան իր տիրոջմէն բան մը առնելու համար պիտի աղաչէ, ու զածը առաջարկէ, փոխարէն երախտագիտութիւն խոստանայ. ահա անոնք ալ իրենց տղոցը անանկ կրնեն : Ասոր ալ հնազանդիլ չքովի. անանկ մեծցող տղան չէ թէ միայն ինքնահաւան կրլայ, հասցա բռնաւոր ալ, ամէն ատեն իր կամքը կատարելու սորված ըլլալուն, ետքը մարդու հետ խառնրի ու ինքրզինքը չխեղտող մը տեսնայ նէ ատոր վրայ կրցաւի. ինքը ցաւալի ու խեղճ կրլայ. ու զինքը չխեղտողին ռի կրպահէ, անոր հետ թշնամի կրլայ :

Օճնողքը անանկ վարվելու են որ տղան զանոնք իրեն որպէս թէ նախախնամութեան մը գործադիր բռնէ. մինչեւ որ աստուածային նախախնամութիւն մը ըլլալուն խելքը տեղ ընէ, մինչեւ այն ժամանակը ճնողքը պէտք է որ տղին ամէն կերպիւս առաջնորդը ըլլան. ասանկով տղան անոնց ձեռքը զինքը առաջնորդել

տալու սորված ըլլալուն ետքը Աստուածը առաջնորդ ընդունելու դժարութիւն մը չլքաշէր : Ա երջապէս ծնողքները թող իրենց տղին կամքին կողմնացոյցը ըլլան . ոչ իրեն ծառան ըլլան և ոչ ալ իրենց կամքին ծառայեցրնեն :

Տղին կամքը ամէն ատեն բարի և շիտակ չըլլալէր ամէնն ալ գիտեն . և որովհետեւ ազատ բնութեան տէր է , ՚ի հարկէ իր ազատութիւնը բանեցրնելով քեզի երբեմն երբեմն պիտի անհնազանդի . կիրքերը երեւան ելլալովը մտութիւններ պիտի սրատճառեն տղին , ասոնք տեսնալով տղայն ուղղութեան բերելու ես . բայց ուղղելու համար պէտք է որ առաջ տղին բնաւորութիւնը ճանչնաս , իր բնական ձեւը ինչ եղածը գիտնաս : Հոս մէկ մեծ բան մը ունիմ հասկըցրնելիք . այն է բնական ձեւը բռնածնիս . ամէն մարդ իր դրամագլուխը ( սերմայէն ) իր հետը կրբերէ , մարդիկ ոչ բարի կրծրնին և ոչ չար . բայց ունակութիւն ունին չարի և բարւոյ . ու մանք աւելի ունակութիւն ունին բարւոյ քան թէ չարին . և ասոր հակառակը սմանք ալ աւելի ունակութիւն ունին չարին քան թէ բարւոյն : Մարդիկ չար կամ բարի կրլան նէ , չիգիտցրվի որ միշտ իր կրթութեւր գէշ ըլլալէն է . չարի և բարւոյն մէկ ունակութի մը կայ բնական՝ որ մարմ

նոյն կազմութենէն կախված է . ինչպէս  
 որ մարդ կայ խելացի , բանաստեղծ ,  
 կամ մաթէմատիքոս և այլն , կրճընի . ա-  
 նանկ ալ մարդ կայ որ անխելք կրճընի . քե-  
 ղի ապացոյց ՚ի ծնէ տխմարները : Հաս-  
 կամ քիչ խելք ունենալը՝ ետքէն չիկր-  
 նար ըլլալ , որովհետեւ թէ որ ատանկ  
 ըլլար , պէտք էր որ երկու հոգի մի և նոյն  
 վիճակի , մի և նոյն սրարագայներուն մէջ  
 մեծնալովին մի և նոյն խելքը ունենային ,  
 միտքերնին մի և նոյն ատիճան բաւակա-  
 նութեան ունենար . այսինքն՝ երկուքն ալ  
 խելացի կամ խենթ ըլլային . բայց ատանկ  
 չըլլար : Արկու եղբայր մի և նոյն վար-  
 պեաններ , մի և նոյն ուսուցիչներ ունե-  
 նան ալ նէ , մէկը միւսէն անխելք կամ  
 խելացի կրլայ , ատոր պատճառը բնական  
 ունակութիւնն է որ ուղեղին ձեւէն ու-  
 շէնքէն կախված է . անանկ որ՝ ամէն մար-  
 դու ընելու գործքերը ու կարողութիւն-  
 ները իրեն բնական տաղանդովը չափուած  
 է : Ասանկ ալ բարւոյ և չարի ունակու-  
 թիւնը մարմնոյն ձեւէն և շէնքէն կախ-  
 ված է . ինչպէս զօրաւոր ու արիւնտ  
 մարդ մը , թուլամորթ ու հիւանդոտ մար-  
 դու կիրքերը և մոլութիւնները չունե-  
 նար , ըսել է որ մարդուն գործքերուն  
 վրայ ներգործութիւն պիտի ունենայ մար-  
 դուն իր մասնաւոր կազմութիւնը , ասի-

կայ մէկ ճշմարտութիւն մըն է որուն դէմ ըսելիք չիկայ . բայց անցած դարուն մէջի փիլիսոփայները միայն աս տեսնալով, բնականը միայն պատճառ բռնեցին մարդուն գործքին . կիրքերը միջոց սեպեցին մարդուն յառաջադիմութեանը, բայց ատանկ չէ . մարդուն կառավարութիւնը հոգւոյն ձեռքն է, ձի մը որչափ աշխոյժ ըլլայ՝ ձիավարը կրնայ անիկայ զսպել . մարդուն հոգին իր ազատութեամբը կրնայ իր կիրքերուն չափ մը յօրինել, պակասութի մը լեցրնել և առաւելուի մը քիչցրնել բարեխառնել . տկար մարդը միշտ վախկոտ չէ . բարոյական ուժ մը կայ որուն քիչնալուն ու շատնալուն է որ սրբոտտ կամ վախկոտ կրլան մարդիկ : Մարմինը իր բոլոր որակութիւններովը, իր ուժովը և այլն, գործիք մըն է որ բանի մըն ալ պիտոյ չըլլար թէ որ գործիքին տէրը անիկայ գործածել չուզէ նէ . բայց պէտք է որ գործիք մը ըլլայ . մարմինը տեղէն անշարժ ըլլայ նէ, հոգին որչափ բարոյական ուժ ալ ունենայ, իր ուժը չիկրնար ցրցրնել . թէ որ ուղեղը սակաւ կամ հիւանդ ըլլայ նէ, որչափ ալ կամք ընէ, իր իմացողական զօրութիւնը չիկրնար բարձրանալ :

Քիչը կարելի է շատցրնել ինչպէս որ պակասաւոր մանկանց վրայ խօսած ատեն նիս պիտի հասկրցրնեմք . բայց ոչինչը



ինչպէս է ութեան կրքերովի, ասիկայ միայն  
Աստուծոյ գործն է. ըսել է որ՝ հրաշք է :

Աս զուրցածներէս կըհետեւի որ նախ  
բնական ունակութիւն մը ունիմք չարի  
և բարւոյ, ու աս ունակութեանը խե-  
լացի մարդը չափ մը կրնայ դնել. այսինքն  
բարեխառնել, ահա ասիկայ ծնողքները  
պէտք է որ գիտնան, զննելու իմանալու  
ջանք ընեն ու իմանան ու անով տղին կիր-  
քերը բարեխառնելու ու մոլութիւնները  
վերցընելու նային : Ատոր ինչպէս որ ա-  
ռաջ ալ ըսած եմ, ուղղել կրսեմք :

Աւղղելուն կերպը քանի մըն են. նախ  
պատուէրով երկրորդ դասով, երրորդ  
պատժելով :

Պատուէրդ ան ատենը կրնայ տղան  
բռնել երբոր քեզի վարկում ունի, կամ  
քիչ մը մեծցեր է նէ Աստուծոյ երկիւղ  
ունի :

Պատժելը ան ատենը հարկ կըլլայ, եր-  
բոր պատուէրդ ու դասը իրեն օգուտ  
մը չընէ նէ. պատժելը առանց դասի մեծ  
արդիւնք մը չունի. պատժելը այն կերպը  
ըլլալու է որ այն պատուիրած բանին գէշ  
եղածը տղան իմացած ըլլայ, ու երբոր իր  
աստիճանէն իյնալը տեսնայ նէ, ասիկայ  
արդարութի մը եղած ըլլալը հասկընայ .  
առանց ատոր պատիժը արդիւնք մը չու-  
նի. ուստի պատիժէն առաջ դասերը կան :



Կիրքերը բարեկարգելու ու մոլու-  
թիւնները վերցընելու համար տղին դաս  
տալ ու զողը, ինչպէս որ բախ, պէտք է որ  
ան մոլութիւնները ու կիրքերը ճանչցող  
և ասոնք զսպելու կամ բարեկարգելու  
համար ինչ կերպ դաս տալը գիտցող մը ըլ-  
լայ: Մաս տալուն կերպը գիտնալը գժար  
բան մը չէ. մոլութենէ մը յառաջ եկած  
գէշութիւնները գիտնալովդ, այն գէշու-  
թեանց մէկ ձեւը՝ դասի կերպիւ տղին  
համար առաջկուց կրպատորաստես. տղան  
քու կին խօսքդ մտիկ չընելով, իր մոլու-  
թիւնը գործածելու ելլայ նէ, այն գէ-  
շութեանը կը հանդիպի. այն բանին գէշ  
եղածը իր վրայ կիմանայ, կը դգայ. ու աս  
կերպով՝ կարելի է որ բոլորովին այն բա-  
նէն ետ կենայ. ասոնցմէ քանի մը օրինակ  
տամք:

Մտենք որ տղան իշխանասիրութեան  
կիրքը ունի. անանկ տղան խաղալու ա-  
տենը միշտ Ո՛րնէ՛րալ կամ Վ՛եղէր կամ  
ինքնակալ ըլլալ կուզէ ու չիներէր որ ու-  
րիշ մը իրմէ մենծ ըլլայ, ուրիշներուն կը  
գողողանայ. անոնք բանի տեղ չի գընե-  
ր. և այլն: Մասնկ բան մը տեսնաս նէ՝ պէտք  
է պատուիրես որ տղին քովի մարդիկ-  
ները բնաւ զինքը չի գովեն, իրեն հաճո-  
յական շողքորթութի (միւրայի) չի գուր-  
ցեն. բան մը հրամայէ նէ չէ թէ մի-

այն չընեն . հասցա երեսնիվեր ալ խնդան , իբր թէ ըսելով տղին որ դուն հրամայելու իրաւունք չունիս , դուն ըրէ , չէս մի կրնար ընել , ու թէ որ տղին չիկրցած մէկ բանն է նէ , երեսը տալու է իր անկարու թիւնը : Արեն գոռոզու թեան ու իշխանասիրու թեանը կիկրբովը ըրած մէկ բանը տեսնան ու լսեն նէ , անոնց վրայ խնդալով տղան ծաղր առնելու է , իր բարեկամներուն մէջ համետ տղայ մը կայ նէ , այն գովելու է : Ենք ո՞վ եմք , մեր ոչինչ մը բլլալը , մեր ըրածին վրայ գոռոզանալու իրաւունք չունենալնիս՝ ամէն կերպերով տղին հասկրցընելու է :

Ասոր հակառակը՝ երբեմն տղան չափազանց ամբշկտտ է . չափազանց ամբշկտտութիւնը՝ որ վեհերոտութիւն կրալի , մալու թեան կըտանի , վասն զի վատութեան սկզբնաւորութիւնը շատ անգամ չափազանց ամբշնալն է : Անանկ տղան խօսելու ատենը կրկարմբի . մարդու քով չիգար , խաղալու ատենը , ինչ որ ուրիշները ըսեն նէ կըհաճի . մէկէ մը բան մը ուղեւ չիհամարձակիր . մեծնայ նէ անանկը , վատ կրլլայ . մեծութեան կամ փարթամութեան հասնելու համար շողբորդ , խաբեբայ կրլլայ . ուստի անանկ տղան պէտք է որ սղտիկուց դրդես , քովը կեցող մարդիկները պէտք է որ բնաւ խոնարհական

կերպիւ բաներ չընեն , ու ինքրդինքնին վար զարնել չիտան : Տղին առջին խոնարհական կերպիւ եղած բաները վար կըզարնես . ինք համարձակելով ելլայ բան մը ընէ 'նէ , զինքը կըգոյլես , թէեւ բրածը գու վութեան արժանի բան ալ չըլլայ : Կր ա կանջը կըտարի՞ճ ու մեծ մարդիկներու սպառմու թիւններով կըլեցընես : Կը տղան քանի որ մէկ դի քաջված տեսնաս 'նէ , զինքը կըխորրախուսես : Բայց աղէկ 'նայէ հաս ծաղը առնելը օդուտ չընելէն զատ վնաս ունի . ուստի զինքը բնաւ ծաղը չառնես :

Բսենք որ տղան՝ փառասիրութեան ու սպառուասիրութեան կիբքը ունի . անանկը՝ ուրիշին ինչ որ ընեն կընախանձի . ուրիշ մը սպառուեն 'նէ անիկայ կերթայ կը ծեծէ , վար կըզարնէ , գէշ է կըսէ . անոր վրայ զրպարտութիւններ կընէ , ու իրեն թշնամի կըլլայ . մեծնայ 'նէ ալ աւելի չար կըլլայ .

Թէ որ տղայ մը տեսնաս որ հայրը մայրը՝ իր քոյրը գրգուելուն համար լայ կամ տըրտմի , վերջապէս նախանձի 'նէ , գիտցիր որ անիկայ փառասէր սխտի ըլլայ . բայց 'նայէ անատենը իր քոյրը՝ հօրմէն մօրմէն զատելու համար ինչեր կընէ . կերթայ անոնց բովը զանոնք կըգրգուէ , ճիտերնին կըպըլլովի , աչվըները կարցունքօտին , անոնց խեղճ ընելով սըրդօղիլ մը կըցուցը .

նէ . երբեմն տղան իր տրամուծե՛նէ՛ն ան  
 գամ կրմեռնի : Աւտի տղին փառասիրու  
 թիւնը չիվերցուցած , նայէ որ նախանձը  
 վերցրնես շատ զգուշութեամբ : Քրոջը  
 վրայ նախանձելուն քու վրադ գայ նէ , մի  
 վա՛րճտեր , անիկայ քեզմէ աւելի կըսիրեմ  
 մըսեր . հասցա մէկէ՛ն գրկէ . իր տրամու  
 թեանը մասնակից եղիր . զինքը սիրածդ  
 ցրցուր . բայց վայրկեանէ մը ետքը քոյրը  
 նորէ՛ն սիրէ , կամ թէ երկուքն ալ գիրկդ  
 առ , երկուքն ալ մէկ տեղ սիրէ , մէջեր  
 նին խաղաղութիւն ըրէ . վերջապէս նախ  
 չինախանձել սորվեցուր : Անկէ ետքը իր  
 փառասիրութիւնը կառավարելու համար ,  
 իր առջին փառասէր մարդը ծաղը ընելու  
 է . ճշմարիտ փառքը Ատուծոյ է , ու  
 մարդուն է՛ն մեծ ու առաջին փառքը ա  
 ռաքինի բլլալն է տէյի գիտցընելու է , մի  
 անգամայն մէկիկ մէկիկ ցուցընելու է որ  
 փառասէր մը՝ մարդկային փառքի հասնե  
 լու համար որչափ վատութիւններ , որ  
 չափ ցածութիւններ , որչափ երկրպագու  
 թիւններ պիտի ընէ . ասանկով տղին փա  
 ռասիրութիւնը բարոյականի կողմը դար  
 ձընելու է :

Արբեմն ասոր հակառակը տղան ոչ գու  
 վասանքի ահանջ կրդրնէ , ոչ պարսաւանքի ,  
 բանի մըն ալ նախանձախրնդ իր չբլլար . տը  
 ղան անանկ մեծնայ նէ , ուրիշի գործին

գըտնելու լուսն աղէկուիր ու պատիւ ըսված  
բանը՝ ինչ ըլլալը չի գիտնար . իր գործքը  
կամ շահի համար կրնէ կամ վախնալուն :  
Անանկր իր համբաւը չի փնտրուեր . անամօթ  
կրմն ճնայ և վերջապէս բարոյական հրէշ  
մը կրլայ . ուստի տղին քով ասանկ պատ-  
ւոյ անհոգութիւն մը տեսնաս նէ , շու-  
տով մը առջին առնել նայելու է . ինչ որ  
ընէ նէ , ըրածը իր աչքին առջին բննէ , ու  
ըրածին նայելով վրան համարում ցուցուր .  
պէտքի բան մը չընէ նէ , իր անգործութիւր  
երեսին տուր . իրեն նախանձորդներ գտիր  
ու առանց ինքը իմանալու նայէ որ այն  
նախանձորդները իրմէ տկար ըլլան . ամէ-  
նուն մէկ տեղ սա կամ նա բանը ընելը  
պարտք կրդընես . ՚ի հարկէ իր ընկերները  
իրմէ տկար ըլլալնուն ինք պիտի յաղթէ .  
ան ատենը զինքը գովելու ու պատուելու  
է . բայց աղէկ նայէ , թէ որ մինչեւ ետքը  
ասանկ երթաս նէ , ետքը տղան միմիայն  
գովութեան կամ պատուոյ համար բան կը  
նէ . ուրիշ ինչ ըսես , իր ականջը չիլըսեր .  
ուստի պէտք է որ վերջը դաս իրեն հաս-  
կըցընես որ մարդոց համբաւ և փառք ը-  
սածը ծուխ մըն է և ճշմարիտ փառքը  
ճշմարիտ համբաւը և պատիւը առաքի-  
նւոյն կրվերաբերի :

Արբեմն կրտեսնաս որ տղան կամք չու-  
նի . ոչ կրլայ կրրնայ ըսեր և ոչ չըլլար , կամ



ասոր հակառակը մէկ անգամ մը չէ ըսէ՛նէ, աշխարհք մէկդի գայ, հա չըսեր. ասոր սրատճառը շատ անգամ ճնողքներն են. այս սինքն տղին կամքը կառավարել չիգիտնալ նու՛ն է. կամ տղին ամէ՛ն ուղածը ըրեր են որով տղան կամակոր (ինատճի) են ըրեր. կամ տղին ամէ՛ն կամքին գէ՛մ գալով տղան գերի են ըրեր. այս երկու տղաքն ալ մեծնան՛նէ գէ՛շ կրլլան. մէկը բնութեամբ վախկոտ ու ապուշ (սէրսէ՛մ), և ուրիշն երու՛ն գերին կրլլայ. (ասկէ զատ տարափոխիկ ախա մը գայ նէ առջի մեռնողներու՛ն մէկը կրլլայ, ըսել է որ կեանքին ալ զէ՛ն ունի վախկոտութիւնը). ասոր հակառակը միւսը մեծնայ նէ ինքնահաւան ան վախ ու գաղան կրլլայ, ուստի սղտիկուց նայելու է որ այս սրահասութիւները շտկես:

Տղան թէ որ յամառ բնութիւն ունի նէ, մէկ անգամ մըներ կըսես. մտիկ չընէ՛ նէ, մի մօտենար. իրեն վընաս տալու համար բան մը կըսատրաստես տղան չի գիտցած. իր ընելիքը նորէ՛ն ընել ուղէ՛ նէ կըթողուս ան ատենը որ ընէ. կերթայ կամ ձեռքը կըկըտրէ կամ կկոնայ. կամ մէկ տեղը կըցաւցընէ. ալ մէկ մալ չընէր. բայց իր ինքնահաւանութենէ՛ն ասանկ սրատճրված բու վրադ գայ նէ, թող չընէ՛իր որ չըլար մըսեր, տղան ան ատենը իր բրածին զղջացեր է. դու՛ն ալ թողութիւն տալու ու իր



ցաւին ցաւակից ըլլալու ես . միանգամայն  
ալ՝ մենք քու կին աղէկութիւնդ կուզեմք ,  
անոր համար մընէր ըսինք , չէ՛ նէ քեզի  
չընել տալու համար չէ՛ , կըսես : Ա՛ս կեր-  
պիւս տղին կամքին առաջնորդութիւնը  
ձեռքդ կառնես :

Բայց ինքնահաւան տղան անխախտ կը-  
լայ , հետեւութիւնը ատ է : Մէկուն մե-  
կալին հետ ձեծ կըլլի կուզէ , ալ գըտնայ նէ  
հետը կիցնայ . անասունները կընեղէ , կը  
տանջէ . քիչ մը ետքը իր նմաններն ալ կը  
տանջէ , անոնց ցաւը իր սըրտին չիբանիք ,  
ու ասանկ մենձնայ նէ մարդ մեռցընող ու  
գազան կըլլայ :

Աստի ասանկ տղին քով գըտնելոյնե-  
րը ձեծ կըլլի սիրող , տղոց հետ իյնող ըլ-  
լալու չեն . տղան երթայ մէկը ձեծէ՛ նէ ,  
գատաստան ու արդարութիւն ընելու է  
իրեն . ինչ որ քեզի կուզես որ ընեն , գուն  
ալ ան ըրէ : Իրեն միշտ հասկըցընելու է  
որ Ա՛ստուածային արդարութիւն մը կայ  
ամենուն վրայ : Իր երեսին տալու է ը-  
րած անիրաւ բանը . ասով չիկրնաս ուղ-  
ղել նէ , իր ընկերներէն կըզատես . քովը  
չուն կամ ուրիշ չարչարելու կենդանի  
չես ձգեր , կամ թէ խաճան շուն մը կը-  
ձգես որ երթայ հետը իցնայ , շունը ձեռ-  
քը կըխաճնէ : Ա՛սով ալ չըլլայ նէ , տղին  
նուագարան տրվեցընելու է : Ա՛ս զուրջա-

ծրս արտառոց կարծիք մը կերելի, բայց կարդահ ամէն ազգի պատմութիւնը, տես որ նուագարանը որչափ ներգործութիւն ունեցեր է գաղանաբարոյ ազգերուն վըրայ, ու մարդոց բարբը մեղմելու որչափ աղէկ միջոց մըն է ասիկայ. քեզի օրինակ Պիւթագորեանբը : Ինաւ անանկ տղոց Լնգղիացւոց պէս հաւամարտութիւն, Սպանիացւոց պէս ցլամարտութիւն և Հռովմայեցւոց պէս ըմփշամարտութիւն չիցրցընես : Չիլիսնալ, մանաւանդ մահէն չիլիսնալ սորվեցընելը պարտք մըն է, բայց չափ մը կայ, ու աս բանիս համար արեան ընտելանալ պէտքը չէ, արեան ընտելանալը գաղանութեան ու անողորմութեան մէկ սկրզբնաւորութիւնն է, կարդահ ցլամարտութե տեսարաններով (սէյիրներով) մեծցող սպանիացւոց պատմութիւնը, տես որ նոր և հին աշխարհքին մէջ ինչեր բրեր են, բսել է որ աչքին տեսածը տղին կընեքործէ, ուստի ինչպէս որ նուագարանին քաղցր ձայները տղին ներգործելով իր բարբը կըմեղմեն, ասանկ ալ զուարճալի տեղեր պտըտցընելը մեծ ներգործութիւն ունի, աս կերպերով տղին գաղանութիւնը կընաս ջնջել, թէ որ յարատեւես նէ :

Գանք հիմայ վախկոտ ու տարտամ տղին, ասանկ տարտամ տղին հետ երկայնա

միտ ըլլալու է . բան մը կը հարցունես ,  
 ու կը սպասես որ ինքը չէ՛ , կամ հա՛ ըսէ .  
 դուն անհամբերութիւն ինդիրը մի՛ լուծեր :  
 Հացը հիմա պիտի ուտես չէ՛ նէ ետքք . վե՛-  
 րը թէ վարը . բայց սպասէ որ պատասխա-  
 նը ինք տայ , ինք ուղղէ . ու ինչ որ ուղէ՛ նէ  
 բրէ : Արմէ սղտիկները իրեն ընկեր կուտաս ,  
 որոնց կառավարութիւնը իր ձեռքը մընալով՝  
 իր կամքը բանեցընել կը սորվի : Վնաւ  
 զինքը մինակ ձգելու չէ . միշտ իրեն գործ  
 կամ ընկեր գըտնալու է : Արեն առջին մա-  
 նրը դժուարութիւններ հանելու է , այն  
 դժուարութիւններուն գլուխ ելլալու մի-  
 ջոցը իրեն ձգելու է որ ինքը գըտնայ ու  
 ՚ի գործ գնել կամ չըղնելուն ալ իր կամքին  
 ձգելու է . տղան աս կերպով իր կամքը  
 կը գործածէ , և դժուարութիւնները մա-  
 նրը ըլլալուն դիւրաւ մը գլուխ կըլլայ .  
 ասկէ ալ քիչ մը իր անձին ապաստանիլ  
 կը սորվի , ու մէյմը ճաբմա մըտնայ նէ , ալ  
 կընաս յառաջ քըչէլ :

Չի վախնալ սորվեցընելու համար , որ  
 բանէ կը վախնայ նէ , այն բանին կընտա-  
 նեցընես , ինչպէս որ առջի մասին մէջ զուր-  
 ցեր եմք . բարոյական մարդը մինակ բա-  
 նէ մը միայն վախնալու է , այն է չարը :  
 Աւրիչ վախը՝ մարդու համար չէ . ինչո՞-  
 մահէն վախնալու է , թէ որ մեռնելը՝  
 պարտք մը կատարելու , կամ արդարու-

Թիւն ընելու համար պէտք է նէ : Ասիկայ տղին իմացընելու համար առաքինի մարդոց սրտամուծթիներով ականջը կրկեցընես . բայց աս ըսածս տղին խղճմբտանքը դրդել չիհասկրցովի : Պատմէ իրեն թէ Յիսուս ճշմարտութեան համար ինչպէս մեռաւ . ինչպէս քաջասիրտը անիրաւի մը ձեռքէ խեղճին մէկը ազատելու համար իր կեանքը վտանգի մէջ դրաւ . ինչպէս քաջասիրտը մեռնելու ատենը իր կեանքը ոչինչ սեպեց , և իր Աստուծոյն կամ իր ազգին համար մեռնելը փառք :

Արբեմն տղան ստախօս կեղծաւոր և խաբեբայ կրլայ . կամ ասոր հակառակը անանկ սարղամիտ կրլայ որ բան մը սահել չիգիտեր . մէկը մեծնայ նէ կեղծաւոր , խորամանկ ու անիրաւ կրլայ . խաբելը իրեն գործ մը կրլայ , և սուտ զուրցելը սովորութիւն մը , հրճուանք մը . ա՛նանկը՝ թէ որ ուրիշ մտուծիւն մըն ալ ունենայ նէ հեար , ինչպէս փառասիրութիւն , իշխանասիրութիւն և այլն , անանկը հրէշ բնութեան կրլայ . անանկ մարդը՝ շատերուն տունը աւրեր է . ստախօսի մը հաւատարմութիւն ընելով ու իր խօսքին խաբովելով , շատ անմեղներ զրդարտուեր ու մահուան դատապարտուեր են . կան որ ասանկ ստախօս մարդու երեսին խնդալուն ու խօսքին հաւտալով .

Թշնամին բարեկամ կարծեր ու թշուա-  
ռու թեանց հանդիպեր են :

Ինաւ մէկն ալ անանկ մարդը չիտրեր ,  
մէկն ալ վրան համարում չունենար , սաա-  
խօսը թէ որ իր սուտը չիգիտցրալի ու իր  
համարումը չիկորսրալի տէշի ջանք ընէ նէ ,  
ամմէն որ անհանգստութեամբ ապրելով  
կըհալի , կըմաշի ու Հիւֆլանին ըսածին  
պէս շատ չապրիր :

Միւսը՝ ասոր հակառակը ամէն բան  
չիտակ զուրցելովը , ինչ ընելիքը , ինչ ը-  
րածը ամէնը կիմանան ու կըգիտնան , ա-  
մէնն ալ իրեն պէս կարծելով , ամէնուն ալ  
ինքը զինքը կըբանայ , ՚ի հարկէ որ մը չէ  
նէ , որ մը խաբեբայի մը հանդիպելով պի-  
տի վընաս կըրէ :

Մարդս՝ պէտք է որ սուտ չիզուրցէ .  
բայց միանգամայն իր միտքինը ծածկել , ու  
հարցունեն նէ , ճշմարիտը՝ ամէնն ալ կա-  
տարեալ չիզուրցել գիտնայ : Թէ որ աս  
աշխարհքիս մէջ ամէն մարդ աղէկ ըլլար  
նէ , այս գգուշու թիւնը պէտքը չէր ըլլար .  
բայց ամմէնքն ալ գիտեն թէ խաբեբայ-  
ներուն թիւը որչափ աղէկ մարդոցմէ  
շատ է :

Տղայ մը սուտ զուրցէ , զրպարտէ , ը-  
րածը ուբանայ կամ երդում ընէ նէ ,  
նախ՝ սուտը երեւան հանելու կընայիս ,  
բայց երեւան չիպիտի կընաս հանել նէ

Հաւտալ ցուցուր . ու աչբբդ չորս բրէ  
որ սուտը գանաս ու կրցածիդ չափ երեւ  
ւան հանես ու ասոր վրայ զինքը պարսաւ  
ւես . այս կերպիւս շիշրակլովի նէ , ալ իրաւ  
ալ զուրցէ նէ զուրցածին չես հաւտար :  
Իր առջին ստախօսները , խաբեբայները  
վար կրղարնես . վերջապէս երդումէն զբը  
պարտութիւնէն ինչ գէշութիւններ կը  
պատճառին թէ իրեն և թէ ուրիշներուն ,  
ասիկայ աղէկ մը տղին մտքին մէջ տպաւ  
ւորելով իրեն Աստուծոյ երկիւղ կրնեբ  
գործես :

Ասոր հակառակը տղան պարզամիտ ըլ  
լայ ու չափազանց անկեղծութիւն ունե  
նայ նէ , զինքը ուղղելու համար խելմը  
թիւր բաները գաղտուկ մը ականջէն կը  
զուրցես . երբոր ետքը բերնէն դուրս  
տայ նէ , գաղտնիքս պահել չիսխոցար ըսե  
լով կրպարսաւես . ու երբեմն անանկ գաղաւ  
նիքներ կրղատես որ անոր յայտնելը իրեն  
դրպչի , ինչպէս խնձոր մը կայ իրիկուան բեւ  
ղի պիտի տամ , բայց մէկ հատ մըն է . թէ  
որ մէկալ եղբայրներդ ալ լսեն նէ անոնք  
ալ կուղեն , ուստի անոնց բան մըսեր . ու  
աս զուրցածդ մէկայներուն առջին՝ ական  
ջէն ՚ի վար զուրցէ . թէ որ երթայ բեր  
նէն փախցընէ նէ , խնձորը մէկայներուն  
կուտաս , իրեն չես խտար , ըսելով որ թող  
չերթայիր զուրցէիր . այս կերպովս տղան



ամէն միտքին մէջինք զուրցելէն կըզգու-  
շանայ :

Ամէն մոլութեանց վրայ զուրցելը եր-  
կար կըլլայ մէկ քանի հարկաւորներ ալ  
կան անոնց վրայ ալ խօսիմք և լմընցընեմք :

Նախ խղճահարութիւն և սնապաշ-  
տութիւն . և ասոր հակառակը անհաւա-  
տութիւն և Պատուծոյ երկիրը չունենալ .  
հաւատալը բնական բան մը , և հողւոյն  
մէկ պիտոյքը ըլլալը ասկէ առաջ հասկը-  
ցուցինք . բայց հաւատքը շիտակ չիբալէ ,  
միշտ իր նպատակին չինայի նէ , մէկ կողմը  
կամ մէկալ կողմը կըխտտորի . ուրկէ յա-  
ռաջ կուգայ նախ սնապաշտութիւն , այն է  
խեղճը խենթութեան թ բաներու հաւատա-  
լը . և անոնք մէյմէկ զօրութիւն կարծե-  
լը : Արկորող խղճահարութիւնը : Խղճա-  
հարութիւնը վախ մըն է անկարգ ու ան-  
պատճառ . մեզք չեղած բաները մեզք սե-  
պելով , խղճահարը ինքրզինքը միշտ կը-  
տանջէ . երբեմն ուրիշներն ալ , իր ազգը ,  
կամ բոլոր աշխարհք ալ կըտանջէ . իր  
բարեկամը , իր եղբայրը , իր մայրը , կը-  
մեռցընէ իր հաւատքը անկարգ կերպով  
բռնելէն : Նմանապէս Մտուած աղէկ  
չիճանչնալէն յառաջ կուգայ անհաւա-  
տութիւն և Պատուծոյ չխլախնալը : Նախ  
սա զուրցեմ որ բոլորովին անհաւատ մը  
անկարելի է որ գտնելի , ես ատ չեմ կրնար

հասկընար : Աս աշխարհքիս վրայի կարգը ու կանոնը և մեր ներքին զգացողութիւնը տեսնալով , ՚ի հարկէ մարդ ասոնց պատճառը պիտի փնտրուէ . նայէ անհաւատ ըսած մարդոցմէ մէկը կայ որ աս պատճառը չիփնտրուէ . ըսել է որ կրհաւատան որ արարչագործութիւնը պատճառ մը ունի . ըսել է որ արարիչի մը կրհաւատան կոր , բայց արարիչը Յունաց համար Վիտոսն է , Հրէից համար Աստուածն է . Չինիմաչինցւոց համար կուռքերն են , անհաւատ կամ անաստուած ըսածներնուս համար ալ բնութիւնն է կամ ուրիշ պատճառ մը . բայց միշտ մէկ բան մը կայ . ընտոր որ Յոյները անաստուած չեն կրնար ըսիլ , անանկ ալ անաստուածները անաստուած չեն կրնար ըսիլ . միայն ըսել է որ Աստուած աղէկ չեն կրնար կոր ճանչնալ . ուստի անհաւատ ըսելը , անաստուած ըսելը՝ Աստուած աղէկ չիճանչցող ըսել է . ըսել է որ անաստուած չիկայ :

Գանք հիմայ աստուծմէ չիլախնալուն . աս ալ նոյն պատճառէն յառաջ կուգայ . մէկը թէ որ Աստուած աղէկ ճանչնար նէ , Աստուծոյ արգարութեն ալ կրհաւատար . Աստուծմէ չիլախնալու համար պէտք է որ Աստուածը աղէկ չիճանչնայ . և Աստուծոյ արգարութեանը չիհաւատայ : Արկնեմք

զուրցածնիս, անհաւատ չիկրնար դանը  
 վիլ. մեր անհաւատ ըսածնիս Աստուածը  
 աղէկ չիճանչցող մըն է. ասանկ ալ խղճա-  
 հարը, սնասպաշտը ու աստուծմէ չիվախ-  
 ցողը, Աստուածը աղէկ չիճանչցողներ են :  
 Աւստի տղայ մը տեսնաս որ խղճահար կամ  
 սնասպաշտ, անաստուած կամ Աստուծմէ  
 չիվախցող է նէ, ուրիշ բան մըներ զին-  
 քը ուղղելու համար, բայց միայն զԱստ-  
 ուած ճանչցուր. հետը սկրսէ տրամախօ-  
 սել, աս բանը մեղք է կըսես կոր, ինչո՞ւ.  
 Աստուծոյ չես հաւտար կոր, անանկ է նէ  
 աս աշխարհքը ո՞վ չինեց. ասոր ճարտա-  
 բապետը ո՞վ է. ասոնց վրայ խօսելու ա-  
 տենըդ աստուածաբանութեան մէջէն տը  
 զուն համար անհասկանալի եղած դու-  
 թիւնները մերթար իրեն դործածեր :  
 Աստուած ճանչնալը՝ այսչափ դժար բան  
 չէ : Տղին իմանալու կարողութեանը յար-  
 մար ձեւերով խօսէ. թէ որ տղան զուր-  
 ցածըդ հասկընալու կարողութիւն չունի  
 նէ, ըսել է որ անոր Աստուած չիճանչնալը  
 իրմէն չէ, թութակի պէս ըսեր է. ան ա-  
 տենը տղան որին վրայ վարկում ունի նէ  
 անիկայ իր առջեւը կառնէ, ան կրխորա-  
 տէ : Թէ որ տղան Աստուծմէ վախ չունի  
 նէ, ըստ որում Աստուծմէ վախնալը՝  
 սարսափիլ չէ, այլ մի միայն արդարու-  
 թեան մը հաւատալ է. ըսել է որ տղան

արդարութեան մը չի հաւատար և չի հաւատալովն ալ անողորմ պիտի ըլլայ : Հոս միայն տրամախօսելով չի ըմբննար . հասլա իրօք ալ Աստուծոյ արդարութիւնը ցրցունելու է : Թէ որ սղան փարթամ է նէ , իր տունէն կը հանես , կառնես աղքատի մը տուն կը տանիս , հոն իրեն աղքատի հանդերձ կը հագցնես , աղքատի աղոց հետ կընստեցնես , անոնց հետ ուտէ , խրմէ , ելլայ , նըստի , պառկի . այն խեղճութեանց մէջը 'ի հարկէ իր առջի վիճակը՝ ետքինին հետ պիտի բաղդատէ . ասանկ խեղճութեան մէջ մնալով Ամենարդարին 'ի հարկէ պիտի դիմէ . բայց ասիկայ Ղիզիլիթներուն համար պատմելածին չինքմանի . կըսեն թէ՛ ասոնց հրամանաւը՝ հարիւրներով անմեղ աղջիկներ Սառտէնեսայի մէջ և ուրիշ տեղեր մուծու խոնաւ բանտերու մէջ բանտարգէալ , փարթամ աղքատ ինչ կըլլան նէ ըլլան , իրենց ճնողքներէն զրկուած , հոն խեղճութեան կրկենան մինչեւ որ խոստովանահայրնին կամք ընեն անկէ աղատելու . ասոնցմէ տարին հարիւրին յիսունը , վաթսունը , կըմեռնին եղեր . ասիկայ անողորմութիւն մը անգթութիւն մըն է որ զաւկի տէր ըլլողներուն դործը չի կրնար ըլլար . ուստի կուղեմք որ ճնողքը՝ աղքատի տուն անանկ երեսէ չի ձրդեն իրենց զաւակը , երթան

այցելու թիւն ընեն շարաթը քանի մը անգամ, ու երբ որ տեսնան որ իր զղջումը ճշմարիտ է, ան ատենը՝ նորէն իրենց քովը սիրով պիտի ընդունեն ու անցածը բնաւ երեսին չիպիտի տան :

Անապաշտ տղան ուղղելը քիչ մը դժար կըլլայ թէ որ իրեն սնապաշտութի սորվեցընողներուն քովը կենայ նէ. ուստի պէտք է որ անոնցմէ զատես կամ թէ անոնց քովէն չիզատես ալ նէ, պէտք է որ տղան սրուն վրայ վարկում ունի նէ, անիկայ սկսի ծաղը ընել չէ թէ միայն սնապաշտութիւնները, հասա սնապաշտութեան գաղափար տուողն ալ: Ինչ բան որ իրեն շար կըգուշակէ, ինչ խենթ բանի որ կըհաւտայ նէ, յատուկ ան բաներուն վրայ պէտք է որ խնդայ, ու տղան ալ խընդացընէ. տղան մէյմը խնդայ նէ, ալ անկէ հաւտալը կըվերցընէ: Արանի թէ սընապաշտութեան գաղափար տուողը հայրը կամ մայրը չըլլար, որովհետեւ երկու չարին մէկը զատելու է. կամ տղան իր սնապաշտութեամբը ձգելու է, կամ տղին հօրը մօրը վրայ ունեցած վարկումը կորսընցընել տալու է:

Արմընայ հիմայ ընչասիրութեան վրայ ու ասոր հակառակը շուայլութեան վրայ զուրցել: Ինչքի տէր ըլլալը բնական բան մըն է. իմ մարմինս, իմ ձեռքս, իմ ոտ-

քրս կրսեմք . ուստի ըսել է որ մարդը է-  
 ապէս իրեն յատուկ բան մը ունի . հիմայ  
 աս մեր յատուկ ունեցածնիս պահպանե-  
 լու ու ապրելու համար կաշխատիմք մը  
 տօք և մարմնով . երկիրը կրբրբեմք , փախ-  
 չող անասուններուն ետեւէն կիյնամք կը  
 բռնեմք , ձուկը ծովին մէջէն կորսամք ,  
 ծառերէն փաստ կրկրտրեմք մեզի տուն  
 կըշինեմք , և այլն . ըսել է որ բնական  
 բան մըն է ընչից տէր ըլլալը : Թէ որ ընչ  
 քի տէր ըլլալու իրաւունք չունենայինք  
 նէ՝ գողութիւն ու ողորմութիւն ըսլած  
 բառերը պիտի եղծանէինք իրական բա-  
 ներուն վրայօք : Եւայց թէ որ ընչից տէր  
 ըլլալ կայ նէ՝ ՚ի հարկէ մեկին քրտինքովը  
 ձեռք բերած բանը իրն է , և առանց իր  
 կամքին ուրիշին անցնելը գողութիւն և յա-  
 փշտակութիւն է . ու իր կամօքը ուրիշին  
 տրբովիը ողորմութիւն է : Ա երջապէս ըն-  
 չից տէր սեպիւելու համար , նախ պէտք է  
 որ աշխատիս , կամ ուրիշ մը իր ինչքը իր  
 կամօքը քեզի տայ : Աւստի տղայ մը ին-  
 չուք որ աշխատելով բանի մը տէր ըլլալու  
 կարողութիւն չունենայ նէ , իրենը չեղա-  
 ծը գիտնալ սորվի պիտի . ու ինչ որ իրեն  
 տրվերեն նէ ճնողքը կամ բարեկամները՝  
 անոնք պարգեւ սեպէ , ու ուրիշին բա-  
 նին չիմօտենայ :

Տղայ մը ուրիշի մը բանը առնէ կամ



գողնայ նէ , նախ պէտք է որ բնաւ մէկ  
ուրիշ մը իր գողութիւնը բրածը չիլըսէ . գուն  
ալ կրկանչես զինքը , բրածը գողութիւն  
ըլլալը իրեն կը հասկըցընես ու միանգա  
մայն գողութիւնը անկարելի կընես , ինչ  
բան կընայ գողնալ նէ վերցընելով , սա  
հելով : Նքը աշխատանքի կրխօթես , ա  
սով ալ ուրիշ ընթացք մը տուած կըլլաս  
իր գործունէութեանը : Կր առջին գողու  
թիւնը ու գողերը կարհամարհես , առա  
տաձեռնութիւնը և անշահախնդրութիւնը  
կը գոյլես :

Տղան երկու պատճառաւ կը գողնայ .  
մէյմը ընչասէր ըլլալուն , մէյ մըն ալ շոտը  
ընչասէրին քով ինչք ունենալու կիրքը  
այնչափ հզօր է որ ինչ գանայ կառնէ կը  
պահէ , ինքն ալ չի վայելը : Աս կիրքը աւե  
լի ծերերուն քով կը գանըվի , քան թէ  
տղոց քով . բայց տղոց քով ասանկ մտւ  
թիւն մը տեսնաս նէ , կերթաս բոլոր  
ժողոված ու իրեն պէտք չեղած բաները  
կառնես , աչքին առջին աղքատներու կը  
բաժնես , կամ թէ կարելի է նէ իրեն ձե  
ռօքը բաժնել կուտաս . ու ետքը իրեն  
բան մը ինչուք շատ պէտք չըլլայ նէ չես  
չիներ , ըսելով որ չինեմ ալ նէ չես վայե  
լեր կոր . անանկ է նէ ինչ պիտի ընես :  
Կրսէն մէկուն ողորմութիւն տաս պիտի  
նէ իր ձեռօքը տալ կուտաս . կամ թէ

բան մը աալու ատենըդ իրեն ալ կըհար-  
ցունես , աղքատ մը եկեր է , ես սա պի-  
տի տամ , դուն ալ տալու բան մը ունիս  
թէ չէ . թէ որ ունի ու անունը չիտայնէ ,  
դուն կըլիշես ու աչքին առջին կառնես  
կուտաս :

Ասոր հակառակը՝ տղան շոայլ ըլլայ  
նէ , ինչ որ ձեռքը անցնի , անդին ասդին  
կըլատնէ . առատաձեռնութեանը դէմ  
մի գար , բայց կարգադրէ . ունեւորին  
առատաձեռնութիւնը չունեւորի ձեռք  
շոայլութիւն է . պարզեւ մը աղքատի  
տըրլի նէ ողորմութիւն կըլլայ , ու անկա-  
րօտի մը տըրլի նէ անխելքութիւն . ուստի  
պէտք է որ տղին հասկըցընես որ անկա-  
րօտի մը բան մը տայնէ՝ առնողը խաբե-  
ցի ըսելով վրան պիտի խնդայ : Բայց  
աղքատի մը տայնէ , աղքատը անով իր  
ապրուստը կըճարէ . ինքն ալ բարեբարու-  
թիւն մը ըրած կըլլայ որով Աստուծոյ  
նմանելու մէկ առիթ մը պիտի ըլլայ իրեն :  
Բայց տալու խրատըդ այն կերպով պիտի  
ըլլայ որ՝ աղքատի մը ողորմութիւն տա-  
լու ըլլայնէ , այն աղքատին ապրուստ ու-  
նենալը չունենալը ճշգրիտ ետեւէն իյ-  
նալ հասկընալ՝ և անկէց ետքը ողորմու-  
թիւն տալը կամ չիտալը որոշել՝ իրեն  
հարկ սեպէ :

Ասանկ ալ թէ որ իր կարողութենէն

վեր պարգեւ տայ նէ, ասիկայ ինքրզինքը  
զրկելու մէկ առիթ մը պիտի ըլլայ իրեն.  
'ի հարկէ իր ունեցածը սպառելովը ուրիշ  
չին կարօտ պիտի ըլլայ: Ասիկայ միայն  
խօսքով հասկըցընելու չէ հասպա գործով  
ալ, առանց գիտցընելու որ ձեռքի տակէ  
դուն կրխորկես կոր, շուայլ տղին քով մէկը  
կրխորկես, ձեռքէն մէկ բան մը կառնէ,  
դուրս ելլայ նէ, հնարքով մը ձեռքէն  
յսօրչտակեցի ըսելով վրան կրխնդայ ու  
տղան աս լտէ նէ, մէկ մըն ալ անանկ դէմը  
ելած մարդուն բան չիտար:

Ար ինչքը սպառէ նէ, ինքրզինքը կա-  
րօտութեան մէջ կը ձրգես, ասանկով ինչ-  
քը յարգել կը սորվի:

Շուայլութիւնը պղտիկուց անցընելու  
նայէ, սրովհետեւ ատկէ շատ մոլութիւն  
ներ յառաջ կրնան գալ, նախ և յառաջ  
ըստակով խաղալը որն որ տուն աւրբովե-  
լու շատ անգամ պատճառ կը ըլլայ ու գը-  
րեթէ չի գիտեմ, որ մոլութիւնը ատոր  
չափ գարշելի է:

Արիշ չար սովորութիւն մըն ալ կայ որ  
քիչ մը չափահաս տղոց քով կը տեսնելի,  
մանաւանդ քովերնին մարդ չի գըտնելի նէ,  
ամէն մարդ կը հասկընայ ինչ ըսելիքս: Ախ  
ասիկայ մարմինը կը տրկարացընէ, կը հի-  
ւանդացընէ, ու մահ անգամ կը բերէ.  
Երկրորդ միտքը կը կուրացընէ ու գրեթէ

ատենէն առաջ կրճերացրնէ թէ մլտքի թէ մարմնոյ կողմէն . ուստի ասոր առջեւը առնելու ջանալու է ամէն կերպիւ : Այս սովորութիւնը երբեմն տանը մէջ գտնելով՝ ծառայներէն կամ տղին տեսած մարդոցմէ կըյառաջանայ , ուստի ուրիշ կասկած ունիս նէ , իսկոյն այն մարդը տըղէդ կըհեռացրնես . բայց ուրիշ բնական պատճառներ ալ կան , ինչպէս Սոլլոմոն ունենալ և այլն . մարմնոյն կողմանէ ընելիքներուն վրայ չեմ զուրցեր , որովհետեւ ընելու գեղըդ պէտք է որ բժիշկը տեսնալէն ետքը զուրցէ : Այլ քու ուրիշ ընելիքներդ ասոնք ըլլալու են , նախ տղան մինակ չի ձգել . երկրորդ ցորեկը աշխատոցրնել քալել տալով պտըտոցրնելով հոգնեցրնել , որ իրիկունը եկածին պէս քնանայ . երրորդ տղին մէկ գործ մը բանալ որուն հետ տըղին միտքը զբաղելով ուրիշ կողմ չիտտորի :

Ուրիշ շատ մոլութիւններ կան որոնց վրայ չեմք ուզեր զուրցել , որովհետեւ աս զուրցածներէս անոնց համար ընելիքները ամէն մարդ կրնայ հետեւցրնել :

Տղան իր կրիցը ու մոլութեանցը վրայ խօսքով և գործքով խրատելէն ետքը , տեսնաս որ չուղղի նէ , ան ատենը պատժելով ուղղելու նայելու է : Պատիժը բնական է , բայց պատժելէդ առաջ

պիտի գիտնաս երբ՝ ու ի՞նչպէս պատ-  
 ժեղիքրդ : Այլ որ , բոլոր ընե լիքնե-  
 րդ լմնցնես , տղան ուղղելու բոլոր  
 միջոցները հատցնես , ու անկէ ետքը  
 դաս պատժելու . վերջապէս պատժելու  
 ատենըդ կարենաս իրեն զուրցել , ես սա  
 ժամանակ քու կին սա յանցանքդ տեսայ ,  
 բարեկամաբար քեզի խրատեցի , ան ա-  
 տենը քեզի հասկըցուցի որ ատ բանէն սա  
 գէշութիւնները կը պատահին . բայց դուն  
 իմ զուրցածիս մտիկ չըրիր : Ամբաս՞ գէ-  
 շութիւններս անկէ ետքը՝ անգամ անգամ  
 գլուխդ եկաւ , ու բիշներէն ալ ատ բանին  
 գէշ ըլլալը լսեցիր . ասոնցմով ալ չիտը-  
 րատուցար : Քանի մը անգամ քեզ հնա-  
 զանդեցրնել , պատժել պէտք կըլլար , բա-  
 րեկամդ գտնելու խղճացի , չըրի .  
 բայց կը աեսնամ որ ասանկ երթալով՝ աս  
 ըսած գէշութիւններս օրէ օր պիտի շատ-  
 նան . դուն ուրիշներուն իրաւունքին կը  
 դայչիս կոր , դուն սա ժամանակը սա ըրիր  
 և այլն . ուրեմն քեզի պատժելը թէպէտ  
 իմ շուղելովս է , բայց պարտաւորութիւն  
 մըն է ինձի , որովհետեւ քու կին ըրածդ  
 ինձմէն կը հարցըլի : Աս կերպիւ պատժե-  
 լը՝ ամէնն ալ կը հասկընայ որ տղին ամէն  
 պակտութեանը համար չըլլար : Բունես  
 տղան վախկոտ է տէյի պատժեսնէ , ա-  
 ւելի վախկոտ կըլլայ . կամ թէ ասանկ



մեծ դատաստան ընելու կերպերով պատ-  
 ժելու ելլաս պղտիկ պակսու թեան մը հա-  
 մար նէ , ան ատենն ալ տղան վրադ կը-  
 խընդացընես . ըսել է որ պատժելը քանի  
 մը մտլու թեանց վրայօք պիտի ըլլայ , ինչ  
 պէս գողու թիւն և այլն :

Պատիժը ի՛նչ բան ըլլայ պիտի : Պատի-  
 ժը՝ ինչպէս որ առաջ ալ քանի մը տեղ ը-  
 սի , ուղղելու միջոց մը պիտի ըլլայ : Յա-  
 տալը կամ թէ ասոր նման ուրիշ պատու-  
 հաս մը՝ այս միջոցը կրնայ մի ըլլար : Միտ-  
 քրս կուգայ որ դպրատուն գացած ատե-  
 նըս ինձի դասընկեր տղայ մը կար , բնա-  
 հանդարտ չէր կենար , վարժապեան ալ  
 մէկ դիէն կրճեծէր , ու շաբաթ չէր ըլ-  
 լար որ քանի մը անգամ ծեծ չուտեր . բայց  
 այս ծեծելուն արդիւնքը սա եղաւ որ քա-  
 նի որ գնաց տղան սկըսաւ իր անկարգու-  
 թիւնները շտոյրնել . սկըսաւ վարժապե-  
 տին հետն ալ իյնալ . անանկ որ վարժա-  
 պեար հարկագրեցաւ տղան դպրատունէն  
 վաճառելու . ըսել է որ այս կերպովս ուղ-  
 զելը անկարելի է : Տղաքը մէկ դի թողունք  
 մեծ մարդոց տրված պատիժները նայիմք .  
 Ես բնաւ չեմ գիտեր կոր՝ որ գողմը թիւ  
 երեք տարի մնալովը , գողութեն կտրեցաւ .  
 Փարիզու դատաստանարաններուն պա-  
 տահմունքները կարդան . կրտսննաս որ գու-  
 ղերուն շտաբ երկու երեք անգամ առաջ



Թին գացողներն են , հոս ատեն մը , մինչեւ մօտերս սրահաս ծախողները կրճեծէին , կարծեմ սրահաս ծախողները շատ ցանքան թէ քիչցան . ըսել է որ մարմինը պատժելը մէկ մեծ արդիւնք մը չունենար : Սարմինը ամէն բանի կրտորի , ցաւի ալ , ծեծ ուտելու ալ , աշխատելու ալ . ու մէյ մը սորվինէ , ալ մարմինին վրայ պատիժը ներդարծու թիւն չունենար . ցաւ ալ անգամ չիմանար : Արի յիշած տղին կըհարցունէի որ ինչպէս աս ամէն օր ծեծ ուտելու կըդիմանաս . ինձի կըպատասխանէր որ դուն ալ ամէն օր ծեծ ուտես նէ , ոտքիքներդ ծեծի կըսորվին : Օրծելը՝ մարմինը պատուհասելը՝ անասունները ուղղելու համար պահենք . մարդուս իր մէջը միտք մը ու սիրտ մը կայ , պատժես պիտի նէ անոնք պատժէ , որովհետեւ գէշու թեան պատճառն ալ անոնք են :

Տղան պատժել կուղես , աչքէ ձգէ . զուրցէ որ ալ իրեն բարեկամը չես , իր ատիճանը պրզտիկցուր , ալ ինքը տղիդ տեղը մի բռներ . բայց ալ քեզ տղիս տեղը չիպիտի բռնեմ ըսես նէ , խօսքրդ բռնէ : Տղադ պատժելովդ ուղղել կուղես , ձգէ որ իր գէշ բրածին վրայ աղէկ մը մըտմտայ ու զղջումի գայ . բռնէ զատէ իր ընկերներէն , զատէ քեզմէ ու քովիններէդ , դիր սենեակի մը մէջ անանկ մինակ , հոս

Թող ատեն մը կենայ , ինքնիրենը իր բրա-  
 ծին ու քու բրածիդ վրայ կրմբումբտայ .  
 իր գիտակցութիւնը իրեն կիմացընէ քու-  
 կին իրաւունք ունենալըդ . և երբ որ տեսնայ  
 որ դուն ալ գիւրաւ մը չիպիտի ներեսնէ ,  
 կամք կընէ մէյ մըն ալ չընելու . ասանկով  
 սրտանց կըզղայ , անիկայ քեզի իր բան-  
 տէն մարդ կըխտկէ , մէյ մըն ալ չընելու  
 խոստմունք կուտայ . ան ատենը առջեւդ  
 կըկանչես , մէյ մըն ալ չընելուն խօսք կառ-  
 նես , բայց իր խօսք տուածը տեսնալովդ իր  
 հետը առջինը չըլլաս , միշտ գիտցուր որ զին-  
 քը զաւակ չես ընդունիր , զաւակ ընդունե-  
 լու համար պէտք է որ գործքերովը ար-  
 ժանաւորութիւն ցրցունէ զաւակ ըլլա-  
 լու : Արեսս որ իր խօսքին չիպիտի հաւ-  
 տաս , որովհետեւ ան քու խօսքիդ ատե-  
 նօք չիհաւատայ . տուած խօսքին չիսակ  
 եղածը Թող գործքով ցրցունէ : Անկէ  
 ետքը աչքդ տղին վրայ կըլլայ , ամէն ընե-  
 լըքներուն կընայիս : Ալ Թէ որ տեսնաս  
 որ իրաւ խօսքը կըբռնէ , կամաց կա-  
 մաց բարեկամութիւնդ նորէն իրեն կու-  
 տաս . ու երբ որ բոլորովին իր մոլութե-  
 նէն ետ կենալը տեսնասնէ , ան ատենը  
 դուն ալ իր առջի աստիճանը կընդունիս .  
 առջի բարեկամութիւնդ իրեն կուտաս  
 ու մէյ մըն ալ անցածին անունը անգամ  
 չես խտար :

Երբ որ առջի անգամին տղան կարգի չիմըտնայ նէ, նորէն սենեակին մէջ կըգոցես . բայց այս երկրորդ անգամին դիւրաւ մը չես հաներ . կարծեմ անանկ տղայ չիկայ որ երկրորդ, երրորդ անգամ մը պատժւիլելու արժանի ըլլայ :

Բայց թէ որ պատահի նէ, ան աւտենը բոլորովին քեզմէ կըզատես . բարեկամի մը կըյանձնես . և այս բարեկամը պէտք է որ տղայ կառավարել գիտցող ու ծանր գլուխ մարդ ըլլայ . անոր քովը տղան ծառայի աստիճան պիտի ունենայ . դուն ալ ան բարեկամին տունը երթաս նէ, տղադ օտարականի մը պէս տես . բայց երբ որ ետքը՝ տղին կարգի մըտնալը բարեկամդ քեզի խապար տայ նէ, ան ատենն ալ նորէն քովդ ընդունէ : Ահա այս կերպերով տղան կըրնաս ուղղել :

Տղայ մը խրատելը, պատժելը և ուղղելը վերջապէս իր բարքը շտկել և կրթելը մեծ գործ է . բայց այս գործը որչափ ալ մեծ և որչափ ալ դժար ըլլայ, ճնողաց անանկ մէկ պարտքն է որ ատկէ փախչիլը բարոյական սակասութեանց մեծն է . տղաքը ճնողաց ինչքը չէ, այլ միայն նախախնամութեան կողմանէ իրենց աւանդ մըն է . ասիկայ օր մը իրենցմէ պիտի հարցրի ու ուղղի աղէկ գիտնան . ուստի չի կարծեն որ իրենց տղոցը ինչ որ ընել ու-

ղէն , իրենց ներելի է :

Տղան պէտք է որ իր ճնողացը քով սորվի հաւատալ , սիրել և հնազանդիլ , նախատես ըլլալ ու պէտք եղած տեղը ճարպիկու թիւն բանեցընել , բարերարու թիւն ընել ու ներել , համբերել ու ծանր կէնալ , վերջապէս իր պարտքը կատարելուն համար իր անձին շահը մոռնալ . ու երբոր տղան այս կերպը մըտնայնէ , ահա ան ատեն , Աստուծոյ ուղած կերպը մըտած կրտսւպի ու միայն այն ժամանակը ամենագեղեցիկը փնտրուելու , իր գործքերը ամենագեղեցիկին նմանեցընելու ջանք կրնայ ընել , և Աստուծոյ կրնայ մօտիկնալ :

Աստուծոյ անհուն գործքերը տեսնալու ու գիտնալու համար իր իմացողական կարողութիւնը կրթելիք ալ մէկ ուրիշ պարտք մըն է քեզի : Մտ որում տղան իր գործքերուն մէջ զԱստուած իրեն առաջնորդ պիտի բռնէ , ուրեմն Աստուծոյ ըրած բաները գիտնալը իրեն հարկ է . բնութեան գործքերը Աստուծոյ գործքերն են , ու բնական գիտութիւնները . Աստուծոյ մեծութիւնը անհրաժեշտ կերպով մը մեզի կիմացընեն . ուրեմն պէտք է որ տղան ասոնց վրայ ծանօթութիւններ ունենայ և այս ալ չէ թէ միայն Աստուծոյ մեծութիւնը գիտնալու ու ճանչնալու համար , հասցա Աս

տուճոյ մէկ ուրիշ կամքն ալ կատարելու համար, այն է ընկերութեան ձեռնտու ըլլալ : Թէ որ ընկերական վիճակը բնական է նէ՛ ՚ի հարկէ ընկերական վիճակի մէջ աստիճան մը ձեռք անցընելու ջանք ընելն ալ բնական է . և ասիկայ թէ որ օրինաւոր կերպիւ ըլլայ նէ, Աստուծոյ ալ մէկ ծառայութիւն մը բրած կրլլաս :

Ուստի կուզեմք որ տղաք չէ՛ թէ միայն Աստուծոյ գոյութեանը, կամ ուրիշ վերացեալ բաներու վրայօք ծանօթութիւն ունենան պզտիկուց ու անոնց վրայ ճիշտ կերպիւ դատել ու կամիլ սորվին . այլ և իրենց մարդկային պարտքերնին ալ ճանչնան . մարդոց մէկըզմէկու օգնելու ու հաղորդակցելու համար պէտք եղած բաներն ալ գիտնան ու դատեն :

Մի կարծեր որ լոկ մարդկային իրերը և մարդկային գիտութիւնները հագեւոր իրերու և գիտութիւններու հետ կապակցութիւն մը չունի . ասիկայ ապացուցանելու համար պատմութիւնը կամ աշխարհագրութիւնը առնեմք . ու կուզես նէ սրբազան պատմութիւնն ու աշխարհագրութիւնն ալ մի դատեր, հապա կռապաշաներու ըրածներուն ու բընական տեղերնուն պատմութիւնն ու աշխարհագրութիւնը կարդա՛ . պատմու

Թեան մէջ որ տեղի պատմութիւն կրկայ  
 ըլլայ, մէկ դար մը ծարէ ՚ի ծար կարդա-  
 լով, անկարելի է որ երեւելի գործքեր,  
 յառաջադիմութիւն մը կամ կործանում  
 մը չխտենաս. փնտրուեսնէ կրգընաս որ  
 ուամիկին, տգէտին կարծեացը հակառակ  
 ասոր պատճառը ոչ բաղդն է և ոչ դիպ-  
 ուածը, հասրա մէկ աստուածային ար-  
 դարութիւն մը կայ որ մարդկային գործ-  
 քերը կըշտի: Արտեսնաս որ սա աղգին  
 կործանմանը պատճառը մէկ սխալ մը կամ  
 մոլութիւն մըն է. ուրիշ աղգի մը գալ  
 յաղթելուն պատճառն ալ առաքինու-  
 թիւն մը կամ ճշմարտութիւն մը: Վարդ-  
 կային գործքերը այս մտքը զննելովդ՝ հո-  
 գին Աստուած կըբարձրանայ. Աստու-  
 ծոյ ամենակարողութեան նըշոյնները ա-  
 մէն տեղ ու ամէն դարու մէջ տեսնա-  
 լով, Աստուծոյ առջին ևս առաւել կը-  
 խոնարհի: Աղգի մը պատմութիւնը սոր-  
 վելովնիս մեր մարդկային վիճակին հա-  
 մար ալ անկէ օգտաւոր դասեր կըրնամք  
 հանել. ուրիշներուն սխալէն ու մոլու-  
 թեանցը վախճանը ինչ եղածը, անոնց  
 առաքինութիւնը ու ճշմարտութիւնը ինչ  
 պողաբերելը տեսնալովնիս անկէ մեղի սը-  
 տուղ կըբաղեմք. մեր ընելիքները անոր վը-  
 րայ կըշտիմք: Աղգի մը պատմութիւնը  
 կարգալով, իրեն սովորութիւնները կը-



գիտնամք ու կրտորվիմք : Այլ այս կերպիւս  
ալ, անոնց հետ հաղորդակցելու, անոնց  
հետ խօսելու ու գործելու սկզբնաւո-  
րութիւն մը բրածի պէս կրըամք. ու եր-  
բոր ետքը պէտք ըլլայ նէ, անոնց հետ վար-  
վիլը առաջկուց գիտցած կրըամք, տգէտ  
չեմք ըլլար :

Ասանկ ալ աշխարհագրութիւնը. տե-  
ղին գիրքը, և բնութիւն ուրիշ գիտութեան  
ներքը մէկիկ մէկիկ աչքէ անցընելով՝ աստ-  
ուածային նախախնամութեան բարեբարութի-  
ւները բացէ ՚ի բաց կրտեսնամք : Հոն կը-  
տեսնամք և կրտորվիմք բնական օրէնքնե-  
րուն ճշմարտութիւն և այլն : Այս կերպիւս  
կրտեսնաս որ աշխարհագրութեանէ չէ թէ  
միայն վաճառականը, զօրապետը, նաւա-  
վարը, կամ ուրիշ մէկ արհեստաւոր մը օ-  
գուտ կըբաղէ. չէ թէ միայն մարմինը իր  
կարիքները հոգալու ու ինքըզինքը ասպա-  
հովելու կերպը կրտորվի. հասպ հոգին ալ :

Ասանկ ալ ուրիշ գիտութիւն մը, որ  
առաջին նայուածքով բնաւ կասկածու-  
թիւն մը չունի հոգւոյն հետ, ինչպէս  
թուաբանութիւնը, ալճէպրան, երկրա-  
չափութիւնը և մաթէմատիքական ուրիշ  
գիտութիւնները, մըտմբտա անգամ մը.  
ինչ հետեւութիւններ ունին աս գիտու-  
թիւնները : Հաշուելով, չափելով չէ թէ  
միայն մեր գործնական և առտնին իրերը,

մեր առուտուրը և արհեստները կրկար-  
 գադրեմք, հասցա չափել ու հաշուել սոր-  
 վելովնիս մեր միտքը սովորութիւն մը կրս-  
 տանայ ինչ գաղափար ինչ բան որ պիտի  
 ընդունի նէ, չափելէն ու հաշուելէն ետ-  
 քը ընդունելու. ուստի մեր գաղափար-  
 ները ճիշդ կրլլան և մենք ալ սուտին ու սը-  
 խալին դիւրահաւան չեմք ըլլար : Թէ որ  
 հաշուելը ուրիշ բանի մը օգուտ չունենա-  
 լով միմիայն դատումնիս ուղղելու միջոց մը  
 ըլլար ալ նէ, պէտք էր որ միշտ անոր ե-  
 տեւէն իյնայինք. որովհետեւ պինդ մեծ  
 սորվելիքնիս ուղիղ դատել պիտի ըլլայ,  
 բայց հաշիւը ու չափը մեզի ուրիշ կեր-  
 պով ևս առաւել պէտք է :

Հաշիւն ու չափը՝ արեւէն չափազանց  
 հեռաւորութիւնը և մեծութիւնը կը  
 գիտցնեն. հաստատութեան մէջ բովան-  
 դակած աստղերուն մէյմէկ արեգակն ըլ-  
 լալը չափելով և հաշուելով կըգիտնամք,  
 միանգամայն անոնց մեծութիւնը գիտնա-  
 լու կարող չըլլալնիս ալ կըճանչնամք : Մ<sup>ս</sup>  
 անհնարին մեծութիւնները մեր երկրին  
 պզտիկութեանը հետ կըբազդատեմք. մեր  
 պզտիկութիւնն ալ երկրիս մեծութեանը  
 հետ բազդատելով, ասկէ մեզի անհնա-  
 րին պզտիկութիւն մը հետեւիլը կրտես-  
 նամք. արարչագործութեան մէջ մեր չըն-  
 չին ու անհնարին պզտիկ էակ մը ըլլալնիս

տեսնալէն ետքը , Աստուծոյ նախախնամութիւնը ամէն օրվան մեզի տարած հոգերը ու խնամքները միտ կառնեմք . անոնց վրայ կրմբտմբտամք և կրղարմանամք :

Աչքիլնիս ստբիլնուս տակը դարձրնեմք նէ , հոն ալ խել մը պղտիկութիւններ կրտեսնամք . աշխարհքներ կրգտնամք մասնաշափ տեղւոյ մը մէջ , ու անթիւբնակիչներով լեցուն , որոնց գոյութիւնը հազիւ թէ խոշորացոյցները մեզի կրգիացրնեն : Աս անհնարին պղտիկութիւններուն ալ նախախնամութիւնը կերակուր կրպատրաստէ . անոնց համար ալ չափ մը կանոն մը դրուած կայ . ասոնք տեսնալովնիս Աստուծոյ ամենամեծութեան և բարերարութեանը առջին կրխոնարհիմք : Տեսա՞ր՝ հոգին ո՞ւր ելաւ , և ի՞նչ եղաւ ասոր պատճառը , չափելը և թուելը :

Ասանկ մարդկային գիտութիւններուն ամէնը մէկիկ մէկիկ առնեմք նէ , հոն մեր հոգւոյն համար օգուտ մը ՚ի հարկէ կրգըտնամք : Թէ և օգուտ ալ չխտեսնամք նէ , որովհետեւ մեր ընկերական վիճակը Աստուծոյ մէկ կամքն է , ՚ի հարկէ մեր ընկերական վիճակին պէտք եղածը սորվելն ալ մեզի պարտք է : Աւրեմն պէտք է որ տղան պղտիկուց արտաքին գիտութիւն ու ծանօթութիւններ ստանայ , անոնց վրայ իր դատողական զօրութիւնը կրթէ

ու միանդամայն ընկերական վիճակի ձեւ  
առնէ :

Տղայ մը մեծնալու վրայ եղածին պէս ,  
այսինքն հինգ վեց տարիէն ետքը պէտք է  
որ ետքը ընկերութեան մէջ ինչ ձեւ ,  
ինչ վիճակ , ինչ աստիճան պիտի ունենայ  
նէ , ան ատենէն՝ այն ձեւին խօթեա .  
պէտք է ան ատենէն՝ որ մարդու հետ ել-  
լալ , նըստիլ , խօսիլ սորվի . մարդ տես-  
նալ , մեծարել ու պատուել գիտնայ . հոն  
իր ետքի ստանալու վիճակի մէջ գըտնը-  
վելու մարդոց հետ ընտանեկայ , ու անոնց  
ձեւը ստանայ :

Վճանապէս պէտք է որ իրեն հարկա-  
ւոր ծանօթութիւնները՝ պզտիկուց ստա-  
նայ ու սորվի . բայց որոնք են այս ծանօ-  
թութիւնները , և ինչ սորվելու են :

Վարձեմ հոս եկածնուն պէս , այս գիր-  
քը կարգացողները պիտի ըսեն որ մենք  
չե՞մք մի գիտեր ինչ սորվեցընելիքնիս .  
ետքը մէկը ինչ գործի պիտի պարապի նէ  
այն կըսորվի : Ա՛րհեստաւոր մը իրեն ար-  
հեստին պէտք եղածին չափ կարդալ գը-  
րել քիչ մըն ալ թուել կըսորվի . Վահա-  
նայ կամ Վարդապետ ըլլայ նէ , աստուա-  
ծային օրէնքները ու պաշտօնը կըսորվի .  
ահա սորվեցընելիքնիս այս է կըսեն :

Գործնական արհեստներու պարապող-  
ները միայն իրենց արհեստին ծանօթ , ու

դրսէն բանի մը տեղեկութիւն չունենալովն  
բողբովին մարմին են դարձեր . ուտել ,  
խմելէն ուրիշ բանի ալ խելք չեն բանե-  
ցնէր ու իրենց հետ ուրիշ բանի մը վրայ  
խօսք ընես նէ , չէ թէ միայն զուրցածդ չեն  
հասկընար , հասա ուրիշ բան գիտնալն ալ  
կարհամարհեն : Վիտութիւնը ինչ ընեմք  
պիտի . պատմութիւնը մեզի ինչ օգուտ  
ունի . աշխարհագրութիւնը մեզի ինչ շահ  
կրնայ պողարեբել , և այլն : Ասանկները  
մարմին մընալովն ինչ որ իրենց ցուցը-  
նեն , իրենց մարմնոյն վրայ պիտի չափեն .  
իրենց մարմնաւոր շահին հարցունեն պի-  
տի . ինչ որ ընեն նէ իրենց մարմինէն խոր  
հուրդ պիտի առնեն : Վայց ամէնքդ ալ ի-  
րաւունք կուտաք որ ասիկայ մարդութիւն  
չէ . և ատանկ մարդ մը քաղաքական վիճա-  
կի մէջ վայրենի մըն է :

Վանք հիմայ մարմնաւոր բաներու հետ  
չխարապելով , միայն վերացեալ բանե-  
րով մեծ ցողներուն . անոնք ալ միայն հոգի  
են դարձեր . դուրսը ինչ որ ըլլայ իրենց  
համար չէ . տմարդութիւնը թէ որ իրենց  
հոգւոյն վընաս մը չունի նէ , տմարդի  
կրլան : Իրենցմէ դուրս եղած բաները ար-  
համարհելով անոնց ականջ անգամ չեն  
դներ . դնեն ալ նէ , բան մը չեն հասկընար .  
ըսել է որ անանկ մարդն ալ քաղաքա-  
կան վիճակի մէջ շուք մըն է : Թէ որ ա-

մէն մարդ միայն իրեն պէտք եղածը սորվի նէ, ամէն մէկը զատ զատ կենալով, միայն իրենց հաւասար կէտերովնին մէկըմէկու հետ պիտի կրնան հաղորդակցիլ. ըսելէ որ հաղորդակցութիւննին միայն մարմնաւոր առուտութիւնը պիտի ըլլայ. որովհետեւ ուրիշ հաղորդակցութեան կէտ չունին:

Մարդ իր աստիճանին մէջ, իր վիճակին մէջ իրեն պէտք եղած բաներէն զատ իրեն մարդկային կատարելութեանը համար խել մը բաներ սորվի պիտի. ասոնք չէ թէ միայն իրեն մարմնաւոր շահին համար պէտքը կրլան շատ անգամ, հասցա իր խելքին մըտքին ու դատմանը զարգանալուն համար իրեն հարկաւոր են: Թէ որ մարդուս իմացողական կարողութիւնը անհունը պիտի բարձրանայ նէ՝ պէտք է որ իմացական կարողութիւնը ծանօթութիւններով զարգացած ըլլայ: Արդարուն համար, իր ազգին՝ իր եղբորը համար զինքը նուիրելը իրեն պարտք մըն է, ուրեմն թող արդարութե կանոնները սորվի. թող սը խալը ճշմարիտէն զատել գիտնայ, որ ՚ի զուր տեղը ինքըզինքը չիծախէ: Մարդս միայն մարմին չէ, ՚ի հարկէ մարմնոյն հանդատութիւնը ճարելու միջոցներէն զատ, պէտք է որ հոգւոյն երջանկութիւնը ճարելու միջոցներն ալ գիտնայ. ըսել է որ իր վիճակին հարկաւոր եղած գիտնալիք-



ներէն զատ ուրիշ գիտնալիքներ ունի :  
Ի այց որոնք են աս գիտութիւնները :  
Հետեւեալներն են :

Պատմութիւն սրբազան :

Պատմութիւն ազգային :

Պատմութիւն արտաքին հին և նոր :

Նշխարհագրութի ուսումնական բը-  
նական և քաղաքական :

Թուաբանութիւն :

Նշխարհագրութիւն :

Ննական գիտութիւն որ կրբաժնըլի  
ի բնագիտութիւն ՚ի բնալուծութիւն  
և յատողաբաշխութիւն :

Պատմութիւն բնական, որ կրբաժնըլի  
ի պատմութիւն մետաղաց, կենդանեաց,  
բուսոց, և Նշխարբանութիւն :

Փիլիսոփայութիւն որ կրբաժնըլի ՚ի  
հոգեբանութիւն, ՚ի տրամաբանութիւն,  
և ՚ի բարոյական փիլիսոփայութիւն :

Վրականութիւն որ կրբաժնըլի ՚ի  
քերականութիւն ՚ի ճարտասանութիւն  
և ՚ի բանաստեղծութիւն :

Վերջապէս լեզուագիտութիւն :

Աս կարգացողը գիտեմ պիտի զուրցէ  
որ սողոցմէ ուզածս՝ անհնարին բան մըն է,  
բայց մի արտորար, ուզածս անհնարին բան  
չէ. գիտեմ որ մէկը՝ միայն աստղաբաշխ ըլ-  
լալու համար, պէտք է որ առաջ մաթէմա-  
թիքայի ուսմունքը կատարելագոյն գիտնայ.

ասոր համար գէթ ութը տասը տարի մը պէտք է : Միայն աստղաբաշխութեւն տաւոր տարի պէտք ըլլայնէ , անդին ուրիշ շատ գիտութիւններ կրմընան , ամէն մէկուն համար տասնական տարի աշխատելու համար քանի մը մարդու կեանք ալ չօգտեր . ես աս գիտեմ . բայց աղէկ նայէ , այլ է բնագիտութիւն գիտնալը , այլ է բնագէտ ըլլալը . այլ է աստղաբաշխութիւն գիտնալը , այլ է աստղաբաշխ ըլլալը . մէկզմէկէ ունեցած հեռաւորութիւննին մեծ է : Իմ ըսածներս ծանօթութիւններ են , գիտութեան սկըզբունքներն են չէ թէ գիտութիւնները :

Իայց աս ամէն գիտութիւնները պէտք են մի . ոսկերիչի մը աստղաբաշխութիւն ինչ պէտք է , փիլիսոփայութիւնը ի՞նչ պիտի ընէ : Իրաւ ոսկերիչին ո՛չ աստղաբաշխութիւն պէտք է , ո՛չ փիլիսոփայութիւն . բայց մարդուն պէտք է : Ասկերիչ մը իրիկունը խանութը գոցելէն ետքը պէտք է որ ուրիշ բան ալ ըլլայ . պէտք ըլլայ նէ աստեղաբաշխ ըլլայ . իրեն թէ որ սոջաւոր աստղ մը ցուցնեն ըսելով որ աշխարհքին վախճանը եկաւ տէյի նէ՝ չիհաւատայ , ու զուրցողին վրայ խնդայ : Մէկը իրեն սուտ մը զուրցելու ըլլայնէ , տրամաբանութեան կանոններով սուտ եղածը հասկընայ : Մէկը իրեն գէշ խոտ մը տայ ը-

սերով աս դեղ է առ եփէ ու խմէ , խոտին նայելով խոտին յատկութիւնը ճանչնայ ու խաբեբաներու շիրոնովի : Մնա գիտութիւն գիտնալովը ինքրզինքը կայծալէն կարենայ սրահայանել , տեղ մը կորսովի նէ՝ արեւին շուքին նայելով ուր եղածը գիտնայ : Մասնկ ալ միւս գիտութիւնները : Ասկերիչին աս բոլոր գիտութիւններս պէտք է . պէտք է վասն զի մարդ է . կարելի է որ օր մը սպառճառաւ մը՝ դիպուածով մը՝ ուրիշ քաղաք կամ ուրիշ վիճակի մէջ գրտնովի . պէտք է որ ան ատենը իր մարդութիւնը ընելու դժարութիւնը չիբաշէ :

Ասկերչին պէտք է աս գիտութիւնները , վասն զի օր մը հայր պիտի ըլլայ . ազգ մը պիտի ունենայ . պէտք է որ աս գիտութիւնները իրեն տղին ինք չիտորվեցընէ ալ նէ , ուրիչին սորվեցուցածը կամ չիտորվեցուցածը հասկընայ . ու իր ազգին բարեկարգութեանը համար ծանօթութիւն մը տալ կամ ձեռնտուութիւն մը ընել պէտք ըլլայ նէ՝ կարող ըլլայ :

Մայց աւելի զարմացընեմ պիտի . որովհետեւ ասկէ անդին ալ բան պիտի ուղեմ . պիտի ուղեմ որ տղան ինչ գիտութիւն սորվի նէ , անոր գործնականն ալ մէկ տեղ ըլլայ : Մսիկայ ալ անկարելի կերեւի , բայց նայէ գործնականը կու-

զեմ ըսելովս ինչ կըհասկընամ : Աւսենք  
 թէ տղան երկրաչափութիւն կըսորվի կոր .  
 հոն ՚ի հարկէ պիտի սորվի որ երկու հա-  
 ւասար եռանկիւնի մէկ տեղ գաննէ , քա-  
 ռանկիւնի մը կըլլայ . իրեն քառակուսի  
 փատ մը կուտամ , ձեռքն ալ սղոց մը ( թէս-  
 տերէ մը ) և կուզեմ որ այն քառակու-  
 սիէն երկու հաւասար եռանկիւնի շինէ .  
 ըսենք թէ պատմութիւն մետաղաց կըսոր-  
 վի . կուզեմ որ կըսոր մը հող ձեռքը առ-  
 նէ նէ , մէջը ինչ եղածը գիտնայ . իրեն  
 մետաղ մը բերեննէ , կապարը արծաթի  
 տեղ շիբոնէ ճանչնայ , և այլն . ասանկ ալ  
 բուսաբանութի սորվելու ատենը , կուզեմ  
 որ ուր տեղ խոտ մը տեսնայնէ , ինձի ինչ  
 եղածը զուրցէ . թող իր պարտեղը բը-  
 րէ , հոն տունկեր հասցընէ . ու անոնք  
 պահելը , մեծցընելը սորվի , և այլն : Տը-  
 բամաբանութիւն կըսորվի նէ , կուզեմ որ  
 իմ խօսքիս , կամ ուրիշներուն խօսքին մէջ  
 եղած սուտը կամ ճշմարիտը ճանչնայ ու  
 գատէ : Ղարտասանութիւն կըսորվի նէ ,  
 կուզեմ որ իրեն հետ խօսող մարդուն  
 գործածած համոզական ձեւերը գիտնայ .  
 վերջապէս ինչ որ գրքին մէջ կըտեսնայ ,  
 կուզեմ որ բնութեան մէջ ալ իրօք հաս-  
 կընայ ու տեսնայ :

Ասիկայ չլլայնէ , գիտես մինակ գրք-  
 քին մէջէն սորվելէն ինչ կըհետեւի , ար-

զար սովորաբար սորվելու ատեննին աւել-  
 լի իրենց դասը աղէկ գիտնալու կրնային  
 քան թէ սորվելու . այլ է գիտնալը և այլ  
 է մտքին մէջ բռնելը . տղին գիտցածը ան  
 ատենը ճշմարիտ կրլայ երբոր գործա-  
 ծու թեան մէջ կրցրցունէ : Գործածու-  
 թիւնը ուրիշ մէկ օգուտ մըն ալ ունի ,  
 տղին ետքի գանրվելու վիճակին նայելով :  
 Մտնք թէ տղան արհեստաւոր պիտի ըլ-  
 լայ . իր սորվածը գործի դնելու չիվարժը-  
 ված թէ որ ուսման գիրքը ձգելով ար-  
 հեստի մը սկըսինէ , իրեն համար բոլոր  
 գիրքերը կըդոցվին . իր վարպետը իրեն  
 արհեստին գրեթէ բնակը ձեռքը կուտայ :  
 Ան ատենը տղան որչափ դժուարութիւն-  
 ներ կըքաշէ . գիտցածէն պտուղ մըն ալ  
 չիկրնար քաղել , որովհետեւ պտուղ հա-  
 նելուն կերպը չիգիտէ . ուստի իրեն գիտ-  
 ցածը իրեն բանի մըն ալ օգուտ չընէր :  
 Ասկէ զատ կարելի է ալ որ իր վիճակը փո-  
 խէ . ուրիշ վիճակի մէջ գանրվելովը , պէտք  
 է որ հոն ալ բնակէն սկըսի : Բայց ըսեմք  
 թէ տղան արհեստի չիպիտի երթայ , բայց  
 կարելի չէ՞ մի որ օր մը արհեստի երթայ : Աս-  
 կէ զատ արհեստաւորը արհեստ չունեցող  
 ղին գործը ու արհեստ չունեցողը արհեստ-  
 տաւորին գործը գործածելովը՝ մէկզմէկու  
 արժանաւորութիւնը կըձանձնան , մէկզմէկ  
 չեն արհամարհեր , մէկզմէկ կըյարգեն :



Հիմա նայիմք տղան երբ սորվելու ըսկրսի պիտի և ինչպէս պիտի սորվի :

Երբ սկըսելիքը ու ինչպէս սորվելիքը բնութիւնը կըցըցունէ :

Բնութիւնը տղին իմանալը երեւան չիհանած այսինքն երեք կամ երեք ու կէս տարիէն առաջ՝ զգայարանաց միջնորդութեամբը միայն բան կըսորվեցընէ ըսինք : Ետքը իմանալը երեւան ելած ատենն ալ, տղան՝ իր գաղափարները կարգի դնելու ու դրսէն նոր գաղափար առնելու ու առնոնց վրայ իր դատողական զօրութիւնը փորձելու համար խաղի կիյնայ . ուրեմն դուն ալ առաջ իրեն սորվեցընելիքդ խաղի կերպով սորվեցընելու ես : Տղան բաները հասկընալու ու սորվելու համար, նայէ խաղալու ատենը ինչ կընէ : Բսեմք թէ գնտակ նետել պիտի սորվի . առաջ գնտակ նետելը կըտեսնայ, կերթայ գընտակը ձեռքը կառնէ կընայի . անոր ամէն որակութիւնները ստուգելէն ետքը ինքն ալ կըփորձէ . կընայի առջի անգամին որ ուղած տեղը չիկրցաւ հասցընել . նորէն կըփորձէ և վերջապէս գնտակ նետելը կատարելապէս կըսորվի . ու մէյմը գնտակ նետելու կարողութիւն ստանայ նէ , անոր վրայ ալ կուրախանայ : Բնութիւնը յատկապէս առաջկուց խաղալով բան սորվեցընել կուտայ . վասն զի խաղալով տղին



բարձր մարմինը ու ջիզերը կուժովան . միանգամայն ալ սորված բանը ետեւէն կրվայելէ . այն է զբօսնուլը : Այց դուն թէ որ բնութեան ընթացքին դէմ ելլալով , բռնես տղան սենեակի մը մէջ բանտարգես , զինքը նեղութեան մէջ խօթես նէ , նախ իր մարմինը շիղարգանար ( սերփիլմիշ չըլլար ) երկրորդ՝ հոն հասկրցընելէրդ շատ անգամ տղին հասկընալու ու իմանալու բաները չըլլալուն՝ անկէ իրեն օգուտ մը չըլլար . ուստի շիկրնար ալ սորվելու ետեւէ իյնար . իրեն սորվեցուցածը իրեն փուճ բան մը երեւնալուն չի սորվիր . քեզմէ վախնալէն սորվելու ալ ջանք ընէ նէ , կրնեղանայ , կրմաշի , կրհալի :

Ինչո՞ւ խեղճ տղաքները ասանկ նեղութեան մէջ խօթես , ուրիշ ճամփով չնէ կրնար մի սորվիլ . մեծ մարդու բան մը սորվեցընելու համար ինչ ճամփա կրգործածես նէ , տղոց ալ այն ճամփան ինչո՞ւ գործածես . տղին հետ իր ուզած կերպով վը վարվէ , իրեն հասկրցած լեզուն խօսէ իրեն . ու ասանկով չէ թէ միայն ուզած բանը սիրով կըսորվի , հապա սորվածն ալ իր քովը կըմընայ , հովի չերթար :

Այց ինչ սորվեցընելու է . ինչ որ մեծ մարդու սորվեցընել պէտք է նէ , տղոց ալ նայնը կըսորվեցընես : Օրոցածս աղէկ

հասկրցընեմ. ես ըսել չեմ ուզեր որ մեծ մարդու մը բան մը սորվեցընելու ատենդ ինչ պարագայներ կըդիտցունես նէ տղոց ալ անոնք պիտի գիտցունես : Իմ ըսածս միայն սա է որ մարդ ինչ պիտի սորվի նէ, իրեն ինչ բան սորվիլ պէտք է նէ, անոնց մէջէն ազին հասկընալու ու իմանալու կըրոցած բաները կըսորվեցընես իրեն. ու այս ալ միշտ խաղի կերպով : ( ) րինակ տամ. ըսեմք երկրաչափութիւն. կոթողին խորունկութիւնը չափել սորվեցընելէն առաջ շատ գիտնալիքներ կան երկրաչափութեան մէջ որ տղայք կրնան հասկընալ, ինչպէս ձեւերուն անունները, ասոր եռանկիւնի կըսեն, անոր քառակուսի, և այլն, եռանկիւնին երեք անկիւն ունի. քառակուսին չորս, եռանկիւն մը քառակուսիին կէսն է, և այլն : Գտեմք թուաբանութեւն, նշանակներու ( լծկարիթմայի ) յառաջատուութեան կանոնները չիսորված ուրիշ սորվելիքներ կան, այն է թիւերը ճանչնալը, թիւերը, բաղմապատկերը, յաւելումը, և այլն : Գուն և ընկերդ երկու հոգի էք. երեք մարդուն քով մէյմըն ալ գայ նէ չորս մարդ կըլլայ և այլն :

Գամք կարդալ գրելու, չիհասկրցոված և չիհասկընալու բաները կարդալ չիսորված՝ որն որ մեր մէջը գիտութիւն մը եղեր է, գիրերը ճանչնալ, այն գիրերը կա-

պելլով վանկեր անուներ և տղին գիտ-  
ցած բաները շինել . կամաց կամաց քանի  
մը բառ մէկ տեղելով սղտիկ սրարբերու-  
թիւներ կապել կայ . վերջապէս տղան իր  
գիտցած բաներուն վրայ կարդալու սկզբ-  
բնաւորութիւն ընէ . կարդալը առաջ  
հոն սորվի . այս կերպիւ միշտ կըսորվի ու  
սորվելու համար ալ շիհոգնիր :

Ասանկ ալ գրելը . վայելչագրութեան  
առաջ հասարակ գրել կայ , թող տղան  
սղտիկուց կրցածին չափ գիրերը գրծագ-  
րէ , ետքը իր անունը կամ իր բարեկամին  
ու հօրը անունը գրէ , ասիկայ իրեն խաղ  
մը կըլլայ միանգամայն ալ խրատոյս մը :

Բայց ասոնք գիւրին են . ուր կըմընայ  
սղտիկ տղոց համար աստեղաբաշխութիւ-  
նը , բնագիտութիւնը , փիլիսոփայութիւ-  
նը և ասոր նըման ուրիշ գիտութիւները :  
Ախ աս գիտութիւններուն անունը մեծ  
կուգայ . երկրորդ անոնց սկզբունքները ու  
առաջին ծանօթութիւնները այնչափ գիւ-  
րիմաց բաներ են որ տղաք անգամ կըր-  
նան հասկընալ : Արբոր այն առաջին ծա-  
նօթութիւնները իրարմէ հանելով ուրիշ  
ծանօթութիւններ հետեւցընել ու ասոնց  
վրայ տրամաբանել սէտք ըլլայ նէ , այն ա-  
տենը բանը կըգըժարնայ : Աստի տղան աս  
գիտութիւններուն սկզբունքները թող  
առաջ սորվի . արեւը մայրը մոնայնէ մութ

կրլայ որուն գիշեր կրսեմք . առտրվանց արեւը ելլայ նէ , ցորեկ կրլայ . արեւէն առաջ արշալոյս կայ . լուսինը մոլորակ մըն է , որովհետեւ կրպլտրտի . ամառը , ձըմեռը եղանակները , ամիսներուն անունները , շաբթիվան օրերը կրպխտցընես . ահա քեզի աստեղաբաշխութեան մէջ պրգտիկ տղոց սորվեցընելքդ :

Փիլիսոփայութի ալ բարոյականը ձեռք առ . ինչ որ կուզես քեզի ընեն , դուն ալ ան ըրէ : Տրամաբանական ձեւերուն ուշադրութիւն ընել տալով , սուտ բանի մը սուտ ըլլալը խօսքին պարագայներէն իրեն հետեւցընել տուր , և այլն . ահա քեզի փիլիսոփայութիւն ալ :

Կամ փիլիսոփայութիւն մի սորվեցըներ կամ սորվեցընես նէ աղէկը սորվեցուր . ու ասանկ պզտիկ բաներուն անունը փիլիսոփայութիւն ու աստղաբաշխութիւն դընելով աս գիտութիւններուն անունը մի պզտիկցըներ պիտի ըսես :

Կախ աս զուրցած բաներս փիլիսոփայութեան ու աստղաբաշխութեան պզտիկ բաները չեն , հապա պինդ մեծ բաներն են . մէկ մը՝ աստղաբաշխութիւնը կատարեալ սորվելու կարողութիւն ունեցած հասակը հասնի . բայց արեւը բնաւ տեսած չըլլալով , գիշերն ու ցորեկը ինչ բան եղածը չիգիտնայ ու այն օրը որ աստղա-

բաշխուածիւն սկըսի պիտի նէ, ըսեմք թէ այն օրը իր աշխրհներն ալ արեւը տեսնան, ցորեկը գիշերէն զատել գիտնան, կարծես թէ դուն ինչ գիւրուածեամբ ցորեկ ու գիշեր կըսես կոր նէ այն ալ նոյն գիւրուածեամբը կըհասկընայ, կարծես թէ չիմըտածեր : Այս պղտիկ ծանօթուածիւն ըսածնիս մեծ ծանօթուածիւններ են, որոնք բնուածիւնը մեղի պըզտիկուց սորվեցընելուն մեղի պըզտիկ կերելին . բայց ինչու ասոնք պըզտիկ ազոց չիսորվեցընելու է թէ որ կրնան հասկընալ նէ : Այլ ինչ կընէ բնուածիւնը . մարդ մը մեծնալովը ինչ պիտի սորվի նէ նոր ծնած օրէն բնուածիւնը ամմէնն ալ իր աչքին առջին իր ձեռքին տակը կըդընէ, բնաւ բան մըն ալ իրմէ չիծածկեր . մարդն ալ ասոնց մէջէն ինչ բան կրնայ իմանալ ու սորվիլ նէ, կամաց կամաց կըզատէ ու կըսորվի : Այս կերպիւս մարդս իր սորվելիքը տարիներով սորվելուն, նախ չիհոգնիր սորվելու համար . երկրորդ անանկ աղէկ մը կըսորվի որ մոռնալը անկարելի բան մը կըլլայ :

Տղին իմանալու կարողութեան աստիճանը ճանչնալով, իրեն հասկընալու կերպիւր այս ծայրագոյն գիտութեանց սկըգբունքը պղտիկուց իրեն տաս նէ, գիտես ինչ ձեռք բերած կըլլաս . նախ իր միտքը ետքի սորվելու բաներուն պղտիկուց պառ-



կամ կրլայ . երկրորդ ասանկ կամաց կամաց սորվելովը քանի որ միտքը բացվի , իր չիզիացած բաները կուգայ ինք կըհարցընէ , ինքնիրեն կըփրնատուէ ու կըսորվի :

Անանկը պզտիկուց սուտէ չիսարվիլ , բնութեան իրերը զննել կըսորվի :

Մասն կերպիւս պզտիկուց կարգալ գըրել կըսորվի . ուստի եօթը տարեկան ըլլայ նէ , որովհետեւ կարգալ գիտէ , չի գիտցած մէկ բանի մը հանդիպի նէ , իր գըրերուն մէջ փնտրուելով , իր խնդիրներուն լուծումը հոն գտնալու կըջանայ . ա սիկայ մէկ միջոց մը կրլայ տղին ևս առաւել բացվելուն :

Արծեմ հասկըցուցինք երեք կամ երեքուկէս տարվընէ մինչեւ վեց կամ եօթը տարեկան հասակին ամմէն գիտութեանց պարզ սկզբունքները խաղի կերպով տղոց սորվեցընելուն ազէկութիւնը . կուզէի որ պզտիկ տղոց համար զատ գըրաատուններ ըլլան՝ որոնք աւելի խաղի տեղ ըլլան քան թէ գըրատուն , որուն վարժապետները աւելի տղաքը զրօսնուլ տալով բան սորվեցընելու ջանք ընէին քան թէ անոնք սխմելով քրտընցընելու :

Տղան վեց կամ եօթը տարեկան ըլլայ նէ , իր ուսման կերպն ալ փոխելու նայելու է . բայց ասիկայ մէկէն 'ի մէկ չըլլայ . նայէ բնութիւնը մէկ աստիճանէ միւս



աստիճանը անցնելու համար որչափ զգուշութիւններ կրգործածէ ու որչափ կամաց կը բայէ . դուն ալ վեց կամ եօթը տարեկան տղէն խաղալը մի վերցրներ , բայց քիչցուր . սկըսէ ձեռքը դիրքեր տալ . ըսկըսէ իր սորված բաներուն դժար կողմերն ալ ցրցունելու . վեց կամ եօթը տարիէն մինչեւ տասներկու կամ տասնըչորս տարի վեց կամ եօթը տարի կայ , նայէ որ աս միջոցին մէջ սորվեցրնելու բաներուդ ամ մէնուն ալ հիմը հաստատ կերպիւ մը ձգես :

Տղան վեց կամ եօթը տարեկան ըլլայ նէ իր իմանալն ու դատելը ձեւի մը տած է , բայց կըսեն որ մինչեւ տասներկու կամ տասնըչորս տարեկան հասակը տղին յիշողութիւնը լեցրնելու է . իմանալն ու դատելը մոռնալով . բայց ինչո՞ւ . տասը տասներկու կամ տասնըչորս տարեկան տղան դատել ու իմանալ չունի . թէ որ ունի նէ , ինչո՞ւ չես թողուր որ դատէ ու իմանայ . թէ որ տղայ մը միայն յիշողութիւնը գործածելով մեծնար նէ մարդոց մէջ հրէշ մը կըլլար . աղէկը այն է որ՝ բընութիւնը մեր դրութեանցը ականջ չի դնելով իր ճամբան կերթայ :

Տասը տասներկու կամ տասնըչորս տարեկան տղան՝ իրերը կ'իմանայ ու կը դատէ . բայց անոնց վրայ տրամաբանել չունի . օ

բինակ մը տամ. ըսեմք թէ պատմութեան մէջ տղան կարդաց որ Վաղարշակ Հայաստան եկածին պէս, ազգին մէջ կարգ մը արջընէլու նայեցաւ, նախարարութիւններ յօրինեց, գըտնելիւմ նախարարութիւններուն ու ազգին պատմութիւնը փընտըրեց, օրէնքներ սահմանեց, արդարութիւն բրաւ, ուսումն ու գիտութիւն ծաղկեցուց և այլն. տղան ասոնք կարդալով կիմանայ որ Վաղարշակը բարի ու բարեկարգ թագաւոր մըն է եղեր ու իր բրածները ազգին օգտաւոր բաներ ըլլալը կրդատէ. ասոր հակառակը պատմութեան ուրիշ մէկ տեղը Վասակին գէշ մարդ մը եղածը կիմանայ ու իր բրածը անվայել ու չար ըլլալը կրդատէ. ըսել է վերջապէս որ տղան իմանալու ու դատելու կարողութիւն ունի. բայց ասոնց վրայ ասկէ անդին չիկրնար տրամաբանել. Վաղարշակը ու իր գործը վերացեալ գաղափարի մը դարձընելով չիկրնար ըսել որ Վաղարշակը իր դարուն մէջ նետուած մէկ գործիք մը եղաւ մարդկային յառաջագիմութեանը. այս գործիքը ազգը կորսըվելէն, ոչընչանալէն խալըսցուց. ահա աս չիկրնար իմանալ ու դատել: Արարձ ըսեմ, տղան գիտութեանց փիլիսոփայութիւնը չիգիտէ:

Աւրեմն դուն ալ բնութեան հետեւելով ինչ որ տղին պիտի սորվեցընես նէ,

Նայէ որ մէջը փիլիսոփայութիւնն ու վերացեալ իրեր չի գտնուիր . բայց ինչ գիտութիւնն ինչ ծանօթութիւնն ալ տասնէ, նայելու էս որ անոնց վրայ տղին իմացողական ու դատողական կարողութիւնները գործածես . միշտ կամաց քալելով, պարզէն բազադրեալին անցնելով . և այս կերպիւս բոլոր վերի զուրցըրլած գիտութիւնները տղին մտքին մէջ կըտրուաւորես :

Տղոց սորվելիքը չէ թէ միայն իրենց մտքին կարողութեանը յարմար ըլլալու է, հասա պէտք է նաև որ մանչ տղան էրիկ մարդու և աղջիկ տղան կնիկ մարդու յարմար ծանօթութիւններ ստանան :

Աղջկան համար նայելու է որ իր սորվելիքը աւելի մօր մը պէտք եղած բաները ըլլան . ինչպէս տնտեսութիւն, որ է տան կառավարութիւն, և տանը պէտքը հոգալ . և այս է՝ կար կարել, և այլն :

Մանչ տղի համար ալ, նայելու է աղջային ու կառավարութեան գործքերու վրայօք հմտութեանց ուժ տրլի :

Վերջապէս երկուքն ալ իրենց ետքի վիճակին նայելով հմտանան ու կըթրվին : Միանգամայն թէ մանչ տղան թէ աղջիկը քանի մը ազատական արհեստներ սորվին . ինչպէս նուագարան, պատկերահանութիւն, և այլն : Առաջարանը ու նկարը

մեր հոգին կըշարժէն<sup>1</sup>, թէ որ ուղղակի  
մեզի մէկ պիտուականութիւն մը չունին

1 Մեր մէջը նուագարանը բնաւ յարգ չունի և մոլութեան տանելու միջոց մը կը կարծւի : Ի՛նչ է այս անագութեան պատճառը և ուրի՛ք է նուագարանը մոլութեան արջիւրը կարծելը : Աս օրվան նուագարան չալօղները ամ մէնը չեմ՝ բանք, որովհետեւ մէջերնին պարկէշա մարդիկ կան, բայց շատը մօլի ու նախատելի մարդիկ ըլլալուն, արհեստնին իրենց մոլութեանցը պատճառ բռնելով, նըւագարանը գէշ բան մը կարծւիք է. այս ծուռ կարծեացը պատճառաւն ալ յարգէ ինկեր է : Ըսել է որ նուագարանը յարգ չունի նէ, պատճառը մեր յարգել չիցիտնայնիս է. տանկ ալ անիկայ մոլութեան արջիւր կարծելը մեր հիմակրան նուագարան չալօղները մօլի ըլլալէն է :

Կարգ ա արգի մարդկան պատմութիւնը կրտննաս որ շատ յարգելի բաներ ասանկ ծուռ կարծիքի մը պատճառաւ, նախատանքի տակ ինկեր են : Փարիտներուն և Կատոններուն ատենը՝ Հռովմայեցի անունէն աւելի արգոյ բան մը չի կար. բայց միջին դարուն սկիզբները, Ղոմպարտներուն իշխանութեան ժամանակն ալ, հռովմայեցի անունէն աւելի նախատանաց անուն չիկար : Օգոստոսին ատենը հռովմայ գրականութիւնը անգիի ծարը յարգի էր. վայրենի Ղոմպարտներուն ժամանակն ալ կարգալ գրել գիտնալը՝ ինչից մեր մէջը այսօր նուագարան չալելը, այնչափ կամ թէ ևս առաւել նախատանաց արժանի բան մըն էր : Բայց ատեն ատեն բանի մը յարգէ ինչալ տեսնալով այն բանը յարգոյ արժանի բան չէ՛ բանելու չէ : Այսօր նուագարանը թող բոլորովին պարկէշա մարդոց ձեռք անցնի, կամ թէ նուագարանին ուրիշ օրինաւոր ընթացք մը տուր, նուագարանը յարգէ, ան ատենը ան ալ իր ստախճանը կը բարձրանայ :

ալ նէ , ասոնք նախ մեզի յառարինու թիւն շարժելով , ամենագեղեցիկը փնտրուելու միջոց մը կրնան ըլլար . երկրորդ՝ մեզի խել մը հաճոյքներ կրնան տալ որոնք կրնամք վայելել սպարապ եղած ատեննիս , մեր ուրիշ աշխատանքներէն հողնու թիւն առնելու ու նոր աշխատանքներու քաջալերովելու համար :

Իսկ նայելու է որ մանչուն ու աղջկան նուագարանը , ու նկարը իրենց սեռին յարմար ըլլայ :

Ահա այս կերպերովս տղան կրթովի նէ , մարդկութեան պատրաստութիւն մը տեսնելու կրնայ որուն պտուղը չէ թէ միայն կրթեալը կրքաղէ ետքը , հասկա իր կրթութիւն ալ իր ազգն ալ , և բոլոր ազգ մարդկան :

Տղայ մը երբոր տասներկու , կամ տասնընչորս տարեկան ըլլայ նէ , ան ատենը մէկ փոփոխութիւն մը կրտիրէ իրեն որով միտքը և բոլոր ուրիշ գործարանները գրեթէ իրենց նիւթերնին կրփոխեն ու նպատակնին կրմեծցնեն . կամ թէ աղէկը ըսեմ , իրենց նպատակը իրենց ճշմարիտ տեղը կրսկրսին տեսնել : Մինչեւ հոն մէկ փոփոխութեանէ միւս փոփոխութեան անցնելով տղին ամմէն գործարանները մեծցան , ձեւերնին առին ու զօրացան . հոս եկածին պէս տղան՝ ալ մարդ կրնայ , մին



չեւ հոն տղին եղածը ու բրածը մէկ մարդկու թեան ոտքի ելլալ մըն էր որ իր գլորիլը, իյնալըն ու ելլալը, քայլ առնելը ու վազելը ունէր, ասոնք քալել սորվելու համար փորձեր էին, առանց ասոնց քալելը ոչ զօրաւոր կրնար ըլլալ և ոչ ճարտար : Սարգկու թեան աստիճանը չիկոխած տրդայու թիւն մը պէտք էր, ինչպէս որ աս աշխարհքը սալքելու համար արգանդի մէջ սալքիլն ու մեծնալը պէտք է :

Տղան հոս հատածին պէս մարդ կրլայ ու իր աչքիւնները իր նպատակը իր տեղը կրսկսին տեսնալ. մարդը բոլորովին սիրով մը կրվառվի, հոգին աստուածային սիրով որն որ իրենն ուղղիչ ( փուտուլա ) մը կրլայ անմոլոր իր նպատակին երթալու. ահա հոգեւոր մասին ճամփայ ելլալը : Ասանկ ալ մարմնաւոր մասին համար, գործարաններուն կարողութեանը ու վիճակին յարմար աս աշխարհքիս մէջ տղին բռնելու աստիճանին նշոյլը իր բրածովը տղան կրցուցունէ. և այս է այն յարմարութիւնը որով տղաք տասներկու կամ տասներչորս տարեկան ըլլան նէ կրցուցունեն ատենաբան, բանաստեղծ կամ արհեստաւոր ըլլալու :

Բայց աստուածային սէրը՝ թէ որ տրդին կրթութիւն ճամփով եղած չըլլայ նէ, մարմնաւոր սիրով կրխափանի. այն սէրը



իրեն կեդրան զսփ ընտրելու տեղը իր մարմինը կրճանչնայ, ուրկէ մանչ է նէ հը պարտու թիւն, աղջիկ է նէ սնապարծ ու թիւն կրճագէ :

Ասանկ ալ թէ որ տղին գործարաններու յարմարութիւնը չիճանչցրի ու իր ընելիքին ուրիշ ճամփա մը ցուցվի նէ, տղին աս աշխարհքիս մէջ ունենալու վիճակը իր վիճակը չըլլար. ասիկայ բռնի վիճակ մը կրլայ որուն պատճառաւը ազգի մը, ժողովրդեան մը անհատները աւելի պզտիկութեանց բազմութիւն կրլան քան թէ գործունէութեան ու պտղաբեր կարողութեանց :

Արթութեան գէշ կամ աղէկ ըլլալուն արդիւնքը ան ատենէն կրսկրսիս տեսնալ, ու տղին մեծերը, հայրը մայրը կամ իրենց տեղը բռնողները՝ այն ժամանակը կրսկրսին հասկընալ թէ ՚ի բնութենէ իրենց դրուած աս պարտքը կրրցէր են կատարել թէ չէ : Արթելը աւելի դժար է քան թէ կրթըլիլը. կրթողը օրչափ տղացը բնութիւն ճանչցող, ասոնց ամմէն օրվան ցրցուցածը բանի տեղ դնելով անիկայ զննել գիտցող, իրենց խօսած լեզուն սորվելով անոնց հետ միմիայն այն լեզուէն խօսելու կամք ընող, իրենց բնական կարողութիւնները ճանչնալով, ան կարողութեցը յարմար իրենց բեռ տալ գիտցող ըլլալու է .

Թէ որ աս ըսած կերպիւս աղաք մեծնան  
նէ, կրնան մարդ եղած ատեննին հոգեւոր  
և մարմնաւոր երջանկուիք ձեռք բերելու :

Օնողքներն ալ իրենց զաւակը երջա-  
նիկ տեսնան նէ, կրնան գլուխնին վեր  
բռնելով ըսել, անոնց երջանկու թիւնը մեր  
գործն է. ու թէ որ ասոր հակառակը ի-  
րենց զաւակը թշուառ ու մարդու թեան  
աստիճանէն վար ինկած տեսնան նէ, ե-  
րանի թէ անոնց թշուառութեանը մաս-  
նակից չեղած ըլլային ու կարենային ըսե-  
լու, մենք չեմք ասոր պատճառը : Մի-  
կայ թշուառութիւն մըն է որ ամմէն թըշ-  
ուառութեանց մեծն է. մենք կրճընիմք, կը  
մեծնամք ու կըմեռնիմք մեր զաւակներու  
վը ապրելու համար. երանի թէ գիտնա-  
լինք որ անոնց երջանկու թիւնը մերն է  
ու անոնց թշուառութիւնը ևս առա-  
ւել մերն է :

Պակաս ան տղաքները կըսեպունն որ խելքի կամ մարմնոց կողմանէ պակասութիւն մը ունենալով անկարեն :

Մարմնոց պակասութիւնները թէպէտ շատ են . ինչպէս շիլ , միակն , կոյր , դժար լսող , մէկ ականջը խուլ կամ բոլորովին խուլ , թոթովախօս , համր , գօսացեալ , կաղ , կամ անդամաւրցծ բլլալ , և այլն . բայց ասոնց շատը աւելի տգեղութիւն կըսեպովին քան թէ պակասութիւն : Շիլ մը՝ հաւկուր մը՝ պակաս մարդ չեն սեպվիր . որովհետեւ թէպէտ աս պղտիկ պակասութիւններուն պատճառաւը՝ տեսանելիքը ոչ կրնայ սրիլ և ոչ գերազանցութեան հասնիլ , բայց իր պաշտօնէն ալ ետ չխմրնար : Շիլը՝ աղէկ գէշ ամիէն բան կը տեսնայ , գոյներն ու երանգները կըձանջնայ և կորոշէ , հեռաւորութեան , մտտութեան գաղափարները ունի և այլն . ասանկ ալ հաւկուրը :

Պակասութիւն մը պակասութիւն սեպվելու համար , պէտք է որ գործարան մը՝ իր գործքը տեսնալէն խաբանոված բլլայ . ինչպէս աչքիւրները կոյր բլլալ , ականջները խուլ , լեզուն համր , ինքը անդամա-

լոյճ . ասանկ ալ մտքին կողմանէ պակաս  
 ըլլողները քիչ խելք ունեցողները չեն .  
 սրովհետեւ ասանկ ըլլար նէ , շատ մարդ  
 պակաս պիտի սեպվեր . և պակաս շիտեպ-  
 վողները քիչ պիտի մնային : Այն պակա-  
 սաւոր միտք ըսածը , մտքին անանկ մէկ  
 վիճակն է որ մտքին կարողութիւններուն  
 մէկ քանին կամ բոլորովին չիկան , կամ թէ  
 նշոյլի պէս բան մը :

Պակասաւոր բաւով ինչ հասկրնաղնիս  
 զուրցելէն ետքը նայիմք թէ կարելի է  
 պակասաւոր տղարը կրթելը ու ինչպէս  
 կրթելու է :

Առջի խնդիրին պատասխանը դիւրին  
 է . թէև Աւրոսպայ և ուրիշ կրթեալ տե-  
 ղերը անոնց կրթվելուն օրինակները չու-  
 նենայինք ալ . իրենք իրենց քիչ շատ յա-  
 ուջ երթալին տեսնալով , կրթութեան  
 քիչ շատ յարմարութիւն ունենալին կր-  
 նամք հետեւցրնել :

Կամք հիմա կրթութեան կերպին . ա-  
 սիկայ գիտնալու համար , նախ և առաջ  
 նայիմք բնութիւնը ասոնց զարգացմանը  
 համար իրենց հետ ինչպէս կրթարվի :

Բնութիւնը՝ միշտ կրնայի որ պակա-  
 սաւորը կատարեալներուն կարգը անցրնէ .  
 ու ինչ գործիք , ինչ կարողութիւն իր պա-  
 կաս մասին տեղը կրնայ լեցրնելնէ , կրբը-  
 նէ այն գործիքը այն կարողութիւնը կր-

բանայ, կրգարգայընէ, ու դրեթէ այս կերպիւս, պակասաւորին մէկ մասին աւելի ութ տալով, միւս մասին պակասութիւնը կրլեցընէ կամ կրգոցէ, անանկ որ պակասաւորը իր պակասութենէն նեղութիւն չիբաշեր :

Ի ծնէ կոյր է պակասաւորը . լսելիքն ու շօշափելիքը, հոտոտելիքն ու ճաշակելիքը կըսըրին և սաստիկ դիւրագգածութիւն մը կըստանան . տեսանելեաց տալու դաղափարները շատ տեղ ասոնք կըհաղորդեն մտքին . վերջապէս շատ տեղ աչքին տեղը կըբռնեն : Այրը՝ աչք չունի որ հեռը վանց դէպ իրեն եկող մարդը տեսնայ, բայց իր ականջը անանկ մը վարժըլած է որ այն մարդուն գալը որ մենք միմիայն տեսնալով կրնայինք գիտնալ, անիկայ լսելով կրգգաց ու տեսնողի մը չափ կիմանայ : Այրը՝ բանի մը վայրուն կամ անիայլ ըլլալը, երկար կամ կարճ, կըոր կամ ուրիշ ձեւ մը ըլլալը, աչք չունի որ տեսնայ, բայց իր շօշափելիքը անանկ մը կըթըլած ու սրբած է որ՝ ինչպէս որ մենք անգամ մը նայելով, բանի մը ինչ ձեւ և ինչ յատկութիւն ունենալը կըհասկընամք, անանկ ալ՝ անիկայ մէկ անգամ ձեռքով շօշափելովը կըհասկընայ ու դրեթէ տեսնողի չափ կըհասկընայ :

Պակասաւորը խուլ և համր է . բնու-

Թիւնը իրեն շօշափելեաց ու տեսանելեացը անանկ մէկ դիւրազգածութիւն մը կուտայ որ տեսանելիքը՝ խուլ և համբինքով ականջ մը կրլայ, ուրիշին միտքինը և ուրիշին հաղորդելու բանը հասկընալու. և շարժմունքը՝ լեզու մը կրլայ իր միտքինը հասկըցընելու :

Պակասաւորը սապատող կամ կաղ է, կամ մարմնոց ուրիշ պակասութիւն մը ունի. այն ժամանակը բնութիւնը իր մըտքին անանկ մէկ վարպետութիւն մը կուտայ, անանկ հնարքներ բանեցընել կըսորվեցընէ որ վաղելով որսին կամ իր թըշնամին հասնելու կարող չըլող մը, ճարպիկութիւն մը բանեցընելով իր որսը կամ իր թշնամին ձեռք կանցընէ :

Ղ ձեռքը գօտացեալ է, ձախը կըվարժի. ձեռքվըներուն երկուքն ալ անկաւր են, ոտքվըները ձեռքին ընելիքը կընեն. քեզի օրինակ ոտքով գիր գրող և պատկերհանութիւն ընողները :

Վ երջապէս բնութիւնը իր դիտաւորութիւնը տեղը տանելու համար, (այն է մարդս՝ մարդկային կատարելութեան հասցընել) կըվինարուէ և կըգըտնայ միջոց մը, հնարք մը, դեղ մը. գրեթէ իր սատիճանէն վար ինկած մարդը աւելի կը բարձրացընէ և այս բարձրանալը, այս աւելնալը, այս գերազանցութիւնը՝ իբր թէ



այն պակասութեանը կըրտաղթէ : Մէկ խօսքով ըսեմ, բնութիւնը կընայի որ մէկ մասին պակասութիւնը միւսոյն առաւելութեամբը լեցնէ , որ մարդը որքան կարելի է նէ , պակաս չիմընայ :

Թէ որ մարդս՝ խելքէ վեր ուրիշ կարողութիւն մը ունենար որ խելքին տեղը կարենար բռնել , այն ժամանակը խելքէ պակասներն ալ ուրիշ կողմէ մը գերազանց կըձեւանային . և որովհետեւ այս չիկայ , ըսել է որ խելքի կողմէ պակաս ըլլողները միշտ պակաս պիտի մընան : Ի ծնէ կոյրը մարդկային կատարելութեան գրեթէ կընայ հասնիլ . անանկ ալ ՚ի ծնէ խուլ և համր : Փորձը ցրցուց որ ասոնք կարող են զանազան արհեստներ սորվելու , զանազան գիտութեանց մէջ յառաջագէմ ըլլալու , մինչեւ վերացեալ բաներու անգամ խելք հասցընելու , հնարքներ գիտակեր ճարելու , և թէ որ մինչեւ հիմա մէջերնուն շատ գիտուն մարդ չելաւ նէ , մանաւանդ խուլ և համրներուն մէջէն , պատճառը սա է որ՝ մէկտեղ կենալով չի կրցան մէկզմէկու ձեռնաու ըլլալ : Թէ որ խուլ և համր ազգ մը ըլլար նէ , անոնք ալ իրենց բանաստեղծը , մաթէմատիքսը , բժիշկը և փիլիսոփայն կուեննային :

Վարմոյ կողմանէ պակասութիւնները մէկ զէնքի մը , գործիքի մը պակասութիւն

է . բայց խեղբի պակասութիւնը՝ աստ զէնքերուն զինարանին , աստ գործիքներուն գործարանին կամ թէ գործել տուողին պակասութիւնն է . միայն պակասութիւնը կարելի է ընուլ , միւսինը լեցընելու համար մարդը փոխելու է . ուստի խեղբի կողմանէ պակաս ըլլողները կատարելութեան հասցընել ուղելը ուրիշ մէկ խեղբի պակասութիւն մըն է :

Բայց ապուշ մը , տխմար մը բողբոջին խեղբէ զուրկ չէ . քիչ շատ խեղբ ունի . ուրեմն քիչը վարժելն ալ , պակասութիւնը քիչցընել ըսել է :

Առջի կարգին մէջ գանբլոզ պակասաւորները ընդհանրապէս մարդկային ընկերութեան մէջը գրեթէ այլալեզու են . անոնք ալ ուղեղ մը ունին իրերը մեզի պէս կարգի գնելու ու դատելու . բայց գրտի իրերու հետ ու մեզի հետ հաղորդելու համար պակասութիւն ունին , այն է մեր լեզուն չիգիտնալը , թողութիւնը բռէք այս զրուցուածքիս : Աւտի ասոնք կրթելու և զարգացընելու համար , ինչուք հիմա ազգի մարդկան և փորձին գիտցուցած ծանօթութիւնները , խեղբին մինչեւ հիմա ըրած գտումները ասոնց հաղորդելու համար , պէտք է որ իրենց հետ իրենց հասկընալու լեզու խօսիմք :

Արկարող կարգին մէջ գանբլոզները՝

մարդոց մէջ գրեթէ տղայ են . կամ թէ տղոցմէ ալ վար աստիճան ունին . որովհետեւ տղայք ապագայ մը ունին կատարելութեան . ուստի կատարելութեան յարմար գործարան և գործիք ունին . ասոնց խելքի և գաւազան գործարանը մերինին չինըմանիր . բնէն է որ իրերն ալ մեղի պէս չեն կրնար հասկրնալ ու կարգի դնել : Աստի ասոնք կրթելու համար , պզտիկ տղայ մը կամ անասուն մը ինչպէս կրկրթեմք կամ կը վարժեմք նէ , այնպէս ըլլալու է : Իրենց հետ Վասն զի , Վասն զի , Որովհետեւ , Որովհետեւ բառերը բնաւ գործածելու չէ :

Այս կերպիւս թէ որ մարդ չեն կրնար ըլլալ նէ , գոնէ մարդկութեան նշան մը կըստանան . թէ որ բոլորովին ազատ չեն ըլլար նէ , գէթ իրենց ուրիշէ ունեցած կարօտութիւննին կրքիչնայ և այս ալ մէկ աղէկութիւն մըն է :

Այս ընդհանուր ծանօթութիւնները տալէն ետքը , նայիմք մասնաւորապէս ինչ գիտնալիքներ կան :

Պակասոււորներուն թիւը վերի գուրջածներէս կըհետեւի որ շատ քիչ է , և ասոնք են .

1. Ի ծնէ խուլ և համրները .
2. Ի ծնէ կոյրերը ,
3. Ի ծնէ տիմար և սողունները :

Խուլ և համր , անցած դարու մէջ ասոնք

կրթելու համար խել մը փորձեր ըրին .  
 Պիւֆօն կըստամէ թէ Փէսէս անուն իր  
 վարպետը խուլ և համր մը խօսել տալու  
 համար էփ աղէկ աշխատեցաւ և համրն  
 ալ քիչ մը խօսելու կամ թէ ճիշդ ըսեմ ,  
 քանի մը բառ արտասանելու կարողու-  
 թիւն ստացաւ : Պիւֆօն կրբաղձայ որ  
 ամմէն համր տղոց Փէսէսին մէթոտտար  
 դորձածովի . բայց ասիկայ ամմէնուն շիյար-  
 մարիբ , որովհետեւ շատ դժարութիւններ  
 ունենալէն զատ մեծ արդիւնք մըն ալ չի  
 կրցաւ ունենալ և չիկրնար ունենալ :  
 Եւ այս սխառձառաւս ալ Փէսէսին հե-  
 տեւող չեղաւ :

Իթառ բժիշկն ալ ուղեց ուրիշ կերպիւ-  
 մը զանոնք կրթել . ասիկայ Փէսէսին պէս  
 արտասանել սորվեցրնելու տեղը՝ լսել սոր-  
 վեցրնելու ելաւ . խուլերը բողբոլին ձայ-  
 նի գաղափար չունին չէ , որովհետեւ սոր-  
 վրներնուն և փորերնուն միջնորդութիւն  
 քիչ մը ձայն կրըրսեն . ուստի Իթառ՝ առաջ  
 թմբուկի ձայնը , կամաց կամաց աւելի  
 բարակ ձայն մը , քիչ մըն ալ ետքը բարձր  
 ձայնիւ քանի մը բառ լսելու վարժեց .  
 բայց ասիկայ ալ ստուղ մը չիբերաւ ու  
 բողբոլ կեանքին մէջ Իթառ՝ ասոր աշխա-  
 տելէն ետքը՝ ինքն ալ ետ կեցաւ :

Ըս դարուս սկիզբները ան ոգիներէն  
 որ աստուածային նախախնամութիւնը՝

աղբի մարդկան աղէկութեանը համար ,  
 ատեն ատեն մեզի կըխրկէ , այն ոգինե-  
 բէն կըսեմ , Տըլեբէ արքայն՝ Վաղղիա ու-  
 բիշ մէթոտու մը հնարեց աւելի բնակա-  
 նին յարմար և փորձն ալ անոր ապացոյց  
 հանդիսացաւ :

Վաղղիոյ կառավարութիւնը 'ի նշան  
 երախտագիտութեան Փարիզի խուլ և հա-  
 մըրնեբուն դպրատանը սրահին մէջ արձան  
 մը կանգնեց Տըլեբէյին :

Հոն թէ աղջիկ թէ մանչ երկու հա-  
 բիւբի մօտ աշակերտ կայ . և ասոնք չէ  
 թէ միայն կարդալ դրել , պատմութիւն ,  
 աշխարհագրութիւն , թուարանութիւն ,  
 ուրուագրութիւն , քերականութիւն և  
 գրականութիւն կըսորվին , այլ բարոյա-  
 կանի և հաւատոյ կանոններն ալ , ուրիշ  
 արհեստներ ալ , ինչպէս դերձակութիւն ,  
 կօշկակարութիւն , վիմագրութիւն , պատ-  
 կերհանութիւն և այլն : Այլաժամութիւն  
 անգամ սորվեցան , կամ թէ երաժշտու-  
 թիւն չիսորվեցան , բայց Վիանօ և ուրիշ  
 ձեռքով չալելու նուագարաններ չալել  
 սորվեցան , վերջապէս ինչ որ առանց ա-  
 կանջի կարելի է սորվիլ , սորվեցան :

Տըլեբէյին մէթոտար շատ սարդ է :  
 Անք լեզուն որ հնչմունքներէ և ձայնե-  
 շինած է , ատ լեզուն ին տեղ՝ Տըլեբէն նը-  
 շաններէ և շարժմունքներէ բաղկացեալ

լեզու մը յօրինեց . ինչպէս գիրերը « , ֆ ,  
 Գ , Դ , Հնչելու տեղը , մատուցներուն վը-  
 րան ձեւեր և նշաններ ընելով ու միան-  
 փամայն անոնց վերաբերեալ գիրերն ալ  
 ցուցունելով՝ խուլ և համը տղոց կարգալ  
 գրել սորվեցուց :

Աս կերպիւս կարգալ գրել սորվողնե-  
 րուն մեղի հետ տարբերութիւնը սա է  
 որ՝ մենք բառերը հնչելով կը գիտցընեմք ,  
 անոնք իրենց նշաններովը . մենք բառի մը  
 հնչումը լսելովնիս այն բառին յարաբե-  
 րած գաղափարը մտքերնուս մէջ կերեւա-  
 կայեմք , անոնք ալ այն բառը գիտցընող  
 նշանները տեսնալով :

Վրիգոր բառը աչօք տեսնամք նէ , եր-  
 կուքնուս ալ ուղեղին մէջ Վրիգոր մար-  
 դուն գաղափարը կուգայ . ըսել է որ գը-  
 րիգոր անուանը և գրիգորին անձին մէջ  
 տեղը եղած յարաբերութիւնը՝ երկուք-  
 նուս համար ալ մի և նոյն է . բայց մենք  
 գրիգոր ըսելու համար , գրիգոր բառին  
 մէջ գտնելոված ան ամմէն մէկ գիրերուն  
 մէյմէկ ձայն տալով , գրիգոր հնչումը կը  
 հանեմք . անոնք ալ՝ այն ամմէն մէկ գիրին  
 մէյմէկ նշան տալով , քանի մը նշաններէ  
 բաղկացած նշանը կը ցուցունեն : Վերջա-  
 պէս մենք արտասանելով գիրերը կը ձանչ-  
 նամք , կը կապեմք և կը կարգամք , անոնք  
 ալ նշանացի : Վայց ասոր մէջ ալ մէյմը



վարժրվի նէ, երկուքին ալ արդիւնքը մի և նոյն է, այն է մտքինը հաղորդել և ուրիշներուն գրածը հասկընալ. վերջապէս մեր բառերը կազմող նշանագիծներուն ձայն նշանակութիւն տալու տեղը Տըլեբէն ձայները նշանի փոխեց և ասով մէկ կամուրջ մը նետած եղաւ լսողներուն ու չիլըսողներուն, խօսողներուն ու չիխօսողներուն մէջ տեղը :

Աս մէթոտոսին ամմէն սպարազայները մանրամասնաբար զուրցելը հոս տեղի բան չէ, որովհետեւ չէ թէ միայն շատ երկար կըլլայ, հապա մօտերս բարեկամիս մէկը ասոնց ու կոյրերուն վրայ սղախիկ գիրք մը գրելու գիտաւորութիւն ունենալուն, իմ զուրցելըս որչափ ալ երկար ըլլայ, կիսկա տար եղած կըլլայ :

Ի ծնէ իոյրերը. սոյն պատճառաւս, կոյրերուն վրայօք ալ երկար չեմ գրեր : Տըլեբէն խուլ և համբներուն համար որչափ աշխատեցաւ նէ, գրեթէ այնչափ և անկէ աւելի աշխատեցաւ Հաուին : Այոյրերը՝ ինչպէս որ ամմէնքն ալ գիտեն, անանկ մէկ դիւրազ գածութիւն մը կստանան շօշափելեաց ու լսելեաց որ ամմէնքն ալ կըզարմացընեն : Ասկէ զատ կոյրը՝ մարդկանց ու իրերուն մէջ միս մինակ կենալովը, աս մենակեցութիւնը ուղեղին ներգործելով, խորհուրդը աւելի ամփոփ և դատումը աւելի ճիշդ

և երեւակացու թիւնը աւելի վառ ու ար-  
թուն կրլայ :

Միլտոմի թէ որ կոյր չըլար , իր դրախ-  
տը անանկ չէր կրնար մտմըտալ :

Օգտարանաց աս գիւրաղգածու թիւ-  
նը և իմացականին աս ամիտիումը՝ կոյրը  
գրեթէ մասամբ իւր մեղմէ վեր աստի-  
ճան կրողնէ , բայց միւս կողմէ ալ , դրսի  
իրերուն հետ հաղորդելու մէկ միջոցնին  
պակաս ըլլալովը մեր ստանալու գաղա-  
փարներուն մէկ քանիէն զուրկ են , ինչ  
պէս լուսի , գոյներու , երանդներու , ա-  
րեւի և ուրիշ միայն աչօք գիտնալու բա-  
ներուն գաղափարները :

Բայց կոյրերուն պինդ մեծ պակաս-  
թիւնը սա է որ դարէ 'ի դար 'ի ստեղծմանէ  
աշխարհիս մինչև այսօր ազգի մարդկան  
անցքերուն և խելքին գառմներուն յի-  
շատակագրութիւններուն ծանօթանալու  
համար միմիայն ականջ ունենալովնին ,  
գրքերու մէջ առանց ուրիշի միջնորդու-  
թեանը տեսնալու ու իմանալու կարող  
չեն :

Հառելին այս դժուարութիւնը լուծեց ,  
կոյրերուն համար յատուկ տպագրու-  
թեան կերպ մը հնարելով , այն է խորե-  
լունդն ( խապարթըլը ) գիրեր հանել  
թուղթի վրայ . այս կերպիւս կոյրին մատ-  
վները այն գրերուն վրայ պտըտելով՝

գրերուն ձեւին , մէկըզմէկու հետ կապակցութեանցը , և բառերուն նշանացի կազմութեանցը տեղեկացան , ու վարժը վեկով գրեթէ աչքը բաց մարդոց չափ կարդալու դիւրութիւն տոացան , անանկ որ տեսնողները անգամ կըհիանան :

Հառուխին այս գիւտը կոչրերուն հա մար մէկ նոր դարագլուխ մը եղաւ , որովհետեւ ասով կատարեալ մարդոց կարգին թէ որ չիհասան ալ նէ , շատ ալ հեռու չիմընացին :

Այրերը հիմա տեսնալով կարդալ գրերէլ գիտցողներու չափ ուսմանց կրնան պարտապիլ ու Փարիզի դպրատան մէջ գիւրութեամբ մը կըսորվին թուաբանութիւն և ուրիշ մաթէմատիքական գիտութիւններ , աշխարհագրութի , պատմութիւն , փիլիսոփայութիւն , գրականութիւն , երաժշտութիւն և զանազան մեքենական արհեստներ մինչեւ անգամ ասղնեգործ նկարներ բանիլ : Բայց հոս գոյներուն ու երանգներուն յարմարութեանը մնայն ու պահովիլը տեսնալով , չիկարծըվի որ կոչրերը երանգները ճանչնալու կարողացան , ասիկայ շօշափելով օրինակէլ մըն է : Ա երջապէս քանի մը արհեստներէ , գիտութիւններէ զատ , ինչպէս սրտկերհանութիւն ու գործնական աստեղաբաշխութիւն , և այլն . բոլոր ու-

րիչ բաները սորվեցան ու պիտի սորվին :

Ի ծնէ փիճարները . գամք հիմա խելքէ սրակաս ըլլողներուն . ասոնց մէկ մասը այնչափ աղշուժեան մէջ են որ կրթելը յանկարելեաց է . ասոնք գրեթէ հիւանդի կարգ ըլլալնուն , աւելի բժշկակա նուժեան գրքի մէջ տեղ ունին քան թէ հոս :

Մէկ ուրիշ մասն ալ հասարակ մարդոցմէ շատ վար խելք չունենալնուն սովորական կերպիւ կրկրթովին . ուրեմն ասոնց վրայ ալ ըսելիք մը չունիմք :

Մեր ըսած ապուշները ասոնց երկուքին մէջ տեղը կրգտնրվին . և ասոնք ճանչնալու համար կօգտէ որ միմիայն երեսնին նայիս :

Նախ ասանկներուն ուղեղի արտաքին երեւոյթը անձեւ է . գազաթնին շատ անգամ կամ երկու կողմէն տաքկրցած կամ շատ պղտիկ , երբեմն ալ շատ մեծ է . որին ճակատը դէպ ՚ի ետին տաքկրցած է . որը պղտիկ գլուխի մը հետ չափազանց երկայն անդամներ ունի . որը կիսկատար կըբալէ . որը բոլորովին անդամալոյծ է . մէկը յանչափս դժուարաշարժ , ուր ձգես , հոն կըմընայ , միւսը քալելու գաղափար չունենալուն յաջս երթալու տեղը ձախը կըվազէ , վազելն իբէն կըգըլորի , նորէն ոտքի վրայ կըկայնի , և այն

ատենը աչքվըները չորս կողմը պտըտցընելով նորէն իր տեղը կըդառնայ, գրեթէ երթալու տեղը մոռնալով :

Թէ որ իր հետը խօսիս՝ կամ բնաւ պատասխան չես առներ, կամ կիսակտուր բառեր, աննշան խօսքեր, երբեմն ալ հարցմունքիդ հակասական զրոյցք մը պատասխան կառնես, իրեն հետ խօսած ատենդ, քու զուրցածդ մտիկ ընելու տեղը կամ ուրիշ բանի մը կրնայի, քու կին հոն ըլլալդ անգամ մոռնալով, կամ ափիբերան, աչքը տնկած, անշարժ, գլուխը քու կողմըդ կերկընցընէ ու ամմէն մէկ խօսքիդ արձագանքը կըլլայ, կամ առդաները կըրճտելով, քեզ խօսքիդ կէս ճամբան ձգելով կառնէ կըքալէ :

Չեռքը բան մը տուր կամ անկարելի է որ բռնէ, կամ սաստիկ ուժով մը բռնելով այնչափ կըսըխմէ որ կըհոգնի ու բռնած բանը ձեռքէն կըձրգէ. կամ բռնելէն ետքը ետ տալ չիգիտէ, իբր թէ բռնած բանին հետ կըկապուի :

Որը անհնարին երկչոտ որն ալ անհնարին կատաղի, սովորաբար ամմէնքն ալ անհնազանդ, ծոյլ, աշխատելու անկար, զուրկ յիշողութենէ. ոչ դատում ունին և ոչ խելք՝ և այլն : Ահա մեր պակասաւորներուն քանի մը նշանները :

Պակասաւոր չըլլող տղաք՝ միայն բնու-



Թեան քրած ջանքերովը ու տուած դասե-  
րովը , առանց ուրիշի մը միջնորդութեա-  
նը խել մը բաներ կըսորովին որ աչքի չե-  
րեւար . սրահասաւորը՝ բնութեան տուած  
դասերէն ստուղ քաղելու կարողութիւն  
չունենալուն , չիզարգանար տղայ կըմը-  
նայ թէ խելքի և թէ մարմնոյ կողմանէ :

Մարդուս գործիքներուն և անոնք գոր-  
ծի դնող կարողութեանը այսինքն մարմ-  
նոյ և մտքին մէջ , անանկ կապ մը կայ որ  
միոյն անգործ մընալը՝ միւսոյն տկարու-  
թեանը պատճառ կըլլայ . միտքը չիբացվե-  
լով և չիզարգանալովը չիկրնար մարմինը  
գործածել ու ծառայեցընել . ասիկայ ալ  
գրեթէ անտէրունջ և անգործ մընալովը՝  
կըգուլնայ կամ թէ տկար կըմընայ : Ասոր  
պէս ալ , անդամները և զգայարանքները ա-  
ռանց գործի մընալուն , միտքը՝ աշխատե-  
լու ու վարժըվելու բան մը չունենար .  
ուստի աս ալ տկար կըմընայ . ըսել է որ  
մտքին տկարութիւնը՝ մարմնոյն կանց-  
նի և ասոր տկար մընալն ալ նորէն մըտ-  
քին կանցնի :

Աստի միտքը բանեցընելով անդամնե-  
րն ալ բանեցուցած կըլլաս և անդամները  
բանեցընելով միտքը բանեցուցած կըլլաս :  
Բնութիւնն ալ՝ սղտիկ տղսց միտքը ու  
մարմինը մէկ տեղ կըզարգացընէ . մարմի-  
նը բանալովը՝ միտքն ալ կըբացվի , միտքը



բացվելովն ալ մարմինը ևս առաւել կը զարգանայ :

Բայց պինդ առաջ՝ բնութիւնը պինդ պարզէն կըսկըսի . տղին պինդ պարզ սորվելէքը շարժիլ, դադարիլ, տեսնալ, լսել, շօշափել և այլն է . և մարդուն էն բազադրեալ սորվելէքը՝ իր տեսած , լսած և շօշափած իրերը կարգի դնելով, անոնք վերացեալ գաղափարներու դարձնել՝ և առանց դրսի իրերուն հետ հաղորդելու , մտքին ինքնիրեն գործելն է . մէկէն միւսին անցնելու համար պէտք է որ՝ միտքը առջինին մէջ աղէկ մը վարժըլած ըլլայ և բնութիւնն ալ պակասաւոր չըլլող տղի մը համար այս ընթացքով կը քալէ :

Պակասաւոր տղին հետ ալ այս ընթացքով կը վարսի . բայց ինչպէս որ վերն ալ յիշեցի, պակասաւորը՝ կարողութի չունենալուն , բնութեանը ետեւէն չիկրնար հասնիր , կէս ճամբան կը մընայ :

Աւտի պակասաւորը կը թեւը համար ուրիշ ընելէք մը չունիմք բայց միայն բընութեան ընթացքովը քալել , ուրիշ սորվեցընելիք մը չունիմք բայց միայն բնութեան սորվեցուցածը , ուրիշ ձեւ ուրիշ կերպ գործածելիք չունիմք բայց միայն բնութեան պակասաւոր չըլլող տղի մը համար գործածած ձեւերը ու կերպերը :

Մեր հոս ելել ընելէքը՝ միմիայն գրը

դել պիտի ըլլայ : Պակասաւոր չըլլող տղան՝  
իրեն սորվելիք բաները սորվելու համար ,  
ուրիշի մը միջնորդութեանը կարօտ չէ .  
պակասաւորները՝ նոյն բաները սորվելու  
համար , մեր միջնորդութեանը կարօտ է .  
չէ՛նէ ասոնց կրթելուն ձեւին վրայօք ու-  
րիշ զանազանութիւն մը չիկայ :

Վովելի է այս պատճառաւս Նշուարդ  
Սըկէնին մէթոտոսը որ գրեթէ բոլորովին  
բնութեան պատկերն է :

Սինչեւ Սըկէնին ժամանակը , մեր ը-  
սած խելքէ պակաս տղաքները՝ երեսի վը-  
րայ կրկենային ու թէ որ ատեն ատեն  
կրթելու ջանքեր ընող եղաւ ալ՝նէ , կամ  
շարունակութիւն չըլլալուն կամ աղէկ ըն-  
թացք մը չի գործածուելուն , պտուղ մը չե-  
լաւ : Սըկէն իր մէթոտոսը Վաղղիոյ ա-  
ռաջարկեց և 1842 ին կառավարութեան  
կողմանէ Փարիզի անբուժելեաց հիւան-  
դանոցը գտնելաձ անգամալոյձ , տխմար ,  
ապուշ և ուրիշ տղաքները փորձի համար  
իրեն յանձնըլեցաւ , անոնք որ մինչեւ ան  
ատենը խոտի պէս մեծնալ ու մեռնիլ մի-  
այն գիտէին , Սըկէնին հոգաբարձութիւն  
ու խնամօքը ըստ կարելեաց զարգացան ,  
և յոյս կայ որ մէջերնուն շատերը , չեմ  
ըսեր կատարեալ մարդու կարգ կանցնին  
բայց օր կըլլայ որ խել մը գործնական  
արհեստներու ծառայելու կարողութիւն

կըստանան և ասանկով ուրիշներուն բու-  
լորովին բեռ չեն ըլլար :

Սրկէնին բռնած ճամփան՝ բնականին  
յարմար, ուստի և դիւրին ըլլալուն, պատ-  
շաճ տեսանք մեր ասկէ ետքի զուրյելիք-  
ները անոր ըրածէն գաղափարել :

Ասիս՝ ասոնց կրթողները իրենց կամ-  
քերնուն տէր, ազգու բնութիւն ունե-  
ցող և խօսքերնին քալել տուող մարդիկ ըլ-  
լալու են . պէտք է որ շուտ մը չիհոգնին,  
չիձանձրանան ու չիպաղին . բայց յարա-  
տեւեն ու շարունակեն :

Իրենց կրթութեան ընթացքը ինչպէս  
որ վերն ալ ըսի, անանկ մը ըլլալու է որ  
միշտ պարզէն սկըսելով, բազադրեալին  
անցնելի . նորածին տղայ մը ինչ աստիճան-  
ներէ ինչ ձեւերէ կանցնի, առաջ ինչ  
գաղափարներ կըստանայ, որ մասը առաջ  
կըզարգանայ և որ մասը կըգործէ, ահա  
ասոնց վրայ մտմըսալով, կրթողը պէտք է  
որ իր ընելիքը ասոնցմէ հետեւցնէ :

Գամք հիմա մասնաւոր գիտնալիքնե-  
րուն :

Պըտիկ տղին պինդ առջի ստացած գա-  
ղափարները շարժման և դադարման, հե-  
ռաւորութեան և մօտութեան գաղափար-  
ներն են :

Սուտի ապուշ տղոց պինդ առաջ սոյն  
գաղափարները տալու համար, ամէնը

մէկ տեղ կրկայնեցընես , ու կուզես որ  
մէկ դժի վրայ կենան :

Ասկէ ետքը քալելու սյսինքն շարժման  
գաղափարը կրջանաս տալու : Մայց ասոր  
համար պէտք է որ , տղաք իրենց աջն ու  
ձախը գիտնան : Ենչպէս որ առաջ ալ ք-  
սած եմ , հոս կրթողին կամքը ապուշին  
կամքին տեղը պիտի բռնէ , ուստի ինչպէս  
որ զօրքերը քալել ու կայնիլ կրսորովին ,  
ասոնք ալ սոյն կերպիւ միայն կրնան սոր-  
վիլ : Հիմա իրենց աջն ու ձախը գիտցը-  
նելու համար գետիներ բան մը կրդընես  
կուզես որ քու տխմարըդ առնէ քեզի տայ ,  
առջի անգամին կամակորուծիւն ցրցու-  
նելով թէ որ չընէ նէ , դուն ձայնովդ ,  
խօսքովդ սաստելով կրստիպես որ ծռի  
ու քեզի տայ , կուզես միանգամայն որ քե-  
զի զուրցէ թէ աջ ձեռքով տուաւ եթէ  
ձախ . հայց ուտելու ատենը որ ձեռքով  
հայց կուտէ նէ , որ ձեռքը կրգործածէ նէ ,  
անոր աջ կամ ձախ բլլալը կրստիպես որ քե-  
զի զուրցէ , սխալի կամ մոռնայնէ , միտքը  
բերելով կուղղես և երկայնմտու թեամբդ  
կրնաս իրեն ձեռքիւններուն աջն ու ձախը  
ճանչցընելու : Մէյմը ասիկայ գիտնալու  
վարժրի նէ ալ անկէ ետքը աչքիւններուն ,  
տոքիւններուն և մարմնոյն ուրիշ մասունք-  
ներուն աջն ու ձախը քիչ շատ գիւրու-  
թեամբ կրնայ ճանչնալ :

Քանի մը ատեն մէկ գըծի վրայ կենալու և իրենց ձախն ու աջը ճանչնալու վարձելէն ետքը, կրսկըսիս քալել սորվեցընելու. ասոր համար քանի մը տղաքը մէկ կարգ կըշարեա ու կըհրամայեա որ ամմէնը մէկէն աջ ոտքովնին առաջ տանին, առջի անդամին ՚ի հարկէ ատոնց որը ձախը պիտի երկնցընէ, որը երկուքը մէկ տեղ, որն ալ անշարժ պիտի մընայ. այն ժամանակը՝ մէկէն միւսին երթալով, որին ձախ ոտքին վրայ կոխելով կըբռնեա ու կըստիպեա որ աջն երկնցընէ, որը կըհըրեա որ քալէ, որը կըբռնեա որ չիյնայ :

Ատեն մը ասանկ պէտք է ամմէննին մէկ տեղ քայլերնին առնելու վարժեա, ետքը քալել ու շխտակ քալել պիտի սորվին : Բայց կերպիւս քիչ ատենվան մէջ, այն անշարժ կեցող կամ խառնիխառն քալողները՝ չէ թէ միայն դիւրութեամբ մը շխտակ քալել կըսորվին, այլ և միանգամայն հնազանդելու ալ կըվարժին. որն որ միջոց մը կըլլայ ուղածդ՝ ուղած կերպիւղ ընել տալու :

Ատեն մը քալելու վարժելէն ետքը, սանդուխքներ կըշինեա կերպ կերպ, փատէ, չուանէ, ծուռ ծառի վրայ խորշեր փորելով և այլն, ու կըստիպեա որ այն սանդուխքներուն վրայ ելլան իջնան. հոն ՚ի հարկէ իրենց մկանուկքը կըվարժին ճիշդ



չարժեւում . քայլերնին երբեմն մեծ , երբեմն պզտիկ առնելու , մէկ կողմը ծռելով մէկ ձեռօք սանդուխքին մէկ դիէն կախալելու , ուրիշ անգամ մըն ալ շինալու համար սանդուղքին վրայ պրելլովելու ու սխմելով բռնելու , և այլն . ասանկով չէ թէ միայն մկանունքները կուժովնան , հասլա շարժման ճշդութիւն ալ կըստանան . վտանգի ընտելանալովնին իրենց վախկոտութիւնը կըքիչնայ , իրենց ջիղերը դրդրվելով , իրենց միտքն ալ ուրիշ ձեւ մը կըստանայ :

( Շարժման մէջ աւելի ճշդութի կարգ և ուղղութիւն սորվեցընելու համար ամ մէն մէկուն երկու ձեռքը երեք չորս ( )-խանոց բաներ կուտաս , ու ասիկայ թէ քալելու վազելու և թէ ուրիշ շարժմանց ատենը մէկ տեղ կրելու են : Ասանկով ջիղերնին աւելի կուժովնայ . մկանունքնին ալ աւելի ճշդութիւն կըստանան շարժելու , միանգամայն ալ կըսորվին բեռ մը վեր վերցընել , վար իջեցընել , երկնցընել , տալ , առնել , և այլն :

Քալելու ատեննին ասոնք ձեռքվընին ըլլալուն , ձեռքվընին կախ կըմընայ ու մէկ կողմը կամ միւս կողմը չիկրնալով ծռիլ , սովորութիւն կըստանան շիտակ քալելու և շիտակ վազելու :

( Շիտակ վազելու կըսեմ , որովհետեւ քիչ մը քալելու վարժրվին նէ , սկտք է որ



վազել ալ, ցաթկել ալ սորվին. նախ շիտակ տեղ մը, ետքը վերէն ՚ի վար, վարէն ՚ի վեր, մէկ կողմէ միւս կողմը :

Մտեն մը շարժման ամէն մէկ կերպերուն մէջ վարժելէն ետքը, գործիք գործածել սորվեցընելու համար ձեռքովնին մէյմէկ փատ կուտաս լարախաղայներուն կշիռին նման. աս փատը ան իրենց ձեռք վրնին կրած չորս հինգ ( ) խանոց բեռան տեղը պիտի բռնէ, թէ սանդուխքի վրայ ելլան թէ իջնան թէ վազեն և թէ ցաթկեն. պէտք եղած տեղը աս փատը ծռել կամ վեր վերցընել, երկնցընել կամ ետքաշելու կը հարկադրին. և ասանկով իրենց բազուկնին կը վարժի :

Քիչ մը ետքն ալ պէտք է որ կռնակովնին փատ կրել, գետին փորել սորվին. փորած հողերնին կողովի մը մէջ գնելով, կռնակովնին մէկ տեղէ ուրիշ տեղ մը կը բերել, փոս մը լեցընել սորվին :

Մտենէ մը ետքը կը սկսիս աւելի բարակ գործիքներ գործածել սորվեցընելունչպէս սղոց, դանակ, բերիչ (բիւշտէրէ) բանեցընել, և այլն. կուզես որ փատ մը հաւասար կերպիւ սղոցով դանակով կամ ուրիշ մէկ գործիքով մը երկուքի բաժնեն : Մամէն մարդ կը հասկընայ որ այս ճամբովս շօշափելիքը աղէկ մը կը վարժի : Միանգամայն կուզես որ իրենց սեղանը

իրենք գնեն վերցրնեն . իրենց ամանները  
իրենք լուան ու տեղը գնեն . իրենց ան-  
կողինը իրենք ձգեն . և վերջապէս իրենց  
հարկ եղած ծառայութիւնը իրենք ընեն :

Միւս զգայարանքներուն մէջ տեսա-  
նելիքն ալ՝ շօշափելեաց հետ թէպէտ կը  
վարժովի , բայց մասնաւորապէս իրեն ճըշ-  
գութիւն տալու համար , վերի բսած կը-  
շիւր ( թէրազին ) կը գործածես : Խտէքէ  
պակասաւորները կը տեսնան , որովհետեւ  
կոյր չեն . բայց ուշադրութիւն ընելու  
կարողութիւն չունենալնուն տեսածնուն  
բան մը չեն կրնար հասկընալ : Աւտի  
զանոնք ուշադիր ըլլալու ստիպելու հա-  
մար , մէկըզմէկէ քիչ հեռաւորութեամբ  
կրկայնիք , և գնտակ նետելու կերպով  
բսած կշիւս մէկըզմէկու կրնետէք ու  
մէկըզմէկու նետածը կրբռնէք . կշիւր  
իր ոտքին կամ ուրիշ մէկ կողմին վրայ չի  
ձգելու համար քու ապուշ աշակերտդ՝ կը  
նայի ճիշդ տեսնայ որ ձեռքով բռնէ ու  
չիթողու որ ոտքին վրայ խնայ . ասիկայ  
երթալով սովորութիւն մը կըլլայ ճիշդ  
նայելու :

Աս խաղին մէջ քիչ մը վարժի նէ ուրիշ  
գործ մը կը գրնես իրեն , որուն մէջ չի  
թէ միայն աչքը և ձեռքը վարժի , հասցա  
միտքն ալ : Ասոր համար Արիէն վաթսուն  
հատ մը կը լինարներ շինել տուեր է քա-

ուանկիւնի ձեւով ամմէն կողմը ու երեսը տաշած , երկայնութիւնը՝ լայնութեան կրկինը , և լայնութիւնը՝ հաստութեան կրկինը . ուզելու է որ տղան ասոնցմով սրատ շինէ : Աս կղմինսորըները մէկգմէկու վրայ դնելու ու շարելու համար , պէտք է որ տղան՝ լայնութիւնը երկայնութեանէն , հաստութիւնը լայնութեանէն որոշել գիտնայ . մէկին անկիւնը միւսին անկեանը վրայ կէտ առ կէտ դնելու ու յարմար ցրնելու համար , պէտք է որ ուշադրու թիւն ընելով , խելք բանեցրնէ :

Կամաց կամաց ասանկ սարդ բաներու մէջ վարժըվի նէ , աւելի դժար բաներու ձեռք կրնայ զարնել :

Ասանկ քանի մը հողի մէկ տեղ խաղալով վաղէն , ելլան , նստին ու աշխատին նէ , ականջնին ալ կը դործածվի , ու ստի երթալով այն ալ կը վարժի :

Գամբ հիմա խօսելու , կարգալու և դրելու :

Խօսել . տղայ մը մէկէն ՚ի մէկ լեղու շելլար . առաջ վանկ մը կարտասանէ , ետքը պզտիկ բառ մը , երթալով մէկ քանի բառ մէկտեղելով խօսք մը կը շինէ և այլն . պա կասաւորին ալ նոյն կերպիւ խօսել սորվեցրնելու է . այսինքն սարդէն բաղադրեալին , դիւրինէն դժարին անցնելով . սովորաբար կը կարծրվի , կըսէ Արկէն , թէ մի-

Նակ ձայնաւորները արտասանելը՝ աւելի դիւրին է քան թէ բաղաձայները, թէ տը ղի մը աւելի դիւրին է օ ըսել քան թէ Տօ, ի քան թէ յի = Վ, ս կարծիքը թէ որ շխտակ ըլլայ նէ, նոր լեզու ելլող տղաք չէ թէ միայն առաջ մինակ ձայնաւորները արտասանելու են, հասրա նախընթացը ձայնաւոր և յետագայն բաղաձայնէ բաղկացած վանկերը՝ բաղաձայնով սկսած վանկերէն առաջ արտասանելու էին, վերջապէս պէտք էր առաջ ա, օ, ին արտասանէին չէ թէ ա, օ, նի = Վայց ամմէնքս ալ դիտեմք որ սլզտիկ տղան նախ բաղաձայնով սկսած վանկերը կարտասանէ ու իր պինդ առաջ ա, է, ի, հնչելը արտասանել չիսեպ վիր, որովհետեւ ասիկայ պօռալ է քան թէ արտասանել, ինչպէս որ առջի մասին մէջ ալ զուրցեցի : Աւրեմն տղան թող առաջ բաղաձայները արտասանել սորվի, չէ թէ ձայնաւորները :

Վանկերուն մէջ ալ բաղաձայնով սկըտածները՝ ձայնաւորով սկսածներէն առաջ թող արտասանէ, և աս առջիններուն մէջէն ալ շրթնական վանկերը ուրիշ վանկերէն առաջ պիտի արտասանէ :

Վերջապէս զատ վանկերը կրկնած վանկերէ ետքը արտասանել տալու է, որովհետեւ աւելի դիւրին է պապա ըսել քան թէ պա և նոր լեզու ելլող տղաք ալ այս

ընթացքով խօսելու սկզբնաւորութի կրնեն:

Աղէկ արտասանել սորվելէն ետքը, իրի մը անունը պիտի սորվի. բայց իրը տեսնալով, վերջապէս նոր լեզու ելող տղոց հետ բնութիւնը ինչպէս կրվարվի նէ, դուն ալ ասոնց համար անանկ պիտի ընես:

Կարճալ. մեր միտքինը նշաններով հասկըցընելու արհեստը, թէ որ եգիպտացւոց ատենական պէս, մինչեւ հիմա իրին կամ բանին նկարագրութեանը վրայ հիմնած ըլլար նէ, ապուշ մը՝ քիչ շատ աշխատելով գաղափարի մը և գաղափարին վերաբերեալ նշանին մէջ տեղը եղած յարաբերութիւնը՝ կատարեալ խելք ունեցողներուն պէս կրնար հասկընալ: « Աս նշաններ տեսնաս նէ, միշտ պիտի գիտնաս որ թագաւոր ըսել է »:

Բայց աս Սեթոտոսին՝ մեծ աշխատանաց կարօտ պարզութիւնը վերնալով, իր տեղը մեր կարգալու ու գրելու կերպը հնարեցաւ. և ասոր մէջ, նշանը՝ իրը յարաբերելու տեղը, հնչում մը կըյարաբերէ: Աս կերպիւս՝ սակաւաթիւ նշաններ ու ձեւեր ճանչնալով, անոնց մէկը մէկու հետ ընկերանալը, կապվիլը ու բառերուն հնչմանը հետ ունեցած յարաբերութիւնը սորվելով, ամմէն մարդ՝ քիչ ժամանակի մէջ, կարգալու գրելու կարողութիւն ստացաւ, ու եգիպտացւոց ա-



տենիան պէս կարդալ գիտնալը՝ ալ մէկ բարձր գիտութիւն մը չիտեսպօկեցաւ :

Բայց հոս ամմէն մէկ բառին վանկերը նշանակու թիւն մը չունենալուն այսինքրն իրի մը , բանի մը չիվերաբերելուն , վանկերուն մասունքները ևս առաւել աննրշան մնալով և մտքին մէջ եզր կամ կեդրոն մը չիգտնալուն , մէկէն ՚ի մէկ ատոնց խելք պառկեցրնելու համար խելքի պակասութիւն ունեցողներէն աւելի խելք ունենալու է :

Պղախիկ տղայ մը մեր կերպը կարդալ սորվելէն առաջ ինչ բաներ սորված , ինչ գաղափարներ ստացած է որ ատոնցմէ մեր պակասաւորը զուրկ է :

Հնչմանց և նշաններուն մէջ եղած յարաբերութիւնները իմանալու և այս հընչու մները մէկ տեղելով բառ մը արտասանելու , և այն ամմէն մէկ հնչմանց վերաբերեալ նշանները մէկտեղելով բառի մը նշանադիժը շինելու և ճանչնալու կարող ըլլալու համար , խել մը ծանօթութիւններ պէտք են . պէտք է որ տղան խել մը գաղափարներ ստացած ըլլայ առաջկուց որ ասոր իր խելքը պառկի :

Լ՛հա աս ըսած ծանօթութիւններս :

1. Պոյնը ի՛նչ է :
2. Պիճն ի՛նչ է :
3. Տարբերութիւնը ի՛նչ է :



4. Համեմատութիւնը ինչ է :

5. Մարմնոց տարածութիւնը ինչ է :

6. Չեւն ինչ է :

7. Անուան մը և իր յարաբերած ձեւին մէջ տեղը ինչ յարաբերութիւն կայ :

8. Չեւի մը և իր անուանը մէջ տեղ ինչ յարաբերութիւն կայ :

9. Ինչպէս ձայն մը կամ վանկ մը մարդուս բերնէն մէկ հեղէն ելլայ նէ, այն ձայնը կամ վանկը յարաբերող նշանները մէկ քանի հատ կրլլան :

10. Քանի մը նշաններու և մէկ քանի իրարու ետեւէ եղած արտասանութիւններուն մէջ տեղը ինչ յարաբերութիւն կայ :

Կարդալ սորվիլ չըսկրսած պէտք է որ ապուշ աշակերտը՝ առջի եօթը ծանօթութիւններուն աղէկ մը տեղեկանայ, անոնց մէջ վարժրի ու հապա կարդալու ձեռք ղարնէ, ետքի երեք ծանօթութիւններուն՝ կարդալ սորվելու ատենը միայն կրնայ տեղեկանալ :

Աս ծանօթութիւնները ապուշ տղոց կարդալ սորվեցնելու համար նախապարաստութիւն մըն է, առանց ասոնց անկարելի է որ կարդալու խելքերնին հասնի :

Խելքէ պահասները՝ գծի մը ինչ ըլլալը չըգիտեն, մէկը՝ միւսէն մեծ կամ պզտիկ, մէկը ուղիղ, միւսը կոր ըլլալը չեն կրնար

որոշել իրենց համար եռանկիւնը քառակուսիէն , բոլորակը ձուածեւէն և այլն . տարբերութիւն մը չունին :

Ասիկայ սորվեցընելու համար , ճանչցուր նախ ձեւերը և իրենց անունները . ետքը մէջերնուն նման ձեւերը մէկ դի , և տարբեր ձեւերը ուրիշ մէկ կողմը դնելով , նմանները ու տարբերները մէկզմէկէ որոշել ու ճանչնալ սորվեցուր . սորվեցուր որ կլորը ձուածեւէն և քառանկիւնը տարանկիւնէն որոշեն և այլն :

Վդուարդ սրկէն . ասիկայ դիւրացընելու համար ձեւերը տախտակներէ շինել տուեր է , հետն ալ ուրիշ մեծ տախտակ մը որուն վրայ նման ձեւերը մէկ դի և տարբեր ձեւերը միւս կողմը փորած խորշի պէս , ու այս խորշերը տախտակէ շինած ձեւերուն ճիշդ մեծութեամբը , անանկ որ մէկ ձեւ մը՝ իր խորշին մէջ միայն կրնայ մըտնալ , ուրիշ տեղ չիկրնար : Ասկէ զատ ուրիշ մեծ տախտակ մը որուն վրայ մի և նոյն ձեւերը փորած ըլլալու տեղը ներկած :

Հիմա այն ձեւերը մէկ տեղ խառնելով , թող տղան մէջէն նմաններն ու տարբերները զատէ ու ամմէն մէկ ձեւը իրեն վերաբերեալ խորշին մէջ տեղաւորէ :

Չեւերը նորէն մէկզմէկու խառնելով , նորէն զատէ ու ներկած տախտակին վը-

բայ շարի ամմէն մէկ ձեւը իր տեղին յարմարցընելով :

Չեւի մը անուներ դուն տալով, ինքնալ թող այն ձեւը առնէ խորշին մէջ դընէ : Ասիկայ սորվելէն ետքը, խորշին մէջ շարուած ձեւերը մատով դուն ցրցունելովդ, ինքնալ թող անոնց անունները տայ :

Աս ճանօթութիւնները տղին մըտքին մէջ տպաւորելէն ետքը, կարգալ տալու ձեւը կըզարնես : Աս ասոր համար՝ փատէ գիրեր շինել կուտաս, ասոնց վրայ գիրերը կարգաւ արտասանել, ետքնալ ճանչնալ թող սորվի : Գիրերը աղէկ ճանչցընելու համար, ամմէնը մէկ տեղ կըխառնես ու տղին առջին կըթափես, մէկին և միւսին անուներ կուտաս ու կուղես որ անուներ տուած գիրդ քեզի ցրցունէ : Ասոր մէջ փարթըլելէն ետքը, դուն գիրը կըցուցունես ու այնալ անոր անուներ քեզի կուտայ : Արբեմն գիրերուն մէջէն ձեւի կողմանէ մէկզմէկու նման և տարբերները զատ զատ զատելով, ինչպէս նմանները . ա և փ, ո և ս, շ և ջ, ի և ի, է և է, և այլն, տարբերները . օ և օ, է և պ, և այլն : Ասոնք երկուք երկուք տղին առջին դնելով, կուղես որ մէկզմէկէ ունեցած զանազանութիւննին ճանչնայ :

Ասանկ ալ՝ հնչման կողմանէ նմաններն ու տարբերները, ինչպէս նմանները, փ և ի,

ծ և յ, շ և ջ, ֆ և փ, և այլն. տարբեր-  
ները. ֆ և ֆ, ւ և ը, և այլն. ասոնք  
ցուցունելով իրեն արտասանել կուտաս  
ու կըձանցընես :

Վիրերը աղէկ մը այս կերպիւս ձանջ-  
նալու ու արտասանելու վարժըվելէն ետ-  
քը, պէտք է որ այն տախտակէ դիրերու  
վը վանկեր շինեն ու միշտ պարզէն բա-  
ղադրեալին անցնելով. ինչպէս, նախ եր-  
կագիր վանկերը որ մէկ նախագաս բաղա-  
ձայնէ և մէկ յետագայ ձայնաւորէ բաղ-  
կացած են և ասոնք են. ֆւ, ֆէ, րօ, ըի,  
և այլն. երկագիր վանկերը շինել սորվելէն  
ետքը, եռագիր վանկերուն կանցնիս, ըսկը  
սելով նախ անոնցմէ որ բաղկացած են նա-  
խագաս և յետագայ երկու բաղաձայնէ  
ձայնաւորով մը կապած. ինչպէս ֆւււ,  
ւար, ճււ, և այլն. ետքը կուգաս անոնց  
որ երկու բաղաձայն ետեւէ ետեւ և ձայ-  
նաւորով մը վերջաւորած են. ինչպէս ֆւււ,  
ւրւ, ճււ, և այլն. ասոնցմէ ետքը ձայ-  
նաւորով սկսող վանկերուն մէջ կըվարժես.  
ինչպէս ւֆ, օֆ, էր, ււֆ, ււր, ւււ,  
և այլն :

Վամաց կամաց քանի մը վանկ մէկտե-  
ղելով հեգել, բառ մը շինել, և վերջապէս  
բառերը մէկտեղելով բոլորովին շիտակ  
կարգալ կըսորվի, նախ այն իր փայտէ գրե-  
րուն վրայ, ետքն ալ գրքի մէջ :

Վրէլ. ատեն մը կարդալու մէջ որու ճակէն ետքը , գրելու սկզբնաւորութիւն կրնես :

Բայց ինչպէս բառ մը , գաղափար մը յարաբերող նշանները՝ ճանչնալն ու իմանալը այսինքն կարդալը , մէկ պայմանադրութիւն մըն է , անանկ ալքանի մը կերպ գիծեր մէկտեղելով ան նշանները շինելը այսինքն գրելը պայման մըն է . և ասիկայ իմանալու ու հասկընալու համար , տկար միտք մը պէտք է որ պարզէն բաղադրեալին անցնի :

Վիճ մը կարգ մը չունենայ ու գիպուածով քաշված ըլլայ նէ , անուն չունենար ու գիծ չիտեպիլիր , ուստի գծագրել սորվելէն առաջ , պէտք է որ տղան գիծի մը կարգը , ձեւը ճանչնայ . և աս բանիս համար , պէտք է որ նախ ինչ բանի վրայ այն գիծը պիտի քաշվի նէ , այն բանին վերը և վարը , աջը և ձախը , մէջը և քովը գիտնայ . ասոր գաղափարը աղէկ մը ըստանալէն ետքը , կրմընայ նշանները ձեւի խօթել այսինքն գիրը գրելը . ուստի գրողը՝ պէտք է որ վարժէ իր ձեռքը վեր և վար , յաջն և ՚ի ձախն տանել ու բերել . նմանապէս պէտք է որ վարժէ իր միտքը գիծերուն ձեւերը ճանչնալու և իր ձեռքը՝ այն ձեւերը շինելու և վերջապէս այն ձեւերը մէկտեղելով պայ-



մանագրեալ նշանը երեւան հանելու . վերջապէս գրի մը ամմէն մէկ մասին սա կողմի կամ նա կողմի ուղղութիւնը , կորուսթիւնը իմանալու ու ճշդիւ օրինակելու համար , պէտք է որ միտքը սորված ըլլայ ուղիղին , կորին և այլն գաղափարները ճանչնալու , և ձեռքն ալ վարժըված ըլլայ այն գիծերը աղէկ մը շինելու :

Աւստի գիր գրել սորվելէն առաջ պակասաւոր տղին քանի մը գիտցունեւելքներ կան և ասոնք են :

1. Ամմէն կերպ գիծերը ճանչնալ և քաշել :

2. Անոնց ձեւը գիտնալ :

3. Գիծերը մէկ տեղելով սա կամ նա ձեւը գծել :

Գիծերը գծել սորվեցընելու համար միշտ պինդ պարզէն կըսկըսիս . պինդ պարզը և պինդ դիւրինը ուղիղ գիծն է . ա սիկայ սորվեցընելու համար , երկու կէտ կըդընես մէկը վերը , միւսը վարը . ու տըղին աչքին առջին , վարէն կամ վերէն ըսկսելով մէկ կէտէն միւս կէտը գիծդ կըքաշես : Տղան առջի անգամին քեզի չափ ուղիղ չիկրնար գծել . երկրորդ կէտին վերայ ինջնալու կամ ելլալու տեղը քովնտի կիյնայ . աստ չըլլալու համար կէտերդ երկու զուգահէտական գծերու մէջ կառնես , քաշվելու գիծը սողին կամ անդին



խոտորելու տեղ չունենալուն , քիչ շատ  
դժարութեամբ տղան ուղիղ քաշել կը-  
սորվի :

Հորիզոնական գիծը սորվեցրնելու հա-  
մար , նոյն կերպիւ կըվարվիս . ցուցունելով  
միանգամայն թէ ինչ աստիճաններէ անց-  
նելով ուղիղը՝ հորիզոնական կըլլայ :

Հորիզոնականը , քաշելու վարժավելէն  
ետքը կորը կըսորվեցրնես . բայց ուղիղին  
հետ բաղդատել տալով :

Շեղը սորվեցրնելու համար երկու զու-  
գահեռական կըգծես և մէկուն վերի և  
միւսին վարի կէտերը մէկտեղելով շեղը  
կըշինես . և ասանկ ըլլայ նէ , տղին խել-  
քը կրնայ պառկիլ , չէնէ ուղիղին և շե-  
ղին տարբերութիւնը չիկրնար հասկը-  
նալ : Ասոնց մէջ տղան վարժելէն ետքը ,  
կըսկըսիս գիծերդ մէկտեղել , հորիզոնա-  
կանը ուղիղին հետ մէկտեղելով անկիւն  
մը շինել . ասոնց վրան կոր մը աւելցրնելով  
բոլորակին մէկ մասը յօրինել . բոլորակին  
մասունքներն ալ մէկտեղելով , բոլորակը  
ցուցունել , նմանապէս եռանկիւնի , քա-  
ռակուսի շինել և շինել տալ : Այս  
ամմէն մէկ գիծին ձախն ու աջը , վարն  
ու վերն ալ կըգիտցրնես որով գծագրութե՛  
սկզբունքները տղին տուած կըլլաս :

Ալ անկէ ետքը , գիր մը ուղիղ գծի մը  
վրայ կեցած ատենը , այն գրին որ մասը

վեր է , որ մասը վար . որը ուղիղ , որը  
կոր . որը կարճ , որը երկայն և այլն . այն  
ամմէն պարագայները առաջկուց տղան  
սորված ըլլալուն , գիրերը հասկընալու ու  
անոնք գծելու գժուարութի մը չիբաշեր :

Բայց մեր նօտր գրին համար , միմիայն  
գիծ քաշել և գիծին փոփոխութիւնները  
գիտնալով չիլըմըննար<sup>1</sup> , որովհետեւ նօտր  
գրին ճնունդը աւելի կէտն է քան թէ գիւ  
ծը . բայց կէտն ալ գծին մէկ մասն է ,  
ուստի գիծը պարզելով կամ թէ ասանկ  
տխմար տղոց համար , նօտր գիրը Եւրո-  
պացւոց գիրերուն կերպը խօթելով կը  
սորվեցընես :

Մինչեւ հոս սորվեցընելիք բաներուն  
սկըզբունքները տուինք . դաստիարակը կը  
հասկընայ որ ասով չիլըմըննար . տղաք ա-  
սոնց մէջ վարժըվին նէ , ալ աւելի գժա-  
րին ձեռք զարնելու է և որչափ որ կարելի  
է նէ , առաջ քշելու է :

1 Մեր գործածած նօտր գիրը իրեն նախնի ձեւովը  
գրելը՝ աւելի գժար է քան թէ այն գիրերը Եւրոպացւոց  
գիրերուն ձեւը խօթելով : Սովորաբար տղաք աւելի գիւ-  
րութեամբ կըսորվին և կըգրեն , գիրերը ասանկ փոխ-  
ված ըլլան նէ . ու թէ որ մինչեւ հիմա նօտր գիր գրող-  
ներուն շատը առջի կերպովը կըգրեն ու նոր ձեւով զը-  
րողները սակաւաթիւ են նէ , պատճառը սա է որ սա մեր  
վերի ըսած ծանօթութիւնները տուող կամ տալ գիտցող  
ուսուցիչ կամ շունիտք կամ թէ այնչափ քիչ ունիտք որ  
գրելի է չունիտք :

Գամբ հիմա իրենց բարոյական մասին : Պէտք է որ սրկասաւոր տղին կիրքերն ալ բարեկարգես , մոլութիւնները զսպես , բաց աւելի սաստելով քան թէ համոզելով . որովհետեւ ասանկ սրկասաւոր տղոց խելքը , բողբոլին տղայութեան մէջ ըլլալուն , միայն համոզական ձեւերով ոչ իրենց ըրածէն ետ կենալ կրնան սորվիլ և ոչ իրենց ընելիքնին ընել . ուստի միմիայն հրամայական ձեւեր գործածելով ուղածդ իրենց ընել տալու է : Իրասպէս ստոնք կրթելը ուրիշ բան չիկրնար ըլլար , բաց միայն խել մը սովորութիւններ տալ , մարմնոյն , մտքին և սրտին որով իրենց զրգուելի վիճակէն ազատելով , քիչ շատ յառաջ երթան , իրենք իրենց օգտեն , ուրիշէ կարօտութիւն չունենան ու աւսանկ վարժըլած , որը արհեստաւոր և ուրը բանւոր ըլլալով , իրենց ուտելու հացը իրենք կարենան ձարել :

Անօթիին հաց և ծարաւին ջուր տալը միայն՝ բարեգործութիւն և ողորմութիւն չիտեսարի . ասկէ աւելի բարեգործութիւն և ողորմութիւն իր հացն ու ջուրը ինք գանալը՝ մէկուն սորվեցընելն է :

Վ Ե Ր Ձ

Արեւորտ Սասին :

## Յ Ը Ն Կ

## Մ Ը Մ Ն Ե Բ Կ Բ Ո Ր Դ

Տըռւ մը երեք համ երեք ու կես տարիէն մինչեւ տասներկու համ տասներկու տարեկան հասակին ընելու խնամքները .	1
Գ Լ Ը Ը Բնակութիւն .	1
Գ Լ Բ Բուտելեաց և ըմպելեաց վրայ .	29
Յ Օ Գ Ե Մտեղէն կերակուրներու վրայ .	43
Յ Օ Գ Բ Խտտեղէն ու պտղեղէններուն վրայ .	47
Յ Օ Գ Գ Կերակուրները եփելուն վրայ .	52
Յ Օ Գ Դ Ըմպելիքներուն վրայ .	55
Գ Լ Գ Գ Ընդայ հանել .	61
Գ Լ Դ Դ Հագվիլ .	65
Գ Լ Ե Ե Քնանալ .	80
Գ Լ Զ Զ Մաքրութիւն .	86
Գ Լ Է Է Վարժութիւն .	98
Յ Օ Գ Ե Ե Հարժում .	103
Յ Օ Գ Բ Բ Վարժութիւն ձայնի և լեզուի .	116
Յ Օ Գ Գ Գ Վարժութիւն զգայարանաց .	119
Գ Լ Ը Ը Խնացական մարդ .	130
Գ Լ Թ Թ Պակասաւոր մանկանց վրայ .	217

ՄԱՍՆ Ը.

ԵՐԵՍ.	ՏՈՂ.	ՍԻՆԱԸ.	ՈՒՂԻՂ.
ժգ	21	և կրնայ բովանդակել	կամ կրնայ խմանալ
իթ	16	Աթինասի	Աթենասի
	5	Վալուայի	Վալչի
	20	սբանցին	սրբանցին
	59	կրբակչի .	կրփակչի .
	99	ունակու թիւն	ընդունակու թիւն
101	17	ունակու թիւն	ընդունակու թիւն
102	7	Մաքենցիին	Մաքենցիին
109	22	Էմելին	Էմիլին
116	17	միսքին հաղարդակցու թեանը	միսքինը հաղարդեւու
127	16	կրնան	կրնայ
129	19	չունին :	չունին կրկարծէ :
147	2	ու կարգի	կարգի
155	29	1 Ehelle	1 Echelle
167	19	բաղչաստութե գործիք	կէտ բաղչաստութե
170	22	ան ընելը	ան ընելով
180	17	մթին մջ	մութին մջ

ՄԱՍՆ Բ.

8	12	մարդու պէս	անոր պէս
	25	ունակու թիւն	ընդունակու թիւն
9	9	չէն .	չէ .
	20	խօսք	խօսքով
13	1	,	,
18	11	Ֆան	Ֆայ

10	22	ասանկ	անանկ
20	14	արեւէն	արեւին
22	27	ղէւօ	ղջոյ
25	5	սառաջ	սառաջ
26	15	հեռուէն	հեռուն
42	21	դատելու շարժման	շարժման
44	18	կաշի	կաշի
47	24	ընդշամարաները	ըմբ շամարաները
57	14	պահպին	պահպին
60	27	հագուստը	հագուստին
61	14	սերմնակաթի	սերմն ու կաթի
66	27	փոսկի	բոսկի
67	5	իրեն	իրենց
126	5	չալոցը	չալոցը
127	17	բարակութիւնը	բարակութիւնը
142	14	իրենց	իրեն
145	27	ճիշտ	ճիշտ
151	9	տրամաններով	տրամաններով
157	22-25-29	ունակութիւն	ընդունակութիւն
158	18-22	ունակութիւն	ընդունակութիւն
160	4-5	ունակութիւն	ընդունակութիւն
169	6	ուղէ	ուղէ
	20	ճամբա	ճամբա
186	1	ինքնիրենը	ինքնիրեն
190	25	սխալէն	սխալին
192	16	արեւէն	արեւին
195	1	նախախնամութիւնը	նախախնամութեանը
199	15	դժարութիւնը	դժարութիւն
250	19-21	տարկըցած	տարկըցած
254	5	է	են

անձր արքային 21 8  
 Եւրոպական 22  
 23 0 0  
 24 20  
 25 1 21  
 26 11 21





181	12	...	...
182	13	...	...
183	14	...	...
184	15	...	...
185	16	...	...
186	17	...	...
187	18	...	...
188	19	...	...
189	20	...	...
190	21	...	...
191	22	...	...
192	23	...	...
193	24	...	...
194	25	...	...
195	26	...	...
196	27	...	...
197	28	...	...
198	29	...	...
199	30	...	...
200	31	...	...
201	32	...	...
202	33	...	...
203	34	...	...
204	35	...	...
205	36	...	...
206	37	...	...
207	38	...	...
208	39	...	...
209	40	...	...
210	41	...	...
211	42	...	...
212	43	...	...
213	44	...	...
214	45	...	...
215	46	...	...
216	47	...	...
217	48	...	...
218	49	...	...
219	50	...	...
220	51	...	...
221	52	...	...
222	53	...	...
223	54	...	...
224	55	...	...
225	56	...	...
226	57	...	...
227	58	...	...
228	59	...	...
229	60	...	...
230	61	...	...
231	62	...	...
232	63	...	...
233	64	...	...
234	65	...	...
235	66	...	...
236	67	...	...
237	68	...	...
238	69	...	...
239	70	...	...
240	71	...	...
241	72	...	...
242	73	...	...
243	74	...	...
244	75	...	...
245	76	...	...
246	77	...	...
247	78	...	...
248	79	...	...
249	80	...	...
250	81	...	...
251	82	...	...
252	83	...	...
253	84	...	...
254	85	...	...
255	86	...	...
256	87	...	...
257	88	...	...
258	89	...	...
259	90	...	...
260	91	...	...
261	92	...	...
262	93	...	...
263	94	...	...
264	95	...	...
265	96	...	...
266	97	...	...
267	98	...	...
268	99	...	...
269	100	...	...

25

9-08

